(13) Զծածկեալ յայտնութեան հանդէս : 3 օրին : զծածկելոյն հանդէս : Վա՜յ յիմարութիւն իմում, որով 'ի միտ ոչ առի թէ ծածկեալ յանցանք իմ, անթաքոյց մեղքն հանդիսին և քննութ յայտնելոց են 'ի սոսկալի դատաստանին :

(14) Ոսկորս չորեաց կենդանի : Զթելս չոր գործոց կեցեալ գործեցի . զի զմեռեալ 'ի մեղս յարեցի : Ակնարկէ 'ի բանն (Եզեկ. ԾԹ. 5.) * Զոսկերսն ցամաքեալ անկանեն :

(15) Անհնարին պախուցման : 2 օրին . անհնարին պախուցմանն : Յայս երկու յետին բանս Թ ասէ 'ի միտ կուսանաց յարմարէ զաղէտս հոգւոյս . յորժամ իւր պատրաստութիւն պահէսէ 'ի հանդերձեալսն, և առ ապաշխարութիւն աղաղակէ ընդ փակեալ առագաստին երկնից . ուր սպառնալիք ձայնն լսի թագաւորին, ոչ գիտեմ զձեզ : Այսպէս կնքէ զաղօթքս, մտաւոր զգուշութեան առ սաստիկ պակուցմանն, կամ ոչ իշխեալ 'ի փառաւորութիւն աւարտել . որում ոչ ուշ եղեալ ընթերցող ոք՝ չգիտեմ որպիսի շատախօս, կարծելով մեծ զթերին՝ յաւելու ասանձ խօսս յերկարս զվերջին՝ անյարմարապէս յօրինակ ինչ գրեալ 'ի թուին ՊԺԴ, 1365 : Բայց նկատել արժան է՝ զի ոչ այս բանն միայն, այլև Է և Ը . առանց փառաւորութեան աւարտի, պատշաճեալ զկնոյն 'ի կշտամբութիւն մեղաւորացն անձին . մինչև ասա 'ի բանն Թ վճարեալ զկշտամբանսն, գործելով զնա 'ի յոյս մեծագործութեանն, և 'ի փառս կնքէ :

Սրբոյն յաւելուած Ներսէսի հեծութիւն՝ Նորին հոգւոյ, առ Նոյն ողբերգս մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

ԲԱՆ. Բ.

Ա . Եւ արդ՝ զի՞նչ գործեցես անձն իմ կորուսեալ, կամ ո՞ւր թաքիցես, կմ զիա՞րդ ապրեցիս, կմ ո՞րպէս՝ ելցես 'ի մեղաց բանդէ : Քանզի բազում են պարտիքդ, և անթիւ հատուցմունքն . սաստիկ կշտամբանքն, և անվախճան նախատինքն .

անողորմ են հրեշտակքն, և անկաշառ դատաւորն.
հզօր ատեանն, և անաչառ բեմն. քստմնելի ատա-
նալիքն, և անողորմ հատուցմունքն. ահարկու հրա-
մանն, և մերկապարանոց յանդիմանութիւնքն. հրե-
ղէն են գետքն, և անանցանելի են վտակքն. Թանձ-
րամած խաւարն, և [2] արտաքոյ այցելութեն մառա-
խուղն. ապականութեն է գուբն, և մշտնջենաւոր է
տագնապն. ամենագրաւ տարտարոսն, և անզերծ
սահմանմանիքն: Այլ արդ՝ արդարև քեզ են գան-
ձեալ դառինքս այսոքիկ դժնդակք, և տարժանելի
օթևանք՝ անըմբերելեացդ պատուհասից, ով անար-
ժան անձն իմ մեղաւոր, չարագործ, [3] պոռնիկ, բազ-
մաքիծ, և սահման անդատանի բնաւին անմաքրու-
թեան: Ահա զարդիւնս գործոց ձեռաց քոց ժա-
ռանգեցես՝ թիւրեալդ 'ի յուղղութեանց, և զա-
ռածեալդ 'ի մաքրութեանց. տարագրեալդ յար-
դարութեց, և 'ի կարգաց պարկեշտութեանց. ու-
նայնդ 'ի լիութեանց՝ հոգեպարգև հարստութեց. [4]
նախանձարկու բարերարին, և ամենակալ թագա-
ւորին:

Է. Այլ քանզի կառուցեր քեզ անել արգելան և
անփախչելի որոգայթ, [5] խոստովանեալ քեզէն զան-
բժշկականդ քո վէր, և զանօրինակդ հարուած,
վկայելով զանձինդ զպարտականդ մահու՝ զանբու-
ժելիդ բեկութի, ով չարդ 'ի բարեաց. [6] ով դառ-
նութինդ 'ի քաղցրութեց. ով խաւարդ 'ի լուսազար-
մից. ով կապտեալդ 'ի պճնելոց. ով դսրովեալդ 'ի
գովելոց. ով անբարիշտդ 'ի բարեպաշտից. ով շըն-
չականդ 'ի բանականաց. ով անմիտդ 'ի մտաւորաց.
ով անհանճարդ յիմաստնոց. ով անմաքուրդ յընտ-
րելոց. ով մահացուդ 'ի կենդանեաց. [7] ով խոհերա-
կանդ 'ի սրբոց. ով արբշիռդ 'ի պարկեշտից. ով
կեղծաւորդ յարդարոց. ով անպիտանդ 'ի պիտա-
նեաց. ով անարգդ 'ի փառաւորաց. [8] ով նուաղդ
յառաւելութեանց. ով գերիդ 'ի գերագունից. ով
նուաստագոյնդ 'ի վեհից. ով աղքատդ յընչեղաց. [9]
ով անարժանդ 'ի փրկութեց. ով տնանկդ 'ի բարձ-
րութեց, և 'ի հոգևոր հարստութեց. և հատուա-
ծեալդ յօրհնելոց:

(1) Երեւեալ ի Ձեղաց բանից ։ 3 գլխ. Ելանելեաց ի Ձեղանաց բանից ։ Որպէս թէ արտաքոյ առագաստին անկեալ, ըստ որում ոճոյ ի նախնեացն ա-ղօթան, ընդ տարակուսանօք խօսի, որ արդեօք թողցէ, որ փախիցէ, կամ հնարս գտանիցէ ի բանտէ մեղացն զերծանելոյ ։

(2) Արփատոյ այցելութէ ։ Զուրկ յայցելութենէ կամ ի հնարից է մառա-խուղն, այսինքն անփարատելի . կմ՝, այնպիսի մութ սաստիկ՝ ուր ոչ լինի այցելութիւն կամ օգնութիւն ։

(3) Պաշնէչ ։ Խիմ նմանութիւն, ըստ որում փոխանակ անխախտ ոտիցն եմ՝ յախտաւորաց ոտք աշխարհի հեշտացեալ ։

(4) Հոլովմունք բարերարին ։ Դրդօղ ի նախանձ բարկութեն, ըստ բա-նին ա . կոր . ժա . 22 . Եթէ զնախանձ ինչ արկանիցեմք տն ։ ||

(5) Խոստովանեալ+էղէն ։ Դու ինքնին ասէ՝ խոստովանելով զանհաշտե-լի վերայ մեղացս, եւ վկայելով զկատարելութիւն մարդասիրութեան անձինդ, չէ-նացեր քեզ անհեղանելի արդելան ։ Վասն զի թէպէտ անկեղծ խոստովա-նութիւնն ազատէ զմարդ յամօթոյ եւ ի պատուհասից մեղացն, սակայն միանգամայն իբրեւ ձեռնագրով հաստատէ զպարտաւորութիւն իւր, այ-նու զի ոչ եւս բնաւ կարէ ժխտել կամ անպարտ ցուցանել զանձն ։

(6) ՈՂ տառնոանէտ ի +ողշըրծուբէն . Խնամ իմն թանձրացեալ . այսինքն ամէ-ն գառանց ի քաղցրունց . ով եւ հեռաւորեալքն ի թանձրացեալն զնին ։

(7) ՈՂխուհէրուհու ։ Պղծեալդ կամ զազրեալդ ի մեղաց ։

(8) ՈՂ նուաղէ յառաւնէրութէց ։ Նուաստեալդ կամ կարօտ ի լրացելոց . կամ ի լիութեանց ։

(9) ՈՂ սպառնալ ի +ըէշուբնեանց ։ Այսինքն ի փրկելոց ։ Զայսպիսի ձեւս բանից իմն ընդհանրապէս, ով չարդ ի մէջ բարեաց, ով դառնութիւնդ ի մէջ քաղցրութեանց, ով խաւարդ ի մէջ լուսաւորեցելոց եւն ։ ուրէշէոր ։ զինեալդ ի մէջ ժուժկալից ։ հարուածեալդ, անիծեալդ . բանադրեալդ ի մէջ օրհնելոց ։

Սերտագին յառաջեալ ներքին հեծութե՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

ԲԱՆ . Խ .

ա . Եւ արդ՝ զի՞նչ արժանաւոր ըստ քեզ բան-բասանս շարադրեցից ի [1] կատակ մաղթա-նաց մատենի այսր ողբերգութեան, ո՛վ անձն իմ թշուառ ամենապարտական, եւ առ պատասխանիս բա-նից անբարբառ, անպիտան Այ եւ մերձն մատնակցու-թեան ։ Ո՛ր եթէ զլիճ մի ծովուց՝ ի [2] յորդութի դեղոյ յեղեղեցից, եւ զդաշտս ապարիսօք բազմօք սահմանեալ՝ ի տարածութն լայնութե քարտենի չա-փեցից, եւ զպուրակս յոգունց անտառաց՝ շամբից ե-ղեգանց՝ ի հաստուածս գոյութե գրչաց կազմեցից, եւ ոչ զթիւ մի ի բարդելոյն անօրէնութեանց գրեցից ընդ

դրով տաճանի գրաւել: ²Սա զի՝ թէ զմայրս լքա-
նանու 'ի մի լուծ կշռոց զօդեցից, և կամ զլեառն
արարատեան 'ի կէտ ամբարձման ³նժարի միոյ ար-
դարութեն՝ միջնորդ կացուցից, ոչ հաւասարէ այնր
հարթութեն համազուգակցել:

Է. Ուռուս ⁴ամբարձուղէշ՝ ստուարաստեղն՝ տերե-
ւալից՝ ունայն 'ի պտղոց, նմանակից յաւէտ հարա-
զատ այնր թզենւոյ՝ զոր Տէրն գօսացոյց. քանզի սա
ղարթօք վարսից, այս է՝ արտաքին դիմօք բարեշուք
կերպից՝ իբր պսակաւ իմիք պաճուճեալ, ⁵բացակա-
նացն գոս բաղձալի. իսկ եթէ մերձեսցի տնկօղն՝
խուզել զխնդրելին, գտցէ զքեզ ունայն 'ի բարեաց,
և դարշելի 'ի գեղեցկութեց, ծաղր տեսողաց, և
նշաւակութիք նախատողաց: ⁶Ոի եթէ ապաժա-
ման յանզգոյշ ժամուն՝ հերապանծ տունկն պտղա-
կորոյս անկենդան, որ դոյզն պատկերն է անպատ-
րաստից, եկն ընդ անիծիւք. և կամ երկիր ոռո-
գեալ ցօղով, ⁷և ոչ բազմապատիկ զաւանդս արդա-
սեաց երկրագործութեան՝ տածողացն մատուցանէ,
լքեալ մոռանի. իսկ դու՝ ո՛վ անձն իմ եղկելի, սահ-
ման բանաւոր և տունկ կենդանի՝ և ոչ 'ի ժամու
իւրում պտղաւոր, իբր ոչ զնոյն կրեսցես պատիժ
նախնում առակիդ: Վասն զի ⁸զհամայնն ընկալար
'ի քեզ՝ անպակաս յառաւելութեց, սկզբնաւորեալ
'ի մարդն առաջին՝ և մինչև 'ի սպառումն ծննդոց
նորին՝ զքերս գործոց նանրութեց, և զգիւտս նորոգս՝
ատելիս և անախորժելիս հաստողին զքեզ Տյ:

Ը. Եւ վասն զի եդի զքեզ նպատակ հանդէպ երե-
սաց տեսութեն մնացս՝ անձն իմ անպիտան, վիմօք
ձգելոց արձանաց բանից՝ իբր զանընդել գազան վայ-
րենի՝ անողորմաբար զքեզ քարկոծել: Որ թէպէտ
և ⁹ոչ պատահիմ անուանիլ արդար, սակայն յառաջ-
նումն պատասխանւոյն՝ իբր ընդ ոսխի ումեմն՝ ընդ
անձին յօժարամիտ կամօք ագորիմ, ըստ իմաստութեն
բանի. և զլոյզս մնաց խորհրդոցս գաղտնեաց ¹⁰իբր
զգլխաւորեալ յանգաւորուն չարութեն գործոց խառ-
տովանեալ, քեզ տարածեցից՝ Տծ իմ և Տր: Ոչ
որով չափով չափեցից զանձինս ստգտանօք, 'ի քոցդ
անմնաւաղ գթութեց՝ ¹¹այսրէն չափեցայց. ընկալեալ

զՉնորհդ յաճախագոյնս՝ Է.[12] Մեծագունիցս պարտեաց։ Դու որքան վերացն հարուածք՝ անբժշկականք և անհնարաւորք ճարակեցին, այնքանեօք չափովք կրկին առ սմին՝ և իմաստք արուեստից բարձրեալ բժշկողբարեհաչականալ լուսաւորեցին. և[13] 'ի պարտուցն առաւելութիւն, նոյնքան փոխառուիդ առատութի բարերանեալ միշտ պսակեցի, ըստ խնկաւորգ քում առակի։ Ո՛ի քո է փրկութիւն. և 'ի քէն է քաւութի. և աջով քո՝ նորոգութի. և մատամբ քո՝ զօրեղութի. և 'ի հրամանաց քոց՝ արդարութի. և յողորմութեց քոց՝ ազատութիւն. և յերեսաց քոց՝ լուսաւորութի. և 'ի դիմաց քոց՝ զուարճութի. և հոգւովդ քո՝ բարութի. և օծմամբ իւղոյ քոյ՝ սփոփութի. և ցօղով շնորհի քոյ՝ զուարթութի. և դատաս մխիթարութի, և մոռացուցանես զվհատութի. և բառնաս զխաւար վշտաց, և զհեծութի ողբոց 'ի ծաղր փոխես։ Դու քեզ վայել է օրհնութի գովութի հանդերձ՝ յերկինս,[14] և յազգս հարցն՝ և 'ի ծնունդս նոցա, և յաւիտենից յաւիտեանս. ամէն։

---

(1) 'Ի չորրորդ մաղթանաց։ Կատակ կոչել յայտ առնէ, թէ զայս մատեան ոչ է ինչ գրեալ վասն իմ, և վասն ինձ նման մեղաւորաց, կամիմ յայտնել 'ի սմա իսկ 'ի կատակի՝ թէ ով եմ ես, զի՞նչ էի, զի՞նչ եղէ. և զի՞նչ կարեմ լինել այժմ և զկնի մահու, և ցանկամ զի որպէս կտակ՝ հաստատուն և հաւատարիմ մնայցէ։

(2) 'Ի յորջորջմանէ [illegible]։ Եթէ զլիճ մի փոխեցից 'ի գոյն ռեակի, և [illegible], [illegible] ընդարձակութիւնք ասպարիզի իսկն տարածեալ թուղթ, և [illegible], զերկրաւոր անտառաց եղեգանց կարմեցից ինձ գրիչս, ոչ կարեմ զատկեսանն 'ի բարդեալ մեղացս 'ի գիր անցուցանել։

(3) [illegible]։ Ունիմ կամ հաւատոյ թանձր մի(ոյ). եթէ ասէ՝ հանդերձ մեղացս 'ի մի կշիռ եդից զնշոյլ ընդմանանու, կի զերառն արդարութեան՝ այսինքն զմասն, ոչ հաւատարիմն միով չափով կշռեցի։

(4) Ծառայ [illegible], ունօղ բարձր ուղեշս կամ շառաւիղս. [illegible], հատ անեղանելք, կամ ատամք։ Աստանօր յայլ եղանակ փոխէ զնշանակութիւն. իսկ և զի կարող էր ով խորհել և ասել առ ապօթաւորս մեր, ապաքէն կան 'ի քեզ նաև բանք բարիք և գովելիք. և զինչ զայնցանէ լուեալ, զմեղապարտելին միայն յեղեղես։ Առ որ ասէ. զի՞ն իսկ յաճախէ ինձ պարսաւանս. զի թէ և կրօնաւորութիւ, և քահանայական կարգաւ և վարդապետութեան երևիմ իսկ ծառ բարձրացեալ, ամրացեալ տերևօք, [illegible], բայց միր են պտուղքն. նման եմ անպտուղ թզենոյն են։ Զայս յանդիմանութիւն ստացեալ [illegible] 'ի կարգին։

(5) [illegible] գոյ։ Հեռակայեցն [illegible] ես վասն երկայն և կա-

խնամ տերևոյն, այսինքն առատագին բարեպաշտական նշանօք, որովք էր պատկեալ զարդարեալ : Բայց յորժամ անկօղն ած մերձենայ առ քեզ՝ զպտուղն խնդրելով, գտցէ զքեզ զատարկ 'ի բարեաց, և գործէ՛ն 'ի գեղչեցինաենց, այսինքն զըստեղի 'ի նոյն խակ գեղեցկութէ տերևոյն վն անպտղութեանդ . կմ, 'ի մէջ գեղեցկայ գարշելի :

(6) Զի էին առաջիման : Եթէ յանդգնեալ ժամանակին, յանդգնոյ ժամանն, յանկարծելի ժամու առաւօտին մերևալպարգ թզենին անպտղոյ՝ որ վտըգը օրինակ է անպտուղ հոգւոյ կամ հեռոյ անձանց, անէծս ընկալաւ . խակ զտւ գոլով առանձին բանաւոր՝ որում միշտ է ժամանակ բարեգործութն, առ կայն և ոչ գտնէ 'ի կարևոր ժամուն, կամ և ոչ երբեմն առնելով պտուղ, Ֆէր . զինչ՛ոք ոչ նոյնպէս պատժեսցիս ըստ նախատացեալ օրինակիդ :

(7) Եւ ոչ ժամանակ պտղոց . . . . մարդոյանց, չէնալ մուտանի : մի օրին . և ժամանակ պտղոյ . . . . ոչ մարդոյանց, չէնալ մուտացի :

(8) Զհամայնն ընկալեր 'ի ձեռ : Զամենայն չարիս՝ որք են բերք նախանձութն և առակքը ոյ, կամ զմեզս ամենեցուն 'ի քեզ ընկալեր, անպակաս յառաւելումն, լիով, առաւելապէս, սկսեալ յառաջին մարդոյն մինչև 'ի վերջին ծնունդ նորա : Զայս կամ ըստ նմանութեան առէ, իբրև թէ նման ամ մեղուցելոց՝ որ եղեն և լինելոց են, մեղայ . և կամ զի վասն ամ մարդկան՝ որ գալոց են, կալեալ զարօթս զ առաջոյն 'ի բանն, է . 2 . մն այն մինչև 'ի վերջին մեղուցեալն յարմարէ զբանն :

(9) Ոչ զոփանիմ անուանիլ : Թէպէտ և չեմ արժանի կոչիլ որդար, բայց զդարձ արդարոյ արարից, այսինքն զամբաստանութիւն անձին, ըստ բանին խմաստնոյն . (առակ . ժը . 17 .) * Արդարն անձին իւրում չարախօսէ 'ի սկզբան բանից իւրոց : *

(10) Իբր զփլուցանեալ յանգամանութն : Զգաղանի խորհրդոց մասածութիւնս՝ իբրև զլըցեալ կատարուածն չար գործոց խոստովանելով :

(11) Այրէն յանհեռացս : Որպէս զի որչափ ես մեղուցեալ զանձն իմ, փոխարէն ընկալայց զչափ ներողութեանն յանպակասելի գթութենէ քո :

(12) Ընդ Պծոգոմնեցս պարփեաց : Այսինքն, փոխանակ առաւելագոյն պատժեալց . յայլ պատուհասս կայր, ընդ Պծոգոմներս . բայց այժմու և՛ գեալս ըստ լաւ օրինակին՝ առաւել յարմար է :

(13) 'Ի պարփառոյն առաւելութն : 'Ի շատութէ պարտուցն առաւել ես զօրէ առաւս թողութիւն փոխատուիդ, ըստ քում առակին, թէ մատուցաւ առ նա պարտապան մի բիւր քանքարոյ, և 'ի չկարելն հատուցանել՝ զամն շնորհեաց : (մատթ . ժը . 24 . 27 :)

(14) Եւ յաղգս հարցն : Քեզ վայել է օրհնութիւն ոչ այժմ միայն, կամ զոր այժմ կարեմք մատուցանել, այլ և ամ օրհնութիւն որ լինէր յառաջ նոց հարցն, կամ 'ի ժամանակս նախահարցն, և որ յետ այսր լինիցի 'ի ծնունդս նոցա : Լաւ երայն յայս առնէ, թէ որպէս զկշռամբանս մեղացն յառաջին մարդոյն մինչև 'ի յետինն յարմարեաց յանձն իւր, ըստ ը . 8 . նոյնպէս ցանկայ զամենեցուն օրհնութիւնն ընծայել Այ . որպէս յամբաստանանելն զանձնէ՝ զամ մեղուցելոց կերպարանս զգեցաւ զանձամբ՝ թէպէտև բազում անօթով, նոյնպէս յարդարացուցանել և 'ի մեծացուցանել զԱծ՝ առաւելագոյն յօժարութբ յինքն առնու զբերան և զձայն ամ արդարոց՝ որ յերկինս, և որ յերկրի :

Մերոփին յաւելուած նորին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս նախընթաց բանի։
Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

ԲԱՆ. Ժ.

ա. Եւ արդ՝ քանզի միապէս մատնեմ կորստեան՝ և [1] զղջումն ուժգնապէս, և մեղանչելն մոլեգնաբար. զի թէ և օտարացեալ իմն են 'ի միմեանց այլայլութիւք նմանութեցն, սակայն զկերպարանս երկաքանչիւրոցն առ միմեանս եդեալ, զմի և զնոյն վհատութեան ծնունդս արտադրեն։ Օ ի մինն զհզօրին ձեռն՝ իբր ապիկար թերահաւատէ. իսկ միւսն՝ ըստ նմանութեան քառոտանեաց պաճարեղինաց՝ յանզգայս եղեալ, զյուսոյն առասան խզէ. մի որոյ ընդ առաջնումն միշտ փաղաքշեալ՝ հանապազ խնդայ սատանայ. իսկ երկրորդաւն՝ ըստ նմանութեան լափլիզօղ դժոխորովայն դազանի, իբր կերակրով արեամբ պարարի։

բ. Եւ արդ՝ [2] իբր զգանեալ բազմահարուածեան հեծանաւ, և յափն մահու ժամանեալ՝ դոյզն ինչ դարձուածն շնչոյ ընկալեալ, և յոգի կենդանի եկեալ կազդուրեցայց, պատսպարեցայց, կանգնեցայց, յարեայց յանկենդանականս կորստենէ, օժանդակեալ քոյ ձեռամբն՝ որ գթածն ես յամենայնի. 'ի բարեբար յերկնաւոր հօրէն՝ փրկութեան և բժշկութեան պտուղ ընձեռեալ ինձ [3] մեղուցելոյս, ախտացելոյս և մահացելոյս։ Եւ սկզբնաւոր ողբերգութեան այսր աղերսանաց՝ զհաւատոցն շինուած կառուցից. քանզի և [4] ոմն 'ի նախնեացն ոքիմբք զլինեալ, փոխեցաւ իսկոյն յանմահականն վիճակ վերին. զապաշխարութեան դեղ ընկալեալ, ապաշաւանաց թօշակաւն ըզգրաւականն անեղծութէ աստէն ժառանգեաց։ Ի վեր քան՝ զորոց առաքեալ ընդ նմին ցուցանէ, որք զհանդէսն մրցանակին յերկրի կատարեալ, ապադայիցն և երկնաւորացն յուսոյ հաւատացին, և անտեսիցն ճոխութեամբ փարթամացան։ Իսկ [5] զխրախոյս տրունի պաշտելի բանին՝ յիշեալ առ սմին,

զի ամենայն ինչ հնարաւոր է այնմ որ հաւատայն ։ 6
Ի՛ զի և զչափն ընտրականաց բարեմասնութե՛ն ա՛յ
հա՛ձելեացն՝ զնենալ աստանօր, զայս պատկեր բանի
ընկալարք նախնի գահերէց, առ ՚ի սրբութեցն մուտ
տուլիմք հանդերձել ։ առանց որոյ և ոչ ո՛րն փառաց՝
զիւրմն առ մեզ հրաշագործեաց զօրութիւնս, եթէ
ոչ նախ՝ լծակից խնդրեաց բարերարութե՛ն իւրոյ
զհաւատոյն մեր ։ ուստի և 7 կեանս ընձեռել զօրէ
ինքնիշխան բաւականութի՛՝ առընթեր գոլով ա՛յ ։
քանզի հաւատք քո կեցուցին զքեզ՝ որհնաբանեալն
ա՛յ բերան վկայեաց ։ Ք՝անզի արդարև 8 սեռն տե-
սութի, և կատարեալ իմաստութի, և առ ա՛ծ ըն-
տանութի, և բարձրելոյն ծանօթութի՝ հաւատոց
մասն՝ երջանիկ և ընտրեալ անուն, որ 9 յարաձգեալ
միայ անվթար և անփակելի, պատուակից գոլով սի-
րոյ և յուսոյ ։ Զի եթէ 10 փոքու սերմանի գոյի՝
հատի մանանխոյ չափոյ նուաստի հաւատք՝ զլերանց
մեծութի փոխէ զօրեղապէս ՚ի սիրտս ծովու, ապա
յիրաւի ընկալարք զսոյն սկզբնաշաւիղ առաջնորդ կե-
նաց՝ աներկմիտ պաշտօն առ ա՛ծ ։ 11 որ զապառնիսն
և զծածկեալսն՝ առանց երկբայութե՛ ՚ի հոգւոյն աչս
տեսանէ, 12 երրորդութեանն փառատրելի անուամբն
պատուեալս հաւատք՝ ընդ սիրոյն դասեալ և յուսոյ ։
Զի թէ՝ և զերիմն հաստուածս առանձնաւորականս
՚ի մի և ՚ի նոյն խորհուրդ դիտեսցես, յաւէտ մե-
ծասցիս նոքօք ՚ի յա՛ծ ։ քանզի թէ հաւատաս ՚ի նա,
և սիրես ։ որով և յուսաս աներևութից պարգևաց
նորին ։ Ա՝մա փառք յաւիտեանս ։ ամէն ։

---

(1) Զալնանն ուժֆնողէս ։ Զգձուամն քան զչափն ուեխ, այսինքն յուսա-
հատութի, միօրինակ ՚ի կորուսա մասանէ իւրև [illegible] ,
այսինքն [illegible] և [illegible] ։ զի թէպէտ [illegible] և [illegible]
են [illegible] , [illegible] գործոյն՝ [illegible]
[illegible] ։ Զի [illegible] , [illegible] [illegible] թերահաւատութի
[illegible] ՚ի [illegible] և [illegible] ։ [illegible] ,
[illegible] ՚ի [illegible] , [illegible]
[illegible] , [illegible] յուսոյն առ ա՛ծ՝ [illegible] ։
[illegible] զի կամ [illegible] յօգտակարութիւնն ա՛յ , և կամ [illegible]
[illegible] ՚ի [illegible] ։ Վասն որոյ ընդ [illegible] , ընդ-
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] ։ զի [illegible] [illegible] , [illegible]

բէ զմտօք ։ Իսկ Երկրորդան , աներկիւղ մեղանչելոյն , իբրև զաղան լուծ–
ընկեց , այսինքն ինձ արհամարհանաց լինելով լաւին զարիւն ։ Եւ Երրորդ–
դին , որոյ արտաքինն անյայտ է իբրև զգժոխս ։ Կի՞ բուռն իսկ գժոխքն են
արտաքին սատանայի ։ այսու առյ մարդոյ յայտնապէս մեղանչել , և Նորա
մեղօքն պարտաւորեալ հեշտանալ ։

(2) Իբր ղֆանեալ բաղմահարաւծեան ։ Իբրև զծեծեալ , և 'ի բաղում տե–
ղիս մարմնոյն հարուածեալ կամ Ջարդեալ ։ հեծանոս ։ հասա զաւազա–
նաւ կամ բրով ։ Մարթ է և իմանալ . բաղմահարաւծեան հեծանոս ։ Զի
սատանի հարկանօղ զաւազանաւ ։ յաֆն մահու , 'ի դուռն մահու հասեալ ,
փոքր մի ողի առեալ , և զօրացեալ կանգնեցայց , եմ ։

(3) Մեղուացելոյ ։ 2 օրին ։ մեղաւորիս ։

(4) Որն 'ի Նախնեայն , եմոմք , ոտփմէփ ղինեալ ։ այլ օրին ։ ոոչփմէփ , այս–
ինքն հաւատովքն զօրացեալ բառ առաքելոյ , (եբրայ ․ ժա ․ 5 ․) առ–
աքելոյ մահկանացու կենացս փոխեցաւ ․ ղադադխորոււԵՆ պեղ ըհկուժուղ ,
հաւատոյն զօրութե՛ն ապաշխարելով 'ի կեանս յայս , այնու իբրև Թոշա–
կաւ զառհաւատչեայն աներծութե՛ն ժառանգեաց առքն , այսինքն յա–
ռաջ քան զմեռանելն ։ 'Ի սոյն յարելի է և որ զկնին ․ 'Ի Կիր փան ղոբոց ․
այսինքն եմոմք զաներծութիւնն ժառանգեաց առաւել քան զնոսա ,
զորս առաքեալն յիշէ ընդ նմա , այսինքն քան զաբէլ , քան զաբրահամ ,
եմ ․ զի եմոմք իբր իրօք ժառանգեաց յառաջ քան զմահն ․ Իսկ այլքն
ապագայից Ն Երկնաւորացն յառաջ հատուցին ․ այսինքն Թէպէտև զհան–
գէս վկայացն յաղագս Ա. Տ բովանդակ կատարեցին յերկրի , բայց առա–
գայ երկնաւոր հատուցմանցն յուսով անկումեին յետ մահուն ․ կամ 'ի
յոյս հանդերձեալ երկնաւոր բարեացն՝ հաւատովք կացին մնացին , ա–
ռանց մասանք ինչ գտնել ժառանգելոյ աստանօր ։ Վասն ապաշխարու–
Թեան եմոմքայ տես զկնի ․ ժա ․ լծ ․ 9 ։

(5) Ջխրախոյս Տրանի ․ զյորդոր հաւատոյն յիշեցից զնրուներականն , Թէ
զամ ինչ հնարաւոր է այնմ որ հաւատայ ։

(6) Եր՛ ղի Ն ղլափն ։ Եր՛ և այս , զի եԹէ զչափ համեմատուԹե՛ ընտիր և
ամահամջոյ առաքինութեցն քննեսցուք , զբանն հաւատոյ գտանեմք ՆախնՓ
գոհերեց , առաջին և գլխաւոր քան զայլս ․ Իբր զի հաւատոյ զաւանու–
Թբ պատրաստիմք առ 'Ի ոբէոււԵՆյն մտափ , առ 'ի մտանել 'ի սրբութիւնս
եկեղեցւոյ մկրտուԹբն ․ որով շնորհազարդեալք՝ այլ բարեգործուԹեքն
համջոյ լինիմք ամյ ։

(7) Կեանս ընչեանղեւէ ։ Կեանս հոգևոր և մարմնաւոր զօրէ առել հա–
ւատքն միայն իւրով զօրուԹբ առանց օժանդակուԹե՛ պահոց , ողորմու–
Թե՛ , ձգնուԹեց , և այլ բարի գործոց՝ որք ոչ հային անմիջաբար յամծ ․
Իսկ հաւատք ոռընԵԵր Գոլով ամյ , անմիջաբար յամծ հայելով , ունի զայն
զօրուԹիւն ․ ուստի և քն հաւատոյն տայր զբժշկուԹիւնն ։

(8) Սեռն փեօոււԵՆ ։ Հաւատքն է յատակ կամ պայծառ տեսուԹիւն
իմանալեացն և ամայնոց ․ զի Թէպէտ բառ ինքեան նսեմ է , բայց համե–
մատեալ առ բնական լոյս մտաց , առաւել պայծառ առյ զխոել զամայ–
նսան , զոր բնական լուսով ընդ աղօտ միայն , և կամ կարծեօք ձանա–
չեմք ։ Կոփարեալ ԻմասփոււԵՆ , իբրև հաստատեալ յանսուտ վկայուԹիւնն
ամյ , քան զստացական իմաստուԹեն հաստատեալ 'ի վրիպելի լոյս մտաց ։
Ար ամծ ընփանոււԵՆ ․ զի հաւատոցն ձանաչմամբ առաւել մօտիմք առ ամծ ,
և նմանիմք ամծեղէն մտացն ։ Բոպքրէլոյն ծանօԹոււԵՆ , այսինքն ամյ իբրև
գերբնական արարչի և վախճանի ։ Եբջանիկ Ն ընփրեալ անոան ․ այնչափ
ընտրեալ և ազնուական՝ որ սակաւուց միայն կոչեցաւ , և ընտիր ամծա–
պաշտքն 'ի նմանէ անուանադրեցան՝ հաւատացեալ ։ Եւս , ընտիր անուն
առ հաստ Ք ատուգաբանուԵն ․ իբրև Թէ ոչ ունող զհաւ կամ սկիզբն ,

տեսանելոյ հաւատոյ կամ ակնածելոյ . քանզի յորժամ հասանէ եւս մարդն , և ղեն և հաւատք . ոչ 'ի յետադարձ գործս յայտնեցան հաւատք , այլ 'ի ակնածանէ հաւատովք խնամոցն պատրաստեալն հաւատացելոյ . ըստ երբայ .
ժա . 3 :

(9) Յորդորելու թուոյ : Որպէս տեսանելոյ ակնածելոյ են հաւատք , նոյնպէս միշտ անտողական , գործելեալ նմանն ձայնիւ՝ յանէտ , կամ յանիրեան : Այլ բարեգործութիւնք եւր աղօթք , կամ ընդ արտաքին պարագայս կա- պեալք , ոչ միշտ՝ և ոչ յամենեցունց գործեն . իսկ հաւատքն երբե- կարեւոր և անկարօտ արտաքին երաց՝ միշտ անեւեալ մնայ 'ի կեանս յոյս , անքնուր և անփոխելի , անվրէպ և անխափան՝ ընդ յաւտ և ազդոյ : Կամ , 'ի ակնածանէ աշխարհի մինչ 'ի կատարած՝ յամ միշտ կենաց ձգեցաւ հա- ւատքն . մինչ զի նաև յանխախ միշտ անմեղութեան կայք և կարեւոր էր՝ որպէս յոյսն և սէրն : Այսոր խնամովք , զի զեկեղեցեալ տուեալութիւն ընծայէ հաւատոյ նա վարդապետ՝ ոչ համեմատութեամբ յուսոյ և սիրոյ , այլ՝ բարոյական առաքինութեանց : Եւ զանելն՝ յորդորելու թուոյ , մի ըհանն զերձելոյն խնամոր . զի անդ 'ի գեղմանգիտանն անաւթեան այլ խափանելին հաւատք՝ որպէս և յոյսն , ոչ միայն ըստ ներգործութեան , այլ և ըստ ունակութեան . զի զոր յայտնի և անկարօտ տեսանելով ժառանգէ ոք , ոչ միայն չհաւատայ զայն և չյուսայ , այլ և ոչ կարէ հաւատալ և յուսալ այնուհետև : Բայց եթէ խնամոյցեալ մնալ ըզ գործոյն եւեթ , այսինքն ըստ երանութեան՝ որ վարձք է հաւատոյ :

(10) Փոփոխ ուրեմն գոյէ : Հաւատքն ըզ չափու փոքր անբաժանական կամ անբաժանելի իրի , որ է հատան մանանխոյ , զօրաւոր է , ևն : բառս ուրեմն՝ տծանոցական է առա , ի մասնականք 'ի անուականէ բառքն ուրոց . որպէս 'ի բառքն ցեղական ածանցի կենդանի . ըստ այսմ ասեմք Աստուածի , Գաբ- րիելի , Անդրէասի . այսինքն անհրաժեշտ , ևն : Եթէ ասէ՝ այնչափ փոքր հաւատք կարող է զլերինս խախտել և 'ի ծով ընկենուլ , առաւել մեծագոյն հաւատոց ընկալաք ուղղափառութեան , յառաջընթաց առաքինորդ 'ի կեանս հոգւոյ և մարմնոյ , կամ 'ի կեանս շնորհաց և փառաց . այլև ըն- կալաք անսխալ պարգև , անվրէպ և միշտ հանձնելի պաշտօն այս , առաջ- նորդապաշտութիւն՝ զխնամեալ արտաքին պաշտամանց , յորս մարթ է երբեմն սայթաքիլ երկմտելի իրօք , կամ կեղծաւորեալ , կամ աւելորդ : Զի կա- տարելութիւն բանիս մարթ է արարել և այսպէս . առաւել յերկու զայն ակնածանաց առաքինորդ կենաց ընկալաք անհրաժեշտ պաշտօն այս . զի ա- ռանց հաւատոյ անհնար է պաշտել զնա :

(11) Որդեգրութիւն , զընկալոցան կամ զհանգստեանն , այլև զանհրաժեշտ անհրաժեշտաբար 'ի հոգւոյն աստ փրկանէ , առաց անեալանել . զի հաւատքն է յանդիմանութիւն որոց ոչն երևին . ըստ երբայ . ժա . 1 :

(12) Երրորդութեան քառապատիկ անուամբ : Երրորդութիւն կամ զերրորդ- թիւն ասէ , որ է անուն խորհրդաւոր և սրբազան , և կամ զնծայեն ան- ձնանն ասէ . զի որպէս զնոցանէ զատանելք՝ թէ երեք անձինք են յամ , նոյնպէս զհաւատոյն և զծանուցոյն՝ նախքան անուանք ասէ առաքելոյն . (ա . կոր . ժգ . 13 .) * Մնան հաւատք՝ յոյս՝ սէր , սոքա երեքեան : || Գործելով , այլ զոր եւ երրորդութեան անուամբն պատուել հաւատան . զի որպէս անուամբ Երրորդութեան՝ յերկրպագութեան զգոյց կարգի , նոյնպէս հա- ւատն ընդ եւս ըծանելի զատելով , զերկրպագութիւն թիւ կարգէ . այսինքն : 5 . հաւատ . 4 . յոյս . 3 . սէր : Զի եւ՝ ի զերրորդ հոգաբարձուն առաքինու- թեամբ . զերկրպագութեան զանազանելով : զայս կամ զերկից առաքինութեան ասէ . այսինքն . եթէ զհաւատ՝ զյոյս և զսէր՝ որք որոշեալ և զանազա- նեալ են բնութեամբ , 'ի մի և 'ի նոյն խորհուրդ դիմեցեն , այսինքն յամ զե- րեքեան միացուցեալ երբե յասպարէզ և 'ի վախճան , նոքօք մեծանան 'ի

յԱծ . զի Ին Է հաւատամ 'ի նա իբր յանհուն բարի և 'ի բարերար, որպէս ես զնա . և սիրելովդ՝ յուսամ վայելել յանմահութե պարգևս նորա ։ Այսմ քաջ միաբանի ասացեալն սբյն յակոբայ մծբնայ հայրապետին . ճառ . ա . յաղագս հաւատոյ ։ * Նախ յառաջագոյն հաւատայ մարդ . և իբրև հաւատայ, սիրէ . և իբրև սիրէ, յուսայ . և իբրև յուսայ, արդարանայ . և իբրև արդարանայ, շինի . և իբրև շինի, կատարեալ ||։ Եւ այս է մեծամեծն 'ի յԱծ, զոր ասաց սբս գրիգոր ։ Կամ դարձեալ՝ զերեն հաւատովն զԱծայնի անձանց ասէ, որք որոշին անձնաւորութեք . որպէս կոչէ և 'ի բանին խդ . 1 . զորս ևթէ 'ի մի խորհուրդ գիտեսցես ասէ՝ Ը և րից առաքինութեցն, այսինքն զհաւատոն՝ հօր նմանեցուցանելով, զյոյսն որդւոյ, և զսէրն՝ հոգւոյն սբյ, այսու յորդորեալ 'ի բարիս՝ մեծամեծ յԱծ . քանզի 'ի մեզ առնուլ՝ թէ որպէս ոչ է հայր միայնակ առանց որդւոյ և հոգւոյ, այնպէս ոչ է հաւատքն հանգոյական առանց յուսոյ և սիրոյ . ուստի յորժամ հաւատամ 'ի նա, ջանամ ես սիրել և յուսալ ։ Կամ իմա այսպէս, որպէս զիր անձն Ածայնի կարգայեցես հաւատովն, Ը նմա և զայլ անձինսն զատանես վասն համագոյութեն, այնպէս զերն յերից Ածաբանական առաքինութեցս սրտի մտօք յանձին ունիցիս, առանձնաս և զայլսն՝ որք ընդ միմեանս կապեալ կան . և այնպէս մեծամեծ նաքօք յԱծ լինելութե արժանի գործոց և փառաց յերկինս ։

Մերոպէին յաւելուած նրէէն հետեւեալ՝ նորին հոգւոյ, առ նոյն տղերս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք ընդ Այ ։

ԲԱՆ. ԺԱ.

Ա . Եւ արդ՝ ես յետինս դաւանողաց՝ ունայն 'ի բարեաց, նայեցեալ խորհրդով մտացս [1] 'ի սկզբնաւորն իմ եղելութի 'ի ձեռն ձեռին ստացողին իմոյ յանէից, յուսով հաւատամ յոյժ քոյ՝ առնել զոր կամի ։ Քանզի հաւատացի, վասն որոյ և խօսեցայ խրատեալ պօղոսիւ, ուսեալ 'ի դաւթայ, թէ և արդ կենդանի մաղթանք նոցա այց ինձ արասցէ . որպէս հաւատովք ճանաչել զնա, և զզօրութի յարութե նորա, ըստ առաքելոյ, և զհաղորդութի չարչարանաց նորա, և որ զկնի բերին ասացեալքն ։ Սցորդ է սմին և յոյժ նմանատիպ՝ հաւատալն իսկապէս և 'ի նորոգս այս փոխադրութի, որ 'ի մեղացն 'ի քաւութիւն, և [2] 'ի չարագործութէ յարդարութի, և յանմաքրութէ 'ի սրբութի, և յանքաւելեացս պարտեաց [3] մահու յանցանաց՝ յանդատապարտն երանութի, և 'ի ծառայական կապանացս՝ յերկնաւորն ազատութի ։ Քանզի [4] զիա՞րդ ոչ արդեօք չքնաղ քան

զգան՝ և 'ի մթութե երկևանութե խաւարի զտեալ՝ և
աստուծով օժանդակեալ և օգնեալ սիրտ մեղաւորի ,
որ է մարմնապէս ծիծաղելն՝ առ նմին հեծէ հոգեպս ։
Որ թէպէտ և յամբարձմանէ բարձրութե գերագու֊
նիցն կայից՝ ստորասուզեալ ծանրութբ յանդնդային
վհին խորխորատ գբոյն կործանման , [5] նորագիւտ մե֊
ղօքն անջրելեօք , ունի և նշխար նշուլից՝ փրկութե
կենաց հպաւոր, [6] իբր կայծակն լուսոյ պահեցեալ 'ի
միտս և յոգի . որպէս զհուրն նշանաւոր և զարմանա֊
ւոր թանձրամած՝ հրաշիւք մակարդեալ վեհին հրա֊
մանի [7] 'ի յատակս ներքինս նիրհեալ ջրհորոցն ։ Ուս֊
տի և մեղուցելոյն իսպառ թաղծելոյ, և ակնկալու֊
թի բարւոյն բարձելոյ , և համարձակութի շնորհին
լքելոյ , յուսալ վերստին անդրէն միւսանգամ նա֊
խապարգևիցն փառազարդութեց դարձեալ հասա֊
նել . քանզի և յածուստ անդուստ հանդերձի և այս՝
ներգործիլ առ սոյնս . վասն զի սա զտուողին զօրու֊
թի՝ ամենահնար աւետարանէ ։ Զոր խունկ հաճու֊
թե մեծապէս հոտոտի ած ,քան յամենայն բուրումն
անուշից , և քան 'ի խառնեալն երբեմն աղացմամբ
'ի սպաս խորանին , որ է կերպարան անձանց խոնար֊
հից զիջեալ բեկութբ՝ առ 'ի միութի նոյն նմանու֊
թե ։ Ըստ որում հարցեալ փրկչին ամենից՝ ցմանս
ախտացեալս տեսանելեօք , հաւատայք ասելով առ
այդ թէ կարող եմ առնել ձեզ զայդ . ոչ պարգևեաց
աչաց նոցա լոյս , եթէ ոչ նախ զհաւատոցն գրաւ ըն֊
կալաւ ։ Վասնզի զի՞նչ քան զմեռելութի քառօրեայն
դիոյ՝ առ կենդանութի մեզ անյուսագոյն , [8] առ որ
կանանցն ժամանելոց 'ի յոյս արարչին՝ հաւատոցն
հանդերձանօք , անյապաղաբար զփառացն այ տեսին
զհանդէս՝ 'ի յեղբօրն կենդանութի ։
Է . Իսկ [9] աստստին անկապուտ շնորհին մնացելոյ
զկնի մեղանացն՝ հզօրագոյն են վկայք ։ Նախ՝ ենովք .
զկնի ահարոն . յետ նոցա դաւիթ . դարձեալ և պե֊
տրոս . ընդ որս և փոքրն եղիազար , որ 'ի մեծէն այ
աղորմեալ՝ մեծագունիցն վկայեցաւ ։ Նևլորդ է առ
այս և բանն առակի անառակ որդւոյն . թողուլ
զպոռնիկն՝ որ 'ի տնէ գովեցաւ . և զմաքսաւորն՝ որ
'ի բարեգործէն յիշատակեցաւ . և զաւազակն երջա֊

նիկ՝ որ յարձակումն վերջին ընչոյն հաւատովքն պսա-
կեցաւ. և [10] զոր անքակելին են պարտիք՝ զհաղոր-
դեալքն սպանման մահու արարչին. առ որս և գլխա-
ւորն ընտրելոց պօղոս, որ երբեմն նախնին էր անօ-
րինաց։ Յորոց ոմանք ծանօթութք օրինին գլորեալք,
անդրէն կանգնեցան բիւրապատկեան գերազանցու-
թբ [11] քան զնախակրօնիցն առաւելութի։ Իսկ [12] որ
նախ քան զօրինակին տուչութի՝ զաւանդն պահեալ
հայրենի, մերձաւորագոյն գոլ պատուիրանի սկզբնա-
հօրն դաւանութե, որ և զնախնւոյն պարտիս ինքեան
վարկուցեալ, զնորայոյն՝ իւրովքն տուժեաց կրից
տաժանմամբ, ոչ քաւեցաւ միայն ծածկեալ 'ի յերկրի,
այլ չարչարելեաւն մարմնով բանականաց բնութե
կենաց կարապետ՝ յաղթող զօրապէս բռնութեան
մահու փոխեցաւ։ [13] Իսկ ոմանք 'ի բուսոյ տհաս հա-
սակին չարութեամբն յերկարաձգեալ, 'ի կատարեալ
տիս ժամանակին ոչ 'ի բարձրութեանն կայից հո-
սեցան, քան թէ 'ի ստորնականաց թշուառութեանց
դժնէից կենացս 'ի կամարն երկնից համբարձան։ [14] Այլ
թէ այն ժամանեաց կանխաւ՝ զօրացեալ 'ի չարեացն
դարձ, որ մինչև յոսկեղէն նիւթ յեղանակեալ հօ-
ղոյս գոյութե, և պատկերն արքունի՝ 'ի պատիւ կեր-
պիս մերոյ՝ նկարեալ արքունականն քանդակուածով,
անկորուստ և անփոխադրիր և յաղթող դաւաճա-
նութեան զմերս ենթադրեալ բնութի, ապա առա-
ւել յուսալի է այժմ մերկապարանոց լուսաւորու-
թի անքօղ և անվերարկու՝ տերամբ ք͞սիւ ուխտեալ.
որով և միշտ հաստատեալ պահի 'ի մեզ բանն տրու-
նի, ըստ մարգարէին ձայնի, ուխտ խաղաղութե և
կնիք հաստատութե՝ առ հաշտարարն միջնորդ՝ երկ-
նային անմահ կենդանի և մշտնջենաւոր բարեխօս։
Ապա ուրեմն ըստ այսու կանոնի ճշմարտագունի, և
անփոփոխադրելի սահմանի, և արարչաւանդ պայմա-
նի, [15] համբուրեմ հաւատոց շրթամբք զպատկեր բա-
նիս, և ակնունիմ փառացն շնորհի. քանզի արդարև
յարդարացուցանելն զմեզ Տ͞յ՝ ոչ ոք զօրէ դատա-
պարտ առնել, ըստ առաքելական բանիս սահ-
մանի։

Դ. Այլ [16] յայս անստուերագիր վստահութե ապաս-

տան, կամ կործանեալս՝ կանգուն. թշուառացեալս՝ յաղթօղ. վրիպեալս՝ 'ի դարձն կենդանական. ամենաթշուառ չարագործս՝ 'ի յոյսն. մահու մատնեցեալս՝ 'ի կեանսն. ընդ ապականութ̃ վաճառեալս՝ 'ի ձիրն. դժոխային գործովք գրաւեալս՝ 'ի լոյսն. ստորնասէր անասնակենցաղս՝ յերկինս. կրկին դայթակղեալս՝ 'ի վերստին փրկութիւն. մեղօք կապեցեալս՝ 'ի հանգստեանն խոստումն. անբժշկական վիրօք վարանեալս՝ 'ի դեղն անմահացուցիչ. ստամբակեալս վայրագութ̃՝ 'ի սանձսն հանդարտութե̃. սրացեալս վարատական՝ 'ի կոչումն. ապառում դժնդակս՝ 'ի հեզութին. ընդդիմաբան լռութացօղս՝ 'ի ներումն : 17
'Ի քն̃ յն̃, և 'ի հայր նորին հզօր և ահաւոր, յանուն և 'ի կամս բարերարութե̃ հոգւոյն ճշմարտի. օրհնաբանեալ իսկութեանն և մի ա̃ծութե̃ն՝ զօրութիւն և արքայութի, մեծութիւն և փառք յաւիտեանս.
ամէն :

(1) 'Ի [illegible] : Յաւագոյն եղանակութիւնն իմ. 'ի ջրոյն ջրոյն. զայս [illegible] հինգ. խառնեալ՝ 'ի ձեռն քհ̃ի, որ է ձեռն հօր : Բայց ստոյգ է. այլ խառնել՝ ձեռամբ կամ զօրութ̃ աստուծոյին իմոյ յօրինել. զի աշ̃ վարդապետս ասէ է այլուր և ս զգաստն 'ի ջրոյն՝ զնել փոխանակ գործիական մասնական. որպէս ասէ և 'ի բանին ձը. 2. * 'Ի ձեռն ձեռին զ անմարմնականի. * Ը անմարմնական ձեռամբ : այսինքն պատմ. Աստուածաբանից. * Սա 'ի ձեռն ձեռին մեծութե̃ն ածութեանն. * Ը ձեռամբ մեծութե̃, եւն : Աւրդ՝ առնել կամի բանիւս. նայեցեալ մարդս յաւագին եղանութիւնն՝ որով զօրութ̃ [illegible] իմոյ 'ի չգոյէ 'ի գոյ ածայ, հաստատամ և յուսամ և զայլ ամ̃ անհնարինս գործել. ուստի և 'ի մեղաց նորոգել զիս, եւն : Վասն զի որպէս հաստատեցի ամ̃ բանիցն՝ զոր դաստնեմ, ըստ [illegible] և առաքելոյն, նոյնպէս հաստատեցի թէ նաև այժմ կենդանի [illegible] նոցա օգնեսցեն ինձ [illegible] 'ի կենդանի հաստատովք ճանաչել ոչ միայն զիս, այլև զզօրութիւն [illegible] և զհաղորդութի չարչարանացն. զի այսմ դաւանութե̃ կից է, կամ զհետ գայ հաստատուն փոփոխութե̃ 'ի մեղաց յարդարութիւն, և այլն :

(2) 'Ի չարագործութենէ : 2. օրին. 'Ի չարգործութենէ :

(3) Մահու յանցանաց : 2. օրին. մահացու յանցանաց : և նոյն իմաստք են. այսինքն 'ի [illegible] մահապարտ մեղացս՝ որ առ իս անքաւելի են, անարժան թողութե̃, փոխադրել յարդարութիւնն երկնաւոր՝ յորմէ չէք անկանել երբէք :

(4) [illegible] : Ո՞չ ապաքէն զարմանալի և 'ի վեր է քան զբան՝ [illegible] մեղաւորի, որոյ [illegible] 'ի խաւարէ երկրայութե̃ յաղորմութեան [illegible], և յայս օգնեալ, [illegible] հաստատ [illegible] : Որ թէպէտ և 'ի բարձրագոյն [illegible] 'ի խորս նոր մեղօք [illegible], [illegible] և [illegible] փրկութե̃՝ զհաստատ և զյոյս յո

զօրութիւնն իւր․ որ պահի 'ի միջամտակարգ հոգի նորա, իբրև զհրաշալի հուր առաքելին, ճախրեալ, Թանձրացեալ 'ի հրամանէն իւր իբրև ժողով 'ի յատակս Ներհեալ, անջրպետ Ջրհորոցն, որ և խակոյն վառեցաւ։ (Բ․ մակաբ․ Ա․ 19․ 20։) Ոսոփի և Մեղուշելոյն, որ բոլորովին տրամեալ է, և անէնկալութիւն բարւոյն բարձեալ 'ի նմանէ, և վստահութիւն ընդունելոյ զշնորհն Թուլացեալ, միայն ապաւէն յուսայ՝ վերստին հասանելոյ Նախապարգևուցն ֆատալարքուբենաց, յառաջագոյն պարգևեալ շնորհացն և առաքինութեց՝ որք փառապարգեն զհոգին։ ֆանդի և յոճռոսփ․ այս կայծակն հաւատոյ և յուսոյ՝ որ ներգործէ 'ի սիրտ մեղաւորին, յետ պատրաստութ 'ի նմա․ զի զզօրութիւն աստուածացուցանողին ցուցցէ լինել ամենակարող։ Կամ, յետ անօրէնի այս, զի Թոյլ տալով նորա անկցի մարդ 'ի մեղս․ զի յետոյ կանգնելով զնա 'ի մեղաց՝ երևեսցի ամենազօրութիւնն իւր։ Յոր խոսն։ յայս հաւատք զգլխան առաւել հաճի ամն, քան 'ի ծխանելիս հին օրինաց խառնեալս 'ի զանազան խնկոց աղացելոց, որ էր օրինակ անձանց բեկելոց զղջմամբ․ առ 'ն Միւթէ նոյն նմանութէ, այսինքն առ 'ի ունել զնոյն նմանութիւն․ զի որպէս այն խունկք մանրեալք և 'ի հուր արկեալ վառէին առ 'ի պատիւ իւր, նոյնպէս սիրտ մեղաւորի զղջմամբն և ապաշխարութ խորտակեալ վառեսցի 'ի սէր իւր։

(5) Նորաֆերափ Մեղոթն անճրէնէօթ։ Այս չէք յօրինակս ինչ։

(6) Իէր նոյծաթի լուսոյ։ 2․ օրին․ Իէր նոյծախան լուսոյ։

(7) 'Ի յոփանս նեբքենս նիրհեալ ճրհորոյն։ Այսպէս ունին մեր օրինակքն․ համաձայն բնագրի (Բ․ մակաբ․ Ա․ 19․) ուր այլ ապացուցեալ գտնէր եղանկի․ նեբքին նիրհեալ ճրհորոյն։

(8) Այս որ կանանցն։ Քան զմնացելութիւն չորեքօրեայ վախճանելոյ չէք ինչ անյուսալի առ 'ի կենդանանալ․ և սակայն վասն այնր կանանցն, այսինքն քերցն ղազարու ժամանելով յառաջ քնի հաւատովք, անսին զփառսն իւր 'ի կենդանանալ եղբօր իւրեանց։

(9) Աշտափրն անխապուտ շնորհին։ Իսկ Թէ այսրէն, կամ դարձեալ անկորուստ միայն շնորհն յետ մեղաց, բազում են վկայք։ Նախ՝ Էնովք, որ ապաշխարելով ընդ մեղս նախահօրն, կամ ընդ իւր մեղսն, վայելեաց ըստ մասին զանմահութիւնն՝ զոր կորոյս Ադամ։ Կարծիք ապաշխարութեանն Ենովքայ՝ Թուի առաջնեալ 'ի փիլոնէ իմաստասիրէ․ զի սա 'ի լուծմունս ծննդոց․ (բան Ա․ համար 82․) յասելոյն Թէ Ենովք յետ ծնանելոյն զմաթուսաղա՝ հաճոյ եղև իւր, մակաբերէ՝ Թէ յառաջն մեղուցեալ, յետոյ ապաշխարեաց։ Երկրորդն՝ յետ մեղաց որթագործութենն ոչ կորոյս զքահանայութիւնն։ Ընդ որս և ֆոփրն, Էղիազար։ Այս Եղիազար ոչ է ուսուցանող․ (Ա․ մակաբ․ Բ․ 5․) ոչ Եղիազարոս ծերն՝ որ նահատակեցաւ։ (Բ․ մակ․ Զ․ 18։) և ոչ միւս Եղիազար քահանայ, որ պատմի (Գ․ մակաբ․ Զ․ 1․) Զի զտեցանէ ոչ պատմին գիրք՝ մեղուցեալ ինչ և ապաշխարեալ։ Որմանք ըստ հին լծ․ իմանան զեղիազար որդի ահարոնի՝ փոքր քան զնադաբ և զաբիուդ․ իբրև Թէ յանցուցեալ իցէ չկամելով ճաշակել զխասն մեղացն։ (ղևտ․ Ժ․ 16։) Սակայն յայդմ ոչ մեղաւ նա, և ոչ ապաշխարութիւն եգիտ․ ուստի և մովսէս լուեալ յահարոնէ զպատճառ չուտելոյն՝ հաւանեցաւ։ Այս միայն էմանաւ զեղիազար կրսեր որդի մովսեսի․ (Ելից․ ԺԲ․ 4։) որ անԹլփատ գոլով ընդդէմ հրամանին իւր, մինչդեռ դառնայր մովսէս յեգիպտոս, հրեշտակ տեառն կամէր սպանանել զնա, այսինքն կամ զմովսէս, և կամ առաւել զմանուկն վասն անԹլփատութեան․ և 'ի Թլփատել զնա մօրն՝ ներեաց հրեշտակն։ (Ելից․ Դ․ 25։) Արդ՝ այն հեղուին ագեան եղև եղիազարու գործ ապաշխարութե․ որով ազատեցաւ 'ի մահուանէն․

ւանդ 'ի Քեզին [illegible] ընդունել հրաշալիքն՝ տարրաբար միայնացեալ [illegible]-նեցն . այսինքն մտաւորն՝ և կեանք նորա , և բովանդակ կենդանեաց : Կամ այսպէս խնամ . փոխքրն այն մասնաւոր որպիսութիւն զանել 'ի մեծէն այլ , այլոց մեծապատնեցն հատանելու վերայ եղև՝ Թողութիւն զատանել ապաշխարութեամբ : Եւ զայս եղելապար [illegible] ասէ՝ ոչ միայն վասն մանկական հառակին , այլև համեմատութեամբ եղելութեան ահաւորութեան . զի առաջին է-րեց զալով քան զմտաւէս ծննդեանն և անմահութեամբ , յաւիտենական ծննդեալ էր զերբն եղելապար քան զմտաւէսին :

(10) Եւ զոր անփոփելին են : Թողում յետև չհաղորդելոյն , այսինքն զհաղորդելոյն սաղմնական քեզ տարաչելին , որ անկանելի պատրանք են՝ վասն անհնարին չարութեան . և սակայն բազումք 'ի նոցանէ հաւատովք ապաշխարեալ արդարացան : Այլ զհաղորդելոյն խնամ փոխանակ ասացեանի . այսինքն Թողում յաւաղ ընդ զանկանելի պատրանս զհաղորդելոցն մահուան քեզ : Արդ որս , այսինքն ընդ որոց Թողում և զգլխաւորն ընտրելոց տօղաս . կամ , բայց յորոց և զգլխաւորն ընտրելոց տօղաս վերայ է այսմ , որ եղբեմն զլուխ էր մեղաւորաց :

(11) Քան զհախանձելեացն առաւել է : Ասենք 'ի մեղուցելոցն Է օրինաց՝ յապաշխարելն առաւել զերազանցեցին արդարքն քան զերեսեալն 'ի նախկին կրօնին , այսինքն 'ի բնական օրէնս : Կամ , այնպիսի ապաշխարօղք առաւել ևս եղեն քան զմնացեալն 'ի կրօնի ամբարշտութեան զոր նախ ընկալան , այսինքն քան զանմեղ մնացեալն . զի բազմաց՝ անկումն պատճառք լինի յորդորմանցն ընթանալ յառաքինութիւնս՝ քան զոչ անկեալն . և այս է զօրծ կարգաւորութեան այլ , և ոչ 'ի զխաւորութե կամաց մեղուցելոցն :

(12) Որ նախ քան զընթանալն : Ընտրեալք՝ որ նախ քան զգրաւոր օրէնսն՝ զանուանն բնական օրինացն պահելով , առաւել մերձաւոր և նմանօղ [illegible] , այսինքն արդարահանն , որ [illegible] էր հաւատոց և ճշմարիտ ամբարշտութեան . և [illegible] խրատել անձինն հաւանեալով , [illegible] , [illegible] փոխանակ աւելոյ՝ [illegible] կամ աշխատութեամբ կրից խոյոց . (Թերևս ոչ ասանելով [illegible] , որպէս աւանդութիւն է ոմանց) : Այլ յաւէ ոչ լոկ 'ի մեղաց քաւեցաւ , և յետոյ [illegible] ապաշխարողաց՝ մեռեալ ծածկեցաւ յերկրի . այլ չարչարելի մարմնովն կրեալ յաղթօղ մահու՝ և կարդացեալ կենդանութեան բնութեան՝ փոխեցաւ կենդանեայն :

(13) Իսկ [illegible] : Ասենք 'ի զարմանալիսն [illegible] , որք ոչ երբեք 'ի բարձրութեան [illegible] , այլ 'ի մանկութենէ՝ [illegible] . [illegible] կեալ ընդ երկար , [illegible] , 'ի Թշուառութենէ չարաչար [illegible] , որպէս [illegible] , [illegible] , և այլք : Ցայլ [illegible] էր՝ [illegible] . բայց [illegible] է [illegible] , [illegible] մեր օրին :

(14) Եւ [illegible] : Եթէ կամիսաւ 'ի բնական և 'ի գրաւոր օրէնս զօրացան հաւատք ապաշխարութեան՝ զարմանալ 'ի չարեաց , և այնչափ արդեւ , [illegible] , [illegible] զհաղորդելն [illegible] մեր . և [illegible] ամբարշտին [illegible] 'ի հողիս մեր , և [illegible] բնութեան աւանել անշարժ 'ի բարին՝ և յաղթօղ պատերազմաց [illegible] , [illegible] առաւել այժմ յօրէնս շնորհաց յաւաղ է [illegible] հաւատոյ և շնորհաց , յորում քո է հաշտութիւն , են : Կամ , եթէ կամիսաւ այնչափ [illegible] հաւատոյն , [illegible] քեզ [illegible] էր բնութիւնս մեր , և [illegible] , ամբարշտին բնութիւնն չև էր միաւորեալ ընդ

կերպակից մերոյ, անկորուստ և անապականելի մնալով, և լինելով յաղթօղ պատերազմացն սատանայի, ապա այժմ յետ լինելոյ այսր մեծ՝ առաւել ևս յուսալի է և այլն :

(15) Համբուրել . . . զդարպասեր բանին : Ընդունիմ հաւատով զճշմարտութիւն բանիս . և ակնածիմ ծառայից շնորհի, շնորհէ աստուածութեան՝ որ է սերմն փառացն երկնայնոց, կամ, շնորհքն՝ որ է փառք հոգւոյ :

(16) Յայս անփոփոխելի : Յայտնապէս յայտնի գրեալ, կամ յանճառելի յաւիտենութիւն աստուածութեան, կործանեալս մեղօք՝ կանգուն կամ հաստատուն : Կշիռելով . ախտանեալս, կամ մոլորեալս՝ 'ի տարբը, այսինքն կամ, հաստատիմ 'ի գործս, 'ի յոյսն, 'ի կեանսն, ևն : Արտաբերեալ կարկառեալ . փախուցեալս և Թափառականս գտեալ 'ի կոչումն այ : առաւտոտ . խիստ, յանմասն՝ հաստատիմ 'ի հեղութիւնն : Լուսաւորեալ . չարաբանս, անխծանօղս հաստատիմ 'ի ներումն մեղաւորաց խնոց, ևն :

(17) 'Ի ժա յա : Այս վստահութիւն իմ հաստատի կամ յանջողի զօրութե քեզ, և հօր նորա, և անուանք և կամօք հոգւոյն սբյ, որոց օրհնաբանեալ խնկութեան՝ է կամ եղիցի զօրութիւն, արքայութիւն ևն :

Մերօրէն յաւելեալ ներքին հեծութեն՝ նորին հոգւոյ, առ նոյն ողջերս մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

ԲԱՆ . ԺԹ .

ա . Եւ արդ՝ քանզի յաւէտ [1] յառաջնում զղջման յուսահատութեան բանիւ լքայ, և տարակուսանաց հեծանաւն 'ի մահ ձաղկեցայ, աստանօր 'ի յուսոյն կերպարան փոխեալ՝ յարգահատել համարձակեցայց, զերրորդութիւն դա կարդալով յօգնականութիւն ինձ մեղաւորիս : Որ և անդստին իսկ յօրհնաբանելն և 'ի դաւանելն զկենդանարարն բնաւից ած, իսկոյն և կոչումն ընտանի ձայնի ահաւորութեան անուան շնորհաձիրն բարերարի՝ մահացելոյս է կենդանութի, ըստ մարգարէին նախաձայնութե, թէ [2] որ կարդայ զանուն տն, նա կեցցէ : Իսկ ես ոչ միայն կարդամ, այլ նախ հաւատամ մեծութե նորին . [3] ոչ եթէ վասն պարգևաց նորա մատուցեալ յողոք դեգերիմ, այլ իբր զկենդանութի իսկապէս, և զշնչոյ տուրևառութի հաւաստի, առանց որոյ ոչ է շարժողութի կամ ընթացումն . զի ոչ այնքան յուսոյն հանգուցիւ, որքան սիրոյն կապանօք բերիմ : Ոչ 'ի տուրսն, այլ 'ի տուօղն յաւէտ կարօտիմ . ոչ փառքն են ինձ անձկալի, այլ փառաւոր-

րեալն է համբուրելի. ոչ կենացն փափագանօք, այլ կենարարին յիշատակաւն միշտ ձենձերիմ.[4] ոչ վայելեցն տարփանօք հեծեմ, այլ հանդերձողին տենչանօք՝ յերկիւղածանց աստի կականիմ. ոչ զհանգիստն խնդրեմ, այլ [5] զհանգուցչին զերեսս աղաչեմ. ոչ հարսնարանին խնձոյիւք, այլ փեսային անձկութբ մաշիմ։ Ի ձեռն որոյ զօրութե վստահապէս անկալութբ [6] վերագրեցեալդ յանցանօք բեռանց՝ աներկմիտ յուսով հաւատամ՝ ՚ի կարողին ձեռն [7] ապաստանեալ, ոչ քաւութե միայն հասանել, այլ զնոյն ինքն տեսանել՝ յողորմութիւն և ՚ի գթութի և յերկնիցն ժառանգութիւն. Թէպէտ և յոյժ եմ տարագրելի.

Ը. Եւ արդ՝ բազում պատկառանօք ամաչեցելոց դիմաց կորացեալ, [8] զմիջնորդ աղդման կափուցմանց երկակի շրթանցս՝ արժանափակ աղխիւ կարկելոց՝ առ անհամարձակ լեզուիս շարժութի, նորոգեցից ՚ի յերգ հառաչման պաղատանաց յեղանակութեանցս աղիողորմ հեծեծանաց՝ ՚ի բարձունս աղաղակելոյ։

Մաղթանք զօրաւորք արհաւրաց Գեղջերանոյ։

Թ. Ընկալ քաղցրութբ տր ած հզօր՝ զդառնաձացողիս զաղաչանս. մատիր գթութբ առ պատկառեալս դիմօք. փարատեա ամենապարգև՝ զամօթական տխրութիւս. բարձ յինէն ողորմած՝ [9] զանբերելի ծանրութիւս. անջրպետեա հնարաւոր՝ զմահացու կրթութիւս. աւարեա միշտ յաղթօղ՝ զխաբողին հաճութիւնս. բացադրեա վերնային՝ զմոլեւոյն մառախուղ. կնքեա կեցուցիչ՝ զկորուսչին ընթացմունս. ցրուեա ծածկատես՝ զըմբռնողին չար դրոմունս. խորտակեա անքնին՝ զմարտողին դիմեցմունս։ Տեառնագրեա քո անուամբդ՝ զլուսանցոյց երդ յարկիս. պարփակեա քո ձեռամբդ՝ զառաստաղ տաճարիս. գծագրեա քո արեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս. կերպագծ զքո նշանդ՝ ՚ի հետս ելից մաղթողիս. ամրացո քո աջովդ՝ զհանգստեանս խշտի. մաքրեսցես ՚ի հաղբից՝ զծածկարան անկողնոյս. պահեսցես քո կամօքդ՝ [10] զտառապեալ անձն ոգւոյս. անխարդախ ա-

բանացես՝ զքո շնորհեալ շունչ մարմնոյս . կացուսցես շրջափակ՝ զպար զօրուդ երկնայնոյ . կարգեսցես 'ի դիմի՝ ընդդէմ դիւացն դասու : Տուր հանգիստ բեր-կրութեն մահահանգոյնս նիրհման 'ի խորութէ գիշե-րիս , բարեխօսութբ հայցուածոց սբյ Ածածնիդ՝ և ամենայն ընտրելոց : Ամփոփեալ[11] պարուրեալ զպա-տուհան տեսութեց՝ զզայարանացս իմաստից՝ անզար-հուրելի զետեղմամբ՝ 'ի ծփական խռովութեց , կեն-ցաղական զբաղմանց . անրջական երազոց ,[12] խօլա-կանաց ցնորից . յիշատակաւ քո յուսոյդ՝ անվնասե-լի պաշտպանեալ : Եւ ընթափեալ վերստին 'ի ննջմա-նէ ծանրութե՛ն ամենազգաստ արթնութբ , հոգենո-րոգ զուարթութբ 'ի քեզ արձանացեալ , զայս ձայն մաղթանաց՝ բուրմամբ հաւատոյ՝[13] քեզ ամենոր-հնեալ Թագաւոր փառաց անձառից , փառաբանո-ղաց երկնագումար խմբից երգակցեալ՝ յերկինս ա-ռաքել : Զի դու փառաւորեալ ես յամենայն արա-րածոց յաւիտեանս յաւիտենից . ամէն :

---

(1) Յառաջնում պրակին : 'Ի բանսն Զ . Է . Ը . հայելով 'ի բազմապատիկ անօրէնութիւնս իմ և յարդար դատաստանն Այ յուսահատութե բանիւ զիս պարտաւորեցի . և սաստիկ տարակուսանօք իբրև հեծանաւ հաստ զաւազանաւ հարուածեցայ մինչև 'ի մահ . այս է՝ իմով բանիւ խոստովանեցայ զիս որդի կորստեան , և ոչ փրկութե՛ ցորչափ կան յիս անօրէնութիւնք : Բայց այժմ զերկրորդ յուսոյն յանձն իմ ընկալեալ . հայելով 'ի զօրութիւնն Այ՝ իշխեցից աղաչել , պաղատիլ , յողորմութիւն ինձ կոչելով զնա Երրորդութիւնն , որ կարէ և կամի զիս արդարացուցանել :

(2) Որ և անդորրին : Անյիշաչար յուսալի է ողորմութիւնն Այ , և արտադահէս օգնականութիւն նորա , մինչև անդէն 'ի դասանել զնա սրտիւ , խակոյն յօրդորիւք բերանով ևս իբր ընտանեբար կոչել զանուն նորա , Թէպէտ ինքնին ոչհասոր է . և այն կարգաւն կամ կոչելն կեանս տայ մեռելոյս , բառ մարգարէին , որ կարդայ զանուն տն՝ կեցցէ : Որ էութեան զանուն տն : Այսպէս գնի 'ի լուս օրինակս ստացեալ համեմատ ընդարձին յամենալեայ . (Բ . 32 : և Հռոմ . Ժ . 13 .) այլ և յարմար նախընթաց բանին , յորում ասէ՝ կոչումն ընտանի ձայնիւ անուան բարերարին՝ մահացելոյս է կենդանութիւն . իսկ յայլ ստացագրեալս գնի , որ էութեան տր :

(3) Իսկ ես ոչ միայն : Ես ոչ լոկ բերանով կարդամ զնա , ոչ սուտակաբար 'ի յուսոյ շարժեալ , օգնութիւն ևեթ հայցեմ 'ի կարիս իմ , այլ սրտիւ նախ հաւատամ մեծութեան նորա : Ո՛չ եթէ վասն պարգևաց նորա : Ո՛չ վասն բնական և գերբնական պարգևաց նորա աղաչեմ , այլ զնոյն ինքն պարգևատուն համարիմ ինձ ճշմարիտ կենդանութիւն , և շունչ հոգւոյս և մարմնոյս . զի ըստ գերբնական կենդանութեն՝ որ 'ի ձեռն արդարարար շնորհաց , նա միայն է պատճառ . և ըստ բնական կենդանութե՝ առեղծիչ միայն նա է , և նա ինքն ընդհանուր պահպանիչ . և կատարիչ պահ-

առաքինութիւն երկրորդ աստուածաւաց ։ Այսու բանիւ ոչ խնամի՝ թէ զաղաղ-
գեւոն այլ չէր եղեւ որպէս խնդրել կամ ասել, կամ ոչ վասն հաստատութեան վար-
ձուց ծառայել այլ. քանի զի է և այս 'ի զգուշութիւն մասին, և առանձնաբար
'ի նա գրոց. այլ նշանակէ՝ թէ չէ՛ որպէս 'ի սպասաւորութեան անոր զաւակի առ-
նուլ, կամ վասն սպասաւորացն միայն խնդրել զԱծ. զի այս վարձկանի է, և
յայս՝ 'ի սիրոյ ամենայն՝ քանի այլ. վասն այն յարէ. Գէ ո՛չ այնքան յաւուրն հան-
գստեան, որքան սիրոյն նախանձ բերէ ։ Իսկ օրինակ ծածկութիւն է՝ առա-
ւել զԱծ սիրել քան զպատուիրեալս նորա, և զայնս սիրել վասն այն և յԱծ ։
Այլ զերբայականց իմն սիրոյ է՝ զԱծ միայն սիրել 'ի պատուէրս իւր, ո՛չ զի
միայն պատուէ, այլ զի յՈւեբեան է պատուիրանատու. որով պատուէրքն և
պատուիրանատուն լինին միայն նիւթ սիրոյ, իսկ Ած և բարութիւն նորա լինի
բան առաջնոյ և շարժիչ սիրոյ ։ Զայս իմն կամի յայտնել Ն֊ վարդապե-
տեալս յայս բանի, և 'ի յաշորդսն ։

(4) Ո՛ւ վոյէլէդ ։ Ո՛չ հանդերձեալ վայելմանցն յանկութիւ հաստա-
տել, այլ հանդերձողին, զնոյնս պատուիրատողին բարձանօքն յէրէկանց
առքի, 'ի նորքին խորոց սրտիս կակուն բարձեալ ողջամ ։

(5) Զհանգոյցէն պէրէսս ողացէմ ։ Այսինքն խնդրեմ, որոնեմ ։

(6) Վէրուգրեցեսդ յանցանօք բէռանց ։ Այսինքն բնաւորք վերադրեալ
յանցանաց ։ Թէպէտև առէ՝ պարտաւոր եմ նախասացեալ մեղօքն,
բայց 'ի զօրութիւն վերիշխն իմոյ վստահացեալ, աներկբայ հաւատամ ո՛չ
միայն քաւութիւն գտանել, այլ և զնա ինքն յիւր բնութին ստանալ,
յողորմութին, ողորմութիւն և գթութիւն նորա, և յերբիւրս ծառանգութեան,
հանդերձ ժառանգութիւն երկնից ։

(7) Ապաստանեալ ։ 2. օրին. ապաստան եղէալ ։

(8) Զմեղօքդ ագդման ։ Թէպէտ և վստահութիւն այսպիսի ունիմ յողոր-
մութիւնն ԱԾ, բայց միշտ լի եմ պատկառանօք, և ամօթ երեսաց ի-
մոց ոչ թողու 'ի վեր հայել. այլ միայն զմիջնորդ, այսինքն զաղօթելս որ
է միջնորդ ագդելոյ 'ի պատարանձումն շրթանցս արժանապէս փակելոյ
վասն մեղացս, որպէս զի անհամարձակ լեզուս շարժեսցի, գարձուցից
'ի յերդ հառաչանաց, պաղատանաց յեղանակօքն, այսինքն զանազան պա-
ղատանաց. կամ 'ի փոփոխումն խնդրուածոց ։ Կամ, զմիջնորդ, այսինքն
զզերծս՝ որ է գործի ագդելոյ կամ խօսելոյ պատարանձեալ շրթանցս. զի
զերծն է նշանակ խօսից. և հասկ բերանոյ՝ ձեռն է գործի խօսելոյ նշա-
նացի, կամ գրոյ ։ որբանտոնի ողինս, կամ ասելս. արժանապէս փա-
կող՝ կամ իրաւացի փականք ։ 'Ի մի օրին, ունի, այսինքն ցաւով կի
ամօթով մեղաց պատարանձեալ շրթանցս ։ Հին լուծ. զմիջնորդ ագդման ի-
մանոյ զեզաս, որ ագդէ հոգւոյն և մարմնոյն ։ Բայց անյարմար է կար-
գի բանին ։

(9) Զանբէրէլի ծանրութիս ։ Բարձ յինէն զանտանելի ծանրութիւն մե-
ղաց, կամ արտմութեանց սրտիս ։ անհրաժեշտ, 'ի բաց առ, հեռացո զմա-
հացու կրթութիս ։ (օրին. իմ՝ գրգութիս) զանհատելի աղտեղութիւնս մե-
ղաց, կամ զանհատելի զպղծութիւնս, և զաղտեղի մեղաց ։ առաջէմ, այլ օ-
րին. առէրէմ ։ այսինքն ջնջեա կամ եղծեա զխաբողին հաճոյթիւնս,
զհեշտութիւնս կամ զհրապոյրս խաբողին սատանայի ։ Քաղաքէմ, հե-
ռացո, կամ յայտնեա զմաքրութեան յուշեալ, կառաջեալ զիւրն, որ մեծա-
ցուցանէ զոգս մեղաց՝ առ 'ի չանտանել զպատուիրանն ։ Քոփէմ, աղբիլ,
խափանեա զխորհուրդս սատանայի ընթացմունս 'ի վերայ իմ, կամ,
զխորհրդոցս և զչարս նորա ընդդէմ իմ ։

(10) Գծագրէմ փօ ոէրաքէդ ։ Ըստ որում խորայեղացեալն հրամայեցեր
յերկնայնոց՝ օծանել զանուանս ամաց իւրեանց արեամբ զառակական գա-
ռինն, որպէս զի մի մերձեսցէ սատակիչն 'ի տունս նոցա, և առա-

ածել եա իմքն հայցեմ, քաղ ամենայնի ատրեանքն նշանադրեցես զմնաւոր ան-
ներկիս. այլ և զմնացա, զի մի մերձենայցէ աստուածոց: Կերպոց, ձևացն
զնշանն խաչիդ 'ի շուրթս երից և մտաց իմոց, զի մի օձն զարմանակալ
խայթիցէ: Պահպանեսն զհամապատանս նշանի, զանկողինս յոր հանգ-
չիմ: Մաքրեսցես 'ի հողմոց, 'ի վտանգաւոր երազոց՝ որք երբ արտաքոյթ
կարեն լինել 'ի ծածկապատի անկողնոյն՝ կամ զկերպուածով, կամ 'ի չա-
րութեան մարդկան և դիւաց: Պահեսցես պատուազեալ անձն ... Եւ թէ
անձն առաջի փոխանակ մաքրման, որպէս և 'ի բանին լա. 2. լբ. 2. կթ.
2. բացատրի, անմիտաս պահել պահպանեալ մարմինն՝ որ է հոգւոյն
իբրև բնակարան: Իսկ անձն առնել փոխանակ հոգւոյ, բստ որում
յաճախ նշանակէ, բացատրի՝ պահեսցես պատուականեալ անձին՝ որ է հո-
գիս, և հանմանի բացայայտիչն եղեալ 'ի սեռական հոլով, բստ ասա-
ցոր ոճոյն, զորմէ յընդարձակ քերականն. հմր 845: Անխարդախ, ան-
մեղանչելի պատուասցես զշարժ կամ զկենդանութիւն մարմնոյս՝ զոր զու-
շնորհեցեր:

(11) Պարարէն պղպաջական: Պառաւոն կամ պառահարմնեմն զոչս իմ, որ է
գլխաւոր զգայարան՝ ծանուցող խմտութեանց մտաց, զոր ամփոփեսցես անխռ-
վիւ ղաղարմամբ կամ հանդարտութեամբ քնոյ:

(12) Խօլական ցնորից: այլ օրէն. Խառնակական. խառնիխուռն երևա-
կայութեանց կամ երևութից՝ որք 'ի խելառութեան լինին:

(13) Քեզ ամենօրհնեալ. Օրհնեալ քեզ այսր ասացածն, քեզ ամենօրհնեալ
Թագաւոր փառաց անճառելի յերկինս առաւել. ամէն: այլքն պակասին:

Զայս զօրաւոր մաղթանք Ընկալ թագաւորաբէ, ... 'ի հայկաղնեաց անուն
Յովսէփ արկածաւոր յոհաննեսեան, անգէտ ... բարբարոսի
թարգմանեալ է 'ի նոյ լեզու, և ընծայեալ Աղէքսանդրի կայսեր Ռուսաց
իբր ... հաճոյական:

Սքրոբին յաւելուած ներքին հեծութեան՝ Նորին հոգւոյն, առ Նոյն ողբոց մաղթանաց բանի:

Ի խորոց սրտից խօսք ընդ Այ:

ԲԱՆ. ԺԳ.

ա. Ած բարերար հզօր ահաւոր, [1] հայրդ բարի ողորմութեանդ շնորհի, որոյ անուանդ իսկ մեծիդ զգթութիւն և զընտանութի աւետարանէ, քաղցր դժնէից և անգոհացողաց: Ընդ քեզ և [2] որդւոյդ քո՝ իբրև զքեզ, զօրաւոր ձեռն իբրև զքոյդ, անժամանակ տէրութեամբ ահեղ, ընդ արարչութեանդ քում բարձրացեալ: Նա հոգւոյդ Ճշմարտութեան բղխեալ առ 'ի քէն անապառութեամբ, [3] կատարեալ իսկութի գոյի, էութիւն մշտնջենաւոր, հաւասար քո ամիւ, փառակից որդւոյ քոյ տէրութեամբ: Երրեակ անձնաւորութի՝ համայն անքնին, [4] տրոհեալ 'ի դէմաց՝ ուրոյն զատուցմամբ. իսկ [5] միաւորեալ համա-

զուգութիւն, նոյնագոյ բնութիւն տիրապէս, անշփոթ և անանջրպետ՝ միով կամօք և կցորդութիւն ․ ոչ երկ-ցութի ումեմն 'ի յումեմն, և ոչ քթթել մի ական առ-նուազութի միոյն ժամանակաւ, քան թէ պատճառ-սիրոյ երկնայնոյ անստուեր լուսոյ՝ որ առ մերն է ծա-նօթութի, միով պսակաւ սրբասացուն անսկզբնա-բար ա̃ծաբանեալ ։ Վասնզի արդարև վերաձայնեալս այս խոստովանութիւն [6] երեքփառաւորեանդ դաւա-նութե՞ զվէմն հաւատոյ պետրոս երանեաց ․ իսկ զդա-տապարտելոյս անձն մեղօք՝ [7] բարեհրաման քո ակ-նարկութ, ով խնդրողդ գերելոյս՝ հրաշանորոգ ար-դարացուցէ ։ Վասնզի թէպէտ և քո իցեն պարգևք, և քո ողորմութիւնք, այլ ոչ 'ի պարգևսն ես այնքան հաշակեալ, որքան յողորմութեան ․ զի երկրորդն՝ ը̃դ քոյդ յաճախէ զփառս, իսկ առաջինն՝ զճգնաւո-րացն յայտնէ զգործս ․ զի պարգևք՝ վաստակոցն են փոխատրութիւնք, իսկ ողորմութիւնք՝ մեղուցելոյս բա-րերարութիւնք ։

Է̃ ․ Եւ արդ՝ [8] մի զօրասցին մարդկայինս գործք ա-ռաջի քոյոցդ շնորհաց՝ ա̃ծ գթութեանց, թէ և անդր իսկ իցեն [9] քան զօրէնս հասարակաց՝ բնաւորականս հոսմանց ․ այլ յաղթող եղեալ քոյդ երկայնմտութե, նուազ եղիցի առ քումդ մասին ընթացք երկրա-ծնաց ։ Վասնզի և որ [10] մաքրութ պերճանային օրի-նականացն վստահութիւնք, 'ի լուսաւորել քոյդ ար-դարութե գուշակ ներկայիս, ամենանուազ անձկու-թեամբ լքեալ հրէութիւն՝ յետնեալ, և յաւէտ ընդ-տարագրական ողորմելոցն, առաւել նոքա գտան կա-րօտեալ մարդասիրութե ։ Եւ քանզի ամենայն ինչ հնարաւոր է քեզ՝ բարերար, լո՛ւր պաղատանաց գոչ-ման հեծութեանս՝ որ կարդամն առ քեզ ․ ողորմեա կեցո, և մարդասիրեա ։ Զի քո է երկայնմտութի, քաղցրութի, փրկութի, քաւութի, և փառք [11] յա-մենեցունց՝ յաւիտենից ազգաց ․ ամէն ։

---

(1) Հայրք Բանի ։ Ո՛չ միայն ա̃ծ ես մեր՝ այլև հայր բարերար ․ որոց ծառայեցաք մեծագին, 'ի շնորհաց ողորմութեանդ հայր ես մեր՝ և ոչ բնութեամբ ․ որոյ և հայրական անուանդ զքնքուշութիւն ցուցանէ մեզ, քաղցր զոլով ժամանակ, և անփոխադրելոց ։ [illegible] [illegible] ։ մի [illegible] ․ [illegible] ցուցոց ։

(2) Ոտէնտ փս ։ Այս քեզ և ընդ քեզ է միշտ որդիդ , նման քեզ յամի ; զօրաւոր ձեռն նորա կամ կարողութիւնն իւրև գծոյգ , անժամանակ և անհաւոր ըստ տեղութենն . ընդ ուրոյնութէտ , ընդ արարչական բնութեանդ բաղձրացեալ ։ Այնպէս որդի է քո , զի ոչ իւիք և ոչ երբէք 'ի քէն պակասի ։

(3) Կափարէտ խոխամբիմ ։ Նոյնպէս և հոգւոյդ որ յառաջ եկեալ աստանց ապաւէլոյ , նմին նման քեզ՝ կատարեալ բնութիւն , կամ անձն գոյօղ , ոչ անկատար զօրութիւն ինչ՝ ըստ մոլորութեն հոգեմարտից ։

(4) Տրոհէտ'ն տինմոյ , բաժանեալ , զանազանեալ ըստ դիմաց կամ ըստ անձանց , ուրոյն զօրութեամբ , որոշ տարբերութեամբ 'ի ձեռն անձնական յատկութեանց , որք 'ի միմեանց իրապէս զանազանին , և զանազանեն զանձինս ։ Վարդապետք յունաց և հայոց , այլև հնագոյնք 'ի լատինացւոց՝ առեալ 'ի կիր առնուն զնոյն անձանց զբառքս՝ բաժանեալ , զատեալ , որոշեալ , անջատեալ , ևն . առ 'ի ցուցանել միայն զդրացական և զանշփոթելի զանազանութիւն նոցա ընդդէմ սաբէլի և այլոց աղանդաւորաց , որք պատահական զանազանութիւն ինչ եւեթ դնէին 'ի նոսա ։ Այլ զի այսպիսի բառք կարեն եւս նշանակել զբաժանումն 'ի միասնութենէ , կամ զայլևայլութիւն բնութեան , ըստ այսմ՝ անբաժանելի , անանջատ աստուածային անձինն . որպէս և ասա զինի առէ , անշփոթ և անանջրաղէփ ։ Վասն որոյ ըստ այլևայլ մտաց զայսպիսի բառս ուրեք ընծայեցին աստուածային անձանց , և ուրեք ոչ ։ Ըստ որում և չնորհալին 'ի տ . թղթ . առ մանուէլ կայսր գրէ ։ * Եւ ոչ գարձեալ հրէականին հեռեւողի սաբէլի լիբէացւոյ ձայնակցեալ , զերիսն 'ի մի հաւաքել անձնաւորութիւն , այլ բաժանեալք անբաժանաբար , և միաւորեալք որոշմամբ՝ ըստ ուղղափառ հարցն աւանդութեան ‖ ։ Յայսպիսի երս քաղձրայայտ գոլով ողջմտութիւն և մեծ զգուշութիւն հարցն , յանդգնութիւն է առգասանել զկիրառութիւն նոցա ։

(5) Միոսորէտ համալոգոնէ ։ Նոյն աստուածային անձինք՝ որք ըստ յատկութեանցն զանազանին , միաւորեալ են միասնաբար մի և նոյն անհատ բնութեամբ փիրոպէս , այսինքն յատկապէս , իսկապէս , և ոչ անյատկաբար որպէս զբարդումն մարդկեւ , որք մի բնութիւն ասին միայն ըստ տեսակին ։ Անանջրաղէփ , անորոշելի 'ի միմեանց՝ մուշկամօփ համձութեան , և կցորդութեամբ , գործակցութեամբ 'ի խնամս արարածոց ։ Որով խմանի՝ թէ անորոշելի են ոչ միայն առ 'ի ներքս բնութեամբ և այլ բացարձակօքն , այլ և առարտաքս 'ի տնտեսութիւն արարածոց ։ Ուներիցոսինն ասեն 'ն յուսեն . ոչ մեծութիւն կամ առաւելութիւն միոյն քան զմիւսն . կամ , ոչ իշխանութիւն միոյն 'ի վերայ միւսոյն ։ և ոչ փիլինել մի ակսն , և ոչ վայրկեան մի առ նուազութիւն միոյն ժամանեալ , մինն 'ի նոցանէ նուազեալ կամ պակասեալ 'ի գոլոյ , որով խմանի գոյակցութիւն նոցա ։ Կամ , և ոչ առկաւ մի՝ մինն առ կարօտութիւն միւսոյն ժամանեալ յօգնել , որով խմանի համազօրութիւնն ։ Կամ , և ոչ փոքու իմն միոյն առ նուազութիւն ժամանեալ , այսինքն նուազ կամ թերի գտեալ քան զմիւսն . որով խմանի հաւասարութիւնն ։ փան նէ պափձառ ոնրոյ երինայնոյ ։ Կրկնակի յարի այս ընդ նախասաց բանիդ . մի՝ իբրև նմանութիւն առեալ յարեգականէ . այսինքն որպէս պայծառ լոյս արեգական պատճառ է ջերմութեան , և երկոքին համանգամայն են , արեգակն՝ լոյս և ջերմութիւն , այսպէս յերից անձանց մին քան զմիւսն և ոչ փոքու իմն նուազեալ է կամ յետոյն . փան նէ , այսինքն որպէս թէ , կամ իբրև պատճառ գոլով մին հայր՝ սերոյ երինայնոյ , հոգւոյն սրբոյ , և անափոնէր լտատոյ՝ որդւոյն ։ Որ առ մերն է ծանօթութիւն . այս օրինակ բացատրութեան ըստ միրում ճանաչման առի . կամ որչափ 'ի մեր կողմանէ ճանաչել կարօղ եմք ։ Ուր 2 . օրին . և ա

հեռ լծ. գնեն. որ մերն է ծանօթութեան: Երկրորդ՝ խմանի այսպէս. Ածայքն անձինք հաւասար են, և չեն 'ի նոսա մեծ և փոքր, առաջին և յետին. գան ինչ, այսինքն բայց եթէ 'ի պատճառս երկնային սիրոյն, որով անըն-տաներ լոյսն որդին մարդացաւ. և ելն 'ի մեր ծանօթութեն, որով փոքր և յետին առնի քան զհայր: Այս համառօտ երրորդութիւն մեզ պատկա-ուերտացուցէ, երեք սրբութիւն, որ 'ի ուերոյ սկսեալ՝ 'ի սուրբ առաքեալ բոլորականձև եւրև զպսակ, անըկլինեւէոր ուծութանէալ, որպէս անակնկալն օրհնաբանեսցուք 'ի հրեշտակաց. կամ, 'ի սկզբանէ, միշտ, յաւէտ որում ոչ գոյ 'ի գիրս՝ թէ երբ սկսան այսպէս օրհնել զնա:

(6) Երեւփառափրէանք թաաննուծէ: մի օրին. թաաննուծէ: և առն երեք-փառաւորեան, զի լուսեղէայն զէրիս անձինսն զաւանեաց սերովբս. զհայր և զորդի՝ յառաջն, Պոմե եւ որդի ոյ. և զհոգին սր յառաջն, կէնդանւոյ. այսինքն ամենայն զկենդանի հոգին. զի որպէս ասէ 'ի բանն լք. 7. * Որ զոլոռ ընդ նմա հոգւոյն, անհասանելի ոմն և անկէնդան, և առ ամ հրա-մանն նուաճեալ: || Այս փոխանակ բայլին՝ Երանէոց, օրինակ մի զնէ ա-նուանէոց. եւրև թէ զմեծն հաւատոյ անուանեաց կամ կոչեաց սերովբս:

(7) Բարէնէրանն բա աէնարէուծէ: Խոստովանութիւն երրեակ ածութեան ասէ՝ զսերովբս զսրբազան արժանի երանութեան տալ. իսկ զանձն զա-տապարտելոյս մեզ՝ քո բարերար հաճութեամբ գոնէ արդարացուցէ, որ առնուլ հրաշալի է քան զսերովբսի երանութիւնն. զի այն եւրև վարձք հաւատոց նոցա չնորհեցաւ: Վասն զի թէպէտ երկրայինս եմ 'ի քէն են, այսինքն թէ պարգևաց, որ է յաղթանակ կամ հատուցումն վաստակոց բարեաց, և թէ ողորմութեան, որ է շնորհ բարերարութիւն ան-անարժանս, բայց երկրորդս առնուլ յաճախէ զխոստովանութիւն՝ քան թէ ա-ռաջինն՝ պարգևքն, որ եւրև վարձք՝ յայտնէ միանգամայն զարժանա-ւոր գործս ճգնաւորացն, այսինքն առաքինեաց, ճգնելոցն՝ աշխատելոցն 'ի գործս բարիս:

(8) Մէ ղէրաոյէն մարդկայինս գործ: Մարթ է իմանալ 'ի վերայ բարի գործոց, և 'ի վերայ չարեաց: Եթէ ասէ՝ միայն ընդ բարեգործութեանց մարդկան կշռեսցի զորութիւն, եւրև թէ մարդկային գործք զօրանան՝ բանագնացելով զքեզ 'ի պարգևատրել. արդ՝ մի այսմ զօրացցին մարդ-կայինս գործք, բէ ն անդր եւոյ եւէն, թէ և գերազանց իցեն և 'ի վեր քան զկատարելութիւն մեր հաստատուն ընութեանս: Իսկ 'ի վերայ չար գոր-ծոց իմանի. եթէ մեղաւորացս ոչ շնորհես զողորմութիւնդ, եւրև թէ մեղքն՝ որ է միայն գործ մարդկան, զօրանայ քան զքո ողորմութիւնդ՝ խափանելով զնա: Արդ՝ մի զօրասցին, թէպէտ և յոյժ մեծամեծք են ցեն և անցեալ քան զամենայն մեղս՝ որք 'ի բնական տկարութենէ և յապականութեն գործեն: Այլ յաղթի քո երկայնմտութիւնդ յաղթող եղեալ, պակաս երևեսցին առ փառս նորին, համեմատեալ առ քեզ, ըն-թացք Երէկրածնաց, այսինքն գործքն եթէ բարիք, և թէ չարք:

(9) Քան պըրէնս հաասրանջ: Զ օրին. քան պըրէնս բեռուծէ հաասրանջ:

(10) Որ մաքրութեն պէրճանսայն: Ո՛չ միայն 'ի մեղանչելն ասէ՝ կարօտեմք ողորմութեանդ, այլ և յարդարագործութիւնս. քանզի և որք արդա-րութիւն պարծէին օրինականացն վարուք. այլ. վարուք, հին օրինաց արդարութիւնքն, կամ այնց օրինապահաց երկիւղածութիւնքն: Զ. օրին. օրինականացն: այսինքն աստուածական օրինացն: Սակայն 'ի յայտնել նոցա քոյդ արդարութե, Գուշակ Ներէնայես, որ ծանուցանէր նոցա զար-դարութիւն նոր օրինացս, զամենեքին ընկճեալս կարօտեալ ողորմութե եւրև զհեթանոսս: Ըստ այսմ ասէր ած Եսայեաւ. (Ա. 12.) ղզատարգաղս ձեր, զշաբաթ, զամսագլուխս, զպահս և զդատարկու-թիւնս ոչ ընդունիմ. որպէս և ('ի կզ. 6.) ասէ. * Եւրև զհանդերձս

առաւելագունից քան արդարութիւն մեր ։ || Զոր և Տէրն կնքեաց ․ (Մատթ․ Ե․ 20 ․) * Եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր առաւել քան զդպրացն և զփարիսեցւոց , ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից ։ ||
(11) Ցամենեցունց՝ յամփոփեանց աղօթից ։ Քեզ փառք յամ դարուց ազ- գաց , կամ յամ նախնեաց ազգաց ։

Ներքին յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հեղողի , առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

ԲԱՆ․ ԺԳ․

ա․ Պաղատիմ առ քեզ լուսոյ ճառագայթ, արքայ երկնաւոր, գովեալ անպատում, որդի՛ անճառ ծնողիդ Այ․ խոնարհեցո զունկն քո՝ բարձրեալ բարեգութ, կենաց ապաւէն, նորոգ մերձեցեալ կրկին աստանօր 'ի հառաչանս նուաղս ձայնի վիրաւորելոյս ։

բ․ Ո՛չ ցուցեալ է երբէք , եթէ աղաչեաց զքեզ 'ի ձեռն աւազակացն սրոյ խողխողեալն , քանզի կարկամեալ էր ․ ոչ ձայն պաղատանաց զկնի արձակեաց , քանզի [1] անկռինչ էր ․ ոչ մատամբքն տատանելոց զաղէտ վտանգին յայտնեաց տեսողիդ , քանզի խորտակեալ էր ․ ոչ աչօք կողկողագինս արտասուօք ողբոց՝ բարերարիդ յանդիման կացոյց , քանզի մնասապարտ էր․ ոչ 'ի պատգամ բանից միջնորդի՝ զողորմածիդ կամս հաճեցոյց , զի [2] անայցելու էր ․ ոչ հայթայթմամբ խորտակեալ մարմնոյն արիւներանգ ներկուածով ձորձոց՝ զգթածիդ զսիրտ ճմլեցոյց , վասն զի անյոյս էր ․ նա և [3] ոչ ծնգովքն հաստատուն իբր գարշապարաւ ոտին վարեցաւ , այն զի անյարիր էր ․ քանզի կիսամեռն ասել կենդանւոյն՝ սակաւ ինչ նուազ է 'ի մեռելութե՛ն ։ Մանաւանդ զի [4] 'ի քոյոցդ խրատեալ բանից , և բարերարեալ [5] քոյդ ողորմութե՛ք , և փառօք քո լուսազարդեալ , ոչ միայն զի ոչ վերջացաւ 'ի հակառակն քո ընթացից , այլ ստահակեալ ապստամբութե՛ք , յիւր թշնամեացն թիւ յաւելաւ ․ ընդ նոսին դաշնաւորեցաւ , միաբանեաց ատելեացն քոց ։

գ․ Իսկ դու՝ բազմապարգև , բարերար , անոխա-

կալ, ամենակեցոյց, ոչ միայն զի ոչ պահեցեր զչարագործին մեղաց յիշատակ, այլ և ոչ բանիւ յանդիմանեցեր. ոչ ոտն հարեր անկելոյն, այլ կարեկցաբար մատուցեալ զծայրագոյն ցուցեր զխնամն։ Ո՛չ քահանայապէս ըստ ահարոնեան [6] տկար օրինին՝ զօրաւոր առ մահուն պաշտօն՝ դատապարտիչն անիծիւք և բանալիր քարանցն ձգմամբ 'ի խորտակուածս խոցելոյն արագեալ մատեար. և [7] ոչ որպէս ղևտականն կարապետային անկատարագործ՝ 'ի յերկուցն միջի բաժանեալ խորոց, հնոյն լրուածն՝ և նորոյս սկիզբն, ունայն 'ի հոգւոյ յապաշխարանն հանդիսացեալ՝ զվիրաւորելոյն տեսեր զվտանգ, զի մի ստատակիչն օրինակութք տապարաւն արմատակտրաւ՝ զմահուն պաշտօն 'ի քեզ նկատեալ, յառաջ քան զփորձ առակայիցն սատակեսցի. այլ հեթանոսացն պահպան անուն ասորեստանեայցն, որք 'ի հրէիցն ընկալեալ զօրէնս՝ ամբողջ պահեցին, զոր նոքա մոռացան, նոցին կցորդեալ մարմնոյդ վերարկուաւ՝ մերակերպարան խառնութք, զազատարարն գծագրեցեր զաւետիս առ օտարազգիսն. և ածաքարդ ներգործութք անապականաւ՝ ձեռն կարկառեալ, յարուցեր զմարդն նախնի՝ մեղուցեալ 'ի մահ իւրովքն ծննդովք։ Ոտամեցելոյն սիրտ բերկրեցուցեր, և զվհատեալն հաստատեցեր, և [8] զթշուառացեալն միանգամ՝ կրկին զուարթացուցեր։ Նուաղանին կենարար օծմամբն և բաժակաւն լուսոյ լցեր. հացիւդ երկնայնով արարչականդ քոյին մարմնով՝ նոր յեղանակեցեր։ Վերակացութք [9] երջանկացն ազանց ընտրելոց՝ յանձանձեցեր, գրգեցեր, և խնամարկեցեր։ [10] Հանդարտընթաց գրաստուն տածողութք անզգուելի պահեցեր, մինչև յարկն լուսոյ ածեր։ Ի ձեռն [11] երկաքանչիւրոց միջնորդաց՝ նախնեաց և երկրորդաց՝ տուչութն կտակաց կենդանականացն, մարդասիրապէս դարմանատրեցեր։ Դու որպէս երբեմն ընդ մովսեսի՝ թևս տարածեալ արծուոյն օրինակաւ ընկալար զնա, և 'ի հանգիստ հանդարտութն երկրին բարութեան առաջնորդեցեր. և զբանին կերակուր ջամբել հրամանատրեցեր վարդապետութեց։

Դ. Դու արդ՝ որ [12] զբնաւն ծայրագունին բարութն

լուսոյ՝ յամենայնի բովանդակապէս հրաշագործեցեր, զօգտողին զգանձ քեզ սեպհականեալ՝ զքո ստացուածն առ քեզ դարձուցեր, կեցո և զիս մաքրեալ 'ի մեղաց պարտեաց, որ ձրի պարգևես և անպատրաստից. ընդ որոց և ինձ տացես քաւութիւն և բժշկութի՛ն բարեգութ, զօրեղ, անքննին, անեղծ, ահաւոր, օրհնեալ միշտ յաւիտենից յաւիտեանս. ամէն :

---

(1) Անէքսօնէ էր : Ոչ կարէր կռնչել, անբարբառ էր : Մտափակեան փականելոց : այսինքն առատանեցելովք : Պաղատիմ առ քեզ տէր, թէ և նուաղ ձայնիւ վասն վիրաւորեալ գոլոյս հոգւով. բայց մի՛ մերժեր զաղաչեմ, ուր առ անկեալն 'ի ձեռս աւազակացն գու խնքնին մերձեցար գթութբ. որ ոչ ձայնիւ աղաչեաց. ոչ մատամբք ցուցեալ եցոյց. ոչ տառատատուօք կողկողեցաւ. ոչ բարեխօս ունէր եւն :

(2) Անայժէլու էր : Անօգնական. անխնամածու էր. ուստի ոչ կարէր բարեխօսութբ միջնորդի ուրուք հանձնեցուցանել զկամս քո : ոչ հայցուածք. ոչ զթարկութբ կամ ողբական ցուցմամբ ջախջախեալ մարմնոյն, և արիւնաթաթախ զգեստուն, եւն :

(3) Ո՛չ ծնողական հայրափոխէ : Ո՛չ հաստատութբ կամ զօրութբ ծնողացն՝ իբրև ոտիւք վարեցաւ գալ առ քեզ. այնու անօրէն էր, նկուն զի, կամ վասն զի անկանգնելի էր, չկարէր 'ի վեր կալ : Եղաւ անօրէնը բաղդաղի 'ի բայժէն՝ յառնել. յարէայ. ուստի ոչ նշանակէ անկարմար, այլ անկանգնելի :

(4) 'Ի փոյոյթ խորափէռաբանից : Անկեալն 'ի ձեռս աւազակաց առի իջանել յԵրուսաղէմէ յԵրիքով. (ղուկ. Ժ. 30.) և Երուսաղէմ գոլով աթոռ օրինաց և ծծգխոսթ. (եսայ. բ. 3.) վասն այն իջանելն յԵրուսաղէմէ նշանակէ թէ խոտորեալ էր նա յօրինացն. յորմէ օտարացեալ, զնայր 'ի Ճանապարհ մեղաց, որ Երիքովաւն նշանակի :

(5) Քոյր ողորմութե : 2 օրին. ողորմութե :

(6) Տէր օրէնքին : Հին օրինացն՝ որ տկար էր առ արդարացուցանել, և զօրաւոր առ մահուան պաշտօն, 'ի սպանանել զյանցաւորս նզովիւք և քարկոծմամբ. (բ. կոր. գ. 7. 9 :) Արփէեալ ժողովր. մի օրին. ժողովէր. այսինքն հին օրէնքն :

(7) Ո՛չ ողջ ղեփոկանն : Եւ ոչ իբրև զղևտացւոյն նմանեալ կարապետեան յովհաննէս, (որ և էր խակ 'ի ցեղէն ղևտեայ,) որ միջնորդ գոլով հին և նոր օրինաց՝ անկատար գործով տայր միայն զմկրտութիւն ապաշխարութեան առանց հոգւոյ շնորհաց : Այլ՝ ոչ իբրև զայս ղևտացի հայեցար 'ի վտանգ վիրաւորելոյն. զի մի՛ սատակչական օրինակաւ արմատահատ տապարին՝ զոր յովհաննէս սպառնայր, (մատ. գ. 10.) զմահուան պաշտօն, զաստուածութիւն հին օրինաց 'ի քեզ ունեցեալ վիրաւորեալն, անյուսութբ մեռցի յառաջ քան զփորձ կամ զկիրառ վիրաւորաց պատուհասիցն : այլ օրին. եա հին լծ. տառաչափոյթ. որ և 'ի վե՛ր յովհաննու առնու զայս, իբրև թէ առանց փորձելոյ՝ զմեղուցելոյն տապարաւ հատանել սակր. բայց անյարմար է : Այլ ատենապացւոյն նմանեցար, որ էր 'ի հեթանոսաց պահպան անուն տուրէափանէայց. սամարիա՝ պաշտպանական թարգմանի. և 'ի տեղւոյն սամարացի կոչեցան բնակիչքն՝ որք յաշորեստանեաց եկին անդր, և ընկալան զօրէնս հրէից, և

առաջեացն մինչև 'ի քեզ. (Գ. Թագ. ԺԷ, 24 :) Նոյն , այսինքն ասաց_
բանիցդ հաստատեցար՝ գիտեցեալ զմեր միտսն , և զարտաքոյ ասացեալն
ծանուցեր առ օտարազգիսն , առ որս միտքն՝ որք 'ի քէն օտար էին :
Իմ , զայն ասացեալն ասէ՝ զոր ես կենաց սահմանեցայ . (յոհ. Գ. 23 :)
Եւ Մծաւորդ , Մծայլին քո Ներգործութեան անտարակոյս , որ զանհեղձութեան
կամ զաստուածութեան տալ , ձեռն կարկառեալ յարուցեր զարդամ բա_
վանդակ բնութեան . որում օրինակ էր անկեալն 'ի ձեռս ավազակաց :
Տարրերութեան կայ յօրինակն . զի մի օրէն . գնէ . ոչ զևասակսն կա_
րողութեան անկատար գործ : Այլ օրէն . * Եւ ոչ զևասակսն կարա_
պետութեան անկատար գործ ... ասնայն 'ի հոգւոյ ապաշխարութեան հան_
դիսացեալ , զմեղաւորեալսն առեալ զմեղանս ... յառաջ քան զփորձ
ատակացն : || Մեծ օրինակն և նախ դրէ առաջացն . այս արարեալ
առաջնոցն . յետոյ այլում դրչաւ , առաջնակացն : Որ զանեկն՝ յառաջ
քան զփորձ առաջացն , մարթ է արարել , նախ քան թէ ասակ հատող
ատամունքն արդեամբք կատարեր . և կազմին խմառութն . Եւ ոչ զևասա_
կան կարապետեալն յոլովմանց , կամ ոչ զևասացն կարապետութեան անկա_
տար գործ յուցեր , զձառնեալն ևեթ աղատանալով , և միլրաութեան ատա_
րով առանց հոգւոյ , այլ հեթանոսաց սահմանագի անտառագ ատարեալ_
Նեայց կցորդեցար մարմնոյ զգեցմանբ : ուր Նոյն , է կրկնութեան առա_
րեոփանեայց :

(8) Զբօսաառաջնակացն մեանգամ : Զեղկելի բնութեան՝ որ մեռանդամ յա_
դամ Թշուառացաւ , կրկնապատիկ զուարթացուցեր . ըստ այնմ * Եւ
ոչ որպէս յանցանքն , նոյնպէս և շնորհքն : || (Հռովմ. Ե. 15 :)
Կամ , զոգամ զոր նախ 'ի դրախտին՝ մերկացեալ յեկեղեցւոյն զուարթա_
ցուցեր :

(9) Եւլանկուն առանց : Հրեշտակաց , կամ առաքելոց , զոր 'ի գումբառ
նոցա կոչէ * Ածաւորդ ազինք գնդից : ||

(10) Հանդարձբնեաց Գրաւոր : Դարմանեք կամ առաջնորդութեամբ
քաղցր և Թեթև օրինաց , անդրանկին , անվրէժ կամ առանց տառապա_
նաց պահեցեր : Հին Լծ . գրաւոր խմանաց զորութեական մարմնին , որ Է
խաչին երկաթ յառ կար զմեղուցեալ բնութեան :

(11) Եբրէտաէկեղեաց մեծարտաց : Դարմանատարեցեր առաջութ երկաքան_
չեաց կենդանի կառակացն՝ առաջնոյն կամ հնոյն , և երկրորդին կամ
Նորոյն , որոց օրինակ էին երկու զանհեկանքն առեալ 'ի առանոցաց_
ցոյն : Եւ որպէս երգեցին ընդ ծածուկ , այսինքն ընդ ձեռամբ մովսէսի
երդեւ արծաթ 'ի վերայ Թևոց առեալ զինէ , (ըստ Է օրէն. ԼԷ. 11 .)
'ի հանդիսար երկրին բարութեամբ առաջնորդեցեր . և զեկերեսնոր բանի
օրինացն ջամբել նմա՝ հրամայեցեր վարդապետութեանց , առաջնորդաց
ուսուցչաց :

(12) Որ ուխտն : Դու որ զամ գործս ծայրագոյն բարութեան բովանդ_
դակապէս հրաշալի օրինակաւ կատարեցեր առ կրուսեալ բնութեանս
մերս . մինչ յերկինս ասել , զինչ ինչ առնել էր , և ոչ արարի : և այժ_
մուն , զբուրգն ամենայն զգուշացեալ գանձն , որ են հոգիք մարդ_
կան , յանձնառեալ 'ի նմանէ առ քեզ դարձուցեր , կեցո և զիս էն :

Սերովբէին յաւելուած ներկէն հեծութէ՝ նորէն հօնորէ, առ նոյն
աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

ԲԱՆ. ԺԲ.

ա. Իսկ [1] դարձեալ աստուստ վերստին առ նոյն հեծութին սրտիս վտանգի ինձէն մատուցեմ, տուլին նուագաւ 'ի նոյն ոճ բանի՝ զամենապարգեւդ արգահատեցից, տագնապեալ ոգւոյս վտանգիւ խուպառ. [2] իբր մեռեալ կենդանւոյ անմահիդ մաղթեմ այ, խոստովանեալ [3] ընդ փառացդ քո՝ զիմն անարգութին, և առ չարեացս իմոց՝ զքոյդ բարութիւն. որովք յաղթեալ գտայ՝ քան թէ բժշկեալ, և ամաչեցեալ՝ քան թէ համարձակեալ, ուխտակորոյս աւանդամոռաց ։

բ. Իսկ [4] կրկին առակն որ առ իս՝ որ ոչխարին տրուպն տարացուցիւ, որ յետին [5] անզգայութեամբն էր մատնեցեալ՝ մոլորեալ, և 'ի լերինն՝ ուր ոչ է այցելութի, [6] ընդ գազանականացն դիւաց՝ և կռոցն վայրենութեն թափառեալ, ոչ մերձաւոր գոլ սակաւ մի հօտին. ոչ բան ունէի, որով և զցաւոցն աղէտ պատմէի. ոչ ձեռն ձգողական, որ համբոյն է ազդողական ։ Իսկ դու միայն գովեալդ [7] յսկզբանցն յաւիտեանց և յարդի ծնելոցս, գտեալ ըստ մաղթանաց գուշման երգողին՝ զիս զմեղուցեալս յաննշոյլն մոլորութեն, խնամողորէն տեսչութբ կամաց՝ հովիւ կոչեցար. և ոչ միայն հոգացար, այլ և խնդրեցեր. և ոչ գտեր միայն՝ հրաշագործ, այլ անճառելիդ բարերարութբ սիրոյ՝ 'ի կենդանարարդ քո յուս բարձեր, և ընդ երկնային զօրուն դասեցեր՝ 'ի հայրենիդ քո ժառանգութիւն ։ Այլ արդ՝ դու հզօր կենարար օրհնեալ այցելու գթածդ յողորմութեն, եթէ [8] զնոսա ընկալար զապաքանեալսն աղերսանաց, որ մինն 'ի միջոց մահու սահմանի էր չարչարեցեալ, իսկ միւսն ըստ անբանիցն անզգայութեն վտարանդի բացամերժութբ յանբնական վայրի վարանեալ, 'ի բառաչ ձայնի բարբառոյ, որ անկերպաւոր աննշանական, ածային բարեխնամութբդ անտեսեցեր զտիեզերա-

հրաշն խնամոցուն եւ կորուսելոյն մեծ թշուառու-
թեան, յայտնեալ վերստին և արդ գթութեանցդ խորք
և բարերարութեանցդ հոսանք՝ եւ անօրինեալս առա-
ւելութեան [9] վերագրելոցդ օրինակութեան ։ Ո՛վ բազմօ-
րինակ մահու պարտականս, [10] եւ որ 'ի բարութեանց
խառնից քաղցրութեանց յատուկ՝ համն չար. եւ ան-
դաման մարմնոյ՝ արժանաւորս հատման. եւ համա-
ձարակ ամենաբոլոր ախտացեալ հոգիս վիրաւոր.
եւ հաւասարեալս անզգայութեանց անասնոց. եւ օտա-
րացեալս յընտանութենէ իմաստնոց. եւ աննմանս հան-
գունակից բանաւորութեանց ։ Ո՛վ եթէ տարացոյց գոյր,
ես ասէի. թէ նմանակից գոյր իմ, պատմէի. թէ
համգունակից գոյր, ես ճառէի. թէ հաւասար գոյր,
ես գրէի. թէ զուգագործ գոյր, ցուցանէի. թէ օրի-
նակ գոյր, ես ազդէի. թէ [11] յանցեալսն, հայթայ-
թէի. թէ 'ի ներկայումս աստ, ես յուսայի ։ Նայց
քանզի անցեալ է ըստ օրինակ, և հրաժարեալ [12] ան
նմանութեան, զոր միայն քո է քաւել, բժշկել և [13] կե-
նագործել՝ կենդանարար համայն մեռելոց, նորոգու-
թեանդ տիեզերաց ։

Է. Ո՛վ եթէ միայն սրտի տեսութեան երջանկին Դաւ-
թայ՝ անօրէնութիւն չարեաց բարձրացեալ առի քան
զգլուխ, և ըստ ծանրութեանց բեռանց դժուարակրե-
լոց՝ յանցմունք մեղաց. իսկ որ եւ իս կրին սխալ-
մունք [14] գերազանցէ քան զհեղեղին ջրակուտակ տիե-
զերատոյզ ամենապատ ծովուն յորդութիւն, և գլխոց
լերանց վերադրէ ։ Նա և շնչեսցէ օդ քո քաղցրութեան
իբր եւ նոյին, և որ զլերինս հալէ զօրութիւն, ցա-
մաքեցուցանել զշիղջս ջրակոյտս բազմակոհակս՝ և
երկրակործան խմոցս պարտեաց և լեռնակարկառ
բարձրութեան մեղացս ամբարձելոց ։ Նա [15] համառօ-
տեալ զբան քո հզօր՝ ամենակար հնարաւորութեամբ
հակիրճ հատուցմամբ, արասցես առհաս ելս քաւութեան,
ըստ մարգարէին, եւ երկարաձիգս անօրէնութիւն.
և ներելով իմն յամառութեան ո՛վ երկայնամիտ ողոր-
մած օրհնեալ, թողցես միանգամայն, բարեգործեա-
ցես իսկապէս, հատցես բոլորովին զանվճարելի պար-
տուցս զարժանահատոյց տոկոսեացս տոյժս տարժա-
նակիրս ։ Նա զի՝ և չէք իսկ եւ քեզ ցասումն սրտի,

և կամ բորբոքումն բարկութեան, որպէս [16] ոչ կրին նենգութիւնք, և կամ նշմարանք մթութեան. քանզի կեանք են 'ի կամաց քոց և լոյս. և ոչ արարեր զմահ և ոչ խնդաս ընդ կորուստ մարդոյ ըստ դաւ-թի և սողոմոնի:

Դ. Եթէ [17] մարդկան կարգեցեր զայս կեա սահմանի մեծի պայմանի՝ 'ի բարեկիրճակդ քո կանոնաց՝ ոչ փոխատրել անդրէն չարի չար, այլ եօթանասնիցս եօթն թողուլ անդուստ 'ի յաւուր զիւրաքանչիւր մեղանաց զպարտս. և այդ բան առ մեզ, որ միշտ 'ի բնութե ունիմք [18] բնաւորաբար ուղերձեալ զբիծս չա-րեաց՝ անհամար բիւրուց նորոգ յայտնելոց, որք որկ-նաւորին երևին յանդաստան սահմանի ամենայնոյս փշածին բնութես, ըստ անսուտ քո վկայութե, որ թէ միտք մարդոյ 'ի խնամս չարի են արձանացեալ 'ի մանկութէ: Ով ի որ զկատարեալ մաքրութիւն ունէր աւետարանիչն կենացդ բանի՝ յովհաննէս, և զինքն ը̈ համարակաց բնութե լծակցեալ, հաստատեաց զճըշ-մարտութի քո՝ առ իմս սուտի յոյժ արդարացեալ. թէ ասեմք ասէ, մեղս ինչ մեք չունել, սուտ առնեմք զնա: Իսկ արդ՝ [19] կատարեալ է բան քո խնկեալ, և 'ի գլուխ ելեալ անպակաս 'ի սուրբութէ՝ առ իմս մոլորութի և դժնդակ անիրաւութիւն: Վասն որոյ խնայեա յիս ողորմութեամբ, քաղցրութե ձաշակաց աղբիւր, միայն օրհնեալդ յամենայն յաւիտենից. ամէն:

---

(1) Դարձեալ ասպուսպ: Օրինակք չորք երկու բայ սահման դարձեալն, և զբայն ծագուշեալ յարևն 'ի յաշխրդն, այսինքն գտանալով մերատին սա-նոյն հեծութիւն, մատուցեալ սովին նուազաս 'ի նոյն ոճ բանի, են:
(2) Իէր փոխեալ: Մի օրինակ ընթեռնու, իէր փոխեալ կենդանույն՝ անմահից մաղթեմ. ըստ որում ասի, կենդանութեան մեռեալ է. (Ա. տիմ. Ե. 6:) և առանց նուի եա մարթ է իմանալ, նման մեռեալ կենդա-նւոյ՝ քեզ անմահից մաղթեմ:
(3) Խոտորեալն էալ: մի օրին. խոտորեալ էլ: Խոտորելով մտօքն փոր-ձանաց քոց զիմ անարդարութիւնս. կամ, համեմատութեամբ, համեմատ փառաց քոց: Ես առ լարեօտս ևմոյե. համեմատութեամբ չար գործոց իմոց՝ զարդարութիւն քո: որոշէ, այսինքն չարեօքն՝ 'ի խառնել իմում յաղթեալ զայս 'ի պատասխանատուութիւն, քան թէ բժշկեցայ 'ի նոցա-նէ: Կամ, բարութեամբք քո յաղթեալ պատասխանատուեցայ, քան թէ բժշկեցայ նոքօք: 'Ի խոտորմանէն զփառս քո և զմեծութիւն՝ խոտ-որմանիմ զանարդարութիւնս իմ, համեմատ չարեաց իմ զնեմ զքո բա-

բուլթիւնք. տատասկ մեծամասն փառաքքա, և բարութիւնք գերահռչակ են յորժամ զանազանութիւնս յիշատակեմ և զչափս. որով փոխանակ համեմատելոյ 'ի քուամն բարութեանց, ամենայն յաւէտ, ամօթեսլսա զաղոց, զոլովս ուխտադրանց և կորուսիչ ենձ աւանդեալ սովորականաց։

(4) Կրէին ատաղն։ Ցեառ տատակի անկեալոյն 'ի ձեռս աւազակաց՝ երկբորդ տատակին՝ որ է մոլորեալ ոչխարին։ փրառայն փարացուցիս, անսպրդ օրինակաւն։

(5) Անդֆայաթին կը ծապնեցեալ։ Այլ օրին. ծապնեալ 'ի մէրինն ար. 2. օրին. 'ի մէրինս։

(6) Ընդ Գաղանախանայն։ Ընդ գաղանաւորաց զինուացն 'ի գործ մեղաց, և 'ի վայրենի կրօնս կատարաշատումն զեղեռեալ, հետի զոլով 'ի փորձի հօտէն ամենապաշտից։ ոչ ևան ունէր խոստովանութեան՝ առ 'ի պատասել զարքեալ մեղացն. ոչ յիշան յԳաղախան, բայց գործոց, որ հանէրցն է ազգաղոխան. 2 օրին. ազգաղորուն. գործի ապաշխարելոյ կամ խօսելոյ։ Համի էր առէ 'ի խոստովանութիւն, և ոչ ունէր զմնէ ընականս գործս բարիս, որ առայ նշան և յոյս՝ եղբերն զատանելոյ և խոստովանելոյ. որպէս ասաց հայրն ողորմին վասն արտասուել կնոջն, որ առնէր գործս ողորմութեան։

(վարք հարց. եր. 280։)

(7) Ցոխչանգն յաւիսխանաց։ Գողեցայց զոս 'ի սեպհականէ ժամանակաց, կամ յառաջինն արդար և յայժմու ծնելոցս, զատանելով զիս զանկեալս 'ի խառաքարայն ձանապարհ մեղաց, նման մոլորեալ ոչխարին, ըստ բարեխնամ առաջնորդութեանց հովիւ կոչցար, յանձն առեր կոչիլ հովիւ, կատարելով զհայցուած աստ. ձիր. մոլորեցայ ես որպէս ոչխար կորուսեալ, խնդրեա՛ զիս։ Ոչ լոկ հաղածեցար փրկութեան խնամ խնամելով ևեթ, այլև անձամբ խնդրեցեր, որոնեցեր, ընթացար յամ ուղիս առ 'ի գտանել։ Եւ ոչ միայն բաղում վաստակ գտեր յանմեղսն ծոլորումն, ըստ եզեկիէլի. լդ. 11. 12. 'ի միջի խնդրելով, այլև անձամբ գթովք ակրոց բարձեր յուս քո ընդ խաչին, և զատանելոց տարածեալ երկնաւոր հօտին, ժառանգ հօր քո կարգեցեր. և այնպէս որ նախ մոլորեալ ոչխարն էի, եղէ որդի սիրելի. Ի՛մ էր կորուստն, զոս զայն քեզ համարեցար. ինձ վիճակեաց զիւանն՝ հայր առանձնելով զանձնահաճանն Աձ. իսկ զոս ինձ զիւանի համեմատեալ զուարձացար՝ եղբայր քեզ առնելով և ժառանգակից։ Ո՞վ անձնաւորի բարերարութիւն, արդարև նորահրաշ, վայելուչ քեզ միայն՝ որ հրաշագործ ես։

(8) Ջնոտ ընկալաք, այսինքն զանկեալն 'ի ձեռս աւազակաց, և զոչխարն մոլորեալ. ղաղաչանեալն աղէքսանդ. զպաղայանձեալն առ 'ի աղետակ։ որոց միննն 'ի Միջոց ծահսո. մի օրին. 'ի Միջոց. այսինքն 'ի մէջ առահմանի մահու։ այլ. 'ի Միջոյ։ իսկ Միան ոչխարն՝ աարապանաց հեռացմանս յանխանկան վայրի. մի օրին. յանխանկական, յանհանեալ ըերին տատասնեալ։ մի օրին. յանխանական. 2 օր. յանխանին։ Այսպէս մարդն տապալցեալ 'ի չնորհաց և 'ի զրաստակէն, յայս աշխարհ անկծից՝ և 'ի ձանապարհ մեղաց վարանեալ, որ ուղիղ ընութեանն և նախնի վիճակին չնորհաց ընդդէմ էր։ Անդ 'ի մեղսն իբրև ոչխար բառաչելով անկնչան ձայնիւ զաղէտսն ցուցանէր. զի խիղճ մտացն նաև 'ի հեթանոսս վկայէր զանկարգութիւն մեղացն, առաւել առանց զիտելոյ՝ թէ յումմէ է այն ձայն, և զիարդ լինելի սարգաարանալ։

(9) Վէրագրեցոյ օրինակութ։ Այսպէս ունին մեր օրինակք երեք և հին մի. յարանակագայն ես. զի կամի ասել, ըստ օրինակի անկելոյն 'ի ձեռս աւազակաց, և մոլորեալ ոչխարին։

(10) Ա որ 'ի Եարաթեանց։ Երևեցեր զթութիւն առ իս առ չար համես, որ 'ի խառնութեանց ամենայն բարութեանց Անամ յափանկ, այսինքն զա-

տեսալ, որոշեալ, զուգել և անձնաւոր 'ի քաղցր նիւթոց ։ Կամ, առ իս՝ որ զուտ չար կամ զատն համ եմ ։ Մասին զԹուԹեանն առ անձնմանս հանգամանքից բառատրութեանց, զի բանաստեղծ, որ բնութիւն և կերպարան նոքա նմանակից եմ բանաստեղծ, այլ գործովք անբանից հաւատացի ։

(11) Թէ յանցեալն ; Այլ և այլ բառովք զմի միտս յայտ առնէ, յետ ասելոյն Թէ անձնաւոր եմ բնութիւնակից բանաւոր մարդոց ։ Եթէ սա- զարև զայր որք խնձ օրինակ, կմ հաստատ, կամ նմանագործ 'ի միջամե- չելն, ոչ լաւէր, առանց ամաչելոյ ցուցանէր ։ Եթէ յանցեալն, յառա- ջին մարդկին, կամ որ յառաջ քան զիս եղեն, զատանէր զոք խնձ նման յանցաւոր, հայհոյնէր, մեղթառեալ լինէր՝ Թէ չեմ ես միայնակ ։ Թէ 'ի ներքոյանս, եթէ յայամ ժամանակի տեսանէր զոք նման խնձ մեղուցեալ և տաղտկացեալ, ես յաւուր այնպէս լինել ։ Բայց քանզի խոս 'ի վեր է քան զօրինակ, քո միայն է ևն ։

(12) Ըստ նմանութեն ։ 3. օրին. ըստ նմանութեան ։

(13) Կենագործել ։ 3. օրին. հրաշագործել ։

(14) Գերադանցէ ։ 3. օրին. գերադանց է ։ Իմ տխրալութիւնս առաւելու քան զլրդութիւն Չրհեղեղին. որ ծովացեալ ծածկեաց զամենայն երեսս երկրի, և զնոմ զպամարցյինս ապականեաց ։ Ի Գէնոց մեծոց վերադրել. միրացեալ անցանէ բարձրանայ քան զգլուխս լերանց. կամ որպէս Թէ 'ի վերայ գլխոց լերանց սաստկեալ ընկենու՝ խորս զառաջեան նոյն ։ Բայց առակայն ընկայշ որպէս առ նոյեան, չնչեացէ հողմ ոչ պատմութեան, այլ փաղչրութեան քո. այս է՝ չնչեացէ, աղջեացէ այն ջրութեան, որ զլեռինս հարԹէ, կործանէ, ըստ աղօթելումն առ եղիա մարգարէ. (Գ. Թագ. ժԹ. 11.) որ և ցամաքեցուցէ զլրյսա ապարանաց և մեղաց խնոց ։

(15) Համառօտեալ զբան փս ։ 'Ի զարծ զնելով զհամառօտ բան քո՝ որ հզօրն է խրթև հողմ ուժգին, և ամենակար 'ի հնարս քաւութեն, կարճ միջամտութեամբ ընդունելով քաւեցես, ըստ մարգարէին որով ասէր, առան զու նահս զանօրէնութիւնս քո զի արդարացես. (եսայ. խգ. 26.) Թէպէտ իմ անօրէնութիւնքս երկայն են՝ ըստ նոյն մարգարէի. (Ե. 18.) բայց այսու կարճ բանիւ ցուցեր ես կամ հնարս քաւութեան. և միանգամայն համառօտ բանիւդ՝ Թէ Թողեալ լիցին քեզ մեղք քո, հատցես զպարտիս իմ ևն ։

(16) Ու կրն ննոգուԹեան ։ Դիւրին է քեզ ով երկայնամիտ՝ առաջ Թողուլ զյանցանս իմ. զի ոչ խափանեն զքեզ՝ որպէս 'ի մեզ կիրք բարկուԹեան. ոչ գոյ 'ի քեզ տես ունել 'ի պատ. ոչ նշմարանք, մնացուած աղտոտութեան մաաց. այլ ընդհանրապէս՝ կեանք են 'ի կամաց քոց ըստ ասելոյ գաւիթի. (սաղմ. իԹ. 6.) և ընդ կորուստ մարդոյ ոչ խնդաս ըստ ասելոյ աստուծոյ. (եզեկ. ա. 13 ։) Յանուն աստուծոյ յիշատակէ զքիրոն խմաստութեան՝ ըստ ասորական յորջորջմանն ։

(17) Եփէ մարդկան ։ Եթէ յաւիտենականն կանոնս քո զայս բանն առամանի կարգեցեր մեզ, մի հաստուցանել չար փոխանակ չարի, այլ ներել խոտրաքանչիւր եղբօր եօթանասնեկիցս եօթն, և այսպիսի պատուէր առ մեզ տասցաս՝ ոզք 'ի բնէ ախտաւորք եմք, որչափ ևս զու ներեսցես են։ Այս հետևութիւն կոյ յասելն, վասն որոյ խնայեա ։

(18) Բնաւորական ողջոյնեալ ։ Բնական ախտաւորութիւն՝ որ 'ի մեղացն ադամայ, ունիմք մատուցեալ կամ յառաջբերեալ 'ի մեզ զորսասս մեղաց կամ չար յօժարութեց, որք օրինաւորին երևին, ոզք ըստ օրինաց մարմնոց ծնանին և երևին 'ի փչացեր բնութեանս ։ կամ ոզք ըստ խոտրաքանչիւր հասակի և միճակի խորև օրինօք 'ի վեր երևին, որպէս յանդամանի ըստ զանազան եղանակաց և օրոց՝ այլ և այլ են բոյսք ։ Այսպէս այլ ախտք

են ՚ի մանկութեան, մինչ՝ ՚ի պատանութեան, մինչ՝ յերիտասարդութեան, կամ ՚ի ծերութեան ։ Այնպէս զանազանութիւն է ախտից ըստ այլ և այլ միջնակի և գիտութեան. այլում ախտանական ՚ի հարստութեան, և այլում յաղքատութեան, այլում աշխարհականին, և այլում եկեղեցականին, այլում արք, և այլում կանայք, այլում խմասունք, այլում տղայք, ըստ այսմ և յայլս ։ Հքն լուծ. զգաստն ծերունիքն, մինչեւ խրոխ անուն, այսպիսիքն ունող զօրէնս, որովք երկեան ՚ի մեղ ախտք բնութեան ըստ տարացելոցն հասակաց. Է. Դ. 8. բայց երբ բայ մինչեւ՝ տառաւել ընտանելի է ։

(19) Կարապետաւէ բան փո ։ Այսպիսիքն բանին որով առաջեր, մինչ մարդոյ ՚ի խնամս չարին հաստատեալ. և ՚ի գլուխ եկեալ երեւի մինչ փորձով առանց տեսակելոյ եւեթ, առ իմս ծողորութեան, այսպիսիքն առ ՚ի ցոյց խմոյ մեղաւորութեան և խիստ անզգայութեան. կամ, այն բան քո անմեկնելի կատարեցաւ յամենայն մեղաւորութեան ։ Վասն որոյ այսպիսի գիտութեան և չարաւոր զայլում աղաչականեալ բնութեան, առաւել եւս կարօտ է խնայելոյ, և այլն ։

Մերոպէին յառեղեալ նրէին հեծութեան՝ Նորէին հօնողէ, առ Նոյն աղէրս ծաղկանաց բանի ։

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

ԲԱՆ. ԺԹ.

ա. Եւ արդ՝ դու միայն Ած երկնաւոր՝ բարձրեալ, բարերարդ. քո է զօրութիւն, քո ներողութիւն, քո բժշկութիւն, քո առատութիւն, քո են պարգեւք, քո միայնոյ են [1] ձիրք ձրի, քո քաւութիւն, քո պաշտպանութիւն, քո հնարք անխափանալիք, քո արուեստք անգտանելիք, քո չափք անչափելիք. դու սկիզբն և դու կատարած ։ Բանզի ոչ երբէք ստուերացուցանէ զլոյս ողորմութեան քո՝ խաւար սրտմտութեան. վասն զի ոչ ես գրաւեալ ընդ մասամբք ախտից՝ ՚ի վերդ քան զբան ։ [2] Պատկեր անպարագիր՝ անդր քան զորքանութիւն կշռութեան. անչափ լայնութիւն փառաց. անտարրափակ ընդարձակութիւն՝ հաստատ զօրութեան. անամփոփելի առաւելութիւն բացարձակութեան. անտկարանալի բարերարութիւն գթութեան ։ Դու դարձուցանես՝ ըստ մարգարէին, յայգ՝ զստուերս մահու. որ իջեր կամաւ ՚ի տարտարոսն ներքին [3] արգելականացն բանտի, յորում և մաղթանացն դուռն էր աղխեալ. և գերեալ անտի զմթերիցն կապուտ՝ վտարանդելոցն հոգւոց սուսերբ հրամանի յաղթական բանիդ՝ զկապ սատակման մահուն խզեցեր, և զմեղացն կար

ծիս ցրուեցեր ։ Դարձ առ իս՝ որ[4] զընկղմամ զընկղմա-նաւ վհիս՝ տղմասոյզ գբոյս՝ յերկաթս մեղաց, վի-րաւորեալ խոցմամբ սլաքաց՝ բանսարկուին նե-տից ։

Է. ԱՅԼ դու յամենայնի տէրդ բարերար, լոյսդ 'ի մէջ խաւարի, օրհնութենդ գանձ, ողորմած, գթած, մարդասէր, կարօղ, զօրաւոր, անպատում, անքննին, անճառ. [6] բաւական՝ ըն ոքյն յակոբայ. անհնարիցդ ամենից՝ դիւրապատրաստ հնարաւորութի. հուր ծախիչ զխուռն մեղաց. [6] Ճաճանչ կիզանող ընդհանրական թափանցանցուէ խորհրդոյ մեծի. [7] յիշեա՛ զիս յողորմութե քո՝ օրհնեալ, և մի յիրաւունս քո. 'ի ներողութե քո, և մի 'ի հատուցման. յերկայնմտութե, քան 'ի հաւաստութե ։ Եթէ կշռեսցես զմեղանաց իմոց ծանրութի, ընդ քաղցրութե քո՝ և մի ընդ արդարութե. զի առ սակ նախնումն՝ յոյժ է նուազեալ, իսկ 'ի ներհակ վերջնոյս՝ յաւէտ ծանրակիր ։

Ը. ԱՐԴ՝ մատո՛ր առ իս՝ բարութի, որպէս յաւն-կանն բժշկութի՝ հակառակ քո համբարձելոյն. բարձ 'ի մեղուցելոյս զհողմ մահու խռովութես, զի հանդիցէ յիս ամենակալ հոգիդ խաղաղութեան ։ Եւ քեզ փառք յամենայնի, յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

---

(1) [illegible] ։ [illegible] ։

(2) [illegible] ։ Պատկեր՝ որ գծովք ոչ սահմանին, և տարածոյ [illegible], այլ քան զչափ համեմատութե ձևոյ և գծի ։ Զայս, և զհետևեալսն առ որպէս սակ, բայց ըստ հասարակ բանի առութե, և ոչ ըստ որում անձն եղեալ. սակայն հօր և հոգւոյն ես պատշաճին ։ [illegible], ընդարձակութիւն տարածոյ կամ սաստիկ զօրութե, որ ոչ փակի 'ի սահմանի տարերաց. կամ ոչ կապի 'ի բնական ազդեցութիւն տարերաց ։ [illegible]. առաւելութիւն հեռաւորութեան, որ անզեռ կամ չափու ոչ սահմանի ։

(3) [illegible] ։ Յետ փրկական քո մահուան իջեր նախ, իշխանական կամօքդ՝ և ոչ 'ի բռնութե կամ ըստ պարտեաց 'ի ներքին տարտարոսն արդարոցն՝ որք ըստ պարտեացն ադամայ արգելեալ կային 'ի դժոխս. յորում և դուռն մաղթանաց փակեալ էր, զի ոչ զօրէր աղաչանք. զի ոչ ողորմութե էր տեղի. սակայն և ոչ անարգարոցն լինէր ազատութի. զի եթէ լոկ մաղթանաց չկայր տեղի, զիարդ անապաշաւ մեղաց և դատապարտութե լինէր թողութիւն ։ [illegible], զպահպանեալ հոգիսն՝ զորս վասն յանցանացն ադամայ իբրև ի բր կապեալ մեթ-

ըստ ունելոյ աստուածոյ ℞ կերպով երկրպագութ, յաղթող բանիւ իբրև սպառ- խոցեցեր զորդիսն մահուան պատուասիրութեան. (Բառ զօքար. Թ. 11.) * Արձակեցեր զկապեալս քո յանջրդի գբոյ || : Եւ ղնեղոյն նործիս ցրուեցեր. Զի փրկագործեցեր յարդարոցն զապաշխարողս և զորդոցս՝ որ 'ի մեղաց : Կամ, արձակելով զկապեալսն 'ի սատանայէ, բարձեր զկարծիս հրէից՝ որք համարէին զքեզ չարագործ և մահապարտ, այլև զկարծիս զինեաց՝ որք կարծէին զքեզ իբրև զայլ մարդիկ մեռեալ 'ի պատճառս մեղաց :

(4) Զընդամ ղընդանա : Տառապեալ, չարչարեալ 'ի զնդանի մեհիս, փղեա ոհմ մէոյս, Թանձր աղօթով ընկալ զգոյս, որով խմանեն զարշութիւնք մե- ղաց : Նման երեմիայ ընկեցելոյ 'ի գուբ աղմոյ, զոր չարախօսք նորա իբրև նեռափք խոցեալքն :

(5) Բառակոնի ըոփ ոֆյի յակոբայ : Կարօղ յոմանէ՝ ըստ որում աստուած առ- յանկոյս նահապետ. (Ծննդոց. Լէ. 11 :) մի օրհն. յոբայ :

(6) Ծանծունչ կիղանօղ : Այրեցող իբրև զծառաղայթս արեգական, ընդ- հանրական բոսֆանցանցութէ. Զի ծաղկունչ առ հասարակ յամ բնչ թափան- ցօղ : խորհրդոյ մեծի. որ ունի զմեծ խորհուրդ, կամ զաղանածածուկ. զի լոյս ճառագայթն մտացն անցանէ մինչև ցորոշումն շնչոյ և ոգւոյ, և քննիչ է մտաց և խորհրդոց սրտից. (Եբրայ. Դ. 12.) և այսու թա- փանցութեն զոտնանս կնքանէ մաքրելով, զայլս՝ սպառելով, ոմանց բարի կարծեցեալ խորհուրդքն և խորհ՝ ցուցանին լինել չար. յայլս աղ- մունք զարմանալիք ներգործին, ևն : Թուղթ անմարկել զքան խնառ. Է. 24. 25. * Ընդմանէ ընդ ...մ վասն յատակութեան. քանզի Ծաղկունչ է այս զօրութեանն ևն || :

(7) Ցիցեմ զխս յաղորմութէ. ողորմութեն քով, և մի խրատաւորք արդա- րութեան. երկայնամտութեն, թոն 'ի հաստատութէ, ծիրգ կեմ անաչառ- քննութեն : Զմեղս իմ կշռեսն ընդ քաղցրութեան քո, և մի ընդ արդա- րութեն. գի առ սոյ նախանձ. 2 օրհն. առ սոյս, առ չափ ողորմութեն մեղք իմ թեթևանան. բոյ 'ի ներհոյ վերընոյս, համեմատ արդարութեն ծանրանան :

Մեծափառ յաղթելոյ կրկին հեծութեն՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանին :

Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այս :

ԲԱՆ. ԺԱ.

ա. Մրդ՝ աղաչեմ զխնամակալդ վտանգաւորաց տաժանելեաց կրից թաղծութեց հոգւոց վշտացելոց :[1] Մի յաւելուր հեծութեսց ցաւ. մի խոցեր զվիրաւորեալս. մի դատապարտեր զպատժեալս. մի տանջեր զչարչարեալս. մի գաներ զհարուածեալս. մի գլորեր զանկեալս. մի կործաներ զգայթագղեալս. մի մերժեր զհեռացեալս. մի տարագրեր զհալածեալս. մի ամաչեցուցաներ զպատկառեալս. մի կըշտամբեր[2] զհարթուցեալս. մի խորտակեր զբեկեալս.

մի՛ խռովեցուցանէր զամբոխեալս. մի՛ ալէկոծէր 3
զբքացեալս. մի՛ սասանեցուցանէր զդղրդեալս. մի՛
շփոթէր զմրրկեալս. 4 մի՛ կեղեքէր զցփշատեալս. մի՛
ջաղջախէր զլեկեալս. 5 մի՛ գօշէր զմորմոքեալս. մի՛
կուրացուցանէր զխաւարեալս. մի՛ զարհուրեցուցա-
նէր զապշեալս. մի՛ խորովէր զխարշատեալս. մի՛ մա-
հացուցանէր զհիւանդս. մի՛ բեռանց ծանրութե մատ-
նէր զտկարս։ Ա՛յլ անուր յաւելուր կարկամեալ թի-
կանցս. մի՛ կրկնակի ողբումն՝ դառն հեծութեա. մի՛
ուժգնապէս վարեսցիս առ հողս. մի՛ սաստկապէս՝
առ մոխիրս. մի՛ անաչառապէս՝ առ ստեղծուածս.
մի՛ ահարկութեամբ առ փոշիս։ Ա՛յլ ընդհարկանիր
խստութե մեծդ՝ ընդ փոքուս. լոյսդ՝ ընդ ստորնա-
կանիս. բնութեամբ բարիդ՝ 6 ընդ 'ի բնէ չարիս. ող-
կոյզդ օրհնութե՝ ընդ պտղոյս անիծից. քաղցրութիդ
իսկապէս՝ ընդ համայն դառնութես. փառաւորեալդ
անփոփոխ՝ ընդ ամենեւին անարգիս. կենացդ նշխար՝
ընդ կաւոյս զանգուածոյ. տէրդ տերանց՝ ընդ տղմիս
երկրայնոյ. աննուազ լիութիդ՝ ընդ չքաւոր սորկիս.
անկապուտ ճոխութիդ՝ ընդ անպատսպար տառա-
պելոյս. անկարօտ բարութիդ՝ ընդ ամենաթշուառ
աղքատիս։ Ի՛անգի ո՞վ որ համեալ յառաւօտ, և 7
'ի ծագման լուսոյն խիթայ մթանալ. և կամ ընթե-
րակաց կենաց, մահանալ. կամ ազատութե, և պար-
տաւորիլ. կամ շնորհաց, և դատապարտիլ. կամ
փրկութե, և մատնիլ. կամ նորոգման, և եղծա-
նիլ. կամ օրհնութե, և տարագրիլ. կամ բժշկու-
թե, և վիրաւորիլ. կամ լիութե, և նուազիլ. կամ
յաճախութե հացի, և քաղցնուլ. կամ գետոց հոսա-
նաց, և պասքիլ. կմ մայրենի գթոյ, և նենգիլ. կամ
խնամոց ածեան աջոյդ, և զգուիլ։
Է. Ո՛ւ արդ՝ ընդ ախտացելոյս սաստկապէս մարմ-
նոյն բորբոտութ հոգւոյս վտանգաւ և ես պաղատիմ,
տէ՛ր՝ եթէ կամիս, կարող ես զիս սրբել։ Ընդ 8 աչա-
ցաւացն նեղելոց մշտագիշերին խարխափանօք՝ մեծա-
կական ձայնիւ հառաչեմ. ո՛չ որդի անուանեմ դաւ-
թի, այլ ծնունդ էիդ այ դաւանեմ. 9 ո՛չ միայն ռաբ-
բի կոչեմ, որ վարդապետացն է պատիւ՝ կարծողա-
կան զխակն դիտելոյ, այլ տէր երկնի և երկրի հաւա-

տամ ։ Ո՛չ ձեռինդ միայն ձգմամբ հպաւորութեան, ով բարեգութ Ած մերձաւոր, այլ 'ի բացեայ գոլով միջոցաւ մեծաւ՝ ակնունիմ զօրել քո բանիդ առ իմ բժշկութիւն ։ Ո՛չ թէ ինչ խտրոց կասկածանաց միջոցի բանի, որ երկմտութեան կարծի նշանակ՝ 'ի մէջ արկանեմ 10 կամելոյն և ողորմութեան, այլ կամիս որպէս բարեգութ, և կարես որպէս զարարիչ․ ասա բանիւդ, և բժշկեցայց ։ Ընդ հարիւրապետին հաւատոց 11 և ես լծակցեմ․ ոչ մինչ անձուկ միայն բացակայութեամբ հեռի լինելով խորանն 'ի խորանէ, հաւատամ ազդել քոյ կարողութեանդ առ յարութիւն և բժշկութիւն, այլ 'ի վերինն երկնի բազմելով, և 'ի ստորինս երկրի բովանդակ առ հրաշիցն սքանչելութիւն ոչ ունիմ հատուցանել ։

Դ․ Շնորհեա ինձ, որպէս դատաւկնիք բանին քո վճռեցան առ պոռնկին ընդունելութիւն 12 հնգից հարիւրոց դենարաց պարտուց շնորհաբաշխութիւն Ած բարութեանց և տէր երանութեանց․ որ յաճախին ընծեռել՝ բազում փառաւորիս, և 'ի շատն մատուցանել՝ նուէրին չափ սիրիս․ և յառաւելն ողորմել՝ կրկին բարգաւաճիս․ և յայսքան բարիս՝ իրաւամբք գովիս․ և 13 Ած տէր գոլով հաւասարորդ ճանաչիս․ և որ զբոլորն ունիս՝ ընդ մերումս կշռիս․ և անճառելեաւդ ծրիւ՝ մերայնովքս վճարիս․ և ընդ երկրաւորիս՝ զանվախճանն պարտ վարկանիս․ և մեծագրեալ քո ըղմերն՝ վեհս գոհաբանիս․ և 'ի սակաւուն տուչութիւն դոյզն փառաւորիլ ոչ ամբարտաւանիս ։ Արա և ինձ զնոյն գթութիւն՝ ունողիս զգործս անհամար պարտուց․ զի և 'ի ճառս երախտեաց քումդ պարգևաց՝ 14 նորին իսկ սակով սիրեսն կարգեսցի․ և քեզ փառք յաւիտենայնի․ ամէն ։

---

(1) Մէ՛ յաւելուր ։ Մէ՛ լցանելով [illegible] 'ի քո յաւուրդ և 'ի մխիթարութեանդ, 'ի վերայ հեծութեան տառապելոյ յաւ հոգւոյս ։ Յայս հոգին բովանդակ յաղթող բանիցն պէսպէս նմանութեանք․ յորս [illegible] առ Ած, մի՛ խօսիր, մի՛ դղորդիր, մի՛ [illegible] էն, խմորի՝ մի՛ թոյլ տար խօսիլ, դղորդիլ, [illegible] ։

(2) [illegible] ։ [illegible], կամ [illegible] 'ի խորշէ մտացս՝ մի՛ կշտամբիր ։

(3) [illegible] ։ [illegible] 'ի բերդ, [illegible] մի՛ տար [illegible] ։

(4) Մի նեյյէթլէր գեփրիւթէսի : Մի՛ աղճատեր կամ ծռատեր զդատաստանս :

(5) Մի՛ գօզյէր չմըրմութէսի : Մի՛ խածանէր զկոկծեալս :

(6) Ընտ 'ն բիւէ լուրյու : Ընդ իս՝ որ ընտուէ̅ չար եւ վասն լինելոյս յոչընչէ, որ ը̅ն ինքեան չար է, կամ վասն սկզբնական մեղացն, որ 'ի ծննդենէ̅ է̅ ընտելութեն առաջեալ լինի : Կինաշդ ն'չխար . ակնկալնդ կենաց՝ մի՛ հաւ- կանիր է̅ անկենդան կաւոյս :

(7) 'Ի ծագման լուսոյն խիւեայ, կասկածի՛ երկնչի միանալ, խաւարիլ : Նա- կամ ընեերայից կենաց, մերձ գոլով կենացն՝ երկնչի մահանալ :

(8) Ալլահաւոցն նեղջեւոց : Յ օրին . ալլահաւոցն նեղջեւեւոց :

(9) Ո՛ւ մուայն ուաշբեի : Իբրեւ զկոյրս ոչ լոկ ուարգեն կոչեմ զքեզ, որ է աղօթական պատիւ վարդապետական, կարծողական ջինջն գիտելոյ . զի որ է̅ կարծեցք թողուլ զխոտել զխակն կի՛ պատուն անձն, թէ մ և որպիսի՛ ոք է . զի կոյրքն և հրեայք վարդապետս միայն կոչելով զքեզ, ոչ ցուցանէին զանէրութիւն քո և զնծութիւն . վասն որոյ ես փէր էրինի ն էրիրի հաւա- փամ : Ոմանք զմերոդրեալ բանդ այսպէս իմացան . վարդապետական ա- նուն առեալ լինի յուսուցանելոյ . և ցուցանէ զգիտութիւն խելութե օրինաց . և վարդապետք հրեից ուարգի անուն ընծանելով, կարծեցուցա- նէին զխոտել զխակն օրինաց, և ոչ զխոտէին : Բայց այս գիտաւորութիւն ոչ յարմարի բովանդակ բանին :

(10) Կանեւլոյն ն ողորմաւնէանն : Ո՛չ եթէ իբրեւ զառարտան (մատ . ը̅ . 2 .) արտաքսումն ինչ կասկածական բանի 'ի մէջ ձգեմ կամելոյդ և ողորմու- թեանդ, ասելով, եթէ կամիս՝ կարօղ ես զիս սրբել . որ զերկմտութիւն ինչ ցուցանէ կամելոյն, այլ ես հաւատամ անկասկած՝ թէ իբրեւ ողոր- մած՝ կամիս, և իբրեւ արարիչ՝ կարօղ ես : Այս են միտք բանիս . առ- կայն հայելով յամբողջ պարգեւութիւնն, վերպակ երեւի 'ի բառն կամե- լոյն, փոխանակ գրելոյ կարէլոյն . ասա թէ ոչ՝ առաւել կամելն և ողորմութիւնն կամ ողորմելն՝ զնոյն նշանակութիւն ունին . բայց որուամ և 'ի բացատրելն առէ, կամս որպէս բարէգամն . ուստի ոչ յար- մարէր խորոց արկանել 'ի մէջ կամելոյն և ողորմութեանն . այլ և 'ի բա- նի բնտրուկին էրէ մաւանիկն խորոց գնի 'ի մէջ կամելոյն և կարելոյն . զոր և Ոգ. վարդապետս մեկնելով, զատուցանէ յերէ զկամելն և զկարելն :

(11) Եա էս ըծայչէմ : Յ օրին . ըծայչէմ : Զի կցորդիմ հաղորդիմ ընդ հա- ւատոց հարիւրապետին : ոչ թէ սակաւ հեռաւորութ̅ խոսքան 'ն խոսքանէ . առն 'ի տանէ՝ հաւատամ զօրել կարողութեանդ 'ի յարուցանել կամ 'ի բժշկել միայն, այլ 'ի վերին երկնիս բազմելով քո, և 'ի ստորին երկ- րիս բնակեալ, ամբողջ գոլով, կի՛ բովանդականապէս ոչ կարեմ առ զար- մանազործութի անբաւ հրաշից քոց հոգալցանեն, այսինքն բանիւ վճա- րել կամ պատուիրել : Հին լուծ . զաղգապատութիւնն այսպէս իմանաց . 'ի բժշկութեան հարիւրապետին սակաւ միջոցաւ հեռի էիր, իսկ ես և ոչ սակաւ միջոց հաւատամ, այլ անընդմիջելի մերձ : Ցուժ հեռի ձգի 'ի գիտաւորութենէ այդ վարդապետս, որ յայտնապէս ասէ՝ թէ նաև 'ի բարձրութեան երկնից հաւատամ զօրել կարողութեանդ, և ոչ թէ լոկ սակաւ բացակայութ̅ :

(12) Հնգից հաշերոց դենարաց : Որ (ղուկ . է . 41 .) դնի դահեկան . իսկ Ոգ. վարդապետս դենար ասէ, զի երկու բառքս փոխան միմեանց դնին . որպէս (մարկ . ժդ . 5 .) առ դահեկան ասի, նոյնն (յովհան . ժբ . 5 .) դենար դնի :

(13) Ամենայնի փէր գործոյ : Յ օրին . որպէս և հին լուծ . ամենայն գործոյ . այսինքն զու ամ ինչ գոլով, հաստատարար ճանաչիս . իբրեւ հաւատար մեզ 'ի զաւշն մասանս, խոստովանիմք պարզ առաւել զքեզ՝ բառ վասոտակոց վար-

հրա չարիքն։ Զնա՛ն իւր ունելով, ընդ Յերոամ նշանի. զքեզ տուս 'ի փոխարէն գործոց մերոց։ կամ՝ ամենայնիւ հարուստ ձրիս գոլով, տակաւին այնու փոքրումն զոր մեք ունիմք, զիջանիս երբև կարօտ, կամ զառնուլ իւր տուացեալ համարելով։ Եւ փոխանակ անձառելի ձրիցդ՝ մեջանդիս վճարիս. զմեր գործս վճար առնուս և շատանաս։ Եւ զայն մեծ համարելով, [illegible]. մեծապէս փառաւորիս։ կամ՝ բազում գոհութիւնս ընդունելոյ արժանի ես. այնու զի զմեր չնչին գործս համարիս իբրև մեծամեծ վաստակս։ Եւ յորժամ 'ի փոքր գործոց մերոց զքեզ տակաւ փառք լինին, ոչ ամբարտաւանիս. ոչ գժուարիս՝ անփոյթ լուչ համարելով քում մեծութեանդ զփոքր տուրս մեր։ համաձայնի. այլ օրին. համաձայնի։

(14) Նորին խօսք ստոյգ։ Նամկին շարժիւ. Է թիւ երախտեաց քոց՝ նամկին շարժիւ կարդացեալ միրելին քո զիս, և իմ զքեզ։ կամ՝ ըստ պայմանի սիրոյ պատանեկին կարդացեալ և իմ սիրելին. որում ասացեր՝ թողուլ զպատուամ մեղան մի յոյժ սիրելոյն։ կամ՝ նոյն խակ սիրելին զքեզ՝ լինիցի մեծ երախտիք քո. զի յորժամ վասն բազում թողութեանց տուաւել սիրեսցէ զքեզ՝ իբրև զպարտապանսոց պատանեկին, նոյն խակ մեծ երախտիք են քո։

Սերոպէին յառաջելեալ հրէին հեծաւէ՝ նորին հօրողէ, առ նոյն աղերս մաղթանաց բանի։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

ԲԱՆ ԺԲ.

ա. Արդ՝ ես ծնունդս մեղաց, որդիս մահացու երկանց, արդարև անասահման [1] թիւրուց քանքարաց տուժից գոլ հատուցանող 'ի միում աւուր։ Այլ [2] ոչ եթէ առ փոքրկութի մարդկայինն մտաց հայցեմ ներութի, այլ առ աննուազ լրութի փրկչդ-յին քնի պաղատիմ մարդասիրութի. որ չէի երբեմն, և ստեղծեր. չմաղթեցի, և դու արարեր. չև ես եկեալ 'ի լոյս, և տեսեր. ոչ յայտնեցեալ իմ, և գթացար. ոչ կարդացեալ, և խնամարկեցեր. ոչ համբարձեալ ձեռն, և նայեցար. ոչ պաղատեալ, և ողորմեցար. ոչ կերպացեալ ձայնիս, և լուար. ոչ հեծեծեալ, և ունկնդրեցեր. [3] գիտելով զարդեան դիպուածոյս, և չանտեսեցեր. նախահայեցող աչօք նկատեալ զպատժապարտիս չարագործութի, և յօրինեցեր։ Այս արդ՝ զքո արարեալս, և զքև փրրկեալս, և զայսքանեաց խնամոց յանձնանձեալս՝ մի խապառ կորուսցէ մեղացն հարուած՝ գիւտք բանսարկուին. մի յաղթեսցէ յամառութեն իմոյ մտաւխուց՝ ներողութե քո լուսոյ. մի սրտիս կարծրութի եր-

կայնամիտ բարութեդ. մի մահացու մնեղիս՝ աննակատարդ լրութե. մի տկարութի նիւթոյ՝ անպարտելիդ բարձրութե։

Ե. Ահա կարկառեմ զկարկամեալ բազուկս հոգւոյս յանուն քո՝ հզօր, արասցես ողջ իբրև զառաջինն [4] մինչ 'ի դրախտին փափկութե զպտուղն կենաց կթելի։ Կաշկանդեալ գօսացեալ 'ի կոր կործանմամբ ընդ կնոջն տագնապելոյ՝ կայ անուղղելի հոգւոյս թշուառութի, ընդ երկիր պշուցեալ [5] մեղացն կքմամբ՝ սատանայական բուռն կապանօք, զի մի զերկնայնոյդ ընկալցի զողջոյն. խոնարհեաց առ իս՝ միայն ողորմած, զի բարձրացուսցես զփայտս խոնարհ բանաւոր անկեալ, և զչորացեալս ծաղկեցուսցես [6] 'ի բարի կրօնս վայելչութե, ըստ ածաբանութե սբ մարգարէին։ Որպէս զ'ի ծնէ կոյրն անլուսաւոր՝ չունիմ տեսարան, որով զստեղծչիդ նկատել զկերպ մաղթեցից՝ հզօր բարեգութ, միայն դու պաշտպան ակնարկեալ խնամովք անճառ քոյ սիրոյ՝ 'ի շնչական խօսուն քո անօթս, յանէից [7] գոյաւորութիւն լուսոյ հաստեսցես։ Ընդ երկոտասանամեայ չարեօք չարչարեալ վշտագին կնոջն տանջեցելոյ՝ գետովք մեղանաց արեան հեղեղիմ. հայեաց 'ի բարձանց անմատոյց լուսովդ պարածածկեալ, [8] ուր ոչ է քղանցք ձեռաստեղծական վերարկուի ձորձոյ, այլ տարածումն հրաշից ամենայն ուրեք զօրացեալ։ Ո՛չ օծութեամբ իւղով պատժապարտս ընդ մեղաւորին մատուցեալ առ կենդանաձիր ոտից դարշապարդ՝ զկաթիլս աչացս վարսիւք հերացս ընծայեցուցանեմ, այլ զամբիծ հաւատս՝ ամբարձմամբ բազկացս՝ ստոյգ դաւանմամբ հոգւոյ ողջունիւ՝ շրթանց կափուցմամբ զերկիր համբուրեմ. խառնեալ հեծութիւն [9] աղբերցս արտասուաց, բժշկութի հոգւոյս աղերսեմ։ Մատնեալ մեղանօք [10] հոգւոյս գոյութիւն լուծեալ մեղկութեամբ, և յերկուց կայից միայնակողմամբ անհաստատ հետովք, զընթացից գործին՝ նահանջմամբ չարին՝ զհետևականն բարձողութի շինուածոյ մարմնոյս՝ առ ելս ծառոյն կենսատուի պտղոյն խափանեցելոյ, պատսպարեսցես անդրէն վերստին միայն հնարաւորդ առ 'ի փրկութի։ Օ փառաբանարան [11]

Հաստատուածոյ կերպիս 'ի քէն եղելոյ՝ ամբափակ խըց-
մամբ համրացոյց արգել հողմն բանսարկուին. Հոգիդ
քո ազդեալ մեծդ ողորմութեամբ, ըստ յաւետարանին
բժշկեցելոյ, հրաշափառապէս բարեգործեցես բանդ
կենդանի՝ ինձ խօսողութիւն անսայթաքելի։ Ընկեալ
կամ չարեօք 'ի մահիճս ախտից ընկողնոց մեղաց՝ դի
կենդանի և խօսուն մեռեալ, կարեկցեալ իմումն
թշուառութեան՝ [12] ողբականօք քքուանաց ձայնից,
ո՜վ բարերար որդի Այ, օրհնաբանեալ աչացդ ցօղով
վերականգնեցես 'ի կենդանութիւն, իբր զսիրելին 'ի
յանշնչական մեռելութենէ։ [13] Սոյգ դառնացօղս 'ի
գբի մեղաց կամ տարակուսեալ, ձեռն մատու-
ցեալ՝ արև՛ անստուեր որդի բարձրելոյ, հանցես զիս
'ի լոյս քումդ նշուլից։ Ընդ աղիողորմ թշուառու-
թեան կականման ձայնի՝ այրւոյն 'ի նայինն՝ մօր միամօ-
րին, [14] տատանմամբ մատանցն, կոծմամբ կրծիցն,
հոսմամբ արտասուացն, տուայտանօք տխրութեան դի-
մացն՝ և ես պաղատիմ վերջին հեծութեամբս, տո՛ւր յու-
սահատելոյս զքաջալերութիւն մխիթարութեան գթած
քո բանիդ, ասելով և ինձ զովեալդ բարի ստեղծիչ
աշխարհի, թէ մի լար գերի՝ բազմաց ողբալի. որով
ընդ պատանւոյն կենդանացելոյ՝ 'ի վշտացելոյ ծնո-
ղին սփոփանս՝ զամենապարտ ոգիս ընկալայց 'ի քէն
ընդ նմին կրկին նորոգեալ։ Ընդ [15] այսակիր անզգայե-
լոցն՝ դիւալլուկ և քարակոծկոծ հեղձամղձուկ եղկե-
լի անձանցն, քստմնելի գիսախռիւ հերացն, վայրե-
ներես բանդագուշելոցն՝ 'ի քէն ողորմեալ փրկիչ
բոլորից, իբրև զնոսին առ քեզ դիմեցից. հերքեալ
մերժեսցես զգունդս չարացն ապականողաց՝ 'ի քո
խորանէս, զի ժամանեալ հոգիդ քո բարի՝ այսրէն
հանգիցէ. լցեալ զմարմինս մաքրութեամբ ընչոյս՝ զգեց-
մամբ անդամոցս, զգաստ արասցես զխելագարեալս
ամենաթշուառ։ Ընդ գերեցեալ դժոխաբնակաց [16]
վտարանդելոցն հոգւոց՝ արգելեալ կամ 'ի վտանգի.
զճառագայթ ողորմութեան փառաց քոց ծագեալ՝ լոյսդ
իմ անձկութեան, 'ի կապանաց օցտողին զերծեալ զիս
ապրեցուսցես։ [17] Գաղտնորոգայթ աներևութերակ
վքիպակ արահետ գարշութեան մեղացս ջրգողեցեալ
ոգւոյս կերպարան, կայ 'ի տագնապի. զծածկեցեալն

'ի տեսողութենէ՝ գչարագործին [18] նիւթիցն այսուց-մունս, քո ինքնաւորդ զօրեղութեամբ որդի այ, գթա-ծաբար առողջացուսցես: Օ բազմազան տարա-ցեղիցն զանազանից ախտաւորութեանց [19] մահացուցա-նողաց՝ իւրականօք կորստեան բերիւք՝ դժնդակար-մատն շառաւեղօք հաստատեցելովք 'ի յանդաստա-նի անօրէն մարմնոյս, տարակորզեսցես 'ի ձեռն ձե-ռինդ ամենակալի. որ արօրադրեալ միշտ՝ և մշակես զսահմանս հոգւոց առ բանիդ կենաց արդիւնա-ւորութիւն:

Է. Եւ քանզի անցաւ ըստ նմանութեան օրինակութեանց յանցուածոցս վէր, [20] ըստ Ճարակօղն քաղցկեղի, առ բնաւ անդամս մամնաւորեալ զախտին տարա-ծումն, չիք սպեղանի իբր իւրայելի առ անչափութեան խարանացն մատուցանել. 'ի խարսխաց բարձիցս մինչև ցափն կառուցման լրութեան անդամոցս չէ առող-ջութեան, այլ ամենեքին անբժշկութեան: Իսկ դու՝ ողոր-մած բարերար օրհնեալ, և երկայնամիտ Թագաւոր անմահ, լուր պաղատանացս արդահատութեան սրտիս վտանգի, որ կարդամ առ քեզ Տէր 'ի նեղութեան:

---

(1) Բիւրուց փանփարոյ: 3 օրին. Բիւրոց փանփարոյ: Բիւր քանքարաց կորստեան պարտապան եմ 'ի հատուցանել 'ի միում աւուր: բիւր ասէ՝ զանթիւ բազմութիւն յայտնելով. այլ վասն անսահման ասէ:

(2) Ոչ ես առ փոփոխմանն: Ոչ ըստ փոքրկութեան մարդկային մտաց հայցեմ թողութիւն, այլ ըստ անսպառ լրութեան փրկչիդ պարգևիդ, հայցեմ զմարդասիրութիւն: մի օրին, առ փոփոխմանեան. զի եթէ մարդ-կային չափով խորհէի, ոչ համարձակէի բնաւ հայցել ներումն:

(3) Գիփելով դրդեան դիպուածոյս: այսինքն զայժմու դիպուածոյս: Հոլով անուանդ՝ կամ իբր պատմական զնի, և կամ է սեռական յառա-կացուցիչ՝ լռելեայն ունելով զայլ անուն հայցական, այսինքն զմիճակ որդեան դիպուածոյս, և կամ զայլ այնպիսի: Համառօտ դիտելով քո ասէ՝ զայժմու անդարձան պատահմանս մեղացս և զաղաղակս, ոչ անանես առաջիկր. Նախահայեացդ քո Ճանաչմամբ տեսեր՝ որչափ չարիս գործելոց էի, և 'ի վերայ այսր տակաւին յօրինեցեր զիս արարած վայելուչ:

(4) Մինչ 'ի դրախտին: Առողջացո ասէ՝ զբազմութիւն հոգւոյս՝ զմիտս և զկամս իւրև զառաջինն յանմեղ միճակին, յորում եթէ կացեալ էաք, կթէի զպտուղն կենաց: Կամ, զոր յայնժամ կթէի միջնորդութեամբ ազա-տութ. զի որպէս նորա արտաքսումն 'ի դրախտէն համարեալ լինի և մեզ, նոյնպէս կալն և վայելել նորա անմահութ: Կամ, իբրև զառաջինն յանմեղ-ութեան աւուրսն, յորժամ 'ի մկ եկեղեցւոյ կթէի զպտուղն կենաց, զմեծ հաղորդութիւնն:

(5) Մեղաց կփոխ: այսինքն կծկմամբ, կարկամութեամբ, իբրև զկարկա-մեալ կնին 'ի վայր կորացեալ, անուղղելի կայ հոգիս. կարկամութեամբ մե-

զոյն իւրև կատարեալ սատանայի Է՛ երկիր կցեալ, չկարեմ զերկնաւոր օղ-
ջոյնդ ընդունել ։

(6) 'Ի Բարբ կրծոս ղայեւլլուԲԷ ։ մի օրին ․ 'Ի Բարբեկրծոս ղայեւլլուԲԷ ․ այսինքն 'ի բարեկարգ գեղեցկութեն ։ ըստ ԾԾաԲանուԲԷ, ըստ ԾԾային պատգամին եղեկիելի (Ժէ ․ 24 ․) * Բարձրացուցանեմ զփայտ խոնարհեալ ․ ․ ․ և զալարացուցանեմ զփայտ զօսացեալ|| ։

(7) Գոյառարուբէ լուսոյ հասփեոցէս ։ 4 օրին ․ հասփափեոցէս ։ Որդ 'ի ծնկ կուրին ասէ՝ որ չունէր բնաւ գործարան աչաց, նորոգ աչս կազմեցեր, այսպէս նաև ծնեալսս 'ի մեղս՝ զաւրկ 'ի լուսոյ շնորհաց և ԾԾգիտութեն, նորոգ լոյս շնորհաց զոյացուցեր ։

(8) Որ ու է փղանդք ։ Ցերկինս՝ ուր անմատոյց լուսովդ ծածկեալ ես, ոչ գոն 'ի քեզ քղանցք ձեռագործ վերարկուի, զի 'ի նոյնս մերձենալով բժշկեցայց իբրև զկինն առատատես ․ այլ փարածոցն հրաշից, զքանչելի զօրծոց քնանալեան և 'ի զգալիս առ հասարակ ներգործեալ ․ որք իբր համ զերձ ծածկեն զխնկութիւնդ, բայց և ցուցանեն զմեծութիւնդ և զզօրութիւնդ ․ և ես յայս զքանչելեաց տեսութիւնս մերձենամ իբրև 'ի քղանցս համզերձի քո, զի զառատական միայն զքանչելի զօրութեդ ճանաչեմ, և ոչ զբովանդակն ։

(9) Աղբերցս արփաասոց ։ մի օրին ․ ընդ աղբերց արփաասոց ։ այլ, ընդ աղբերցս ։ Ո՛չ ծծմամբ իւղոյ, կամ իւղով ծծանելով ես պատուաստեալ, մատուցեալ ընդ մեղաւոր կնոջն առ կենդանարար ոտից զարշապարս զարդարեալ իմ հերովք զփայտ քեզ ընծայեմ, այլ զծիծծ հաստոր ընծայեմ քեզ ։ կամ, այլ զամեծ հաւատոյ սրտիդ դաւանանք, այսինքն զամ բեծ հաւատոց Ճշմարտութբ դաւանելով, քեզ ։

(10) Հոգառոյս գոյառնեան ։ Ցրուեալ մեղօք հոգւոյս կազմուած ․ զի ըղձական ասպատակեցաւ 'ի բանէն, և կամքն յառաջնորդութէ մտաց ․ և ցերկոց կոյից, յերկուց ոտից հոգւոյն, որք են կամք բանին, և կամք մարմնոյն, ծոյնակողմանք, մեծ կողմանքն կամաց և յօժարութեց մարմնոյն զնալով անհաստատ առ բարին ։ Արդ՝ դու հնարաւորդ 'ի փրկել, զընծայից գործեն, զկամս բանին՝ որ զծանրութիւն մարմնոյս բառնայր, և ուղղեր 'ի ճանապարհ կենաց ծառայն, և խափանեցաւ արգելմամբ չարին, վերստին զօրացո ։

(11) Հասփասծոյ կերպես ։ Զերդում՝ որ է զործի փառաբանութե 'ի չի նուածի մարմնոյս, համբառնայց շունչն սատանայի ։ Դու բանդ կենդանի հոգեւոյդ քով ապացեալ Բարեգործեոցես, շնորհեսցես նաև խօսողութիւն համարձակ, ուղիղ ։

(12) Ոչբոնանօք փփաանաց ջոյնից ։ Ողջակեան խնացեալ փոխանակ լալական, ասէ կամի ․ կարեկցելով իմ Թշուառութեանս լալականօք՝ որք զգքուանաց ձայնս արձակեն ։ Իսկ խնացեալ իբրև ածականն ջոյնից, նշանակէ, ողջական ձայնիւք քքուանաց, կմ ողջովք ձայնից ։ բառն փփաանօք 'ի բառէն փաս նշանակէ՝ հարկանելով կոծելն ․ (ծեծկլուելով լալ ․) բայց 2 օրին ․ փփասաց ։ Խնասոք ամբողջ բանիս են ․ նման Դաւթարուանկեալ կամ ես յանկողին ոչ մարմնական հիւանդութե, այլ մեղաց ․ պատ Թէև կենդանի երևիմ, այլ հոգւով մեռեալ դիականս եմ ։ Բայց կարեկցելով Թշուառութես իմում, ոտն յայնժամ բաղաւօք եկեալ զատակից լինելին քերցն Դաւթարու, ընդ նմա կենդանարար ապատասոդք կանդնեա զիս ։

(13) Սփոյգ տաանայօղս ։ Անհնարին զմեկեցուցն երևեժոյն 'ի զուբ աղքին ․ նա ասէ՝ վասն չարեացն այլոց դատապարտեալ էր ․ (տղոց ․ ․ 20 ․) իսկ ես առնյդ և յերասեի 'ի խողձէ մտացս դատապարտեալ, կամ 'ի գբի մեղացս ։ Դու արդն այ՝ հան զիս 'ի լոյս, ոա զերեխաս եհան աղուեսնելք եթե

ովպացի . (Երեմ . ԼԸ . 7 :) Ընդ աղաչեմք եկեսցէ զայնպիսի խնամս , որ Թագաւորին՝ ծառայ Թագաւորի . իսկ դու որդի ես ԱՅ . նա՝ եթովպացի Թխամորթ . և դու՝ որդի [illegible] :

(14) Տարամանմբ ճապանց : 2 օրին . փափանման , իբրև Թէ ը̄ տասնամեան : փառայփանօք փխրանէ : Նուաստմամբ կամ հիւծմամբ տրտմութեն :

(15) Այսահար անդամալուծելոցն : Դիւահար անդամալուծելոցն : դիւանայ , 'ի դիւէն տանջեալ . փարալիզիմ . քարամբք կոծեալ և բռնացեալ : հէջյանդջօւլ , 'ի տանջմանէն խեղդեալ : փափնելի ի գիտնական հէրյօն , զարհուրելի , և նման խռովութեան խառնաշփոթութեան և ցրուեալ հերաց : Հայրենիրեօ բանդագուշելոցն , այլանդակ զիմօք խեղաթիւրելոցն : Այսպիսի անուանմբք ձևացուցանելով զողորմելի հանգամանս դիւահարացն՝ զորոց գրեն (Մատթ . Ը . 28 : Մարկ . Ե . 2 : Ղուկ . Ը . 26 :) ը̄ օրինակի նոցա տաէ՝ և ես զոկից 'ի քէն ողորմութիւն . զի մերժեսցես 'ի մարմնոյ իմմէ՝ որ է խորան քո , զդիւական ախտս . և հոգիդ քո՝ այսրէն , մերառանն՝ կամ ատտ 'ի մարմինս հանգիցէ , մաքրելով զհոգիս իմ , և զգեցուցանելով զմարմինս պարկեշտութեամբ :

(16) Վտարանդելոցն հօգւոյ : Խեմ զհոգիս առաջին արդարոցն՝ արգելելոց 'ի դժոխս ներքինս վասն պատուհասի ադամայ . առ որս լոյս ծագեցաւ քո յետ խաչելութեանն : Ըստ այնոցիկ հոգւոց տաէ՝ արգելեալ կամ և ես մեղօք 'ի վասնդ կորստեան . լուսով ողորմութեանդ ապրեցո զիս 'ի կապանաց սատանայի :

(17) Գաղջնորդայն՝ անէրնութերակ : Ջմեղս նմանեցուցանէ ջրգողութե , որ է գաղջութիւն գաղջնորդայն , 'ի ծածուկ կի անյագ պապանձառուննէնգող զմարմինն . անէրնութերակ , ը̄ անյագ երակս կամ ճանապարհս մարմնոյն ընթացող . Հէրդակ , վխտացեալ կամ խառնեալ 'ի բնական խաղովակաց հիւթոցն . արահէփ , յետ մասունս և 'ի հիւթս մարմնոյն տարածեալ : Այսպէս մեղքն զաղամի որդւայթիւ զիւրն՝ ընդ անյագ ճանապարհս զգայութեանց մտեալ ընդդէմ ուղիղ բանին և օրինաց , տարածեցաւ յետ մասունս հոգւոյս , և յետ շարժմունս նորա :

(18) Նինուէցւոց ապաշխարեալս : 4 օրին . Նինուէցին կամ Նինուէցին : գօ նինուէուրը , այսինքն քոյով ողորմութեամբ որ անկարօտ ես զեղոց , արձակեաց , ապաշխարողաց :

(19) Մահապարտանողաց : 2 օրին . ճահապարտողաց : Եւ զի մի զնմ ատեանս ախտից մի մի յիշատակեսցէ , զայլ ևս բազմանման ազգս ցաւոց որք տառապեցուցանեն զհոգիս՝ իւրեանց կործանիչ պատուղովքն , ըստ որում զժնդակադոյն շառաւեղօք յառաջագայքին յախտաւոր մարմինս , զոր աէր 'ի բաց կործեսցես , խլեսցես ամենակալ ձեռամբդ , զի քո է խնամով մշակել զանհնաւն հոգւոց մերոց՝ առ 'ի պտղաբերել զպտուղ կենաց :

(20) Ըստ Ճարտխօսի բաղաչէնքն : Ըստ նմանութե կերրող կամ ապառօղ քայքայեալ . (որ է կերցաւ . չիրխիփենջէ .) առ Բնան անդամս , առ եմ անդամս հաղորդեալ զնարտածումս ախտին . ուստի և ոչ բառէ ապաքանմ առ անչափ տարածութիւն կամ բազմութիւն խոցաւանացն , բացեալ և արգելեալ մերայնն : 'ի խարախաց , յորոց մինչև ցգլուխ չիք առողջութիւն . այլ բոլորովին անէծծչկիոեւթեան , անբժշկելի ախտ կամ ցաւ ըստ եսայեայ . (ա . 6 :) Իսկ դու ով ամենազօրդ Թագաւոր՝ մի ընդ անարժանութիւն իմ հայեսցիս , այլ 'ի կողկողագին պաղատանս տրտմիս մխտագնեցիս :

Սրտին յառաջեալ ներքին հեծութեան նորին հոգեղէն, առ ՚ի նորին ողբերգս մաղթանաց բանի :

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

Բ․ Ա․ Ն․ ԺԹ․ :

(16) Ջամենայնիւ, բոլորովին, յամենայնի, յամ. ժամանակի և 'ի գործ ամենայն իրօք, առ եմ խոս մխտասակարս և յանցաւորս: Այս փնօրինա-կաւն փերումակամս: Անսասակար և յանցաւոր գտայ առ անօրէնութիս քմի, կամ առ խորհուրդս մարդեղութե: առ յայփնուբնան մծայնս, առ ծանօթութիս ամծային գաղանեաց՝ այն Երրորդութե, ամեղծման, նա-խախնամութե, նախասահմանութե, գատաստանի, յարութե, ևն: առ երկնայն արարչագիրս. առ երևմունս յայդ գրեալս, կամ աղաղչին վայելուչս. որպէս 'ի դրախտին, 'ի լեառն քորեբ, 'ի սինա, 'ի թաբօր, ևն: առ խանարհութեան առբաւիչն, առ զիջմունս իւր 'ի մեր տկարութե, կամ առ խոնարհական գործս որդւոյն իւր, որք սարսափելի են մեզ: առ այն՝ զոր փեսի աչօք իսկ իմոչէ, Այսու յայտնապէս ծանուցանէ զտեսա-նել իւր մարմնոյ աչօք դքն. որով և հաստատի աւանդութիւն՝ որ կայ յազգի մերում. ապա թէ ոչ՝ մեկնելն 'ի վերայ տեսութեն 'ի պատա-րագի, կամ 'ի վերայ տեսանելոյ առաքելոց, որով խրդև մեզ ևս երևեալ համարի, և կամ այլ եղանակաւ մեկնելն, ամենայնն վերաբերի առ տե-սութիւն հաւատոյ աչօք. որով մարթ էր տեսեալ ամել նաև զանօրէնու-թիս քմի, զյայտնութիւն և զերևմունսն. և սակայն նա վարդապետս յայտնապէս խոտիր զնէ ընդ առաջինսն՝ և ընդ վերջինս, ասելովն, աչօք իսկ իմոչէ, և ոչ օտարին. այլև յաւորդամն: Այս որ մեծ է դարպասխան-փառաբնիւ. 2 օրին. դարպասխանափրաբնիւ. այսինքն առ այս տեսութիւն, քան առ համօրէն առէփարանին. այսինքն քան յաղագս բոլոր աւետարա-նական պքանչելեաց և վարդապետութեց. զի այս հաստատակաց է պարզև. խակ դէմյանդիման երևիլն՝ է առանձին շնորհ խրդև յատուկ սիրելեաց և բարեկամի. որով առաւել պարտական կացուցանէ 'ի սիրել: Եւս, զի աւետարանն 'ի լրոյ ականջաց ծանօթանայ. իսկ յայտնապէս երևիլն՝ աչաց է ներգործութե, որ աղդողագոյն ևս շարժէ. որպէս առաքեալն Թովմաս՝ որ 'ի լուր յարութե քմի դժուարէր 'ի հաւանութե, 'ի տե-սանելն զյարուցեալն՝ աղաղակաւ դաւանեցաւ: Այս առաւել անպա-տասխանի լինիմ ասէ՝ զի յետ տեսանելոյս զքեզ աչօք՝ տակաւին 'ի մեղս դարձայ. ուստի մեծ է պատասխանատուութիս, մեծ է զուրմանս, մեծ է հնազմանս. ևն:

(17) Անդաձմանս անհնարաւորս: Մտածմունս, կամ հոգարկութիւնս, որում չիք հնար կամ ճար: Ծամոխանուբնս: Թիւ կամ բազմութե հո-գոցս և թշուառութեցս՝ անթուելի 'ի մեզ: Եղմանս անխոպարս, կամս ելանելոյ յառաջին մաքրութիւն՝ բայց անգործ: կամ, ելմունս 'ի պաշ-տօն իւ, 'ի քարոզութե, ևն, բայց առանց սիրոյ, անյօժար: Իջմանս անհասփափս: խոնարհութիս 'ի գործ ճգնութե, աղաչխարութե, օգնե-լոյ կարօտելոց, ևն, բայց անհաստատ:

(18) Խոչ եթէ ընդվայր հարկանիցէս: մի օրին. եթէ ընդվայր հարկանէս: և զկնի, եթէ դէոց վհափաբնիս ոչ առցես: 3 օրին. և հին լուծ. եթէ զոդ-էոց վհափաբնիս ոչ առցես. որ յարմար ևս թուի:

(19) Ջարչէոն գիր. է բանն ժողովող. (Ժ. 4.) * Ողջբուձն գարձա-

ցանէ զՄերս մեծամեծս || : զոր Որ վերագրաւորեաց զնէ · Եծեշխանին դաղաղէ-
ցուցանէ , յայլ Թագաւորութեանց առեալ · զի այսպէս ունի եբրայականն ,
յոյնն , ասորին և լատինն : Եթէ ասէ՝ 'ի գութ շարժեալ ընդ հեղձու-
ցէչ ցասս հասուածանաց խնոց , առ իս ծանանէցուցէս , յաշողեսցես յիս
կասապէլ բանին գլոց՝ բժշկութի բառնալ զՄերս , որպէս այսու առե-
նաւ զայլայութ միաւանամ յարիմ 'ի քեզ տէր Յս , 'ի քոյդ կերպա-
րան վերանին ձևացեալ հոգւով :

(20 Սփեղծէու ևէլն : Յետ առաջին ասեղծմանն 'ի բնական կեանս՝ վե-
րաւորին ասեղծեալ 'ի կեանս շնորհաց և փառաց անմահ յարութի :

Մերոփէն յաւելուած էրէլն հեծութ՝ նորէն հաւրդէ , առ նոյն·
ազէրս մաղթանաց բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

ԲԱՆ· ԻԲ:

Ա. Եւ արդ՝ զո՞րս յայտնեցից , և յաղագս ո՞յց նշաւակեցից , և վասն ո՞րպիսեաց ձաւեցից , և զո՞րքան ծածկեալս մերկացուցից , և կամ վասն որո՞ց խոստովանեցայց , Զներկայի՞ցս՝ զոր արդէն ունիմ, թէ զանցելոցն՝ զոր միթերեցի · զապագայի՞ցն՝ յորոց կասկածեմ, թէ [1] զբազմապատիկ շարժուեցն՝ յորոց գլորեցայ · զփո՞քրն ինձ համարեալ՝ որ է այլ մեծ գրեցեր, թէ [2] զանկերպագրելին չյիշատակելի · զնուա՞զն՝ որ է առաւել, թէ զթեթեւագոյնսն՝ որ են ծանունք : Զհոգեկանա՞ցն կրից կորուսչաց, թէ զմարմնականաց ախտից սպանողաց · [3] զառ դրունս հեշտականա՞ցն, թէ զծայրակոտոր փափկութեանց · զաներեւութի՞ցն , թէ զտեսականացն · [4] զառ ձեռն հպաւորութի՞ւն , թէ զառ նոյն ինքն շունչ հեռաւորութիւն : [5] Զլայնակա՞նն դիւրին խածմունս, թէ զերկարաւորն նետաձգութի · զխորութեա՞նն զանչափութի , թէ զամենածախն յայտնատեսիլ · [6] զյոքնագլխի՞ւն պռունկութի, թէ զառողջութեան անբժշկութի · զպարարու՞մն չարին մարմնովս , թէ զսովին բարւոյն հոգւովս · [7] զխնամո՞ցն հանդիսանալ յոչ ախորժելիսն այլ , թէ զառնադառնութեան տռուամբ ձգիլն 'ի նոյն մոլեգնութի · [8] զառ 'ի մա՞հն մեղաց , թէ զընդունայնութեան կարծեաց :

Բ. Արդարեւ որպէս կամաւ խելագար [9] զերծեալ 'ի ձորձոյ , զառականացս տեսիլ յանդիմանեցի , զընդ-

դիմմն գործեալ իմաստնոյն, որ՝ թէ հանճարեղքն վերարկեացեն զամօթս իւրեանց. օտարացեալս ՚ի կրօնից. հեռացեալս ՚ի կարգաց. ՚ի սրբութէ անտուրք. ՚ի կուսութէ անմաքուր. յարդարութէ ամբարիշտ. ՚ի բարեպաշտութէ վնասապարտ. բերանովս մերձ առ ստացօղն, և հեռի երիկամամբք. շրթամբքս պատուամատոյց, ըստ մարգարէին, այլ ոչ եթէ սրտիւս։ Այլ եթէ պարտ է զքստմնելիսն ասել աստանօր, [10] չար քան զտանջանսն յանդգնութի, իբր զուր իմն պաշտօնատարս այ, ՚ի միտս անկայունս երկեակ ճանապարհաւ մահու վարանեալս՝ ջանամ, և ոչինչ օգտիմ. պնդիմ, և ոչ հասանեմ. փութամ, և ոչ ժամանեմ. անձկամ, և ոչ տեսանեմ. փափաքեմ, և ոչ հանդիպիմ. կարօտիմ, և ոչ պատահիմ. [11] ունիմ զամ երկրի, և եմ պատգամաւոր աղօթանուէր ամ աշխարհի։ Այլ թող զբազումս զայսոսիկ՝ բամբերար, և մի ունիցիս. դիւրինք են քեզ զսոսին եղծանել, քան ինձ տաժանաւորս աջով նկարել. վասն այնորիկ գրեցի առանց խնայելոյ, զի դու առատապէս ջնջեսցես՝ ծրհնեալ. Որ վասն մեր մեղաւորացս երկայնամիտ անուանեցար, ըստ մաղթանաց բանի՝ հեծութե սրտի՝ եզրի երջանկի. [12] յոյժ նեղեալ անձն և ձանձրացեալ ոգի՝ բանին յիշատակաւ, որ զսոյն պատմէ. յամ կրից մահացուցանողաց վտանգեալ, անկեալ ՚ի վիհ գարշութե մեղաց՝ անդնդականաց ապականութեց. քանզի չհաւատամ, թէ լսես իսկ ինձ, ըստ յոքայ ձայնին։ Արդ՝ ես ինձէն ինքնադսրով անձնադատ գերի՝ կամաւորապէս [13] մատն եղեալ բնութեես, արգելի փակեցի կնքեցի առ յինէն՝ յամենայն մասանց՝ զկենացն հնար, զի ՚ի փրկութե մեղօք կապելոյս՝ կըրկին մեծացիս գովեալ։

Գ. Այլ քանզի [14] ՚ի մարգարէէն բարուք խրատեալ փորձ գտցուք, մաղթել ընդ նմին հոգւով քո երգեալ՝ յուսով հաստատնով ՚ի քեզ ապաստանեալ. առէք ընդ ձեզ բանս, ասէ ովսէէ, և դարձարուք առ տէր ած ձեր, և ասացէք ցնա, կարօղ ես թողուլ զմեղս. զի ընդունիցիք զբարիս, և վայելեսցեն ՚ի բարութե անձինք ձեր։ Նա ած խօսեցաւ, և ո՞վ է

որ ոչ լուիցէ. նոյն ինքն վկայեաց, և ո՞վ է որ ոչ հաւատասցէ: Արդ՝ այսոքիկ[15] վճիռ պաշտելի, նուիրեալ պայման, սահման նոյնագոյ, կենաց աւետիս, կէտ տէրունի; ղուռն բարութ̃ն, սփոփանաց հրաւէր, ճշգրիտ պատկեր, անստգիւտ գանձ, անմոռաց յիշատակ: Այսու առ սոյն և ես հաւատ ընկալեալ, աստուստ վկայեմ սմին՝ ընդ մարգարէին, կարօղ ես յամենայնի թողուլ զմեղանս բազմաբեղունս. և ևս զօրացցիս կրկին բարձրացեալ՝ առ ամենաթշուառ կործանեալ հոգիս: Ամենայնի իշխես. ամենայնի բաւես. ա̃մ ուրեք հասանես. ամենից բռնութեց յաղթես. և զա̃մ կարծրութ̃ փշրես. զա̃մ ընդդիմահար վանես. զա̃մ խստութ̃ վատնես.[16] զա̃մ սրացեալ ընդոտնես. զա̃մ դառինս անուշես. զա̃մ դըժուարամոքելիս քաղցրացուցանես. զա̃մ զպարտս ջնջես. զա̃մ յանցանս թողուս: Կարող ես՝ զօրաւոր հզօր հնարաւոր ամենարուեստ՝ զամենեցուն ըզմեղս ընկղմել՝ և չքացուցանել բառնալ ՚ի միջոյ, իբր զճաճանչ փոքու կայծական[17] սահմանեալ՚ի չափ ոչէից՝ անկեալ ընկլուզեալ կորուսեալ ՚ի տիեզերատարածն ծովու:

Դ. Արդ՝[18] բանիւ մաղթանաց վերծանողացն այսմ մատենի, ողորմեա՛ վասն խաչի և չարչարանաց մահու որդւոյ քոյ՝ հա՛յր գթութ̃ն:[19] Սկիզբն առաքողի՝ ողջերգութ̃ն ձայնի՝ այսմ արտօսրածին նուագի, որ զայս դեղ փրկութ̃ն կենաց՝ մեզ յարմարեցոյց, եղիցի բժշկեալ յանուն քո հզօր: Որ հետս ելից խոստովանութ̃ն մեզ նկատեցոյց այսու պայմանաւ պատշաճականաւ, լիցի անարատ յիւրոցն պարտեաց: Որ զհպարտութ̃ն թեւս հարթել մեզ վարդապետեաց՝[20] ՚ի սոյն կանոնի կենաց պատգամի, եղիցի զերծեալ ՚ի չար կապանաց մահու արկածից սկզբնականաց՝ վերջնոց և միջնոց, երրորդութ̃դ բարեգործեալ, ՚ի նորոգութ̃ լուսաւորութեան. ընդ որում և մեք գրեսցուք՝ երջանիկ գտեալ ընդ սմին:

21 Ընդդէմամարտ դիւաց այս նուագ աղօթից, և դիւաստարաց
Ջերմնատապագնող ախտաւորութեանց աստուածով փարատիչ:

Է. Արդ՝ այսքանեացս անբաւից հրաշից հանդերձ
ձիչ հայր ամենատերդ՝ անունդ ահաւոր,
ձայն սարսափելի, 22 կոչումն ընտանի, բան համբու-
րելի, ազդումն սքանչելի, հրաման սոսկալի, էութիւն
անքննելի, գոյութիւն անճառելի, իսկութիւն անբաւե-
լի, զօրութիւն անզննելի, կամք ամենաբարի, տէրու-
թիւն անսահմանելի, մեծութիւն անչափելի, բարձրութիւն
անբովանդակելի, ողքանութիւն անկշռելի, առաւե-
լութիւն անհասանելի, 23 պատճառ որդւոյ հայրութեա՛,
այլ ո՛չ նախադրութեա՛. քև և 'ի ձեռն քոյդ անպա-
րագիր զօրութեանդ՝ սաստեա՛ տագնապօղ և դիւա-
կան տենդիս ջերմութեան, որ սպրդեալ մուծաւ ընդ
մեղաց՝ զի փախիցէ 'ի մարդոյս, 24 զարհուրեալ 'ի
սխրալի և յանբաւելի արեան վտակի՝ գառինդ երկ-
նաւորի. որով սրսկեալ միանգամ 'ի մշտնջենաւորս՝
համայն մաքրեցաք:
Ը. Եւ արդ՝ յայս պատկառելի խոնարհութէ արար-
չակերտս խորհրդոյ, ամաչեսցէ սատանայ 'ի գործս
չարեաց իւրոյն հրեշտակաց. տանջեսցի և հալածեա-
ցի, հեռացեալ և արտաքս առաքեալ 'ի չինուածոյ
25 խորանէ քումդ բնակութեա՛ յարտաքին խաւարն:
Եւ ընջեալ մաքրեսցէ զարտասուս ողբոցս 'ի դիմաց
մերոց, և զհառաչումն ձայնիս հեծութեան 'ի սրտից
մերոց: Եւ յիշատակաւ հարման հեղուսիցն՝ 26 քստ-
մնափուշ տաժանատեսիլ ոգեպահանջից, որով պըն-
դեցաւ միածինդ քո յաշտարակ խաչին, ցաւեսցի
չարին. Եւ 'ի կողահերձ սայրասուր 27 սլաքէ ուժ-
գին բախմանէ, որով զվէրն մեծ ընկալաւ, խոցոտա-
ոտակեսցի սկզբնարար մահուն: Եւ զի խոնարհե-
ցոյց զգովեալն գլուխ՝ յաւանդել զոգին 'ի ծոց քո՝
բարձրեալ, ապստամբութիւն անբարի բարուցն բե-
լիարայ՝ 'ի կոր կործանեսցի, մինչև հերքեալ 'ի կո-
րուստ: Եւ զի ողջեալ ծածկեցաւ 28 անմահն իւ-
կունն յորովայնի երկրի, այսու ամբարձեալն հպար-
տութիւն կարծեալ զօրութիւն՝ 'ի յատակս մահու դժո

խոց մթին ստուերին՝ յառեալ դիտեսցէ. և յիշես-
ցէ զառաջին հարուածն անբժշկական, որով մահա-
ցաւ դիմամարտութի̃ թիւնից վիշապին՝ կենարարն
կռիւք ամենազօրին ։ 29 Վասն զի ՚ի փառս քո՝ հայր
ողորմութե̃, իբր ՚ի գովեստ որդւոյ քոյ՝ հոգւովդ
սրբով զայս խոստովանիմ. քանզի ոչ պիտակ ինչ
սոսկ զօրութե̃ն ունի զմիւսմէն՝ առ մի խորհրդականն
խորութե̃, այլ զանսկիզբն բանդ անձնաւոր՝ ընդ
անժամանակդ հօր փառաւորեմք ։ Այլ քեզ միայնոյ
րդ երրորդութե̃դ, համասարապատիւ տէրութե̃դ,
համաբուն անբաժին ինքնութե̃դ՝ օրհնաբանութի̃,
գոհութի̃, զօրեղութի̃, և անճառ վայելչութի̃ մե-
ծութե̃, բարեվիճակ հաբթութե̃, զուգակշիռ հա-
ւասարութե̃ յաւիտենանս ամէն ։

---

(1) Զ[illegible] ։ Կամիմ դարձեալ զվճակն աղօթս մա-
տուցանել, խոստովանելով զյանցուածս իմ և զպակասութիւնս ։ Այլ
առաքինութեամբ եմ թէ զինչ յայտնեցից, վասն որոց խոստովանեցայց,
արդեօք զներկայ մեղս իմ զոր ունիմ. արդեօք զանցեալն զոր ինձ պատ-
րաստեցի. արդեօք զապառնայսն յորս անկանիլ կասկածիմ ։ Մինթէ ըղ-
դիւրատանելի չարժմանն՝ որք սակաւ և յաճախ չարժին յանձն իմ, և
սան դիւրել ՚ի բազում յանցանս. որպէս են չարժմունք բարկութե̃, ըն-
դուեր, աչաց են ։
(2) Զ[illegible] ։ մի օրէն. զ[illegible] ։
Որմունք [illegible] , խմանան՝ ոչ արժանի նկարագրելոյ և յիշա-
տակելոյ. և մեկնեն զմարմնական աղաւեղի մեղաց ։ Բայց զայնմանէ
տարև խօսի. եւկ սատ բաս կարգի զթևթև կարծեցեալ մեղաց իմանի
բանս. զի սակ եւկ, արդեօք զփոքրն յիշատակեցից, զնուաղն, զթե-
թե̃ն ։ Այլ [illegible] սակ՝ զայն խորհուրդս և զշարժմունս մտաց,
որք արագ և իբր անզգալապէս կրին ՚ի մեզ. զորս և չկարեմք երևակայել
և մի [illegible] միտքէ յիշատակել. ուստի կամ մեղս չհամարիմք, և կամ փոքր.
սակայն բազում անգամ յանհոգութէ եղեալ ՚ի ծանր նիւթս, յան-
ցանեմք. այսպիսի են չարժմունք հպարտութե̃, թիւր դատողութեան,
[illegible], երկբայութե̃ ՚ի հաւատոյն, են ։
(3) Զ[illegible] ։ Որք զ[illegible] զգայութենց հեշտալիք են. և սակայն
յետոյ [illegible] վնասս գործեն. այսինքն ծայրագոյնս կամ չարաչար
կատարեն զհոգին. կամ զծայրագոյն բարին շնորհաց ապականեն ։ Կամ
բառ եւս. զորն յայտնեցից, [illegible], այսինքն ՚ի սկզբան հեշտացու-
ցիչսն, թէ [illegible], ՚ի ծայրն կամ ՚ի կատարման ասանքիչ վնասա-
կարսն. զի բազումք ՚ի մեղաց նախ հեշտացուցանեն, և ապա ՚ի կատա-
րածին սաստիկն խղճիւ մտացն, կորստեամբ համբաւոյն, կարօտութե̃ ըն-
չից, ցաւագարութե̃, են. որպէս արբեցութի̃, անառակութի̃, բղջա-
խոհութի̃, են ։
(4) Զ[illegible] ։ Զձեռամբ մերձենալն ՚ի հրաժարելիսն, ի̃ ե
[illegible], թէ նաև չնչով հեռի կալն ՚ի յանձնառականաց ։
Այլ [illegible]. [illegible] հրաժարեցայց մերձենալ ՚ի չարն, որպէս յարգելեալ

ծառն, և ես ձեռամբքս շօշափեցի զայն. հրամայեցաւ ընդդիմել զխաւարն,
եւ և ոչ շնչով կամ յօժարութեամբ բերանոյ մերձեցայ 'ի նա ։ Մարթ է
եւ իմանալ զմեղս՝ որ ձեռօք գործին, որպէս գողութիւն, սպանութիւն, եւն.
և զմեղս՝ որ 'ի հեռաւոր կատարին շնչով բերանոյ, կամ լեզուաւ. որ-
պէս հայհոյանք, բամբասանք, ստախօսութիւն, եւն ։

(5) Զլայնախմն տիւրին ։ Աստէն զհանգամանս մեղաց բացայայտէ բառ-
շորից առասպելաց դրից, այսինքն լայնութեան, երկայնութեան, խորութեան, և
բարձրութեան. զի ամենայն մեղք կամ լայն կամ ընդարձակ՝ հեշտացուցանելով
խանծանեն. որպէս արբեցութիւն ։ Զերկարաձիգն ներփաշփաւոր ։ ամենայն յեր-
կար կեալ ներքեւ խոցաւոր. որպէս նախանձ, հակառակութիւն, եւն ։
Զխորասուզն զանդուղավորն ։ ամենայն կարի 'ի խորս արմատացեալ. որպէս հպար-
տութիւն, ատելութիւն, եւն ։ Զամբարձեալն յարդիւնաւորեալ ։ ամենայն զամ բարձ-
նալ զմտադիտականս ծառոց, վառանեն, և ամենեցուն յայտնի լինի խաբ-
տատակութեան, կամ կալեան 'ի բարձր ամբողջ. որպէս են անտասակութիւնք,
խառնք նորոգ, պարտասութիւնք, եւն ։

(6) Զյօժարակամն պատուհասիւն ։ Ըստ որում պատուհասն անխափան լինի ընդ-
դիմակութեան արար, որ զղջումն են կնոջ ։ կամ, զի դատում մեղս յօժարեալ ծնա-
նի՝ կամ պատասխանատուութիւն մեղաց ։ Եւ զանապատիւն անբժշկելին ։ Ըստ որում
տևողութիւն պատժոյ անմարմնելի է յաւիտենական. կամ զի ապաշխա-
րելով կատարելն ոչ եւս ակնկալելոյ ։

(7) Զխռովնավէտն հանդիսանաւ ։ Զկամաւորապէս չարիսն 'ի գործս ամբա-
րշտելիս եղ, թէ գէշանարգանաւ փառաց, 'ի բանսարկութեան չար ու-
նակութեամբ ձգելի 'ի նոյն ամբողջութեամբ մեղս. կամ, զձգելի թախանձանօք, հրա-
պուրանօք և պատրանօքեւօք այլոց 'ի մեղս՝ կամ շատն տառապանս վարելով ըստ
բանին առակաց ։ (Է. 22 ։)

(8) Զատ 'ի մեղս մեղաց ։ Զմեղաց՝ որ անթիւք են գոլով և զժառանգութեանց
մեղք՝ մինչ 'ի մահ անձն, Եւ զանդամական կարծեաց. զընդունելոյն
կարծեացն՝ թէ մեղանչեալ, և յետոյ ապաշխարեալ ։

(9) Զերծեալ 'ի յորդոյ ։ Կամ խելագար ոք՝ մեղկ 'ի հանդերձէ՝ զանձ-
թախն ամենայն հոգևոր երեւելեացն բանիւքս. զընդդէմն գործելով ևնոփ-
նոյն, (2 օրին. ըստ նոփոփանոյն.) այնմ բանի սաղմոսին. որ ասէ՝ Եւ հա-
ճարեղեն վերուշեալ. (առակաց. ԺԶ. 16.) * Ծածկէ զանդարգամա
եւր այլ խորագէտ ։

(10) Զոր զան զզանզանան յանդգնութեան ։ Ցանդգնութիւն՝ որ շար կամ
գժնդակ է քան զաստուծոյ խմ. իսկ յանդգնութիւն այս է, զի ինքն զոր
իմն զազրգործագործ էր. կամ ասա ապաշխարել, կամ կամ ընդունայ-
նագործ և զբաղման ապաշխարեալ երեւիմ, անհաստատ մնոք, Եղեւ ճա-
նապարհաց ձևոց, կամ զխարդախելոցն յերկրաւ հետ կացուցելով. (Գ.
Թագ. ԺԸ. 21.) մերթ զմի ապաշխարել, մերթ զզեն ։ կմ ատաւելա-
զանցութեամբ վարելով 'ի բարին կամ 'ի չարն, և նուազութեամբ միշտ 'ի բա-
րին. որ երկոքին եւս մեղք և մահաբերք են. և սակայն յայսմ ամենայնի
կամ եղ ապաշխարել ձևանամ ներման փարախեցուց. որ է մեծ յանդգնու-
թեան և անամօթութիւն ։ Այսպէս ձևացութեամբ եւեթ ապաշխարել Աս-
տուծոյ, զանած յարատապն գործս, և ուրիշ օգուտ հոգւոյ ։

(11) Ունիմ զմի երկեր ։ Ունիմ զմի մարդոյ ախտ, կամ զմեղս և ըն-
դդիմակս. կամ ունիմ զմի որ երկրի է, այսինքն երկրաւոր և շնչաւոր
մարդկան. և սակայն ես զարդարանաւ, եմ իրօք, ձևանամ կամ ապա-
գամանաւոր եղ առ մարդ, և արօթօղ առ Ած վասն ամենայն աշխարհի ։

(12) Ցոյծ ներշնչեալ անձն ։ Զեզր ասէ յոյժ ներելով, ընդ ձեր յիշատակաւ,
յիշատակաւ մեղացն խարդաւելի. որ և զայն ինքն պատմէ. (Թ. եզր. Է.
72. Թ. 2 ։) Սոյնպէս և ես ասէ՝ նշկելով և յանձնապաստեալ եմ յիշատա-

կաս մտացս․ և յիմ մեծահոգիր ախտից վարանելով, անկեալ կամ 'ի խորս դառնութեան մտաց, որք են գժոխային տառապանութիւնք․ մինչ զի գժտութիւն է համառօտելն՝ թէ լսես ինձ առ 'ի հանել 'ի խորոց մտացս ։

(13) Մոփն Նշխար Բռուբէն ։ Մտանելով զիմ անձնս, կամ զապականեալ նեալ զնութիւն՝ [illegible] խառնակմանութեամբ, յայսմնեցի յիմ կողմանց լինել մեծամայրապետ և անհնարաւոր առ 'ի կեալ․ որպէս զի փրկելով զիս՝ ատամանել մեծամասնեցես, փառաւորեսցես, կամ նչէն, վասն առաջին փրկութեան, և վասն երկրորդին ։

(14) 'Ի մարգարէէն Բարբոտ խրաբէան ։ այլ օրինակ․ 'ի մարգարէէն Բարբոտ է խրաբէան, քորչ գիցեալ մաղթէլ ընդ նմին են ։

(15) Վճիռ պուշմէնէ ։ Այսպիսի բանք ամբաստանչաց՝ որք առան յոյս թշուառութեան մտաց, են վճիռ յաղթելի, օրհնելի, ըստ որում են ամբաստանք ։ Նուիրեալ պայման, սրբազան օրէնք, կամ կանոն ։ սահման նոյնպէս․ կարող կամ որոշումն անփոփոխելի ։ Նէփ փէրմանի․ վճիռ կամ նշան ամբաստանութե ։ Ճշգրիտ պատժէր․ ըստ որում որոշապար երևեցուցանեն զկամս իւր, և զհամեմատանս թշուառութեան մտաց, այսինքն համառօտել թէ կարէ և կամի ամենայնի, և այնպէս դառնալ առ նա սրտիւ զղջացելով ։ անըմբռնելի, անխափանելի, կամ անմխիթարելի զանձ, յորմէ զերդանիւն ընդհանուր բարութեան ։ Վասն որոյ և ես այսու բանիւք համառօտ ընկալեալ, են ։

(16) Զամենայն ուրացեալ ։ Զամենայն սուր ցցուեալս՝ ընդ ասիւք ներգ-գեա ։

(17) Սահմանեալն լաւ ուխտ ։ Իբրև զնուազ լոյս փոքր կայծի, որ իւր անձայն կամ աներևելի համբարի ։

(18) Բաժինս նայքնաց ։ Այսոր մինչ 'ի վերջն 'ի բերան աղօթողացն բանս զնէ աղաչել վասն իւր, որպէս ասար և 'ի բանին իմ․ Կ ։ տես անդ․ լծ․ 24 ։

(19) Սէրբեի ատուդող ։ Պատճառն յօրինողի այս զղջական բանից, եղիցի բժշկեալ․ են ։ Եւ այն պատճառ խմանեն ծնօղք կամ վարժապետ ոչ՞ն, կամ որք յորդորեցին յօրինել զայն ։ Կամ իմն այսպէս, ախիցն առաքող, այսինքն յօրինող ողբերգութեան ։ Իսկ եթէ որ կոչեցեալ տառեցէ, ով ախիցն են․ իմանի ։ Ով ոէր՝ պատճառ յօրինողի ողբոցս, նա՝ որ զայս գեղ փրկութեան մեղ կարգեաց, եղիցի բժշկեալ են ։

(20) 'Ի նոյն կանոնի ։ Նա որ 'ի սոյն աղօթական մատեանի՝ խոնարհական զղջմամբ ուսոյց խորտակել զթեւս հպարտութեան, առաջնորդեսցէ 'ի չար կապանաց մահու որկածից, մեծահարբ գործոց կամ մեղաց, ոկղբեկանաց, առաջնոցն՝ գործելոց 'ի մանկութեան, միջնոց, գործելոց 'ի ծերութեան, և վերջոց, գործելոց յերկաւառութեան ։ Կամ, առաջնորդեսցէ 'ի պատրանաց ոկզբնական մեղաց, և 'ի վերջին պատժոց հանդերձելոյն, և 'ի միջին ներկայ պատուհասից ։

(21) Ընդդիմամուրփ դիւաց ։ Ցաղագս մակադրիս չէ յայտ՝ աժրեղեց որդի վարդապետին իցէ, թէ այլոյ ուրուք ։ Եւ է աղօթքս առ հայրն ամենայն լուսաւորաց․ որք թեպետ և 'ի բնական պատճառաց ախտանան, սակայն աղդեցութեամբ չարին խառնի բարկութեամբ 'ի սպանեցուցանել, և 'ի բարբարել զատաղ սրբեանն ։

(22) Կուրամ ընկանի ։ Անունն քո իբրև Աճ՝ մեծ է և ահաւոր․ բայց իբրև Հայր՝ ընտանի է, նշանակիչ ծնողական գթոյ․ ուստի և եան հան քուրէն, քաղցր 'ի բերան ասանել ։ Կամ, անունն քո ահաւոր և սարսափելի է առ դևս, առ խաւարս, առ ամբարշտս․ բայց ընտանի և սիրելի առ հաւատացեալս, առ ամբաստանս ։

(23) Պատճառ որդոյ ։ Սկիզբն որդւոյ ծննդեանն, կամ իբրև հայր Տէրանց առաջադրութեամբ, որ առանձնաւորապէս զորդին մեզ գերպատիւ իւր ու-

նի զՈրդի, այլ ոչ նախապատուեսցէ. ոչ նախնութեամբ ժամանակի. որպէս յառաջագոյն ծնօղն յառաջ է ժամանակաւ քան զծնեալն։ Կամ, ոչ ըստ նմանի դասելով անուանմն, որպէս հայհոյէր Սաբէլ, որ զմի անձն համարելով զՀայր և զՈրդի, ըստ նմին զնէր՝ թէ Հայր նախ է քան զՈրդի կոչմամբ միայն, և ոչ առաջնութեամբ։

Ցաղագս պատճառ բանիս յայտնի է ուսանողաց Աստուածաբանութեան, զի վարդապետք յունաց սովորաբար 'ի կիր առնուն յԱստուածայինս, կոչելով զՀայր՝ պատճառ որդւոյ, կամ հոգւոյն սրբոյ. որով իմանան զճշմարիտ և զիրական առաջադրիչ սկիզբն անձին որդւոյ, կամ հոգւոյն՝ առանց զանազանութեան էութեան, և առանց կախման. և զայն կիրառութիւն յունականս ընկալեալ վարդապետք հայոց, գիտելով զուղիղ իմաստ բանին, և զուղղութիւն լսողացն, և միանգամայն ոչ անգիտանալով զայլ նշանակութիւն այնր բանի, ըստ որոյ ոչ պատշաճի Աստուածայինն անձանց. զի պատճառ 'ի ստեղծուածս զայնցանէ ասի սովորաբար, յորս գոյ զանազանութիւն բնութեան, և կախումն միոյն զմիւսանէ. և ըստ այսմ մտաց՝ անպատճառ ասեն վարդապետք հայոց զՈրդին և զՀոգին Սրբ. որպէս Շնորհալին ասէ 'ի Յս որդին, 'ի բանին յաղագս Երրորդութեան. * Հայր է պատճառ՝ անպատճառից, որդւոյ ծննդեամբ՝ հոգւոյն բղխմամբ։ Զի ոչ՝ չէ ինչ պատճառ, ինք՝ պատճառաւ՝ գոյից պատճառ ||։ Զսոյն ասէ 'ի շարականն հոգւոյ գալստեան, 'ի կանոնն. Գ. 'ի հարցն. Որ բոլորից ես պատճառ, եւն։ Սոյնպէս և յառաջին թղթին առ մանուէլ կայսր. * Հայր պատճառ, և որդի և հոգին 'ի պատճառէն անժամանակաբար, և առանց պատճառի ||։ Իսկ վարդապետք լատինացւոց սովորաբար 'ի կիր առնուն զբառն սկիզբն, և յառաջնոյն՝ երբեմն նաև զբառն պատճառ. որպէս Իլարիոս. (գիրք ԺԱ։ և ԺԲ։) Օգոստինոս. (գիրք ՀԳ. խնդրոց. ԺԶ։) Վիկտորինոս աֆրիկեցի. (գիրք Ա. ընդդէմ Արիոսի։) Անսելմոս։ (գիրք յաղագս բղխման հոգւոյն սրբոյ։ Ռիքարտոս Վիկտորեան. (գիրք Ե. յաղագս Երրորդութեան. գլ. Է.) Իսկ յետ երկոտասաներորդ դարուն խափանեցաւ առ լատինս կիրառութիւն այսր բառի, թէպէտ առանց մերժելոյ զսովորութիւն այլոց ազգաց. որպէս ասէ նա ինքն Ս. Թովմաս ակուինացի, 'ի Ժ. խնդ. յաղագս կարողութեան. յօդ. Ա. առ 8. * Յոյնք ընդարձակագոյն վարին անուամբ պատճառին, զծագումն եւեթ այնու նշանակելով... վասն զի ոչ ըստ պատշաճի ասի ինչ 'ի լատին լեզու, զոր վասն համադամանաց լեզուին մարթ է ըստ պատշաճի ասել 'ի լեզու յոյն։ Սակայն յընդունել մեր զանուն պատճառին յԱստուածայինս ըստ յունաց, չէ պարտ յայն միտս իմանալ, որպէս յորժամ զստեղծուածոց ասի ||։ Վասն այսորիկ 'ի Փլորենտական ժողովն՝ 'ի միաբանութեան անդ յոյնքն անդադար 'ի կիր առնուին զբառն պատճառ. և երբեմն նաև լատինքն ըստ միտս յունաց. մինչ զի նաև 'ի սահմանին հաւատոյ ասացին։ * Որդին ևս է՝ ըստ յունաց պատճառ, և ըստ լատինացւոց՝ սկիզբն ենթակայութեան հոգւոյն սրբոյ, որպէս և Հայր ||։

(24) Զորհուրէաւ 'ն սուրբ արեան նորին: Իբր զարհուրեալ 'ի վսեմէ սխրալի կամ զքանչելի արեան երկնաւոր գառինն. որ և անճառելի է, իբր ոչ գոյ բան կամ չափ զօրութեան նորա. մինչ զի թէև միանգամ հեղեալ կամ սրսկեալ, մաքրեաց զհամայնս ընդ ամ յաւիտեանս։ Առանձնօր յառակացեալն 'ի նմանէ՝ եղեալ է 'ի սեռական հոլով նմին յառակացուցին՝ արեան, ներհակաբար այնմ ոճոյ՝ որով յառակացուցիչն դնի 'ի հոլով յառակացելոյն. տես զկնի ԼԾ. 25. 27։ Այրդ՝ ասացէ, զի անենքն գիտական, և մանաւանդ ինքն զան փախիցէ 'ի ատենդելոյն, զարհուրեալ 'ի հեղմանէ արեան Քի փրկչին, որ միանգամ հեղեալ, 'ի մշտնջենաւորութեան ունի զօրութիւն։

(25) Ցաւս ղափկառենչ խոնարհութիւն : 'Ի Հ օրինակս գնի յայոց, որ ըստ-
ըստայն ցուցանէ զվիշտս քննական խոնարհութիւն, և զայն բազմացուցանէ,
երբե թէ 'ի պատկառելի խոնարհութենէց յայտնէ խորհրդոյ մարդկ-
ութեան, ամաչեցէ սատանայ . հեռացեալ մերժեցի 'ի չինուածոյ խո-
րանէ, յո 'ի չինուածոյ խորանի՝ 'ի մարմնոյ ջերմեռանդ կամ լուսանոփն,
յորում դու ենքն բնակես :

(26) Քաջամարտ . Քանամեցուցիչ . (փուշ փուշ ընօղ .) փոծանապե-
ութ. գաճեգակ կի ցամեցուցիչ ձևոյն : ոգևորահարճից . յո մեծ և սատառ
բևեռացն քնի, որք զօգին հանենին սատանիկ ցաւոյն, և քամենցուցա-
նենին զանօղս և զլսօղս բևեռածանն : Արդ՝ յիշատակաւ բևեռացն այ-
նոցիկ ամաչեցի ցաւովք չարն սատանայ՝ փոխանակ ըմպելոյն զլուա-
նոտն :

(27) Սլաւէ ոփժգին բախմանկ : 'Ի սատանիկ բախմանէ կողահերձ և սուր
ալաքին կամ տիգին՝ որով ընկալաւ փրկիչն զմեծ և զերանացեալ վէրն,
սատանկեցի սատանայ՝ աւաղին գուիչ և պատճառ մահուն : Վէր կողի
փրկչին մեծ եղև՝ ոչ միայն առ այլ վէրան որ 'ի գանիցն և 'ի բևեռացն,
որ և ենքնին մահացուցիչ էր, այլև թ անարգութեան և թ յանդգնու-
թեան տիգողին . զի ոչ ենայեաց նա և ոչ 'ի մեռեալ մարմին խաչե-
լոյն :

(28) Անձանն խոխաբէ : Փոխանակ թանձրացելոյ գնի . յո անմահն մեծ
մահկանացու մարմնոյն ծածկեցաւ 'ի գերեզմանի : Այսու թաղմամբ
փրկչին՝ հպարտութեան չարծեալ գառողին, կործեալ իշխանին սատա-
նայի՝ 'ի յատակս խաւարային գժոխոց անկաւ զենքն : Եւ յիշեաց զա-
ռաջին հարուածն որով 'ի փրկագործ կրից խաչեցելոյն թիւնք սատա-
նայի անհնարացան խայտա :

(29) Վան ղի 'ի տաու կո հայր : Ջամենայն զփրկագործ կիրս որդւոյ
քո, և զխառթարութիւն սատանայի՝ այնպէս խոստովանիմ 'ի փառս քո
ով հայր ողորմութեան, զի եղէ միանգամայն եբր 'ի գուշոփ ոպըոյ կոյ՝ հոգ-
ւոյ տիշ, յո 'ի փառաւորեալ զքեզ՝ զիարեմ փառաւորել և զորդիդ և
զհոգիդ՝ երբե հաւասարապատիւ զանազանելու 'ի քէն : Քանզի ուղի-
փոխ ենչ սոսի զօրանէն : Աստէն ոփփոխն իմանի գոյական 'ի ղեփ բառէն,
ամ դաւոխ, եբրանի, 'ի բառէյն՝ դաս, եբրան, և նշանակէ՝ ալէաք, կարօտու-
թեն . ուսոփ և իմաստն է, վասն զի մին յասացեալ անձանց ոչ ալէաս
ենչ կամ կարօտութեն ըրկ զօրութեն ունի 'ի միւսմէն, առ մի խորհրդականն
խորանէ, 'ի միում անհասանելի ածութեն . որպէս հայհոյէին արիանոսք
և հոգեմարտք, զորդի և զհոգի երբե կարօտեալ զօրութեն ենչ առեալ հօր .
այլ զանսկիզբն բանդ անժամ. փառաւորեմք ընդ անժամանակ հօրդ,
ընդ նմին իմն և զհոգին : Այսպէս իմաստք պատճառանն այս են . եթէ ես
զորդիդ և զհոգիդ համարէի երբ ըրկ զօրութենս ենչ զքէն կախեալս, որ-
պէս աղանդաւորքն կարծէին, ոչ զիտէի 'ի փառաւորելս զքեզ՝ փա-
ռաւորել և զնոսա . բայց քան զի դաւանեմք զնոսա անձնաւոր էութիւն
զուգապատիւս քեզ, վասն այն 'ի փառաւորելն զքեզ՝ փառաւորեմք
և զնոսա . ընծայեալ քեզ գոհութեն, կարողութեն, անճառ փայլեցչութիւն,
անճառելի վայելչութիւն, կամ արժանաւորութեն մեծութե, և միաբան հա
ւասարութեն են :

Մերոփին յաւելեալ նորին հեծութեն՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս ժողովանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

ԲԱՆ. ԻԹ.

ա. Եւ արդ՝ դու միայն սկիզբն բարեաց, գթութի անձառ՝ որդի բարձրեալ միոյ այ, որ զողջոյն զօրն՝ թողութե ցուցեր փրկարան, և ոչ կորստեան դատապարտարան, ՝ յեղանակեալ ինձ զաւուրն չար՝ առ մեծ աւետիս ակնկալութե։ Բժիշկ ախտացելոյ. հովիւ մոլորեալ ոչխարիս. տէր՝ ապաւինեալ ծառայիս. գինի անապակ՝ մեծ տրտմեցելոյ. սպեղանեաց դեղ՝ վիրաւորեցելոյ. ազատուի՝ մեղօք գրաւելոյ. օրհնութի բարեաց՝ մերժելոյ. ² կնիք շնորհաց՝ խոտելոյ. օծումն կոչման՝ կապտելոյ. կանգնումն վերստին՝ կործանելոյ. պատսպարան հզօր՝ գլորեցելոյ. օժանդակ վեհ՝ գայթակղեցելոյ. դուռն բարձրութե տարակուսելոյ. սանդուխք երանութե եղկելոյ. ճանապարհ շաւղաց՝ մոլորելոյ. թագաւոր ներող՝ պարտելոյ. քաղցր յուսադրութիւն՝ լքելոյ. ձեռնկալ կենաց՝ հերքելոյ ։
Մեծդ ³ միայն՝ և ամենառատ, որ զլրումն բարեաց սահմանեալ, հեղուս անչափ յաճախութբ քան զոր խնդրեմք և իմանամք, ըստ պօղոսի գոհաբանութեն ։
Քանզի իննուց յիսնից՝ և թուոց՝ երից և չորեակ տասանց՝ 'ի վաղորդայնէ տունջեանն՝ առ մուտս արևուն, անդուստ առ նմին յաւէտ կարկառմամբ խսկ և խսկ 'ի սոյն՝ անարգել սրտիւ, 'ի վեր է քան զաղերսանաց ակնկալութի մարդկան, բարեգործել միմեանց շնորհատրութի. իսկ առ իմս թշուառութե և անարգութե զքոյդ եդեալ փառս՝ ամենակարօղ զօրութի ահեղ, բոլորից այծ՝ օրհնեալ տէր քս, որովք սահմանեցի կշռութբ չափոյ՝ հաստողիդ ընդ հողոյս հաւասարութի կցորդեալ։ Քանզի մնաս յայտնի անքաւ և անհետազօտելի, ամենևին բարի՝ անմասն բարկութե խաւարի. ուստի յայժ նուազ են քում մեծութե աստեղացն թիւք, զորս գոյացուցեալ յոչ էից, յորջորջմամբ անուանց կնքեցեր. և կամ հիւթ

երկրի 'ի յօդս հեղեալ, զոր ⁴ 'ի չգոյից հաստեալ, տարածուածն յատակի կառուցեր, քան ինձ նախագրեալ համարոյ սակաւութեն, որովք քեզ նմանիլ վարդապետեցեր ։

Է. Ո՛չ ծածկեցաւ և ⁵ ընկղմեցաւ 'ի քոյդ լոյս կամաց երկայնմտութեն հանուրց չարութեն, իբր դոյզն մնացել՝ 'ի տապ արևու. և որպէս աստուած իսկ կիրք բնութենց զհասարակաց բարուց ցուցանէ ։ Քանզի ո՛վ որ 'ի մարդկանէ մեղաւ, և ո՛չ զղջացաւ. ո՛վ որ զազրացաւ, և ո՛չ ամաչեաց. ⁶ ո՛վ որ գարշեցաւ, և ո՛չ պատկառեաց. ո՛վ որ սխալեաց, և ո՛չ ապաշաւեաց. ո՛վ որ կործանեցաւ, և ո՛չ հեծեծեաց. ո՛վ որ գայթակղեցաւ, և ո՛չ ստրջացաւ. ո՛վ որ պարտեցաւ, և ո՛չ ինքեամբ ըմբերանեցաւ. ո՛վ որ պատրեցաւ, և ո՛չ յոգւոց ելաւ. ո՛վ որ ճաշակեաց լեղի, և ո՛չ դառնացաւ ։ Ո՛վ որ անկաւ 'ի բարձրութէ, և ո՛չ ընդոստեաւ. ո՛վ որ կորոյս մեծութիւն, և ո՛չ աշխարեաց. ո՛վ որ զրկեցաւ յերանաւէ, և ո՛չ ելաց. ո՛վ որ կապտեցաւ 'ի շնորհէ փառաց, և ո՛չ ողբաց. ո՛վ որ գտաւ ինքեան մնասակար, և ո՛չ ստգտաւ. ո՛վ որ մերժեցաւ յերեսացն այ, և ո՛չ հառաչեաց. ո՛վ որ լուաւ զձ̄յ սպառնալեաց, և ո՛չ սոսկացաւ ։ Ո՛վ որ ⁷ ընդ մի չարեացն՝ հազարս չուաղեաց. ո՛վ որ մերկացեալ յաւուրս ձմերայնոյ, և ո՛չ զոփացաւ. ո՛վ որ անօրինեցաւ, և ո՛չ քարամբք զմիտսն կոծեաց. ո՛վ որ ետես զստրուկն յիւրում մեծութե, և ո՛չ զկծեցաւ. ո՛վ որ կատարեաց չարիս, և ո՛չ զինքն իսկ նզովեաց. ո՛վ որ ախտացաւ, և ո՛չ զանձն դարովեաց. ո՛վ որ յամօթալեացն գործեաց, և ո՛չ զիւրն մարմին ձաղեաց. ո՛վ որ 'ի պատկառելեաց հպեցաւ, և ո՛չ զօրն իւր անիծեաց ։ Ո՛վ որ զգործեցեալսն յիշեաց, և ո՛չ տապացաւ. ո՛վ որ զգաղտնիսն մտաբերեաց, և ո՛չ խորովեցաւ. ո՛վ որ զծածուկսն նկատեաց, և ո՛չ մահ կորստեան խնդրեաց. ո՛վ որ զանբերեւոյթն կերպաւորեաց, և ո՛չ կրկին յերկիր կորացաւ. ո՛վ որ ընդ մեղացն հեշտութեն բոց անշէջ հնոցի ո՛չ խառնեաց. ⁸ ո՛վ որ զմնասակարսն բնութեն, և ո՛չ պապակեցաւ. ո՛վ որ զկամաւ ներգործեալսն, և ո՛չ սատակման ինքեան աղօթեաց. ⁹ ո՛վ որ զանձառելեան,

և ոչ խռովեցաւ. [10] ով որ զանկրելին էութեան, և ոչ թախծեցաւ. ով որ զմեծամեծսն, և ոչ մաշեցաւ. ով որ զանբծութեան ապականարարսն, և ոչ տոչորեցաւ. ով որ զտարագրութեան պատճառ յանցմունս, և ոչ տագնապեցաւ. ով որ զերեսացն աղտեղի տեսիլ, և ոչ բարկացաւ վերնոյն զանձն պարտ վարկաւ. ով որ [11] զմի 'ի կարեորացն մեղաց յաւէս կերպացոյց, և ոչ զինուք մահու խոցեցաւ. ով որ զխայտառականացն, և ոչ վայս վհատութեան ընդ հեծութիս ձայնին հիւսեաց: Ով որ յարքայական գահոյիցն տնանկացաւ, և ոչ կարկամեալ 'ի վայր գլորեցաւ. ով որ ընդ պսակին պերճութեան՝ հող 'ի գլուխ եղեալ, և ոչ կրկին չարչարեալ յոգի մահացաւ. ով որ ընդ պայծառ պատմուճանին՝ քրձազգած եղեալ, և ոչ տխրեցաւ: Ով որ զկեանս իւր կորոյս, և ոչ արեան արտասուս երկնեաց. ով որ ընդ արկանելեաց լուսոյ խաւար զգեցաւ, և ոչ նուաղեցաւ. ով որ 'ի վերայ սգոյ սիրելւոյ ոչ թառամեցաւ: Հա՛ն այս կերպարանք ճշգրտագոյնք՝ պարտաւորիս յանդիմանութեան, տխուր դէմ. [12] քաղեալ ճաճանչ. ցամաքեալ խոնաւութիւն. [13] երիթացեալ շուրթն. անշքեալ տիպ. տրտմեցեալ ոգի. այլայլեալ ձայն. կրկնեալ պարանոց: Ու զի [14] թէ որ զխսկութիւնն իսկ նշանակեսցէ, ոչ անօրինէ, անանբարտաւան միտ. անհրպարտ սիրտ. անխնդրող պարգևի՝ թշուառ. անաղերսալի պասքեալ. ինքնակշտամբելի դեգերեալ. իրաւամերժ սովեալ. արդարալլուկ քաղցեալ. պատշաճադատ հարուածեալ. ինքնավկայ մահապարտեալ. արժանապէս հանեալ. անձնանէծ եղկելի: Ու զայս թարգմանեալ ցուցանէ արդարագործ փարիսեցին կշտամբեալ, և մեղապարտ մաքսաւորն բարեհամբաւեալ:

Դ. Ու արդ՝ [15] եթէ զչարիսն՝ հնարաւորութեան բանսարկուին գտողին զմեզ գայթակղեալս, զիւրսն 'ի մեզ սերմանիս առ օրն համարեսցի, զիարդ ոչ զբարիսն տնկեալս 'ի մեզ հոգւոյ արութիս՝ 'ի խնամակալութեան կամաց կեցուցչիդ՝ ծնեօն գրեսցես՝ տէր բարեգութ, հզօր և յաղթող. քաւիչ մեղուցելոց. կարօղ յամենայնի՝ առ ամենայն փրկութեան: Ու թէ

զանդունդս առ երկինս փոխես, և կամ զխաւար մթութեան [16] 'ի լոյս հաստատես, եթէ զդառնութիւն լեղւոյ' 'ի մանանայի քաղցրութիւն կազմես, և կամ զկոծ սաստկութեան վշտաց' 'ի պարս դասու բերկրութեան հարսանեաց կարգես, դիւրինք և հնարաւորք են քեզ այսոքիկ։ Այլ ևս քան զսոսին բաւես առ նոսին' տիրեալ համայնից ահաւորապէս. և քեզ փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն։

---

(1) Յեղանակէ ւքն։ Զոր դուք ասացէք' թէ գոյ աւուրն չորս ևս. (յովհ. դ. 34.) կամ, զոր սողոմոն ասէր. (առակ. իդ. 16.) թէ եօթն անգամ անկցի արդարն, իմացեալ զանկանիլ 'ի մեղս բազում անգամ յաւուրն։ Դու զայս չորս աւուրն փոխեցեր յաւետիս յաւուր, հրամայելով թողուլ եղբօր եօթն անգամ մեղուցելոյ 'ի միում աւուր. ծանուցանելով այսու' թէ զօրն ողջոյն մարթ է արդարանալ և փրկել, և ոչ թէ մնալով 'ի չորսն' կորնչել։ Այն որ 'ի մեղս ղուկ. ժէ. 4. գնի.* Եթէ եօթն անգամ մեղիցէ || են, 'ի յոյնն և 'ի լատինն յաւելուածով ատի, յաւուրն։

(2) Կնիք շնորհաց։ Այսու, և յաջորդաւն յայտ առնէ զնորոգածութիւն մկրտութեան, և օծմանն, որ 'ի նմա. խոր զի քո շնորհօքն և վասն կօք իւր է կնքիչ հոգւոյ մկրտելոյն, և օծանող' 'ի կոչելն առ ինքն զկոդոպանելս 'ի զատորաց հոգևորաց։ Կամ օծումն կոչման, խմա՛ օծանող ըստ քնական անուան իւրոյ։ Իսկ եթէ զայսոսիկ առացուք ոչ ըստ ժամանակի մկրտութեան' այլ առաւելութեան, նոյն իմասցուք յարմարին. խոր զի և առաւելութիւն է երկրորդ մկրտութեան։

(3) Մեծոր Գոյն։ Դու միայն Ճշմարիտ հարուստ և Ճոխ, ամենատուր ես միանգամայն 'ի պարգևել անխնայ. որ զլրութիւն բարեաց ունելով, այսինքն բովանդակեալ ունելով 'ի քեզ, հեղուս 'ի մեզ անպակաս առատութբ, առաւել քան զոր խնդրեմքն եմ. կամ, ըստ այլ օրին. ... հեղուս. այսինքն զլրութիւն բարեաց բաշխեալ ըստ իւրաքանչիւր չափու' առատութբ հեղուս եմ։ ... 'ի լաւ օրէն. և 'ի հին լուծ. ..., կամ ...։ Առատօր յառաջ բերէ զառասցեալն ... առ պետրոս' 'ի միում աւուր ներել եղբօրն մեղուցելոյ եօթանասնեկին եօթն, որ առնէ 490։ Այսչափ անգամ աստ' յառաջ... աղէ մինչև 'ի մահանել արևու, ... առ նմին, այսինքն մերձ միմեանց, կամ հետ զհետէ 'ի նմին աւուր ..., կամ զիջանելով 'ի սոյն ներումն եղբօրն անարգել ..., ... 'ի ..., բարերարել առ միմեանս ներողութբ, կամ շնորհել միմեանց, 'ի ... է, առաւե՛լ է քան զյոյս խնդրելոյ մարդկան։ Արդ' խմում անարգ թշուառութեան օրինադրեցեր այսչափ ներողամիտ լինել առ ընկերն, որում համեմատեալ դքո մեծութիւդ' զիա՞րդ չափեսցի հաւասարութիւն հողոյս ընդ արարչիդ, որ անպատ ես և ..., և ... 'ի բարկութեան. վասն որոյ առաջի մեծութեան քո առաւել սակաւ են թիւք աստեղաց, և փոշիք երկրի յօդս ցնդեալք, քան թէ լինէ եօթանասնեկի եօթն թիւդ, որով ուսուցեր ներել քեզ' 'ի թողուլ եղբօր մեղուցելոյ։ Բաղդատ... ... է բանս, խոր ասել. եթէ խմում ... հրամայեցեր' եօթանասնեկի եօթն անգամ ներել յանցուցելոյ եղբօրն,

մրչափ եւ յաճախութիւն ներհեցեւ զա. մեզ, որ անդադրդատ առաւելու քան զմեզ, եւ որում առանեղացն Թիւք, ('ի բնիմ օրին. Ենա.) եւ փոխ-չեաց երկրի՝ սակաւաւԹիւք են ։

Զ Թիւն եօԹանասնեկի եօԹն, այսինքն 490. բացատրէ Ոք վարդապետս այլովք մանաւանդ Թուովք. ասաի սաէ. Ոննաց յիանից, այսինքն Ոնն անգամ յիսուն, որ լինի 450 ։ Ն Ոսաց՝ Ներոց Ն չորեաց փառանց ։ (մի օրին. չորեն) Առաջին ապադրօղք նարեկին 'ի բաց Թողեալ էին զբառն Ոաւոց Ներոց, իբր սխալ եւ աւելորդ համարելով. վասն զի չորեաց փառանցն բովանդակեալ ընդ զԹիւն 490 ։ Սակայն յնմ դրչագիր օրինակս եւ 'ի հին լուծմունս գոն այն բառք. վասն որոյ 'ի վերջին տպագրիս եդան 'ի տեղի իւրեանց ։ Իսկ իմաստ բանին դիւրաւ 'ի յայտ գայ՝ եԹէ կիսադրուԹիւնն լինիցի որպէս եդաք մեք, այսինքն Ն Ոսաց՝ Ներոց Ն չորեաց փառանց. որով բառն փառանց անկանի 'ի վերայ Ներոցն եւ չորեացին. իբր ասել, եւ այլ Թուոց՝ երեք եւ չորք տասանց. որ առնէ 40. եւ յաւելեալ 'ի 450 Ն բովանդակի Թիւն 490 ։

Այս եղանակ որոշման Թուոց՝ է ըստ բնական կարգի շարադրութեան, առեալ 'ի սովորական ոճոյ մարդկան՝ որով ասեմք, երկու եւ երեք անգամ, երեք եւ չորս զոյգ, են, եւ իմանի ընդ ամենն՝ երեք անգամ, չորս զոյգ ։ Սոյնպէս 'ի սովորութե գրոց ասի, (Եսայեայ Ժ. 5.) * Յերիս եւ 'ի չորս ազգս, || այսինքն ընդ ամենն՝ չորք ազգ. որպէս մեկնէ եւ սուրբ Եփրեմ յասելն. (հատ. Ա. երես 221.) * ԵԹէ ոչ ապաշխարեսցեն, զպատուհասն հանիցէ 'ի գլուխ չորրորդին ։ || Յար եւ նման այսմ է առնել առ ասելն. * 'Ի վերայ երից անօրէնութեանց Դամասկեայ՝ եւ 'ի վերայ չորիցն ոչ դարձայց 'ի նմանէ. || զոր եւ ուԹ անգամ կրկնէ անդ. (Ա. 3. 6. 9. 11. 13. Բ. 1. 4. 6.) յորս իմանի. 'ի վերայ չորրորդ անօրէնութեանն, են ։ Արդ ըստ այսոցիկ օրինակաց՝ ասելն առաւօր, Ներոց Ն չորեաց փառանց, նշանակէ՝ երից տասանց, եւ չորրորդ տասին, որ լինի ընդ ամենն 40 ։ Այսմ նման բացատրէ եւ հին լուծմունքն ։ Իսկ եԹէ զբառն Ներոց՝ յարեսցուք 'ի բառն Ոաւոց, ասելով, Ն Ոաւոց Ներոց, կարծեմ դժուարին լինի իմաստն եւ անսովոր, եւ աններհամեմատ կարգի շարադրութեան ։ Վասն զի եԹէ իմանամք այսպէս, եւ Թուոց երից, այսինքն 'ի վերայ երկուց Թուոցն՝ յիսն յիսնից, յաւել եւ զերրորդ Թիւն, այսինքն զչորեակ տասն ։ կամ այսպէս, յաւելեալ 'ի վերայ իսն յիսնից՝ զերիս եւ Թիւս, որ է չորեակ տասն, յորոց գումարի 40. եւ այնպէս գտանին երեք Թիւք, այսինքն չորս, տասն. եւ արտադրեալն 'ի սոցանէ՝ քառասուն ։ ԵԹէ ասեմ այսպիսի՝ եւ այլեւս իմաստիւք ջանասցի ոք մեկնել, բանի եւ ըստ հաճոյից ձգէ զբանն. որպէս յայտնի է մանր քննողաց. եւ ԹԷեւ չիցայր այլ ընդդիմութի, գոնէ աւելորդ եւ տանաւասմիւսյր շաղկապն Ն յաւելեալ 'ի վերայ չորեաց փառանց. զի ըստ այդոցիկ մտաց բառքն չորեաց փառանց լինէին բացայայտիչ բառիցն Ոաւոց Ներոց. վասն որոյ անյարմար էր զՆն խառնել 'ի միջի գնել երկոցունցն ։

Ուրիշ պակաս ըստ հաճոյից է եւ այն իմաստ, զոր ի վերայ առաջնոյն յաւելու հին լուծ. ասելով. զ40 երկու կտոր արա, այսինքն 26. եւ 14 եւ այսպէս լինելին երեք Թիւք, այսինքն 450, 26, եւ 14 ։ Եւ ոչ այսու շատացեալ, 'ի բարոյական միտս շրջէ զբանն, ասելով. տասանց երեցս՝ հաւատոյ, յուսոյ, եւ սիրոյ ոչ լինի Թողութի մեղաց. եւ ամ խորհուրդ՝ անուամբ երրորդութեն կատարի ։ Քաղ տեսանէ ընԹերցօղն՝ ո՛րչափ 'ի հեռաւոր ձգի բանն ։

(4) 'Ի կֆոյէց հաափէաւ ։ 2 օրին. հաափափէաւ ։ Ջհիւթ երկրի՝ իմանալով եւ զՋուր եւ զօդ, յոչինչէ հաստատեցեր ասէ, յայտ առնել Թէ ոչ գոյացուԹիւք են տարերքս արարչատեղծք՝ որիչ յերկնային լուսաւորաց, զա

բայց եւ սակս՝ ամենազօրութեանն յոչնչէ գոյացուցանել : Իսկ զառասպել յորջորջե- լոյն անուանց կնքել, (տես սաղմ. ճժե. 4.) ոչ եթէ նշանակէ՝ միայն միայն 'ի նոցանէ յառաջ անուանս եդեալ ԱՅ, որպէս այժմու ստ- եղծագործութք կոչէին նոցա անուանս աւրոյն երկրպագութեան . այլ իմանի՝ ճա- նաչել ԱՅ համաստուածեան զիւրաքանչիւր ստեղծողաց զգնութիւն և զօզ- տութիւն և զողորմութիւն, և միանգամայն ընդ իւրով իշխանութեամբ վա- րել զամենայն յոր գործ և կամիցի, և նոցա անմեկնելի հնազանդել, եթէ այն թէ յանուանէ կոչեցեալք էին . քանզի յայս իսկ առաջնմանն առ մեր- ձենալ անուանադրութեանն պայծառն, ճանաչել որոշողաբար, և ընդ իշ- խանութեամբ ունել զերն՝ զոր անուանէ :

(5) Ընկղմեցաւ 'ի փոյթ լոյս : Յետ առաջոյն թէ անբաւ է քո մեծութիւն 'ի ներքս, հետեւեցուցանէ . Աչս ծածկեցաւ, այսինքն . առաջ յիմաստ ծածկեցաւ 'ի լոյս երկայնամիտ կամաց քոց՝ չարութիւն ամենեցուն, որ- պէս սակաւ մութիւն 'ի լոյս արեւու : Եւ որպէս ասացեալ իսկ : Զայս յա- ւելու երբեմն երկրորդ պատճառ զեւրաւ ներելոյն քո . զի որպէս 'ի կող- մանէ քո գոյ առաւել ներողամտութիւն, նոյնպէս 'ի կողմանէ մարդոյն գոյ մեծ վերագրականութիւն, և դիւրութիւն սասանութեան . որպէս և յինքնին իսկ բնաւորական կերպ կամ ցաւն՝ զոր զգուշք յետ մեղաց, ապաշխարելոց խո- րտոց, ցուցանէ զհաստատականական բարս մարդոյն՝ զվերադարձականութեանն, և զդիւրականութիւն, ուսումն և զկատարեալն ներողութեան : Քանզի ով ոք 'ի մարդկանէ մեղաւ, և ոչ զղջացաւ՝ գտանէ բնական զղջմամբ երբեմն ընդ- չար եւս և մխտաւորեալ բնութիւն :

(6) ՈՂ ու գարշելեա : Այսինքն զարշելացաւ, աղտեղացաւ :

(7) Ընդ մի լարեալ : Ո՞վ ոք վասն մերոյ եւեթ չարի մեղաց՝ 'ի ճանապ- արհն զմիտս նորա, հաւաքս չարաչարեալ . ոչ հաղորդեցաւ առաջ և վայ կարդալոց անձինն : ՈՂ ու Գեհեան : Զայս կամ եթէ նմանութիւն այլոց առա- ջնելոյն 'ի մէջ արկանէ, այսինքն թէ զոր օրինակ մերկացեալն 'ի ժամա- նակ ձմերայնին՝ անհնար է թէ ոչ սառուցեալ, նոյնպէս զերեւելն մեղօք 'ի դժնեայ չարեաց՝ անհնար է թէ չխռովեցի, չատմաչեցի, ևն : Եւ կամ փոխաբերութիւն իմանալի է մերկանալն, և ձմեռն, այսինքն ով ոք մեր- կացեալ 'ի ծածկութեանց չարեաց 'ի ձմերայնն կեանս աշխարհի՝ ու ողո- րմեցաւ, ոչ սառուցաւ, ոչ դողացաւ : Աստանօր ծանիր, զի 'ի յիշա- տակեալն զգանազան կերպս կամ յաղթութիւն՝ որ վասն մեղաց լինին 'ի մե- ղուցեալս, ոչ զիտէ զամն ցուցանել երբեմն օրինաւոր և հեշտելի, որպէս անխծանել զանձն կամ զօրն, կամ զմահ անձինն խնդրել, ևն, այլ թէ ապաշխարեալ կերպք՝ որք յամենայն լինին, յայտնի ցուցանեն զապաշխարող բարս մարդոյ :

(8) ՈՂ ու դժխտաւորեան բնութիւն : Աստի մինչև 'ի բանն ով ու գերեալն ողորմելի փետիլ, ևն, զօրութիւն իմանալի է բայն կերպարանեաց, այսինքն 'ի միասին ներարեաց, յիշատակեաց, խորհեցաւ, ևն : Ո՞վ ոք սակս՝ անհամեստ- ելով գործեալ զայնպիսի չարիս՝ որք նմին իսկ բնութեն մարմնոյ վնաս ա- ծեն, ոչ պատկառեցաւ, ոչ սարսափեցաւ 'ի ցաւոց պատժին : Ո՞վ ոք ընդ- մեղաց, 'ի հեշտութեան անդ մեղացն ոչ զգաց յանձինն զայլրումն խղճի՝ եթէ ճաշակ իմն անշէջ բոցոյն դժոխոց :

(9) ՈՂ ու զանձառակեան : Զանտանելի մեղսն ամօթալից գործեաց, կամ յիշեաց, և ոչ խռովեցաւ :

(10) ՈՂ ու զանկրեղեան, այսինքն զանտանելիան բնութեան մերոյ, զզժտողակս, կամ զայն մեղս՝ որ յոյժ օտար են, որպէս անգթութիւն, ատատականութիւն, ևն :

(11) Զի 'ի խորհրդոց մեղաց : Այսինքն զմի յայնց մեղաց՝ որք 'ի կա- րեաց բնութեն գործեն . այսինքն 'ի տգիտութենէ, 'ի տկարութենէ, կամ

պատճառաւ քնոյ, կերակրոյ, համդերձից, ևն ։ Իսկ 'ի բանէն՝ մի ոտ յարփայական, մինչև մի ոտ 'ի վերայ ոտոյ ևն ։ Են իւր օրինակք մարդոյ անկելոյ 'ի շնորհաց մեղօք ։ Իսկ և թէ զոր օրինակ անհնար է չտառապանել մարդոյ զրկելոյ 'ի թագաւորութենէ, 'ի պատուէ, 'ի փառաւոր համդերձից, 'ի ստացուածոց, 'ի սիրելեաց, նոյնպէս մարդոյ մերկացելոյ 'ի շնորհաց ։ Ո՛վ ոք ընէր, զստացուածս զկարեւորս կենացն հոգոյս, և ոչ արտուն խիղճ յաչացն ։

(12) Քաղէաւ ճաճանչ ։ Այսինքն ամփոփեալ, նուաղեալ լոյս աչաց ։

(13) Երէխացեալ շուրթն ։ Այսինքն ցամաքեալ, չորացեալ ։

(14) Թիէ ոտ ըղխկալեալն ։ Եթէ զուղիղն կամ զճշմարիտն կամիցի յայտնել, ոչ սխալէ ասել, թէ առ անօթոյ մեղացն միայն ոչ կարէ ամբարտաւանիլ (անանէարփառան միփ, այլ օրին ։ անամէարփառան ։ մի օրին ։ միփ ։) ոչ սիրտն համարձակել ։ Թշուառ զոլով ոչ կէլնէ ասպարէս խնդրել, ևն ։ Զայս նոյն ասէ՝ առ 'ի համառօտել զնախասացեալն իւր, թէ խիղճ մեղաց ընականաբար ամաչեցուցանէ զմարդ, և խոնարհեցուցանէ, որպէս և ցուցանի 'ի մեղաւորաց մաքսաւորին ։

(15) Եթէ դչարէան հնարաւորութեն ։ 2 օրին ։ հնարաւորութեն ։ Եթէ զմեղան՝ որք հնարք և զիւտք են սատանայի, և իւր զեւր սկրմանխս ցանէ 'ի մեզ ։ Կամ, եթէ զմեղան՝ խորամանկ ննեղաւորութի սատանայի իւր զեւր սկրմանխս, առ օրն համարեսցի, առ օրին կամ 'ի միում աւուր զատանէ բազմապատիկ արդիւնացեալ, կամ 'ի միում աւուր այնչափ բազում թուով համարէ, այսինքն եօթանասնեկի եօթն ։ կամ, առ օրն համարեսցի, այսինքն յայն օրն դատաստանին 'ի համար բերիցէ, ճշգիւ հաշուեսցէ ևն ։ Այսպէս ո՞րչափ և որքան բարեպաշտ՝ զառ 'ի քէն անկեալ բարիսն 'ի մեզ հոգւոյ արութենս, զօրութեն զգչմեան, անօթոյ, երկիւղի, խոնարհութեն, ևն, քով խնամակալութեամբ ծն և ծն գրեսցես, համառատեան և արդիւնաւոր արասցես, կամ մի բան միայն նշանակեսցես, և ընդունելի համարեսցես ։

(16) 'Ի լոյս հատափեր ։ Այսպէս 'ի ներկայ ժամանակ զնեն բազում օրինակք համեմատ այլոց բայիցն, փոխես, կողմես, կորզես ։ յայլ տպագիր գնիւր, հատփեսցես ։ Եթէ ասէ՝ ի գործս բնուն կամ պարանչելեաց՝ զանդունդս առ երկինս, զխորս ծովու բարձրացուցանես յերկինս անդր և ստուցանես, կամ որպէս առ Ջրհեղեղաւ ։ Դիխաւոր միութեն, որ բան օրէ զխաւար գիշերի 'ի լոյս առաւօտու դարձուցանես, և զմեզ՝ 'ի պայծառութիւն ։ կամ առ խոստովանեալսն յեգիպտոս և յանապատին ։ զդառնութեն մեղաց, զդառն հիւթս քաղցրանս կաղմես 'ի տունկան, կամ որպէս զջուր մեղային ։ Զենէծ սարփկութեն, զատարիկ կոծս արամութեն յուրախութիւն հարսանեաց կարգես ։ որպէս առ այրին միամօր՝ կեցուցանելով զորդի նորա, կամ 'ի տան յայրոս իշխանին ։ Այս ամենայն քեզ դիւրին են և կարելի ։ և առաւել քան զայսոսիկ կարող ես, ո՞ր զոլով ամենայնի, ևն ։

Մեսրոպին յաւելուած հրէին հեծման՝ նորին հօխողի, առ նոյն
աղերս ճառընթաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

ԲԱՆ Ա.

Ա. Եւ արդ՝ ճշմարտեսցի բան քո ողորմած, բարերից այ, ներող եւ օրհնեալ,[1] 'ի բազմագթելին դարձաւորութի աւուրն պատկերի զղջման մեղաւորին, թէ եւ առ յետին իսկ շունչն իցէ ընտրութի, եւ կամ 'ի մէջ չարութեն փոխադրութի ։ Մանաւանդ զի դժնեայ[2] կցորդս այս անձնիշխանական՝[3] միշտ մարտիկ, խաբօղ շողոքորթ, յարեալ 'ի ստուի, ըստ առակօղին, արածօղ հողմոց դժուարունելի, հաստողին փախչօղ, գերեալ որսողին, մոլեկան մարմնոյս՝ ներհակ տնկակից, յօգնապատճառեան ամենալլարան. զոր քո է գիտել զքանեացն յաճախութիւն ։ Եւ զկնի մեղանացն, ողորմագինս եւս ողբարկութիւնս վհատականս՝ տաժանակիրս՝ բազմաւաղելիս, քո առաջի տէր գթարկութիւնս՝ գրեալս արտասուօք, թառանչս թշուառութեանց կարգելոց՝ անքաւս չար վտանգից մեղսատագնապ պատկառեցելոյն ։

Բ. Եւ զի մի կրկնաբանութիւնս 'ի շատխօսութիւն կրթեսցի, առաւել քան զսոյն այսու ողբալի. քանզի ոչ երբէք համարձակի խնդրել իւր զարքայութի, այլ զտանջանացն թեթեւութի.[4] ոչ ընդ կենդանեացն 'ի լոյս, քան թէ ընդ գերեզմանականացն՝ ըզպայական չնչոցն 'ի խաւար. ոչ ընդ ամբարձեալսն, այլ ընդ բեկեալսն եւ ընդ խորտակեալսն ։ 'Ի հանդըրտեան իւրում վաստակեալ. 'ի խրախութե՝ ինքեան տրտմեցեալ. դիմօք ժպտեալ, եւ մտօք խոցեալ. կերպ 'ի ծաղր, եւ աչք 'ի յողբումն. երեսք զփոփանս ձեւացուցանէ, եւ արտասուքն զդառնութիւն սրտին ճշմարտէ ։[5] Ի մսլանակք երկու՝ յերկոսին ձեռքն, միոյն արեամբ եւ միւսոյն կաթամբ ։ Երկու[6] բու-

րանոցք կայծակնաւորք, մինն խնկով և միւսն ձեն-
ձերիւ: Ականառակք [7] կրկին կրաւորականք համոց,
մինն քաղցու և միւսն դառնութ̃ք: Բաժակք զոյգ՝ [8]
առ երկուս բերմունս, մինն արտօսր և միւսն ծծումբ:
[9] Տաշտք կրեցեալք 'ի ծայրս մատանց, մինն գինի և
միւսն լեղի: [10] Պորունք տեսանելեաց ներհակաց,
մինն 'ի լաց և միւսն 'ի վրիպումն: [11] Խանութք հա-
լոցականաց հակառակութեց, մինն արծարծէ և միւսն
շիջուցանէ: Հայեցուածք [12] դիմաց երկուց, մինն
դոյզն ողորքանօք և միւսն անանխայելի բարկութ̃ք:
Համբարձումն [13] երկակի բազկաց, ոմն 'ի հարուածս
և ոմն 'ի մերժումն: [14] Պնէմք կրկնակի կերպից, մինն
տխրեալ և միւսն ցասուցեալ: Աշտամբանք՝ ընդ միոյ
երկու, մինն աստեացս և միւսն ապառնեացն: [15] Ապա-
ւինուէք կարծողականք, մինն գոնէ և միւսն թերևս:
'Ի մի բերան երկակի բարբառ, [16] մինն եղկութի և
միւսն խռովութի: Երկուս ազդմունս 'ի միում սրտի,
[17] մինն կեղակարծ յուսոյ և միւսն ճշգրիտ կորստեան:
[18] Ամպ լրթագոյն ահագնատեսիլ՝ կրկին տեղացմանց,
մինն նետս և միւսն քարինս: Որոտումն ահեղ՝ եր-
կոցունց բերմանց, մինն կարկուտ և [19] միւսն հրա-
ցան: Զոյգ ցաւագին՝ երկուց վտանգից, [20] մինն լա-
լոյ և միւսն մահու: [21] Առաւօտ սգոյ՝ երկուց բողոք-
մանց, մինն սաստից և միւսն սպառնալեաց: [22] Արե-
գակունք երկու՝ 'ի յերկուց ծայրից, մինն խաւարի
և միւսն կիզման:

Գ. Եթէ հարուածոց աջ կառուցանի, ինքեան վար-
կանի. և թէ ձեռն պարգևաձիր, ոչ իւր ակնունի:
'Ի պարծանս ուրուք՝ կորանայ. յամբարձումն գլխոյ՝
ընկճի. 'ի չարեացն յիշատակ՝ հեծէ. [23] 'ի ձառա-
մաքրոց՝ պատկառէ. 'ի պատմութիւնս հանդեր-
ձելոցն՝ երերի: Եթէ օրհնի յումեքէ յայտնի,
'ի ծածուկ զանձն անիծանէ. եթէ գովեստ յումեքէ
լսէ, պարսաւանօք զինքն կշտամբէ: Եթէ դսրովեա-
ցի սաստկապէս, ինքեամբ ինքեան վկայէ. եթէ ձա-
ղեսցի ուժգին, սակաւ հատուցումն՝ առաւել պար-
տուցն գրեսցէ. եթէ ըղձումն մահու ինքեան լսիցէ,
այժ ասէ, և դարձեալ կրկնէ: Եթէ [24] որոգայթ մա-
հու ձայթեսցէ յերկնէ, հազիւ զդէմսն համբառ-

նայցէ։ Ո՜վ իւրոց իրաւանցն մատեան խփեալ. զպա-
տասխանութեանն յոյս՝ լքուցեալ. զհամարձակութեան
ընթացս՝ փակեալ։ Եւ [25] եթէ ոչ էր անփրկանաւոր
կորուստ գերելոյն, զիւրովին երթալ ոչ ինչ դան-
դաղէր։ Արդարև [26] վա՛յ մեղաւորին՝ որ տարակու-
սեալ կայցէ ՚ի վերայ երկուց ճանապարհաց, ըստ հո-
գելից բանի իմաստնոյն։

Դ. Եւ արդ՝ զիա՞րդ ոչ ողորմեսցիս՝ բարեգութ,
այսքանեացս ձայնարկութեանց՝ կողկողագինս հեծե-
ծանաց, որ անուամբս այսու մեծացար, թէ ողոր-
մած եմ ես տէր։ Ահա՛ առ չարութիւն գերւոյս, բա-
րութիւն քո. առ մահապարտիս դառնութիւն, քաղցրութիւն
քո. առ կորուսելոյս յայտնութիւն, ճառագայթ քո.
[27] առ յանդգնելոյս մոլութիւն, ողորմութիւն քո. առ
խակութիւն վնասակարիս, հեզութիւն քո. առ կործա-
նելոյս այցելութիւն, աջ քո. առ ընկղմելոյս վերբե-
րութիւն, ձեռն քո. առ բժշկութիւն անողջանալի խո-
ցուածոյս, մատն քո. առ պակուցելոյս պաշտպա-
նութիւն, ոգի քո. առ ապախտաւորիս իմ վստահու-
թիւն, երկայնմտութիւն քո. առ օծութեան ամենադժնէիս,
զօրութիւն քո. առ մեղաւորիս քաւութիւն, հրաման
քո. առ փախուցելոյս ապաւինութիւն, ոտք քո. [28] առ
սրացելոյս պատսպարութիւն, բազուկ քո. առ վրիպե-
լոյս առաջնորդութիւն, լոյս քո. առ տարակուսելոյս
հնարաւորութիւն, հանճար քո. առ անիծելոյս կրկին
ստացութեան, օրհնութիւն քո. առ վհատելոյս քաջալե-
րութիւն, խրախոյս քո. առ վշտագնելոյս մխիթարու-
թիւն, բաժակ քո. առ նեղելոյս ընդարձակութիւն, կամք
քո. առ ատեցելոյս կոչութեան, սէր քո. առ հաստութեան
սասանեցելոյս, բան քո. [29] առ հոգւով վիրաւորե-
լոյս, կաթուած արեան քո. առ աներևոյթ մթերս
ցաւոցս, ակնարկութիւն քո. առ յուսահատելոյս ան-
դրէն ընտրութիւն, իշխանութիւն քո. առ պատուաս-
տութեան կտրեցելոյս, կցորդութիւն քո. առ խաւարա-
մահու ծածկելոյս, նշոյլ կենաց քոց. առ խռովե-
ցելոյս իմ հանդարտութիւն, խաղաղութիւն քո. առ
վայրագութիւն օտարացելոյս, ողջոյն քո. առ մոլորե-
լոյս դարձաւորութիւն, ձայն քո։ Ո՜վ դու տիրես ամե-
նայնի զթութեամբ, և չիք ՚ի քեզ մասն ինչ խաւարի.

և ոչ է բարութի՛ առանց քո. և քեզ վայել է փառք յաւիտեանս. ամէն:

---

(1) 'Ի ԲԱՂՁԱԳԻՆԵԼՆ ԴԱՐՁԱՒՈՐՈՒԹԵԱՆ: Ճշմարտեսցի՛ բանս քո՝ որ յաղագս եօթանասնեկի եօթն մեղուցելոյն դարձի և զղջմանն, առաւել պաշտել, այսինքն 'ի միում աւուր. Թէ և 'ի յաւուրն շուրջ կենացն իւր յերեկոյի Իջէ ընթրանին, դարձն կամ ընտրելն զբարին. և կամ 'ի մէջ չարութեան, 'ի գործելն անդ զչար՝ հասցէ նմա փոխումն 'ի կենաց, կամ 'ի մեղաց յարդարութիւն: Նմանապէս դի, ունելով մարդս ընկեր ինքեան միշտ խաբեբայ, և յայլ կողմանէ՝ յետ մեղանչելոյն ցաւ և տագնապ և ողբս, երկուքին այս են պատճառք՝ որք ներելի ողորմութեան ցուցանեն ըզ-մարդն:

(2) ԿՑՈՐԴՍ ԱՅՍ: Ոմանք զմարմինն իմացան. բայց յաջորդքն ամենայն ոչ յարմարին նմա, որպէս և ոչ կամաց միայն, կամ բանական հոգւոյն: Այլ իմանի զգայութիւն, կամ զգայական մասն, որ անհնարին անբանական առ, այսինքն ինքնադրութեան, տարասամբ 'ի բանէն. համաձայն մարդանկէ ընդ հոգւոյն, խաբէ, յարի 'ի սուտ յընդունայն զգալի իրս, որոց իբրև դժուարութեամբ հոգւոյս զհետ անդի, ոչ յագելով զգալեօքս: Կատարելն Փոխեցող. յարարչէն կամ յայլ փախչի: Նոյնպէս Նորինոյս, ախտաւոր մարմնոյս, ներհակ թշնամիս, 'ի մարմինն անկեալ է և հարազատ, բայց իբր թշնամի մնայ նմա, ցաւս՝ հիւանդութիւն և աշխատութիւն տալով նմա: Յօժարապէս թշնամանեալ, 'ի բազում պատճառաց զգալի հեշտալեաց չարիք. կամ, բազում պատճառանս հնարէ 'ի կատարումն հաճոյից իւրոց. և ամենայնիւրեան, յամենայն զգալիս վարանեալ թափառի. կամ 'ի խնդիր լի-նի նոցա, և 'ի չհասանելն՝ տրտմի, տարակուսի. և թէ քանի՛ են այս ո-ղորմելի հանգամանք բնութեան, գիտէ միայն գիտէս: Այդ՝ իբրև այսպի-սի խաբողի հետևելով հոգին՝ մեղանչէ, այնուհետև է անսանել 'ի նմա ողբս մեղաւորացս, Բառարանս բժշկութեան, հատուածս յաղագս թշուառու-թեանցն, ևն:

(3) ՄԻՆՉ ՆԵՐՓԻԿ: 'Ի մի լուս օրինակ այս տեղի կայ այսպէս. * Միշտ մարտիկ խաբող, շողոքորթ յարեալ 'ի տուութի, լսա առակողին՝ արտ-ծող հոգւոյս, դժուարունելի հատողին փախչող, գերեալ որոդին մեր-կան մարմնոյս, ներհակ անկակից ||: Յայլ օրինակս ևս բառն դժուարու-նելի դնի առ կատարելն. և իմանի. փախչողն՝ զգայական մասն այնչափ աստամբակ է, մինչև արարչէն ևս դժուարդիմանելի է, խոյս տայ յօրի-նաց նորա և 'ի հրամանաց:

(4) Ո՛Ւ ԸՆԴ ԿԻՆԴԱՆԵԱՑՆ: Ո՛չ համարձակի կամ յուսայ ընդ կենդանեացն 'ի լոյս բնակել, քան թէ ընդ մեռելոցն՝ զգայական շնչոց, ողջ կամ կեն-դանւոյն 'ի խաւարի կալ: ո՛ւ ընդ ամբարշտացն, յերկրի փառօք, իշխա-նութեամբ, մեծութեամբ, կամ յերկկնս երանութեամբ. այլ ընդ բեկեալսն, ընդ խոնարհեալսն աղքատութեամբ, արհամարհանօք:

(5) ԸՆԴԱՆԱԿԻՍ ԵՐԿՈՒ: Երկուս բաժակս ունի յերկոսին ձեռս՝ լցեալս միոյ արբանեկ, բարկութեամբ ով, և միւսն կարեկ, քաղցր յուսով զղջման: Այսու, և յաջորդ նմանութեամբք դիտէ ցուցանել զմեղաւորն 'ի մէջ երկուց կրից, այսինքն յուսոյ և երկիւղի, արդարութեան և ողորմու-թեան:

(6) ԲԱՐԲԱՌՈՑ ՀԱՅԿԱԶՆԵԱՆՑ: մի օրին. հայկազեանց. այսինքն բուռ փառք կամ անօթք բուրմանց լցեալք կրակաւ, մին ծխէ զխունկ յու-սոյ, և միւսն զձենձեր անձկութեան սրտի:

(7) Կրիին կրաօրաջանօ : Կրկին համաց կրօղք, կամ ունօղք, այսինքն զգայութ և զգալին :

(8) Աւ Եռիոս բերմանս : Բղխմունս կամ հոսմունս : Մինն ուրփուր զըղձմանն. և միւսն ծծումն վհատութեան :

(9) Տոշոն կրեշեալ. մի օրին. Գրեշեալ :

(10) Դորանն փետանեյեաց : Աչք ներհակակողք միմեանց. Մինն ՚ի լոյս, վասն մեղացն. Ն միւսն ՚ի կրիոստոն, ՚ի զըկումն ՚ի տեսութէն այ և սրբց : կամ ըստ միոյ կողմանն ողբայ զչարին, և միւսոյն հակեալ կայ ՚ի նախկին սխալանսն :

(11) Խանաւեն հալըցաջանաց. կրպակք կամ բովք կրկին հալըցական հակառակ ներգործութեանց. ըստ որում մին ջերմացուցանէ, այսինքն յոյսն զախորժն. և միւսն շիջուցանէ, երկիւղն զանձկալութին :

(12) Դիմաց Եռիոց : Այսինքն մին քնի կամ սրբց, որ քաղցրութիւն ինչ ցուցանեն. և միւսն՝ դիւրին, որ անանխոյեն, անողորմ բարկութբ հայի : 3 օրին. և հին ըծ. անխոյեն. փոխանակ անխնայելի. կամ, նոյն իսկ դէմք այ կրկնակի երևին. ըստ որում յուսովն հայիմք իբր ՚ի մրկին քաղցր երեսս. ըստ որում երկիւղիւ իբր ՚ի դատաւոր, զայրացեալ առ֊ասնի :

(13) Երիոկի բաղկաց. մին դիւրին, որ իբր զահլիճ ամբառնայ ՚ի հարուածս. և միւսն այ, որ իբր դատաւոր ձգի ՚ի ծերծոսն :

(14) Դեկն նըեօակի : Մին պահապան հրեշտակին՝ փորեալ, արտամեալ. և միւսն՝ այ ցասաոցեալ բարկացեալ:

(15) Ապաւենաւենանն կործողական, Անկայութիւնք երկբայականք, զօ֊րութեամբ խմմ Եռիոս, մինն գտնէ. այսինքն գտնէ սատ միայն պատճե֊ցայց, գտնէ յայամ հեռէ մի՛ մեղայց, ևն : Ն միւսն Բերես. այսինքն թերևս զառաջին անմեղութին գտից. թերևս տացի ժամ ապաշխա֊րութեան, ևն :

(16) Մինն Եղջաւրեան : ՚Ի մի բերան երբեմն լսի եղուկ և վայ ան֊ձինն. և երբեմն խաւղաւրեան, ընդդէմ դիւրին և այլ պատճառաց մեղաց :

(17) Մինն կեղակործ յաւաոյ. երկբայական յուսոյ : Յոյսն ըստ որում հայի ՚ի խոստումն այ և ՚ի զօրութիւն նորա, ոչ պարտի լինել երկբայու֊թբ, բայց լինի՝ ըստ որում հայի ՚ի գործակցութն մարդոյն, և ՚ի չափ մեղաց նորա. յոր հայեցեալ մեղաւորն՝ զգայ ՚ի սրտի զազդումն սոսկ֊կորստեան :

(18) Այմ ըրեագոյն : մի օրին. ըրենագոյն : Այսինքն մթագոյն, խա֊ւարային. որ կրկին ինչ տեղայ. մինն նեփս, այսինքն կայծակունս. որք են ցասք հողայ՝ իբր նետ թափանցեալ ՚ի սիրան. Ն միւսն փաբնես. որ֊պէս երբեմն լինի բնականաբար. և որպէս առ յեսուաւ արար ած. (յեսու. Ժ. 11 :) և ՚ի մարդն նշանակեն զպատուհասս և զցաւս մարմնոյ :

(19) Մինան հրացան : Այրեցողական նետք, զորս երբեմն խառն ընդ֊կարկուտ առաքէր ած : (ելից. Թ. 24 : իմաստ. Ժզ. 16 :)

(20) Մինն լալոյ : Մինն դիշեր լալոյ վասն մեղացն. ըստ այնմ (սղմոց. Զ. 2.) * Լալով ելաց ՚ի դիշերի : || և այս դիշեր թէպէտ և ցաւագին, բայց փրկարար : (Բ. կորն. Է. 10 :) Ն միւսն մահու. յուսահատ զղջման. ըստ առաքելոյն (անդ.) * Աշխարհի տրտմութի՝ մահ գոր֊ծէ : || որպէս և Բ. 7. * գի մի՛ յաւելել տրտմութենէն ընկղ֊մեսցի : ||

(21) Աստաոփ ափոյ : Որ է ժամ քննութեան և դատաստանի. յորում կրկին բողոքաւն. ահաւոր ձայն կամ գոյժ լսի. մինն ատտփոյ, կշտամբա

նաց և յանդիմանութեան վասն յանցանացն. և միւսն տրտմութեանց, պատժոց:

(22) Արեգականց երկու. միոյքն և հին. կամ նոյն ինքն հին կրկնին օրի-նակաւ ցուցեալ: 'Ի յերկուց ծայրից. երկուց հակառակ գործոց երևե-ցուցիչ, կամ յերկուս ծայրս աշխարհի՝ յարևմուտս և յարևելս: Միւն խաւարի. միոյքն՝ խաւարեալ մեղօքն. կամ հին յարևմուտս երևեալ, ըստ որում զլոյսն աստուածութեան ամփոփեալ է. (Իմաստ. Ե. 6:) և միւսն կենդան. հին յարևելս, ըստ որում մտանէ 'ի հուր գեհեննին: Այսա-կրկին մտօք, այսինքն ըստ որում զլոյսն աստուածութեան ոչ ծագէ, և մտա-նէ 'ի հուր տանջողական, իմանի ևս բարոյապէս նստելն մեղ յարևելս և յարևմուտս: (Սաղմ. կէ. 5. 34:) Նկատել արժան է, զի յիշեալ գերիս ժամանակին, զայգ կամ զգիշեր, զառաւօտ և զերեկոյն կամ զտիւ, զայն յայս առնէ՝ թէ առն զղջականի ընթանեցելոյ 'ի խայթս խղճի մեղաց չէք հանգիստ ոչ զտիւ, և ոչ զգիշեր. յիւրաքանչիւր ժա-մանակ ոչ զդիւրութիւն գտանէ, այլ զտագնապ:

(23) 'Ի ճառս մաքրոց: 'Ի լսել կամ յընթեռնուլ զճառս մեծ և սրբա-րոց՝ ամաչէ, հակառակ նոցա ունայնելով զիւր վարս:

(24) Որոգայթ մահու. կայծակն կամ շանթ՝ որ յանկարծ հարեալ սպա-նանէ, ճայթեւոյն, շառաչմամբ արձակեալ յամպոց:

(25) Եթէ ոչ էր անփրկանաւոր: Եթէ կորուսա կամաւ գերեալն զինքն 'ի մահ, այսինքն անձնասպանին՝ ոչ էր անդարձանելի, այսպիսի տագնապ-ալին խղճիւ մեղաց՝ ոչ գանգատէր սպանանել զինքն:

(26) Վայ մեղաւորին: Ակնարկէ 'ի բանն սիրաքայ. Բ. 14. որ ըստ զլոյն իմանի 'ի վերայ երկակենցաղ մարդոյ, որ կամի ծառայել Աստուծոյ և գե-ւին. բայց աստ վարդապետս գեղեցիկ յարմարէ մեղաւորին, որ 'ի խղճէ մտացն խռովեալ կայ 'ի մէջ յուսոյ և յուսահատութեան, որ վտանգա-ւոր է յոյժ և աւաղելի: Զայս բան՝ հոգևնյից ասէ, որ սովորաբար հնա-շունչ բանից պատուշաճի. յորմէ մարթ է ձեռնարկել, թէ ըստ հնա-շունչ գիրս դասէ զսիրաքայ իմաստութիւն՝ համաձայն արևմտեան վար-դապետաց, ոչ հայեցեալ յերկբայութեան այլոց արևելեան վարդապե-տաց. քանզի և 'ի պարսաւոյ ժողովն պատարեալ 'ի սեռն կեղեկեան 'ի մեր թուին մժէ. 768. յօրինակ ինչ, 'ի 25 կանոնին՝ թէպէտ Է այլ ևս գիրս ոչ դասի, բայց օրինաւորի ընթեռնուլ առ 'ի յուսումն մանկանց: Այլ և յընթերցուածս առնի Ոսկեբերանին ճաշոցգիրքն առնու 'ի Սի-րաքայ գլ. ԼԹ: Սր վարդապետս յիշէ գործեալ զսիրաք 'ի բանն Դ. 3. անուամբ իմաստնոյ Երջանկի:

(27) Առ յանդգնելոյս մոլութիւն: այլ օրէն. մոլորութիւն:

(28) Առ ուրացելոյս: Փախուցելոյս 'ի ձեռաց դիւին, կամ ուժգին թա-փով անկելոյս:

(29) Առ հոգւով նիրհաւորելոյս: Իմա, առ հոգւով մխրմաւորեալս. որ-պէս և զմիւսն, առ խաւարեալ մահու ծածկելոյս, այսինքն առ ծածկեալս:

Մերոյն յաւելուած նըկէն հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն ողբերս մաղթանաց բանն։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

ԲԱՆ. ԼԱ.

Ա. Եւ արդ՝ քանզի բազմացուցի պայմանաւ բա-
նիս՝ զաղէտ տագնապի հեծութեան ձայնիս
մեծ հառաչանացս՝ անսփոփելի իմոյս վտանգի. զի
դու՝ ողորմած [1] սկզբնահայրդ խոստովանութեան ան-
յայտ ծածկութեանց՝ որդի այ կենդանւոյ տէր յս
քս, քաղցրութեամբ նայեցիս քաւել։ Արդարեւ կա-
րող ես. ճշմարտապէս բաւական ես. եթէ կամիս,
հնարաւոր ես. [2] կամիս առաւելապէս, որպէս և կա-
րես։ [3] Հարստանաս մեծապէս ընդ տալն, քան եթէ
ընդ առնուլն. բազմանան քեզ գանձք 'ի ցրուելն,
քան 'ի ժողովելն. յաճախեն ստացուածք քո 'ի
սփռելն, քան 'ի ճշդելն. կուտին քեզ համբարք 'ի
տարածանելն, քան 'ի շտեմարանելն։ Հաւատամ [4]
այսմ ամենայնի՝ տէր, գտանել քև ելք փրկութեան.
հաւատամ անարգս՝ ընդ պատուականին. յուսամ
ընդ աբրահամու, և ընդ աննայի. զի միոյն բանիդ
քո հաւատաց, և միւսն քահանայապետին բարբա-
ռոյ անսաց։ Նման որոյ և ամն 'ի խորին ծերութեան
անհամար որդւոց հայր հաստատեցաւ. [5] զառան-
ցեալն և զամուլն արգանդ սառայի՝ անդաստան
պտղածին արդեան օրհնութեան բազում ժողովրդոց՝
մարգարէից սրբոց՝ և թագաւորաց ընտրելոց՝ հայել
յուսացաւ։ Իսկ միւսն՝ զանհանդերձելի երկիր սրբո-
վայնին սենեկի՝ եօթնեակ զաւակօք բարգաւաճե-
ցոյց. [6] որ է թիւ մի անբաւութեան, զընաւն նշանա-
կելոյ զէութիւն, ածութեանն յարակայութեան սահման
անհետազօտելի, և աւազանին նորածին որդւոց՝ ան-
հատ յորդութեան։ Այս թիւ պանծալի՝ որում ոչ է
կէտ կցորդի, և ոչ սպառուած վախճանի. այլ կոյս
ամն է՝ ուրոյն ընտրութեամբ նուիրեալ՝ յաւէտ անճառ
վիճակաւ համայն յաւիտենիւ, դժուարաթարգմա-
նելի մերոց իմաստից։

Բ. Արդ՝ համարեամ յարդարութն անյուսալի փրկու-

թէ հոգւոյս՝ զամենավարան ձայն կողկողանաց որոտիս
հեծութէ, ընդ նախագրելոցն երջանկաց եղեալ և
դասեալ զայս դաւանութի̃ փոքր հաւատոց իմոյս խն-
դրուածոց. զի կեցից և ես առ նոքօք՝ բերկրեալ
ընդ նոսին, բուռն հարեալ քան զիմոց գործոց ըղ-
քոյդ շնորհաց : 7 Մանաւանդ զի՝ կրկին բարձունք
են և փառաւորք՝ և քան զչափ կշռութէ բանի գե-
րագոյնք, իմուս խռովութէ հաշտարանք, և հզօրա-
պէս քաւարանք, և կարծեաց թերութէ մնաց սլա-
ցեալք : Ընդ արեան քո ահաւորի՝ և ըստ մարմնոյ
ծնօղդ քո խնկելի : Պարք առաքելոցն, դասք մար-
գարէիցն, գունդք մարտիրոսացն, 8 ձիաւորեալքն
հետևակ՝ սպառազէն արիութբ՝ մերկամարտիկն
մրցութբ. գումարք միանձանց, 9 բոյլք բանականաց
ընտրելոց, ժողովք բարեկրօնից. 10 հոյլք հոգեղի-
նաց՝ յերկրէ երկնաւորաց, զինուորութիւք վերնա-
կանաց՝ ընդ մեզ կցորդելոց : 11 Ստանդք երախայ-
րեաց, մատուցմունք զուարակաց, լուցմունք ղամ-
բարաց, բուրմունք խնկոց՝ իւղոց հանդերձանօք,
յաղթանակք փրկական նշանաց, կառուցմունք խո-
րանաց տ̃ծաբնակաց, ձեռք քահանայից՝ շնորհիւ կա-
տարելոց : 12 Սա շարժումն անձին յիշատակ ն̃յ, առ
փոփոխումն գարշապարի. առ կարկառումն աջոյ, և
ամբարձումն բազկի, առ բարիս՝ գոհութ̃, և առ գթել՝
աղաչանք, առ բանս ընտանիս, առ խօսս հասարակաց,
առ ձայնս բնաւորականս, առ գործոց յաջողուածս,
առ առաքինութէ ջերմութիս, որ 'ի տունջեան և
'ի գիշերի՝ ընթացմունս օգտակարաց հոգևորաց՝ քև
առաջնորդեալք. 'ի նիրհել և 'ի զարթնուլ, 'ի պա-
տերազմի ազգաց, 'ի մարտս դիւաց, 'ի հակառակու-
թիս հերձուածողաց, առ փոքունս, առ մեծամեծս,
առ ձգումն ըմպելեաց և ճաշակումն կերակրոց, և
որ ինչ միանգամ 'ի կիրս մեր կերպանան, եթէ հեշ-
տականս՝ եթէ տատամնելիս. վասն ոմանց աղօթս
մնալ 'ի նոսին, և յաղագս ոմանց՝ զի զերծ արասցես
ոքանչելապէս հնարիւք անճառիւք. հաւատացեալ
յամենեցունց, թէ 13 բաւական ես ամենայնի, կաթ-
նաբոյծ հասակաց, տիոց պատանեաց, 14 մնաց վայ-
բենեաց, ստամբակաց գոռոզաց. մինչ զի առ թա-

տերս տեսարանաց, և առ կոյս խառնիճաղանճ
բազմութեց, և կամ առ կաքաւս կայթից անախոր-
ժականաց կամաց հզօրիդ՝ ոչ ես մոռացեալ
է. Արդ՝ դու 15 ստացար զամենեսեան, և քո են
ամենեքեան, և ողորմեսցիս ամենեցուն՝ միայն բա-
րեգութ. զի թէ և մեղիցեն, քո՛ են. վասն զի 'ի
քում համարի են. քանզի գիտեն զզօրութի քո, ըստ
առակողին մաղթանաց: Որում և ես կցորդիմ
թշուառս բանիւ վկայեալ սորին յանցաւորապէս.
յանդգնիմ ասել, թէ որ կարդայ զքեզ գովեստիւ,
ծանուցեալ զքեզ թէ իցես, 16 թէ և եօթեամբք
իցէ վարակեալ կրկնապատիկ պատժաւորութք, 17 առ
այս օրինակ կիրթ ձեռնարկութե, զիա՞րդ ոչ քո իցէ:
18 Յորս է տեսանել 'ի մէջ արջնատես ագռաւուց՝
սպիտականիշ երամս աղաւնեաց. 'ի մէջ խրոխտա-
կանաց ձիոց անմաքրից՝ որոջս հանդարտաբարս. 'ի
թիւ շանց գազանականաց գառինս նուիրեալս: Հե-
զութի 'ի խստութե. կատարելութի 'ի թերութե.
խոնարհութի յամպարհաւաճութե. ճշմարտութի
'ի ստութե. 19 միամտութի 'ի մանկութե. անբծու-
թի յայլամտութե. բարօրութի 'ի չարութե. պար-
կեշտութի 'ի լկտութե. ողորմութի յանգթութե.
ապաշաւանք յանյուսութե. քաղցրութի 'ի բարկու-
թե. հաշտութի 'ի թշնամութե. անոխութի 'ի խա-
ծանողութե. քաջալերութի 'ի ակնութե. 20 օրհնու-
թի 'ի նետաձգութե: Յոր 21 ոչ բաւականացայ եր-
բէք 'ի դատել ճշգրտապէս, թէ ո՞վ յերկրածնաց
աստի կանխեսցէ ժառանգել զքեզ. որ միայն անա-
չառաբար կշտամբես իրաւամբք զարդարութի առ
ամբարիշտ մաքուրն, և առ պոռնիկ զղջացեալն. առ
ամենեսին բարեգործ՝ միայն թագաւոր օրհնեալ 'ի
բարձունս, և յամենայն յաւիտեանս. ամէն:

---

(1) Սկզբնակայրդ խոստովանութէ. առաջին զտիչ և տուիչ խոստո-
վանութեն մեղաց: Այսպէս անուանէ զքն, նախ՝ զի իբրև առ 'ի
սկզբանէ աւանդեաց մարդկան՝ խոստովանութե արդարանալ 'ի մեղաց,
ըստ եսայ. (ա. 18.) Եկա՛յք խօսեցարո՛ւք ընդ միմեանս. || և
(խգ, 26.) * Ընդ միմեանս դատեսցուք, ասա՛ դու նախ զանօրէնու-
թիւնս քո՝ զի արդարասցիս ||, որ և գիւտ և հնարք սոյ միայն է, զի

մարդն զատակ մեղաց՝ ինքնին անձամբ էր 'ի զատանել զայս, և 'ի յաւսաղ։ Երկրորդ, զի քո՛ որն անձամբ սահմանիչ եղև խորհրդոյ տարաշխարութեան. այլև պատգամաց զանյայտ մեզն ած 'ի խոստովանութիւն. որպէս զանդամալուծին, և զփարիսեցւոցն ամբաստանողաց զշնացեալ կնոջէն. զորոց զմեղս գրելով մատամբն յերկրի՝ հրատարակեաց նոցա։ Դարձեալ, զի և 'ի խորհրդական խոստովանութեան՝ առաջին ունկնդիրն և արձակիչն՝ ինքն քո՛ է. որում պաշտօնեայ է քահանայն։ Արդ ասէ, վասն այն բաղձացուցի զքանս ամբաստանութեն մեղաց իմոց, և զորդումլի վիճակի անձինս, որպէս զի դու որ ատեիչ և յորդորիչդ ես խոստովանութեն, առաւել ես շարժեսցես 'ի քաւել, և ոչ թէ 'ի գաղտագոուել. կամիմ՝ զի խոստովանութեամբ իմով ես ծանեայց զթշուառութիւնս իմ, և ոչ եթէ դու յինէն ունիս ճանաչել զայն. այլ քեզ զներելն սահեցեր։

(2) Կամիս առաւելապէս։ Այսինքն առաւելապէս կամիս, որպէս և առաւելապէս կարես։ Կարողութիւն քո ոչ նուազ է քան զկարեկցական կամս. որպէս առ մարդիկ պատահէ զի կամին ինչ, այլ չկարեն. իսկ դու ըստ առաւել կամելոյդ՝ առաւել և անսահման ունիս զկարելն։ Իսկ եթէ իմանամք զքանս յայս միտս, որպէս առաւել է կարելդ, նոյնպէս և կամելդ, ըստ այսմ լինի բաղդատութիւն կարգաւոր կարողութեան Այ ընդ կամելոյ նորա. զի ըստ այսմ միայն հաւասարապէս անզրադարձին. այսինքն զոր կամի՝ կարէ, և զոր կարէ՝ կամի. և սովին ոճով կան բազում ասացուածք առ նախնի վարդապետս. զորս յառաջ բերէ Ածաբանն Պետավիոս. Հատ. Ա. գիրք Ե. գլ. Է։ Այլ սակայն պարզաբար առեալ զկարողութիւն քո, ընդարձակ է քան զկամելն. զի բազում ինչ կարես դու, զոր առնել չկամիս։

(3) Հարցափոխ մեծապէս։ Այս, և յաջորդքն ոչ այնպէս իմանին, որպէս թէ Այ նորոգ հարցանիցէ 'ի սաղն, կամ իրօք նոր ինչ առնու, կամ ժողովէ, եւն. այլ ըստ հակառակին սովորութեն մարդկան ձևացուցանէ զքանն, որք յառաւել տալն նուազին յընչից, և ճոխանան 'ի ժողովելն, 'ի շահավաճառելն, 'ի խնայելով պահելն։ Իսկ Այ այնպէս յօժարութիւն տայ, որպէս թէ տալովն հարստանայր, կամ շահելովն աղքատանայր. ինքն յորդորէ զմարդիկ խնդրել և առնուլ զպարգևս իւր, և խնդրողին՝ առաւել քան զոր խնդրեացն տայ. և ընդ անխնդրողան կամ ընդ երկմտողան չհաճի, զայրանայ իսկ ընդ անզգամիչս առատութեան իւրոյ։ Եւ դարձեալ, առ մեր ծանօթութեն՝ յառաւել շնորհելն մեծապէս ես հարստութիւն Այ բացերևի. առաւելապէս պայծառացաւ մեծութիւն Այ 'ի փրկագործելն քան յարարչագործելն, և առաւել 'ի փառաւորելն քան 'ի շնորհազարդելն զմարդիկ. առաւել հարուստ երևի Այ յերկրի բաշխելով զիւր բարիս, քան յերկինս ինքեան միայն վայելելովն։ Վասն այսորիկ յիրաւի ասաց և 'ի բանն Է. 1. մշտահարուստ տուիչ։

(4) Այսմ ամենայնի Տր ։ 3. օրին. չինք փէր ։

(5) Զառամացեալն, զանցեալն 'ի ժամանակէ կամ 'ի կարողութենէ ծնանելոյ արգանդ Սառայի՝ յուսացաւ տեսանել իբրև պաղաբեր անդաստան արդեան օրհնութէ, օրհնեալ արգեանց կամ արմատաց, այսինքն մարգարէից և Տր Թագաւորաց։

(6) Որ է Եւս մի անբաւութէ։ Զեօթնեակ թիւն ասէ նշանակիչ անբաւութեն, թէ ըստ իմաստասիրաց, յորս պիթագորեանք զեօթնեակն կոչէին՝ կատարելութեն ամենայն մասանց, և իբր վախճան իւրաքանչիւր իրաց. և թէ ըստ Որ գրոց, որ զեօթն թիւն առնու փոխանակ յոգնաթիւ բազմութեն. որպէս (առակ. իԴ. 25.) * Եօթն չարիք կան 'ի սրտի

նորա ։ || Եւ (գլուխ ․ ԺԷ ․ Կ ․) * Եթէ եօթն անգամ մեղիցէ քեզ ․ || ԵՃ
ութսուն ծննդ ․ Փ ․ 15 ․ ԵՃ ։ զԽնովն նշանակէր լուսոյ վերոյ ․ այսու կամ զէտու-
թեան տարապարտոցս խնամոց , երբ զի ըստ աւետարանաց՝ եօթնեակն
ամենայն երրորդ կատարումն է և վախճան ․ և կամ զէտութիւն և զգայու-
թիւն ամբողջական խնամոց , որպէս թէ եօթնեակն նշանակէ զարմանական
անսպառութիւն յարակայութիւն ոյ , որ է սահման անհնարագործելի ․ այսինքն յա-
ւիտենականութիւն ։ Կամ , ըստ 2 օրէն , որ մերձենալեաւ արտաքին զայս , և
զերկոտասանական , Սահման անհնարագործելի , խնամոցն եօթնեակ թիւն ,
զոր առաջին կոչէ անսկիզբն և անվախճան ։ Այլ կամ յարաժամ և յարմարագն ․
Ի առաջինն նորածին որբոց անհատ յարդարելոյն ։ Այսինքն եօթնեակ
թիւն՝ որով ամենայն անցեալ ժամ ծնեալ զգալեաց , նշանակէ զամենայն ա-
ռաջնութիւն որդւոց աւազանին միրտութիւն ․ որով եկեղեցի հեթանոսաց
ամենայն և անծնունդն՝ բարեխօսաձեռն ։ Որպէս ասէ կէֆ նիւրիի ․ եօթ-
նեակն ոչ ունի 'ի ներքոյ տասնեկին զայլ թիւ , որոյ կցորդութեամբն
սկսանիցի ․ Ի ոչ արտաքոյ վախճանի ․ մի օրէն ․ արտաքոյ , և ոչ զայլ
թիւ 'ի ներքոյ տասնեկին՝ յոր աւարտեսցի ․ այլ կոյս ասի է ․ յոստոսա-
կառաց նմանութիւն կոյս ասի եօթնեակն , զի ընդ տասնեկաւն ոչ ծնանի
զայլ թիւ ․ վասն այսորիկ աստուածաբանք կոչեցին Աստուածն կոյս ․ զի Է
տասնեկաւն չունի զայլ թիւ ծնօղ կամ ծնեալ ։ Այլ ասէին՝ 'ի հօրէ
հօրէ ծնեալ , այսինքն 'ի միութէ ․ և յոյս միոյ Աթենաս անուանէին
զնա , զի և զաթենասայ առասպելէին ծնունդ զայլ ուղղոյն արամազդայ՝
առանց մօր ։ Որպէս ընդրուտ նախրեալ ․ եօթնեակն առանձինն նուիրեալ
էր՝ թէ ըստ հեթանոսաց , որք աթենասայ չմծոյն նուիրեալ էին զայն ․
և թէ աստուածաբանք առաւել պատուական ասէին զորպիսին երրոց ․
և թէ յամենայնաքանչից 'ի հին և 'ի նոր օրէնս ․ որպէս և յայտ է ։ յաւէտ
անճառ վիճակաց հանգոյն յաւիտենից ։ այսինքն եօթն թիւդ զերադասնոց ըն-
տրութիւն նուիրական է յամ ազգս և 'ի գարս ․ կամ նուիրեալ է 'ի նշա-
նակել զեօթն յաւիտեանս աշխարհի , և կամ զթուն յաւիտենին հան-
դերձելոյն , ըստ որում անսկիզբն և անվախճան ։ Ի ծնողութեանցն հետ
մերոց խմաստից ։ Այս ամենայն միջոցաբերեալ առաւելութիւնք եօթն թուոյն
բարձրացուցանէ խորհուրդս ունելին՝ դժուարին 'ի միտենել ․ զի նշանակէ զամենայն
երրորդ զկատարելութիւնս , զերրորդական ծնունդ աւազանին , և զանթիւ
բազմութիւն ծնելոցն , զանսկզբնութիւն և զանվախճանութիւն ոյ , և 'ի մե-
րոյ այսոցիկ՝ զբանն ած՝ որ անմայր ծնեալ յաւիտենից 'ի հօրէ՝ ոչ ծնա-
նի զայլ որդի յաստուածութեան անդ ։ Զոր առաւել յաղագս եօթն թուոյն՝
յոյժ խնդրեն և այլ մատենագիրք մեր ․ որպէս Գրաւբեն փիլիսոփայ ․ (առաձա-
նաց ․ գլ ․ ԺԳ ։) Գրիգոր մագիստրոս ․ (Թղթ․ առ աբրահամ ասորոյ ։)
Այլև Գրիգոր արշարունի ․ ('ի մեկն ․ ընթերց ․ գլ․ Է․) ասէ ․
* Եօթն թիւն 'ի տասնեկին անծնունդ ասի և անկատար , || այսինքն
անեղբ ։ Որպէս Լամբրոնացին ('ի մեկն ․ սղմ ՀԷ ․) * Զեօթն թիւդ՝
որք թուականութեան եղեն հեռուանք արհեստից , յաւիտենի սաացին նշա-
նակ , զորով անկատար և կոյս ։ || Եւ (ՃԺԷ․) * Կոյս անուանեն զնա ,
և անծին , նուիրեալ և աւերանի ։ || Որանիք ըստ հնին լուծ ․ զմեկնեալ
բանիցս խնամոցն 'ի վերոյ Ի գլոյն , որ զեօթն թիւն ցուցանէ 'ի մեզ ․ և
զորով զիր անուանել ըստ քերթողաց՝ նշանակէ զած և զանուանակին աստ-
ուածութիւն նորա ։ Այս խորհրդածութիւն յարմարի է գլոյն , սակայն
ընդարձակ ոչ՞ մատենագրեաց յայն ոչ հայի , այլ յեօթնեակ թիւն ։

(7) Մանաւանդ զի նէջին բարձրան ։ Ցայն ասէս առաւել զքո շնորհացդ
կատարեալ քան զինչ գործոց , վասն զի շնորհք քո ենքենին առաւել զերա-
զանց են քան զիմ գործս ․ և շնորհքն թողութեան՝ զոր այժմս խնդրեմ ,
հրեշին բարձր է քան զառաւելին շնորհս անմեղութեան ․ զի այս առաւ-

առանց արժանաւորութեան . իսկ շնորհք թողութեան մատուցանեն ընդ-դէմ արժանաւորութեան , ապերախտ գոլով առ աստուծոյն . ուստի ա-ռաւել փառաւորք են , զի քո փառաց յաւէտ մեծացուցանելով , և զերա-գոյն քան զհասումն մտաց : Խոյ թշնամութեան հաշտարարն . 1 որ . հաշտա-րարք , հաշտեցուցիչք . և խաղաղարարք , քաւիչք մեղաց և պատժոց , և խոր-ծեաց Ռեբեկայ , 'ի վեր քան զկարծեալ կամ զկարծիս մտաց , անհաս-բաւելիք : Այամ շնորհաց միջնորդ լինիցի ահաւոր արիւնքդ , և մեծա-մայրդ , և ամենայն անք քո ըստ կարգի :

(8) Չիտուրեայն հեփնոկ : Ծագնաւորք կմ անապատաւորք , որք հոգեւ-րապէս ձիաւորեալք են , և մարմնով հետեւակք . արիութիւ զինեալք , և մերկ յամ խոյս մարտնչին :

(9) Բոյսէ բանականաց : Գունդք վարդապետաց . մի օրին . և հին ըստ բա-բանականաց . և մեկնիչ վանականաց , միաբանակեցաց , բայց առաւելին յար-մար է . զի ըստ կարգի զհրապարակս զատ նոցա յիշելով , արդար է զվար-դապետացն զնել . իսկ զմիանձնանս զատ յիշեաց : Այլուրեա բանական , կամ բանաւոր նշանակէ զպարապեալսն 'ի բան վարդապետութեան :

(10) Հոյսէ հոգեղինաց : այսինքն կուսանաց , որք հրեշտակային կուսու-թեամբ հոգիացեալք են , և յերկրի գոլով իբր երկնաւորք կենցաղեցան :

(11) Աւանդէ երախայրեաց : Ընդ միջնորդութեան սոցա առէ՝ նուաստացեալ իմս և բարեպաշտութեամբ հաւատացելոց . այսինքն ընծայք առաջին պտղոց : նախադաշտէ ղօտարական , որք զենեալ լինին 'ի կերակուր աղքա-տաց , և 'ի հանդիսատ ննջեցելոց : յաղթանակէ երէկական նշանաց , նաւերկալ փրկական նշանք . որպէս խաչք , աւետարանք , սկիհ , զանգակ , ևն : Չէոտ տեհանայից . օրհնեցեալն զիս , կամ օծնեցեալն ձեռք քահանայից շնորհիւ 'ի ձեռն մեռոնին նուիրելոց :

(12) Աս լուծանի անյին : Զայս ամենայն յարեն 'ի նախընթաց բանն . իբրև թէ ձեռք քահանայից օծեալք են առ 'ի զարթուցանել զհոգին 'ի յիշատակ նոյ նը պատարագաւն . ըստ այսմ մերաբերելն և զյաջորդանն : Բայց այլազգ լաւ ես իմանի ըստ կարգի յաջորդ բանիցն , այլև ըստ լաւ օրինակին , որ վերջակետիւ զատանէ , և զկապակցով սկսանի , Աս լու-ծանի անյին : Ուստի այն նամ բանք կապին ընդ հետագայս բայն՝ են ա-ռաջնորդեայ . իբր առել . բարեխօսութեամբ սոցա քոց , և բարեպաշտութեամբք հաւատացելոց՝ քև առաջնորդեցիրք 'ի յիշատակ նոյ՝ 'ի շարժման մարմ-նոյ , առ ծոծորանի գօրշապար . 'ի քայլելն , 'ի ձգել զձեռն , 'ի վերա-ցուցանել զգլուխն , ևն : առ բարիս՝ գոհանէ . 'ի բարեգործելն՝ 'ի գո-հութեան առաջնորդեցիրք . և առ գինէ՝ աղաւնի . և 'ի մեղանչելն՝ յաղա-չանս : Ըստ այսմ յիմաստնի զրոյցս , յառեննական խօսս . առ յոյնս են-տարական . որք զմնական կիրս ծանուցանեն . որպէս լալ , հառաչանք , ծիծաղ , ևն : Հին լուծ . իմանայ՝ որք բնութեան քաղցրաձայնիք են , կամ ոչ նոյնակիսակք : որ 'ի փոխընթան և 'ի գինէրի ընթացմանս . 'ի գնալն 'ի տունէ և 'ի գիշերի : օգփոխարաց հոգեւորաց . յօգտակարս հոգւոյ քև ա-ռաջնորդեցիրք . ըստ այսմ իմն և զհետեւեալսն : և որ ինչ փոխգամ 'ի նիրս մեր . 'ի բնական կարիս և 'ի ակէտս մեր հանդիսայն . թէ հանձնելիք , և թէ վշտալիք՝ դու առաջնորդես , ևն :

(13) Բոտոկան ես ամենայնի : 3 օրին . յամենայնի :

(14) Մփոց վայրենեաց : Թուի զերկրաւորականն հասակն առել , յա-րում է բունութեան ախտից . որոյ վասն անուն ժամանակ կոչէ զայն սար-գիս մեկնիչ . (ա . պետր . ժա . 480 :) Կամ , իմանայ զպարարտութս և զթանձրամիտս : Սփածեալոց գառադոց . բանաւոր խշխանաց : մինչ դի սա-նափերս : այնչափ զօրաւոր ես , մինչ զի նաև 'ի անասնաս խաղաղոյ . և յամենայն ռամկաց , և 'ի մէջ կոչքաւաց ոչ ես մոռացեալ . զի կամ 'ի

հանդիսականաց անտի, և կամ 'ի նոյն իսկ խաղալկաց ոմանք յերեւն դերս, և զգլխաւոր. որպէս ասացաւ պատմիչն՝ որ յանարժան անդուշն յերեւելի զնծ՝ դարձաւ առ նա. (վարք հարց. 107 ։) Նոյնպէս պատուգանի, որ յանտառակ պարուցն ձգեցաւ առ ած ։ (անդ. 111 ։)

(15) Սփայրոր ղամէնէնեան ։ այլ օրին. ղամէնէոյն ։

(16) Թեէ ւ էօլնամէփ ։ Թէ և բազմապատիկ պարտաւորութիւք լծեալ իցէ ըստ կայենի եօլթն վկիժուցն ։ (ծննդ. դ. 24 ։) Իսկ նըրնաղափէն կամ սաստկացուցիչ է, և կամ ցուցանէ զպարտաւորութիւն մեղաց և պատժոց, կամ զատուցս և զհանդերձելոյն պատիժս ։

(17) Աւ այս օրինակ ։ Ըստ այսմ յիշատակեալ օրինակի, նիրթ ջեանար-նուբէ, այսինքն հմուտ կամ զօրաւոր վճռոյ իմաստնոյն. (իմաստ. ժէ. 2. Թէ 'ի մեղանչելն՝ 'ի քում համարի եմք.) ղէնիր ուն փն էջէ ։ Բառն ջեանարկուբէ այլուր եւ փոխանակ վճռոյ կամ բանի դնի. որպէս 'ի բանն ձէ. 2. այլև (խորհն. ե. 86 ։) Այսր անդուոյ ամբողջ իմաստքն են ։ Որով հետև դու ես, տուացող ամենեցուն եւ արարչութեան և փրկագործութեան, և յորդորեալն՝ ամենայորդոր, վասն այնորիկ թէ և մեղ-ցեն ոմանք յանցաւորութեամբ, ոչ եթէ այնու դադարեն 'ի լինելոյ քո. այլ ձանաչելով զզօրութիւն քո 'ի կեցուցանել, մնան 'ի քում համարի, որպէս իմաստունն աղօթելով ասէ. որում և ես յանցաւորս վկայելով համարձակիմ ասել, թէ այնպիսին թէպէտև իցէ բազմապատիկ մեղօք պարտաւոր, միայն թէ կարդասցէ առ քեզ իբր առ իւր արարող, զիարդ ոչ լինիցի քո անդէն վաղվաղակի՝ ըստ անպարծելի վճռոյ իմաստնոյն ։

(18) Յորս և փէսանէւ։ 'Ի մէջ զանազան մեղաւորաց կամ մեղաց՝ քո զօրութեանդ տեսանի, զի կամ ընդ մեղաւորս խառն գտանին արդարք, և կամ 'ի նոյն իսկ մեղաւորաց յանկարծ արդարք լինին ։ Սոյնպէս 'ի խրատութեան միոյն՝ գտանի հեզութեան 'ի միւսն. և կամ թէ նոյնն 'ի խստութեան դառնայ 'ի հեզութիւն ։ Ըստ այսմ իմն զբռվանդակն ։ աւլնափէս, սեւադոյն ։

(19) Միխանփուբէ 'ի ծամնկուբէ ։ Այսինքն 'ի խորամանկութենէ. զի գիմադրութեն բարեաց զայս միտս պահանջէ. և ածանցի 'ի ծանի բառէն, և ոչ 'ի ծանօթ ։ Անէծուբէ յայլամփուբէ, անկեղծութեն 'ի կեղծաւորութենէ, կամ 'ի խարդախութենէ ։ Բարօրուբէ 'ի չարուբէ, բարութենէ, կամ բարերարութիւն ։

(20) Անախուբէ 'ի խածանողուբէ ։ Ոչ պահելն ոխս՝ յորժամ այլ ոք խածանէ բանիւ, կամ այլով ինչ ։ փոխանցուբէ 'ի ըմբուէ. ողի առնուլ կամ ափոփիլ 'ի մէջ վշտաց, կամ յոյս ունել 'ի մեծ վտանգս ։ Օրհնաւ-բէ 'ի նէփոսխուբէ ։ օրհնութեն 'ի ձգելն այլոց զնեառ անիծանաց. կամ գոհութիւն առ ած վասն ձախորդութեանց՝ յորժամ այլք ձգեն զնեառ տրտունջման. կամ գոհութեն՝ յորժամ ած զնեառ թշուառութեանց առձակէ, ըստ յոբայ (Ա. 13.) " Նետիւք իւրովք խոցոտեաց զիս ։ ||

(21) Ուէփոախանոյտյ ։ Տեսանելով զի 'ի մեղաւորս խառն գտանին արդարք, և 'ի մեղաց յանկարծ արդարանայ մարդ, ոչ կարասցի գիտել հաւաստեաւ, թէ ով 'ի մարդկանէ ժառանգելոց է դժոխոց. այլ դու միայն ուղիղ դատես, և նշմարես նրանա մուփ ղարփարուէ. ցուցանես զարդար դատաստանդ քո առ ամենեցուն մարդկան, առ այն ամբարիշտն՝ որ մնաց քեզ, կամ մնացուր կարծի. որպէս փարիսեցին, և առ պոռնիկ մաղդաղենացին. որ պոռնիկ կարծի, կամ է իրօք, և սակայն զղջացեալ է ։ Յայտնիսկ բանս ասելն՝ ոչ բաւականացայ, կամ չկարասցի գիտել, իմանի՝ անհնար է գիտել, թէ և 'ի քննել յանդգնիցի ոք ։ Զի եթէ 'ի մէջ իւրաքանչիւր կարգի մեղուցելոց՝ գտանի և անմեղ, կամ մի և նոյն մեղուցեալ շարժելով 'ի շնորհաց Այ դառնայ և արդարանայ, ով կարիցէ ընտրել ո

յանհամար մարդկանէ անմեղ իցէ, և կամ ՚ի մեղուցելոցն որ ոք առ-
գաստանեալ ունիցի։ Բայց միայն սրտագիտողին ԱՅ է զայդ գիտել, և
նմին եւեթ վայելուչ գիտել առ ՚ի յարդար դատողութիւն։ Եթէ իւրա-
քանչիւր հաւատացելոց չէ տուեալ գիտել անգամ և զանձինս հաւա-
տս՝ եթէ պիտանի արդեօք գտանիցի, կամ խոտան, այլոց ստորոց մտածե
ընտրող լինիցի, կամ յումեքէ տուեալ իշխանութիւն։

Մերոպէն յաւելուած երգին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն
ողբոց մաղթանաց բանի։
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ԱՅ։

ԲԱՆ. ԼԲ։

Ա. Եւ արդ՝ ես յետնեալս [1] ՚ի նախադրութեանց
արժանաւորաց գրեալ լինելն ընդ պարտաւորմն պատժոց, հայցեմ զողորմութի ընդ ամենեցուն մաղթանաց։ Ընդ նկունս և անհամարձակս, ընդ տկարսն և փոքրկունս, ընդ ընկեցիկսն և արհամարհեալս, ընդ տարագրեալսն և առ քեզ դարձեալս, [2] ընդ երկուացեալսն և ճշմարտեալս, ընդ կործանեալսն և յարուցեալս, ընդ ընկճեալսն և հաստատեալս, ընդ գլորեալսն և կանգնեցեալս, ընդ մերժեալսն և ընկալեալս, ընդ ատեցեալսն և կոչեցեալս, [3] ընդ ապշեալսն և զգաստացեալս, ընդ անառակեալսն և զսպեալս, ընդ հեռացեալսն և մերձեցեալս, ընդ հերքեալսն և սիրեցեալս, ընդ պատկառեալսն և զուարթացեալս, ընդ ամաչեցեալսն և խնդամտեալս։ [4] Այլ ես պատմեմ աստանօր դարձեալ՝ ոչ զմեղսն երուսաղեմի, ըստ մարգարէին հրամանաւուն, որ [5] առ ժողովուրդն նախկի, և կամ տանն յակոբու զանօրէնութիւն նորա, այլ իմոյս ժամանեցից յայտնութե. քանզի աւաղ ընդ աղէտս մահու յարելով, ըստ մարգարէին, յանդիմանեցից զիս ինքն ինձէն իմովս ձայնիւ, ըստ սաղմոսողին. որպէս զի յանձնառական յայսմ համայնապատում խոստովանութեանս՝ [6] ոչ կարօտացեալ կրկնակին, միանգամայն իսպառ սրբեցայց՝ օրհնեալ հրամանաւ երդ։

Բ. Եւ արդ՝ կրկնելով ծունր բարերարիդ քաղցրութեան, տարածեալ զանձն իմ առաջի, զ՚ի մահ

գլորմանն ցուցից կերպարան. որ 'ի հող խոնարհեալ
մածայ ընդ երկրի. և ընդ անցաւորս այս կենցաղ
կորստեան՝ անասնական գետնաքարշութե սողնոյ սա-
հեցմամբ՝ կամօք բևեռեցայ: Այլ 'ի քեզ տէր յե-
ցեալ՝ իբր 7 'ի հաստարան կենաց գաւազան՝ 'ի յար-
մատոյն դաւթի ընծիւղեալ մարմնով՝ անձառ շաղ-
կապմամբ յանեղ ա̃ծութիդ, կանգնեցայց անդրէն
կիսայար՝ պատկառեալ 'ի քոցդ երախտեաց՝ 'ի վայր
կորացեալ դիմօք, աչք 'ի բարձունս յառեալ ողոր-
մագին տեսութե̃ 'ի քեզ՝ 8 մե՛րձ 'ի հեծութի, բնա-
ւին ողորմութի, բոլորովին քաղցրութի, գլի՛ձ լու-
սոյս արտասուօք լցեալ՝ պաղատանս յուսոյ առաջի
մեծիդ վերընծայեցից: Տուր ամենառատ աննուազ
երկայնմտութե̃՝ քո դառնացուցչիս, միայն դու 'ի
յամենայնի սահման փրկութե, ա̃ծ բոլորից, անձառ
մեծութի, անբովանդակելի բնութի, անքննելի իսկու-
թի, հզօր զօրութի, կարող բարերարութի, անպա-
կաս լրութի, անձառ ժառանգութի, 9 վայելչական
վիճակ, առատ պատրաստութի, անստուեր իմաս-
տութի, տենչալի տուրք, անձկալի ձիր, բաղձալի
բերկրութի, անտխուր հանգիստ, անտարակոյս գիւտ,
անկապուտ կեանք, անծախելի ստացուած, անփո-
խանորդելի բարձրութի, ամենարուեստ բժիշկ, ան-
սասանելի հաստատութի: Դարձուցիչ մոլորելոց,
գտիչ կորուսելոց, յոյս ապաւինելոց, լոյս խաւարե-
լոց, քաւիչ մեղուցելոց, ծածկարանդ փախուցելոց,
անդորրիչ խռովեցելոց, փրկութիդ մահացելոց, ար-
ձակիչդ կապելոց, ազատիչդ մատնելոց, պատսպա-
րանդ սահեցելոց, վշտակիցդ գայթագղելոց, եր-
կայնմտութի տարակուսելոց: Յուսոյ տեսակ, ցնծու-
թե ցոյցք, օրհնութե անձրև, հոգւի երեսաց, զօրու-
թի դիմաց, հովանի գլխոյ, շարժարան շրթանց, 10
ազդումն բանի, կառավար անձին, բարձումն բազ-
կի, ձգումն ձեռին, երասանակալդ սրտի: Ընտանի
անուն, մերձաւոր ձայն, կցորդութի հարազատ, խնա-
մածութի հայրենի, խոստովանեալ անուն, պաշտե-
ցեալ պատկեր, անպարագիր տիպ, երկրպագեալ
տէրութի, բարեբանեալ յիշատակ, խնդութե մուտք,
անվրէպ շաւիղ, փառաց դուռն, ճշմարտութե ճա-

նապարհ, երկնաձեմ սանդուղք։ Այլ այլ բազմու-
թի բանից գովեստից 11 անհամար կարգաց՝ և տանց
անքաւից, զոր ոչ բերէ բերան երկրածին, և ոչ տա-
նի գործի մարմնեղէն, և ոչ կշռեն իղձք հոգե-
ղէնք։

Գ. Որ քեզ հայր ա̃մ ակն տեսողի՝ ա̃ծդ ամենայ-
նի. Նայեա 'ի պաղատանս հառաչման ձայնի քոյոց
ծառայից, և թէ յաղախնեաց ոք աղաչեսցէ։ Այլ
ընկալ զցօղ ողբերգութե լալոյ արտասուաց աչացս
ցանկասիրի՝ յանարատ ոտս մարդեղութե քոյ՝ քս,
և 12 օրինակաւ խորհրդոյ հերաց կնոջն յանցաւորի՝
զառ քեզ դարձն և զդաւանութի. և համբուրիւ
շրթանցս առ Ճաշակ փրկութե կենացդ հաղորդութե՝
համաշնչապէս զանքակ միութի. և զնոյն գթութի
նորին ողորմութե ընկալեալ 'ի քէն՝ բարերար, 13
գրաւականեսցես զմեծդ պարգև՝ ընդ փոքու հաւա-
տոցս. և 'ի ձեռն գթութե սիրոյ քոյ 14 առ քո անձ-
կալի անուանդ խոստովանեալ ծառայիս, դարձցին
ձմերուանք հողմոյն խստութե 'ի յօդ հանդարտութե.
և մրրկին սաստկութի 'ի սիկ ախորժութե. և կար-
ծիք երկիւղին՝ 'ի մեծ վստահութի. և պատուհաս
պատժոցն՝ յերանութեան պատահումն. և վտանգք
թախծանացն՝ 'ի հոգևոր խրախճանութի. և ալէկո-
ծութի ծփանացն՝ 'ի խոր խաղաղութի. և 15 ղեկացն
թևարկմունք՝ յանքոյթ նաւահանգիստն. և բերք
բեռանցս մեղաց՝ փոխարկեսցին 'ի թոշակ շնորհաց։
Այլ յայսքանեացս ամենից բիւրուց բարութեցս 'ի
քէն եղելոց՝ մեծացին անուն հզօրիդ խնկեալ և խոս-
տովանեալ. ամաչեսցէ բանսարկուն չարեաց՝ հեր-
քեալ և հալածեցեալ. ունայնասցին մուրհակք մե-
ղացս. 16 խզեսցին խաղաքն. որոշեսցին որոգայթքն.
կապտեսցին կապանքն. վանեսցին վիհն. վերասցին
մնասքն. պարսեսցին պատրանքն. Ջրեսցին մեղքն.
պատառեսցին պարտիքն. խորտակեսցին լուծն. 17
քակտեսցին քեղիքն։ Այլ ընդ մուայլ մթութե չա-
րեացն յանցանաց, և դիւացն բանակաց պաշարո-
ղաց՝ 18 արև փառաց քոց ժամանեսցէ՝ կեցուցանել
փրկել և լուսաւորել, յաջմէ և յահեկէ, 'ի դիմաց
և 'ի թիկանց. և եղիցի նշոյլ առաւօտու հոգւոյ

դարնայնոյ ընդ ակնկալութեան սպասողացն քումդ երեւման : Օ՜ի դու ես բարերար առ ամենեսին, և հնարաւոր են քեզ ամենայնք . և ամենեցուն զկեալն կամիս, և զփրկութիւն բաղձաս :

Դ. Ո՛վ ամենապարգեւ ձեռն յոյի քոյ, և առ իս դարձուցիս կարկառմամբ շնորհի աջոյդ քոյ սէր ընտա-կեալ միացեալ, և ոչ հեռացեալ յանձկութե սրտէ տիրոյ սեննկիս. և [19] անեղծական քո նկարագիր՝ նըշխար պանծալի լուսոյ քրիստոնէական փրկաւէտ կոչմանս՝ ընդ իս պահեսցի, միջնորդեալ ընդ քեզ 'ի մատեան յաւիտեան՝ կտակաւդ կենաց՝ հոգւոյդ աւետեաց՝ երկնից յօրինողիդ : Եւ [20] քեզ միայնոյ պատճառիդ, և միոյդ 'ի միոյ պատճառէ, և ունողիդ զպատճառ միոյ, երրեակ անձնաւորութեան և միոյ բնութեանդ վայել են փառք յերկնաւորացն վեհից, 'ի սրբոցն դասուց, յաւիտեանս յաւիտենից. ամէն :

---

(1) 'Ի նախադրութիւնս արծաթաւորաց : Եւ յետ նուաղելոյ 'ի նախ եղեալ արտանասութ և զամէնն կարգաց, այսինքն 'ի հեղութենէ . 'ի խոնարհութէ, 'ի ճշմարտութէ, են. զորս նախ դասեաց քան զերանութիւնս ներհականս : Կամ, յետ նուաղելոյ յառաւելութեց անձանց՝ զորս կոչեաց աղանի, որոշ, և դասն : Ցայտակեաց յետնեալ զոլով առէ, և անձամբ ընդ պատժապարտն համարեալ, հայցեմ զողորմութի ընդ աղօթից ամենեցուն նոցա, կամ ըստ օրինակի աղօթից նոցա : Ընդ նեղուս, ընդ երկչոտն, ընդ ակարս, ընդ արհամարհեալս . ընդ փարագրեալսն, ընդ այնպիսիկ որք նախ մեղօք օտարացան 'ի քէն, և ապա զզջմամբ դարձան :
Ըստ այսմ իմանելն և յաջորդքն մինչև 'ի Այս ես :

(2) Ընդ երկուացեալսն, և ճշմարտեալս : Ընդ տարակուսեալսն նախ 'ի փրկութէ, կամ 'ի պնդութէ հաւատոյ, և ապա աներկբայացեալսն յուսով, կամ հաւատով :

(3) Ընդ աղաչեալսն : 3 օրին . ընդ աղաչաւեալսն, բայց առաջինն պահէ զպխմագրութի բանին . այսինքն ընդ Թծփեալսն և զզաստացեալս, ընդ անզգայեալսն մեղօք կա՛ զգխոութէ : զաղեալս, այլ օրին . զաղեցեալս :

(4) Այս ես պարծիմ : 2 օրին . Արդ ես :

(5) Առ ծառաքարտն նախկի : 4 օրին . նախնի :

(6) Սեղանակցութեան երրորդին : Այժմէն կամաւ հանդերձապատրաստ խոստովանութէ առնեմ, զի մի՛ կարօտացայց երկրորդ անգամ խոստովանելոյ 'ի սեղանական առաւօտին :

(7) 'Ի հասարակ կենաց : Եւ իբր անաստն զեանդարար՝ յերկրաւոր ախտս և 'ի մեղս անկեալ մածեալ կամ : Բայց առ հա 'ի քեզ իբրև 'ի զառաջան կենաց հաստատուն յեցեալ ամրանամ, որ յարմարոյն յետադարձ թըլեալ, այլ յանձնառ բնութեամբ շաղկապեալ, առաւել ես կենաց, ուստի պնդեալ 'ի քեզ՝ լամ և հայցեմ կանգնել անդրէն կենայր, կենալ մշտնջենոյն 'ի վեր ուղղեալ . այսինքն կարացեալ զնմանս առ աստուծոյ, բայց

զայս միայն 'ի վեր ձգեալ կամ, կխոսել եւեթ . եթէ զի եթէ ոչ եմ բոլորա-
վին անմեղ, եղէց գոնէ ապաշխարութեամբ մաքրեալ ։

(8) Մէեյ 'ի հեծուենէ ։ 4 օրին . Մեյթ ։ Աշաքեմ ասէ՝ ցաւագին հայեց-
մամբ 'ի վեր նկատեն առ քեզ՝ որ մերձ ես 'ի հառաչանս մեղաւորաց ։
Զ Լեմ լուսոյս . զնոյն աչս իմ յոր ժողովք լոյսն, որպէս ջուրք 'ի լճակ,
ես արտասուօք լցեալ, աղօթս յուսով հանդերձ մերընծայեմ, եւն ։

(9) Վայելչական ձեռակ ։ Ըստ որում Աճ է անճառ ժառանգութեան մեր,
նոյն և բաժին հոգւոց՝ մի միայն վայելուչ բանաւորքնութեան ըստ սաղմ.
Տէր բաժին ժառանգութեան իմոյ ։

(10) Աղբաւոն բանի ։ Ներգործիչ խօսից, շարժիչ լեզուի ։ կատաղոր ան-
ձին, այսինքն երանեաց կամ մարմնոյ . զի բովանդակ զանազան մարմնոյ
թուէ՝ զդէմս, զգլուխ, զերթուղս, եւն . ուստի անձն ոչ նշանակէ աստ
հոգի ։

(11) Անհամար կարգաց ։ Կարգեալ կամ յարմարական անուանց . և փոխ
անբաւից, ուրոյն կամ որոշեալ բանից . զի աստ փոխ ըստ քերթողաց ի-
մանի ։ Անհամար անուանք ասէ՝ և զանազան կատարելութիւնք պատշա-
ճին քեզ . զոր ոչ կարէ բերան ճառել . և ոչ ձեռն գրել, և ոչ երգք
սրտի չափել ։

(12) Օրինակաւ խորհրդոյ ։ Ընկալ զցօղ արտասուացս՝ որովք լամ և ող-
բամ հաւատովքս՝ յանարատ ոտս մարդացելոյդ վասն իմ . որպէս կինն
յանցաւոր լայր առ ոտս քո, և ըստ նմանութեան հերաց նորա՝ որովք ջըն-
ջէր զոտս քո, և այնու նշանակէր զխոստովանութիւն մեղաց՝ որք 'ի ըղ-
ձայութիւս մեր բուսանեին իբրև զհերս, ընկալ զառ քեզ դարձն իմ ։ Եւ
'ի համբուրելն շրթամբք զճաշակ կենացդ 'ի մէ հաղորդութեան, համաշըն-
չակէս, որով մի շունչ, մի հոգի լինիմ, ընկալ զանփակ միութեան, զանբա-
ժանելի միութիւն իմ ընդ քեզ, ըստ այնմ, որ մերձենայ 'ի տր, մի
հոգի է ։

(13) Գրաւականեացն ։ Իբրև գրաւական հանդերձեալ երանութեանդ
տացես զմեծ պարգեւդ թողութեան ։ կամ հաստատեա զայն փոխանակ
փոքր հաւատոցս ։

(14) Ա[illegible] անձկալի անուամբ ։ Վասն սիրոյն զոր ունիս առ բաղձալի
անունդ Յս՝ խոստովանեալ 'ի ծառայէս քումմէ, կամ ըստ ոմանց՝ առ
սիրելի անունն՝ որով ես ծառայ քո կոչիմ քրիստոնեայ ։ Այդ՝ 'ի փառս
և 'ի զօրութեան այսր անուանն՝ [illegible], ձմեռնային սաստկաշունչ
հողմք փորձութեանց փոխեսցին 'ի [illegible], 'ի յօդ քաղցր և ա-
խորժելի ։ [illegible], շարժմունք և առաջնորդութիւն զեփիւռն
յաջողեսցեն ժամանել անվնաս 'ի նաւահանգիստ ։

(15) Խողխեոցն խողէք ։ 4 օրին . և հին լծ . հողէքն . և նշանակութիւնն
մի է, այսինքն լարեալ որոգայթք, զի հ, և խ, լծորդ տառք են . և աստ
խեէլ գնի վասն խողխեոցն բային, որպէս և յաջորդ հատուածքն նոյնա-
տառ բառիւք ձեւանան, [illegible], [illegible], վա-
նեոյն [illegible] եւն ։

(16) Քակտեսցին [illegible] ։ մի օրին . [illegible] ։ Հին լուծ . [illegible] խմանոց
զձոյլն՝ որ յառագաստին գլուխն է ։ Սակայն 'ի գիրս Փիլոնի և յայլ
տեղիս քննեալ, տեսանի՝ զի այս բառ նշանակէ զղեկ նաւի, կամ ըղ-
գլուխ ղեկին՝ որով այար անգր ուղղի ։ Ուստի աստ եւս իմանալի է, քակ-
տեսցին ղեկք, կամ փայտն՝ որով ղեկն շարժի . այսինքն հրապոյրք սա-
տանայի, նենգութիւնք նորա, ցնորք մտաց, որովք գեն տատանեցուցա-
նէ զնաւ հոգւոյն, և արկանէ 'ի վտանգ կորստեան ։

(17) Աւր[illegible] ։ Փոխանակ խաւարի և մթութեան մեղաց՝ և բանա-
կացն դիւաց՝ լոյս փառաց քոց հասցէ յամենայն կողմանց 'ի լուսաւո-

ընդ և 'ի վերկենալ զիս, և եղիցի ինձ ծառայութիւն առաւօտու՝ հոգւոյ գոր-
նոյնոյ, այսինքն բերող զարթնանալեան օգոյ կամ եղանակի . ընդ հնչելու-
թէ, տալով ինձ զլոյսն՝ որով տեսանիցեմ քո սպասուն քեզ :

(18) Եւ առ ես դարձցես : Ամենայն պարգևաց տուօղ ձեռն մերկացեր, դարձիր և առ իս առաւելութեամբ շնորհացդ իբրև հզօր աջով, որով ընդ իս միանայցես սատանայ հեռանալոյ : և անշփոթական տպ նկարագիր, անեղծանելի կնիք միաւորութեան տպաւորելով, որ նմանութիւն քո է, և միացեալ քրիստոնէական զաւակութեամբ, եղիցի միշտ գրելոյ անուանս 'ի ծափէտն 'ի յաւիտենական զաւակութեան, կոչելով կենաց, հոգևորաց սրբել զօր խօսս մանկութեան կամակ թողեր 'ի վերանալոյ քում, և զնոյն դարձեալ շնորհես 'ի խորհուրդ սբ դրոշմին :

(19) Քեզ միայնոյ պատճառիդ : Զաւարտ աղօթիցս առ սբ երրորդութեան դարձուցանէ . և փոխանակ անուան խոստովանեցիւր անձին՝ զերբևնից յատկութեան կամ զծանօթութեան դնէ . վասն որոյ զհայրն ամ ասէ՝ միայն պատճառ . զի այս է նմա յատուկ՝ լինել պատճառ այլոց անձանց ; և ինքն ոչ պատճառեալ յայլմէ : Եւ միոյդ 'ի միոյ պատճառէ . այսինքն որդւոյդ, որ է միածին, 'ի միոյ անձնէ 'ի հօրէ յառաջ եկեալ . և այս է յատուկ որդւոյ : Եւ ունողիդ պատճառ միոյ . այսինքն հոգւոյդ սրբոյ : զոր ասէ ունել զպատճառ միոյ անձին . իսկ այս պատճառ ոչ կարէ իմանիլ հայրն . զի հայր է պատճառ երկուց անձանց . և զի ունելն միայն զհայր պատճառ՝ ոչ ցուցանէ ինչ յատուկ հոգւոյն . զի որդւոյ ևս պատճառն այդ : Այլ այն պատճառ միոյ անձին՝ իմանի որդին . ուստի ասելն զհոգին՝ ունօղ զպատճառ միոյ անձին՝ հարկաւ նշանակէ պատճառեալ կամ ելեալ 'ի յորդւոյ . և զի որդին զայս պատճառելս 'ի հօրէ ունի, որպէս և զայլն ամ, նմին իսկ զօրութեամբ իմանի՝ ելեալ նաև 'ի հօրէ, և ահա այս լինի յատուկ հոգւոյն սրբոյ . այսինքն ելանել 'ի հօրէ և յորդւոյ : Այս այն բան է՝ որով բացատրեն ամենայն վարդապետք զկարգ ամենայնին ելմանց . զոր և յիշէ Տաթևացին . (Հարցմանց . երես . 105 .) իսկ զի 'ի ներքս յամ՝ հայր պատճառ միայն է . Որդին՝ 'ի պատճառէ, և պատճառ . Հոգին՝ 'ի պատճառէ, և ոչ պատճառ : Եւ զայս բան սբ հայրքն այլովք բացայայտ բառիւք ասացեալ . ընդ որս և մեր Լամբրոնեցին : (Ագաթանգեղ . եր . 153 .) ասելով . * Հայր յանձնէ, Որդի 'ի հօրէ, Հոգին 'ի նոցունց՝ 'ի նոսին : || Ոմանք ըստ հին լուծ . զասելն ունողիդ պատճառ միոյ, այլայլութեամբ գնելով մեկնեն՝ ունողիդ մի պատճառ . այսինքն զհայր : Սակայն թող զայն՝ զի ունելն զհայր միայն պատճառ՝ ոչ լինէր յատուկ հոգւոյն, այլ և զի յասելն զհոգին 'ի հօրէ և յորդւոյ, տակաւին մի պատճառ իմանին հայր և որդի, ունելով զմի և զնոյն յառաջածնիչ զօրութիւն : Թողեալ ասեմ զայսոսիկ, և կալով միայն 'ի վերայ բանիս սբ վարդապետիս, կարծեմ այլաբանեալ են 'ի միմեանց ասելն՝ մի պատճառ, և ասելն՝ պատճառ միոյ . վասն զի առաջինն յայտ առնէ զմիութիւն պատճառին . իսկ երկրորդն՝ զմիութիւն պատճառեցելոյն . մինչ զի 'ի վերայ նոյն իրի մին ճշմարտի, և միւսն սուտ . զոր օրինակ ճշմարիտ է ասելն . Ած է մի պատճառ արարածոց . բայց սուտ է ասելն . է պատճառ միոյ : Եւ ընդ հակառակն՝ Արարածք են պատճառեալք միոյ, բայց ոչ մի պատճառեալ : Այսպէս իմա զանազանութիւնն 'ի մէջ ասելոյն՝ ունողիդ մի պատճառ, և ասելոյն՝ պատճառ միոյ : Տես և 'ի բանին խը . լծ . 51 : Յաղագս բառին՝ պատճառ տես 'ի բանին խը . լծ . 23 :

Մեսրոպին յաւելեալ ներքին հեծութիւն՝ նորին հսկողէ, առ՝ նոյն աղերս ծաղկանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

ԲԱՆ. ԼԳ ։

ա. Արդ՝ զյարմարութիւն պաշտաման բանիս՝ [1] 'ի խայրեաց հոգւոյս քեզ նուիրելոյ՝ օրհնեալ բարեգութ, կցորդելով ընդ խնկազգեստիցն զուգամամնապէս՝ խառնեսցես 'ի յանուշութեն կազմութեն իւղոյն մարիամու՝ կնոջ բարեպաշտի ։ Յոր հաւատարեալ նոյնութեան ընդ երջանիկ պտուղկացն՝ 'ի քէն ընկալելոցն՝ յաւէտահրաշ յարգանօք, պարարեսցես մեծապէս իմովս բանիւ նուաստիւ, ընկալեալ յանհաս և 'ի բարեբանեալդ գլուխ բարձրեալդ, անկշտամբելի 'ի բամբասանաց սաղմոսին, մի օծցէ զտերև ոստոց գագաթան՝ իւղ մեղաւորին ։ Այլ արասցես զօրանալ կրկին յաճախութեան՝ բուրման խոստովանութեան այսր մատենի՝ 'ի բազում ազգեալ, համասփիւռ ամենատարած և աշխարհալիր տանն տեսակաւ, ըստ օրինակի համեմատութեան նոցայն յիշատակի. քանզի դու նոյն տէր զգաստացուցիչ՝ նախնի չարախորհից կանանց մեղաւորաց ։ [2] Որոց առակեալ զմարգարէին կերպարան՝ քումդ ճշմարտատիպ պատկերի յեղանակեցեր, անտուստ առ սուրին անձառ ներգործութեան՝ 'ի յիս վերաբերեալ զծայրագոյն շնորհին կատարումն ։ Ընդ անասնական գարւոյն կերակրոյ, զբազմահամբար պտուղ ցորենոյդ՝ կենացդ հացի. ընդ ապականացու արծաթոյն, զարքունականդ պատկեր. ընդ յիմարարար թմբրութեան գինւոյն, զբաժակդ արեան արարչիդ. ընդ իւղոյն առելոյ 'ի յայրատ կնոջէն հնոյ ժողովրդեանն, զօծումն շնորհին առ իս դարձելոյ. ընդ զերծման գլխաշուք կտաւոյն, զանապականութեան վերարկուն. [3] ապարանջանին պճնութեան, զթուիչս բարեմասնութեան, օրինին և աւետարանաւն՝ հանդերձ գործնական առաքինութեանն. [4] ընդ ունկանն գնդի՝ վայելչականն զարդու, զանստուեր յիշատակ տէրունականդ ձայնի. [5] ընդ քայլս պերճութեան լանջացն, զլոյծնա

Հաւաքք աւանդս ուղղուն քրիստոնակրօն լծոյդ քաղց-
րութեան :

Ե. Բայց զի՞ է յայտնի ինձ պարծել, և ոչ վերըրա-
տին 'ի սոյն պատկառել: Այլ յայլ օրինակ փո-
խեալ զմատեան մաղթանաց այսր ողբերգութեան, որ
ինչ ինձ է յարմարաւոր, ամենայնիւ հատուցից ըղ-
պատիժ պարտուցս իմոց մեղանաց, [6] 'ի մարգարէիցն
տառից բերեալ համառօտս՝ 'ի սոյն յարկ մուծից
սաստիկ դատախազ. ընդ ողբոց նոցին լծակցեալ,
քան թէ ընդ բերկրութեան նոցա պարել. յորս հառա-
չանս, ձայնս հեծութեան, բողոքս բարկութեան, նախա-
տինս խորտակման, լալումն կարևոր: Այլ մեծիդ-
ա̃յ գթութեան ամենաժամանն՝ կանուխ աղդեցաւ յիմ
յուսատրութեան. առ որս՝ զդջմունս, խոստովանու-
թիս, աւետիս, պարգևս, լուսոյ երևմունս, խրա-
խոյսս ա̃ծայինս, փառաց ժառանգութիս, հրաշից
յայտնութիս, սքանչելեաց տեսութիս: Յորոց ոմանք
յոյս ընձեռեն, և ոմանք վհատութիս բազումս մա-
տուցանեն. յորս ես կամաւ կործանեալ՝ կորստեանն
վիճակեցայ: Ոչ ի եթէ [7] զգեստ ա̃յ զմարագուրին
պատրուակ առաց եզեկիէլ, յորում արար ժողո-
վուրդն կուռս կարկատունս, որով պտունկել առէ՝ 'ի
նոսա. իսկ ո՞րքան պատիժ անմաքրութեանս եղիցի՝ զան
զգեցողիս ներքոյ և արտաքոյ: Ոարմանամ, թէ
զիա՞րդ ոչ կիզում. հիանամ, թէ ընդ՞ ոչ այրիմ.
ափշիմ, թէ որպէս չյափշտակիմ՝ տանջեալ, լքեալ,
չարչարեալ, ջախեալ, մանրեալ, խորտակեալ, կըտ-
րեալ, բաժանեալ [8] 'ի յօրինակէ ժանեաց կորուս-
չին, ըստ գրոյն: Այլ այս միայն է պահեցեալ ինձ
նշոյլ յիշատակի՝ փրկութեան յուսոյ, զի քնեան աւե-
տարանն՝ կեանս է ամենեւին, [9] 'ի կերպարանաց պատ-
կերի բանին ծանուցեալ: Որով առ մեղանսն դարձն.
առ պարտիսն՝ շնորհն. առ եղծումն՝ նորոգութիւն.
առ անօրէնութիւն՝ քաւութիւն. առ վէրն՝ բժշկու-
թիւն. առ վտանգն՝ անդորրութիւն. առ պատիժն՝
ներումն. [10] առ պատերազմն՝ հանդարտանալն. [11]
առ հուրն՝ անձրևն. առ պատուհասն՝ պարգևն. [12]
առ անկեալութիւն սատակմանն՝ ձիրն. [13] առ գործա-
րան մահուն՝ կենացն ազատութիւն:

Գ. Եւ զի՞նչ է ինձ[14] զայսքանեաց յիշմանց 'ի թիւ-
արկանել, և ոչ զանձառելիսն ստանոր դասել։
Յիշատակաւ հօրն բարձրելոյ՝ յորդին կցորդութե.
յանուն միածնին՝ առ հայրն ընտանութիւն. սոցին
անկարկութբ՝ ընդ հոգւոյն հաղորդութե։ Խաչին
փրկանք. բանին սփոփումն.[15] բարւոք վարձ կամացն՝
առ կշռուն գիտողին. աւազանն կենդանարար՝ հաւ-
տութեն միջնորդունք։ Եւ այլք ամենայնք անթիւք
բարիք 'ի բարերարէն բարդեցեալք,[16] ազատք 'ի
հարկէ, արձակք 'ի լծոյ, իշխանականք՝ և ոչ իշխե-
ցեալք։ Այսոքիկ են՝ որ ինձ 'ի մէջ դառնութեա
մահու՝ կեանս անտարակոյս աւետարանեն. քանզի
եթէ ոչ զայսոսիկ ունէի, կանխաւ արդեօք կորու-
սեալ էի իսկ և իսկ ըստ բանի երգողին։[17] Ոչ փոքր-
կութբ որդւոյ՝ զհայր փառաւորեմ, ոչ նուաստութբ
հոգւոյ՝ զորդի նախատասեմ. համափառ ունիմ զե-
րեսեան՝ և նոյն արարչութբ։ Քանզի և 'ի դէմս
հոգւոյն սբյ՝ այս են աղաչանք, նախընծայ սկզբան
պատարագին՝ յորում գառնդ երկնաւոր զենանի,
զայս աղօթեցի։

Աղօթք, որ նախ քան զպատարագն[18] մատուցանել։

Դ. Ամենակալ բարերար մարդասէր ած բոլորից,
յօրինող երևութից և աներևութից, փր-
կող և հաստատող, խնամող և խաղաղարար, հօր
հզօր հոգւի, հայցեմք բազկատարած մաղթանաց գոչ-
մամբ հեծութե յանդիման եղեալ քեզ ահաւորիդ։
Մատչիմք մեծաւ դողութբ սաստիկ երկիւղիւ՝ մա-
տուցանել նախ զբանականս զայս պատարագ՝ քում
անզննին զօրութեդ, իբր աթոռակցի փառակցի և
արարչակցի՝ հայրենի անկապուտ պատուոյդ, և քննո-
ղի ծածկութե խորոց խորհրդոց ամենակատար կա-
մաց հօրդ եմմանուէլի՝ զքեզ առաքչի, փրկչի և կեն-
դանատուի և արարչի ամենայնի։[19] Ի ձեռն քո ծա-
նուցաւ մեզ երրեակ անձնաւորութիւն միասնական
ածութեդ, յորոց մի և դու համաչափ անհաս։ Քեւ,
և 'ի ձեռն քո առաջինքն նահապետական տոհմին

շառաւիղք՝ տեսանօղք անուանակոչեալք, զան-
ցեալսն և զգալոցսն, զեղեալսն և զոչ գոյացեալսն
20 անստուերաբար բարբառով բանի վերապատմե-
ցին։ Ոգի ա̃յ քարոզեալ զքեզ մովսեսի, 21 որ 'ի
գնալն քո 'ի վերայ ջրոյն՝ անպարագիծ զօրութիւն,
ահեղ շրջարկութե̃ տածողականաւ՝ թևապարփակ
պաշտպանողօրէն՝ գթասիրեալ 'ի ծնունդս նորոգս՝
զաւազանին խորհուրդ ծանուցեր։ 22 Յոր կերպա-
րան օրինակութե̃ նախ քան զկառուցանել զլոյծ-
մածուած վերջնում վարագուրիդ՝ յօրինեցեր կա-
րող տիրապէս զբովանդակ բնութիւս ամենից բնա-
ւից բոլորից գոյից ամենայն էից՝ յանէից։ Որ և ստեղ-
ծանելն 23 'ի նորոգումն յարութե̃ ամենայն եղեալքս
առ 'ի քէն յայնմ ժամանակի, որ է օր վերջին այսմ
կենցաղի, և օր առաջին՝ երկրին կենդանեաց։ 24
Որ եզ հնազանդեցաւ միութե̃ կամացն որպէս հօրն
իւրում, ազգակիցն քո՝ էակիցն հօր՝ անդրանիկն որ-
դի՝ մերովս կերպիւ. զքեզ աւետարանեաց ճշմարիտ
ա̃ծ՝ հաւասար և համագոյ հօր իւր հզօրի, և զա-
'ի քեզ հայհոյութե̃ն անքաւելի քարոզեաց, և 25 իբր
զա̃ծամարտիչն զքո հեստելոցն՝ չարաբանական բե-
րանս կարկեաց, և 26 զիւրն շնորհեաց՝ արդարն և
անարատն՝ գտիչն ամենայնի. որ վասն մեղաց մերոց
մատնեցաւ. և յարեաւ վասն զմեզ արդարացուցա-
նելոյ։ Սմա փառք 'ի ձեռն քո, և քեզ բարեբանու-
թի̃ ընդ հօր ամենակալի, յաւիտեանս յաւիտենից.
ամէն։

Պարզեալ կրկնեսցի 'ի նոյն կարգ բանի, 27 մինչև վարդապետութե̃
ընտրոյ հրաշալեօք յայտնեսցի ասացեալ, աւետարանել վերստին
շնորհին խաղաղութե̃։

Է. Աղաչեմք և աղերսեմք 28 արտասուալից հա-
ռաչմամբ յամենայն անձնէ՝ 29 զփառաւո-
րեալ արարչութիւդ՝ անեղծ և անստեղծ՝ անժամա-
նակ հոգւոյդ գթածի. 30 որ բարեխօսդ ես վասն մեր
յանմռունչ հեծութիւս առ ողորմածդ հայր. որ ըզ-
սուրբսն պահես, և զմեղուցեալսն մաքրես՝ և տա-
ճարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց բարձ

րեալդ հօր ։ Արդ՝ ազատեա զմեզ յամ անմաքուր գործոց, որ ոչ է հաճոյ քում բնակութե. և մի շիջցին առ 'ի մէնջ լուսոյդ շնորհաց փայլմունք՝ 'ի տեսականացս աչաց իմաստից. վասն զի [31] զքեզ ուսաք միանալ 'ի մեզ 'ի ձեռն աղօթից, և ընտիր վարուց խնկելոց ։ Այլ քանզի մինդ յերրորդութեդ պատարագի, և միւսդ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ. իսկ դու ընկալցես զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օթեւանս պատուականս [32] ամենայն պատրաստութբ 'ի վայելումն ճաշակման երկնաւոր գառինդ, առանց սպառնոց դատապարտութե ընդունել զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութե ։ Այլ հալեսցէ 'ի հրոյս յայսմանէ գայթագղութիս մեր, [33] որպէս մարգարէին կենդանախարոյկ կայծակամբն 'ի ձեռն ունելեացն մատուցման. զի յամենայնի քոյդ քարոզեսցի գթութի, որպէս որդւոյդ ա՜յ՝ հօր քաղցրութի. որ զանառակ որդին մերձեցոյց 'ի հայրենի ժառանգութին, և զպոռնիկսն յառաջեցոյց յերկնային արքայութին՝ արդարոցն երանութեան ։ Այս այն և ես մի եմ 'ի նոցանէ. և զիս ընկալ ընդ նոսին իբր մարդասիրութե կարօտեալ մեծի, շնորհօք քո ապրեալ, զարեամբ քո ստացեալս ։ Որ յայսմ ամենայնի՝ յամենայնի ծանիցի քո ա͞ծութիդ՝ ընդ հօրփառաւորեալ համապատուաբար 'ի մի կամս, և 'ի մի իշխանութի գովութե. զի քո է գթութի, և կարողութի, և մարդասիրութի, զօրութի, և փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

---

(1) 'Ի խոյրեաց հոգւոյս ։ 'Ի պղտոյ հոգւոյս ։ Զայօրինուած զղջական բանիցս ասէ՝ զոր յղեհից հոգւոյս քեզ նուիրեցի, ըստ զանազանութեան, համառօտաբար համարեալ ըստ նուէրս խնդրուածոցն, խառնեցեալ յանուշ իւղն ծաղկանց հնոց բարեպաշտի, մարմնոյ կղէոփայ, կամ մարգարէնացւոյն, որ յառաջին մեղաւոր գոլով յետոյ զքեզ պաշտէր ։ Ցոյց եւ առաքեալ, որով հաւատարեալ և ես նոյնոսէն, նովին նմանութեամբ ընդ երջանիկ դառնիցոյն, մարդադեղենացւոյն և շնացեալ կնոջն, որք զղջմամբն երջանիկք եղեն ։ Իբր զի որպէս զնոցա անուշից օծումն հաճութեամբ ընկալար, նոյնպէս իմոյս նուաստ աղօթիւք զուարճասցիս. և ոչ յանդիմանեսցես բանիւ ստղմոսին, թէ իւղ մեղաւորի մի օծցէ զգլուխ ոչ, զհերս գլխոյ իմոյ ։ Այլ արասցես և զիմ աղօթից բուրումն ընդունելի և տարածիլ առ ամենեսին, աշխարհահէր, լցուցանելով զաշխարհ, փառն փեսայի. որպէս տունն՝ որ օրինակ էր աշխարհի, եւ եղեւ 'ի հոտոյ

խաղոյն . (յովհան . ժԶ . 3 :) և որպէս զնոցա յիշատակին հրամայեցեր քարոզել ընդ աշխարհ , նոյնպէս և զիմ խոստովանութիւն արասցես : Քանզի դու նոյն Տէր . վասն զի դու նոյն աէր ես . որ զգաստացուցեր և յորդորեցեր զառաքեալսն չարչարօք կանխայն՝ զԹամար , զգախակ , և զայլսն . վասն որոյ և զիս կարող ես զգաստացուցանել , և 'ի յորդորել տանել զխոստովանութիւնս իմ :

(2) Որոց առաջնեալ սմբաթարերէն կերպարան : Այնց զգլացեալ մեղաւոր կանանց օրինակ եասուր զուխտոյ մարգարէին զգործն , որ հրամանաւն ոյ էառ խոր կին զաւանկին . (Ովս . 2 .) և զայլ միւս շնացեալ կին 'ի վարձու կալաւ , զի մի՛ շնասցի . (Գ . 1 . 2 :) մի օրինակ զնէ՝ սմբաթա-րերէդ . Թերևս խմանալով և զեզեկիել , զորոյ զբանսն առորև բերէ : Քանզի Ճշմարտապէս . զայն գործս ովսեայ՝ քեզ Ճշգրիտ պատկեր և օրինակ կարգեցեր . մխթարար առ սոսին : զի 'ի շնորհացն՝ որ առ այն զգլա-ցեալ կանայսն եղեն , զծայրագոյն կատարումն շնորհին առ իս ցուցեր . Երբ զի դու անձամբ միաւորեցար ընդ պառնկացեալ բնութեան մարդ-կան առ 'ի սրբել զնա . որպէս ովսէէ ընդ պառնիկն՝ առ 'ի ողջախոհ առնել զնա . և զարձելոցն 'ի շնութէ ոչ եասուր զարծ՝ անասնական կե-րակուր , և արծաթ աղախնացու , և գինի արբեցուցիչ , որպէս եա ովսէէ . (Գ . 2 . 3 .) այլ եասուր զմարմին քո և զարիւն , և զինիք շնոր-հաց քոց : Ընդ խաղոյն առելոյ . փոխանակ խաղոյն՝ որով օծար 'ի մե-ղաւոր կնոջէն , որ օրինակ էր հնոյ ժողովրդեան , եասուր զօծումն միրը-տութեն : Կամ հայի առ բանն եզեկիելի , (ժԶ . 9 .) երբև թէ փոխա-նակ խաղոյն՝ զոր էառ մեղաւոր կինն՝ հին ժողովուրդն : Ընդ գնծծման , փոխանակ մերկանալոյ մեղաւոր կնոջն՝ զփշխաղուե , զծածկոյթ գլխոյն զկտաւն , զի կարասցէ հերովքն լուանել զոտս քո , եասուր զանապականու-թեն ծածկոյթն : Կամ հայելով 'ի բանն եզեկիելի . (անդ . 7 .) փո-խանակ մերկութեն գլխոյն մազովք լցելոյ՝ եղեր պսակ պարծանաց 'ի գլուխ նորա : (անդ . 12 :)

(3) Ապարանջանին : Ասաի 'ի վայր հայի 'ի բանս եզեկիելի . (անդ . 11 . 12 .) փոխանակ զարդարանաց ապարանջանին , (ակնէզեկ .) որ դնի 'ի գաստակ մարդոյ , եասուր զնուիրս բարեձևութեն . զշարժմունս բարի գործոց՝ հին օրինօքն , աւետարանաւն , և գործնական առաքինութիւնքն . ձեռք մարդոյ՝ երբև Թեւք , և գործք ձեռաց՝ երբև Թռիչք են :

(4) Ընդ ուտնանն գնդի : 2 օրին . ընդ ուտնիւանն . փոխանակ գնդի՝ որ է օղ ականջաց , եասուր զանմոռաց յիշատակ ամծային բանից քոց :

(5) Ընդ փայլու : 2 օրին . եւ հին լծ . ընդ փառու . (ոյ կէրաանլլիս , կամ լէօֆ .) փոխանակ այսր՝ որ է զարդ լանջաց կամ պարանոցի՝ եասուր զպայծառապատիկ խրատս առաքինութեան 'ի բառնալ զքաղցր լուծդ :

(6) 'Ի մարգարէիցն փառեց : 'Ի գրութեց մարգարէիցն յիշատակեալ համառօտ , համառօտիւ , կամ զհամառօտ բանս , 'ի սոյն յարկ , 'ի սոյն Ճառ աղօթից մեծից՝ երբև յանդիմանիչ ինձ . որպէս նոցին հաղորդե-լով , քան թէ ուրախութենն ընդ աւետիսն ոյ : յորս , յորս նոցա աւե-տանեաւ հաւասչանս , են : Բայց 'ի վերայ այնր ամենայնի՝ մեծիդ ոյ գթութէ անմնածածան , որ յամ երս , և 'ի տեղիս , և 'ի ժամանակս , և առ ամենեսեան ժամանէ , կանխաւ ծանուցաւ բանիւք մարգարէից , և օրի-նակօք զգլացեալ մեղաւորաց , առ 'ի աւլինձ յոյս փրկութեան : Ա-րս , այսինքն որովք աղդեցեր զգձմունս , են : յորոց ոմանք , զգձմունքն , խոստովանութիք , աւետիքն . են , յոյս առն ինձ . և ոմանք , երևմունքն , աջանչելիքն , կամ աստուածատուութիքն առ ընկալեալ պարգևս ոյ , մեծա-տութիս առն ինձ :

(7) Զգեստ ոյ : Հայի 'ի բանն եզեկ . (ժԶ . 16 :) ըստ առորև Թարգ-

մանութեն, յորում ասի. * Աւեր 'ի հանդերձից իմոց. || զոր նա վար-դապետս մեկնէ 'ի վերայ վարդապետի առաջնոյն, կամ վարդապետի արբութեցն, որով ած իբրև զգեստով ծածկեալ լինէր: Եւ եթէ առէ՝ զայն վարդապետը կամ ընդ այնու վարդապետաւ ամենևին խորհրդելոցն կուսաս կարկառումս, կամ 'ի հանդերձս կնոց, այսու պատմելով առի. ապա քանի պատիժ կայցէ անմաքրութեան իմոյ, զոր ըղձեցողիս Ներսոյ, 'ի ձեռն մկրտութեն. և որպէս, 'ի ձեռն հաղորդութեն. կամ ներքոյ՝ ուխտիս կրօնաւորութեն, և արտաքոյ՝ կրօնաւորական զգեստովս:

(8) 'Ի յօրինակէ ծանեաց նորատեւին: 'Ի նմանութե ծանեաց կամ յօրինակական ծանեաց աստուածայի, որք են բանութիքն նորա. ըստ Գրոյն. (՟Ե. օրին. ՟ԼԲ. 24.) * Ծանիս զազանեաց ատամեցից: ||

(9) 'Ի հերպարանաց պտղներ: 'Ի համզամանաց կամ յանուանէ բանիս աւետարան. ճանաչի՝ թէ քի աւետարանն իմն կեանք է. որով առ ծ-ղանան՝ պտղյն. որով աւետարանաւ խոստացեալ լինի 'ի մեղանչելոյն դարձն, ևն:

(10) Առ պարսպաւն. որով ցուցանի յետ պատերազմին զինուց կամ աշխարհի՝ համբերութեն լինել: կամ զաղաղակելն 'ի պատերազմէ և 'ի հակառակութէ. որպէս 'ի գիշերի մարտնչելն՝ յորժամ աղօթս պատերազմիլ կամէր, քն համբարառնեցոյց:

(11) Առ հազար վահան: Առ հազարն փորձանաց՝ անձին այցելութեն: կամ փոխանակ հրոյ՝ անձին. որպէս որդիքն զեբեդեայ հուր յերկ-նից իջուցանել առեին, և քս զանձին ներողութեն իշոյց:

(12) Առ ամենայն նետք զօրաւորացն՝ յետս: Որպէս յանմահացն զքս՝ փոխա-նակ սատանայականն, որում արժանի էին ընդունողքն, ձեռն բժշկութե եցոյց յականջն մաղքոսի:

(13) Առ գործոց մահուն. որպէս աւազակին 'ի խաչի անդ զարքայու-թիւնն խոստացաւ:

(14) Զայծեմանեաց յիշման: Ընդէ՞ր զմանաւանդ հոգևորական բարիսն ոչ յիշատակելով 'ի թիւ բերեմ. և ոչ զայլ անճառելիսն՝ զգերազանցս և զաստուածայինս զնեմ աստանօր. որք են, յիշատակեա հօրն, հայր մեր կոչե-լովն զած՝ կցորդ լինել որդւոյն միածնի: յանուն մկրտի, որդի ոչ կամ քրիստոնեայ անուանելովն մեր՝ առ հայրն ընտանի գոլ: առ որն օրհնութե, համձութե հօր և որդւոյն՝ մասնակից գոլ հոգւոյն: Եւ 'ի վերայ այսոցիկ՝ խաչին փրկագործութեն. բանին օրհնութե, աւետարանին և ամենայն ածային բանից ազատանքն և մխիթարութեն. ևն:

(15) Բարւոք վարք: Մի յանճառելի գործոցն ոչ այս է, զի բարի հա-տուցանե առնէ յօժարութե կամաց, թէ և գործով ոչ կարիցէ կա-տարել, կամ գործն փոքր իցէ: կամ թէ այնպիսի կամաց վարձս տայ՝ որ արդէն իսկ պատրաստական էր ոչ. և զայս առնէ ած ըստ զառամեան իւ-րոյ, որ գիտէ զսիրտս:

(16) Աղօթք 'ի հարկէ: Անճառելի պարգևքն ոչ ազատութե շնորհեին մեզ, և ոչ բանադատի ած 'ի տալ, կամ ընդունողքն՝ յառնուլ: արժանի 'ի լծոյ. առաւք 'ի լծոյ պարտեաց. զի այն բարիք՝ ոչ ընդհանուր մարդ-կութեան, և ոչ իւրաքանչիւրոց առանձինն պատրաստականք են: Իշխանա-կանք. գերբնականք են, գերագոյն քան զպայման բնութե. կամ, իշ-խանութե առաւելք երբ և զիարդ և ում կամի. և ոչ իշխեցելոյ. 'ի ներքոյ կարողութեան բնութե, կամ ժամանակի, և տեղւոյ և եղա-նակի:

(17) Ո՛ւ յոգնութե: Զայս յաւելու 'ի նախադրեալ բանսն, իբր ան-ցումն ինչ, կամ յառաջադրան վասն յաջորդ աղօթիցն՝ որ առ հայրն է. որպէս թէ ասել. յայլ աղօթս առ հայր աղօթելով. և կամ առ

տաղին , մինչ եթէ զտաղին՝ կոչեր առ հայրն զնեմ , և կամ՝ առ հօգին ոչ աղօթելով , զնա նուաստ քան զորդի համարիմ . այլ զերկուսեանն հաւասարապէս զաւանանեմ : Քանզի ս 'ի դէմս հոգւոյն , 'ի նշանակ հաւասարութեն հօգւոյն ը հօր և որդւոյն՝ զյաւելորդ աղաչանս մատուցանեմ : Նախընծայ սիշման գործարանին : Ոմանք իմանան , թէ որ վարդապետս 'ի քահանայանալն՝ առաջին ընծայ մատուցեալ լիցէ զյաւելորդ աղօթս . և զայս մանկաբերին յանեկոյն՝ աղօթեցի : Բայց այդ երկբայելի է . քանզի և 'ի յաւելորդ բանին ը կ . 1 . և 2 . վասն աղօթիցն և զաւանութեանն ասէ . նուիրեցի , վերտածեցի . գուցէ ասիցեն՝ թէ և զայսպիսի յաւելորդին ասացեալ էր . բայց չունին ցուցանել : Այլ հաստատուն իմաստ բանիս այն է , թէ առաջին նուէր կամ պատարագութեան սկզբան պատարագին զայս աղօթս յօրինեցի . որպէս և յառաջ երթեալ ասէ . մատչիմք մատուցանել նախ զքահանայս զայս պատարագ : Զոր և հայրապետք մերկս ընկալեալ կարգեցին 'ի պատարագի աղօթսն . որպէս և այժմ ներսէս լամբրոնացի բացատրէ զայն ը այլ աղօթս . և ասէ . * Զայս անկեալ 'ի վերայ երեսաց մատուցանէ , զայն յայս առնելով , թէ մինչ դեռ չև եմք 'ի քէն զօրացեալ , կարապետուխ եմ և անհամարձակ ընդ մեծ խօսելոյ .... վասն այսորիկ 'ի վերայ երեսաց անկեալ , զայս աղաչանք անմռունչ ձայնիւ 'ի սկզբանէ մինչև 'ի կատար աւարտէ : || Որպէս և ցուցանէ Լամբրօնացին , թէ քահանայն ասէ զաղօթս . թէպէտ այժմ եպիսկոպոսաց միայն պահեալ է ասել 'ի հանդիսի պատարագին . իսկ եթէ քահանայն եւս կամիցի ասել առանձինն , կարէ՛ գովելի է :

(18) Մատուցանի : այլ օրին . մատչի :

(19) 'Ի յետոյ քո ծանուցաւ : Զխորհուրդ Երրորդութեան հօգին յայտնեաց առաքելոց , և նոքօք աշխարհի , ասէ Լամբրօնացին : կամ , զի երևեցաւ հօգւոյն աղաւնակերպ 'ի յորդանան , և ամպաձև 'ի Թաբօր՝ ծանուցաւ մեզ երրեակ անձնաւորութիւն :

(20) Անփոփոխելաբար բարբառով : Մարգարէքն պարզ բանիւ և առանց մանուածոց գրեցին զյայտնութիւնն , թէպէտ և բազում զաղտնութիւնս իմաստից և խորհրդոց գտանեն 'ի նոսա :

(21) 'Ի գնալն քո 'ի վերայ ջրոց : Զբան մովսէսի որ հոգւոյ իմանան 'ի վերայ հոգւոյն այ : Իսկ այլ մեկնիչք ըստ ճշտին իմանան զհողմ ուժգին՝ ոչ 'ի բնական պատճառաց , այլ 'ի զօրութենէ այ զարթուցեալ 'ի զանգուածն ջուրց , որ առ 'ի միասն՝ օրինակէր զհոգին այ : Թեռստափրիսէ դորշփորէն : Թուի ձևացուցանել զբանս ըստ եբրայական բնագրին . որ փոխանակ բառին շրջէր , ասէ՝ ծնածէր , կամ ծնաւրէր , որպէս հաւ 'ի թռուցանել զձագս իւր : Այսպէս և հոգին այ գթասիրեալ 'ի ծնունդս աւազանին :

(22) Յոր կերպարան : Յօրինակ ծնանելոյ զորդիս աւազանաւ մկրտութեան , յօրինեցեր 'ի չգոյէ զարմանալի բնութիւնս արարածոց , յորոց գոյացան բոլոր զգալիքս . նախ քան զխաւարայինն , նախ քան զլուսաւորել ջուրցն , և 'ի վեր առնուլ զմասն ինչ նոցա . որովք շինեցեր զերծոց ծածուած , ըղձեռւոց թանձրութիւն վերջնոյ վարագուրիւ : Ըստ կարծեաց բազում հարց , որք համարին՝ թէ վերացուցեալ ջուրքն մածոյց մեծ զբուն առաջոլոյ երկնիս , վերջին վարագուրաւ իմանի նոյն առաջոլոց երկնիցն . որ 'ի սորէ յերկրէ նկատելով , համարի իբրև ծածկոյթ կամ անշրջափակ առաքոյութեն , կամ այ : Իսկ ըստ կարծեաց բազում մեկնչաց՝ որք զվերացուցեալ ջուրսն ասեն զետեղեալ 'ի կամարն օդոյ՝ զոլորշիս և ամպովք , վերջին վարագուրաւն իմանի այս ջերմիշն կամար . և ասէ վերջին՝ նկատելով 'ի վերուստ յերկնից : Այլ՝ ասէ որ վարդապետս , թէ առեալ ծուխն արարածոց նախ քան զբաժանումն և զվերացումն ջուրց՝ նշանա-

կէր զհոգևոր ծնունդս առաքելոցն . մի զի որպէս ընդ ջրովքն ծածկեալ կային թանձր տարերք, և սքանչելիք տարրականն բաղադրելոց, նոյնպէս ընդ ջրով միրոունթե՝ հոգևոր ծնունդքն : Երկրորդ, զի որպէս կարաց հոգին Աստուծանել զայն բնութիւնս յոչնչէ, այսպէս և զհոգևոր ծնունդս՝ յանծնունդ ջրոյն :

(23) 'Ի նորոգումն յարութեան : Հայր 'ի բանն (սաղմ. ձգ. 30.) * Առաքես զհոգի քո . և նորոգես զերեսս երկրի : || քև նորոգելն առէ՝ յարութեամ ելանելոյ . մարդիկ՝ յառնելով, իսկ երկինք և երկիր մաքրելով, 'ի վերջին աւուր կենդանութեան, որ է օր առաջին Երկրորդ կենդանութեան . զի անման յարուցելոց աշխարհն՝ յայնմ աւուր սկսանի . և այնպէս է օր առաջին, զի ոչ ունի զերկրորդ և զերրորդ . այլ միշտ մնայ օր մի :

(24) Քեզ հնազանդեցաւ : Որդին ըստ քեզ հնազանդ եղև, մասնէ կամացն, միաբանութեամբ կամացն՝ այնպէս որպէս հօրն իւրում, Ներսէս լերգիս . զայս հնազանդութիւն առաւ մերով բնութեամբ . զի յատուկ հնազանդութեան պահանջէ զստորադասութիւն բնութեան և կամաց, և զներքոյ անկումն միոյն առ միւսն . իսկ որդին ըստ աստուածութեան ունելով զնոյն բնութիւն և զնոյն կամս ընդ հօրն, անհնարին է ասել ըստ աստուածային կամացն հնազանդեալ՝ հօրն, բայց եթէ կարի անյարմարապէս՝ խմացեալ զսէր հաճութեան 'ի նոյն գործ : Զայս առեալ այսպէս պարտ է որոշել կերպիւ, և ոչ յարել 'ի յաջորդն առնելով . Ներսէս լերգիս զհետ առնելով պատասխանեաց . զի ոչ միայն յարմարութիւն բանին զառաջինն պահանջէ, այլև լաւ օրինակն այնպէս զատանէ, և նոյնպէս զնէ և մեկնէ Լամբրոնացին 'ի պատարագի անդ : Իսկ ասացելոց ասել զորդի առ հոգին՝ նշանակէ բնութենակից, կամ զի երկոքեան 'ի նոյն հօրէ յառաջ գան, թէպէտ այլ և այլ օրինակաւ :

(25) Իբր զամբարտաւանս զօր հեստեցոյց : 2 օրին . Իբր զամբարտաւանս զի քեզ հեստեցոյց, կամ հեստեցուցոյց . իսկ յօրինակ Լամբրոնացւոյն, զի քեն : Զչարախօս բերանս ապստամբելոցն 'ի քէն՝ պապանձեցոյց բաղում բանիւք, ցուցանելով զնոսա ստամբակս լինել . զի ընդդէմ յայտնի սքանչելեաց էր հակառակէին, և սատանայի զօրութեան ընծայէին : (մատթ. ժբ. 25.)

(26) Զխուրն շնորհեաց : Ոմանք մեկնեն՝ զեւր բարւոյն շնորհեաց . բայց այս օտար է 'ի կարգէ բանին . այլ խմանի, թէ զառ 'ի քեզ հայհոյութիւնն անթողլի ասաց, իսկ զառ իւրն հայհոյութիւն՝ ներեաց :

(27) Մինչև վերահասութեան լուսոյ : Յօրինակն Լամբրոնացւոյն գնի . մինչև վերահասելութեան լուսոյն հրաշալեաց տեսանել յայտնեցոյ : Խմաստ բանիս է . դարձեալ կրկնեաց զկարգ առօթիցս, որ մինչև ցարդ օրհնութիւն էր և բարեբանութիւն, փոխելով զայն 'ի խնդրուածս . մինչև ծագումն լուսոյ հոգւոյն մեզ աղգեսցի 'ի միտս իմ որպէս զգալի լոյսն յառաւօտուն ժամու : Կամ ըստ Լամբրոնացւոյն, մինչև լոյս զօրութեանդ՝ զոր 'ի վեր բազմական յինէն տեսանեմ, առ իս հեղեսցի : Որով առաքելութեանսցի 'ի հաւ գիւ կրկին խաղաղութիւն՝ զոր եա քո աշակերտացն 'ի վերնատանն, և տայս շնորհեաց նոցա փչմամբ զհոգին : (յովհան. ի. 19. 20. 21. 22 :) Իսկ եթէ վերահասութեն գնիցի, խմանի . մինչև համարձակութիւն տացի լուսոյ մտացս . զի որպէս աչք համարձակ տեսանեն 'ի պայծառ լոյսն, այսպէս միտքն 'ի յայտնիլ հոգւոյն մեզ :

(28) Արփաուսանիս : մի օրին . արփօրանիս :

(29) Զխաղաղութեան արարչութեամբ : այսինքն արարիչդ : մի օրին . զխաղաղարար : յօրինակ Լամբրոնացւոյն, և յայլ, զխաղաղարարն :

(30) Որ բարեխօսդ ես : Պատճառաբար խմանի այս, այսինքն որ տեսուցանես բարիոք աղօթել առ հայր՝ ըղձիւք սրտին, որ անմռունչ հեծութեամբ առնի : Այսպէս բացատրէ նա ինքն Մեծ վարդապետն յառաջասացեալ կողոց . (երես 19 .) * 'Ի հեծութեամբ աղօթելն քո՝ հոգին Մեծ աւանդէ

քեզ զզանս օրհնութեան՝ անպատրաստ անձնաւանդ : || Իսկ յաւելն՝ առ սուրբ մայրն հայր, զխորհրդականս ոչ զնոյն փոխանակ առաջական զերանութեան, որպէս թէ՝ առ հայր քոյ . այլ փոխանակ ցուցականի՝ որ զմերձաւորն բողոքն ցուցանէ, որպէս թէ՝ առ այդ հայրդ . յայս միտս բազում ուրեք գտնէ մի վարդապետս . որպէս և աստ սորին . Երեքեալդ հօր . . . . մինչ յերրորդութեան, և մնոյ : Որպէս [illegible] . 2 . առ նոյն հոգին խօսելով զնէ . որդւոյդ միածնի . այսինքն այդ որդւոյ՝ որ քեզ մերձ է, են :

(31) Զինեալ առաջ մտանել : 'Ի բազում բանից մի գրոց ուսոյք միանալ ընդ քեզ աղօթիւք և մաքուր վարուք . որպէս և այն . * Որ մերձենայ 'ի տէր, մի հոգի են : || (Ա . կորնթ . Զ . 17 :)

(32) Անենայն պատճառաւորութեան : մի օրէն . անենապատճառաւորութեան :

(33) Որպէս ծածկաբանին : Որպէս անմարմնութիւն չքնաշխարհ նախապէս կենդանութեան կոյծական, կայծականք՝ որ զկենդանի չքնաշխարհ նորա այսպէս . կամ այնպէս այսպէս՝ որ զկենդանութիւն չքնաշխարհ պահեաց : Նոյնպէս սխալումն մեր 'ի միտս՝ հաւնեալ սրբեացի հրով մի սերովբէ նոյն, կամ մաքրութեան քոյ : Այս այս : Արդարև մի եմ և ես 'ի յանցաւորաց անտի, և առաւել քան զնոսա կարօտեալ ողորմութեան միծի . ընկալ և զիս . զի յայսմ ամենայնի, յայս ամենայն պարգևս, յամենայնի, յամենայն ժամ, միշտ, կամ բովանդակապէս հաշտեալ փառաւորեացի քո մեծութիւնք են :

Մերստին յաւելուած երկէին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն տէրս մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

ԲԱՆ. ԼԴ.

Ա. Արդ՝ [1] առ այսոքիկ թշուառացեալ շնչոյս իմոյ իղձք, և առ քեզ դաւանութիւք յարմարականք, որ բովանդակես բանիւ զամենայն՝ Ա՛Ծ, զոր 'ի նախնեացն ձայնեալ՝ և յերկրորդումս ցուցից : Իսկ [2] յանդիմանութիւս գրաբանականս՝ 'ի կոյտս բազմութեան ազգաց, և թարգմանութիւս՝ ժողովրդոց, զայս արդահատութիւս մաղթողականս նուիրեցի, զոր ներքնաշարեալքդ սահմանադրեն գոհաբանութիւք :

'Ի հանդիսարանս խօսից տրենի՝ բանս մաղթանաց, որում հոգին Այ [3] հաղորդեալ՝ հասանէ յօժանդակութեան :

Բ. Աղաչեմ զանփոփոխելի տէրութիւն ամենազօր հոգւոյդ հզօրի, առաքեալ զցօղ քաղցրութեան քո, և [4] բարեգործեալ 'ի յանձին՝ և յիշխանական աղդման զգայութեան զամենալից շնորհս բազմապարգև քո ողորմութեան : Այս հերկեալ զբանական անդաստա-

տան մարմնեղէն կարծրացեալ սրտիս՝ յընդունակութիւն արգասեաց հոգևոր սերմանց ։ Քո՛ւմ ամենիմաստ էութեանդ խոստովանիմք զամենայն պարգևս 'ի մեզ ծաղկեալ և աճեցեալ. որ ձեռնադրես առաքեալս. լցուցանես մարգարէս. ուսուցանես վարդապետս. բարբառեցուցանես համրս, և բանաս զփակեալ ականջս խլից. որպէս ազգակիցն քո՝ էակիցն հօր՝ անդրանիկն որդի՝ քոյին գործակցութեամբ ներգործելով զայս ամենայն, քարոզեաց զքեզ՝ Աստուած համասարակից իսկութեան հօր ։ Շնորհեա և ինձ մեղաւորիս խօսել համարձակութեամբ զկենդանարար խորհուրդ աւետեաց աւետարանիդ, հետևել առաքաթռիչ ընթացիւք մտաց՝[5] ընդ անհուն ասպարէզս քոյինաշունչ կտակարանաց ։ Եւ 'ի մատչել իմ 'ի գլուխ հանդիսի՝ մեկնութեան բանի՝ նախաժամանեացես առ իս գթութեամբ քո, խօսելով յիս զարժանն և զպիտանիսն և զհաճոյսն քո՝ 'ի ժամանակի, 'ի փառս և 'ի գովեստ աստուածութեանդ քո, և 'ի լրութիւն շինութեան կաթուղիկէ եկեղեցւոյ ։ Եւ կարկառեա 'ի վերայ իմ զամենամերձ աջ քո. և զօրացո զիս շնորհօք գթութեանդ քո ։ Փարատեա 'ի մտաց իմոց զմէգ մթութեան մոռացութեան, ապաքինեալ ընդ նմին զխաւար մեղաց, ամբառնալ ուշիւ իմաստիցս՝ 'ի կենցաղոյս երկրէ 'ի բարձունս ։ Լուսաւորեա[6] 'ի յիս վերստին զծագումն անստուեր հրաշից գիտութեան աստուածութեան քոյ՝ հեղզոր, արժանի լինել՝ առնել և ուսուցանել յօրինակ բարեաց աստուածասէր լսողաց ։ Եւ քեզ ամենայն փառք՝ յամենայնի, ընդ հօր ամենակալի, և ընդ որդւոյդ միածնի և բարերարի, այժմ և յանվախճան յաւիտեանս. ամէն ։ Լոկ զհաւատոյ սահման բանի՝ ընտրութեան շնորհի՝ կենաց կանոնի[7] առ համագոյն երրորդութեան՝ զայս վարդապետեցի, զոր շաւիղ կարգիւդ վերանկարէ ։

[8] Երրորդութեան անպաշտպանեալ նորոգ սրբեղծագործութէ, աղբերակ
յոյ, յոր էինչ 'ի Նիկիական սահմանեցաւ հաւատք:

Գ. Խոստովանիմք և դաւանեմք, պաշտեմք և
երկրպագեմք զգուգափառ միութիւն ամե-
նասուրբ Երրորդութեան: Էութիւն անճառ, միշտ բա-
րի, նոյնագոյ, հաւասարապատիւ, անհաս իմաստից
Թևոց սլացման, 'ի վեր քան զօրինակ և անդր քան
զնմանութիւն, գերազանց գոլով սահմանի՝ անպարա-
գիր բացարձակութեամբ, [9] յառաջ քան զհիմն յաւի-
տեանցս անտարրափակ էութեանց, ստեղծականացս
կարգաց, օրհնաբանութեամբ անթարգմանելեաւ՝ ամե-
նահարուստ մեծութեամբ՝ յաւէտ պսակեալ. հաստիչ
ժամանակաց՝ և որ 'ի ժամանակի են կերպաւորեալք.
ինքն պատճառ հանդերձիչ՝ և յարմարապէս յօրի-
նիչ՝ տեսականաց և աներևութից: Ոչ անուամբ չա-
փեալ, և ոչ յորջորջմամբ նշանակեալ. ոչ որակու-
թեամբ նմանեալ, և ոչ քանակութեամբ կշռեցեալ. ոչ օրի-
նակաւ ձևացեալ, և ոչ որպիսութեամբ ծանուցեալ. [10]
ոչ 'ի թերութէ տարածեալ, և ոչ 'ի լրմանէ ամփո-
փեալ. ոչ ուրեք երբեքի գրաւեալ, և ոչ 'ի տեղւոջ
վայրի երևեալ:

Դ. Բայց գթութեանց՝ ունօղ ամենայնի, և ած հա-
նաւրց՝ որ յերկնի և որ յերկրի, [11] բաց 'ի բանէն
միայնոյ՝ որով զամենայն ինչ ունի: Ստեղծիչ և տուիչ
շնչոց ամենից, [12] բաց 'ի հոգւոյն իսկակցէ՝ որով զհա-
մայնն կազմեաց:

Ե. Միոյն յերջանկափառ համագոր ուհաւորութէ
երիցն անձնաւորութեանց [13] խոնարհեալ 'ի վերուստ՝
աստուածն 'ի ստորինս. որ էրն իսկ 'ի բնէ անբաժ
'ի ներքնոցս՝ անկապուտ մնալով փառացն աթո-
ռոյ, և անկարօտ դիմացն [14] ծնողին իւրոյ: Մտեալ
'ի սենեակ կուսին արգանդի [15] պարզաբար, և ե-
լեալ անտի յօդաւորաբար մարմին էապէս՝ անորո-
շելի, անթերի մարդկութեամբն, և անպակաս
ածութեամբն: Որ որդի հօրն միայնոյ, և միա-
ծին անդրանիկ՝ ածամայր տիրածին կուսին, [16] արա-
րիչն՝ յեղականութեամբ մարդ ելով ճշմարիտ սկզբնա-

ծին. ահա ոչ զկնի եղելոց երկրաստեղծիցս նմանու-
թե, այլ նոր և չքնաղ, Թագաւորաց վեհափառ,
որ ոչ ցուցաւ 'ի դարս, և ոչ գոյացաւ 'ի ժամա-
նակս, անդրանիկ' ըստ սաղմոսողին, քան զամենայն
Թագաւորս երկրի. 17 անապական խառնութբ կեր-
պացեալ զմերս 'ի մարմնի, ըստ օրինի հոգւոյ ընդ
մարմնոյ, և ոսկւոյ ընդ հրոյ, և կամ յայտնապէս
իսկ ասել' լուսոյ ընդ օդոյ, ոչ փոփոխեալ և ոչ ան-
ջատեալ: Նոյն ինքն եկեալ կամաւորութբ 'ի խաչն
մահու, իբր' զգառն անարատ' 'ի սպանդ վարեցաւ,
և հանդերձեաց զօրեղ ինքնիշխանութբ զարարա-
ծոց իւրոց փրկութի. 18 չարչարեալ իսկութբ կեն-
դանեօք' եդաւ 'ի շիրմի անորոշելի յածութն. եռօ-
րեայ Թաղմամբն' 'ի դժոխս սանդարամետականացն
19 վհատելոցն բանտարգելիցն' քարոզեալ ցուցաւ նո-
րոգումն և լոյս: Եւ աւարտեալ 20 զտնօրինակա-
նացն զփրկանաւորն զտնտեսութի, ածապէս վերա-
կենցաղեաց. և կառավարեալ 'ի Թևս հողմոց' ելեալ
'ի քրովբէս ամպով անքննութե ծածկեցաւ. համ-
բարձեալ գեր 'ի վերոյ ամ երկնի, նստաւ Ճոխու-
թբ յաթոռն իւրական սկզբնաժառանգ հօրն հա-
ւասարութե, յորմէ և բնաւ իսկ ոչ մեկուսացաւ,
անկորուստ առեցելովն, և աննուաղ սեպհականօքն:
Որով և եկեսցէ 'ի դատաստան հատուցման, քննել
զծածկեալսն կշռութբ չափոյ' արդար իրաւանց.
որում սպասեմք, և յոր աղօթեմք, հաւատացեալք
յամի' ամիւ ամենակալ տէրութն նորա. 21 որ արդարև
մինն է միայն 'ի միայնոյն' 'ի միոյն փառակցութի յա-
ւիտեան երկրպագեալ:
Է. Բարեբանեմք միշտ և օրհնեմք ընդ որդւոյ և
ընդ հօր' և 22 զհոգի էութե նոցին, ամենազօր, Ճշմա-
րիտ, կատարեալ և Տր. որ յանէից գոյացոյց զբո-
լոր եղեալքս ամենայն. ինքնագործ հոմիշխան եր-
կուցն եւս ընդ նմին' անեղծ և անսահման Թագաւո-
րութե. որ ինչ պատՃառն առաջին, և բանն ահա-
ւոր նորին ինքնութե, նոյն ինքն և հոգին բարձրա-
ցեալ: 23 Բարի ինքնակալ, ամենից բաշխիչ զհօրն
պարգևս' 'ի գովեստ անուան փառաց միածնին. որ
ազդեաց յորէնսն. շնչեաց 'ի մարգարէսն. 24 փչմամբ

ազգակցին տպաւորեցաւ յառաքեալսն . [25] կերպիւ
աղաւնւոյ ցուցաւ 'ի յորդանան՝ 'ի մեծուն փառաց
եկեղեցւոյն . փայլեաց [26] 'ի գիրս աւանդականաց . արար
հանճարեղս . զօրացոյց իմաստունս . լցոյց վարդա-
պետս . [27] օծ արքայունիս . օժանդակեաց թագաւորս .
ետ վերակացուս . հրամանատրեաց փրկունիս . շնոր-
հեաց ձիրս . հանդերձաւորեաց քաւութիս . զմկըր-
տեալս 'ի մահն քնի՝ 'ի բնակութն իւր մաքրազար-
դեաց . զոր հայր և որդի , զնոյն և հոգին ներգոր-
ծեաց . և ինքն է ած խնկեալ տիրապէս՝ ամենայն յա-
մենայնի :

Է . Քանզի [28] ոչ նախաթուելովս յերրորդութեն՝
ոք մեծ ինչ քան զմիւսն . և կամ զկնի անուանիլն՝
նուաստագոյն առ նմանն . և կամ 'ի միոնն ասելով
խառնակութի գոլ դիմացն . և կամ յերիցն տրո-
հումն՝ ուրոյնութի եւ կամացն : Քանզի անմեծար
հայր ամենայնիւ , եթէ ոչ զբանն ունիցի ինքեան
զօրութի . որպէս ոչ գոլով ընդ նմա հոգւոյն՝ անհա-
գագ ումն և անկենդան՝ և առ ամենայն հրաման
նուազեալ : Իսկ բանն՝ եթէ ոչ անուամբ հօրն ծա-
նիցի , որք ումն՝ և կամ լքեալ , և կամ [29] 'ի մահա-
ցուէ ումեմնէ ուէի : Որպէս և հոգին՝ եթէ ոչ 'ի
պատճառէն նշանակեսցի , [30] ապաշուք ումն թափա-
ռեալ՝ իբր զշունչ ինչ անդասելի : Այլ եթէ ոք
հակաճառական բանիւ՝ [31] յաւակնի կապտել զհայր
'ի յիւրմէ բանէն , որ թէ էր երբեմն՝ յորժամ և
չէր , և անբանութեն բամբասանօք պատուել վար-
կանի զվեհին մեծութի , և կամ ստրկութիւն տացէ
բղխողին՝ ոչ բնաւորաբար գոլով հոգւոր , որով
այլ իմն գոյութիւն օտար մուծանել , և կամ ամբո-
խումն ինչ այլայլական՝ յանարատ պատիւ միութե
նք երրորդութեն , զայնպիսին՝ քարամբք պարսից՝
հաւատոյ բանից , իբր զգժնդակ դևս դիմամարտիկս
գազանականս՝ հերքեալ 'ի միջոյ՝ 'ի բաց հալածեմք .
եդեալ 'ի նզովս զնոյնս ընդ նոսին , փակեմք ընդդէմ
նոցին զկենացն մուտ եկեղեցականս գաւթի : Ուս-
տի զնք երրորդութին փառաւորելով 'ի նոյն տէրու-
թի միակցորդ հաւասարութե , զուգաձայն սրբաբա-
նութք , հանգունատիպ հարթութք , օրհնեալ և

փառաւորեալ յերկինս և յերկրի, 'ի ժողովս անդ-
րանկացն, և յազգս երկրածնաց բանականաց, յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն։

Ը. Արդ՝ զայս [32] գոչումն ծածուկ խորհրդոց կեր-
պաւորելոց յայսմ մատենի՝ ամենալուր ականջաց
մեծիդ այ̃ ընծայեցուցի. սովիմբ սպառազինեալ, և
ապա մտի 'ի հանդէսն։ Այլ ո՛չ եթէ կարօտեալ
իմոյս ինչ ձայնի այսու մեծանաս, որ մինչև ստեղ-
ծեալ էր քո զամենայնն՝ նախ քան զլինելն երկնի, [33]
փառաբանչօքն անմահից՝ և երկրաստեղծս բանա-
ւորօք, դու քեզէն 'ի քումդ լրութեան՝ փառաւորեալ
իսկ էիր. այլ զի զմերժեալս զիս յարգեցես՝ անճառ
քաղցրութեամբ, ճաշակել զքեզ բանիս հաղորդութեամբ։
Իսկ զի՞նչ պարտ իցէ ըստ արքունական հրամանիդ՝
կենաց կանոնիդ՝ ասել ադոնայի տէր, և զհրամայ-
եալ պատուէրդ ո՛չ առնել. որ ինձէն իսկ զիս [34] զոս-
կեղէն տախտակս խօսուն՝ նուիրեալ քումդ պատ-
գամի, գծրեալս մատամբդ այ̃՝ եղծի, որ և խորտա-
կելն է իրաւացի. և ես տխրատեսակ մրոյն զերկ-
րորդն նմանութեան առեալ հայթայթեմ։ Այլ արդ՝
քանզի [35] բազմօք պաղատեցայ դրուակօք խանդա-
ղատականօք, որ ո՛չ է գրեալ 'ի յայս կարգ ձայնի,
լո՛ւր բարեգութ, ըստ սովին բանի՝ այնմ ամենայնի։
Եղիցի՛ և այս աղերս բարբառոյ հայցման աղօ-
թից՝ յօդեալ ընդ նոսին. թերևս 'ի մաքրոց և 'ի
կամարարից այս նուէր հացի՝ [36] պանից բաղարջոց՝
իւղով զանգելոց՝ 'ի սեղան փառացդ քոց մա-
տիցէ։

Թ. Այլ դու բարերար և յամենայնի մարդասէր,
քնդ մի՝ այ̃ միոյ, հզօր և ամենակալ. որ յաղթես
զթութեամբ խնամոց քաղցրութեան քո, [37] ո՛չ հասարակա-
կանաց միայն մարդկութեանս՝ իմոց գոյակցաց, առ որս
յաւէտ է ամբոխութիւն և բիւրամասնեայ հակառա-
կութիւն, այլ և հրեշտակացն անախտականութեան. նաև
և ևս քան զայս՝ սրբասնելոցն անարատութեան, յորոց
մի էր և հեղիաս. որոյ ցոյցք խստութեանն՝ 'ի քորեբ
լերինն նշանակեցաւ յերիս օրինակս, 'ի շարժումն
մեծ, 'ի հողմն ուժգին, 'ի հուրն կիզանողական.
իսկ քոյդ հեզութիւն երկայնմտութեան 'ի հանդարտու-

թն մեղմութեան օդոյն քաղցրութեան · քանզի [38] կամաց ողորմութեանց՝ դու միայն ես, ըստ գրեցելումն ։ Սամն զի թէ և հաճոյք գտան մերասերքս՝ առաքինութեամբն յեղանակեալ յայլ նմանութեան վերնային, սակայն երկրածինք են և նոքա, ընտրեալք 'ի մարդկանէ ։ իսկ դու ոչ ունիս չարանալ՝ իսկութեամբ բարիդ · յամենայնի օրհնեալդ · ամենևին փրկութիւնդ · ամենայնիւ հանգիստդ · համայնից անդորրութիւնդ · համօրէն ախտացելոց՝ դեղ առողջութեան · աղբիւր ջրոյ կենդանւոյ, ըստ Երեմիայ ։ Դարձ առ իս և ողորմեա՛ ինձ · որ այնքան ծարաւես պասքիս անկարօտդ մեծ իմում փրկութեան, մինչ զի զուարթնոցն երկնից անմահից օրհնաբանողաց [39] բան իմն ընծայեցեր մարդկօրէն փրկական քահանայապէս և քաւչապետաբար՝ անեղծական յարակայութեամբ մշտնջենաւոր պաղատանս օրհնեալդ քո գթութեան 'ի մերոց դիմաց կենցաղականաց՝ վասն իմ լքելոյս հաշտութեան մաղթել, ողորմեա՛ երուսաղէմի · որ է լուսաւոր խորհուրդ յայց ելանելոյ մեծիդ յայտնութեան, առ հրեշտակականն թափուր տեղի ստորանկելոց, 'ի ձեռն մարդկան՝ քո կցորդութեամբ աւետարանեալ առակաւ այսր օրինակականս երուսաղէմի ։

Ժ. Արդարև լուսար՝ բարեգութ · անսացեր թագաւոր · ունկնդրեցեր կեանք և յոյս · 'ի միտ առեր երկնաւոր · յարգեցեր հզօր · նկատեցեր ծածկագէտ · տեսեր խնամակալ · կարեկցեցեր անպատում · խոնարհեցար՝ մի՛շտ բարձրեալ · նուաստացար անհաւոր · յայտնեցար անձառ · ամփոփեցար անսահման · քանակեցար անքնին · [40] մածար ձեռագայթ · մարդացար անմարմին · շօշափեցար անքանակ · կերպաւորեցար անորակ · լցեր իսկապէս [41] զաղաչողացն բաղձանս ։ Դու իսկ եղեր թշուառացելոյս ինձ՝ ձայնիւ զուարթնոցն՝ բարի բարեխօս, միջնորդ կենդանի, պատարագ անմահ, սպանդ անվախճան, նուէր մաքրութեան, ողջակէզ անծախ, բաժակ անսպառ ։ Նա ողորմած, մարդասէր, օրհնեալ, մի՛շտ կատարեցես [42] առ մեղուցելոյս զբարեբաստութիւն կամաց քոց կենդանատուաց, գովեալ երկայնամիտ · և քեզ վայել է փառք յաւիտեանս · ամէն ։

(1) Առ արօտին ։ Առ արօտական են խնդիք կամ յօժարութիւնք Թշուառ հոգւոյս. և առ քեզ դառնութիւնք յարձակականք, խոստովանութիւնք մտանաւոր, կամ յատուկ քեզ վայելչականք. զոր Թէ և բովանդակ ատեանեա գոլ և գիտեմ, բայց եւ որպէս ՚ի նախնին, նախ քան զայս յանցեալ աղօթան ծանուցի, զնոյն և յերկրորդումս ցուցեալ կրկնեցից ։

(2) Յանդիմանութիւն Գրաբանական ։ ՚Ի բացայայտութիւն, կամ ՚ի հրապարակական բանս՝ որ ՚ի Սբ գրոց. կամ Գրաբանական ասէ՝ Թերևս զի ՚ի գիր անցուցեալ զբանն՝ այնպէս խօսէր յատենի ըստ սովորութեան առաջնոցն. որպէս և Շնորհալին առոր դատենական խօսն առ ժողով հայրապետացն. և ասէր. * Զլսելիս մատուցանել գուշնորեայ այսցիկ բանից, որ ոչ ՚ի լսելիս հայեալ, միանգամայն և յօդս ցնդեալ. այլ արձանացուցեալ գրով ըստ գերակատար իմաստնոցն օրինի || ։ Արդ՝ մի այնպիսի ատենական վարդապետութեանց, զայս յաջորդ ատենաբանութիւն, աղաչանս նուիրեցի. զոր նեղքոյ եդեալ աղօթական բանիք ցուցանեն ։

(3) Հայցելու ։ ՚Ի միում, պաշտելու, յայլ, պաշտեցելու, որ և այս յարմարի. իբրև Թէ՝ սրտով հոգւոյն Սբ հայցեալ, աղօթիւք կամ պաշտամամբ պատուեալ. վասն զի բազքս՝ պաշտօն և պաշտել, բառում անգամ զնին փոխանակ բանաւոր կամ ձայնաւոր աղօթից և օրհնութեան ։

(4) Բարեգործեա ։ Շնորհեա կամ յօրինեա զատենալից շնորհս քո՝ ՚ի յանձին, ՚ի հոգւոյս, և ցեղխանական աղքման ըզգայութեան, ՚ի լեզուս՝ որ խօսան և աղդարար է զգայութեանց. կամ, ՚ի միտս՝ որ իշխանաբար տիրէ զգայութեանց, որ տիրապէս զգայ և աղդէ զիմաստս գրոց ։

(5) Ըստ անհուն ողորմութեան ։ Անցանել կամ գնալ առաջ ընթացմամբ մտաց ընդ անանցանելի ընդարձակութիւնս ածաշունչ գրոց ։ Առաջնոց վարդապետաց սովորութեան էր՝ զատենական ճառս կամ զքարոզս իւրեանց յօրինել ՚ի վերայ բանից Սբ գրոց, մեկնաբանելով զնոյնս, որպէս ասենեն ոսկեբերան, եփրեմ, և այլք. վասն այն աստրև մեկնութիւն կոչէ զայն ։

(6) ՚Ի յետ վերջոյն ։ Ծագեա յիս վերստին զածային գիտութիւն քո, որպէս միանգամ ծագեցեր ՚ի լուսաւորութեան մկրտութեան. յայնժամ ծագեցեր առ ՚ի ուսանել ինձ, այժմ ծագեա առ ՚ի ուսուցանել այլոց ։ Կամ, վերստին ասէ պայծառացուցանել զհոգևոր գիտութիւն, որպէս ՚ի սկզբան յառաջեալսն ։

(7) Առ հոմանոյն եպիսկոպոսին ։ Զատհաման դաւանութեան հաւատոյ որ առ Սբ Երրորդութիւն, զայս՝ կամ այսու օրինակաւ աւանդեցի, յօրինեցի, ըստ որում յաջորդ բանդ երևեցուցանէ ։ Զայս դաւանութեան յայն սակս դնէ Սբ վարդապետս, զի օրէն է քարոզչաց բանին՝ նախ զուղիղ հաւատոյ հիմն արկանել ։

(8) Երրորդութիւն անպայմանական ։ Այսինքն դաւանութեան Երրորդութեան, կամ ձայն և բան յաղագս սբյ երրորդութեան ։ Զի սովորութիւն է զմակագրութիւնս գրոց կամ ձայնից ՚ի նուաթոյն առնուլ, որպէս գիրք մովսեսի կոչին՝ Արարածք, Ելք, Թիւք, և այլն. զի են բանք զլինելութեան արարածոց, զելից իսրայէլի յեգիպտոսէ, և զթուոյ նոցա. սոյնպէս գիրք առակաց Զգօնութիւն կոչի. զի են խրատք իմաստութեան ։ Նմանապէս յարտաքնոցն՝ Իլիոս ասի բանաստեղծութիւն հոմերոսի՝ յորում խօսի զեղեռնական պատերազմէ. և օդիսոնեա կոչի միւս ևս բանաստեղծութիւն նորա, յորում զոդիսեայ ձայնէ. ըստ այսմ և այլք բազումք ։ Կամ, եթէ կամիցի ոք, Երրորդութիւն իմանալ՝ երրորդումն, այսինքն երրորդ անգամ կրկնումն դաւանութեան հանգամանակին. զի նախ՝ յառաքելոց աւանդեցաւ. երկրորդ անգամ ՚ի ժողովս նիկիոյ և կոստանդնուպօլսոյ բացայայտեցաւ. իսկ երրորդ անգամ՝ ինքն առաւել ևս ընդարձակէ աստ ։

Զայս զատանութեն երրորդութեն անայլայլական ասէ՝ ըստ ճշմարտութեն
բանիցն և ըստ մտաց հաւատոյ. զի մի՛ 'ի տգիտաց ոք կարծիցէ՝ թէ
յաւելմամբ կամ այլայլութբ բառիցն փոփոխէ զիմաստ, և բազմացուցա-
նէ զհաւատալիսն : Նորոգ ոփեղծոէանութէ, ըստ բացայայտութեանն
նորոց եղանակաւ ընդարձակ յօրինեալ : ... , այս զատանութեն
աղղեցաւ յետ ըստ հաւատոյն կամ ըստ համդամանակին, որ 'ի ժողովն նի-
կիոյ աւանդեցաւ, որպէս և 'ի յաջորդան զմաստունս նիկիական համդամա-
նակին ընդարձակ ձևացուցանէ :

(9) Յառաջ քան զամենայն յաւիտեանս : Ոմանք զհրեշտակաց խմանան. բայց
լաւ ևս իմանի՝ յառաջ քան զակիզբն ստեղծեալ ժամանակաց, անփոփո-
խոխուն եղանէ. յորում էութիւք ստեղծեալ իրացս ոչ էին փակեալ ընդ
սահմանօք, այլ ծածկեալ 'ի միտս իւր, նա անձառելի օրհնութբ իւրոյ
ամենահզօրութեան մեծութեն ստացեալ էր. իբրև թէ՝ անկարօտ էր արա-
րածոցս փառաւորութեն. զի յառաջ քան զնոցայն լինելութիւն՝ նորա
մեծութիւն է փառք իւր, որպէս զնի ասէ 'ի համարն Է. ամս լծ. 33 :
Կամ, անփոփոխելի էութիւնք իմանելին անմարմին բնութիւնք՝ որք ոչ
փակին ընդ սահմանօք. իսկ ոփեղծոխան կարգ են այլ ամենայն մարմնա-
կանք : Յառաջ քան զհիմնարկութեն ժամանակացն ասէ՝ յորում եղեն
անմարմին և մարմնական բնութիւնք, օրհնաբանեալ է Ածութիւն՝ ոչ
յայլմէ, զի ոչ կայր ինչ. այլ յինքենէ, և այս է անճառելի. զինքն
ոք յիւրմէն օրհնեցի, փառաւորեցի. բայց եթէ զի ինքնակայ ան-
նալի մեծութիւն նորա է փառք իւր :

(10) Ո՛չ'ի ... : Ո՛չ յառաջ քան զժամանակս, կամ յետ ժամանակաց ...
ածեցաւ 'ի կատարելութիւն. և ո՛չ'ի ..., 'ի կատարելութեան նուազեալ
կամ պակասեալ : ո՛չ ... . ո՛չ ընդ ժամանակաւ երբէք փակեալ,
և ո՛չ 'ի տեղւոջ պարփակեալ : 'Ի կարգի բանիս զաւանեալ սորոգու-
թիւնան արիոսականս 'ի բաց առնէ յԱՆ. զի թէ և էակ է ծագ-
րագոյն՝ ամենեւին, բայց ո՛չ երբէք գոյացութի անուամբ ճանաչի կամ
որոշի. ո՛չ քանակ 'ի նմա, ո՛չ որակ, ո՛չ առնչ նմանողական, ո՛չ կրել, ո՛չ
երբ ժամանակի, ո՛չ ուր տեղւոյ :

(11) Բոց'ի բանին : Հայր՝ է ած ամենեցուն, բայց միայն բանին կամ
որդւոյն ոչ է ած ըստ ածութեն, թէպէտ և է նորա ած ըստ մարդկային
բնութեն : Ոմանք 'ի հարց նաև ըստ ածութեն մեկնեցին զասելն քրիս
(յոհան. Ի. 17.) առ ած իմ : Որպէս նոյն կիւրեղ, (կոչ. ընծայ. գլ.
ժա. համար. 21.) ասէ. * Աստուած իմ, որդիութբ, բնութեամբ և
միածնութբ : || 'Ի սոյն միտս խօսի և սբն իլարիոս. (գիրք. Ժ. յաղ
ագս երրորդութեն. համար 11. 12. և գիրք Ը. համար 53 :) Բայց
այս մեկնութեն ոչ է համարակ և հարազատ :

(12) Բոց'ի հոգւոյն ... : Հայր է ստեղծօղ և կենդանացուցիչ ամ
էնչաւորաց, բայց միայն հոգւոյն սբոյ ոչ է, որ էութբ ընդ հօր ունի
զկենդանութի, և ընդ նմա կենդանացուցանէ զամ :

(13) Խոնարհեալ'ի վերոտոփ ... : մի օրին. խոնարհեալ'ի
վերոտոփ ... : այսինքն 'ի վերուստ առնոր, կամ յերկնից : որ էրն ...
'ի ... . այսինքն բնութեամբ կամ յառաջնմէ իսկ անբաժանելի 'ի
նմանէ :

(14) Ծնեալն նորոյ : 'Ի չորս օրին. ծնեալն ... . և իմանի, այնմ որ
ծնօղ է անախտ և անայլայլական եղանակաւ, որպէս սէրն անախտա-
բար ծնանի : Կամ, այնպիսի ծնօղ՝ որ անապականաբար ծնանի՝ և ո՛չ լոկ
բնաւոր ազդմամբ, և կամ 'ի զխոյից ինչ :

(15) Պորզարէոր : Իբրև պարզ և անմարմին, կամ պարզ բնութբ. և
ելեալ անուն յօրաարարէոր, յօդաւոր կամ բաղադրեալ մարմնոյն և հոգ-

առվ, յորմէն եղանի, մարմնոյն խակութիւն, ճշմարտապէս և ոչ կարծեօք, ամբողջ մարդկայնովն, որ անբաժանելի էր յԱծութենէն:

(16) Աւրուրին յեղանակաւն: Բանն Ած աղաղակէ՝ յեղանակաւն կամ ի առակ ծեսալ մանկ.ն լինելով մարդ ճշմարիտ. ունելովն. այսինքն առաջին ծնունդ կամ անդրանիկ մօրն, կամ առաջին ծնեալ ի կոյս մօրէ: Այն ոչ գինի. ոչ համեմատ կամ ըստ նմանութեան այլ մարդկան յերկրէ եղելոց, այլ նոր և սքանչելի, թէ ըստ ծնեցելոյն, և թէ ըստ եղանակի ծննդեանն: Բառն՝ գինի յայլ գիրս եւս երբեմն նշանակէ՝ համեմատ, կամ ըստ. որպէս Լամբրոն. (Ճառ յաղագս առաքեա. եկեղեց.) * Առհնոյն օրէնքն ինձ գիր է, և գինի բնութեան: || այսինքն համեմատ բնութեան մերոյ. զայն գինէ և ('ի մեկն. սաղմ. ժզ:) Եագուարաց վէհափառ. գերափառ քան զծննդոց թագաւորաց, որք ամենեքին բնութենական կարեաց մօրն ծնանին, և հեռի զայլ աղքատ առանց խռխնութեան, այլ և բանիւոյն զկուսութի ծնողացն: Իսկ բանն Ած կուսածին՝ առանց անդրանիկ ըստ առաջնոյ քան զամենայն թագաւորս. (սաղմ. ձը. 28:) Ուր ի միջոցին կայ բառս՝ եղիցի, այսինքն բարձր քան զամենայն թագաւորս: Բայց նա վարդապետս համեղագունեանէ զայն և առ բառն անդրանիկ. խնամեալով՝ առաջին քան զամենայն թագաւորս ոչ միայն խիստոսութեամբ, այլև ծննդեանն ըստ մարդկութեանն. վասն զի միայն քո ծնաւ թագաւոր, իսկ այլք ոչ ծնանին թագաւոր, այլ ի մարդկանէ կարգին, թէպէտև ծիրանածինք կոչին, թագաւորազն. են:

(17) Անապական խառնումն: Անշփոթ և անայլայլելի խառնութեամբ, այսինքն ներքին սերտ միաւորութեամբ. կերպացեալ գնէր 'ի ծոցնի. յինքն առեալ զմեր բնութիւն մարմնով, կամ զմերս հոգի 'ի մարմնի անդ: ըստ օրինի հոգւոյ, են: Այս օրինակք հոգւոյ, հրոյ, և լուսոյ՝ այնչափ միայն ունին յարմարութիւն, զի որպէս անշփոթ և գոյացաբար միաւորի հոգի ընդ մարմնոյ, և հուր ընդ ոսկւոյ, և լոյս ընդ օդոյ, այսպէս անշփոթ և 'ի ներքուստ իրօրէն միաւորի Ածութիւն ընդ մարդկութեան 'ի մի քն: Ուր և յաղագս տարացուցի լուսոյ յաւելուլն, կամ յոյժ պատշաճ խոյ ասել, նշանակէ՝ առաւել յայտնի կամ երևելի օրինակ առ միաւորութեան քնի. զի լուսոյ ընդ օդոյ միաւորութիւն առաւել զգալի է մեզ և աշխարհական՝ քան զհոգւոյ և զհրոյ: Զբառն խառնումն առնուլ փոխանակ անշփոթ միաւորութեան յայտնի է ոչ միայն յայլ գրոց, այլև 'ի կիրառութենէ սոյն վարդապետիս, որ 'ի բանին ժը. 2. առ Ած ասէ, միանալ ընդ լուսոյդ կենաց խառնումն:

(18) Զուարթեալ խոկումն: Զարդարեալ ճշմարտապէս, կենդանեօք, այսինքն 'ի կենդանութեան միայն, և ոչ յետ մահուանն, որպէս ասենք հոգի հոյակապն՝ թէ հոգին քո 'ի դժոխս տանջեցաւ, որք և դժոխոցն աւանդեցան: Կամ, կենդանեօք իմա այսպէս. ճշմարտապէս չարչարեցաւ 'ի մահ մարմնովն, կենդանի և անմահ մնալով Ածութեամբ:

(19) Վհատեցոյն եռանդուքեցին: Այնցն՝ որք 'ի բանսն նախահարցն աղօթելեալ կային, և յերկար անհնարութեամբ փրկչին վհատեալք էին, այսինքն հաշեալ և վատթարեալ: Կամ, եթէ վհատեալ իմացիս յուսահատեալ, արդարև յուսահատք էին իւրեանց զօրութեամբ, կամ այլոց բարեխօսութեամբ զերծանիլ անտի: Իսկ եթէ ոք յաղագս մեղաւորացն առնէ զբանս, առաւելն և նոցա քո փարատեալ ցոյցա ներողամտ, և լոյս, ոչ զի նիչքեանք նորոգեցին և լուսաւորեցին յայնժամ, այլ զի ծանիցեն՝ թէ ոչ համապատուրին 'ի նա, և 'ի չարի մեռանելոյն՝ զերկեցան 'ի նմանէ: Բայց զայն ազատութիւն յայտնապէս առնէ նա վարդապետս 'ի բանին իը. 5: տես անդ:

(20) Զիրօրինակոյն: Կատարելով քոյ մահուամբն զմարդկութեան

իւրոց գիտակացորդ խորհրդոցն , ծառայեն յարկեաւ . և գնացեալ 'ի ներս հողմոյ . ըստ այնմ . (Ժէ . 11 .) որով նշանակի արդարութիւն մերկացն յերկինս , նստեալ 'ի քերովբէական կառս՝ ծածկեցաւ ամպով անփառութեան . ըստ բանին գործոց . (Ա . 9 .) զի ամպով ծածկեալ յաչաց առաքելոց նշանակէր զանհասութիւն փառաց և մեծութեան նորա : Այսու օրինակաւ համբարձեալ յերկինս , նստաւ փառօք յաթոռն աստուածային՝ ունելով զառանձին հօրն համապատուութիւն : Այս է մեկնութիւն ասելոյն՝ ընդ աջմէ հօր . զի համապատիւ հօր ըստ ամենայնի՝ երկիր բանն և առաջին ժամանակ նորա . յորում ոչ ընդ մեկնեցաւ , այլ մինչն հետեւեաւ : Անփոփոխ ապրեցուցիչ, արարելով զաստուած զմարդկային բնութիւն , և անզգալապէս փոխանորդեանց , ըստ ամենայնի

յաւիտենական փառացն :

(21) Որ առաքեաց զՆա է : մի որդին 'ի միածնոյն հօրէ , 'ի միոյն հոգւոյն փառաւորեցութիւն : Խոնարհեցելոյն Քրիստոսի 'ի անօրինականաց նուրբ մարդկութեան , ոչ եթէ ինքն փոփոխեցաւ կամ նուաստացաւ . այլ միայն նոյն միակ որդի միածնոյն ԱԾ Հօր , և նովին փառաւորեցութեամբ ընդ Հոգւոյն սրբոյ : Այսպէս համառօտիւ զգլխաւորն ասերուութեան նորա . և փառաւորեցին զա-

ռաքելոցն սուրբ առաքելոցն ցանկանալով :

(22) Զհոգին ևս : Օրհնաբանեմք հոգի հայր և որդւոյ և զհոգին սուրբ , որ բխեալ է նոցա , հոգի նորոգին և էութեամբ միացեալ , ոչ արարածին երկրորդ զերպարածին հոգին : համբաւեան երկնային , որ ինքն կարող զօրութեամբ գործէ , և իշխանակից է հօր և որդւոյ , որք ընդ նմա են միշտ , մի և նոյն անկեալ աստուածութիւն : Որ ինչ է պարտական աստուածութեան , այսինքն Հայր ամենակալ , և որ ինչ է Բանն ամենակալ , նոյն է Հոգին սուրբ ըստ էութեանն և ըստ կատարելութեանն : Այսպէս ըստ էականացն խոնարհ բանի ուսանէ ասէ՝ որ ինչ . իսկ յատուկն առ ինչ ասին . և այսպէս յայտնի է բանն Լուսաւորչական Գրիգորի վարդապետին մեծաց ասացեալ . * Հայր ծնող որդւոյ , որ է այն ինչ՝ որ ինչ Հայր է . քանզի որ ինչ Հայրն է , և Որդի այն է .

բայց ոչ որ Հայրն է , և Որդին նա է : ||

(23) Բարի իմաստաւորն : Խնդրեմք կամ ինքնաբարն բարի , և ոչ առաջնեմք : Որովհետև կենդանի զասացեալն՝ բարի , իմաստաւոր . բայց ըստ եւս է միայն ըն-

թեռնլ ըստ ընդհանուր օրինակաց :

(24) Փչմամբ աղաւնոյն : Փչմամբ որդւոյն որդ՝ որ աղաղակեաց զայն վասն խոնարհեալ գոլոյն , որպէս ասացաւ (բան . Լէ . Լծ . 24 :) Որովհետև յայսմ բանէ կամեցան ձեռնարկել , թէ որդին ոչ է բղխող հոգւոյն սրբոյ . արդ թէ ոչ՝ ոչ ասէր աղաղակեաց . որպէս ասեն՝ հայրն ամ զորով յառաջնածող որդւոյն և հոգւոյն՝ ոչ ասէ նոցա աղաղակեաց : Սակայն եթէ քննութեամբ խուզեսն զայս , գտանէսն նորին իսկ սրբոյ վարդապետին՝ զերդիս անձինն ևս աղաւնեաց ասացեալ ('ի գոհ . առաջ .) ուր գրէ . * Հայր՝ Որդի՝ Հոգի՝ 'ի մի շաւղ գոյացեալ , զմիւսն պատուեալ և օրհնաբաննեալ երեքն աղաւնեաց՝ երկրպագեալ վերանակարգ : || Այսպէս ուրեմն նաև յառաջնածող և յառաջնածեալ անձինքն ասեն միմեանց աղաղակեաց : Սոյն-

պէս 'ի բանին Հէ . Դ . ասէ . Անդրադարձ աղաւնակութեան :

(25) Կերպիւ աղաւնոյ : Հոգին սուրբ 'ի նմանութեան աղաւնոյ համբերեալ 'ի վերայ քրիստոսի 'ի մկրտել նորա . և այս անօրինեցաւ յԱԾ առ 'ի մեծացուցանել զփառս էիւրոյ 'ի մկրտութեն, զի մի՝ նման այլոցն կարծիցի կարօտ մաքրութեն . այլ թէ ինքն իսկ մաքրագործ է , 'ի մաքրել եկեալ , առաքիչ հոգւոյն շնորհաց : Այսպէս 'ի խոնարհել քրիստոսի կերպարանօք մեղաւորի , փառաւորեաց զնա Հոգին սուրբ՝ երևեալ աներևոյթն միջամտելով : Զաղաւնոյն երևեցելոյ կարծիք է 'ի վարդապետաց . ոմանք ասեն՝ թէ էր ընդ երևոյթ աղաւնոյ , այլք՝ թէ էր ճշմարիտ և գոյացեան աղաւնի . և զայս կարծիս նախնեաց յիշէ կիւրեղ երէմեայ . (կոչ . ընծայ .

գլ. ԺԵ. համար 8 ։) և ընդունելի մեծն Օգոստինոս, և ընդ նմա Թով-մաս աքուինացի. (Ա. մասն. խնդ. ԼԹ. յօդ. Է. այլ և 'ի մեկն. յով-հան. գլ. Ա. ընթերց. ԺԴ.) իբրև առաւել հաւանական ընտրելով. Թէպէտ և յառաջին զմիտս կարծիսն եղեալ էր, ('ի Ա. գիրս մնաց, ԺԴ. խնդ. Ա. առ 3 ։) Սակայն այսու ոչ քնաւ համարեցան նոքա, թէ հոգին որ անձնաւորապէս միաւորեցաւ 'ի բնութիւն աղաւնւոյ, և ոչ իսկ ասաց աքուինացին, թէ էառ զճշմարիտ աղաւնոյ բնութիւն. այլ ընդ հակառակն ասէ." Թէպէտ ոչ էառ զայն 'ի միութիւն անձինն ։ || Եւ ոչ իսկ ճշմարիտ աղաւնի ասել՝ հակառակ ինչ է աւետարանչացն. զի նոքա ասեն՝ թէ հոգին որ իբրև աղաւնի երևեցաւ, և ոչ ասեն՝ թէ երևեալ աղաւնին էր իբրև աղաւնի ։ Որպէս յասել՝ թէ 'ի նմանութիւն ամպոյ յայտնեցաւ 'ի Թաբօր, կամ նման հողմոյ էջ 'ի վերնատունն, ոչ խմանի՝ թէ ամպն և հողմն ոչ էին ճշմարիտ ամպ և հողմ ։ Եւ ոչ ան-պատեհ ինչ է՝ 'ի կիր առնուլ ԱՅ յայտնութեան զբուն զերակեան կենդա-նիս՝ 'ի նշանակ կամաց իւրոց, կամ յայլ պէտս. որպէս 'ի կերակրել զԵ-ղիաս՝ 'ի գործ արկ զագռաւ, որ յանդորրոց իսկ էր, և չէր հարկ ասել թէ երևոյթ էր այն ագռաւոյ ։

(26) 'Ի Գիրս ստանդականաց ։ Այսինքն աւետարանչաց, և այլոց առա-քելոց, որք զաւանդեալսն 'ի ՔԷ ընդ գրով արկին ։ Այս խմաստ է ա-ռաւել հարազատ, քան թէ զմարգարէից իմանալ. զի նախ ասաց՝ ազ-դեալ յօրէնսն, չնչեալ 'ի մարգարէսն. ուստի մնայր զնել զխօսելն յա-ւետարանսն, ըստ կարգի բացատրութեան մերս հանգանակի ։

(27) Օծ աւետարանին ։ Այսինքն արքայս, որպէս զդաւիթ, զմեծն կոստանդիանոս, զմերս տրդատ, ևն ։ օծանեալ էսաց, զօրացոյց, յաղթօղ արար զԹագաւորս ։ Հրամանաւոր էսաց քերթողին. խրախանութեամբ պար-գևեաց, կամ հրամայեաց տալ ազատութիւն 'ի մարմնական և 'ի հոգե-կան փորձութեանց ։ հանդերձաւորեաց, ներգործեաց քաւութիւն մեղաց և պատուհասից. կամ, կարգեաց քաւչարար նախաստս յեկեղեցի ։

(28) Ո'չ նախանձոտեալ ։ Ցերրորդութեան յորժամ մի անձն նախ Թուի քան զմիւսն, ոչ եԹէ այսու զնախաԹուեալն համարիմք կատարելու-Թեամբ մեծ, և զերկրորդն փոքր և նուաստ. այլ միայն զկարգ ծագման յառաջադայութեանցն ցուցանեմք ։ և կամ 'ի մինն առնելով. յասելն մի զերիս անձինսն, այսու ոչ զանձինսն շփոԹեմք ։ Ո կամ յերիցն փոխանակ, և կամ յերիս զանազանելովն՝ ոչ բաժանեալ էր, որոշումն կամ առանձնութիւն զօր կամաց նոցա, ընդ նմին և բնութեան ։ Այլ այնչափ անբաժան և հա-ւասար զաւանեմք զնոսա, մինչև անմեծար հայր, անպատիւ կամ ան-զօր լինէր, եԹէ ոչ ունէր զիւր բանն անձնաւոր. որպէս ոչ ունելով զհոգին սր, անհագագ, անշունչ ամն և անկենդան լինէր ։

(29) 'Ի մահուանէ ։ Առանց հօր այս ծնանելով զբանն, երևէր 'ի մահ-կանացու հօրէ ունեմնե ոչ գոյողէ ծնեալ. մի օրինակ. Ո կամ մահուանէ ունեն ուէր. այսինքն երևէր՝ թէ մահկանացու որդի է ունեմն մեռելոյ ։

(30) Աղաղակ ոմն ։ ԵԹէ զհոգին սր առանց բղխողին իմասցուք, լի-նէր անարգ ինչ հողմ տատանեալ, զոր ոչ գիտեմ՝ ուստի գայ, կամ յո երԹայ. և ոչ գասի 'ի Թիւ անձնաւոր գոյացութեանց. որպէս և ան-միաքն խորհէին ասել թէ ոգին սփռի իբրև զօդ Թոյլ. և ոչ գասի ընդ կենդանիս ։ (Իմաստ. Բ. 3 ։)

(31) Յառաջին կարգել ։ Յանդգնի զրկել զհայր յիւրմէ բանէն. Ո ան-բաժանելին. (մի օրին. անբաժանելի) բաժանանօք, անարգանօքն՝ որով ան-բան առնէ զհայր, կարծէ պատուել զմեծութիւն հօրն, և կամ նուաս-տութիւն տայէ բղխողին, ոչ բնաւորութեամբ գոլով հագնոր. այսինքն ոչ բնու-Թեամբ ունելով զհոգին՝ այլ առաջական իբրև օտար եռութիւն ինչ, զայն-

ակնածն փաղանէ պարունը, սրբազանեալաց, այսինքն բանիւք հաւատոյ հերքեալք և նզովեալք ։ Այս է բանն նիկիոյ ժողովոյն՝ եդեալ զինի հանգանակին, իսկ որք ասենն էր երբեմն, ևն ։ Որպէս և յաջորդն ։ Ուստի զՀք երրորդումն փառաւորելով, է բանն մերոյ Լուսաւորչին ։ իսկ մեք փառաւորեսցուք ևն ։ Աստանօր զազդարեցուցանէ մեզ վարդապետս զբան զաւանութեան, ոչ խոնարհեալ ինչ զմի եկեղեցւոյ ։ զորմէ չեք յիշատակութիւն 'ի բուն նիկիական հանգանակին ։ ... վասն այսր 'ի բանն հն. լուծ. 1 ։

(32) Գուլումն ծածուկ խորհրդոց ։ Զայլայնի խոստովանութեան զաղանի խորհրդոց ծածուկթեդ, ... , բացայայտեալց յայսմ Ճառի զաւանութեան, քեզ ընծայեցի ։ որով զինեալ մնի 'ի հանդէպն աստնէախօսութեան ։

(33) Փառաբանուցոյն անմահից ։ Այսինքն անմահ փառաբանչօք, կամ հրեշտակօք ։ Մինչև սաղմեալ էին զերկինս և զերկիր՝ հանդերձ հրեշտակօք և մարդկամբ, զոր արդէն փառաւորեալ էին 'ի փառս լուսոյ ։ (Յօրէն ։ ...) 'ի քո սեպհական լինել ։ զի սաղմամբ բանաւորացս ոչ յաւելաւ քեզ նոր կատարելութիւն, ուստի և ոչ նոր փառք նկլքին ։ վասն որոյ խնով խոստովանողական զաւանութեամբս ոչ եթէ կարօտեալ մեծամեծս 'ի քեզ, այլ զի հաճեցար յարգել զնս, ընդունելով զերգ բանիս կաղուրդութիւն, կցորդութեամբ բանիս հաւատոյ՝ որով առ քեզ գոչեցի ։

(34) Զուիներն փախանս ։ Զհոգիս իմ, յորում 'ի մկրտութեան մաքրեալ քո շնորհացդ՝ և ոչ խնով աշխատութեամբ զրեցեր զապաշխարանս օրինացդ, եղծի մեղօք ։ և ես այժմ փոփոխեալ ... , ... աղաւաղեալ և Ճզնութեան զերկրորդ ... հաւաստեմ ... , զանամ կարգել ։ Թէպէտև ասէ՝ հաւատոյ խոստովանութեամբ զաւանեմ զքեզ Տէր Տէր ։ այլ զինչ օգուտ՝ յորժամ ոչ առնեմ մեծամեծացն զպատուէրս քո կենաց ։ ... 'ի ծննդեանն նախընթացն օրինաց, ոչ եթէ ... , այլ եթէ ... և խօսուն զպեյս շնորհօք հոգւոյդ ։ բայց զործովք եղծի, որոյ վասն արժանի եղէ խոստովանելոյ ։ և միայն ... բազում աշխատութեամբ նորոգել ևն ։

(35) Բաղձօք պաղատելոյ ։ Յառաջադրեալն բազում աղօթական բանիւք պաղատանեցայ, որ ոչ են գրեալ 'ի ձայնս զաւանութեանս ։ Յայտնանէ յայտնի է, թէ զայս զաւանութիւն յետոյ քան զայլ աղօթսն յօրինեալ է ։ Կամ, թերևս ակնարկէ յայլ աղօթս՝ զոր ձայնիւ առանց գրոյ մատուցեալ էր առ Ած ։

(36) Պանից բաղարջոց ։ Բաղարջ կամ անխմոր պանից, այսինքն զհնականաց հացն ։ (ստմբուն ։) Բանն բաղարջ բազում անգամ եբրե. ածական՝ նշանակէ անխմոր ։ (որպէս Ելից ։ ԺԲ ։ 39 ։ եԹ ։ 2 ։ Դատաստր ։ Ղ ։ 20 ։) ևն ։ Խմորս այսր անդուոյ ։ 'Ի զաւանութեան բանիցս ոչ յաճախեցի հայցուածս, բայց զի՞ս բարերար՝ ընկալ Ը այսմ և զոր յառաջին աղազատանս յիշէին արարեալս ։ և զանկամ զի այս ամենայն խնդրուածք մատուցին առաջի քո 'ի մաքուր անձանց կամարարաց քոց՝ եբրե. զբաղարջ պանս խաղով զանհալեալս Ը օրինաց, այսինքն եբրե. խոստովանութեն անխառն 'ի խմորոյ հերձուածոց ։

(37) Ո՛չ հատուցանելանց մեալ ։ Գթութեամբ քո յաղթես ոչ միայն հատաբակ մարդկան կամ առհասարակ ամենայն մարդոց, որք եթէ ընդունթհանկկք՝ ... պատուիրանս զթաւէրք առ միմեանս լինել, և սակայն բազում անգամ ... կրից և հակառակութեամբ անգթանան առ եղբարս ։ Այլև ... , հրեշտակաց անախտ ընութեան՝ որով բարերարք են, զերազանցես զթութեամբ ։ եթէ զի նշքա բազում անգամ անկեալ լեալ չարութեան մարդկան՝ պատու-

հասանէին, թէ ոչ արգելուին․ որպէս ցուցանէ ('ի Գ․ Թագ․ ԻԲ․ 16։ [illegible] ։ ոչ միայն հրեշտակաց զօրութեան յաղ-թեա, այլ առաւել քան զայս՝ նաեւ անմահութեան արարածոցն 'ի քէն, ա-րքայութիւն, զաւակ, եղբայր, և այլոց, որք ընդդէմ առաւել հաղորդե-ցան զօրութեան սոյ, քան թէ հրեշտակք խելամուտ ընդունելութեանց, որոց և գործոյք նորոգութեան սուրբ [illegible], թէ այսպէս է արդարոյն լինել մար-դասեր։ (Խոսրով․ ԺԲ․ 19։)

(38) Կամաց ողորմութեանց։ Հայի 'ի բանն (Միք․ Է․ 18․) * Զի կամե-ցօղ ողորմութեան է։ || կամ բառ սոսնից, 'ի բանն․ * Զողորմութիւն կա-միմ, և ոչ զոհ․ || զու միայն ես սակէ՝ ունօղ կամաց ողորմութեան․ քանզի դու ընութեամբ յողորմելն ես յօժարական․ մինչ զի նաև 'ի պատուա-հասակս՝ զողորմութիւն կամիս։ Զի և որք 'ի մարդկայինս [illegible] երկնային եղեն, ընութեամբ երկրաւոր գոլով երբեմն նուաստացեալ յո-ղորմութե․ իսկ դու ոչ ունիս չարանալ, ոչ կարես խոստանալ ընութեամբ բարերար։ Տես և բան ձԴ․ ԼԹ․ 14։

(39) Բան եւն ընծայեցեր։ Այնքան ծառայական խոնարհ փրկութեան ան-կարօտ Ած, մինչ զի զհրեշտակսն՝ կարգեալս 'ի քոյդ օրհնաբանութեան՝ ոչ միայն արգելուս 'ի պատուահասակոյ ընտրութիւն զդասնցառնորա, այլ և խաղաղ միջնորդ զնոսա կացուցանելով առ փրկութեան մարդկան, և քահանայս և քարոզս, առհմանեցեր աղօթել անխափանօղ առ զթութիւն քո առնելով, ողորմած երաշխաւոր․ որ է աղօթքն հրեշտակին․ (Զաքար․ Ա․ 12։) Եւ զայս՝ անհեղեղական յորդորոյանհեռանք․ այսինքն միշտ 'ի նոյն պաշտօն խըն-դրուածոց պատրաստելով, իբր քահանայս միջնորդեանս՝ և ոչ ապա-ժամանակեայս որպէս զմարդիկ։ Զայնպիսի պատուհասս եսասպ նոցա 'ի Բե-րոց գրեանց կենդաղականաց․ այսինքն մաղթել 'ի մեր գիտաց որ կենդաղա-կանքս եմք և մարմնաւորք, զերկնայինն կարգելով միջնորդս երկրաւո-րացս, ուր օրհնական երկրաւորն երաշտաղեան հայցեն այց առնել եր-կնաւորն երաւաղեան, յաւիտեանելով զանեղ անեկելոյ հրեշտակաց փրկու-թեանն մարդկան։ Փոխանակ սորոբանելոյ․ 3 օրին․ եղանակ զննեն՝ սոր-բանկեցելոյ կամ սորոբանեղոյ։ և փոխանակ օրհնականն, 4 օրին․ զննեն օրհնականն․ այսինքն հրեշտակաց երաւաղեան։

(40) Մածար ճառագայթ։ Ճառագայթեալ 'ի մարմնի անօսր ընութեան։

(41) Զաղաչողացն բաղյան։ Կատարեցեր զպատղամս հրեշտակաց, (զոր մերադարձն յիշեաց։) Եւ նոցա աղաչանօքն Եղանագոյ եղելոյս եւէյ։ 2 օրին․ եմ, եղկելոյս ինձ եղեր բարի բարերար՝ մարդասիրելով, եւն։

(42) Ատ ծեղոցելոյս։ Մինչ կատարեցեր 'ի մերոյ մեղուցելոյս, կամ առ մեղուցեալս՝ զբարի պարգևս կամ զկամեցողութեամբ կենդանատուր կամաց քոց։ Զկատարած աղօթիցս յայն կնքէ, թէ զաղաչանս հրեշտակացն միջնորդաց ընկալեր, կատարեցեր առ մեզ․ բայց այնպիսի օրհնական՝ զի դու եղեր թշուառացելոյս ինձ առաջարկ բարերար և միջնորդ, յայնպէս զուարթնոցն, այն աղաչանք զոր 'ի զուարթունսն արկեցեր, եղեն իբր 'ի քո ընտրանաց․ զու եղեր աղաչաւոր և կատարիչ, և 'ի կատարել զայն՝ ոչ այլ ինչ առնես, բայց ընտ․ 'ի զթովսն առնել զբարերարութեան կամս քո։

Մերատին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն տէրս մաղթանաց բանի։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

ԲԱՆ. ԼԵ.

ա. Եւ արդ՝ տէր զօրութեանց, մեծութիւն ահեղ, [1]
անտարակոյս տեսաւորութիւն, կամք ամեն֊
ընդարձակ, առատութիւն անպակաս. ո՞վ ոք զօրեսցէ
տօնել հանդիսիւ [2] պարերգութեամբ՝ 'ի միոյ կաթուա֊
ծոյ ցօղոյ քաղցր բարուէ, որ ցանկ դեգերիս պատ֊
րաստել պատճառս հնարից՝ իմում փրկութեան։ Եւ
զոր մեծն է գրեալ՝ պատմել յապառնիմն. քանզի
[3] ոչ անուանեցար հրեշտակասէր, և որ զսլեստութիւն
նոցունց հաստատեցեր. այլ և զերկինս զամբարօք
նոցին՝ զմատանց քոց գործ, ոչ գրեցեր երբէք սի֊
րել զնոսա. այլ առեր 'ի պատիւ մեծաց գովեստից՝
առաջին դասեալ զմարդասիրութիւն։ Վասն որոյ կըր֊
կին մեծացուցեր քեզ անուն անճառ 'ի խորհուրդս
սոսկալիս. [4] զերկնայինս լուսակերպիցն կոչեցեր ընդ֊
նոսին սպասաւորս և գլխաւորս յատուկ մատակա֊
րարութեանց. իսկ զստորնային ծնունդս մահկանա֊
ցուաց՝ տիրական և ածական պաշտելի անուամբդ
պերճացուցեր։ Ընծեալ վերստին ըստ սահման կըր֊
կութեան չափոյ, լայնեցեր քեզ կտակս գրոց՝ ճառից
անքաւից՝ զանապակ ծորմանն ծայրագունին վեր֊
նում բարութեան։ Եւս և 'ի մարդանալդ քո [5] միդ֊
յէութեան, ոմանց վասն իւրեանց, և կիսոց վասն այ֊
լոց՝ զեղեր առատութեամբ զտուրս կենաց, արուեստս
բազմօրինակս, սքանչելիս ածագործս, նշանս ճշմար֊
տատեսիլս։ Որպէս զի թէ անդամալուծին պակա֊
սելոյն 'ի հաւատոցն, [6] հոգաբարձացն առաջարկութք
զցոյցս յուսոյն՝ գթացեալ ողորմեցար, և որչափ զօ֊
րեսցէ առաւել բան քո ամենակար՝ առ ախտալից
մարմնոյս մաքրութիւն աղաղակողիս հառաչման. քան֊
զի արդարև մեծ են չափք հրաշից՝ [7] քան զանմա֊
քրեալս հոգի՝ ընդ հաստել, զլուացեալս պատկեր՝ ան֊
տիրեալի աղտոյ ներգործել. նա զի և երկրորդս ա֊

ռաւելունք յաւազանին շնորհ յաճախեալ՝ զփառ՛սն
հայրենի բարձրացուցանէ ։

ը. Դու ես տէր որ սրբես զմեզ, որպէս ընտրեցե-
լոյն քո 8 Նախատպաւորեցեր մովսէսի. դու ես, որ
'ի մեղս և յանօրէնութիս՝ վերակացու եղեր տոհ-
մին յակոբայ, մինչ յեգիպտացւոցն երկրի 9 ընդ խա-
ւարն հեթանոսաց ընտանենային։ Դու ես, որ օրէնա-
գէտ առնես զմեղաւորսն 'ի ճանապարհի, ըստ բանի
երգողին դաւթայ. դու ես, որ 10 փոխատրես զքա-
րեղէն սրտից կարծրութիւն՝ 'ի լոյծ կակղութեան
մարմնոյ գոյութեան՝ բանի ընդունելութեան ։ Դու
ես, որ բաւես ընձեռել սիրտ այլ, և ճանապարհ
մի՝ երկնչել 'ի քէն զռովանդակ կենացն սահման.
դու ես, որ տաս զերկիւղ քո 'ի միտս խստութեան՝
առ քեզ ուշ ունել հաւատովք, ըստ մարգարէիցն
ձայնի ։

գ. Օրհնեալ քո շրթանցդ 11 զաշխարհաստեղծ
բերանոյդ՝ զմ̄ծեղէն անձրևացդ զկեցուցանօղդ կա-
թուած՝ մատն լսելեացս դրանց բացարան, որով զօ-
ձին խորամանկուն՝ բանսարկուին թիւնից՝ բարձցես
և բժշկեսցես ։ Ամենակալդ ձեռօք՝ զխօսնականացս
շարժողական գործի ըմբռնեալ՝ ազդեա զօրութիւն
ձայնի, որ տաս բնաւից ընտրութի բանի. 12 զի դաւ-
տիարակեալ զպատշաճականն՝ մի յանդգնաբար խօ-
սելով իբր զնախնին՝ լքայց 'ի յուսոյդ, և անբա-
նութե մատնեցայց վանեալ յորսողէն ։ Լուսաւո-
րեա վերստին զխաւարեցեալ հոգւոյս աչս՝ կենդա-
նաբաշխ աջոյդ կարկառմամբ, զի մի համարձակու-
թենն շիջեալ լապտեր շնչմամբ վիշապին՝ 'ի ներքոյ
գրուանին ստորածածկեցայց ։ Առձ զանօրէնութիս
իմ տէր, և ընկեա 'ի խորս ծովու. 13 որ է փոքր ա-
ռակ մեծութե քումդ անբաւութե, ըստ մարգարէին,
զիւմ ընկղմել չարութիւն ։ Կանգնեա կործանեալս
անձին՝ 14 նշան վստահութե, զի մի յուսահատութենն
կոթող կառուցեալ՝ զծածկեցելոցն բողոքեսցէ։ Բաց
հզօր և գթած՝ 15 զբժշկարանիդ կենաց վարդապե-
տարան, զի զառ 'ի ներքոյսն մշակութե կորուսչին
սերմանց՝ մանկաղաւ կամացդ՝ հուպ առ արմատ
խուզեալ հնձեսցես ։ Դէմ եդեալ հեռանել առ-

քեզ բողորիցդ ած՝ պետրոսեան օրինակութեամբն,
'ի կենցաղիս ծովու մեղանացս ալեաց՝ ընկլուզեալս. 16
մատո՛ ժամանեալ զաջդ կեցուցիչ՝ յօգնականութիւն ինձ
տառապանեցելոյս։ Ընդ քանանուհւոյն ձայնի՝ 'ի խորոց
սրտիս պաղատիմ, սովեցելոյս 17 ապականապատ
կաղկանձողական ամենաթշուառ վտանգաւորիս,
ապրուստ կերակրոյ փշրանաց հացի՝ 'ի բազմազեղդ
քո սեղանոյ մատնաւորեսցես։ Որով փրկութիւն 18 նիւ-
թոյ խորանիս՝ որդւոյս դառնութե, որ եկիր խնդրել
և կեցուցանել զկորուսեալս։ Զի քո է մեծու-
թիւ, յաղթութիւն և զօրութիւն. և դու ես քաւութիւն
և բժշկութիւն, նորոգութիւն և երանութիւն. և քեզ վայել
է փառք և երկրպագութիւն յաւիտեանս. ամէն։

---

(1) Անփարախոյս փէսատորոսէ։ Աներկրայ տեսողութիւն կամ ճանաչումն. կամ, աներկրայելի տեսչութիւն, խնամակալութիւն։ Կամ՝ ամենընդարձակ. (2 օրին. ամենայրչակ.) կամք ընդարձակեալ յամ բարիս, առ ամենե-այն և յամ ժամանակս, ունելով և տարածումն անպարագրելի. ոչ միայն կամիս և կարես զամ բարիս, այլ և արդեամբք տառապեցուցանես ա-ռանց նուազելոյ։

(2) Պոլէրգոսէ։ այլ օրին. պարուներգոսէ։ Ո՛վ կարապետ յայտնի գո-վութեան հաւաքել 'ի մի նշանաբան, զփրկչական մասն ինչ 'ի մեոյ կանթեղա-ծոյ բարութեան քո, որ միշտ պարապես պատրաստել հնարս փրկութեան իմոյ։

(3) Ո՛չ անուանեցար հրեշտակաւէր։ Թէպէտ և զհրեշտակս սիրէ ած, ոչ և զերկինս զամենորոց նոցին, տառեզօք, և զամ արարածս ըստ իւրաքան-չիւր արժանաւորութե, սակայն ոչ ասացաւ 'ի գիրս յայտնապէս սիրել զնո-սա, կամ 'ի սիրելոյն զնոսա ոչ առաւ ած անուն մականունական. այլ վս մարդոյ բազում ուրեք ասացաւ սիրել ած, և 'ի սիրոյ անտի անուանե-ցաւ. ուստի մեծ փառս համարի իւր զմարդասէրութիւն։ Որով և կրկին մեծացուցն իւր անուն. զի 'ի վերայ Այ անուանն՝ որ արարչութեն է, ընկալաւ և զմարդասէրն, որ անճառելի անուն է, նշանակիչ սոսկալի խորհրդոց սիրոյ նորա. զի Այ անուամբն ոչ ճանաչի. իսկ մարդասէր կոչմամբն՝ իբր հաւատարիմ և բարեկամ մարդկան։ Եւ տես զայս որ մեծն է՝ գրեթէ ասէ, ոչ եթէ զնոր ինչ և զանծանօթ յայտնելով, այլ զափոխել յօդուածինս. որպէս զի միշտ յիշատակեսցի յամենեցունց այսպի-սի անհամեմատ գթութիւն։

(4) Զէրեսոյինս լուսակերպիցն։ Փոխանակ ասելոյ՝ զերկնային լուսա-կերպս, զհրեշտակս՝ որք լուսակերպ և հրանիւթ ասին վասն անմարմ-նութեան և մաքրութեան, և վասն զմեզ լուսաւորելոյն, կոչեցեր պաշտօ-նեայս և գլխաւորս, իշխանս, վերակացուս յաջողորդութեց, մատ-նաւոր գործոց նախախնամութեանդ և փրկագործութեանդ։ Իսկ զմանկա-նացու մարդիկ՝ մեծացուցեր փոխանակ [illegible] անուամբ. ասելով նո-ցա, սիրել ամ երկիր. և զոմն կոչելով ած փառաւորի, և զայլս՝ թէ ածք էիք։ Այս գթութիւն քո անցեալ քան զսահման հաստատութեան մերոյ, [illegible] ընդարձակեցեր մարդկան՝ արժանացուցա-

նել անմտիւ ճառս զանխառն և զծայրագոյն հեղմանէ ամենայնի խա-բուԹեղ :

(5) Մի՛ք յեզուբէն : Որ միգ յածուԹէ. սոյնպէս խմէ , և 'ի բանն խր. 3 : 'Ի մարդամաւղդ քո ոմ բանդ ած' մի յածուԹենէն , առաստուԹեամբ հեզքր , պարգևեցեր , ոմանց վասն ինքեանց , ժողովրդեան և խրախճանչեր կարօտելոց' յօգուտ նոցա . և կեոց վասն այլոց , առաքելոց և այլոց պաշ-տօնէից' յօգուտ այլոց . շնորհեցեր ամեն տուրս կենաց , արուեստս , սքանչելիս են :

(6) Հոգաբարձութեան առաջորդութեան : ԵԹէ անզամմալութիւն' որ ոչ ինքեամբ պատճառեցաւ , կամ ոչ ինքնին եցոյց զհաւատս , այլ միայն հոգաբար-ձուք նորա առաջի արկին զզոյցս կամ զնշանակս յուսոյ նորա , ողորմե-ցար , որչափ առաւել զօրեսցէ բան քո 'ի մաքրութիւն ախտալից մեղք ապականեալ մարմնոյս , աղաղակողիս հաւատցեալ , այսինքն մարմնոյս կամ անձինս' որ ինձէն աղաղակեմ հաւատացմամբ , կամ գոչեմ զբանս հե-ծութե :

(7) Բան զանմաքրուր : Բան զանմաքրուր հոգիս սրբելն' առաւել մեծ սքանչելիք են զարդէն մաքրեալն անարատ պահել . վասն զի նախկինն է գործ առաջին շնորհաց . իսկ երկրորդս ենԹադրելով զառաջին շնորհսն' պահանջէ և զհանապազորդ նպաստս զօրաւորս ընդդէմ պատերազմաց մարմնոյ և գիւին : Նա զի և Եբէ..... անարատուԹին շնորհաց' առաւ-ելպէս յառաջանին գեր յաճախելով 'ի վերայ շնորհաց միաւորուԹե յաւե-լեալ , կամ գերազանցեալ քան զառաջանին շնորհ . ըստ որում զի այն 'ի մանկուԹե առանց մեր կամաց և գործակցուԹե ընկալեալ , իսկ անարատ մնալն 'ի շնորհս' մերով կամօք և գործակցուԹբ . որով վճարոն հոգեւոր առաւել բարձրացուցանէ , այսինքն Թէ զայն փառսն' որով ինքն ած փառաւորի , և Թէ զայն' որով մեք փառաւորիմք յամ երանուԹբն : Արդ յաւելուածով բանիս զայն ցուցանել կամի , Թէ զմեծն հրաշից' այսինքն զանարատ մնալն 'ի շնորհս պարգևեցեր բազմաց . տալս տուր և զփոքրն' զգիւղինն , զորբիլն յարատոյ մեղաց :

(8) Ամենապարտաւորեցեր մոլեկօրի : Ամենայն կամ զայն խմանայ , որ առա-ցաւ (եկեց ե՜. 7.) * Բարձեայ զամօրէնուԹիւս և զանիրաւուԹիւս || : և կամ խմանայ զորեկլ ձեռաց մոլանաւ 'ի բորոտուԹէ , յօրինակ մաքրու-Թեն 'ի մեղաց : (եկեց . ե . 7 :)

(9) Ընդ խաւարն հեծանոտոյ : Եբրայեցիք յեգիպտոս կալով , ոչ միայն զհեԹանոսական պաշտամունս ուսան , այլև բազումք հաղորդեցան 'ի նոյն պաշտամունս , որպէս յեսու յանդիմանէ զնոսա : (իդ . 14.) * 'Ի բաց արարէք զածս օտարոտիս , զորս պաշտեցին հարք ձեր յայնկոյս գետոյն , և յեգիպտոս || : Արդ ասէ , ընդ խաւար կռապաշտուԹեան հե-Թանոսացն ընտանենայլն եբրայեցիք , որ բնաւ օտար էր յաբրահամեան տոհմէ . քանզի որպէս բնակուԹբ եղին զատան 'ի հայրենեացն , նոյնպէս 'ի կռապաշտուԹէ նոցա :

(10) Փոխարքեւ . . . 'ի լոյծ կակղուԹէ : Փոխես 'ի լուծման կակղուԹե , կմ 'ի լոյծ կակղուԹե : Զխոտացեալ սիրտս փոխես 'ի կակղուԹե մարմ-նեղէն' առ 'ի ընդունել զսերմն ամենայնի բանից : Բոլոր ըմբռնել , կա-րող ես տալ զսիրտ նոր , և զճանապարհ բարի' առ 'ի երկնչել 'ի քէն զամենայն ժամանակս կենաց :

(11) Զուղղաբերուցելոյ բերանոյդ : Բերանոյ' որ աշխարհաառեղծիդ է . այսինքն քեի այդ . զի որպէս մարմինն' այդ ասի վասն միաւորութեանն յանձն բանին այդ , սոյնպէս մասունք մարմնոյն' և ամ մարմնոյքն այդ ասին : Սոյնպէս ածեղէն անյրև ասի Թուքն , այսինքն այդ , կամ առ ամ բանին վերաբերեալ : Ըստ այսմ և զկնի ասի' ամենակալ յեան . և այլուր ,

տարապայմանագործ չնչին, ծաղրական, եւն. այսինքն աննշանակալին ձեռն, առանց գործեաց բարւոյ։ Այլ զծծայլին զթուքդ կամեցուցեալ ասէ, ծծեա այնու զականջս հոգւոյս. որպէս զի բացցին 'ի լսել զկենդանարար բանս քո, և այնու բարձցես, բժշկեսցես զխորամանկութեան օձին, որ են թիւնք բանսարկութեան սատանայի։ Թերեւս 'ի նմանութիւն առնու զզօրութիւն մարդկային թքոյ, որ ասեն 'ի բերան օձի սպանանէ զնա։

(12) Զի տառապելոյ աղաղակողին։ Անձայնին ձեռօքդ կալեալ զլե-զու իմ, դխօսնակաց գործի, որ է գործի բանաւորաց կամ խօսելոյ. (4 օրէն. դխօսնակացն, կամ նոցա.) առ'ւր նմա զօրութիւն ձայնի. որպէս զի ուսեալ զպատշաճ խօսս, և մի' յանդգնութեամբ խօսելով իբր զնախնին ադամ, անկցի 'ի յուսոյդ. և անխափանելի մաղթեսցի, անպատասխանելի եղէց, 2 օրէն. անխափանելի, և մարթ է իմանալ, անյագ պէտս և տան-ջանաց։

(13) Որ և ձօնք առալ։ Ցուցէ է փոքր օրինակ քո անբաւ մեծութեանդ։

(14) Ուշով փոխանակելի։ Արժան, կամ ամբողջութիւն յուսոյ. զի մի' յու-սահատութեան կորուսեալ, քար կանգնեալ. (տեսիլ թաշ.) զի՝ զի մի' յու-սահատութեան խորոց կոթող կանգնեալ 'ի սրտի իմում, զծածուկ մեղս իմ հրապարակեսցէ։

(15) Զերծեալ արդեան կենաց։ Բաց զմտաւորն ուսմանց, կամ զվարդապետութիւն հոգեւոր բժշկութեանց. որով ընդ 'ի Նեքտոյն, զնեղքեն բաղձանս ատրմանց սատանայի՝ մանկաւարժ քո հրամանիդ յարմարեալ անտի խու-լեալ կորուսցես. վասն զի ատրմանք ծծայլին բանիցն զուարթութեամբ ըն-կալեալք՝ 'ի բաց հանեն զբոյս սատանայական ատրմանց։

(16) Մտօք ծանեալ ըղձիւ։ Կամելով առ քեզ գալ ըստ օրինակին պետ-րոսի 'ի ծովու աշխարհիս, եղէ 'ի վտանգ ընկղմելոյ. այլ ժամանեալ հաս, մատո՛ մերձեցո՛ զաջդ աղաւնիչ, զոր օրինակ պետրոսի արարեր։

(17) Աստղանոյանոյս։ Հին ըթ. ասէ՝ լափին է, զոր տան շանն. և ըստ այսմ ոմանք իմանան՝ շան կերակրոյ սպասող։ Եթէ զքսան աստղանոյ խմացուցեալ շուն որսական, ըստ այսմ աստղանոյանոյս նշանակէ՝ եթէ զշուն սպասող կերակրոյ կամ փշրանաց։ Սակայն ճշգրիւ քննեալ, աս-տղանոյ 'ի պարսիկ բառէն առ կամ էող, որ է, նշանակէ ձիաւոր որսորդ. վասն զի 'ի գիրս փիլոնի. (ծննդ. բան դ. համար ճկէ.) եստա-կոչի աստղանոյ, փոխանակ ասելոյ՝ հմուտ որսոյ. և առաջ մեկնեալ եւս ա-սէ. * Աստղականներին ընդ շունս և ընդ գազանս առնէ զիւր զգեգերումն վարուց ||։ Որ որսորդն շունս ընդ իւր շրջեցուցանելով, յանշէն և 'ի պատշաճաւորեալ անտառս գեգերի։ Յայս միտս հայի և 'ի գիրս Պլատ. Թ. 5, առեալ յաղագս որսորդութեան. * Հետամտարեալ զասպականեացն հոյլս ||։ Որ զօրավարութիւն որսորդացն։ Արդ՝ ըստ այսմ աստղանոյանոյս նշանակէ սպասաւոր կամ ծառայօղ որսորդի. որպէս է շունն որսական։ Իսկ նոյն-նանյոյանոյն՝ նշանակէ (վընկվընկացող.) Յանձն առնում և ես ասէ, ընդ քանանացի կնոջն զանարգ կոչումն շան. միայն զի և ինձ մանանա-արեսցես 'ի փշրանաց կենդանարար հացիդ։

(18) Ներմեռելոյ խորանին։ Որ, որ 'ի ձեռաց բարեկամացն, և առ մեկնաբանա-կցեալք 'ի ձեռաց հեթանոսաց փրկեցեր զսպասս խորանին և տաճա-րին, նոյնպէս փրկեա՛ 'ի ձեռաց դիւաց զանձն իմ, որ նուէր եմ խորանի քո եկեղեցւոյ՝ հաւատովքս, այլ և կրօնաւորութեամբ և քահանայու-թեամբ։

Մէրոպէն յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ :

ԲԱՆ. ԼՕ.

ա. Եւ քանզի անթիւ են յաճախեցեալ եւ գերազանցութեամբ միշտ առաւելեալ փըրկանաւորդ արգասիք շնորհաց՝ [1] առ պարտուցս իմոց առաւելութի, չարչարանացդ հանդէս եւ յանձնառութի : [2] Օ ափդ ամփոփիչ ամենից հոգւոց՝ գոյից արարիչ՝ 'ի գործարանի մահուն նշանի խաչին հեղուսեր, զի զձեռնարկութի իմ ընդդիմութե կամաց քոց՝ լքցես : [3] Օ ընթացողականդ լծակցութի երկոցունց ոտիցդ կեցուցանողաց՝ յանարգելութեանս պատճառ՝ 'ի պատժարանի փայտին մածուցեր, զի զփախուցեալս վայրապութի թշուառացելոյս դըրաւականեսցես գթածաբար :

բ. Ո՛չ դօսանալ [4] ձեռաց կափողացն հրամայեցեր՝ օրհնեալ գագաթանդ, որ զթզենւոյն տունկ առժամայն չորացուցեր, զի եւ զառ իս ներելոյդ օրինակ կանխաւ աւետարանեսցես : Ո՛չ գանողացն ապիրատութե [5] զխոստովանեալդ Աստ՝ սպառնացար, որ զարուսեակն մթացուցեր, զի մահացելոյս անձին՝ բարութի հանդստեամբ հանդերձ գործեսցես : Ո՛չ ըդհայհոյչացն [6] հնարաւոր չարաքանութի կապտեցեր, որ զլուսնին պատկեր երանգաւ արեան գունեցեր, զի զանհամարձակ լեզուս 'ի գովեստ քեզ զօրացուցես : [7] Ո՛չ նախատողայն մոլեգնութե ստատեցեր, որ զտարերս սասանեցեր, զի զթշուառացեալս զլուխ՝ զթութեդ օծմամբ իւղեսցես : Ո՛չ 'ի մոլորեցուցիչն կարդալ զքեզ Աստուածապանիցն՝ զօդուած ծնօտիցն թաժանեցեր՝ քակտեալ 'ի միմեանց, որ զկարծրութի վիմացն հերձեր, զի զանուանակս բարեաց հոգիս՝ 'ի բերմանէ ընդունայնութե ողորմութբ հանդարտեցուսցես : Ո՛չ զպահապանացն սուրս՝ [8] ընդերաց իւրեանց մատուցեր, որ զորովայն օձին սահեցման հողոյ մատնեցեր, զի զտառապեալս մարմնոյ ոսկերս՝ իբր 'ի գանձարանի պահեալ, կենաց յարութե ար-

ժանացուսցես ։ Մ՛է 'ի կնքելն զշիրմին փականս [9] կեն-
դանակիր քո գերեզմանին՝ անդրէն յորսայսեալս
զնոսին յանդունդս երկրի տուղեցեր, զի 'ի տապա-
նակի անձինս զնշխար լուսոյդ հանդուսցես ։ Մ՛է 'ի
համբարելն զքեզ կորուսեալ, և [10] իբր զերկրաւոր
մարմին գողացեալ, համայնաջինջ և ամենապատ՝
զսերմն ծննդոցն կրճատեցեր, զի զիս զանարժանս
յիշատակի ընտրութե բարեաց՝ անկորուստ և անմխա-
սելի՝ ընդ փրկեցելոցն հաղորդեսցես ։ Մ՛է յարծա-
թոյն [11] կրկնակապէն կաշառաձգութե, որ 'ի գան-
ձարանէ հօր քում նուիրաց քեզ գրաւ մատնութե
և անարգութե մատնաւորեցին՝ զուրացողացն մոլեգ-
նելոց, ըստ հին հարուածոց հանոյն մովաբու՝ 'ի
յարձան քարի յեղանակեցեր, զի զիս զվրիպեալս 'ի
հաստատութենց՝ և ընդ իշխանութե մահու վաճա-
ռեալս՝ արեամբ քո փրկեալ, 'ի հաստատութե վիմիդ-
կառուցես ։ Օրհնեալ կրկին, օրհնեալ վերստին,
յամի միշտ օրհնաբանեալ՝ յաւիտեանս յաւիտենից ․
ամէն ։

---

(1) Ա՛ս պարզապէս խնդր ։ Փրկաւէտ պտուղք շնորհաց քոց միշտ զերա-զանցութե [illegible] առ իս, որով և իմ պարտիքս [illegible] առ քեզ․ և 'ի մէջ այնոցիկ [illegible] հրաշալիք եղեն համեմատ չարչարանացն՝ զոր կրեցեր յանձն առեալ ։ 'ի կարգ. արկանէ [illegible] չարչարանացն, յարելով [illegible] անցեալն՝ [illegible] որով [illegible], [illegible] և կեցուցանել զկորուսեալս ․ զի [illegible] զերծ և [illegible] ։

(2) Զ[illegible] ։ [illegible] կամ [illegible] և [illegible] ։ Հայր 'ի [illegible] ․ (Ժ․ 8․) * Զ[illegible] քո [illegible] || ․ և (Ժ[illegible]․ 10․) * Մ՛է 'ի [illegible] կենդանակաց, և [illegible] || ։ Զ[illegible] 'ի [illegible] ․ (3 օրին․ [illegible]․) [illegible] քոց [illegible], [illegible], [illegible], [illegible] ։

(3) Իսկ Եթէ հայրն: Իսկ արդ՝ եթէ Հայրն երկնաւոր այնքան հոգացաւ 'ի փրկութիւն իմ, առաջի հէգ փրփրիս, ընդէ՞ր տխրիս ով անձն իմ կործանեալ ոչ յածմամբ հնարաւորութեանց, ոչ յածային հաւատոց, այլ 'ի քո կամաւ գործեալ հակառակութեանց, այսինքն 'ի յօժարութեանց կամ 'ի գիտեցմանց առ չարն: Այսպէս կապակցելի է բանս, իսկ այլքն են ընդմէջ անկեալ բացատրութիւնք փրկագործ կամացն Հօր: Ոչ ինչ կեաց առէ՝ 'ի սիրելիդ, այլ կամաւ նուիրեաց մահու չարչարողացն զԻնա. այսինքն նուիրեաց կամ մատնեաց զԻնա կամ գործարանի չարչարողացն մահուամբ, կամ առ 'ի մահ: Եւ այնպիսի կամաւորական նուիրումն, զի և կանխաւ 'ի հին ժամանակաց մարգարէիւք յայտնեաց, և օրինակօք նախատպաւորեաց էն: Արդ ընդէ՞ր խռովես զիս անձն իմ, յաղահովութիւն սոփանայականս, որ 'ի սատանայէ շարժեալ, կամ որ յատուկ է սատանայի վասն անզղջութեան:

(4) Դրոշմ Նախագրին: Որպէս օրինակն գաղտնի նախատպին, այսինքն հարթելի. որ անպայման սպանեալ, առաջին առեալ երեք քնոյ զենմանն. կմ, ըստ հին լուծ. օրինակն մովսէսի՝ որ բազկատարածութեամբն եղև օրինակ քնոյ խաչելութեան. և ըստ այսմ նախագիր իմանի առաջին գրոցն: Ն ուխտադրութիւն խորանին, զորով ցանեաց մովսէս զարիւն ուխտին այ: (Եբր. Թ. 20. 21:)

(5) Եւ այլ ծորձորէին : Բազում են առ մարգարէս այսմ նման բանք . որպէս Եսայ . Խ . 31 : Ովս . Գ . 24 . 25 : Ղուկաս . Ա . 7 . եւն : բայց թուի խոնանալ եւ զՅոզիէլի բանն առ Յովսափատ արքայ Յուդայ . (Բ . Մնաց . Ի . 15,)

* Ո՛չ է ձեր պատերազմդ, այլ Այ || :

(6) Ցնդական խնամարկելոյ : Իսկ յեղանակ խնամարկելոյն Այ ոչ կարէ կշռել մտօք` ո՛չ միայն մարդկան երկրաւորաց, այլեւ ո՛չ հրեշտակաց անմարմնոց . եւ եթէ բիւրիցս կրկին կշռեսցեն, չափ ոչ գտանեն . քանզի Այ որ անբովանդակելի է բնութեամբ եւ զօրութեամբ, նաեւ բարերարելն է անպատմելի : Եղանակ խնամարկելոյն այն է` զոր նախ ասաց, եւ զկնի ասէ զարձեալ . այսինքն Այ ինքնաշարժ գթովք հոգալ զփրկութիւն մարդկան, ոչ արժանաւորաց եւ հաւատարմաց, այլ ապաշխարողաց եւ թշնամեաց . եւ զայն հոգալ միածնաւն, եւ այն` մահուամբ նորա, եւ զայն` կանխահաստատելով մարգարէիւք եւ օրինակօք . եւ այն` 'ի նոյն կարգաւորելով զամենայն գարս անցելոց . եւ յայսպիսի խնամս բովանդակ մեր երկրորդութիւնն պարապեալ : Բարէ . որ միտք չափել կարիցեն զխորութիւն տերոյն Այ :

(7) Ով օրհնեալ, Հայր Այ, զոր օրհնաբանեալ, զՈրդին միածին առաքեաց . և մատ ակաւոր, Հոգին մի 'ի յերկուցն հաստատեալ, 'ի համաճութեան հօր եւ որդւոյ Լեզողան բոլ յանօ նաղեէ, ամենայն կամօք միաբանի . ուստի երկքին անձինք եւս պատարեալ են 'ի խնամս քո անձն իմ պարտաւոր :

(8) Համաճարուոյ : Եթէ խնդրես ասէ` ցուցակ կամ օրինակ այսր համաշունչ միակամութեան երից անձանցն առ 'ի զնոյն բարի ներգործել, այնպէս իմա, որպէս հոգին` կենդանոյն . որպէս կենդանին ոչ կայ եւ ոչ գործէ առանց հոգւոյ . եւ ոչ բանականն առանց բանին կամ մտաց . եւ ոչ մտաքն արարքին առանց պայծառութեան . և կերպարան կուսին, եւ ոչ էութիւն իրաց առանց կերպարանի կամ տեսակի նոցա : Այսպէս ոչ է, եւ ոչ գործէ Հայր առանց որդւոյ եւ հոգւոյ : Ուստի երկքին եամիօրինակ են առ կեանսն քոյն, եւն : Աս անբաւութին . անբաւութիւն են . անհասանելութիւն փարթամ են . անհատութեամբն բարձրեալ են : Բանն` համաճարուոյ ոչ է սեռական, այլ ուղղական, եւ նոյն իսկ համաբարոյ բանն` իմնիւ գրեալ ըստ սովորութեան բազում ձեռագրաց . զի եւ յայլ բառս առնեն . որպէս զեշերւոյ, մարդւոյ, Թեքւոյն, վայրենաբարւոյ . եւն :

Մերոբէն յաւելուած ճշճին հեծութեան` նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք ընդ Այ :

ԲԱՆ. ԽԲ.

ա . Եւ արդ` յայս բարեաց անկեալ 'ի սրտէ անձն իմ կործանեալ, եւ զօտեաւ հաւատոց պնդեալ զերիկամանցդ երկակի մասունս` [1] ըղձակերկնապղտոր խորհրդոցդ զցանկականիդ գործարան, խոստովանս լեր բարերարին Այ : Զմտացդ` իբրեւ զգործոց . զխորհրդոցդ` իբրեւ զլրուեաց . զան

տեսից՝ իբրև զյայտնեցելոց. զորտիդ ծածկութից՝ իբրև զբարբառումն ձայնից. ² զակնարկութեցն՝ իբրև զարդիւնականաց մեղանաց. ³ զազդել շրթանցդ՝ իբրև 'ի գլուխ ելելոց չարեաց. զոտիցդ հետոց՝ իբրև զպատուիրանաւն այ վազողաց. ⁴ զձեռացդ ձգումն առ ցասումն՝ իբրև 'ի հեղումն արեան գործողի. ⁵ զծիծաղելն բնաւին՝ իբրև զկամաւորական լքումն շնորհի. ⁶ զերդմնականն, որ թէ 'ի հանդէպս՝ թէ 'ի տարադէպս՝ իբր զգործակցութի խաբողին: Ո՜ ամբարտաւանութին՝ իբր զհին կործանիչ նախատեղծին բարձրութե. զսրտին նեղութի՝ իբրև զթերութի հաւատոց. ⁷ զմեղկութին՝ իբրև զպարտուի զառաւօրին պնդութե. զտրտունջն առ վտանգս կրիցն՝ իբր զուրացութի ուխտին, որ առ տէրն. ⁸ զապարասանութին՝ իբր զթոռն իմն անգթութեն. զամբարհաւաճութին՝ ⁹ իբր ոչէիւք առ վեհսն գոռոզութի. զհպարտութին՝ ¹⁰ իբր զկամաւոր հարազատ կտողին չարեաց: Ո՜ ակամայիցն՝ ընդ կամաւորացն. ¹¹ զբռնացելոցն՝ ընդ հաւանականացն. զեկամտիցն՝ ընդ բնաւորականացն. զանօրէնութին՝ ընդ ապատուածութեն. զփոքունսն՝ ընդ սաստկագունիցն. զնուազունսն՝ ընդ յոլովիցն: Ո՜ անձառիցն իմոց՝ իբր զձառնելեաց գիտողին. զանգրելոց մխատուցն՝ իբր զնկարելոց տեսողին 'ի յարձան ¹² մագնեստիս վիմի. զթեթևագունիցն ¹³ առ խտիր մտաց՝ իբր զդժուար ծանրութի բեռանց. ¹⁴ զխնդիր չափոյ ծածկելոցն՝ իբր զճշդով պահանջումն սատերն սակի՝ 'ի բերանոյ կիտին կորիւնի՝ չորեքդրամեան կշռութն. ¹⁵ զանդնդականացն գործոց՝ իբր 'ի յականջս այ արագժամանելոց: Ո՜ այսոսիկ յաճախեալ կուտեալ կրկին յանձնառութեամբ, վերստին պատմեալ աստանօր մեծաւ հեծութբ ¹⁶ զչէոցն՝ իբր զեղելոց, ընծայեալ այ զպարտութի վանեցեալ անձինդ. զի ընկալցիս 'ի փոխատուէն զշնորհօք թողութի ¹⁷ պարտուց մեղաւորին. զոր տէրն արդարացոյց, և հրաշափառապէս հռչակեաց, ամենապատիկ ներբողիւ կրկնեալ զգօվեստ զղջմանն՝ քան զպարսաւանս մեղացն:

Ք. Կարդեամ և դիզեամ անձինդ մեղապարտի՝ բամբասանս յոքունս, զքոյսն ¹⁸ խոհերս բազմամանեայս՝

անձն իմ կշտամբեալ յոքնախնդութեանդ բանիւ ։ Զչա-
րութիւն, զանօրէնութիւն, զվրիպութիւն, 19 զառ 'ի մար-
տին հանդիսէ փախուստ․ զպարտութիւն, զմոլեգնու-
թիւն, զամբարշտութիւն, զապշութիւն, զթմբրութիւն,
20 զքուննն արթնական, զառ 'ի յընթացմն՝ զնիր-
հումնն, զխորհուրդն օտարոտի, զբանիցն նանրութիւն,
զզազրութեան հաճութիւն, զյամենայն 'ի նմին, զփա-
փագելն՝ ամենայն ատելեացն, զաներկիւղութիւն, զանսաս-
տութիւն, 21 զանհարթութիւն, զթերութիւն․ զթիւրու-
թիւն, զլուծութիւն, զճշդութիւն, զանկապ արձակումն ։
Զծիծաղականսն, զվրնջողականսն, զկատակերգա-
կանսն, զգայթագղականսն, զպատրողականսն, 22 զանե-
գէպ քաջութիւն, զանյարմար մարտն, զառանց
օրինի արիութիւն, 23 զխեղդմունս հոգւոյն, զտա-
տանողականսն զերկշոտութիւնս, զբազմատեղնեան
ճիւղսն զորահետականս, 24 զանպատկառ փարաք-
մունսն, զգժտութիւնս, զգժդմնութիւնս, 25 զանդատ
ատելութիւնսն, զմարմանջմունսն դիւրըմբռնողա-
կանս, զփոքունցն զանկշռութիւս, զխոստմանցն դժրա-
դութիւս, զուխտիցն մոռացութիւս, 26 զնմանեացն այլա-
կերպութիւն, զկեղծեացն քողարկութիւն, զփառամո-
լութեան մոլորութիւն, 27 զյօնիցն յաւակնութիւն, զա-
պիրատութիւնս, զինքնասիրութիւնս, զնախագահիցն
տենչութիւն, 28 զհատուցանելն եղեռնականացն, զնա-
ցինսն՝ զանշահ աղճատանսն, զվայրապար բերմունսն,
զընթացակցութիւն խորամանկութեան բանսարկուին ։
Զբանին 29 սերմնականութիւն, զվաճառումն կե-
նացն՝ ընդ գնոց սատակմանն, զկորուստ աւանդիցն,
զհայրենեացն ծախս, 30 զկապարանն ձգողական՝ զփո-
կով լծոյ երնջոց անխզելի ըմբռնմամբ՝ զանօրէնու-
թիւս, 31 զյարաթաթաւ տղմաքնակութիւս, զլքումն
լաւացն, 32 զընթադրութիւս անկարծիցն, զկնի դար-
ձին՝ առ նոյն դարձ դաժանական․ 33 Զնորոգ մտացն,
զօտար խորհրդոյն, զանկայուն կամացն, զհաչման
հագագին, զէութիւն շնչոյն, 34 զևս քան զսահմանն կա-
նոնացն դրութեան՝ զիշխանականին զամենասփիւռ բա-
ցարձակութիւն․ և զոր չէ ճառելի, և կամ գրելի, և
կամ պատմելի, և կամ յերեսս դիմաց բերելի ։

Գ․ Եւ արդ՝ զիա՞րդ բժշկեցից՝ անձն իմ եղկելի,

'ի յայսքանեաց տիգաց խոցոտեալ, բարձեալ Թո-
ղեալ այր մի 35 տարագիր անողջանալի, ըստ մարգա-
րէին. քանզի մի 'ի վերագրելոցդ՝ բաւականապէս
զօրէ սատակման, Թող Թէ այսքան դարք սպանողաց՝
դժնէից դահճաց՝ շուրջ պաշարողաց: Մանաւանդ-
զի 36 ոչ այսու և եթ նմանագրութեամբ կշռի տա-
րացոյց տարժանեցելոյս. այլ զոր օրինակ անթիւ
բազմութիւն կայտառաց կարճաց խայթողականաց՝ 'ի
ստորին մասունս ծայրից տանացն զօրհասական Թոյնս
բերելոց, և յաման մաշկեղէն արկեալ՝ ամփոփէ զե-
լիցն շաւիղ՝ կապարանին շրջափակութեամբ. ցու-
ցանի արտաքուստ բարիոք, իսկ 'ի ներքուստ համ-
բարք չարի, և պահեստ կորստեան, և կոյտ կսկծման,
և գործօնեայք սատակման, և մշակք մահու: Նոյն՝
37 այսոքիկ են ամբարեալքն քո՝ անօրէնութեան տա-
ժանեաց Թշուառաքիրտն Թոշակք՝ 38 անձն պարտա-
կան կրկին սատակման. որ կամաւորաբար ընկալար
'ի քեզ, զոր Թշնամին սերմանեաց 'ի վերայ ցորե-
նոյն՝ յագարակի աշխարհիս. ով այր անմաքուր՝ ամ
բարիշտ և ծոյլ, բնաւին ատեցեալ, սիրօղդ մասացդ-
ախորժմամբ գլցեալդ մտ անառակութե. և զոր
առաքեալ ցուցանէ զԹիւս բանիցն՝ սարսափելեացն
կշտամբողաց, աստուստ սկսեալ մինչև 'ի կատար
կանոնի այնր պայմանի, և որ հասեալ են առ է՝ յայ
իրաւանցն վերայ, եթէ որք զայսպիսիսն գործեն, և
կամ կամակից են, արժանի են մահու: Նոյն՝ ես
ինձէն զիս ինքն պարտ վարկայ կրկին հատուցման՝
կորստեան սատակման 'ի մահ դատապարտութե. այլ
39 անխայեալ յիս ողորմութեամբ՝ բարեգութ, կեն-
դանի, հզօր, կարօղ, հնարաւոր, օրհ-
նեալ յաւիտեանս. ամէն:

---

(1) Զերկնաղդյոր խորհրդոյդ, Զկրկին մասունս երկկամանցդ որ է գոր-
ծարան ցանկականին կրկին պղտորիչ խորհրդոց, այսինքն ախորժութե
առ հեշտալիսն կամ առ չարս, և անախորժութե առ տրտմալիսն կամ
առ բարիսն. կամ զի կրկին կերք ծնանին 'ի ցանկականն, այսինքն ցան-
կութիւն յախորժելին, և փախուստ յանախորժիցն: Արդ՝ անդէալ ա-
սէ հաւատովք զմէջս ցանկականիդ, խոստովանելով լեր Բարեբարբն տր, որում
եմ ինչ յայտնի է, զմտաց մեղան իմրև զգործոց, զանձրևոյԹն իմրև
զանեալ, են: Այ այսպէս խոստովանելով. իսկ քահանայքն՝ այսպէս

որպէս և իրօք եղեալ է. այսինքն զմնացն իբրև մնաց, զանցացն իբրև անցաց են :

(2) Զ[illegible] : Զհայեցուածոցն. այլ օրին. [illegible], որ համաձայն է այլ հատուածոց, [illegible] մեղանաց. իբրև այս գնացք կամ արտաքին գործովք եղեալ մեղաց :

(3) Զ[illegible] : Զխօսելն կմ զբանս բերանոյ խոստովանեսցէ [illegible] չարեաց, իբրև գործովք վճարեալ չար : 3 օրին. [illegible] :

(4) Զ[illegible] : զբարկութ. շարժութեան ձեռին խոստովանեսցէ [illegible], աշխատողի կմ գործողի 'ի հեռուստ արտաքոյ, կամ, գործողի զհեռուստ արտաքոյ :

(5) Զ[illegible] : Զհամարձակ և զանխտիր ծիծաղելն, [illegible] խոստովանեսցի. իբրև զկամաւ թուլանալ 'ի շնորհէ համեստութեան և զգօնութեան. զի անճառ ծաղր՝ նշան է թուլացելոց 'ի բարեկրօնութենէ. որպէս ասաց հայրն մակար : (Վարք հարց. 23 :)

(6) Զ[illegible] : Զերգելն ատենից հարկի, թէպէտ և 'ի [illegible], 'ի պատշաճ իցէ, և թէ 'ի [illegible], յանդէպ իցէ. զի երգութեան թէ և ճշմարիտ իցէ, սակայն ատենից հարկի արտաքոյ անխտիր, անպատշաճութիւն է անուանել այլ, և վասն տեղւոյն յանպարժան և 'ի սուտ երգմունս : Արդ՝ զայնպիսի երգմնական բանս խոստովանեսցէ իբրև զզօրութեանց հայհոյութիւն սատանայի, կամ իբրև զնման գործ խաբեբայ մարդոյ :

(7) Զ[illegible], զթուլանալն 'ի գործս առաքինութեան [illegible], իբրև զյապաղելն զօրաւոր առաքինեաց. կամ, իբրև զյապաղելն և անկանելն զօրէնս պնդութեան և արիութեան. կամ որպէս թէ յաղթեալ իցէ զօրաւորն մարքն. զի յերուսն զինուորին՝ համարի լքումն զօրավիգին, որպէս ասէ զքաջն յուդայէ մակաբեան. (Ա. մակ. Թ. 7.) թէ 'ի վատասրտել զօրաց իւրոց՝ լուծաւ, լքաւ, անկաւ :

(8) Զ[illegible] : Զանհնազանդութիւն, զդժնդակութիւն խոստովանեսցէ [illegible], իբրև զծնունդ անողորմութեան. զի անհնազանդութիւն մեծ վնաս հասուցանէ բարի հրամայողին. կամ զի յանհնազանդութենէ առ իշխանս՝ բազում վնասք ծնանին 'ի քաղաքն և 'ի ժողովուրդն :

(9) [illegible] : Զբռնաւորհաւանելն խոստովանեսցի իբրև ուժայն և անօրէն իրօք գոռոզանալ հակառակ վերիցն կամ իշխանաց : 2 օրին. [illegible] : կամ իբրև համեմատել զանձն առ գերազանցեալսն 'ի մարդկանէ :

(10) [illegible] : Զհպարտութիւն խոստովանի ըստ իբրև զկամաւոր ծնունդ հարազատ սատանայի գոռոզին չարեաց : Առաջին մեղք յաշխարհի հպարտութիւն եղև, իբրև անդրանիկ և յոյժ սիրելի ծնունդ սատանայի կամացն : Բայց 3 օրինակք գտնին, իբրև [illegible] հարազատ, այնպիսի հարազատ՝ որ ոչ կարէ բնաւ օտարանալ 'ի սատանայէ, ոչ բնաւ կարէ ուղղել, խոնարհել :

(11) Զ[illegible] : Զմեղացն գործելոց 'ի բանութէ կամ յերկիւղէ՝ խոստովանեսցի ընդ [illegible], ընդ մեղացն որք գործին ինքնայօժար կամօք : [illegible], զառաջական մեղացն, կամ զոր չար օրինակաւ և խրատու այլոց գործեալք, խոստովանեսցի ընդ [illegible], ընդ մեղացն որք գործին 'ի բնական կարիս կերակրոյ, ըմպելեաց, քնոյ, ևն. կմ ընդ մեղացն որք յապականութենէ բնութեան ինքնին ծնանին. որպէս եկամուտ է հայհոյութիւն, գողութիւն, սպանութիւն, ևն. իսկ բնաւորական՝ ծուլութիւն, անժուժկալութիւն, զանձն արդարացուցանել, ևն : Յայսպիսի բանս նախադրութեան ընդ, կամ խմանի հանդերձ, այսինքն զակամայն խոս-

տովանեան հանդերձ կամաւորք են, և կամ խնամի փոխանակ, երբ տալ, զակամայ մեղսն խոստովանեան փոխանակ կամաւորի, զկամաւորն փոխանակ ընականաց, զփոքրունսն փոխանակ մեծաց, են: Զանօրէն գործսն խոստովանեան ըստ տարածութեն, փոխանակ անմեծութե, կմ՞ երբև ուրացումն այ. զի անզգամն ասէ 'ի սրտի իւրում, թէ ոչ գոյ ած:
(սաղմ. ծբ. 1:)

(12) Մակնեստրի Հիմի. ցն մարդխնեայ, յոյժ կարծր քարի: Զայն մեղսն որք յեկեն ոչ անցանեն 'ի գիր, խոստովանեալց ԱՅ երբև նկարեալս տառօքն նորա 'ի կարծր վեմի անջնջելի, ըստ այնմ. * Մեղք յուդայ գրեալ են գրչաւ երկաթեաւ ||: (երեմ. ժէ. 1:)

(13) Ար խոփիր մրոց: Զմեղս թեթև կարծեցեալս ըստ զատմանն կամ համարմանն մարդոց՝ խոստովանեան երբև գծանրութե բեռանց մեղաց:

(14) Զխոտիր լոփոյ: Զքննութե ողջմտութեան մեղացն ծածկելոց 'ի սրտի, որպէս ճշգրիտ պահանջեալց զչափ տառերին ծածկելոյ 'ի փոր ձկանն: (մատթ. ժէ. 26:) Ստփեր, բառ յունական՝ ստատեր. որ ուղղական է, այլ աստ երր սեռական գնի փոխանակ ասելոյ ստատերի: Նշանակէ զդրամ ինչ չորեքդրամեան կշռոյն, չորս տրամ ծանրութե. որոյ արծաթին ըստ աժէիցն էր երր մի ֆլաթայ:

(15) Զանդընդակնացն: Զ'ի խորս սրտի եղեալ մեղացդ խոստովանեան երբև յերկինս ժամանելոց:

(16) Զչէոցն: 2 օրին. ռչէոցն. որ տուտել տալորական հոլով է. բայց գոյ և առաջինն. որպէս ('ի կոչ. ընծայ. ժդ. համար դ:) * Իջէ ած էոցն ||: Արդ՝ ասէ, զլեռելոցն կամ զուչզործեալ մեղացդ պատմեան երբև զեղելոց, ոչ տառութե, այլ ճշմարտութե. այնու զի թէ ոչ անէր պահէր զքեզ, անկանէիր 'ի նոյն մեղս, յօժար զոլով 'ի չարն, և անզաղար զրգռեալ 'ի զիւէն. ուստի վասն նոցա ևս պարտապան ես այ երբև պահապանողի: կամ, ռչէոցն, խնամ զթողեալ մեղաց, որք թէպէտ և ոչ գոն այժմ, բայց գոլ խոստովանեան երր թէ էցեն: ընծայեալ այ. խոստովանեալ այ զպարգևիլ քո, կամ զպարտաւորիլդ:

(17) Պորփոսց Վեղասորին: Այս մեղաւոր՝ խնամի կինն պոռնիկ, զոր ասէ դարձուցց քն. (Ղուկ. է. 44:) 2 օրին. վեղանաց. մի օրին. պորփէոց. այսինքն չնորհօք թողութե պարտուց մեղացն՝ զոր անէրն քաւեաց, կամ յորմէ արդարացոյց: Արդ ասէ. զոչ գործեցեալ մեղս և կամ զթողեալսն խոստովանելով ԱՅ երբև թէ գոն այժմ, ընծայեան նմա զքո պարտաւորիլն. որպէս զի ընկալցես զձրի թողութե պարտուց մեղաւոր կնոջն, կամ պարտուց մեղացդ. ոչ ըստ արդարանալով, այլև գովութե, որպէս զմեղաւոր կինն զարմանալի օրինակաւ հաշտեցաւ քն, մեծաւ գովեստիւ կրկին ամենցուցանելով զզղջումն նորա քան զպարտաւորեալ մեղացն: Քանզի պարտաւորեցաւ նա ծածկապէս 'ի փարիսեցւոյն՝ խորհելով թէ մեղաւոր է նա. բայց քն զգործս զղջման նորա մի առ մի թուելով, զծունն գլխոյն, զլուացումն և զհամբոյրս ոտիցն, և զօծել հերացն, ասաց թէ՝ վասն զի յոյժ սիրեաց, թողեան լիցին նմա բազում մեղքն: Եւ յետոյ կրկին ասաց՝ թողեալ լիցին քեզ. և ապա երրորդ անգամ, հաւատք քո կեցուցին զքեզ, երթ 'ի խաղաղութե: Տեսանես, որչափ առաւելու գովեստ նորա քան զպարտաւորեանն: Եւ եթէ այս կին և օծումն նորա նոյն համարեսցի ընդ պատմեցելոյն 'ի մատթ. իզ. 7. որպէս երևի կարծել սբյ վարդապետս 'ի բանն լէ. 1. առաւել ևս հռչակեցաւ գովեստ զղջման նորա քան զպարտաւորեան մեղացն, այնու զի լինելին Նր մեղաւոր՝ ծանուցեալ էր 'ի միում քաղաքի նեէթ. (Ղուկ. է. 37.) իսկ զղջումն նորա և գործն եղև քարոզելի ընդ ամ՛ աշխարհ ըստ ած բանի: (մատ. իզ. 13):

(18) Խոհէրս Բողմածամնէայս : Թէպէտև փոխառուն Այն բազմապատիկ քան զպարտսն առնիցոյց զգործեալ զվճարելոյ կնոջն, բայց զոր առնն իմ՝ մի՛ առաքաւէր այնպիսում գողութեն. մի՛ զի ոչ զոյգ այնմ մեղաւորի ունիս զգիրութեն. և միում՝ զի թէ և ունէիր, քեզ անկ է միշտ զգուշանալ յիշել : Վասն որոյ Բորդէսն դէրէս, յանձնախեալ, բեր յառաջ ոչ զոտ ձեռաց քեզ, այլ Բանքսաման բարդութեան, զքո անդամ կամ զգարշութիւնս բազմապատիկս, յոփնախնանդ Բանին, յորժ խրթող և կակծեցուցիչ բանիւ :

(19) Զառ 'ի մորտին հանդէսնէ : Զփախչելն 'ի հոգևոր պատերազմէ. փ. 'ի նեղութէ, յաշխատութեց, ևն :

(20) Զփոտնն ոբնոյան : Զնեղելն յարթնութեն ժամանակի, զանհոգութեն 'ի ժամ գործոյ :

(21) Զանհարեոսնին : Զբրտութեն, զանմտութեն : կամ զանհաստատութիւն և զփոփոխականն լինելն 'ի բարին : դճշդուտին, զկարի խնայումն ընչից, մարմնոյ, ևն : որպէս ընդ հակառակն, զանխոհ ուրջականն, զանզուսաղ կամ զանչափ ընդարձակութին յուտել, 'ի խօսել, 'ի մտնել, ևն : դէլընճողանոն, զզանկական շարժմունսն :

(22) Զանդէղ փոշտաբինն : Զանկարգ քաղցութիւնսն. որպէս արկանել զանձն 'ի վտանգ, ձեռնարկել 'ի գործ քան զկար, մեծարանել 'ի գիտութիւն, ևն : դանյուրմար մորփան. զխառն կա՛ մանսպառշանձ եղանակաւ մարմնչելն. որպէս թէ ընդդէմ ուրկուրանոլութեն մարմնչել լոռութէ, և ոչ նուաղուե կերակրոյ. ընդդէմ բարկութեն հակելով, ևն : կամ անտոշուպար մարմնչել ընդդէմ մեղաց, և մոլութեց, ոչ հայեցեալ 'ի զգեստարան. 'ի փոքրութեան առաւել խղճելով քան 'ի մեծամեծսն. կամ ոչ ընդարելով թէ կայ մեղք և մոլութե՝ որում յաղթելի է փախչելով. ուր հեշտասիրութին. և է՝ որում յաղթելի է 'ի վերայ յարձակելով. որպէս անհամբերութե, ևն : Զառանց օրինի աբէոսնինն. առանց կանոնի 'ի գժուարինս ձեռնարկել. որպէս անառաջնորդ և ինքնագլուխ վարել յառաքինութիւն, առանց աշակերտութե վարդապետանաւ. մինչև անցեալ ընդ մաքրական ճանապարհն, զխառարութիւնն ընդ ևյ խորհրդել, ևն :

(23) Զխէղչմանս հոգւոյն, որ յանկարգ արտամութէ : դպարփանդղտանն դէրէլրփունին : յայլ օրին. կխոխ զատին. այսինքն զատարակուսանս և զերկչոտութես 'ի ձեռնարկութե հոգևոր վարուց, կամ 'ի վերայ թողութե մեղաց, ևն : դէբողմարփէղնէան. զխաղուտմ սանրգանք շառաւիղեալ ձևալս դըռհէփոյանս, անպատալս, անգործս. այսինքն զանգործ մտածութես :

(24) Զանպարկառ ֆորտփմանն : Զայս բառ խմացան ոմանք ԽԶ հին լուծ. այլ և այլ, կամ պէսպիսութիւն, որ ոչ յարմարի բանիս : Այլ թուի ելանել 'ի պարսիկ բառէն պարտֆ, այսինքն շուն. որ 'ի գիրս երիշէի. (երես. 207.) գրի բարակ, և յայլ հին ժողովածս բառից գրի՝ ֆորտֆ. ուստի և ֆորտփումն նշանակէ զանպատկառ գործ շան. որով մարթ է իմանալ թէ՛ զշնական առաջանս, և թէ զընդմիմեանս կատաղումն շանց, որով անպատկառաբար զմիմեանս խածատեն. և այս իմաստ համեմատ գայ այլոց մեղաց՝ զոր զկնի դնէ. այսինքն դգծփոսնին, դգծդմոսնին, ևն. զի ևս վարդապետս ասորաբար զնմանն առ միմեանս մերձ դնէ :

(25) Զանդրոփ ոփէղոսնին : Զառանց քննութե եղեալ, կամ զանխորհուրդ առնելութիւն և զխորշումն յայլոց : դմարմանջմանն դրոգըմէրնողանս : յայլ օրին. և հին. լծ. դմարմնջմանն. որ ուղիղ ևս է : Ամօթապարտ մեղնի՝ եռացումն ցանկութե, որ զհրդռու ընկանէ զցգայութես : Ամ- կայն զցանկութեցն յառաջագոյն առաց. վասն որոյ թուի իմանալ զընդ- դէմն նախընթաց բանին, այսինքն անզգած առնելութեցն. որոյ հակա-

ռակն է՝ անբան և անձնահաճոյ սէրն առ այլս. որով դիւրաւ ըմբռնի որք 'ի բանս այնպիսի սիրելեաց, համեմատ բանի առաքելոյն, (Բ. տիմ. Դ. 3.) * Կուտեսցեն իւրեանց վարդապետս ըստ մարմաջելոյ լսելեաց իւրեանց: || Զփոփոխոյն ըմբռնողութիւն, ոչ կշռելն, կամ ոչինչ համարելն զփոքր բարիս, կամ զթեթև մեղս:

(26) Զնմանէացն այլակերպութիւն: 'Ի նմանակցաց օտարոտի ձևանալն. որպէս 'ի կարգակից կրօնաւորաց այլակերպ վարիլն 'ի հանդերձս, 'ի կերակուր, 'ի բնակութե, ևն: կամ, նման գործովք բարեաց՝ այլակերպ լինելն 'ի սրտի: Ցոյցն և պճնածնոյն փողփողութիւն. սուտ բարեպաշտութե՛ իբր քողով ծածկելն: Բայց զերկոսին զայս մարթ է այլազգ ևս իմանալ. այսինքն զնման չար գործս այլակերպ համարելն, որպէս զանկարգ վեճախնդրութիւն, որ է գործ բարկութե, համարել իբր ճշմարիտ նախանձ բարւոյ. և առ 'ի հաւանեցուցանել զայս՝ առնուլ պատրուակ զսուտ պատճառս կամ իրաւունս:

(27) Զյօնիցն յաւակնութիւն: Զյօնսն բարձրացուցանելն, որ է գործ ամբարտաւանութե և գոռոզութե:

(28) Զհոգւոցանէն եղծանողացն: Զչար հաւատուցանելն չարարարոց: զնոյնն, զնոցա զանձնահաճ ողորմանս, չարաբանութիւն՝ թէ զոր գուանես զնոցանէ, և թէ նոցա պատճառ լինիս առնելոյ:

(29) Սերմանկանութիւն. (մի օրէն. ներմանկանութիւն:) զմոռացումն ամայլին բանին, կամ զշատախօսութիւն, և զխեղդումն թուլութի յամ խօսս: Բայց առաջինն յարմար է յաջորդ բանիցն, պճնաճառուածն կենացն, այսինքն զհոգևոր կենսաբեր պարգևս վաճառել ընդ ժամանակաւոր իրաց՝ որք են գին սատակման. կամ զերկնային կեանսն վաճառել ընդ մեղաց: Զխորշոփ աւանդիցն, շնորհացն մկրտութե, և այլ պարգևաց: Զհայրենեացն ծախս, զվաստակս բարեացն իւ:

(30) Զկողոպուտն յափշտակողացն: 'Ի լաւ օրինակն կիտիւ գտանի այս 'ի յաջորդէն. բայց երկոքին ևս հայրին 'ի բանն եսայ. (Ե. 18.) և նշանակեն զչար սովորութիւն՝ որք իբր կապ բանի ձգեն 'ի մեղս:

(31) Զյորանանօն: Միշտ թաթաւել, կամ շաղախել: մի օրէն. զաղբանանօ, աղծաշաղախ, աղծալից: Զխոռոփ լուացն. զթողուլն լուացն կամ առաքինեաց. որ կրկին իմանի, թէ կրաւորաբար, այսինքն. թողեալ լինելն կամ լքանիլն 'ի բարի արանց իբր անուղղելի. և թէ ներգործաբար, այսինքն թողուլն զբարի արս՝ հեռանալով 'ի նոցանէ:

(32) Զընթացողին անկարծեցն: Զներքոյ անկանիլն անկարծելի թշուառութեց և մեղաց: Բայց մի օրէն. զնէ անկածեցն. և իմանի առ ոտն հարկանելն կամ արհամարհելն զնուաստս և զանարգս, կամ զանկեալսն 'ի մեղս: Մարթ է նաև զբառն անկարծեաց՝ ըստ այսմ մտաց առնուլ. զի այսպէս նշանակէ ('ի մեկն. սակերեր. Բ. 4.) * Ուստի՛ ծնանեցին իւրքս այս . . . բայց եթէ յանկարծ՝ 'ի վատթար արանց ||: Այս երկրորդ իմաստ առաւել համեմատ է նախընթաց բանին. որպէս թէ ասել. զլաւսն և զառաքինիսն թողլ. իսկ զանարգսն կամ զմեղուցեալսն արհամարհեցի: Զնէ դարձէն. յետ դառնալոյն 'ի մեղաց՝ վերստին առ նոյն մեղս դառնալն, որ առաւել չար է և գարշելի:

(33) Զնորոգ մտոյն: Խոստովանեալ զանկարգութիս մտածութեանցն՝ որք միշտ նորանոր ծնանին առանց գործոց՝ զանկարգութիս ոգւոց խորհրդոյն. որք հակառակ են աւետարանին. կամ կրօնաւորական յանձնառութե. զանկարգութիս զանկոյան կամացն, անհաստատ յօժարութեց 'ի բարին. զանկարգութիս զհաշտ հագագին, վայրապար խօսից, կամ աղաղակաւ խօսելոյն: Զէութի ընչոյն, զէացուցանելն զչնչաւոր մասն, զի տիրացուցանել զզգայականն, իբր մեծ ինչ զնել զայն, նման անձնալ և

ծառայել ։ Կամ, զմարմինն որ մեռեալ էր առաւօտուն, մեռանելն էապա- ցանել կամ կենդանացուցանել ։

(34) Ջնան տան պատհման . տրառաքոյ սահմանի օրինաց , ըիչխանականն , զկանոնն կամ զպանակաւն մասին՝ ըրմենատիւ Բալաբեյլանն , յամենայն իրս ընդարձակելն , կամ կարի յոյժ հեռանալն և օտարանալն ։ Եւ ըոր մի ձանէն ։ Գոյ և այլ ինչ բաղում զոր չկարեմ կամ ամաչեմ յայտնել , գրել , բերանով պատմել , կամ այլ օրինակաւ յիշեցուցանել ։

(35) Տուրսգիեր ըսփ հոբգոբէին ։ Երեմ . (ԻԸ . 28 . 30 .) * Գրեալ զայրդ- զայդ՝ այր տարաբաղդ ։ ||

(36) Ո՛ւ այսու Նէբ ։ Այսոքիկ մեռանելեալ օրինակօք մեղաց ոչ չարիք ապախտութեան աշխատելոյս 'ի չարիս . այլ են նոքա զբաղմութեան կարծեաց . են, որք ըղըհասակն , զմահաբեր Թոյնս ունին . զոր այս զեռուն 'ի տատանն նոքա յամեան մաշկեղէն արկեալ , փակէ ըէնիցն ըասնը , զծայր տատանն՝ ընդ որ Թոյնն արտաքս ելանէ , կոպարանին ըրջաքանտին , շուրջանակի գնտակերպ կապելով զխայթոցն ։

(37) Այսսթինկ էն ։ Որպէս կարիճն արտաքուստ բարւոք երևի , բայց ներքոյ 'ի տատն ամբարեալ ունի զԹոյնս կորուսիչս և կսկծեցուցիչս , որք պատճառք են սատակման , այսպէս և ես արտաքուստ բարեկրօն երևեալ , բայց ներքոյ լցեալ կամ աստցեալ չարեօքս , որք են անօրէնու- Թեն մատակոց Բըշտատուրքըն Բուլակ , այսինքն մարձք սատցեալք քըր- տամքք Թշուառութեն , կամ Թշուառացուցիչք ։

(38) Անչի դարփախն ։ 2 . օրին . անչին էմ դարփախն ։ Վասն այսքաննեաց անօրէն գործոց արժանի եմ կրկին տառապման , կամ որպէս 'ի վայր առէ , հըէլն հաղապոծան , Թող Թէ գովութեն ։ Ջի զոր Թշնամին սատանայ ցա- ներաց զորոմն մեղաց 'ի վերայ բարի ցորենոյն , դու փոխանակ խլելոյ զայն՝ կամաւորաբար ընկալար , պահեցեր և գործովք պտղաբերեցեր ՃԾ բանի առաքելոյն զլցեալն ամենայն անառակութք , (Հռոմ . Ա .) ուր և 'ի կատարածի եդեալն կանոն առ իս ելանէ , Թէ գիտէին զիրա- ւունսն Այ՝ զի մահու արժանի են ոչ միայն գործօղք չարեաց , այլև կա- մակիցքն ։ Իսկ ես ոչ լոկ կամակից այլոց լինելովս , այլև անձամբ գոր- ծելով կատարեցի զչարիսն ամ ։ Վասն որոյ զիս ինքն դարփ քարհաւ , պար- տաւոր գտանեցայ կրկին հատուցման պատուհասից ։

(39) Այսանխայէմ ։ 2 . օրին . խնայէմ ։ Ես անձնագատ լինիմ առէ , այլ դու բարերարութ՝ գտնէ խնայեամ ողորմութեամբ . զի չեմ արժանի լսել գովութի ։

Սեքստին յաւերժած հըէին հեծուոչ՝ նորին հոգւոյ , առ նոյն աղէրս Խաղիծանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

ԲԱՆ. ԽԶ.

ա . Արդ՝ վրիպեալս ես յաւէտ ամենապատիժ , միշտ դժնեայ վայրենաբարոյ՝ անձամբ ան- ձին[1] մահու կշտամբիչ . արածօղս զերամակս զազիրս՝ վայրագասունս խոզից արօտականաց՝ գարշութեան մեղաց , [2] Նախատ վերձկանութեց ։ Հովիւս տածօ-

ղական [3] զհօրանս ուլուցն ամայաբնակաց՝ 'ի վրանս հովուացն, ըստ երգոյն երգոց առ իս առակին. որ ոչ իսկ ծանեայ զիս երբեք գիտել, թէ յո՞վ, և յո՞յր պատկեր, և վասն ո՞յր գոյացայ:

Է. Ահա 'ի յոտս տանողական կրողաց երկուց՝ միակցորդ խորհրդականաց, [4] ըստ ձևոյ հրեշտակի կառուցար, իբր 'ի թուիչս թևոց կրկնաբարձ բազկաց վերատանողաց՝ յաշխարհն հայրենական հայել. ո՞վ յիմար, զի՞արդ քեզէն կորացար յերկիր, զաստեացս միշտ հոգացեալ դիպուածս, ընդ ցիռս անապատականս համարեցար: Իբր զձրագ բազմաբերանեան՝ 'ի յաշտանակի մարմնիդ հաստեցաւ [5] գըլխոյդ բոլորութի, զի և այսու 'ի յօրինակէն շնորհէ մի օտարացիս զած տեսանել, և զմնացականացն իմաստասիրել: Բանականութեն յարգանօք՝ [6] կրկին ձոխացար, զի զյաղթանակ բարեմասնութեն՝ որ առ քեզ եղեն, անարգել լեզուով խօսեսցիս: Ձեռինդ հաստմամբ՝ [7] յարմարոստեան մատանցդ շառաւեղօք՝ զգործնականացն տնօրինել զտնտեսութի, իբր կցորդ համացեղութե ամենաբաշխ աջոյն այ՝ ած կոչեցար: [8] Երից հարիւրոց՝ և տասանց վեցից յօդիւք շաղկապեցար, յարեալ 'ի քեզ ընդ նոսին 'ի նոյն՝ և պատշաճական մասունս չափոց ազդողականաց՝ հինգ ըզգայութեց, զի մի և երևելիդ նիւթականութի քումդ տեսութե մնացդ դիտման անդատ եղիցի. զի ոմանք ստուարք են և զօրաւորք. և այլք փոքունք են և պիտանիք. կէսք կարծրակերտք՝ և ազդողականք. են և [9] գողտրականք՝ և պատուականագոյնք. դարձեալ կարևորք և պատկառելիք: Իսկ [10] թարգմանութիք սոցին տեսութե 'ի քեզ են նկարեալ իբր յարձանի անջնջականի՝ անձն իմ եղկելի. որպէս զի և տարր ժամանակաց՝ և շարունակ հետևման աւուրցն առպսակ ամին, իբր կանոնաւ իւիք սահմանեալ մասամբքդ՝ անսխալ և անայլայլելի պահեսցի:

Ը. Դարձեալ [11] այլ օրինակ հոգևորական, որ վերոյն յօդուած շաղկապէ 'ի մի առ եկեղեցի, քև խորհրդածի. իբր զի առանց ընաւից զուգամամնութե կապակցել լծով հաւանականաւ զվեհն ընդ փոքուն, փնտռեալ է հաստուածոյն անարատութի՝ յա-

նուն քնի ժողովելոցն. որպէս 'ի հատուածս և 'ի նաւաղուղ միոյ յանդամոցս անարգացս պատուաստելոցս 'ի մարմնի, կրճատեալ իմն է յօրինուած կազմութե [12] մարմնոյ քում սենեկի զգայականի, և շրջեալ է ընտանութն պատկերին յանարգ փոփոխումն։ Եւ արդ՝ այսպիսեօք, և ես բազմօք անզուգական հրաշակերտութք [13] եղական պատկեր ոչ՝ կշտամբեալ իսպառ ոգի իմ գերի. և թէպէտ յառաջին նմանութեն կողոպտեալ գտար պատուիրանին յանցաւորութք՝ 'ի դրախտին կենաց, այլ աւազանին լուսազարդ շնորհիւն զհոգւոյն փչումն առեալ, և նմանութի ես կերպարանին. և արդ ընդէ՞ր կորուսեր զփառսն երկնաւորս, իբր նախաստեղծն երբեմն [14] զվիճակն երկրաւոր՝ յադին դարաստանի. ընդէ՞ր փակեցեր քեզէն քեզ զերկին, և զվերելոցն դուռն աղխեցեր. ընդէ՞ր խառնեցեր ընդ ջրոյն մաքրութե զախտ արտասուացդ տարժանութե. ընդէ՞ր զլուացեալ զձորձ վերարկուին՝ զարշելի գործովք զագրացուցեր. հի՞մ զեդեալ համդերձին մեղաց պատմուճան՝ անառակութե վարուք քեզ արկեր. ընդէ՞ր զտանողացդ ոտից սրբութի ճանապարհաւն ժանդից աղտեղեր. ընդէ՞ր կրկնեցեր իրաւադատին՝ զուխտազանցութի հին պատուիրանին։ Ընդէ՞ր մերժեցար 'ի պտղոյն շնորհաց, իբր զադամ 'ի ծառոյն կենաց. ընդէ՞ր [15] նենգեցեր քեզէն քո կամաւ՝ զանստուեր յուսոյն յարակայութիւն. ընդէ՞ր [16] պատկառանք անհամարձակելիք քոյին դիմացդ նպաստեցեր. ընդէ՞ր զինեցար ընդդէմ քո ներհակ, ո՞վ ընդունարան խելագարութե. ընդէ՞ր որսացար [17] 'ի ծողակ մահու՝ թողեալ զարահետն վստահութե. ընդէ՞ր [18] կարթիւ պատրանաց ածար՝ հաղորդ մարմնոյ կենդանարարին։ Այլ վերստին յուսացեալ 'ի նա՝ կարդամ նմա, [19] ապաւէն և լոյս, քաւիչ՝ նորոգիչ՝ փրկիչ՝ կեցուցիչ՝ և կենդանարար. ողորմած խնամօղ մարդասէր և անոխակալ բազմագութ, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

(1) Մահու նշանէիւ։ Ես ինքն խղճմտութիւն կշտամբէմ զմահ մեղացս. կամ, 'ի մահ կշտամբիչ, այսինքն պարսաւորիչ։

(2) Ըմխտեր Հարցկանութեց։ Նախատելի, անարգ վարձկանութեանց, կամ ծառայութեանց։

(3) Ջհօրանս ուղղոցն : Հովիւս գարմանօղ զերամակս վայրենի ձագուց այծից, այսինքն գարշութեանց մեղաց. և այս վասն այնորիկ՝ վասն զի ոչ ծանեաւ զիս երբէք, ոչ զմտաւ ածի զարժանաւորութիւնս իմ ըստ բնութեան և ըստ շնորհաց. վասն այն յանդարգ ծառայութեան մեղաց դարձայ : Եւ այս է բան երգոց. (ա. Գ.) * Եթէ ոչ ծանիցես զանձն քո գեղեցիկդ 'ի կանայս, ելեր դու զհետ գարշապարացն || ԱՆ : և յայս միտս մեկնէ զայն Ռբ վարդապետս 'ի բուն մեկնութեան. (երես 31 :) Գէփէն Բէ յօղ, յինչ գոյացայ ըստ մարմնոյ, և ըստ հոգւոյ, և ըստ իւրաքանչիւր կարողութեան նոցա. և յոյր նմանութեան, և վասն որոյ պատճառի, զորս և 'ի յաջորդսն բացատրէ :

(4) Ըոփ յհոոյ հրէշտակի : Ո՛չ եթէ մարմնոյ կերպարան ընծայէ հրեշտակի, այլ զի մարդս երկու ոտիւք միայն հպելով յերկիր, և երկու բազկօքն իբր երկու թեւօք վերամբարձ կանգուն կայ դէպ յերկինս, այսու ձևով յայտ առնէ՝ թէ ոչ է երկրաքարշ, այլ երկնաթռիչ պարտի լինել իբրև զհրեշտակ, և հայել յերկինս իբրև 'ի հայրենիս : Ահա՛ 'ի ձև մարմնոյս նմանութեան հրեշտակի, և վախճանն՝ երկնից փափաքել : Իսկ դու առէ՝ իբր քառոտանի անասուն՝ զերկրաւորս միայն հոգացար, և համարեցար ըստ ցիոոս, ըստ վայրի էշս : Ասելն 'ի յոփս փանողականս կրողաց Երկոոց Մակյօրգ խորհրդականաց, մեթութ ունի վասն շրջուն աճոյն. զի բառն խորհրդական՝ գոլով բացայայտիչ տրականին 'ի յոփս. գնելի էր 'ի տրական հոլով, բայց փոխադրութեամբ գնի սեռական, և այնմ համաձայնեալ ածականացն՝ կրողաց Երկոոց. ուստի պարզելի է, 'ի յոսս տարօղս, երկուս միաբան խորհրդականս. այսինքն 'ի միասին շարժեալս :

(5) Գուխոյդ Բոլորակն. Գլխոյդ բոլորակութեան զանազան զգայութիւնքն հաստատեցաւ իբր Ճրագ բազմալոյս 'ի վերայ մարմնոյդ. զի և այսու 'ի յօրինակէն ճնորհէ, 'ի վայելչութէ կամ 'ի յարմարութենէ օրինակին մի՛ օտարացիս : օրինակ՝ կամ զՃրագն առէ, զի որպէս Ճրագի լուսով տեսանեմք 'ի գիշերի, այսպէս լուսով զգայութեանց տեսանելով զարարածս, 'ի նոսա աղօտաբար տեսանեմք զարարիչն իբրև 'ի մթան. և կամ օրինակ առէ՝ զնոյն իսկ արարածս, որք իբր հետք են արարչին նյ. ուստի առէ՝ որպէս զգայութիւնքդ տեսանեն զարարածս, նոյնպէս մի՛ օտարացիս նոքօք տեսանել զԱծ՝ որպէս զհայրդ երևի 'ի նոսա : Կամ դարձեալ, օրինակ մարթ է առնուլ զաշտանակ տաճարին. իբրև թէ որպէս այն աշտանակ միշտ վառեալ կայր 'ի ցոյցս ներկայութեան ԱՅ, այսպէս և զմարմինդ կազմեաց ԱԾ գնելով 'ի նմա զգլուխդ իբրև Ճրագ բազմալոյս, զի այնու տեսանիցես զԱծ :

(6) Կրէյն ձոխացոյ : 'Ի վերայ զգայութեանցդ յաւելաւ և բանականութիւն, կամ իմաստական զօրութիւն, զի զգայութեան հաղորդութեան բարեացն որ յնյ, քարոզեսցես : Կամ, կրէյն ձոխանալ իմանի համեմատութբ առ անասունս. զի նոքա թէպէտ ունին նման մարդոյ զգայարանս գլխոյն, այլ ո՛չ զիմանական զօրութեան, որ յատուկ մարդոյ է :

(7) Յարմարապէտն մափանդր : մի օրէն. յարմարապոցն մափանդր : Զձեռագհանդերձ մասամբքդ հաստեաց ԱԾ, ըգործնականացն, զարհեստական գործոց իրս վՃարել. որով նման լինելով արարչական աջոյն նյ, ԱԾ կոչեցար, այսինքն առեղծիչ՝ յօրինօղ արհեստական իրաց, որպէս նա՝ բնականացն :

(8) Երէց հարիւրոց : Երեք հարիւր և վաթսուն մասունք կազմեցար, յաւելեալ 'ի նոյնս և պարմար թիւ չոփոց ողղողկանաց, զգայութն մասանց հինգ զգայութեանց. որով ընդ ամենն լինի 365 : ղի մ՞ Ա Երևեմտ Նեւմանոան, զգայութիւնքդ տուան, զի մի՛ արտաքին նեւթական կազմութեան մարմնոյդ՝ տեսութեան միայն անդափ եղէցէ, անծանօթ կամ

անդրայր միաւորէ․ այլ անտանելով և քննելով զզանազանութիւն, զզօրութիւն և զգործ իւրաքանչիւր ոսկերաց և յօդից, անտի ծանիցես զզօրութիւն և զիմաստութիւն արարչին․ և ՚ի միտ առցես՝ թէ մարդս իբրև փոքր աշխարհ՝ բովանդակի 365 մասամբք, որպէս ընդհանուր աշխարհիս ժամանակն պարունակի 365 աւուրբք ։ Զյիշատակեալ թիւդ ոչ է մարթ խնանալ ՚ի վերայ ոսկերացն միայն․ զի նոքին ըստ երևելի անդամայնոց՝ ոչ անցանեն քան զ304, ատամամբքն համդերձ․ առանց որոց մնանք զնեն 249, այլք՝ այլազգ ։ Այլև զի նը վարդապետս զնին առէ՝ ոմանց լինել փափուկ և աղոտական, և ոմանց կարևոր և պատկառելի, որ ոչ պատշաճի ոսկերաց ։ Ուստի երևի թուել զամենայն ոսկերս համդերձ անդամօք և այլ մասամբք մարմնոյ ըստ հաշուելոյ բժշկաց այնր ժամանակի ։

(9) Գողտրակնոտ ։ Փափուկք, կակուղք, որպէս լեարդ, թոքք, սիրտ, և այլն ։

(10) Թարգմանութիւն ։ Բացայայտութիւք կամ խորհուրդք այսպիսի կազմութեան մարմնոյդ նկարեալ են ՚ի թիւ մասանց մարմնոյդ․ որպէս զի ի փարը, եթէ զի և ամիսքն կիւ փոքր մասն ժամանակաց, և շաբաթ հեփոմադ, և հետ զհետէ անցանեն յաջորդութեամբ աւուրցն․ առ պատի ամիս, մինչև ՚ի կատարումն տարւոյն, եթէ կանոնաւ իւիք, եթէ կանոնաւ համեմատութեան ընդ 365 թուոյ մասանց մարմնոյ, և աւուրց տարւոյն՝ ամբողջ պահեսցի ։ Բացայայտ իմաստքն են․ մասունք մարմնոյդ, և աւուրք տարւոյ զուգաթիւ սահմանեցան, առ ՚ի նշանակել քեզ թէ որպէս փոքրիկ մասն մարմնոյ պիտանի է և կարգեալ առ յայս, նոյնպէս և փոքր մասն ժամանակի՝ պիտանացու ՚ի գործ արդարութեան․ կորուստ մասին ինչ ժամանակի այնպէս ընդ դատապարտանաւ է, որպէս և մասին մարմնոյ ։

(11) Այլ օրինակ ։ ՚Ի միաւորութեան և ՚ի կարգի մասանց մարմնոյն՝ խորհրդածէ զարմանալ զարտաքին միաւորութիւն անդամոց եկեղեցւոյ․ եթէ զի որպէս ՚ի համանմանին միոյ անդամոյ՝ ոչ միայն ամբողջութիւն մարմնոյ, այնպէս առանց հաղորդակցութեան իւրաքանչիւր հաւատացելոց՝ հպատակելով վայրապետնից առ մեծն, մնասի ամբողջութեան մարմնոյ եկեղեցւոյ ։

(12) Մարմնոյ բուն անձնէն ։ 4․ օրին․ մարդոյ բուն ։ ՚Ի համանմանել կամ ՚ի պատկանել միութեան յանդորր անդամոց մարմնոյս՝ որ է անձնական մարդոյս, թերանայ կազմածն ոգւոյն․ և ընդհանուր պատկերին, հարազատ և բուն կերպարանք մարմնոյն փոխարկին յանդորր ձև և ՚ի անձել ։

(13) Եղական պատկեր նոյ ։ Ստեղծեալ կամ արարեալ պատկեր նոյ ։ Իսկ զնմանութիւն պատկերին՝ յայս գլուխ ըստամանեայ բացատրէ, այսինքն ըստ մարմնոյ մասին․ ըստ որում ուղիղ ձևով մարմնոյն՝ ցուցանէ զերկինս լինել իւր հայրենիք, որպէս նոյ սեպհական տեղի առին երկինք․ նա բազմոծ ձեռակերտօք ցուցանի լինել արարիչ արհեստականաց, որպէս նոծ՝ բնականացն․ մասամբք մարմնոյն բովանդակէ յինքեան զշրջանս ժամանակաց, որպէս և նոծ յիւրում յաւիտենականութեան ։ Իսկ զնմանութիւն պատկերին ՚ի կողմանէ հոգւոյն և շնորհաց՝ աստանօր հարևանցի յիշէ առեալ․ և նա բանիւ անդրադարձ հրաշալիքն, այսինքն, բաց յառաջելոցս՝ առաւել ևս բազում անհամեմատ և հրաշալի կազմութեամբ հոգւոյդ և օծմամբ շնորհաց՝ հաղորդեալ պատկեր նոյ ։

(14) Զվիճակն երկրաւոր ։ Դու անձն իմ՝ որ մկրտութեամբն վերստին եղեր նմանութիւն նոյ՝ շնորհօք, ընդէ՞ր զարձեալ կորուսեր զերկնային փառսն, որպէս ադամ կորոյս զերկրաւոր վիճակն, այսինքն զանմահութիւն մարմնոյն, զանցաւութիւն, զանապական զուարթութիւն, յարդին դրախտին,

յեդեմական դրախտին ։ Վասն էր փակեցեր զերկինս . և ??? , ընդ-
դունն ելանելոյ 'ի մեր յերկինս՝ իբրև դռնափակօք անեցեր ։ ընդ Ըլոյն .
ընդ ջուր մաքուր աւազանին մկրտութեն խառնեցեր զքաւալից արտա-
սուս ապաշխարութեն ։ ??? . զհանդերձ մարմնոյդ՝ որ մկրտութեանն
լուացաւ , զարշելի գործովք աղտեղեցեր ։ ??? զզգեստ պատմուճա-
նին մեղաց՝ զոր 'ի բաց եդեալ էիր , վերստին արկեր զանձամբ , անառա-
կութէ . (3 օրին . ???) ??? ։

(15) ??? ։ Խարդախութե ապականեցեր ??? յուսոյն յարու-
կայութէ , զհաստատութե անմռունչ ??? ??? ։

(16) ??? ??? ։ Ամօթս՝ որով ոք ոչ համարձակի
երևիլ , 'ի դէմս քո ??? , արկեր իբրև նպաստ և ծածկոյթ զար-
շութեան քո ։

(17) 'Ի ծովակ ։ ??? օրին . 'ի ծովակ ։ Ընդէ՞ր անկար կամաւ ??? յու-
րոդայթ մահաբեր , թողեալ ??? ??? , զհաստատակաց անվր-
դովկ նաւահանգիստն՝ զոր Աշ ??? ։

(18) ??? ։ Ըմբռնեցար ??? կերով զու որ հաղորդ-
եալ ես կենարար մարմնոյն քո ։

(19) Ազատէն ??? , ??? ։ 3 օրին . ??? ։

Սերովբէին յաւելուած ??? հեծութեն՝ նորին ??? , առ նոյն
ողբերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

ԲԱՆ . ԽԱ ։

Ա . Եւ արդ՝ զի՞նչ գոյ ասել ամաչեցելոյս յերե-
սաց մեծիդ ահաւորութեդ , բայց եթէ համ-
րանալ , և հող 'ի բերան եդեալ լռել 'ի սրտի , [1] ըստ
մարգարէութեն խրատու , ահա 'ի բարւոյն կարկա-
ռեալ 'ի յոյս ։ Իսկ եթէ զփականս շարժողութեան
շրթանցս բացից բանադատեցից՝ խօսել կամեցեալ ,
դարձեալ զնոյն ձայն կրկնակական եղերերգութե լա-
լեաց բազմութե [2] խեթ մտացս յառաջադրէ ։

Բ . Եւ արդ՝ ողբակից մեծ մեղաւորին անօրինելոյ
կամաւ առ 'ի մահ՝ զնորին գոչումն երկրորդեցից և
ես ընդ նմին . մեղայ տէր՝ մեղայ , և անօրէնութեց
իմոց ինձէն վկայեմ ։ Հիւսեալ ընդ նմին զբանս յիւ-
ներորդի սաղմոսին , անթիւս գրեմ [3] զպարտուցս սակ
անձինս մեղանաց՝ [4] քան զհիւղ երկրի հողմահոս փոշ-
ւոյ՝ ընդ օդս ամենայն տարածեցելոյ ։

Գ . Մեղայ յերկինս և առաջի քո , ընդ անառակ
որդւոյն պատկառեցելոյ՝ հայրենի գթոյդ վերստին
դարձեալ՝ թախանձ արկանեմ . զողորմելին ձայն ա-

զերամանաց՝ արտօսրածին ողբովք դուշման՝ 'ի տխուր դէմս մատուցեալ առաջի քոյ տարածանեմ՝ Հայր գթութեց, ամ բոլորից, [5] չեմ արժանի կոչիլ, և ոչ ընաւին առ այս անուանիլ, ոչ միայն որդի, այլ և անպիտան ապաքան վարձկան։ Ընկալ զսովեալս տարագրական, պարտական ծառայս. և զցաւ քաղցոյս՝ ըլկանաց [6] նեղոյս նուաղեցելոյս՝ կենաց քո հացիւդ բժշկեսցես։ Եւր ընդ առաջ քո ողորմութեդ՝ [7] 'ի սկզբնաւորս ապաւինութե. զգեցո գթած և անոխակալ՝ անօրինեալս մեղապարտի՝ զնախակապուս հանդերձին ծածկոյթ. աւանդակորոյս ձեռացս ազտեղեալ մեղօք՝ զկնիք մատանւոյն համարձակութե ամենառատ կամօք մատուսցես. զգարշապարացս թշուառութե մերկութե ոտիցս՝ պատսպարութ աւետարանական [8] ամրավերարկու օդիցս կօշկաց՝ 'ի յօձին Թիւնից միշտ ամրացուսցես։ Զուարակդ պարարակի եզինդ երկնայնոյ, որ է միածին որդիդ քո օրհնեալ իսկապէս մարդասիրութբ՝ կարօտելոյս բարեաց՝ նուիրեա. որ մատուցեալ միշտ՝ և անպակաս մնայ 'ի լրութե, [9] յարակայ զենեալ 'ի սպանդարանի անթիւ սեղանոց անսպառութբ, բոլոր յամենեսին՝ և ընաւ յամենայնում, էութբ յերկինս՝ և իսկութբ 'ի ստորինս, աննուազ մարդկութեամբ՝ և անթերի ածութբ. փշրեալ՝ և բաշխի 'ի մասունս անհատս, զի զհամայնն հաւաքեսցէ առ 'ի նոյն մարմին իւրումն գլխոյ. քեզ փառք ընդ նմին՝ հայր ողորմութե յաւիտեանս. ամէն։

(1) Ըստ թարգմանութեն։ Բազում են 'ի մարգարէս այսպիսի բանք. բայց զոր Ամ վարդապետս ասէ՝ երեմիայինն է. (Ողբոց. Գ. 28.) * Նստցի միայն լռիկ 'ի տան իւրում. || այսինքն, 'ի պարտի։ և 29. * Տացէ հողոյ զերեսան իւր. վասն զի կայ յոյս։ || Եւ յոյս հայի հետևորդթանն. ահա 'ի բարեացն նորոգութեան 'ի յոյս. այսինքն լռեցից 'ի պարտի, հաստատելով կամ վստահելով 'ի յոյս ողորմութեն նոյ։

(2) Խնդիր զուգոյ։ Եթէ համարձակեցայց շարժել զշրթունս իմ 'ի խօսել, ոչ եթէ զօրհնութեա քո երգել կարեմ ըստ զաւթայ, այլ խնդրոյս խնդիր կամ հարուած մնացս թեալադրէ զնոյն ողբական ձայնս երկրորդել։ Ուստի ողբակից լինելով մեծ մեղաւորին, Մանասէի թագաւորին, որ կամօք՝ և ոչ ազխատութբ կեր 'ի ակարութէ անօրինեցաւ, զմահ և զկորուստ իւր խնդրելով, զնոյնս զուշումն երկրորդեմ ես։

(3) Զղջարդութեան սոսկ։ Զհաշիւ կամ զթիւ պարտուցս, անչափ մեղանաց, 3 օրին. մեղաց։ Ընդ ողբական ձայնս Մանասէի կցորդեմ և զն սաղմ.

Ողորմեա՛ ինձ ԱԾ. և առաւել անհամար խոստովանիմ զհաշիւ պար-
տուց մեղացս քան զխիճս են:

(4) Քան զխիճ: այսինքն քան զխիճս: 2 օրէն. քան զհող:

(5) Չեմ արժանի կոչիլ 'ի քէն սիրողաբէս, և ո՛չ ընտանի յայլոց անուանիլ որդի քո. կամ, չեմ արժանի կոչիլ որդի քո, և ո՛չ ընդ առ այս, բայց յայտնանէ, կամ 'ի վերայ այսր՝ անուանիլ վարձկան քո:

(6) Նեղելոյ նուաղեցելոյս: Նեղութեն նուաղելոյս, կամ թուլացելոյս 'ի քաղցոյ:

(7) 'Ի սկզբնաւորս աղաւթանաւ. 'ի նախկինն կամ 'ի նախընծայ աղաւթնութեան. որպէս զանառակն տեսանելով նախ առ քեզ դիմեալ, ընդառաջ փութացեր նմա:

(8) Անբաւծերարիւն: Անբաւութե կոյ մնդաձգոյս ծանծ կող. օտար, ապանելեաց ազից, որպէս կոչին, սանդալ: Զմերկութիւն ողորմելի ազգի՝ զգայութեանց՝ պատճառանեալս 'ի թիւնից սատանայի պատապարութե ամբարտաւան կոչկաց աւետարանին, ըստ բանին եփեսաց. կ. 15:

(9) Զգուարակն պարարակն: Պարզելի է շարադրութիւն. զգուարակ՝ այն է երկնային եզն պարարակ, որ է միածին որդին քո, նոյնինքն, որ մեռաւ մեռանելի պատարագաւ, և անպակաս մնայ: Յարակայ զենեալ: Մինչև 'ի կատարած աշխարհի զենեալ քն խորհրդաբար, 'ի սուրբ սեղանի, 'ի տեղւոջ ուր սպանողք կամ ուտելի անասունք զենեալ լինին. և նմանութեամբ խմանի նր սեղան պատարագին: Բովոր յամենեսին, բովոր քն յամենայն սեղանս և 'ի ճաշակօղս. և ընդ յամենայնսամ. և առաջի քն յամենայն մասն նշխարին, կամ բաժակին: Կուռնեամբ յերկինս. գոյացութեամբ մարդկութեանն յերկինս, և նոյնպէս 'ի սուրբ սեղանս, և նոյնն ճշմարտապէս յերկրի 'ի նը խորհուրդն՝ բովանդակ մարդկութեն և անթերի ածութեն: Հուրհուր ըստ տեսակաց հացին, և բաղխի ընդ տեսակօք հացին և գինւոյն, 'ի ձեռն անհատ, բաշխի 'ի ներքոյ անթիւ մասանց նշխարին կամ գինւոյն՝ որք բաւական իցեն պահել զտեսակս իւրաքանչիւր նոցա. կամ անհատ, իբր մասնաւ՝ անհատաբար, առանց հատանելոյ կամ բաժանելոյ. այսինքն քն ըստ մասանց հացին կամ գինւոյն բաշխի բոլորն առանց բաժանելոյ իւրոյ: Զբաժանումն խորհրդական տեսակաց հացին և գինւոյն՝ ընծայել քնի 'ի խորհրդեան անդ, առ մրական ոչ է վարդապետաց. յորոյ վերայ և ոսկեբերան ասէ (Ճառ ի. 'ի մեկն. ա. կորնթ. Ժ. 16.) 'ի բանն, Հացն զոր բեկանեմք. * Բեկանի մարմինն քնի 'ի հաղորդութե, որ 'ի խաչին ոչ եղև, այլ ընդ հակառակն ասացաւ, ոսկր նորա մի՛ փշրեսցի. և այնպէս զոր ոչն կրեաց 'ի խաչին, կրէ վասն քո 'ի պատարագին, մանրելով առ 'ի լնուլ զամենեսին: || Զայն խմաստ դնէ և մեր վարդապետս ('ի մեկն. երգ. երգ. 165:) Զի ըհամայնն հաւատէալք. զի զբովանդակ եկեղեցի ճաշակողաց, միաւորեսցէ 'ի մի մարմին նուրբ գլխոյ, այսինքն գլխոյն եկեղեցւոյ որ է ինքն քն. կամ նուրբ խմանի՝ քնի, այսինքն զի միաւորեսցէ զամենեսին 'ի բարոյական մարմինն իւր հօր, որ է գլուխ քնի: Եւ բացայայտ խմաստ բանիս է, թէ քն ամբողջ բաշխի իւրաքանչիւր հաւատացելոց, զի ամենեքին միով հոգևոր կերակրով սնեալք, շնորհօք միաւորեսցին յամ՝ իբրև մի մարմին խորհրդական: Յայս համառօտ բան աւանդէ նը վարդապետս զամենայն ուղղափառ ճշմարտութիւն խորհրդոյ հաղորդութեն ընդդէմ նորաձայն աղանդոց լուտերականաց և կալվինականաց. զի դաւանի՝ թէ ճշմարիտ գոհ է պատարագն քնի, յորում ինքն իբրապէս գոյացութե գտանի. և ինքն բոլոր բաշխի հաւատացելոց, և ո՛չ թէ գոյացութի հացին կամ գինւոյն. և 'ի ճաշակօղն ներգործէ իւրով զօրութե զշնորհ միաւորութեն ընդ իւր:

Մերոյին յաւելուած հինգին հեծութեան՝ նորին հօնողի, առ նոյն
ողբերս մաղթանաց բանի։
Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

ԲԱՆ ԽԲ.

Ա. Բարձրեալ, հզօր, անսկիզբն, անեղ, ան-
բովանդակելի[1], անհնարհելի՛ ակնդ նկատող,
ծնող անքնին փառաց միածնիդ. [2] իրաւացուցես
զիմս ողորմութիւն հերքեցելոյս ընդունելութեամբ՝ առ
երկնայինս և առ երկրաւորս։ Տօնեալ զկեալս կո-
րուսելոյս՝ վերնականացն պարերգութեամբ. աւետարա-
նեալ բանիւդ օրհնութեան զկենդանութիւն իմ մահա-
ցելոյս. [3] զբարեբաստութիւն կամացդ յայտնեալ գտ-
վեալ՝ բոլորից գոյից եղելոց. ստացիր անուն քեզ՝
անճառ, և ինձ թշուառիս՝ նորոգ փրկութիւն. կո-
րուսցես զգիր մուրհակի մեղուցելոյս ամբաստա-
նութեան. զվճիռ հոգւոյս մահու՝ ջնջեսցես կայլակօք
արեան որդւոյդ սիրելւոյ. վստահութիւն փրկութեան
բարեաց՝ արեամբ քո նկարեսցես. ցոյց զսքան-
չելիս քո բարեգթութեանդ՝ 'ի ճաշ հարսանեաց քում
հարազատի։ Մի փակեսցես դիմելոյս առ քեզ զդա-
ռագաստ սրահի կենացդ յարկի. մի տրոհեսցես 'ի
բազմականացդ, և 'ի բարեացդ քո զրկեսցես. մի
պահեսցես 'ի գանձարանիդ զնիւթեալ իմ պարտուցս
անօրէնութիւն. մի կնքեսցես 'ի քսակ բարեացդ՝ զզազ-
րութեանց իմոց գարշութիւն. [4] մի երկարս ինձ զվէր մե-
ղացս՝ 'ի յախտալից մարմնիս ծածկեսցես. [5] մի զփր-
կութիւն նեխութեան ցաւոցս՝ ինձ տնկակից մահու մնա-
ցուսցես. այլ բարձ բանիւ քոյդ ողորմութեան [6] զժան-
տութիւնս ապականարար, որպէս զի զատեալ 'ի հիւծ-
մանց ախտից՝ առողջութեան պատրաստեցայց. հնա-
րաւորեալ գթութեանցդ հայր մեծ խոցուածոյս՝ զգա-
րեղ սպեղանիս, [7] կարևոր կործանմանս՝ բարի այ-
ցելութիւն։ Ո՜չ ի քո եմ տէր ոգեսէր, [8] Թէև առ մի-
նուագ բիւրս մեղիցեմ, բայց ոչ զրեցայց համայն
մեղուցեալ՝ տուիչ կենաց իմոց բարերար՝ 'ի շնորհ
պարգևաց կենաց քոյ ապաւինեալ. զի ճանաչելդ
զքեզ՝ բովանդակ արդարութիւն է, և գիտել զզօրու-

թիդ քո՝ արմատ անմահութեան, որպէս և կանխաւ
իսկ գրեաց իմաստութիւնն. և դարձեալ՝ տիրելդ քո
ասէ՝ ամենեցուն, խնայել տայ քեզ յա̃մ. և դար-
ձեալ՝ մօտ է քեզ յորժամ և կամիս, կարող գտա-
նել։

Ը. Այս սողոմոնի յուսոյ աղերսանք՝ իմոյս առեալ
տիպ. քանզի ոչ այլ ոք բազմամեղ՝ 9 որ քան զնա՝
ինձ զուգաշաւիղ։ Երբեմն որդի, ապա ատելի. եր-
բեմն միջնորդ խաղաղութեան ա̃յ ժողովրդեանն, և յե-
տոյ խտրոց որոշման՝ բազում խռովութեան. երբեմն
օրէնք կենաց կացեալ, և յետոյ մուրհակ մահու
հաստատեալ. զերկնաւորին պաշտօն ընդունեալ, և
զօտարին անուն ծանուցեալ։ Նպատճառ օգտող. 10
անկարօտ զրկող. անսովելի գող. գրգեալ տրտնջող.
փափկացեալ փախստական. 11 սեղանանենգ սարտու-
ցեալ. անպատասխանի մնասապարտ. քաղցրամնոյց
հայհոյիչ. զաւակ հայրատեաց. 12 կտակարանացն
մատնիչ. մովսէսի չարախօս. մոռացօղ երախտեացն.
իմաստութիւն սխալական. ամենագէտ յանցաւոր. ամօ-
թապարտ զղջացեալ. 13 տարակուսեալ աշխատօղ. 14
աղաչաւոր կռապաշտեալ. 15 յամրայրին դարձաւոր.
կաղակարծ ընկալեալ. կասկածաւոր հաշտութի. յա-
պայս յիշատակ. յերկբայս փրկութի. չաւատալի
գիւտ. 16 'ի մասնէ մնացուած. խարդաւանեալ գերի.
17 կիսակտուր պրծեալ. կամաւոր անձնամատն. տը-
մարդի յղփացեալ. բազմավրէպ հանճարեղ։ Ի
յընթացս բանից 18 երկեակ որոշմանց՝ ամենայն ու-
րեք բանս արկեալ ողբոց և ձաղանաց, մեծ պարսաւ՝
և փոքր գովեստ՝ իբր 'ի վերայ ինքնագրաւ կորստա-
կանի, երգիծանութի խառնեալ ընդ աշխար. բան
նորա՝ թելադիր բարգաւաճութեան ամենայն հասա-
կի, և խոստորումն նորին՝ 'ի շրթունս բնաւից թա-
ւանչ թախծութեան ողորմելիս իմն ազդեալ։

Թ. Ողորմանամ, վհատիմ՝ տարակուսեալ ապշու-
թեամբ. զի թէ նա այնքան գթեաց, ինձ զինչ պա-
տահեսցէ. զիա՞րդ անկաւ ամբարձեալն. զիա՞րդ սա-
սանեցաւ հաստատեալն. զիա՞րդ կործանեցաւ կա-
ռուցեալն. իբր օտարացաւ ծանուցեալն. զիա՞րդ 19
զակատեցաւ զաւակն ընտրութեան. զիա՞րդ 20 օրացաւ

մերձաւորն. զիա՞րդ ազօտացաւ փայլեցեալն. զիա՞րդ պատանդեցաւ ազատեալն. զիա՞րդ անօրինեցաւ ուսուցիչն. զիա՞րդ նուաղեցաւ հռչակեալն. զիա՞րդ [21] անարգեցաւ փառաւորն. զիա՞րդ փոքրկացաւ մեծատունն. զիա՞րդ ամբարշտեցաւ բարեպաշտն. զիա՞րդ ամբարհաւաճեցաւ ընտրօղն. զիա՞րդ ունայնացաւ պատարունն. զիա՞րդ կորեաց զուխտն՝ որ ընդ բարձրեալոյն: Պատկառեմ ասել, թէ՝ և ընդ սանդարամետականին կապեցաւ. զի՞ կայր նորա՝ և կռոց. ուստի՞ սէրն ընդ պատկերաց. [22] վասն էր կամքն ընդ խորանաց: Զիա՞րդ ոչ յիշեցաւ յանդիմանութիւն սամուէլի՝ առ սաւուղ եղեալ. հմայք ասէ՝ մեղք են, և ցաւս և աշխատութի ածէ թերափ 'ի վերայ: Զիա՞րդ ոչ հայրենի յանդիմանութիւն, կուռք ասէ՝ հեթանոսաց՝ դևք և անշունչք են, և նման նոցա լիցին պաշտօնեայք նոցա: Տէր միայն ածէր զնոսա, մովսէս նախագրեալ յառաջաձայն ձաղանօք՝ սաստիկս իմն ամբաստանէ, ոչ էր ընդ նոսա ասէ՝ ա̃ծս օտարոտիս, զոր ոչ ճանաչէին հարքն նոցա: Ո՞ւր է մահամատոյց այլազգնեայ [23] արձանն փագովրայ. ո՞ւր տգեղն և [24] անպանծալին սիդոնացւոց՝ իգական ամենանզով ձուլածոյն. ո՞ւր կանացի կերպին անգրելին խայտառակութի զազիր տեսակին, որով ամօթոյ մարգարէքն զանամօրէն դիմեցումն անխտրաբար, յանուն չարուէ անժուժկալ դիւին՝ անա̃ծաբար ձօնեալ մոլէին: [25] Տարաւ զէութի բարեբաստուէն՝ որ զնախնին որսաց 'ի կորուստ. յաղթեաց մեծութիւն՝ իմաստիցն առաւելութէ. գերեաց գոռոզութիւն. յիմարեցոյց փափկութիւն. վանեաց արծաթն ծառայեցուցիչ. [26] յօգի դատեցաւ զայրն տօնելի՝ հին զէնն կործանողին. 'ի գրկացն ա̃յ հանեալ՝ 'ի յոտս սատամբաւկին գթեցոյց. մեռոյց մեղկութիւն. թմբրեցոյց ծուլութիւն. արբեցոյց շուայտութիւն: Ո՞վ դիւրապատիր մարմին երկրածին, որո՞վ ք ձայնարկութեամբք զքեզ աւաղեցից. քանզի ոչ տիրապէս առ նա հանդիպի ընդդիմաբանութիւս, այլ ամենից սխալողաց՝ կամաւ վրիպելոց. վասն զի նովաւ է իմանալ, թէ [27] անիրաւ է պարծել յիմաստս մարմնոյ, եթէ ոչ աստուծով դատեալ ըն-

տրեսցի. որ զի թէ առ այս պայմանի՝ յիմար ոք իցէ, և 'ի հաստչին կամս յուսասցի, ոչ ևս 'ի նորայոց անտի ինչ կրեսցէ:

Դ. Այլ քանզի սատրիկս և քստմնելիս ունի տղոմոն զդարձին իւրոյ յիշատակարան՝ ինքնապարսաւն կշտամբութեամբ, իբր մոռեալ իսկապէս համայն աշխարհիս անձնասիրութեան. զոր եթէ զիսկն ոք նկատեսցէ, 28 Անձնայնութիւքն է իմանալի. 29 այլ և 'ի մատեանս քահանայիցն՝ և 'ի գիրս աքիայ սիլոնացւոյ, 30 յորում զփոյթն իւրում ընթացիցն՝ արտասուելիս իմ̃ն յեղանակէ: Ո՜ւր ջան. անօգուտ վաստակ. անմիտ հետևումն. անշահ արշաւանք. անկայուն երկք. 31 օտարին իմաստք. 32 ոչընչից հոլովք. քամքասելի քերք. անյարմար վարկածք. մնոտի սերմանիք. 33 աւազափուլ շինուածք. ապականացու ստացուածք. քամահանաց տաժանմունք. 34 ինքնամարտ կռիւ. ընդ ոգւոյ իւրում դատ. 35 ընդունայնաթող քիրտն. մնասակար փափաք. կորստական շաւիղ. վրիպակ ճանապարհ. կործանական կրթութի̃. մոլորապատիր վարժութի̃. հանապազասխալ տեսութի̃. 36 ակնայայրատ պչրութի̃. պոռնկակերպ կերպարան. ախտաբորբոք նիւթ. 37 դժնեատեսիլ գոյն. յոքնատխուր դեղ. 38 յոլովամեղծ ծուխ. շադի ցնդելի. 39 վաճառ մերձ 'ի յառ. տաղաւար քակտելի. ընդվայր աղաղակ. անպատճառաւոր ծաղր. 40 արհամարհելի ասպարէզ. 41 անձնավաճառ գիր. սատակչական ելք. անմ̃տ մտածմունք. ստայօդ ճառ. զայրացուցանօղ զրոյցք. 42 եպերանաց խծբիծ. խելագարութէ̃ խնդիր. ամօթանաց ցոյցք. խայտառականաց յայտնութի̃ք. առակ ապառնեացն. ապաշաւանաց գործ. 43 ըմպահկանաց պատմութի̃. հեղգացելոց օրինակ. խորխորատ ծածուկ. որս խաւարայինն. մահադաւշակ վիհ. անյատակելի անդունդք. ուղեկցութի̃ սպանողաց. յիմարութեան բարբանջմունք. դարանակալաց վայր. խարխուլ յարկ. շինուած սասանեալ. կամուրջ խախտեցեալ. 44 երևոյթ փախչելի. խաբօղ շողոքորթ. անօպայ մատնիչ. ընդդէմ բարձրելոյն հակառակութի̃: Ո՜վ այս ա̃մ մասունս բանից խոստովանական կանոնադրութի̃, 'ի սիրտս

բնաւից նախասերմանեաց ժողովոցս՝ կանոնադիր դարձելոց զղջման. որպէս [45] զի մի պարծեսցի ոք 'ի մարդկանէ բամբասաւորօք զինուորեալ նետիւք՝ զանձն և զընկերն խոցոտելով. քանզի կռապարիշտ է քողով ծածկեալն, որ զկերպարանս միայն ունի, և զուշախորժելիս ստեղծչին կատարէ:

Է. Այլ արդ նա՝ որ [46] ոչ այնքան մեղաւ, որքան զղջացաւ, մի խապառ պախարակեսցի. այլ յիշեսցի այրն այն 'ի բարի, իբրև զհիմն յուսադրութե 'ի տէրունի ստան դիմելոց, յորժամ հոգւոյն էջ յայցելութի ածութե անբաժանելեաւ՝ կենագործել զանդ խոստովանեալսն. զոր մեռեալքն՝ ահա կենդանեացս անտարակոյս բերկրին աւետիս: [47] Ընդ որում մաղթեալ իմ պարտաւորի՝ իմաստութեն ոչ ժամանելոյ, 'ի մեղանացն մասն կարգեալ, բարեբանեալ մեծիդ պաղատիմ. լից զնուաղդ իմ բանադրութե 'ի յերջանկին համձարեղութե. նիւթեացին ներկայիս հայցմունք՝ 'ի բարդաւաճին յարդաւորութե 'ի գերաշխարան արքային աղերս. այցելութե խնդրոցս դիցի քո լնուրեցեալ վեհ արքայորդւոյն, զոր միածնիդ օրինակեցեր: Զարեանն կցորդութե՝ զքո փառակիցդ ճաշակեցաք. ուժոյ փրկութե քոյոյ ծառայքն՝ ամենահնար զօրեղ ահաւոր, 'ի ստեղծողիդ փառս անձեցուցեալ զանքաւելի մեղացն չնչումն: Զյիշատակաւ խորհրդոց բարեաց՝ ընդ ողորմեալսն նորոգեսցես. որ ամենահամ ախորժաճաշակ բազմապաճոյճ առակագրութ՝ զմծութիդ քո քարոզեալ՝ 'ի մատեան լուսազարդ կտակի եկեղեցւոյ, ընծայեաց հեստ բարութե խոստովանութե մատչել առ քեզ՝ հայր: Քանզի ոչ հեռի յողորմութենէ առ այս ցոյց բանի է իմանալի, թէ անյուսութեանն կալթուած չէր անկեալ 'ի յեռանդն որոյն ըղձից, որ զձեռ զղջմանն փոքր ինչ կասեաց:

Ը. Արդ [48] 'ի յուշ բերեալ զոր 'ի քեզ անձառելի բարեմասնութիւք, զգթութի քո ողջունեսցես. որով զկոչկոծեալն 'ի բազում դարուց՝ բամբասանաց քարաձգութե, երանութե վերարժանացո. որ յոքնահրասան արտասուաց ելքեւք՝ զմէջ յատակի յարկին հե-

զեղեալ ապարանիցն իւր խրախճանութեան՝ սաստ-կակսկիծն ապաշաւանօք, հօրն կրիցն գերազանցեաց ողորմելի ոգւոյն հեծութիւք. զոր 'ի յաչաց բանից-քն արտօսր՝ առ որ մերովս 'ի յիւրն ախտակրեաց, երկայնամիտ ներողութիւն՝ միացուցեալ խառնեցես գգթած. և զանյարմարն առ նա կարծեցեալ զպատ-մոսին բարեբանութի, 'ի փառս էակցի որդւոյդ՝ կնքե-լով նովաւ՝ կեցուցես զնա քաղցրութիւն՝ ընդ աղ-քատս ժողովրդոց: Զայս [49] պուետիկոս ոճն բարե-շնորհ արդահատէր ընդ սողոմոնի, ամենայնիւ վարձս վարկուցեալ համակցորդ զուգաձայնութիւն՝ իբր կեն-դանեօք նովաւ՝ ընդ նմին վասն նորին աղերսել առ-քեզ, զոր յաւելուած կարգիդ տնտեսէ: Քանզի և աւստացւոյն 'ի նմանէ ստեղծեալն՝ բազմահրաշա-ւորն մարգարէաճառն պատմագրութիւն ծննդութեան արդարացուցիչ՝ զսողոմոն ողորմեալ կարգէ. որ զի անպարսաւ է աղօթելն, քան չարաբանելն վասն նորին:

է. Զոր և ես մաղթեմ մեծ վստահութիւն՝ նմանա-կից այսր հեծութեան՝ և զիմն ընդ նմին ընծայել գո-չումն. զի թէ կորուսցես զմեզ դատեալ ըստ գոր-ծոց, ոչ պակասին փառք քո, զի իրաւամբք քո ճա-նաչիս. իսկ եթէ գտցես, [50] մինքան բարձրանաս, որ-քան մեծութեդ քում վայել է. քանզի յաւէտ օրհ-նաբանելի ես դու երկրորդաւս՝ ողորմածութեամբ, քան նախահրաման սաստկութիւն: Դարձիր տէր՝ դարձիր քաղցրութիւն 'ի խնամս գթութեան ձրի և ամէն-առատ պարգևօք սիրոյ՝ մխիթարել յաւէտ [51] զտրտ-մեալքս համաշաւիղ տագնապաւ տապոյ տոչորման անբժշկականի: Զեան եղեալ փրկութեան նորոգես-ցես վերստին, քաւեալ և պատսպարեալ 'ի մեղաց կործանիչ խորտակմանէ: Եւ քեզ [52] միայնոյ սկզբանդ և անսկզբանդ, ընդ սկզբանդ, և սկզբնաւորիդ սկըզ-բանց՝ որ երրորդութեանդ և միում ծնութեանդ փառք և իշխանութիւն՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

---

(1) Աննիրհելի աճող: Այն կամ աչք են՝ որ ընաւ ոչ նինջեն. և միշտ նկատեն, տեսանեն զամենայն: Ծնող անփնին. ծնող միածնիդ՝ որ փա-

ռաց է, այսինքն փառաւորեալ, կամ, որ քեզ փառքն է, բառ այնմ. * Եւ զքեզ փառաւորեցի յերկրի. || (Յով. ԺԷ. Դ:) կամ, անքննելի փառօք ծնօղ միածնիդ:

(2) Իրաւացուցէս զինս: Իրաւացի՛ ցուցցես կամ հրապարակեսցե՛ս զաղօթաւորութիւնդ, որ առ իս՝ յընդունելն զհերքեալս կամ զմերժեալս: Այնպէս ջատագովեսցես զքո բարեխնամ ընդունելութիւնդ առ հրեշտակս և առ մարդիկ, որպէս զընդունելութե անառակին ջատագովեաց հայրն առ երէց որդին և առ ծառայսն, ասելով թէ գիւտ է կորուսելոյն, և կենդանութիւն մեռելոյն:

(3) Զբարեբանութիւն խնդրէ: Զբարեխնամութիւն կամ զերանելի անհամեմատ կամաց քոց յայտնեսցես ամենայն արարածոց, ցուցանելով թէ որչափ անոխակալ և ներող կամս ունիս առ անարժան յանցաւորս. զի անառակին ոչ ներեցեր միայն, այլև ընդառաջեցեր և գրկեցեր և համբուրեցեր, և քեզ մեծապէս գիւտ զնա համարեցար: Սփոփէր անուն. զի թէ յառաջն ԱԾ կոչէիր, կամ հայր, կամ բարերար, այժմ ցուցանելովդ զայնչափ հայրագութ գորովդ որպէս թէ նորոգ հայր լինիս և անուանիս: Կամ, քոյով այնպիսի ընդունելութեդ անուն նոր մայրն է քեզ, թէպէտ և այնպէս ես միշտ ամենայնի անձամբ. և ապագայն առաջնային նա ինքն ՔՍ անուն նոր, կոչեցեալ բարեխօս մեղաւորաց և մեղաւորաց. այլ նման ոչ փոյթ ինչ եղև ընդ այն, բայց միայն զի ինձ արտացէ նորոգ փրկութիւն:

(4) Մի երկարես ինձ: Այսինքն, մի՛ ընդ երկար ծածկեսցես զքեզ մեղաց: մի օրին. Մի երկարես: այլ օրին. և հետ լուծ. Մի երկարեսցես:

(5) Մի ոչ փութաս: Զներելոյ փառաւորութիւն հրաշալոր ցուցցես մի՛ թողացուցես ինձ փոխանակ մահու, զործող կամ երկրող մահու:

(6) Զծանրութիւն աղախնարար: մի օրին. սծանրութիւն աղախնարար: այլ. զըմբոստութիւն:

բ. Սիրտս նանրախորհուրդ, բերանս չարախօս, ակնս յայրատատես, ականջս վրիպալուր, [2] ձեռնս մահաձիգ, երիկամունքս անփորձ, ոտնս մոլորաշաւիղ, ընթացքս աներկիւղ, հետք խոտորնակ, [3] շունչք ծխախառն, գնացք խաւարային, գոյութիւն լերդի վէմական, խորհուրդ ծորեալ, կամք անկայուն, չար անփոփոխ, բարեմասնութիւն սասանեալ, անձն տարագիր, աւանդ վաճառեալ: Գազան վիրաւոր, թռչուն նետահար, փախստական քարավէժ, ըմբռնեցեալ վնասապարտ, աւազակ ծովակուր: Զէնուոր նենգաւոր, մարտիկ անպատրաստ, սպառազէն անժուժկալ, մշակ հեղգացեալ: Աղօթական անխրախոյս, [4] բժշկական ստորնաքարշ, քահանայ անկնդրուկ, օրինական անմուսէր: Պապիր կշտամբեալ, իմաստակ խելագար, ճարտասան անձոռնի: Կերպ անպատկառ, դէմք անամօթ, [5] երեսք լպրշեալ, գոյն անհամբոյր, տիպ տմարդի, գեղ ծանակեալ: Խորտիկ խանգարեալ, ճաշակ գարշեցեալ, [6] այգի գաղձնաւոր, որթ որդնահար, պարտէզ փշաբեր, հասկ ուտճահալ, մեղր 'ի մկանց ճարակեալ, անպատսպար անկեալ: Անապարծ յուսահատ, [7] անհամոզելի նզով, անհաշտական բաժանեալ, ունայնաբան շաղակրատ, պաճարամիտ գոռոզ, անամօթէն ապիրատ, դժոխային ագահ, աներասան յան-

դուգն ։ Մոլեգնութի̃ անճ̃ծ, ձեռնաձգութի̃ սպանող, տատասկացան երկրագործ, երջանկութի̃ եղկելի, մեծութի̃ վատթարեալ, վայելչութի̃ անշքեալ, կարողութի̃ տկարացեալ, բարձրութի̃ խոնարհեալ, փառաւորութի̃ ընդոտնեալ, պատուիրանազանցութի̃ յարակայ, սխալանք ինքնակամ։ Մատակարար կամակոր, խորհրդակից նենգաւոր, բարեկամ հատուածեալ, հազարապետ գողամիտ, մերձաւոր կծծի, բաշխօղ ժլատ, վերատեսուչ կարկամ, [8] ոգի անախտակիր, իղձք անսէր, բարք ատեցօղ, աղիք անգթականք, գնացք անխոհեմ, աներեւոյթք վնասեալք, ծածուկք անիծեալք, դիպուածք թշնամանեալք։ Վաճառական վատնիչ, շահարար շուայտեալ, պաշտօնեայ արբեցօղ, [9] գանձուց ոստիկան երկմիտ, պատգամաւոր բանսարկու, դռնապան քնեած։ Աղքատ հպարտ, մեծատուն ժխտօղ։ Դիւանապետ անօրէն, պահապան մատնիչ, բնակակից չարախօս, սուրհանդակ անժաման, թղթաբեր պարտաւոր, առաքեալ խռովարար, միջնորդ անիմաստ։ [10] Արքայ արտալած, թագաւոր թարմատար, կայսր ոգէկործան, իշխան տիրադաւ, զօրավար զրկօղ, դատաւոր ակնառու, ռամիկ ինքնագործ։ Նախատողի ծաղր, սիրելոյ աշխար, բանագրի դսրով, յանդիմանչի դատախազութի̃։ Քանզի և [11] 'ի վեհագունիցդ կոչմանց՝ էր ուրեք արդեօք զի էր. իսկ 'ի վատթարականացդ մասանց՝ եկն երբեմն եհաս՝ զի եղէ։ Արդ՝ այսքան վնասակարութիւնք խարդախութեանց յաճախագունից, յորոց յոմանց խաբեցայ իբրև զյիմար, և յոմանց տիրեցայ իբր զտկար՝ կամաւ մատնեալ զիս ինքն մահու։

Է. Արդ՝ զո՞րս 'ի վերագրելոցդ մասանց՝ քեզ ատելեաց, և իմ կորուսչաց՝ 'ի սպաս պաշտաման քեզ ընծայեցից. զորպիսիս ապականութե̃ պարագրեալս՝ ամենասուրբդ քո մեծութե̃ հանդէպ կացուցից. և կամ որքանեօ՞ք երկայնմտութե̃ք համբերեսցես այսքանեաց պարտուց. ո՞րքան ներես. ո՞րպէս լուեսցես. զի՞արդ իսկ անսայցես. իբր ոչ մատնեսցես հարուածոց գանից զարժանիս սատակման մահու։ Արդ՝ այսոցիկ աննշոյլ մթութե̃ց՝ հոգւոց խաւարի՝ ողոր-

մութն լուսոյ քոյ պատահեսցեմ՝ բժշկել քաւել և կենագործել զօրեղութիւն անվթարելի. և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

---

(1) Ճառիեան մահու դիպուածս ։ Զյառաջընթացսն աւարտեալ, առնելով զինքն, ընծայեալ մահու. վասն որոյ անուն առնու զսկիզբն առաջնկայ բանին. ուր որոշ ընծայի իմաստ շարադրութեան, եթէ զբանն՝ մահու դիպուածս առացուք իբրև բարդ անուն. զի գոն և այլ անուանք 'ի ստուական հոլովոյ բարդեալք. որպէս. Արեւմտառու, Բարեկացաղաղա, Մասացածին են. ուստի միոյ բանին լինի. զպատճառս մահաբերս կամ մահացորձս՝ որք են պտուղք զանոնութեան ծառոյս, են, յաջորդ բանիւքդ նշանակեցից. և են ներքին թշնամիք. հարաւատափ իմն, բայց հակառակօղք. ... , բայց ներնդօղք ։ Եւ սոքա են ... նանրախորհուրդ են ։ Իսկ դծոխարծմակ իմանի՝ դժնդակ կամ խառնախառն արմատ անող, կամ դժուարալ խելքն, կամ թիւնաւոր ։

(2) Զենոն մահաջիգ ։ այսինքն յօժարեալ 'ի սպանութիւն, կամ ձգեալ յայնմանէ գործս՝ որ մահ բերեն հոգւոյ ։ Եբինկամնոսս անփոյթ, այսինքն ոչ փորձեալ, կամ ոչ մաքրեալ յաղանդի ցանկութեանց ։

(3) Շունչս ծխախառն. այսինքն խառնեալ ծխով բարկութեան ։ Գոյութիւն ... ։ կաղմնութիւն կամ որպիսութիւն լերդին իբրև զկեճ խառնեցեալ անդրթուեան ։ խորհուրդ ծորէալ ։ մտածութիւն անհաստատ, կամ անդորդ, որ թափի 'ի մտաց մուացմանց, կամ անհոգութիւն ։ չար անփոփոխ. այսինքն դժուարաշարժ 'ի բարին ։ Բարենմանուն սասանեալ, ըստ արկան կամ զերկնաւոր բարեաց հաղորդութեան՝ անհաստատ ։

(4) Բնմական սորբնատար. այսինքն սարկաւագ, որ մարմնով 'ի բնակս կացեալ պաշտէ սեղանոյն, այլ հոգւովն յերկրաւորս ձգի ։

(5) Երեսդ չարաշեալ ։ այսինքն անամօթ, լիրբ ։ գոյն անհամբոյր, այսինքն, անախորժ, զզուելի ։

(6) Այգի գաղջնաար. յորում լցեալ է գաղձն, կամ զայլ խոտ որ զըղթոյ պատառ և ցամաքեցուցանէ. են ։ հասկ տափահալ. կերեալ և սպառեալ յուտիճ ճճեաց, կամ 'ի ցեցոյ ։

(7) Անհամոյծին նըշոյլ ։ անմիջնորդելի նզովեալ, այսինքն զրկեալ 'ի հաղորդութենէ հոգևոր բարեաց ։

(8) Ոգի անախոփանիր. սիրտ անյաւ, անհաստատ ։ աներկնոյթ քստնեալս ։ խղճք և խորհուրդք սրտի ապականեալք ։ ծածուկ անիծեալս ։ գաղտնի ներհակութեանք կամ խռովութեանք սրտի՝ անիծիւք ընկալեալք, կամ առանց համբերութեան ։ դիպուածք Բնջամանեալս. արտաքսին պատահմունք 'ի մարդոյ կամ յայլ իրաց՝ տրտմաջնմակ ատրեալք ։

(9) Գանչոսոց սոփիկան. զանձնապէս անհաւատարիմ ։

(10) Արտոյ արփալած. հալածեալ յիշխանութենէ կամ 'յերկրէ իւրմէ ։ Բաժսաոր Եարմապար. անպիտան, կամ լոկ անուամբ եւեթ ։ Նոյօր ոգեկործան. այնմանիւ միահեծան տէր՝ որ փոխանակ խնամակալելոյ զհնազանդեալս իւր՝ զոգիս նոցա կործանէ մոլար հրամանօք. կամ, որ իշխանութեամբն վերամբարձեալ քան զամենեսին, ոգոմն կործանի յանդգունդ՝ անձառար զանձնէ խորհելով ։ Ոամին ինեհագործ. այսինքն նեղիչ, անհաւան հրամանի ։ նախապաղն ծառը. չարախօսի նուաթ ծառայ եղէ ։ իսկ սրբելոյ՝ աղխառ, բարեկամի՝ նուաթ լալոյ ։ Բանագրէն դուրս, բանսարկու կամ ճառպասանի՝ ընդդարձակ նուաթ պարտաւանաց. իսկ յանդընանդէ, որ 'ի սիրոյ կամ յիշխանութենէ յանդգնեալ գլխաւոր 'ի ուղիղէ, ոչ

ըմբռնեալ՝ եղէ դատախաղութիւն, նիւթ անպատասխանութեան. կամ աստուածակերպ,
եղէ ընդդէմ նմա զառախալ:

(11) 'Ի Վենետիկեցւոց նոցանց: 'Ի գերագոյն անուանց բառուցս միշտ-
կեցեալն ինձ յայս հրաշալեացս, զի եղէ զինուոր, ապօթաւոր, քահանայ,
մատակարար, դանձապետ, արքայ, են: Իսկ 'ի ... . 'ի
պարսաւելի անուանց բառուցս և ըստ գործոց ինոց պատշաճեցան
ինձ. զի եղէ ննջագոյր, երկչոտ, անհնաւէր, կամակոր, անհաւատա-
րիմ, ապստամբ. են: Արդ այսպէս, զի ասեա այսքան են մատակարար և
բազմապատիկ խորհուրդք, կամ պատարագական միտքն. յորոց ոմանց,
այսինքն յայնցանէ որք յառաջ գան 'ի բնաւոր ապականութենէ, 'ի տգի-
տութենէ, 'ի պատրաստանաց գիւտին, խառնեցայ երբեմն զղջմամբ. և յոմանց, զի
'ի չար ունակութեանց կամ ամբարտաւանութեանց յաղթեցայ երբեմն ... Արդ
զի՞ս: 'Ի մերոցդերեալ բանիցն՝ որք քեզ առնելիք են, և ինձ կորուսիչք,
զո՞րս ինչ կարեմ ընծայել քեզ. միթէ ընկեցեալ ասել թէ 'ի քում պաշ-
տաման եղէ և ես բնմակեան, քահանայ, պարիր, մատակարար, պատգա-
մաւոր, դանձապետ են. ուրեմն առ այսուհետև զորս երեկին և պարսա-
ւելի անկարգութիւնն. որոց վասն զարմանամ իսկ՝ զիարդ ես երկայնա-
մտեալ համբերես, և ոչ մատնես 'ի հարուածս: Յայսքան ներողամտու-
թեն քո ապաշաւանեալ, աղաչեմ զի խաւարեալ խոհուս հոգւոյս ուղղմամբ
լուսոյ քո պատահեսցես, այսինքն լուսով ողորմութեան քո:

Մերոպէին յաւելուած նշէին հեծումէ՝ նորին հոյովէ, առ նորին
աղէրս մաղՊաշնաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

ԲԱՆ. ԾԸ:

Ա. Բ՛ն Ած անուն ահաւոր. [1] մեծութեան տեսակ.
անքննին բարձրութեան պատկեր. անսահ-
ման զօրութիւն. [2] կերպարան փրկութեան լուսոյ. պաշտ-
պան կենաց. դուռն արքայութեան վերնում հանգըս-
տեանն. Ճանապարհ հանդարտութեան. ապաւինութիւն
նորոգ և անտխրական երանութեան. [3] ամենակալ ինք-
նիշխանութիւն բոլոր էականութեան. օրհնութեան կոչումն.
աւետաւետաց ձայն. բերկրութեան բարբառ. անմահու-
թեան դեղ. որդի անճառ Այ միոյ: Որ ինձ անհնարին
է, քեզ դիւրին է. որ ինձ անհասան է, քեզ սահմա-
նեալ է. որ ինձ անանցն է, [4] քեզ հպատակ է. որ
եղկելոյս ինձ ծածկեցեալն է, քումդ երանութեան
մերձաւոր է. որ ինձ անկարելին է, քեզ կատարեալ
է. որ ինձ անկշռելին է, քումդ անճառութեան չա-
փեալ է. [5] որ ինձ յուսահատութեան է, քեզ սփո-
փանաց է. որ ինձ անբժշկականն է. քեզ անվտան-

գելի է. [6] որ ինձ հեծութիւն է, քեզ խնդութեան է. որ ինձ ծանունք են, քեզ թեթեւագոյնք են. որ ինձ եղծեալն է, քումդ զօրեղութեան գրեցեալ է. որ ինձ կորուսեալն է, քեզ ըմբռնեալ է. որ ինձ անճառն է, քեզ համարեալ է. որ ինձ մռայլն է, քեզ ճառագայթ է. որ ինձ անթիւն է, օրհնեալդ քում ձեռին բովանդակեալ է. որ ինձ սնակալին է, քեզ հեշտալի է. որ ինձ փախչելին է, քեզ վանելի է. որ ինձ անմատոյցն է, քեզ դիւրահերքելի է. որ ինձ մահաբերն է, քումդ էականութե զօրութե ընդ ոչչոյսն համարեալ է։

Ը. ԱՅԼ դու ողորմած Ած բոլորից տէր յո քո, և ՚ի այսմ զօրես առ ելից հնար՝ եթէ գթասցիս. վասն անուան փառաց մեծութե հօր քոյ օրհնելոյ, վասն կամաց գթութե ողւոյդ քոյ սբյ, ոչ ես ՚ի տաժանաւորս կրից յանդիմանական յայտնութե, և ՚ի խորոց սրտի ինքնամատոյց դատախազութե. նայեաց ՚ի բնութես [8] ամենապատաղ խակութե, և պարզեաց բժշկութե վիրացս, և հնարաւորութե կորստեանս, զերծումն բազմամասնեայ մահուս, և շաւիղ կենաց ապականելոյս, նորոգութե եղծմանս, և մուտք յուսոյ ամբարշտելոյս։ Եթէ ես [9] զաննմանն ինձ կամցուցի, որչափ առաւել դու զանաւորականսդ քո զընտանի բարերարութիւնդ. եթէ ՚ի փշոց պտուղ ընծայեցաւ քաղցրութե, որչափ առաւել ՚ի ծառոյդ կենաց՝ ճաշակ անմահութե. եթէ ես իմոց ատելեաց [10] ողորմութե մաղթեցի, դու քոյոյս զիարդ ոչ կրկին մատուցես հզօր՝ յաննուազդ առատութե։

Թ. Արդ՝ տես ՚ի քոյդ մեծութի՝ բարձրեալ, նայեցեալ ՚ի յիմս փոքրկութի. ընկալ զսակաւ խոստովանութիս անհամար մեղացս, որ զանաւն համայն տեսանես. և որպէս [11] զվլիմին գթեւ՝ ոչ գրեցեր, և զաւազդոյս փոքու սասանել՝ մի համարեսցիս. և [12] իբրե զդաւթին՝ ընդ մեղայն ասել՝ իսկոյն անցուցեր զպատիժ պարտուցն, և առ իմ ձայնիս հեծութի՝ զնոյն գործեսցես երկայնմտութի. որ տաս ամենեցուն առատապէս անաչառութե՝ որպէս յաղթօղ բարի բազմիմաստ. և ոչ նախատես զյետնեալ սորուկս՝ որպէս ողորմած և ամենատեղծ. տացես վերստին, և [13]

մի կորուսաներ զբուժեալս արեամբ քո, և զբու-ծեալս ստեամբ քո՝ գթած ։ Զի քո է փրկութիւն, և 'ի քէն է քաւութիւն, և քեզ վայել է փառք յա-մենայնի յաւիտեանս . ամէն ։

---

(1) Մէնծութիւն փէսոյ ։ մեծվայելչութիւն հօր երևեցուցիչ . կամ անհուն ճոխութիւն և հաստատութիւն ունակ ։

(2) Կէրպարան ծէրէութէ ։ ցոյցք կամ նշանակ ազատութեան 'ի խաւարէ 'ի լոյս, կամ, պատճառք լուսաւոր փրկութեան ։

(3) Անմոլութիւն ... . անբնազօր ակրութիւն բոլոր էակ... բոլոր էէկյս, կամ արարածոց ։

(4) ... է ։ մի օրին . ... է ։ որ ... անանցանելի է վասն հեռաւորութեան, քեզ մօտ է ։

(5) Որ ... ։ որպէս գժուարին պատահարք, ծանր փոր-ձութիւնք, բարձրագոյն առաքինութիւնք, յորս իմ ակարութիւն յուսահա-տի, ... է . դու զուարճանաս՝ յայնպիսի գժուարինս ցու-ցանել զզօրութիւն քո և զգթութիւն ։

(6) Որ ... ։ որպէս պատերազմ մարմնոյ և գիւաց, կամ հի-ւանդութիւնք, որք առանց քեզ հեծել, ... է, ... զպաղ-թութիւն իմ, կամ զհամբերութիւն . լաւ բանի առաքելոյն . (Բ. կորն . ԺԲ. 9 ։) Ուստի ասէր երանելին նահատակին շամուշեան . (Բ. մակաբ . Է. 6 .) * Հայի ... 'ի ձգնութիւն պատերազմիս մերոյ, և 'ի ծառայս իւր մխիթարի ։ ||

(7) ... ։ ընդ այլ գործս կարողութիւն քո՝ զորս թուեցի, կա-րող ես և այժմ, զի ... պարտաւորելոյս հնարս ազատութեան գտա-ցես, եթէ գթութիւն կամիցիս ։

(8) Անմ... ։ յամ ... յօժարել և պատա-ղել անխրատութիւն ։

(9) ... ։ Հին լուծ . խնամոյ զաղօթելն վասն չարաբարո-յոց՝ որ 'ի բանին ծէ ։ Սակայն ... անանձինն գնէ զայն նա վաղ-գաւորեաս ։ Այլ յարմարապէս խնամալի է, թէ զինքնակամ յայտնու-թիւն մեղացն՝ և զզաստախազութիւն անձինն՝ անմեղացուն հրապարակեցի, որ հանկարծակ էր բնութեան . զի մարդ 'ի ծածկելն է բնաւորեալ . և հա-զիւ յանձն առնու յայտնել քահանային 'ի ծածուկ ։ Եւ այս խոստո-վանութիւն է պատուղն ընծայեալ 'ի մեղաց . որպէս և առաքեալ ասէ . Ընդ... ... , ևն ։

(10) Ողորմութիւն ... ։ վասն ողորմութեան իմոց աստեղցն աղաչեցի ։ Ձ օրին . ողորմութեան ։

(11) Զ... ... ։ զայն ... զայթակղելն ապաշխարութիւն՝ որչ մեծ հա-մարեցայ, այսինքն անատես արարեր, ներեցեր . այսպէս զգրաւել իմ ; որ առ նոքա համեմատութիւն իւր առաւել եմ, մի համարիր, անատես արա ։

(12) ... ։ Ձ օրին . ... ։ որպէս զգթութիւն պատահե մեղացն իսկոյն թողեր ընդ առաջին մեղաց, նոյնպէս առ հատուցանս աղօ-թից իմոց զնոյն ներողութիւն արասցես ։

(13) Մի կորուսաներ զբուծեալս արեամբ քո, և զբուծեալս սպեամբ քո՝ գթած ։ Ձ օրին . այսքան միայն գնեն . Մի կորուսաներ զբուծեալս արեամբ քո՝ գթած ։

Մերոյին յաւելուած չորէին հեծութեն՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

ԲԱՆ. ՃԱ.

ա. Օրհնեալ տէր յս ընդ հօր, 'ի կամս համաձայնութե հոգւոյդ քո սբյ. և [1] օրհնեալք ամենայն առ 'ի յօրհնելոյդ օրհնեցան. օրհնեալ միայն՝ որդի օրհնելոյ. չիք իմ թագաւոր իշխեցող շնչոյս բաց 'ի քէն՝ քս ։ Այս է օրհնութի յակոբայ՝ առ եսայի, յորժամ բարձից զմեղս նորա ։

բ. Արդ ողորմեաց ինձ՝ տէր բարեգութ՝ ըստ նախնիդ քո սովորութե, և օրհնեա զանօթս քո բանականս, ըստ ձայնին դաւթի և ըստ մովսէսի. զի բանիւդ քո փրկութե ժամանեալ հասից քաւութեան օրհնեալ առ 'ի քէն ։ Ածապէս ինձ հրաշագործեա ողորմած արքայ երկնաւոր, [2] որպէս անկելոցն 'ի բազմաժամանակեայ մահձացն խշտիս, ժողովելոցն 'ի սրահին բեթհեզդայ ։ Յորոց մի էր և [3] կրկին թերահաւատն՝ երից տասանց և [4] ութի միոյ ամօք ախտացեալ յօդիցն լուծմամբ, որում [5] ոչ անխայեցեր զբժշկութեն ձեռնտուութի, իբր գիտելով զանբոյժ չարութիւնն՝ որ նիւթեացն քեզ յաւուր մատնութե դառն գիշերին տիրամարտութե երախտաւորիդ, մեծիդ և բարերարիդ ։ Որ թէպէտ և կանխաւ իմն զգուշացուցեր, թէ մի մեղանչեր՝ զի մի կրկնեսցին կրկին քեզ չարիք, ոչինչ վերջացաւ լինել ձեռներէց սկզբնաւոր անհամբուրելի՝ դատողացն զքեզ 'ի խաչին ։ Այլ դու այնպիսւոյ [6] անյարիր ջատուկ մահուծնգեցեալ չարաշուք առն ողորմեցար, անձառ բարութի, սխրալի մարդասիրութի, սարսափելի ներողութի, սոսկալի երկայնմտութի, անբաւելի քաղցրութի, փառաւորելի հեզութի ։ Որ միշտ [7] յաղթիս 'ի գթութէ, և ոչ թշնամանիս. պարտիս յողորմութէ, և ոչ պարսաւիս. բռնադատիս 'ի մարդասիրութէ, և ոչ անգոսնիս. [8] հարկիս 'ի բարութէ, և ոչ հայհոյիս. ստիպիս 'ի սիրոյ, և ոչ բամբասիս ։ Պա-

ղատիս դարձին իմ առ քեզ, և մի՛ ձանձրանար. արագես զկնի ապերասանիս, և մի՛ լքանիր. ձայնես չլսողիս, և մի՛ սրտմտիր. ⁹ փութաս մեղկելոյս, և մի՛ խափանիր: Առ չարս՝ ես բարի. առ ամենապարտս՝ ես ներող. առ մեղաւորս՝ ես քաւիչ. առ խաւարեալս՝ ես լոյս. առ մահացեալս՝ ես կեանք:

Է. Այս [10] են գիրք ամենայն հոգեշունչ օգտակարութեան, որ յաճախս ծնանիս երկնաւոր պտուղս անճառս և զարմանալիս: Ասա՛ և [11] ինձ թշուառացելումս՝ օրհնեալ ամենապարգև, արի՛ առ զմահիճս խշտացդ մեղաց 'ի վայր կործանմանդ, և հետևեալ ժամանեալ յանդորր հանգիստ անաշխատ կենաց: Խզեսցես ամենակարող սուսերաւ բանիդ հրամանի՝ [12] զերիզապնդեալ մահազգեստ պարփակութի՛ դըժոխազնեայ կապանացս. և լոյծ ինձ զհանգոյցս խեղդողականս ոգեպահանջ սաստկութեան, առաքելով զարժանաւորս մահու՝ յազատութիւն վերին անանց բերկրութեան, կենսաբեր և աստուածային քո բանիւդ: Մի՛ տակաւ տակաւ աղդեսցես, և մի՛ օր 'ի յօր յերկարաձգեսցես, զի մի՛ ստուար ծանրութի բեռանցս մեղաց՝ տիրեսցէ թիկանցս աղդերաց, և կործանեալ զիս կորացուսցէ՝ հայել 'ի դժոխս. և ուժգնակի զօ-ռաց բռնութեամբ [13] անպարապ հոգևորական զինուն արարեալ, մահու ծառայեցուսցէ: Այլ օգնեա ինձ բարի՛ վշտակից՝ հեծութե կարեացս մահու երկանց, առեալ յինէն [14] զփայտ սատակմանն, որպէս երբեմն յուսոյ պահակին. որով կառուսցես զվայելչականն յաղթանակի արի զօրութեան, ընդ-ապէս հաւատով յուսոյն կարծրութե ընդ քեզ բևեռել անսայթաքելի: Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով՝ փառք և իշխանութի յաւիտեանս. ամէն:

---

(1) Օրհնէաց տմ: Ամենեցուն օրհնութիւն յերկինս և յերկրի՝ 'ի քէն շնորհեցաւ տր Յո, որ օրհնեալ միայն ես 'ի քէն, 'ի քումէ խոկութէ, 'ի քոց արժանեաց, որպէս և հայր քո օրհնեալ. իսկ առ այլ արարածս, մանաւանդ յազգս մարդկան, 'ի քէն իջանէ օրհնութի. ըստ այնմ * 'ի զաւակի քում օրհնեսցին ամ ազգք երկրի: || Եւ որպէս դու միայն օրհնիչ, նոյնպէս միայն տիրապէս Բուգատոր Իշխեցող հոգւոյս կամ կենացս: Եւ զի ըստ եսայեայ՝ օրհնութի յակոբայ է բառնալ զմեղս նորա, Աէր ողորմեաց ինձ ես ըստ այսմ օրհնուի, և ն: 'ի բանն եսայեայ, (ծն. 20.)

փոխանակ օրհնութեան գնի ոսկւոյ. և բոլոր բանին այլով շարադրութեամբ ասէ անդ. բայց մի վարդապետս ընդէ զայն ըստ ընտրելի աւանդելոյն. (Հռովմ. ժա. 27.) * Եւ այս նոցա որ յինէն ուխտ՝ յորժամ բարձից զմեղս նոցա : ||

(2) Որոգէս անչինչոցն : Այսու ակնարկէ մի վարդապետս, թէ բազմաց ախտաժեաց՝ 'ի պատշաճական աւանդութիւն բժշկութեան շնորհեաց քո. զոր չէ հարկ խմանալ անընդմիջապար արարեալ 'ի քնէ. զի յովհաննէս զմեղս եւեթ բժշկութեան պատմէ անդ. այլ թէ միջնորդութեամբ հրեշտակի ծծա-պէս նորոգածեաց զառողջութիւն բազմաց, յուզելով զջուրս աւազանին :

(3) Կրկին ծնեալ թերահաւատ : Անդամալոյծն՝ որ յերեսուն և ութ ամաց հիւանդութէն բժշկեցաւ. և ասի կրկին կամ երկիցս թերահաւատ, նախ՝ զի զծանուցանելն նորա առ քահանայապետսն՝ թէ յՔ բժշկեաց զնա, (յովհ. Ե. 15.) ոմանք համարին առ չարութեան արարեալ. երկրորդ, 'ի մատնութեան գիշերին ամէն ապաստակեալ զՔն, և ըստ այսմ կարծեաց խօսի մի վարդապետս : Սակայն բազում այլ վարդապետք՝ ոսկեբերանն, կիւրեղ, օգոստինոս՝ գովութեամբ յիշատակեն զայրս զայս՝ իբրու 'ի մե-րոպալեալ կասկածանաց :

(4) Ոսեն մւոյ անօք : մի օրին. ոսե մւոյ : ըստ շարադրութեան խոստովանի է առնելն, եւեթ փառանց ոսեն մւոյ անօք, փոխանակ գնելոյ՝ երկուք առատմբք և միով ուլթիւ անօք. զի թուական բառքդ են ածականք զոյծիականին անօք, և փոխանակ նովքին հոլովով գնելոյ՝ եդեալ է 'ի սեռական. որպէս և յայլ բանս նշանակեցաք զայսպիսի խոստովանի :

(5) Ուանխոյեշէր : ոչ զլացար նմա զբժշկութեան նպաստն. Ներ Գեփերով, թէպէտև գիտէիր կանխաւ զանբժշկելի չարութեան նորա, զոր արար ընդ քեզ 'ի մատնութեան գիշերին : Եւ թէպէտ յառաջագոյն զգուշացուցեր՝ մի այլ մեղանչել, զի մի կրկնեսցին եղերն չարեք. այսինքն զի մի չարագոյն լինիցի քեզ, սակայն ոչ դադարեցաւ լինել առաջին ձեռնարկող ընդդէմ քեզ, անխղճաբար և խիստ 'ի մէջ դատաւորացն զքեզ, ևն :

(6) Անշուշէր : որ ոչ կարէր յառնել և կանգնել : Չոփող. սովորաբար խմանեան՝ կախարդ, գիւտական գիւթութեանց հետևող, և զինչ յարմարութեան առ անդամալոյծն թերևս կարծեսցի. յառաջին կախարդ լեալ, և վասն այն պատժեալ. կամ թէ 'ի կախարդութենէ ինչ ախտացեալ : Բայց զի կայ այս բառ և 'ի մեկն. մատթ. ոսկեբերանին, ըստ նշանակութեան առեալ փոխանակ կախարդի, այլ կիրառութեամբն երբեմն բառանախառանաց, նովին միտօք խմանի և աստ, այսինքն այր վատթար, անարգ ևն : Հին լուծ. մեկնէ՝ խաբօղ. երբ զի պատրօղ և կեղծաւոր բանիւ աւէր՝ ոչ զոք ունիմ. որպէս թէ բարձօղս և բերօղս յաւազանն ունէր, իսկ ընկեցօղս ոչ ունէր : Սակայն թէ արդարև ասութեամբ ասացեալ էր նորա զայս, անարժան լինէր բժշկութեան քոյ : Մուտոս ծննդեշէալ : Ողորմեցար այնպիսում չարամիտ առն, որ արդէն երբեմն առարկեցեալ ունէր յինէն պմահն. և այնու մաշեալ երևէր. զի զամս երեսուն և ութ կալ հիւանդ՝ սակաւ ինչ ընդհատ է 'ի մահուանէ. մինչ զի առարկեաանալ զոգցես հարցանէր ընդ նա Քն, կամիս ողջ լինել. զի կարծեալ այնպէս էր թէ զմահ ընդգրկեալ կայր յանհոգս :

(7) Ցողին 'ի Գեոսպէ : միշտ զթութեան զօրանայ քան զարդարութիւնդ յայսմ աշխարհի. և սակայն վասն այսր ոչ նշանաձեւ, ընդ հակառակն երկրաւոր իշխանաց՝ որոց միշտ զթալն պարտաւորելի է. 'ի սոյն միտս հայրն և յաջորդքն :

(8) Հորէկիս 'ի Գրուպէ. 1. օդին. 'ի Էպիսթոլուպէ :

(9) Փուպլոս Միջիէշոյս : փութաս կամ հոգաս վասն թուլացելոյս :

(10) Ել Գիրք ամ : Ցայս յուսադրութեան հայրն, և քաղաքն ամենայն

զերկս անճառութեանց և օգտակարս, (Բ Կոր. ուխտ. Գ. 16.) որք մարդա-
սիրութեան և օրինակք գործոցն Աստուծոյ յաճախ պատուէրս երկնաւորս ծնա-
նելին 'ի հաւատացեալս։ Այսպէս լուր օրինակի անդամագրութեան առ և
ինձ, են։

(11) Ինձ եղանակեցելոյն : այլ օրին. Ինձ եղանակեցելոյն :

(12) Զերկայնամտութեանդ : 2 օրին. զերկայնամտութեանդ: Խնդրեմ հզօր հրամանաւդ զմեղուցելական պատուհաս, որով և զայլսն ասպնջեալ էր, Դեմոկրիտեայ, զերեքամեանական կապանացս։ Զպատանս մեռեալ մարմնոյ կոչէ Նաւադենափ. զի է իբր յատուկ զգեստ մեռելոց. և նովաւ կապեալ կաշկանդեալ անշարժ մնայ 'ի գերեզմանի։ Ցայտ իսկ երևեցաւ զօրութիւն ձայնին Քրիստոսի առ Ղազարոս, զի զայնպիսի կաշկանդեալն՝ զկապեալն և՛ ոտիւք, և՛ ձեռօք, և՛ աչօք՝ ած կացոյց արտաքս։ Ասէ առ Ղազարու՝ մերձակայիցն հրամայելով Քս լուծանել քակել զհանդերձս պնդեալ պատանացն. բայց առ իմս արձակումն ասէ՝ զու միայն զօրես՝ ո՛ աստուա կարող. և այնպէս լուծանել, զի զմահու արժանիս յերկնայինն մայելով աղաղակաւոր ընդունիցիս՝ նման Ղազարու անդամակից քեզ բարեկացելոյ։

(13) Անդորրագոյն հոգեւորական զինուն : անկարող առնելով զիս 'ի պատերազմէ կամ 'ի կեր առնուլ զհոգևոր զէնս աղօթից, պահոց, ողորմութեանց, խրատ զկենն կարկամեալ որ չկարէր առնելեն 'ի վեր հայել։

(14) Զծայր ոտքանանն : զպարտաւորութեն մեղացս բարձցես յինէն, որպէս զփայտ խաչին բարձեր յուսոյ սիմոնի կիւրենացւոյ՝ յեղանել քո 'ի գողգոթայ. որով կուտակեցեր, կանգնեցեր, վերջերեակ յաղթանակի, զայն՝ որ պատուհասի յաղթութեան ուր դրաւեն. մանն զի զայլոց բեռն և զծանրութեն բառնալովն՝ յաղթել թշնամւոյն՝ մեծի արութեան և քաջութեն գործ է։ Այսպէս սամփսոն զդրունս գաղացւոցն բառնալով, նշանակ քաջութեն կանգնեաց 'ի գլուխ լերինն։ (Դատաւ. Ժզ. 3։) Հին լուծ. մեկնէ, կառուցեալս ինձ զվայելուչ պատկեր, որ արփիադրութեց զօրութեցն է պատրաստեալ։

Մերոյին յաւելուած իրիկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն ողբոց մաղթանաց բանի։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ։

ԲԱՆ. ՆԹ.

ա. Հաւատամ և վկայեմ մտաց զխտութիւն՝ 'ի քէն ազդեցեալ ոգւոյս իմաստիւ ուշիւս տեսման. զի ըղձալի են քեզ քաղցրաբար՝ [1] աղաչանք մեղաւորաց քան զխնդրուածս արդարոց։ Զի մինն [2] զպարտութիւն անձինն յայտնեալ՝ շնորհիդ քո սպասէ. առ որ ծանուցեալ զքնուէս չափ, և մեծ կշտամբ բիչ ատէն համբարձեալ՝ [3] ինքնոգոր մարտակից նմին իսկ ինքեան, և դառն դարովիչ և ծածկատես դատախազ։ Իսկ միւսն՝ յարդիւնս բարեացն իւրոց նայելով, [4] յանձին հարեալ ձեռն վստահութեան, մա

ունայ զսահման բնութեն, և պարգևաց՝ քան ողոր-
մութե դիտեալ ակնունի: Սասն որոյ [5] առ մինն՝ ան-
թիւ են ստեղծուածք ձառից, որ զողորմութենցդ
քո փողով բարբառոյ ազդէ. իսկ առ միւսն՝ լռեալ
են քոյդ՝ անքնին ահաւոր և ամենախնամ. ամաչեմ
ասել, թէ և երկրաւորիս գործոց պատմութի զքոյդ
յառաջեալ: Սրդ՝ արի տէր, և [6] մի զօրասցի քան
զքոյդ՝ աջ հողեղինի. մի կշռեսցին ողորմութիք քո՝
ընդ ջանից մարդկան:

Է. Նու արդ՝ առողջքն անդամօք՝ անկարօտք են
բժշկութե. և տեսանողականքն աչօք՝ չունին պէտս
առաջնորդի. և փարթամքն ընչիւք՝ ոչ դեգերին առ
դուրս լիոցն. և ամենայնիւ յղփացեալքն ոչ սպա-
սեն փշրանաց սեղանոյ հացի. և սուքն վարուք՝ [7] ա-
պէնիմզ են ողորմութե. Նու արդ՝ ինձ գթասցիս
ողորմեղ՝ բարձրեալ երկնաւոր հզօր, ամենատխուր
վարանեցելոյս: Զանզի թէ էի իբրև զյոբ, ասէի
զանձն իմ իբրև զնա արդար և անարատ. թէ իբրև
զմովսէս, ասէի վստահութբ զնորայսն, ծանիցէ տէր
զայնոսիկ՝ որ իւրն են. եթէ իբրև զդաւիթ, ասէի՝
արարի զիրաւունս և զարդարութի. և դարձեալ՝ [8]
զմեծն քան զընութի մարմնոյ, զմեղս թէ տեսանէի
'ի սրտի իմում՝ մի լուիցէ ինձ տէր: [9] Թէ էի իբրև
զեղիա, ասէի զանձն իմ այր այ. թէ էի իբրև զերե-
միա, [10] զքոյդ ճշմարտութի յանձն օրինակէի. թէ
էի իբրև զեզեկիա, պարծէի զբարւոքն և զիրաւա-
ցին՝ գնացի առաջի քո արդարութբ. [11] Թէ և իբրև
զպօղոս, ասէի զիս բնակարան՝ ազդարան՝ և ընդու-
նարան այ բանին: Սյլ ես անօրէնս 'ի մէջ գիտու-
թե օրինացն, ոչ միայն չունիմ զանձն իմ քեզ ըն-
ծայել յարգանօք բանից իբրև զնոսա, և զբնաւին
չարս՝ որպէս զբարիսն զայնոսիկ առաջի քո յիշա-
տակել, այլ և ոչ [12] զամենուստ գոյից զբարեհռչա-
կեալ անուանդ հզօր՝ ամբարշտեալս լեզուով գովել:
Իսկ դու առ ամենայն հնարս զօրաւոր՝ մատո ինձ
ազի փրկութե, աջ պաշտպանութե, ձեռն այցելու-
թե, հրաման բարութե, լոյս ողորմութե, բան նո-
րոգութե, պատճառ քաւութե, գաւազան կենաց
օգնութե: Զի դու ես յոյս ապաւինութե՝ տէր յո

քո, օրհնեալ ընդ հօր հոգւովդ սրբով յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

---

(1) Աղօթք մեղաւորաց ։ Աղաւթել ախորժելի են քեզ տէր, կամ աղաւթել լսելի այն աղաչանք մեղաւորաց՝ զոր առնեն վասն թողութեան մեղաց իւրեանց, կամ զոր յետ ապաշխարութեան առնեն վասն այլոց պատուհասական տանջանաց, քան զխնդրուածս արդարոց, որք վասն այլոց կամ վասն իւրեանց հայցեն բարիս, կամ որք յարդարութեան իւրեանց վստահացեալ խնդրեն ինչ ։ Ցայս միտս իմանալի է բանս, և ոչ եթէ արժանաւոր կատար և ընդհանրապէս՝ աղաչանք մեղաւորաց քան զարդարոց ընդունելի իցեն առ Ած. Եւ առաւել՝ ոչ իմանի 'ի վերոյ աղաչանաց զոր 'ի մեղս գոլով առնէ մեղաւորն ։ Այլ՝ լոկ բացայայտել միայն առաւել հաճելի լինել Այ զմեղաւորացն աղաչանք հաստատեալ տէ՝ և մեծապէս [illegible] զխոնարհութիւն, և ճանաչմամբ ողորմութեան 'ի մեղս ողջունել. կամ զի անձամբ զփորձ առեալ էր՝ լսել Այ կողկողագին աղաչանաց իւրոց առաւել ևս փութով քան հայցուածոց այլոց ընտիր արանց. Եւ կամ ազդեցեալ տէ՝ 'ի բանս Ձր գրոց, և 'ի պէսպէս օրինակս նախագրեալս ։ Քանզի այսպէս ըղձալի եղեն աղաչանք որդւոյն անառակի առ հայրն գթած քան զխնդրուածս երէց որդւոյն անմեղի ։ Քանանացւոյն շնորհեաց Քս զբժշկութիւն դստերն՝ առաւել առ մօրն թախանձանաց՝ քան 'ի բարեխօսելոյ աշակերտացն ։ Բարոյն իւրեանց աղաչանք ընկալաւ անդէն զբարութիւն, ուր մինչև վասն բարոտելոյ քեան մաքրեսցէ՝ ոչ եղև լսելի ։ Աւազակն 'ի խաչին աղաչէր զյիշելն միայն յարքայութեն, և առ օրհն ընկալաւ զմնակակցութիւն 'ի դրախտին ընդ Քնի. Իսկ Մովսէս պաղատէր անտանել գէթ զաւետեացն երկիր, և զխնդրուածին չընկալաւ ։ Առ այսոքիւք, աչօ քեզ մեծի գթութեն սոյլ աղաչողաց առ մեղաւորս, զի կնոջն բազմամեղի առ ոտս իւր կողկողելոյ՝ ոչ լոկ զներումն անդէն և անդ ազդեաց Քս, այլ գովութիւն զնա քան զնախատողն մեծարեաց. Իսկ 'ի կանոյ հարսանիսն՝ զկնոջն աղաչանաց աղաչաւոր լինէր մայրն, և սակայն թուէր իբր թէ 'ի լսել յապաղեցէ Քս ։ Այլ յամ անեղեալ գոլով ճշմարիտ արդարոցն առաքինիք, յորժամ արդար ցանկայքն չարժել զգթութիւն Այ, կերպարան զմեղաւորի զանձանք առնուլն, մեղաւք գոչելով, անօրինեցաք, յանցեաք. և թէ՝ ոչ առ արդարութեանց մերոց արկանեմք զուլթ առաջի քո են ։ Ըստ այսոցիկ օրինակաց տէ՝ ազդեալ 'ի ճանաչումն մեղ, թէ մեղաւորաց աղաչանք ըղձալիք ևս են առ Ած քան զարդարոց ։ Իսկ զպատճառս այսպիսի անսաեստութե ազ հաստատեաց 'ի կարգիդ ։

(2) Զարդարութե անձինն ։ Մեղաւորն 'ի պէջական բանս իւր՝ զարդարանել կմ զյարդթիլ իւր 'ի դատաստանէն Այ խոստովանեալ. կամ լոա որով ամաչեցեալ 'ի պարծ բանէն, իմանի՝ զպարտաւորութե անձինն յայտնելով, միայն շնորհաց ողորմութե ակն ունի ։ առ որ ծանուցեալ, 'ի վերոյ այսր, կամ բաց յայնմանէ ճանաչէ զչար ակար և ապականեալ բնութեն, և սատանէի յանդիմանօղ և անբաւական լինի զանձնէ, ևն ։

(3) Ինքնագոր ։ Ինքն ընդ ինքեան հակառակօղ. այսմ նման է և յաջորդն, ծուրեալ ի շնորհն իւր ինքեան. այսինքն պատերազմօղ ընդ ինքեան, և 'ի սրտին զառտալով ։

(4) Ցանկին հարէաւ ջէան ։ Իսկ արդարն յարդարութիւն անձինն վստահացեալ, ծառանայ զանհման բնութեն, զանկարութիւն կամ զյիւր պատահութիւն բնութեն. չլինէ թէ յառաջադոյն 'ի մեղս ծնեալ էր, և միայն

շնորհօքն Այ արդարացեալ, և նովին շնորհօք կացեալ յարդարութեան: դուրփնոսոյ՝ փան ուղղըքմունէ, վարձուց՝ քան թէ ազատ շնորհատուութեան ակնունելի: Զայսոսիկ եթէ զամբարտաւանն և զանձնահաճ կամաց խնամա-ցուք, յայտ է թէ այնպիսին ոչ ևս է արդար. և ոչ խնդրուածք այնր ախտաւորին՝ են խնդրուածք արդարոյ, այլ անընդունելիք Այ և մերժանչա-կանք: Իսկ եթէ առանց ամբարտաւանութեան խնամոցին այսոքիկ, իբրև թէ արդարոյն անխիղճ գոլով զանձնէ, և վստահացեալ յանձնիշխանութիւն իւր, 'ի խնդրելն ինչ յԱյ՝ ոչ իբր մերժանչական ոք մնայցէ, այլ իբր բա-րեկամ և վստահականաւոր առաջի Այ, այս ոչ հակառակի արդարութեան. որպէս և Եզեկիաս արքայ՝ զգուշութեամբ անձինն խնդրելով, յիշեցուցա-նէր առաջի Այ զարդարագործութեան իւր. (Դ. Թագ. Ի. 3:) Եւ յայս մասն առաւել հայի բաղձանութիւն սոյ վարդապետիս. զի ցուցանէ աղաչանք մեղաւորաց առաւել յողորմ շարժեն զԱծ, քան զբարեկա-մական հայցուածս արդարոց. իբր զի յառաջնումն՝ պատճառ է միայն անհունն ողորմութիւնն Այ. իսկ յերկրորդումն՝ չափաւոր բարեկամութիւն արդարոյն ընդ մէջ մտանէ՝ իբր մերձաւոր պատճառ արդիւնաւորելոյ:

(5) Այս մին անէին էն: Այս մեղաւորին, կամ առ ընդունելութիւն աղա-չանաց մեղաւորին՝ անթիւ են յօրինուածք գովեստից՝ 'ի գիրս կամ 'ի բերան մարդկան, որք զքո ողորմութիւնդ ամենեցուն ծանուցանեն իբր փոքու: Իսկ առ միւսն, առ արդարոյն կամ առ ընդունելութիւն աղօթից արդարոյն, լռեալ են փոյթ, ոչ այնչափ քո ողորմութիւնդ քարոզի. այլ մանաւանդ անալէծ առէր, ԲԷ Ն Եղէրաւորեա Գործոց պատմութիւն, եղկաւոր արդարոյն առաքինութեանց պատմութեանն փոյթ յառաջէլ, քան զքո ողոր-մութիւնդ առաւել հռչակի: Վասն զի այս է մարդկան ամբողջութիւն, յոր-ժամ անսահման զխնդրուածս արդարոց կատարեալ, առաւել արժա-նեաց խնդրողին ընծայեն, քան զգթութեան առաջին Այ. որպէս թէ Աստ յայնմանէ խնամս իւր՝ առաւել շարժի 'ի բարեկամութիւն արդարոց, քան յիւրմէ զգթութենէն: Վասն այսորիկ ասէր Ոզիաս իշխանն ցՅուդիթ. (Ը. 29.) * Աղաչեա դու խնդրուածովք զԱծ. զի կին արդար ես դու: || Ընդ այսպիսի ամբողջութիւն մարդկան զարմացեալ Պետրոս առաքեալ՝ ասէր առ ժողովուրդն. (Գործ. Գ. 12.) * Արք իսրայելացիք, զի՞ զարմանա-ցեալ էք 'ի վերայ այսորիկ, կամ ընդ մեզ զի՞ էք պշուցեալ, իբրու թէ անձին զօրութեամբ ինչ, կամ քաջութեամբ արարեալ իցէ զնա գնալ ||: Եւ թէպէտ Ճշմարիտ է, զի Աստ բազում անգամ 'ի սիրոյ և 'ի բարեխօսու-թէ արդարոց շարժի գթալ 'ի մեզ, սակայն և այս՝ գործ գթութեան նո-րա է. զի ինքն իւրով ողորմութեամբն արար և պահէ զնոսա արդարս, և նովին ողորմութեամբ կարգեաց զնոսա միջնորդս և բարեխօսս. այլև յընդ-ունելն զբարեխօսութիւն նոցա՝ ողորմութեամբ ընդունի, և ոչ բանադատեալ իբր պարտական. վասն որոյ յամենայնի ներգործէ և զօրանայ գթու-թիւն Այ՝ եթէ առ մեղաւորս, և եթէ առ արդարս. և այն է յամենայնի քարոզելի: Այլ յոյժ 'ի դէպ ասէ մեծն Վարդան 'ի մեկն. սաղմոսին, 'ի յառաջաբանին: * Թէպէտ թուին ոմանք խնդրողք, և կէսք տուօղք, այլ մի ոք է՝ որ շարժէ զամենեսին 'ի խնդիր, և զկէսս՝ 'ի տուր ||:

(6) Մէ ողորմոյի փան պփոյք: Մի երևեսցի զօրաւոր քան զքո ողորմու-թիւնդ աշ հողէղէնն, արդարութիւն մարդոյն. և մի կշռեսցին ողորմութիւնք քո, մի՛ չափեսցին գործք ողորմութեան քո ընդ ... մարդկան, ընդ առաքինա-կան վաստակոց արդարոց: Որպէս թէ ասել. եթէ միայն զարդարոց խնդիրսն կատարեսցես վասն առաքինութեան նոցա, երևի՝ թէ ողորմու-թիւն քո ոչ է կարող ընդունելի առնել զաղաչանս մեղաւորաց. և եթէ որչափ արդար է ոք, այնչափ առնիցես նմա բարիս, կարծի՝ թէ ողորմու-թիւն քո ոչ է աւելի քան զպարտուց մարդկան: Այսպէս զի մի՛ այսպէս կար-

ծեցի, առաւելապէս զԹմ յաղաչանս իմ քան 'ի հայցուածս ար-
գարոց։

(7) Աղէնխաղ էն ուղրձուէ։ Արդարոյն իբր արդար՝ անկարօտք են քաւ-
չական ողորմութե, թէպէտ և արդարականն ողորմութեան միշտ կարօտ
են. զի և 'ի պսակելն՝ ողորմութբ պսակէ ԱԾ։ Բայց իբրև մեղա-
ւոր՝ կարօտին նաև քաւչարար ողորմութե. որպէս ասէ 'ի բանն Ժ. 3։
Եւ աստանօր իսկ օրինակօքն ցուցանէ՝ իբրև զարդարոց խօսել. զի ա-
ռողջքն մարմնով ասէ՝ զեղոց ոչ կարօտին, և ականջն ոչ խնդրէ առաջ-
նորդ, և փարթամք ոչ 'ի մուրս շրջին. այնպէս արդարոց ոչ է հայցել
ներումն։

(8) Զրծն թան դբնուրէ։ Զքան սաղմ. կե. 18. ասէ՝ մեծ կամ 'ի վերը
լինել քան զդնութե մարմնոյ. քան զի եթէ այնպէս խնամոյցեմք զառա-
ցեալն, թէ ոչ ճանաչէր կամ ոչ գտանէր 'ի սրտի իւրում զմեղս ինչ,
ահա 'ի վեր է այս, և մանաւանդ ընդդէմ բնութեա, ուր ընդհանրա-
կանն նոքին արդարքն ասեն՝ ոմ պարծեսցի սիրտ ուրբ ունել։ Իսկ եթէ
խնամոյցեմք, թէ 'ի տեսանելն մեղս ինչ 'ի սրտի՝ կասկածէր թէ ոչ ես
լուիցէ նմա ԱԾ, կամ թէ խնդրէր զի մի՛ ներիցէ նմա տէր, բառ այսմ
ևս 'ի վեր է բանդ քան զկարօտութե բնութեա։

(9) Թոէ էր իբրև դէդիա։ այլ օրին. Բէ ն իբրև։ այսպէս է և 'ի հեռա-
ւեալսն, Բէ ն իբր դէբեմա, Բէ ն իբրև դէդէկիա։

(10) Զոյր ճշմարփութէ։ Երկեմիա բաղդում իրաք եղև օրինակ քն, զի
յարգանդէ նուիրեալքն, կուսութեն, մարգարէութբ, քահանայութբ,
առ հեթանոսս քարոզութեն, գուշակելով զկործանումն աւանարին և
քաղաքին, և յետ կործանմանն լալովն, որպէս և քն գուշակեաց և ե-
լաց. այլև միշտս կրելովն յետումէ ժողովրդեանն վասն անաչառ քարո-
զութեն. յորոց 'ի գուբ աղմոյ արկաւ իբրև 'ի գերեզման, ուստի և
հանաւ, յօրինակ թաղման և յարութե փրկչին։

(11) Իէբրև դղօղա։ Ասէր զանձնէ երանելին Պօղոս, թէ յիս իցէ Հոգի
այ, քն խնև խօսի կամ աղդէ ինձ։ Այդ՝ եթէ և ես նման պօղոսի էի,
կարէի այնպէս խօսել՝ ասէ մր մարգարէս։ Աւ որ և ես ասեմ, եթէ
յայդմ նման պօղոսի չխօսիս, 'ի միւսումն ահա՝ իբրև զնա կոչես գքեզ
զլուխ մեղաւորաց։

(12) Զամէնուաֆ գոյկը։ Ես անխրատեալս և պարտաւոր ոչ միայն չկա-
րեմ իբրև զարդարսն զայնպիսի համարձակիլ առաջի քո, և խօսել պարզ-
երես, այլև ոչ զահաւոր անուամբ՝ զոր համօրէն արարածք, ամենայն
ուրեք և ամենայն օրինակաւ հռչակեն, մեծացուցանեն, իշխեմ առ-
նուլ յանարժան բերան իմ։ Եւ զինչ ասաց. եթէ կամիս Տէր՝ զի զա-
մեցնից զքեզ, համարձակեալ առաջի քո, պարգևեալ ինձ հնարս փրկու-
թեն, պաշտպանութեն ինձ։

Սերտին յաւելուած կրկին հեծութիւն՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

ԲԱՆ. Կ.

ա. Եւ արդ՝ [1] որպէս զի մի՛ վայել է օրհնաբանութիւն ի բերան մեղաւորի՝ ի Ճշմարիտն առակէ կանխաւ իսկ ուսայ, զիա՞րդ յաւելից կրկնել զնոյն գովութիւն աղաչաւորս բազմապատկաւ, որ համապատազ ընդունիմ անէծս [2] ի սաղմոսիս բարեբաստութեան ։ Զիե՞բր երգեցից ինձ վտանգս, և արձանացուցից նախատինս. և ի մերկութեան գրկի՝ փուշս ընդ շուշանաց ժողովեցից ։ Զիա՞րդ ընդ Դաւթի համարձակեցայց ասել, թէ զատամունս մեղաւորաց փշրեցեր ։ Զիա՞րդ դարձեալ, թէ մի՛ անօրէնք բնակեսցեն առաջի աչաց քոց ։ Զիա՞րդ, թէ դատ արա ինձ Տէր [3] ըստ արդարութեան քո, ըստ անբծութեան իմոյ որ յիս ։ Զիա՞րդ, թէ կատարեսցին չարիք ի վերայ մեղաւորաց ։ Զիա՞րդ, թէ խորտակեսցին բազուկք մեղաւորի և չարի, և զայլն որ զկնի ։ Զիա՞րդ, թէ տեղասցէ ի վերայ մեղաւորաց որոգայթ հուր և ծծումբ ։ Զիա՞րդ, թէ սատակէ Տէր զշրթունս նենգաւորս՝ և զլեզուս մեծաբանս ։ Զիա՞րդ, թէ փորձեցեր զսիրտ իմ, և ոչ գտեր անիրաւութիւն ։ Զիա՞րդ զյաջորդն սմին, թէ ես պահեցի զճանապարհս խիստս ։ Զիա՞րդ զկնոյն, թէ ես արդարութեամբ երևեցայց երեսաց քոց ։ Զիա՞րդ, թէ և ես եղէց անբիծ ընդ նմա ։ Զիա՞րդ զմիւսն, թէ հատուսցէ ինձ Տէր ըստ արդարութեան իմում, և ըստ սրբութեան ձեռաց իմոց ։ Զիա՞րդ անձամբ ինձէն զստութիւն իմ ծանուցեցից՝ ասել ընդ սմին, թէ լուացայց սրբութեամբ զձեռս իմ ։ Զիա՞րդ ի մէջ նանրութեան զամբարշտացն աթոռս բամբասեցից ։ Զիա՞րդ զերջանիկին պարծանս՝ թշուառացելովս կերպաւորեցից, թէ դատ արա ինձ Տէր՝ զի ես յանբծութեան իմում գնացի ։ Զիա՞րդ օտարս ի բարեաց՝ զխոտորեալս դաղտնեաց արդարահատեցից, թէ մի՛ համարիր

ընդ ամբարիշտս զանձն իմ։ Ո՜վ մա՛րդ ես ինքն գոլով զայլս անիծեցից, թէ ամուր նոցա տէր զգործս նոցա. և 'ի կարգ բանիցն համարձակեսցայց։

Է. Քանզի թէ [4] զյետինս բանիցն՝ առաջինովքն աստանօր եդից, կրկին ծանրանան ինձ ցաւք, և յաճախեսցեն դառնութիւնք։ Բայց [5] 'ի չեղջեցելոցն արտասուաց՝ դոյզն մի չափեալ, բաւականացայց համապազորդեան յանդիմանութե՛ սաղմոսարանին ընտանի ձայնիւն, որ զպարտաւորեալս միշտ կշտամբէ. առ որս՝ և սպառուած քառասներորդի իններորդի հատուածի բանի յանդիմանողի՝ [6] զիս գարշեցուցեալ, համապազ խայտառակէ. խցեալ զբերանս 'ի փառաբանութենէ, եղկելի զանձն իմ ցուցանէ. ամենայն ձայնիւն դատախազեալ, յակնկալութենէ կենաց լքանէ, միանգամայն և [7] վիրգս մահու ինձ՝ իբր 'ի պատուհաս առաքէ։ Քանզի թէ չար է անէծս առնուլ յօտարէ, ապա [8] անձամբ զանձն անիծանել՝ կրկին չարաչար. իսկ եթէ չառնուլ նախատինք 'ի մերձաւորաց՝ օրէնք են, ապա [9] 'ի տեսողէն հայել զայսոսիկ, կրից արժան տաժանմունք, վիշտք աղէտից, և խեթք մնաց։ Բայց թէ առ խոնարհութե՛ անձին իւրում մատնեսցի, [10] ընկեալ և կշտամբեալ անիծիւք 'ի լեզուէ իւրմէ, 'ի խոստովանեալ և յամէնիշխան շրթանց բերանոյ վերնոյն՝ օրհնեսցի. զի ճշգրտեալ թարգմանեաց զդարձն իւր առ նա՝ զհետս կենաց ոչ լքանելով. [11] սահմանաւն սիրոյ՝ զպարտեացն արմատ կրճատեաց, ոչ տիրեալ 'ի խարդաւանաց չարաբանողաց. ոչխար հօտին քոյ գտաւ բժշկեալ՝ դիմելով 'ի յաղն բուժիչ [12] աղեացն արկածից։ Բայց ես անբանական բարոյից է՝ [13] ապուն կենդանեաց 'ի մէջ դալարոց ծաղկածին վայրից՝ կենաձիր բանից՝ թըմբրութ. մնաց 'ի յարօտս մահու ճարակել։

Ը. Եւ արդ՝ քանզի [14] իմ է առակս վերջին կշտամբողական, և առ իս ակնարկէ զդիպուածոցն չար պատահմունս. որ ինձէն անձին նիւթեցի միշտ զեղմունս կիզանողականս հրոյ տոչորման, հոսեալ 'ի յերկնուստ զգոյիւ գագաթանս իմաստնարանի բազմակիս։ Քանզի զի մա՛րդ 'ի յարդիւնս ինձ օգտից սաղմոսն եկեսցէ, յորժամ անպտուղ 'ի բազմերգու-

թէն լինիցիմ, ոչ նուազեալ հոգւով, ըստ Թեսաղոնիկեցւոյն պօղոսի: Զիա՞րդ ընդ մարգարէին եւ զառերունին խառնեցից՝ մեծս մեղաւորաց՝ նկունս պիտանեաց. ասել ընդ նմին, թէ 'ի բաց կացէք յինէն ամենեքին՝ որ գործէք զանօրէնութիւն: Զիա՞րդ ոչ ունելով 'ի բազմացն պատուիրանաց կատարեալ՝ շնորհին եւ օրինին՝ բարբառեցայց զերջանկին, որ նախ ինքն արար՝ զոր մեզ կանոնեաց, թէ քանզի ծառայս քո պահեցի զայս. եւ որ զհետն գան ասացեալքն: Զիա՞րդ Թափուրս 'ի լրութէ իմաստից կենաց՝ ընդ Երկիւղածս ոմն օրհնեցից: Զիա՞րդ ընդ մեծին մաղթանաց զիմս յօդեցից, թէ զմին խնդրեցի 'ի տնէ՝ զտեսիլ վայելչութեան նորա, եւ [16] զհրամանատրութիւն տաճարի նորա: Զիա՞րդ 'ի հրաժարելոյն ինձ ձեռնամխեցից, յորժամ լսեմ, թէ ուղղոց վայել է օրհնութիւն: Զիա՞րդ շրթամբք իմովք զանձն իմ անիծից՝ ասելով զկնի յոլովից առեալն, թէ երեսք տն 'ի վերայ չարագործաց՝ սատակել զյիշատակս նոցա յերկրէ. զիա՞րդ զմիւսն դարձեալ, թէ չարք վաղվաղակի սատակեսցին: Զիա՞րդ զկերպարանացն իմ նմանութիւն, թէ բազումք անբարշտաց խորտակեսցին: Զիա՞րդ սատակման ինձ պաղատեցայց, թէ ահա մեղաւորք կորիցեն: Զիա՞րդ զբազմայածեան լեզուս [16] 'ի յօրհնեալն բան մխեցից, թէ ասացի պահել զճանապարհս իմ, զի մի՛ մեղայց լեզուաւ իմով: Զիա՞րդ փշովք մեղաց հեղձեալս՝ զանարատին պարծեցայց, թէ այլ զիս յանբծութեան իմում ընկալար: Զիա՞րդ ես մեղաւոր եւ կրկին պատժաւոր՝ զհանգուցանակիցսն դսրովեցից ապրել 'ի նոցունց, թէ 'ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս ա՛ծ:

Դ. Զիա՞րդ իբր ոչ կռապաշտեալ անպատկառապէս պերճացայց ունայն պանծանօք ասել ընդ դաւթի, մինթէ մոռացեալ իցէ մեր զանուն այ, կամ ձգեալ զձեռս 'ի մաղթանս օտար աստուածոց. քանզի որ 'ի մեղս գարշութեան խոնարհեսցի, առաջի կայ նորին կառուցեալ առեալ 'ի պաշտօն [17] յաւանականացն ախտարծարծիցն պոռնկապատիր պատկերացն կերպարան՝ [18] աստարտայ եւ քամովսայ եւ [19] մեղքո-

մայ արուարձանն, և [20] Թարահատայ Թարմատարի,
ընդ զազրոտեացն [21] կանացեաց՝ իշանդամիցն պատ-
կառանք՝ անվերարկու ծանակութք ։ Ո՞ր ոչ պատ-
կառեցից սովիմք ասել ընդ նահատակին, որ զայս
[22] դիմագրաւութիւն առ բարին ունէր միշտ, թէ
վասն քո մեռանիմք զօրհանապազ, և որ 'ի կարգին
է սորին սաղմոս ։ Ո՞ր յիմարս յարս և վատթարս՝
ասել ժպրհիմ, թէ բերան իմ պատմեսցէ զիմաստու-
թիւն, և սիրտս զհանճար. իբր [23] մարդելոյզ կերպա-
րանաւոր՝ զմարդահաճոյիցն ոսկերս ցրուել մաղթե-
ցից ։ Ո՞ր [24] զկրկին երկրորդեալսն մեծանունսն բա-
րութիւս, թէ հաճոյ եղէց առաջի տն յերկրին կեն-
դանեաց ։ Ո խո՞րդ ունօղս անբաւից մեղաց՝ զարդա-
րոյն առեալ կարդացից, թէ ոչ մեղք իմ և ոչ յանց-
անք. առանց մեղաց ընթացայ, և ուղիղ եղէ ։
Ո խո՞րդ զիս ինքն մատնեցից կորստեան՝ յասել
զայս բան, թէ մի՛ ողորմիր գործողացն զանօրէնութի ։
Ո խո՞րդ, թէ որպէս հալի մոմ առաջի հրոյ, այն-
պէս և մեղաւորք յերեսաց այ ։ Ո խո՞րդ զըդեալս
ապականացու փափկութեք՝ սահմանեցից զանմամանն
ինձ բան, թէ խոնարհեցուցի պահօք զանձն իմ, և
զազգակիցս նորին ընդ նոյն, թէ ես 'ի նեղել նոցա՝
քուրձ զգենուի, և իբրև զսգաւոր և զտրտում խո-
նարհ առնէի ։ Որպէս հանդարտեցից [25] զնմանեացն
իմ պատիժ միշտ յիշատակել, թէ սակայն մրուր
բարկութեան այ ոչ սպառեսցի, և արբցեն 'ի նմանէ
ամենայն մեղաւորք երկրի. իբրև զեւմն առ ամին,
թէ զա՛մ եղջիւրս մեղաւորաց փշրեսցես ։ Ո խո՞րդ
զապերախտութիւն յակոբայ [26] 'ի ձառ առեալ հեղդ-
նեցից, որ ընդ ստուերին զճշմարտութիւն ընկալեալ,
մոռացայ ընդ նոսին՝ նոցին թերութեք զերախտիմս
քոյ ամենայնովքն արուեստիւք խաչին փրկանօք, քան
նոքա զզօրավարութիւն մովսէսի՝ ցպոյն աքանչելեօք,
որ զօրինակն նկարագրէր տէրունական տնտեսու-
թեան ։ Ո խո՞րդ զյարուցելոցն 'ի վերայ՝ դիւաց զա-
ղէտս ցուցից, իբր նոքա զօտարացեղից խուժադուժ
ազգացն՝ ասելով, թէ արկին զդիակունս բարեացն
որ 'ի մէջ՝ կուր մնասակարացն թռչնոց, այս է՝ այ-
սոցն օդայնոց. [27] որպէս զանկեալ զսերմն բանին 'ի

ճանապարհին, և զմիաբանեալ զկամս ընդ չարին՝ որք անուանեցին. Երբև զնմանակիցն առ 'ի նոյն չաւիղ չարին պատերազմի՝ դուպար դաղտնամարտ մտացս օցտելոց, զոր ես զօրացուցի՝ գործակցեալ հնարից բանսարկուին։ Եւ ոչ ունիմ ազերսել, թէ մի լուեր և մի դադարեր՝ Տ՛ր. և խորհեցան [28] 'ի վերայ սրբ՛ց քոց և ասացին, զոր 'ի կարգէ սաղմոսին է աղօթել։ Վ՛սնզի [29] յոյժ պատեհագոյն է առնուլ զայսոսիկ 'ի վերայ բռնութե՛ մոլեկան դիւաց միշտ ճակատելոց՝ առ ներկայիս խռովութի, և ընդ նոսին՝ նոցին մշակաց։

Ե. Յորոց դու տէր քո՝ որդի բարձրեալ մեծիդ Ա՛յ՝ պահեսցես և ամրացուսցես, երկնային զօրուդ չորջափակութ՛բ՝ յամենայն ընթացից խաբողին հողմոց խաչիւդ լուսոյ զմեզ պաշտպանեալ. որ զի՝ թէ և գտցին յիս անօրէնութիւնք բազմօրինակք, այլ ոչ հայհոյութիւնք։ Որ ոչ հանգեար 'ի կորուստ նմանեացն իմոց ամբարշտելոց, այլ [30] ամենագորով թախանձմամբ ընդ եղծման ջրողողն զազրագործաց՝ կրկին վշտացար, տաղտկալի զմահու նոցա դիպուածն քեզ դրեցեր, ասելով զզարմանալիսն լաղաց բանն, ածեալ զմտաւ ոչ ևս յաւելից անիծանել զերկիր վասն գործոց մարդկան։ Եւ մխիթարիս մեծ իմն պարարեալ ընդ կեանս անմաքրից և պարտաւորաց տառապման. որ երբեմն առակաւ դդմենւոյն՝ զանխայելն 'ի կործանելյան ցուցեր՝ ողորմած. և [31] առ այլ ումեմն նեղեցար սաստիկ վտանգեալ, ընդ յամրանալ անձրևին առ ուրացողացն դարման։ Նմանելիս ցուցեր [32] բարութե՛ տեսակս յիշատակաց տօնելիս՝ 'ի վերջին աւուրս. քև 'ի ձեռն առաքելոցն քոց՝ ողջոյն հասարակաց անհամբուրիցն հեռաւորաց քաղցրաճաշակս հրամայեցեր։ Նա և յիս ցողեա կենդանի զհայրենի գթութե՛ցդ զսէր, զի և ես փրկեցայց քաւեալ ամենառատ քո այցելութ՛դ։ Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբ՛վ փառք՝ յաւիտեանս. ամէն։

---

(1) [illegible] է։ Ջնջուած աղօթիցս առնու 'ի կատարածէ անցելոյն, յորում ասաց՝ ոչ իշխել 'ի գովութե՛ անուան Ա՛յ անանուանօք բերանով։ Որովհետև առէ՝ ոչ վայել է օրհնութե՛ 'ի բերան մե-

զաւուրքն՝ ուստի 'ի Ճշմարիտն առաւել ։ անմնաց Թուեցաւ բան (սաղմոս. խթ, 16.) * Սակայն մեղաւորին ասէ Աստուած, իսկ դու ընդէ՞ր պատմես զարդարութիւնս իմ ։ || Սակայն զայս 'ի հասմունս 2. գնէ Այս մարդա- պետս իբրև այլ բան յաւելուն՝ թէ սպասաւորած իմ սաղմոսին խնու զրե- լոյն 'ի փառաւորութեան. ուստի սաստիկ յանցաւոր է բան սիրայոյ. (ժե. 9.) * Ո՛չ է գեղեցիկ օրհնութիւն 'ի բերան մեղաւորի. զի ոչ 'ի Տեառնէ առաքեցաւ ։ ||

(2) 'Ի սաղմոսին Եարեէքաեփաւիէ ։ 'Ի սաղմոսերգութեան՝ որ զգայական մաղ- թէ և շնորհէ, և անհնձ ընդունիմ ։

(3) Ըստ արտաքսութեան ։ է (սաղմ. Է. 9.) բայց անդ գնի, ըստ արդ- գարութեան իմում, համեմատ այլոց Թարգմանութեանց, միայն ետեղագնացութիւն գնէ, ըստ արդարութեան քում ։

(4) Զոյեափնս բանիցն. զլեզուին առանս իմ սաղմոսին, առաջնորդին, առա- ջին առաջիկն ։ Զխորհրդ համաձայնեցայց ասէ՝ մեծարել զկարգ այնր սաղ- մոսին. վասն զի եթէ զլեզուին և զառաջինն առանս Նորա յեցեցից, յորս սաղմոսերգութիւն երգէ զայս իսր առ Աստուած, և զբանութիւն՝ որով օրհնութեան արժանի լինի, և 'ի միջին առանսն գնէ զանհնձս անկարգութեան, և անտա- նելով զիս անիծիցն արժանի՝ և ոչ օրհնութեան, այսու երկինն ծանրանան ինձ ցաւք ։

(5) 'Ի ընդմիջելոյն արգասեաց ։ 'Ի բարձրումն կատարելով արտաքսուելի բանից սաղմոսին, զմարկսս առաս յիշատակեալ, շատ լինի ինձ համա- պատրաստական յանդգնութեան բովանդակ սաղմոսին, զոր յանդամ ասաց իբրև ընդանի ձայն, իբրև ամբողջական աղօթս կատարեմ ։

(6) Զիս գործեցայցելով. կատարածն իմ սաղմոսին զիս գարշելի կամ ատելի ցուցեալ, կամ զիս մերժանեալ ։

(7) Վրէժս ծաղու ։ քարկնա մահապարտեցիչս 'ի մեռեալ իմ արձանէ ։

(8) Անյամէ գանձն անիծանել ։ Ծանուցէին զանձն անիծից արժանի, և անիծանել զինքն՝ յորժ գտանի է, քան թէ յանիրաւի անէծս յայլմէ ընդունել ։

(9) 'Ի փետողին հայել. յոյժ որ զիմ տեսանէ, անկանելն նախատանաց՝ արկեան ցաւոց արժանի է ։

(10) Քնել ։ հարուածեալ, գանեալ. յօրինակս ինչ, լինել.

(11) Սահմանեալ սիրոյ ։ շարժեալ կամ մեծարանք սիրոյն զաղտնին լինել հաստոյց. որպէս զմեղաւոր կնոջին ասաց քն. (ղուկ. Է. 47 ։) ոչ մի- թեալ 'ի նենգութեան չարախօսացն գիտաց. որպէս այն կինն ոչ անկեալ ծնեաց 'ի չարաբանութեանէ փարիսեցւոցն ։

(12) Աղէտսն արկածից ։ անխոտից կամ հիւանդութեան ադեացն, կամ մխա- տակար նիւթոցն յաղթեն անդր ժողովելոց ։ Մեղաւորին իբրև անխտացեալ ոչխար փրկի՝ առաջնորդութեամբ գիտէ յանդն հոգևոր, որով և բժշկի 'ի բազց մեղքերով մխտակար անխտից հոգւոյն ։

(13) Աստն կենդանեաց 'ի մէջ դաշտաց ։ 2 օրէն. անատտն կենդանեաց 'ի մէջ դաշտաց ։ Առաջինն յարմար ևս է, և խմանի առնել. առաւել անբան բարուց կործ է՝ յորում ասուն կամ բանաւոր կենդանեաց 'ի մէջ գազա- նի մայրից ուծայլին բանիցն՝ անմնութեան զմահաբեր խոտս Ճաշակեն. զի և անասունք խոտիճն յայնակիսեաց, և զդառնակարան Ճարակեն ։

(14) Իմ է առակս ։ Առակդ՝ կամ օրինակդ, զոր 'ի մերջոյ եղի, այսինքն 'ի մէջ կենդանեաց բանից զմահաբերն Ճաշակել, ինձ յարմարի. քանզի 'ի հոգենորոգ բանից սաղմոսերգութեան՝ միայն զանիծից և զդատապարտ- ւոյց բանսն գտանեմ ինձ յարմարեալ. և անմնութեամբ անշահ մնամ յօգ- տակար բանիցն՝ որ 'ի Նմա. վասն այսորիկ այն պատժապարտ բանքն լի- նին ինձ իբր կերակրական դեղմունք հոգւոյ, հոռել 'ի յեռեմաստ, յորինեալքն

բանից առաքելոյն, պՓոյլս Գագաթանս, զհաւատարմութիւն գաղափարանս, կամ զգլխաւորս, որ է բաղկոց խոստովանութեան վասն խոհականութեանն։ Վասն զի մնայցէս 'ի յարդիւնս իւր օգտից, օգնութիւն գործեալ աստուծոյ, յարժամ յանձնակս երկրաւոր զայն՝ ատակաւութիւն անտարաւոր մնամ։

(15) Զհրամանատարութիւն։ այլ օրինակ. զհրամանատարութիւն։

(16) 'Ի յերկնեաւն բան . . . . զճանապարհս իմ։ այլ օրինակ. 'Ի յերկնեալ բան . . . . զճանապարհս քո։

(17) Ցասանաքանացն։ Զայս բառ այեաւ մեր զերծն օրինակք. մեր ընթերցող օրինակին նախ զերեալ յասանաքանացն, յետոյ զգլուխ նաւին քերեալ ասանէ՝ յասանաքանացն. և այլ օրինակ գնէ յասանաքանացն, և այլք յասանաքանացն, որ և եղաւ յասաւելին տպագրիչս, իբրև եղեալ 'ի բառէն յանէ, կամ յնէ. (այսինքն ընքելի.) և նշանակել ամբարտաւանն աչօք, կամ ամենաբերութե գրգռօղ 'ի չարիս։ Սակայն այժմ քննեալ, հաստատեալ թուեցաւ յասանաքանացն գնել, որ եկանէ 'ի բայէն յասանել, այսինքն ասպնել, որպէս մեկնեն 'ի հին ժողովածս բառից. զի այսպէս գնէ և օրինակն հին ընծայեալ, և մեկնէ՝ առաքողաց, ասելով վկայութեն 'ի գրոց մեկնեն, թէ եր֊ րեխասարդք 'ի բազմ յասանուլին։

(18) Աւարարդայ և փամփղայ։ զայսոցանէ տե՛ս 'ի բանին խղ. լծ. 23. 24։

(19) Մեղսածայ արտաքսյանէ։ Միգդալ, որ և մոգոք, եր չեմծ անմնացե֊ լոց. զորոյ ատեան չքնեաց աստուածն. (գ. Թագ. ժա. 7։) Իսկ արտաքս֊ յան, բառ ասմանց նշանակէ յարուսական արձան ձևացեալ, կամ ասան մարդոյ կերպարանաւ։ Եւ ասի 'ի բազմաց, թէ արձան նորա կանգնեալ էր 'ի այգենձոյ, և հանդուցեալ յաղթու այգենձի. ընդ որով հաւր ընդգա֊ նեցին, և զմաննկամս 'ի գիրկս նորա եդեալ այրեին առ 'ի զոհ։ Ցայտնա֊ նէ կատակածեամ, թէ այս բառ Թերևս գրեալ իցէ, արտաքսյան, այսինքն յարդիւղէ, կամ 'ի վայրս ամն այգենձոյ կացմեալ արձան։

(20) Թարգմանաց Եաբմաարբի։ այսինքն անսացոյ, ոչնչի։ Իսկ թէ զինչ խնամի Թարգմանս, հին ընծայմունքն ասէ անտարաշարաբ՝ այնմաքսակ կուռք լինել, որպէս քաղանվայն։ Այլք 'ի աստուածաբանութեն բառին հայեցեալ, ասացին լինել կուռս ինչ չինեալ 'ի Թարայէ՝ 'ի հօրէն աբրահամու։ Այսպէսն գիտակք 'ի գրոց՝ Թարայի պաշտեալ զկուռս. (յեսու. իդ. 2.) և վարդապետք ասեն յերդրանական աւանդութեց՝ ասեն զԹարա գործօղ կռոց. որպէս գրէ ասեր. (Ճառ. Է. յաղագս աստուածպաշտութե.) և եպիփան յայտանադրյն եա ասէ, թէ Թարա եղեւ պատկերութեն արձանաց, և զկռոց 'ի հրահանգելեաց, 'ի քարէ, և 'ի փայտէ. ընդ որս և միրայս Եղնիկայ ասէ. * Եւ կռոց զգոշեկաց հան֊ դամանքս առ Թարայիւ հարք աբրահամու։ || Եւ յայսմանէ ասեն, յան֊ վաբ. գ. ասի՝ 'ի խառնեան աստան կռոց չինեալ Թարայի, են։ Սակայն այս ոչ բաւականան թուի 'ի բացատրութեն այսր անբաղայ. զի աստ Եաբմաար֊ փառ զմանանաւոր կուռս ինչ խնամոյ մը վարդապետան. և ոչ գտանեմք ուրեք զայնմաքսկ կուռս կոչեցեալ յանուն Թարայի։ Գտանեմք 'ի գիրս խորհրդոց եդեմ (ա. 26.) զկուռս ինչ անուանեալ Եաբմաբոյ։ Այլ թէ այս իցէ յիշեցեալն աստ վարդապետս, և կամ այլ կուռք, հաստատել ոչ ունիմք։ Թո՛ղ զոր վարդան վարդապետ ասէ 'ի մեկնն. զնա. թէ միգդամ է Թարգմանող աստուածն։ Քանզի աստ ուրոյն յիշի միգ֊ դոմ, և ուրոյն՝ Թարգմանս։

(21) Կանադէաց։ այլ օրին. կանանդեաց։ ընդ գարշելի կռոցն կանդայի ձևով կազմելոց, որք են աստարոթս և քամոսս, եղեալ կան և իշանդր֊ մեզն պարսկաստանք, արասանական կուռքն միգդոմ և Թարգմանս, որոց ասեն թէ միայնքն իշոյ նմանն կազմեալ էին՝ միրկանդաբամ և առաւելց ծած֊ կութի. այս է՝ անմիզարքեա ծանանաութէ։ Հին ընծ. զաստան իշանդրամ և

մանկանց 'ի վերայ կանանցն անդամոցն : Բայց անյարմար է . զի Եզեկիէլ . ԻԳ . 20 . զորս բառ 'ի վերայ արուաց ասէ . և առասանօք եւ ձիոց յերիվ կանանցն կուռքն , և ասացս զնոյն նշանակող վասն առնանձն կռոցն : Արդ՝ միտք բոլոր բանին է , թէ որ 'ի մարմնական մեղս առանձին յօժարի , այնպէս է՝ որպէս թէ աշխարհիս զանազանորդ կուռս հեթանոսաց , յորս անձինք կանանցն կերպարանաւ կազմեալ էին , և անձինք առանցն . և առն որ 'ի կանանցս պագանելոյ , զկանանցն կուռս պաշտէ . իսկ որ յարուս անամօթանայ , զարուականն կուռս պաշտէ :

(22) Պոռնկագրութեան առ Եւրոն : զյօժարութիւն կամ զկիրթ առբարին :

(23) Մորդեխայ ներքինաւոր : որ ապառանքին կերպարանօքն ձեռնամուխ տուեալ զնմանէ :

(24) Զիւրին եկեղեցւոյն , երկիւղս ասացեալ մեծամեծ բարութեանն : Այսու կամ զպատճառ բանին իմանայ * Համբոյ եղեց առաջի տն , || ևն . որ երկիւղս զնոյն 'ի սաղմոսն . այսինքն ԾԵ . 13 . և ՃԺԸ . 9 : և կամ զասացեալն 'ի սաղմ . ԻԶ . 13 . * Հաւատամ տեսանել զբարութիւն տն յերկրին կենդանեաց . || որ և համար 4 . երկիւղս հայցէ . * Զմի խնդրեցի 'ի տնէ , և զնոյն աղաչեմ , բնակել ինձ 'ի տան տն զամենայն աւուրս կենաց իմոց : ||

(25) Զնմանեացն իմ : յայլ օրէն . չէք իմ :

(26) 'Ի ձեռս առնել հեթանոսաց : Որպէս զառաքինութիւն հրէից 'ի բաբանն պահել ծառայք աստուծոյ , եւ՝ որ ընդ սաղմոսին . ընդ հին օրինաց առնելով և զճշմարտութիւն նոցա , մնացեալ ընդ հրէիցն նոյին Եբրայեցի , զնոցա յանցանացն՝ զերախանս քնն՝ որ 'ի ձեռն ամենայն փրկանաց խաչին , քան թէ հրէայք զաւագնոյութիւն մտեալ՝ որ 'ի ձեռն հրաշալի զաւազանին , որ օրինակն էր միայն քնն անօթութեան :

(27) Որդւոց պղնձեաց : զնախրդ զաւերման բանին՝ որ անկաւ 'ի ճանապարհի մատուցութեան , և զկամն իմ՝ որ եղև ճանապարհ դիւացն միաբանելով ընդ նմա , ՞ք անուանեցին : Այսպէս հարցական իմանալի է բանս , և ոչ աստուածական , որպէս եղեալ էր յայլ տպագրեալս . նոյնպէս և յաջորդն . Եբրայ զնմանակեցն առ 'ի նոյն շաւիղ . այսինքն որպէս զինքեանն 'ի նոյն գործ պատերազմին սատանայի՝ ՞ք անուանեցին , որ զօրութիւն իմանայ : Իսկ ասացեալ նմանակիցն՝ է Գողիաթ գաղղիացւոց մայրը . յի զաղաննի պատերազմօղ զօրքն ասպատակս մնացս , որք են խորհուրդք և խղճք մեղփառութեան , նախանձու , ագահութեան , ևն . որ խթել թշնամի զօրք խացանեն և ապականեն զաւերման հոգւոց , գործակից լինելով նենգութեան սատանայի :

(28) 'Ի վերայ սեղ գոց : (սաղմ . ՁԲ . 4 .) այսու ՞ք բառիւ պարզապէս կամ զաւերման ամենայն բանին , և կամ զհուր մեղս և զկամս . զոր եւ ասէ՝ 'ի ճանապարհ մեղաց արկանելով , և ընդ կամս սատանայի միաբանելով , զնախրդ ՞ք անուանեցեալ , և զանդարտեցեալ զդիւաց , թէ խորհեցան 'ի վերայ սեղ քոց , ևն :

(29) Ցոյծ զարբէհագոյն : թէպէտ և վերոգրեալ սաղմոսն ՁԲ . բառ ճառին իմանի պատերազմէ այլազգեաց ընդդէմ իսրայէլի , սակայն բառ մտացն՝ յոյժ յարմար է ասել՝ իմանալ 'ի վերայ բանութեան դիւաց , որք միշտ պատերազմեալ են առ ներքոյի խորհրդով , առ 'ի հակառակութիւն այժմու ժամանակիս , այլ և իմանալ 'ի վերայ նոցին նշանաց , չարաց մարդկան , և ապստամբ մտաց և կամաց մերոց , որ գործակից լինին և մշակք դիւաց :

(30) Ասենագորուց Եօսեանացէմ : Ցոյժ զօրանալի թախծութեան կամ տրտմութեան 'ի վերայ կորստեան Ջրողոն զաւրագործաց , ջրհեղեղաւ հեղձու-

ցեալ չարաչարութեանցն ։ Տրտմութիւն նմանօրէն առնէ զմեզ, եթէ զի անկանիցի սպառածէ զմարդ ։ Այնպէս Փիլիպպոսի Ժե ԻԲ, խնամոյ՝ մեծապէս զուարճանաս է կեանըն անմտութեանց ապաշխարութիւն, և որոց արժանի են մահու. որոց օրինակաւ զգամենայն ցուցաւ առ յոյժսն ։ Իսկ առաքեալն՝ նէրէն Հռովմայ-ցոց, թէ երկիւղաւ անկանել, խնամոյ միամտութեան յառաջէն ։ « Սարկաւագաց զի արժանի զմարդն ‖. (Ծննդ. Զ. 6.) և երկրորդ անկանել յետ Ջրհեղեղին, ոչ եւս անիծից Ջրհեղեղ (Ը. 21 ։) Կամ, նէրէն խնամոյ երկնաւորութեան, այսինքն առաւել վճարեալ 'ի Քրիստոսի զանօրէնութեան՝ քան եթէ չէին պատժեալ ։ Եւ արդարև զղջումնաւորին լոկայց կոչէ զզամենն, ածելով զմարդ ոչ եւս առնծանել են ։ Ձեռնդ որ ամենայնի նախահայրեաց բնութիւն է՝ արդարանալ, ապաշխարեսցէ, կամ նորոգ ինչ ածիցէ զմեզ, որպէս թէ յառաջին խորհեալ չէր, և կամ յայլմէ ուսեալ զգուշացեալ գործել իցէ վճարական. և այն զի թէ համաշխարհին բարձեալ ծնունդ մարդկան, արտաքոյ ամենայն ԱՅ ինչ մի 'ի փառացն և 'ի մեծութենէն ։ Կամ, զինչ ասէր՝ առ մարդ զերբ արդարութիւն յայտնել, եթէ այն թէ արտաքուստ առ 'ի նմանէ լսել ունիցի ։ Արդարև մի բան է առաջի ալր, բայց զար-մանալիս յորժամ քննեցեան ունի ամբարշտեալ, որ վասն 'ի դէպ իսկ բազմաստուածեան եղաւ զղջումնանս առ եղականն են ։ Եւ զարմանալի լոկայց առնէ, քանզի անդէն 'ի լսելն բարբառ այդպիսի 'ի բերանոյ ԱՅ զար-մացումն ընդունելի զոլ, թող թէ առ մարդոր քննիչս, որոց թէ և համաձայնի է առել՝ թէ մարդկօրէն ձեռանսյ ԱՏ առ 'ի ցուցանելոյ զերբն գթութիւն, բայց լոկ անտուր ստեղութիւն՝ բողոք իմն համօրէն զայս առար-մութիւն ԱՅ առ խոյն արդարութիւն ։

(31) Առ այլ ամենայն, առ եղկելին՝ որ զերծեա առնէ արդել զանձինս, վրէժ-առացար վասն կարի յանձրեոյն 'ի խնդրել զանձինս. և հրամայեսցէր եր-թալ և երեւել աքարդ, և աղօթել՝ զի եղիցի անձինս առ ուրացողացն դարձեալ, 'ի զարմանս և 'ի այնչափ ապաշխարողացն զխոստ։ (Գ. Թագ. ԺԶ. 1։)

(32) Բարբառէ՛ փնտոյ ։ 'Ի վերջին առաւօտ մարդկանն ալյաքս՝ ցուցեր ան-ձնանելի աղքս աղքս գթութեան 'ի բժշկել զզառածացս, 'ի կերակրել զառաքեալս, 'ի կենդանացուցանել զմեռեալս, յարուցանել զմեռեալս են. զոր և տնտեսք յիշատակել արժան է և բարեհաճակել ։ ձեր 'ի չէ առաքելոցն ։ Տարակուսելի է՝ թէ այս բանք յանցեալսն իցեն յարակցք, թէ ընդ յաջորդն. զի գրեցաւ օրինակք անմիաբան դնեն զկէտսն. և մի ընթերց օրինակ առանց կէտի թողու անսովոր ։ Ընդ անցելոյն խնամի. բազում առատս գթութեան ցուցեր քեզ, քաղ անձնական, այլև առաքելոյն առ մերձաւոր ժողովուրդս. իսկ առ հեռաւորսն անարժանս՝ հրամայեցեր առնել ողջոյն խաղաղութեան ։ Կամ, դնեն ընթեռնուլ ընդ անցելոյն, այսինքն քեզ անձնական ցուցեր. իսկ 'ի չէ առաքելոյն յարակցի ընդ յաջորդին, այսինքն հրամայեցեր առնել ողջոյն 'ի ձեռն առաքելոցն ։ Սակայն լոկ երկուց եւս ընթերցմանն կրկնելի է ի շաղկապն, որ զանց լեալ է առնել յառաջելոյ ձեր ին. և խնամելի է, քեզ և 'ի ձեռն առա-քելոց ։ Արդ՝ եթէ այսքան գթասիրեցեր նաև առ անարժան հեռա-ւորս, միթէ զլանայցես ցուցել նաև առ իս զհայրական գթանեդ զանձ, որ կենդանի եմ եթէ 'ի փառս, և եթէ յողորմել. ոչ կարօտիս միջնոր-դաց առաքելոցն յայց ելանել ինձ. այլ քո բանդ արագահաս եւ է առ իս քան զնոյա առաքցն ընթացս ։

Սերատին յաւելուած երկէն հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս ծաղկանաց բանի։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

ԲԱՆ. ԿԱ։

ա. Եւ ընդէ՞ր է ինձ[1] բնաւին որ 'ի սաղմնային այնպիսեաց բանիցն՝ 'ի կիր արկանել. որ 'ի նախատինս՝ միանգամայն և 'ի նշաւակ ինձ յարակայցեն, համապազ երգել իմովս տաւղօք։ Քանզի զիա՞րդ արդեօք զշուք երջանկին ինձ դատապարտելոյս նմանեցուցից՝ ասելով ընդ նմին, թէ ոչ մերձեցաւ առ իս թիւրեալն սրտիւ։ Զիա՞րդ[2] զկարգաւորութիս տանցն՝ 'ի յայտմանէ զկնի թուելոցն զարհուրեցուցչաց՝ ընդակից կայից կանոնաց օրինաւորին՝ զկնուորին և թագաւորին, և մարմնական հրամանատուին, որք և երկնայնոցն են համբուրելիք՝ ասելով, ոչ յուսահատ եղէց 'ի կենաց պատմօղս աւետեացս և նորոյս աշակերտ՝ անմասն յամենուստ բարեկարգութեց։ Զիա՞րդ ըստ իրաւախորհ արդարոյն, ընդդէմ մեղաւորացն՝[3] մահու զինեցայց առակաւ առաւօտին 'ի սկիզբն արթնութեն միշտ պատրաստական լինելոյ, որ և ոչ զանդամս մարմնոյս գանեալ խրատեցի. զիա՞րդ մասնակցեալ մեծին արուեստ՝ սատակեցից 'ի քաղաքի տն զանօրինեալսն, որ և ոչ զբուսեալ բիծս հոգւոյս իմոյ մեռուցի։ Զիա՞րդ ստեցից գրողին չև՛ յայտնելոցն, թէ զմոխիր որպէս հաց կերայ. զիա՞րդ, որ ոչ միացուցի յիմոցս կրից կաթիլ մի պղտոր՝ ընդ յատակ արտօսր աղբերց երգողին՝ ասեմ ընդ նմին, թէ զըմպելիս իմ արտասուօք խառնեցի. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։ Զո՞րս[4] ինձ գրեցից մեղօք մահացեալս, յորժամ սիրողն Այ 'ի բոլոր սրտէ՝ զյանցմունս նախնեացն իւր վարկանիցի, թէ մեղաք մեք ընդ հարս մեր՝ անօրինեցաք և յանցեաք, և որ 'ի վախճանն յանգի սաղմոս՝ իրաւամբք առ իս, քան առ իւրայն։ Որո՞վք[5] յարգեցայց դասիլ ընդ բարիսն, յորժամ մարդկային հնա

րից այս դեղ պատուեցաւ՝ որ ոչ յիս գտաւ, 'ի գարշութեան կերակրոց 'ի մահ սովեցեալք՝ և յաճախութեան ճգանց 'ի հոգւոց նուաղեալք, ըստ խորութեան ինքնօրէն կրօնից՝ հրէից և հեթանոսաց։ Ո՜ իարդ արդարութիւն իմ մնայ յաւիտեանս, զոր ոչ ըմպաւ իսկ կատարեցի։

Է. Այլ զի մի տաղտկացայց յամեալ 'ի բանիս, համառօտել զսոյն փութացայց։ Ո՜ ի՛նչ ունիմ ասել 'ի տեղի բանիցս՝ զոր աստուածաշունչ ձայնն նուագեաց [6] օրհներգոյն դաւթի, թէ բոլորով սրտիւ իմով խնդրեցի զքեզ. զիարդ ըստ սմին զմեծն քան զայս, թէ յամենայն ճանապարհէ չարեաց արգելի զոտս իմ. եթէ ըստ եղեալս և զայն մատուցից, թէ 'ի սրտի իմում թաքուցի զբանս քո՝ որպէս զի մի մեղայց քեզ։ Որպէս [7] զունայնութեանցս իբր զլծութեց ճառեցից ըստ պարս մաքրոց, թէ 'ի պատուիրանաց քոց իմացեալ, [8] ատեցի զամենայն ճանապարհս չարաց։ Ո՜ իարդ [9] զհեղոյն ճշմարտութիւն իմում սուտթեան մշտնջենական երդմնահարութիւն կարգեցից՝ ուխտեալ ըստ հաւատարմին, երդուայ զոր հաստատեցի պահել՝ զդատաստանս արդարութեան քո։ Ո՜ իարդ ինձ հրեշտակ մահապարտ [10] անհրաժեշտ վճռի՝ զբանին պատգամ կրկնեցից, թէ հեռի է 'ի մեղաւորաց փրկութիւն։ Ո՜ իարդ չարս իսկապէս՝ զբարեացն գրեցից՝ որք 'ի մէնջ առնուն զնոյն հատուցումն՝ զայս տուն յեղյեղել, թէ բարի առնէ տէր ուղղոց սրտից։ Ո՜ իարդ [11] զհամառօտն փոխատրութիւն անաչառութեան՝ վրիպեցելոյս ինձ սահմանեցից, թէ զթիւրեալսն յափշտակութեամբ տանի ընդ այնոսիկ, որ գործեն զանօրէնութիւն։ Ո՜ իարդ զաստուածազգեստին պանծանս՝ ամաչեցելոյս ինձ պատուաստեցից՝ ասել զնորայսն, թէ տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ, և ոչ զբօսան աչք իմ, և որ յետ սորին պատմին ասացեալքն։ Ո՜ իարդ [12] զանճառն քան զմարմին բան՝ 'ի ցոյցս առից քաջալերութեան վհատելոց, եւ զանձ գեհենին՝ ասել ընդ օծեալն Աստուծոյ հոգւովն, թէ յառաջագոյն տեսեր, զի ոչ գոյ նենգութիւն 'ի լեզուի իմում, [13] 'ի սկզբնաւորն նախաձայնեալ սաղմոսին՝ մինչև 'ի լրումն աւարտմանս բանիս։ Ո՜ իարդ

զաստակցութիւն զծնելոց մարդոց համարեան՝ այլոց մահու և որդիս սատակման բարբառիմ զբարեշնորհին , ո՞չ ահա զատելիս քո՝ տէր ատեցի . և զմնացուածն սորին կարգի ։ Զիա՞րդ մեծաւն [14] փառահութիւն տօնելի վեհիցն՝ անձն իմ և դու աշխար աշխարհի՝ զանդատ քո ոգի յառաջ ընծայեալ՝ մեծացուցանես ընդ պսակելոյն , թէ փորձեա զիս տէր և տես , թէ իցեն անօրէնութիւնք 'ի ձեռս իմ , և զյաւելուածն որ զհետ սորին ։ Զիարդ [15] ես գոլով և յայլոց աղօթեմ ապրել՝ յուսացելոցն յա̅ծ ձայնակցեալ , պահեա զիս տէր 'ի ձեռաց մեղաւորի , և 'ի մարդոյ չարէ ։ Զիա՞րդ [16] համբարձայց ընդ փառաւորեալն մաղթել ա̅յ , թէ դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց ։ Զիա՞րդ [17] իբր հանդիսացեալ ընդ Ճգնաւորին՝ զմրցանակն յաղթանակի թագաւորին մատուցանելով զառաւելեալն քան զօրինակ աղերս աղօթից , թէ [18] ինձ սպասեսցեն արդարք քո մինչև հատուսցես ինձ ։

Գ. Բարեբանեալ է և այս իմաստ հոգևոր՝ և [19] տէրունի գործոյն նմանի , որ զփորձիչն պատկառեցոյց , յորժամ զամենայն արհամարհիցէ՝ և զսկզբնապատճառն եղելոց միայն ընտրիցէ՝ ասելով , թէ [20] երանի ժողովրդեան , որոյ տէր՝ ա̅ծ է նոցա ։ Մ՛եծ է և այս բարձրութիւն շնորհի՝ և զգուշական համարձակութիւն լցեալ երանութիւ , թէ ս̅բք քո օրհնեսցեն զքեզ ։ Աղձալի է և այս ընտանութիւն մերձաւորական հոգևոր հաղորդութեան յա̅ծ յուսալ և 'ի նոյն արձանանալ՝ բանիւ սաղմոսին բերկրեալ , թէ զկամս երկիւղածաց իւրոց առնէ տէր . և զկարգ բանին կատարէ , մինչև [21] զողբալին և զզուարճալին ազդեսցէ , թէ պահէ տէր զամենեսեան որ սիրեն զնա . և զամենայն մեղաւորս սատակէ տէր . 'ի գլուխս լրման գրոց նուագարանաց սաղմոսիս՝ իբր թէ զօրինակն իսկ եցոյց վերջին հատուցման՝ արդարոց և մեղաւորաց ։ Զուգակցո՛րդք են միմեանց և զկնի երգեցեալքս . զի թէ ընդունի զհեզս տէր՝ և խոնարհ առնէ զամբարտաւանս մինչև յերկիր , ապա ինձ ո՞րքան եղկութիւք կան առաջի . իսկ եթէ հաճի տէր ընդ ժողովուրդ իւր , և բարձր առնէ զհեզս 'ի փրկութիւն , ա-

պա հերքեալս 'ի բարեմասնութեանց եմ՝ ուր հասա-
տեցայց. իսկ եթէ օրհնելի է ա̃ծ 'ի մ̃ջ նորա տիրա-
պէս, ապա օտարս եմ 'ի մաքրութեանց՝ ընդ որս դա-
սեցայց. իսկ եթէ [22] 'ի կանխերգիցն մերձ այսր եղից
յիշատակարան ինձ կշտամբութե̃, թէ սիրեցէք զտէր
ս̃րք նորա, զի ստուգութ̃ի խնդրէ տէր՝ և կրկին հա-
տուցանէ ամբարտաւանիցն, ապա յորում գնդի ես
գտայց՝ գերեալս 'ի գաղտնեաց գոողին չարեաց:
Վասն զի զօրօրինակ տատանին տագնապաւ տերևք
տնկոց [23] եղևին ծառոց՝ շարժեալք 'ի հողմոց ուժ-
գին բախելոց՝ հոսեալք 'ի խոնարհ, այնպէս ջանա-
ցաւ ջարդել [24] զընթացից իմոց վերարձակութե̃ քա-
ջաբեր ուղեշս՝ զյարմարեալս ձեռամբ անեղ մշա-
կիդ: Ո որ հաստատեցեր արմատացուցեալ վերրա-
տին դարձեալ՝ նոր պտղաւորութ̃բ անապականաւ,
յանդաստան կենաց խնամոց քոց կամացդ՝ ամե-
նապարգև՛ թագաւոր ք̃ս, օրհնեալ յաւիտեանս.
ամէն:

---

(1) Բնաբան որ 'ի սաղմոսին: Զամենայն այսպիսի բանս սաղմոսին յառաջ բերել, որք ինձ 'ի նախատինս և յանէծս յօրինակին, մեղս կան, կամ պատուհասին, համաբարբառ զնոյնս երգել իմով բերանով իբր սաւողք:

(2) Զկերպարանքս փանոցն: Զկարգ հնացեալ տանց հայրենւոյ սաղմոսին, որք են ընտանիք նոյին, սեպհական կամ ազգական կարգին կամ մարդուցն դաւթի, որ օրհնաւոր էր, այսինքն աշակերտ հին օրինաց, միանգամայն զինուոր, թագաւոր, և մարգարէական իշխան՝ զպատուեալ 'ի զանազան հոգս, և առհասարակ այնպիսի կարգս մկայէ զանձնէ, որ է Ներնոյնոցն հրեշտակաց, կամ երկնաւոր մարդիք զարդարելոցն են առաջժելիք: Զի սակ անդ, թէ զգաստ խօսօղն զընկերէն՝ հալածէի. ընդ ամբարտաւանին և ագահին՝ հաց անգամ ոչ ուտէի. յերկիւղածս ակնածէի. զամբիծ առնուի 'ի պաշտօնեայ, ևն. (տես սաղմ. Ճ. 5. 6:) Այդ՝ ես զայսպիսի բանս առելով, զի արդ ոչ յաւասարեցայց 'ի կենաց, որ աշակերտ գոլով նոր օրինացս՝ և քրիստոնեայ, կրօնաւոր և քահանայ, զուրկ եմ յայնց ա̃մ բարեկարգութեանց:

(3) Մտեալ ընկեցայց: Մեռուցից, կամ սպանից, ասացեալ ասացուածին, նմանութ̃բ առաւօտուն, որ նշանակէ՝ թէ 'ի սկզբան արթնութե̃ առաւօտուն լինել պարտ է ընդդէմ մեղաց. որպէս ասէր գուշիթ 'ի նոյն սաղմ. Ճ. 8. * Ընդ առաւօտս սպանանէի զա̃մ մեղաւորս երկրի: || Այդ՝ ես զիարդ այսպէս զինեցայց, որ զիմ մեղանչական մարմինս և ոչ զանձս խրատեցի, թող թէ սպանանել: Այլև զյանձորդն զիարդ կարեմ առնել. * Սատակեցից 'ի քաղաքի ա̃ն զամենեսեան՝ որ գործեն զանօրէնութի. || որ և ոչ զարատս հոգւոյս՝ զչար ախտն մեռուցի, թող թէ զայլ անօրինելոյն յուղղութի ածելով սատակել զչարութի նոցա:

(4) Ինչ գրեցից : Զի՞նչ յանցանս կամ պատրաստութիւնս ընծայեցից քեզ, յորժամ գտանիմ ամենայն զղջացմունս նախանձեալ իբր անձինն համա-րեալ ասէ (սաղ. ճե.) Մեղաք ընդ հարս մեր, եւ որ 'ի վախճանն ցանգի, և որ այլ բանիք նոյն առաջնորդին մինչև 'ի վախճան, որք առաւել յիս ճշմարտութիւն քան կիրառեսցէ : Փոխանակ բանին ցանգի, յր առաջարկի, մի օրինի. յարգի, 'ի գործ դնել, կատարել :

(5) Ցուրգեցայց դատել : Ի՞ւ պատուեցայց կամ համարձակեցայց գտանել ընդ բարիսն, յորժամ ոչ գտանեմ յիս այն զերդ՝ զոր և մարդկային հնարքն մեծ համարեցան. իբր զի 'ի գործոյ իմ եթէ ... գտանեմ, վասն խորշե-լոյն կամ ժուժկալելոյն 'ի կերակրոց՝ 'ի ծով տուժեցայց. (շ. օրինի. աո-ժեցայց,) յր մահուչափ քաղցեալք : Եւ վասն բազմութեան ճգնութեց, ջրոյ, ծարաւոյ, աղքատութեան, աշխատութեանց, եւն, 'ի հոգւոյ նուաղելոյ, յուժոյ և յառաջնութեան պակասեալք : Զայսպիսի մարդկային հնարս պատուելին հրէայք և հեթանոսք խորտութեան իւրեանց կրօնից, յինքեանց օրինադրեալ կամ ինքնակամ կանոնաց՝ առ 'ի շահել զառաքինութիւն և զի մաստութիւն : Իսկ 'ի յիս ոչ գտանեմ այսպիսի . այսպէս զի՞նչ ընդ այնպիսի բարիսն պատուեսցայց :

(6) Օրհներգոյն դատել : այսինքն օրհնութեան երգողին, կամ սաղմոսա-գրին : մի օրինի. օրհներգողին : շ օրինի. օրհներգոյն :

(7) Զանայնութենցն : Զի՞նչ զտանիցն և պանկատար բաղձանացն՝ իբրև զկատարելոց գործովք պատուեցից ընդ մաքրոյս, թէ 'ի պատուիրա-նաց քոց, եւն :

(8) Աղեղն զամենայն ձանապարհս շարաց : այլ օրինի. աղեղն զձանապարհս շարեաց :

(9) Զհեղգոյն ճշմարտութեն : Զի՞նչ զհեղգոյն զգածեալ զհաւատարմութեան խնամ սպասողն, անհաւատարմութեան կարդեցից համարձակօրեայ առա-ջնորդութեան, թէ երգուայ և հաստատեցի պահել, և սակայն գոր-ծովք ոչ պահեմ :

(10) Անհրաժեշտ վճռոյ : շ օրինի. վճիռ :

(11) Զհամառօտն քննադատութեն : Զի՞նչ զարդ կամ զանձկեալ համառօ-տութեան անաչառ՝ քեզ խոստովանելոյս առհմանեցից, մեծացից, կամ յարա-մարեցից :

(12) Զանձառն տան զմարդն : Զբանն որ 'ի վեր է քան զմարդկային բնու-թեն, կամ քան զմտածականն ակարութեան, զի՞նչ առից 'ի քաղցրութեան առողջութեանց՝ եւ որ զանձ կամ պահեստ եմ գժոխոց, առել ընդ գտութի՝ թէ չէք նեղութեն 'ի լեզուի իմում : Ոչ առել բնաւ, կամ չյանդգնել լեզուաւ՝ է դժուարին յառաքինութեան, և գերադանց քան զմարդկային ակարութեն. վասն որոյ արք սրբասէրք միշտ առաքինեցան և երկնչին առաջի. և սակայն գտութի միայնելով զայն զանձնէ, ցուցանէ հնարաւոր լինել, որով առ քաղցրութեան արդարոց : Բայց եւ ասէ՝ որով զխօսք ածից զայս 'ի քաղցրութեան այլոց :

(13) 'Ի ընդդիմութեան նախատեսեալ : յառաջին բանն նախատեսեալ առաջ-մուտս ճղը. մինչև 'ի վախճան :

(14) Վարձահատոյց փոխել : Զի՞նչ զու անձն իմ որ ոգեակ եւ աշխարհի, վասն հաւատ երջանիկ իշխանին գտութի՝ յառաջ ընծայելով զանազան զօ-ոգի, զանձնւորն, զանկեղծօղ քո հոգին, պատրաստեալ ընդ նման՝ թէ փոր-ձեաց զիս, եւն :

(15) Ես գոլով : Ես իսկ զոլով մեղաւոր և չար, զի՞նչ աղօթեմ ա-ղերսել յայլոց մեղաւորաց, եւն :

(16) Համբաւրեայց ընդ պատուաւորեալն : Զի՞նչ իշխեցից ընդ փառաւո-րեալոյն գտութի աղօթելոյ, եւն :

(17) Իբր հանդիտացեալ։ Զիմաստ եւ իրաւ հանդիսաւորեց կամ հարցման ճգնողաց դաւթի՝ դիւրաթմանակ ճգնութեան մատուցանելով ըստ, առաջնորդ ըստ աղաչանաց՝ որ ՚ի վեր է քան զօրինակ, կամ յոյժ գերազանց։
(18) Իմն տարաւեացեն։ այլ օրինի. իմն տարաւեն։
(19) Տէրունի գործոյն։ Յոյժ զովելի է և այն խոհուն աստուածային՝ յաւ րուն զամենայն արարածս արհամարհելով, զան միայն ընտրէ առնելով, երանին ժողովրդեան, ևն։ Եւ այս նման է քնի գործոյն՝ որով յանձնեալ արար զփորձիչն առնելով, * Տէր ըստ քում երկիրպագցես, և զնա միայն պաշտեսցես։ ‖ (մատթ. դ. 10։)
(20) Երանի ծողովրդեան, որոյ։ Յ օրին. երանի է ծողովրդեան, որոց։
(21) Զողբումն, որ ասէ, զձեռ մեղաւորս սատանաչէ. և զզուարճումն, որ ասէ, ապաւէն որ զամենեսեան՝ որ սիրեն զնա։ Որով ՚ի վերջ կատարածին սաղմոսացն իբրև թէ ծանուցց զօրինակ վերջին հատուցման արդարոց և մեղաւորաց։
(22) ՚Ի կանոներգիցն։ ՚Ի յառաջագոյն երգեալ սաղմոսացն։
(23) Եղեւին ծառոց։ Հին լոյծ. զեղեւնին մեկնէ, ցանկ է ձանձրալ առ մաս, այսինքն սաղմոսին եղեւնի ասէ, յայղեան բռնանի, առել կաղպին զինքն։ Բայց այսպէսն առաւել զիմաստ ունէր փայտ աղխիւ և ատուր, յաղ մէ շինուածք լինիցին։ Որանք խմանեան զնոճին. (ակերմկ։) Այլ առա ոչ յարգմարի. զի ասրեւք նոճոյն մանրիկ և խիտ դոլով, ոչ այնչափ ասա ստոներն ՚ի հողմոց, և ոչ թօթափին յերկիր. այլ խմանալի է մայր ծառն, (չամ աղաճը,) որոյ տերևք զիւրաշուրջ են և թօթափելիք։
(24) Զընթացից նմա։ Զանազան ստաման ջարդել զմարդկային ըն թացից շատաւոխման արարածոց ուղէշս, այսինքն զմարդկային կենաց զօրութիւն՝ զմանուց և զկամաց, և զզգայութիւց. զորս ած յարմարեաց ՚ի ծառս բնութեան։ Բայց մի օրինակ զնէ, ընթացից նմա վերաբերեալ. այլ. Ն. այսինքն զշատաւորս՝ որ արձակին ՚ի ծառոյն. և բառ այսմ հեռակեալ բառս՝ փողաբեր ուղէշս, լինին բացայայտիչ բառին՝ վերաբերա կանոնեալ։

Սորին յառաջասացեալ ներքին հեծութեան՝ նորին հանգոյն առ նոյն ողբերգ մաղթանաց բանի։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

ԲԱՆ. ԿԲ։

ա. ԱՅԼ արդ՝ ընդէ՞ր ոչ [1] ՚ի վերագրեցեալն սաղմոսն Նախաձայնական՝ և յայլ մարգարէից մասն ինչ յօդեցից։ Քանզի զի՞նչ վայելուչ իցէ կերակրոյն, եթէ անզգայեալ ցաւովք ուտիցեմ. և կամ զո՞ր շահ սաղմոսն ունիցի, եթէ ոչ ՚ի միտ առնուցում։ Քանզի նզովեմ զիս ինքն ՚ի նոսին, և ոչ իմանամ. լուացեալ լինիմ, և ոչ պայծառանամ. արևու ծագեալ, և ոչ լուսաւորիմ. մեղր ճաշակեմ, և ոչ քաղցրանամ. [2] ուտնիւ ընանիմ, և ոչ բժշկիմ. միշտ կանխեմ ՚ի նոյն, և դատարկ երևիմ. հանա-

պաղ ձաղիմ, և ոչ երբեք խրատիմ. ողոքիմ դառ-
ձեալ, և ոչ զգաստանամ:

Բ. Արդարև՝ մեղք և անօրէնութիւնք իմ յիս, և ես
մաշիմ 'ի նոսին, [3] ըստ մարգարէին՝ որ 'ի դիմաց
պարտաւորացն՝ բանի. և տէրունական առակին հին
տկոցն և նոր գինւոյն: Վասն զի թէ սատակին անօ-
րէնք և մեղաւորք 'ի միասին, ըստ եսայեայ ձայնին,
ապա և ինձ դժնէիս նոյն բաժին հանդերձեալ պա-
հի: Քանզի ասեմ զսաղմոսն, թէ հատուցանէ այ-
նոցիկ՝ որ առաւել առնեն զամբարտաւանութիւն. և
կցորդեմ սմին զընթերցուածն, թէ օր տն 'ի վերայ
հպարտից և ամբարտաւանից. ասեմ, թէ օտար ե-
ղեն մեղաւորք 'ի մօրէ, և որ ինչ կարգ. սորին ցու-
ցանէ. յարեմ առ սմին, թէ կործանեսցին անօ-
րէնք երկրի, և ամբարիշտն բարձցին յերկրէ, և ա-
նիրաւք մերժեսցին 'ի նմանէ: Ողբք ինձ կարդացէք
առ ձայնն, թէ զօրօրինակ վառի եղէգն 'ի կայծա-
կանց հրոյ, այնպէս այրեսցին մեղաւորք 'ի բորբո-
քեալ բոցոյն. լացէք առ սաղմոսն, թէ արկցես 'ի
վերայ նոցա կայծակունս հրոյ. աշխարս պատմեցէք
'ի բանս տծեան վճռին մարգարէին ազդեցեալ,
թէ ոչ կամիցիք լսել ինձ, սուր կերիցէ զձեզ. կոծե-
ցարուք առ սաղմոսն, թէ մահ հովուեսցէ զնոսա.
աղի արտասուօ՝ ողորմ հառաչմամբ ընդ հեծութիւ
իմ յարմարեցէք, յորժամ բարձրեալն ընդ եսայեէ
լի և ինձ ասասցէ բանիւ սաղմոսին, թէ ժողովուրդ
իմ ոչ լուաւ ձայնի իմում. աւաղ կարդացէք թշուա-
ռացելոյս, յորժամ այլ մարգարէ զնոյն դիցէ, վայ
նոցա՝ զի վազեցին զինև: [4] Նարբանս փողեցէք 'ի
սիրտ մղձկեալ նոր աղաղակի, յորժամ տեսանողն
աստուծով ամաչեցուցեալ զիս կշտամբեսցէ՝ ընդ
ապաքասան տանն յակոբայ, տեսէք արհամարհողք՝
զարմացարուք և եղծարուք:

Գ. Ահա դարձուցես և ամփոփեսցես զբարձրա-
ցեալ զօւր բարկութեն ահաւորիդ սպառնալեաց՝ 'ի
սարսուցելոյս յերեսաց մերիդ. և խնամովք աջոյդ
բարեբաշխութեն առ իս ժամանեալ, օծումն կենաց
պարգևատրեսցես քո աղաչողիս: Եւ քեզ փառք
յերկինս 'ի բարձունս, և 'ի մահացուաց յերկիր 'ի

խոնարհ, 'ի սահմանս բոլոր ազանց, և յամենայն յաւիտեանս. ամէն։

---

(1) 'Ի Վերագրեցեալն ասացմամբ։ Արժան է ասել՝ 'ի յառաջբերեալ բանս աստուածայնոյ յաւելուլ և յայլոց մարգարէից սակաւ բանս. զի այնպիսիք են կերակուր և դեղ հոգւոյ. և որ շահ 'ի կերակրոյն՝ յորժամ անզգայաբար ոք ուտիցէ, նոյնպէս զինչ օգուտ 'ի սաղմոսէն և յայլոց մարգարէից, յորժամ ոչ 'ի միտ առնուցուն։

(2) Ոսկեփոր խունկ։ Ոսկեփին է խեժ ծորեալ 'ի ծառոց, որպէս (չամ սախըզը, Թիրէմէնթին.) ևն. այսու այլաբանէ նա վարդապետս դժնդակս բանս 'ի սաղմոսաց և յայլոց մարգարէից. որք դեղք են վիրաց հոգւոյ։ Հին լուծ. զանուշն մեկնէ, համօրէն քաղցր դեղոյ անուանէ, զոր շաքար ասեն։ … 'ի սաղմոսել, յընթեռնուլ զմարգարէս, և որպէս Թէ բնաւ զասացի՝ անտեղեակ եմ։

(3) Ըստ մարգարէին։ Ըստ բանին մարգարէին Եսայեայ (ԾԹ. 12.) որ 'ի դիմաց յանցաւորացն ասացեալ. և ըստ աւերանական առակին հին փնոյն. որպէս զհին նոր մաշէ զհին ահա, այսպէս անօրէնութիւնք իմ յիս մաշեն զիս։

(4) Բարբառ հողեղէն։ Բարբառ նոր աղաղակի խեր փոխել հեծեծմունս ցէք մեծկեալ սրտիւ։

Մերսոփէն յաւելուած երկեն հեծութեան՝ նորին հոգւոյն, առ Նորին աղերս մաղԹանաց բանի։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

ԲԱՆ. ԿԳ.

Ա. Բարերար և բազմագութ, մարդասէր և երկայնամիտ՝ միայն Թագաւոր, ընդ Հօր քում պատուեալ և օրհնաբանեալ ես ամենայնիւ, որդի Այ կենդանւոյ։ [1] Նախատանօք միշտ խմեալ կորստեան. որ ամենևին անփորձ ես 'ի չարեաց. որ ոչ կամիս զմահ մեղաւորի. որ փրկութիւն են 'ի քոց կամաց ընծայեցեալ. որ դարձուցանես զմրրիկ մեղաց՝ 'ի յօդ քաւութեան. որ զհուր բարկութեան յանձրև փոխարկես։ Որ [2] զչյեռանեալ զկինն 'ի բարեաց՝ կրրկնակի գոյիւ նահանջեր՝ երկեակ բնութիւն 'ի նոյն արձանի, ոչ խսկապէս ընդ անապարտն, և ոչ համայն ընդ պատժաւորսն։ Որ զլուծումն ծովուն սահմանաց՝ իբր զկարկառս քարանց կառուցեալ յեղանակեցեր։ Որ զկարծրանիւթ վէմն անապատին՝ [3] 'ի մէ-

ժակս վտակաց հոսեալ բղխեցեր ։ Որ զյորդանանու
ջրոյն սրաշարժ վայրէկութի՝ հրաշաւոր անդրադար-
ձութե՛ [4] 'ի յետնորդս հեթանոսաց լուացումն աւա-
զանին 'ի թիկունս առաքեցեր ։ Որ զպատուաստեալ
պարիսպն երիքովի , յօրինակ կործանման բանութեն
սատանայի՝ իբր զթեթեւութի յարդի ցնդեցեր ։ Որ
զվնասակար ջուր նորին [5] 'ի յառակ այլայլութե առ
'ի բարին փոխարկութե՝ քանանացւոցն փրկութե՝
խորհրդական աղիւն համեմեալ անուշեցեր ։ Որ զմե-
ռային դառնութի , իբր զմտաց անհաւանութի, կե-
նացն փայտիւ 'ի քեզ յարմարեալ՝ պիտանի արա-
րեր ։ Որ [6] զառեալն 'ի գետոյն՝ 'ի գծագրութի ան-
սահմանդ քո հրամանի անորակիրդ գունակութե՝ 'ի
նոր երանգ բոսորային՝ մածեր արիւն 'ի ցամաքի ։
Որ [7] զանկենդան ցուպ գաւազանին , 'ի կերպարա-
թի առ 'ի զքոյդ մերովս նկարագրիլ, այլ և յօտա-
րազնիցն ընտրութե՝ 'ի տիպն ապաթոյն կերպիւ մե-
շապի՝ նմանեալ ցուցեր ։ Որ զերջանիկ ձեռն աջոյն
մովսիսի , [8] 'ի ցոյցս տեսութե ապագայից հրաշից
մարդեղութեդ քո՝ բարձրեալ, և քե՛ ախտաւոր մար-
մնոյս մաքուր լինելոյ անփոփոխ փոխատրութ՝ կրկին
գուշակեցեր ։ Որ [9] յայսքանեացս շրջադրութի , բա-
րեխնամապէս արուեստիւ սիրոյ զանակնկալն գիւտ
մեղաւորաց կորստականաց [10] նշանակեցեր՝ օրհնեալ
ամենագութ ։

Ժ. Որ բուսուցանես յերկրէ դալարի [11] զմեռեալն՝
յանշնչականէն . որ զանշարժն՝ իբր զընթացօղ կա-
ռավարես . որ յանարգ արգանդէ՝ կոչես քեզ պատ-
կերակիցս . որ տաս պատանեկաց՝ [12] աղօրիս ըմբոշխ-
նելիս . որ յայտս մաքուրս՝ հերս ընծայես . որ զաւ-
զարթ սեւութե վարսից 'ի ձեան կերպարան զարմա-
նագործես . ցուցեալ՝ թէ առ ամենայն սահման հե-
ռաւորական՝ յաղթօղ ես հզօր . որ փոփոխես [13] զշր-
թունս բնաւորականս , ըստ բանին յոբայ , 'ի կամս
հաւատարիմս ։ Որ սասանես զերկիր , և [14] զսիւնս նո-
րին 'ի հիմանց , նշանակեալ հաստատածին գալիւ՝ թէ
դու միայն մնաս անկորնչելի . որ [15] հոլովես զտարերս՝
իբրև զանցաւորս , և դարձեալ 'ի նոյնն կայես՝ իբրև
զյարակայս . յայտ արարեալ՝ թէ և առ մեղաց բաղ-

մութի՝ դիւրապէս ունել կամ թողուլ՝ դոյնպէս զօ-
րաւոր իցես ։ Որ 16 զարուսեկին անզգայ էութի՝ իբր
երասանաւ իմն դաստիարակես․ երևեցուցեալ այնր
իրի կերպիւ, թէ զանուանս չար դիմեցուածն՝ յորժամ
և կամիս՝ հանդարտ առնիցես ։ Որ զանբարբառ բա-
լորակ լուսնին՝ կարգես ունայնս և պատարուես․ 17
լուսաւորեալ զպատճառն առ աւետիս տեսողաց՝
թէ 'ի նուազութէ բարեաց զպարտաւորս մարմնն՝
դու ածես 'ի լրութի առաջնաստեղծ հարստութեն ։
Որ զպատկերս անխօս աստեղաց՝ 18 իբր զդաստակս
դոյզն հօտից՝ տրոհես և ժողովես․ յոյս իմն կենաց
առ այս խորհրդաբերեալ՝ քաղցրահայեաց տեսուն,
թէ և անապաշաւորաց լեզուաց կարողապէս բաւես
ողորմել ։ Որ 19 'ի մէջ մահու և կենաց՝ շաւիղ վտա-
հութէ ուղղես 'ի ծովու․ վկայութի եդեալ հաւա-
տի, թէ և յանկասկածաւորն վայրի՝ քև պաշտպա-
նիմք անդայթագղելի․ որ իբր զջուր կաթսայից 'ի
հրոյ եռացեալ, որպէս զմեղաց մրրիկ պղտորեալ՝
բանիւ կամաց քոց խափուցանես ։ Որ հայիս յերկիր
և տատանես զսա, զի անբանիւն՝ զմտաւորս զգաս-
տացուցանես․ որ 20 իբր զակատ մի անձուկ նաւի՝ 'ի
վերայ շարժութէ ալեաց՝ զանբաւ թանձրուն գետ-
նոյս դղրդես, որով ծանուցեալ լինիս ամենից հաս-
տուածոց՝ թէ իցես աներկբայելի, որ 'ի բան քո զօ-
րեղ՝ հիմնացեալ ունիս զամենայն ։ Որ 21 սերմանես
զարտաշնչացեալ մարմինս յերկրի, և զնոյն անկո-
րուստ պահեալ՝ կրկին կենդանածնես․ որ ապակա-
նացուս աւանդեալ՝ անեղծս ստանաս․ որ ըստ մա-
հացու նիւթոյս՝ զնշխարդ կենաց խառնես․ որ հրա-
մանաւ ակնարկուէ 22 'ի խուն վայրկենի կազմեցեր՝
պատրաստ կացուցեր զանդարդութի ամենից եղա-
նակաց ։ Քո է զօրութի և կարողութի, որ 23 շրջա-
նակես զժամանակս ամաց հոլովման աւուրց՝ յայլ
նմանութի բարեպատեհ տեսողութէ․ Որ կարգաս
զանմռունչսն՝ իբրև զկենդանիս․ որ ազդես միայն,
և նոքա ընթանան․ որ միայն 24 հեռուս անկանես
անճառ արուեստիւ հնարագիտութեան՝ մէջ և
առաւօտ ։ Որ 25 յետ նախակարգ յօրինուածոյն ա-
ռաջնաստեղծ լինելութեն, արարեր զփառաւորեալսն

մեծամեծս հրաշակերտիցն հանդիսից, ըստ գրոյն եր֊
ջանկութե կանխահիացն զարմացման, այլ իմն գոյա֊
ցութի տօնելի տեսակի՝ անեղծ աշխարհագործու֊
թեան եւ քան զսոյն՝ 'ի մարդանալդ քո, որոց ոչ
գոյ թիւ ։

Դ. Որ ահա զմտաւն մեր՝ քեզ գրեցեր. որ զարդա֊
բութիւն քո՝ մեզ շնորհեցեր. որ ընդ քեզ կրեցեր
զհաշտութեան մերում փրկանակ. որ ոչ երբէք լքա֊
նիս յողորմութէ. դարձո զամբարշտեալս՝ 'ի պաշ֊
տօն բարի երկիւղի. զթմբրեալս՝ 'ի զգաստութի արթ֊
նութե սրտի. զանմաքուրս՝ 'ի սրբութի պայծառու֊
թե կերպարանի. զբազմաբիծս՝ յանբծութի հան֊
դարտական ՚նք պատկերի. զբեկեալս՝ յողջութի, 26
որ 'ի դիպմանց ոչ խորտակի. զլացեալս՝ 'ի խնդու֊
թի զուարթութե անտխրելի. զյուսահատեալս՝ 'ի
սէր միաւորիչ անքակտելի. զամաչեցեալս՝ 'ի վստա֊
հութի համարձակութե անշարժելի. զխաւարեալս՝ 'ի
լոյս երանութեան անմեկնելի. զմահու գերեալս՝ 'ի
կեանս, որ ընդ եղծմամբ ոչ անկանի ։ Օ ի փառա֊
ւորեսցի անուն քո՝ յա, խոստովանեալ յամենայնի,
ընդ հօր եւ ընդ հոգւոյդ սբյ՝ 'ի բարձունս երկնի եւ 27
'ի ստորեւս երկրի՝ եւ 'ի բնակիչս նոցա, յաւիտեանս
յաւիտենից. ամէն ։

(1) Ընդադարձաւոր [illegible] ։ Որ ոչ երբէք պատմեալ լինիս խնդում կարաւնեան, խնմ ընդ հակառակն, միշտ տրգելուս, խափանես զաւրէնս կարաւնեան մարդոյ ։ [illegible] 'ի [illegible], ոչ արկանես բնաւ 'ի փորձութիւս մեղաց. 'ի փորձելն զմարդ մշտօք՝ հեռացուցանել զնա կամիս 'ի չար փորձութեց ։ որ [illegible], յոքնակի զնի բայն, զի եւ [illegible] յոքնական խնդնի ըստ բանի սաղմոսին, * Կեանք են 'ի կամաց նորա ։ ||

(2) Զ[illegible] [illegible], ողորմեալ՝ որ յետնեցաւ 'ի [illegible], այսինքն 'ի կատարմանէ հրամանին նոյ չդառնալ յետս, կամ յետս մնաց 'ի բարի ընկերացն՝ 'ի ողորմեալ եւ 'ի զատեալացն, [illegible], փոխարկեցաւ զնա 'ի քար եւ յաղ, [illegible], կամ խափանեցեր 'ի դառնա֊ լոյ 'ի սոդոմ. որով [illegible] եղեւ 'ի նոյն [illegible], այսինքն խստա֊ բնութի քարի եւ աղի ։ Եւ այսու երեւեցաւ 'ի նմա արդարութիւն նոյ, միանգամայն եւ գթութիւն. զի յարձան փոխարկելովն պատժեցաւ վասն անհնազանդութեան. եւ խափանելովն դառնալ 'ի սոդոմ, պահեաց զնա ած 'ի պղծութէ եւ 'ի հարուածոցն սոդոմացւոց ։ Վասն այսորիկ ոչ ընդ անպարտ դատեալսն այրեցաւ, եւ ոչ ընդ կորուսեալ սոդոմա֊ ցիսն կորեաւ. զի հայելին նորա յետս՝ ըստ բազում վարդապետաց՝ էր մեղք ներելի, ներգործեալ յերկիւղէ եւ 'ի կանացի թեթեւամտու֊ թենէ ։

(3) 'Ի վտակս : 'Ի հոսանուտս վտակաց :

(4) 'Ի յետնորդս հեթանոսաց : Յորդանանու արագաշարժ ընթացան 'ի վայր՝ հրաշիւք յետս դարձուցանելով, 'ի հոգևոր լուսաւորութիւն մկրտութեան յետնորդ հեթանոսաց առաքելոց, կամ յառաջագոյ լուսաւորութիւն հեթանոսաց :

(5) 'Ի յառաջ այլայլութեն : Զվտակաւոր ջուր երիզոմն յօրինակ փոխարկութեն 'ի արիւն, այսինքն փրկութեն քանանացւոց հեթանոսաց, առնուչեցեր 'ի ձեռն եղիսէի : (Դ. Թագ. Գ. 21 :).

(6) Զառնելն 'ի գետոյն : Այս բան ոչ հայի 'ի նշանն՝ զոր արար մովսէս առաջի փարաւոնի. վասն զի անդ զջրովանդակ գետն արիւնացոյց. (Ելից Է. 20.) այլ հայի 'ի նշանն արարեալ առանձինն առաջի եղբայրեցւոց ըստ հրամանին նոյ. (Դ. 9 :) Զայն ջուր առէ՝ թանձրացուցեր յարիւն 'ի ցամաքի, որ էր նոր երանգ բաւորայն, այսինքն նոր կամ անբնական գոյն կարմիր, 'ի ասիւ կամ յօրինակ ամենազօր հրամանիդ անբաւիր գումարութեն, որով աներևակ գունակեցար : Աւել կամի. զանգոյն ջուրն նեղոսի դարձուցանելն յարիւն՝ էր օրինակ անմարմին ածութեն ընդունելոյ զմարմին և զարիւն մարդկութեա :

(7) Զանկենդան յոլով : Զանկենդանն գաւազանն մովսեսի փոխարկեցեր 'ի կենդանի անթոյն միշտալի 'ի կերպարանութեան առ 'ի պտոյտ ծերունի նկարագրել. յօրինակ նկարագրելոյ կամ ձևացուցանելոյ զքո բնութիւնդ մերովս բնութեամբ՝ առանց մեղաց. միանգամայն յոփորացնոյն ընդ բնութեան, յօրինակ ընդարութեան սատար ազգաց հեթանոսաց, որք էին ընդ գաւազանն անկենդան էին առ ածգիտութիւն, և փոխեցեր զնոսա յիմաստութիւն նոյ, առնել նոցա զկատարելութիւն օձի առանց չարութեն : Բայց նկարագրել էր ներգործական իմանալի է, և թերևս 'ի գրչաց մտեալ է փոխանակ գծելոյ՝ նկարագրել : Հին լծ. օփարագրել իմանալ զգիտութիւն՝ առ որս ընտիր եցոյց ած զմովսէս գաւազանաւն : Բայց անյարմար է :

(8) 'Ի ցոյց փեսութեն : Առ 'ի ցուցանել զխմաստս հոգևորս, պերճանեն յետոյ աղոյն, այսինքն զաջոյ ձեռն մովսեսի նախ բորոտ առնելով, և ապա բժշկելով, գոռոզութեն, այսինքն եստուր գուշակ, նշանակ, յօրինակ առաջագոյ բժշկութեանցն, զորս 'ի մարդեղութեն արարեր, այլ և յօրինակ մաքրելոյդ պախարակ մարմինս մեր 'ի մեղաց, աներևոյթ հոլով փրութեն. այսինքն հաստատուն փոփոխմամբ 'ի յառաջնութի և յանկախ աղութի : Իսկ նշնին գոռոզութեն առելն՝ կամ հայի 'ի բժշկութի ձեռացն մովսեսի, որ միանգամ արարաւ 'ի քորեբ առաջի նոյ, և երկրորդ անգամ յեգիպտոս առաջի ժողովրդեան. (Ելից. Դ. 6. 7. 30.) և կամ զերկու ինչ գուշակելն առէ, այսինքն զմարմնաւոր բժշկութեան քոյ առ հրէայսն, և զմեր հոգևոր բժշկութիւն :

(9) Ցայտանէ այս շրջապարութեն : Ալեքսան օրինակաց յառաջընթացութի կամ ցուցակութի, կամ շուրջ յամախելով, զգիւս կողմնակն մեղաւորացն յայտնեցեր : Մինչև յայս 'ի պքանչելեաց Ած յառաջընթացեաց զօրինակս գթութեն նորա առ մեղաւորս. ուստի առէ՝ ալոնէոփոփորոյ գործեալ. վասն զի առանձին բարերարութի արարչոյ կարգի բնութեն ցուցանէր Ած : Իսկ յետ այսր 'ի բնականաց առնու զօրինակ գթութեն Ած ըստ առօրական կարգի : 'Ի գործս պքանչելեաց՝ երևի ճարտարութի միոյն Ած, իսկ 'ի բնականն՝ ճարտարութիւն իմաստութեանն :

(10) Նշանակեցեր օրհնեալ ամենագոյ : Որ բաղադրեալ, եա. այսպէս 'ի մեր օրինական կնքադրի. զոր և ընտրեցաք համեմատ բովանդակ ընթացից գլխոյս, զի որպէսչէր հաստատեալ ոչ յարաբերականաւ սկսանելով :

Իսկ այլ տաղաչափք դնէին . Նշանակեցէք ։ Օրհնեա՛ց անձնագոյն, որ բա-
ռուցանես ։

(11) Զմեռեալն յանշնչականէն ։ զմեռեալն՝ որ 'ի հող արկեալ մեռանի փտութեամբ, կենդանացուցանես յանկենդան հողոյն ։ զանշունչն . զանշարժ ծառսն՝ երբեմն զտառապեալս կառավարես, զարմանալ նոցա ընդ հողով գնացուցանելով ։

(12) Աղբիւր բժշկութեան . 3 օրին . աղբիւր ։ Ցանկարդ արդանց է մօր կոչմնելով մարդ տառապելոց քեզ, առ սակաւ սակաւ փոփոխմամբ յանձնումն մերձաւորեալս . մինչ մնանուն են, 'ի փափուկ լինելս նոցա բուսուցանես աղբիւրս, այսինքն աստուածային ծառոցս . 'ի լերկ այսր կամ 'ի ծնունդ՝ բուսուցանես զհերս ։ Իսկ 'ի ծերանալ հասակին, զաղօթս սնուցթէ, զսպառ հերս՝ որք իբր ներկեալ են գլխոյն, զարմանալի օրինակաւ 'ի սպիտակ գործուցանես ։ Այսու փոփոխութեամբ բնութեան՝ որով իբր 'ի մերոյ ներբնականէ 'ի միասին անցանելն, ցուցանես՝ թէ կարող ես առ ամենայն գործ՝ մրցանս և հետ կամ տառն 'ի միմեանց իւրեն ։

(13) Զշնորհս բնաւորական ։ Բանին յոգւոյ (ԺԲ . 20 .) առէ . * Փոփոխէ զշրթունս հաւատարմաց . || զոր վարդապետութեան բարեխօսական մեկնեն . այսինքն անգործ առնէ զբանս իմաստնոց, որոց խորհուրդք երբեմն պատգամ համարեալ էին, որպէս զաքիտոփելայն առաջ . (Բ . Թագ . ԺԷ . 14 .) կամ՝ թող այս՝ զի քաղ խորհուրդք հաւատարիմ խորհրդականաց՝ չկատարեսցին յօգուտ առաջին, կամ առաջին . կամ բառ ամենից՝ թողլ այս զի լեզուք մարգարէից կամ վարդապետաց երբեմն սխալեսցին, որպէս եղև մարգարէին ծերոյ՝ որ 'ի բեթէլ . (Գ . Թագ . ԺԳ . 18 .) կամ լսեցուցանէ զայնոսիկ՝ որք զանձինս ճշմարտախօսս կարծեն, կամ բառ իմիջքն, զերբանս հաւատարմացն 'ի վերայ օրինաց իւրեանց՝ փոփոխէ 'ի հակառակն . որպէս զհրէիցն Ջատագովս մովսիսական օրինացն՝ փոխեաց 'ի քարոզութիւն աւետարանին, որում նախ հակառակէին ։ Ըստ այսոցիկ մեկնութեանց իմանի դիտաւորութիւն յոբայ . զի կամի ցուցանել զանէրութիւն նոյ 'ի փոփոխել զխորհուրդս և զբանս մարդկան ։ Այն է և միտք սոյն վարդապետաց, որ փոխանակ հաւատարմաց բառին՝ դնէ բնաւորական . այսինքն բնաւորեալս կամ առաջնեալս 'ի խօսել զուղիղն . որ է ասել՝ ողջախօսս ։ Եւ ըստ այսմ յաջորդն, 'Ի կեանս հաւատարմոց, հայի առ բառն բնաւորական . որպէս թէ ասել, զշրթունս բնաւորեալս կամ առաջնորդեալս 'ի կեանս հաւատարմաց ։ Իսկ եթէ զայն բառն առցուք բայլին՝ ներհուն, որպէս թէ զբնաւորական շրթունս փոխես 'ի կեանս հաւատարմաց, յայնժամ իմաստն լինի, թէ զաղօթս կամ զերկ բանս շրթանց փոխես 'ի կատարումն գործոյն ։ Որպէս զհամաձայն լոկ բանսն՝ որ վասն փառաւորելոյն արտաքսեալ՝ զմի ոք կամի, գործեցոյց 'ի կատարել գործով 'ի վերայ մարթեքեի . կամ զերկ բանսն նորա զքննոյն՝ որ վասն փայլեալն սպառնացեալ, եւ կատարել գործով 'ի վերայ համաձայն ։ (Եսթեր Դ . 10 . Է . 9 ։) Սակայն առանց հայելոյ յմտաւոր բանսերն յոգւոյ, և ուշ դնելով միայն կարգի բանից սոյն վարդապետաց, այլ ինչ թուի հարազատ իմաստ աւելորդ . զի 'ի նախադասելումն խօսի զփոփոխութէ հասարակաց մարդոյն . արդ բառ այնմ կարգի և այս բանն իմանի, թէ զբնաւորական խօսս կամ զխրատս ծերոց որք նախ առանց բնաւորութեան լինէին խօսեցեալք, ուսանի և չեն հաւատարմք, առ փոքր փոքր փոխես յանօրութիւն կամաց, որով լինին հաւատարմք ։

(14) Զմիտս ծերոց ։ Միտք երկրի իմաստնին ախորժականաց մատուցք նոցա 'ի խորս, յորս իբր 'ի սիտքս հաստատեալ կան այլ ամկար մատուցք . զորս և շարժէ առծ զաստուածաշարժիւ, կամ պատառամանք . ցուցեալ հասարա-

ծին գոյն, համգամանօք կազմուածոյ երկրիս, թէ ևծ միայն մնայ անշարժելի։

(15) Հօլոմէս պօրորէօս։ Հէն ըծ. խմանայ զչորս եղանակս տարւոյ, զաւմասն յաշուն փոխելով, նոյնպէս և զայլսն։ Բայց լաւ ևս խմանին շուրքին տարերքն, որք կամ 'ի միմեանս շրջան առնուն, յորժամ ջուրն անօդացեալ, կամ հողն մանրեալ դառնան յօդս, և ընդ հակառակն՝ օդն խառնի 'ի ջուր կամ 'ի հող. կամ նոյն տարր՝ յինքն հոլովի. որպէս ջուր շոգիացեալ վերանայ, և միւսանգամ թանձրացեալ յինքն ժողովի անձրևով. և կամ տարերքն խառնուածովք 'ի բաղադրեալս՝ և դարձեալ լուծմամբն՝ հոլովին և կայլին. կամ դարձեալ, հոլովին տարերք մանաւոր ջրհեղեղօք, որով ջուրն 'ի հող առկառնայ, և զօդն զրաւէ, և անդրէն զիջանի. կամ այլուր ընդհակառակն հողն բացեալ լինի. կամ, յորժամ հողմով օդ և ծով տարապարեին, և դարձեալ կայլին համգամանելով։ Այսու շրջմանս երևին տարերքն իբրև դանդաղօրս, 'ի ձեռնափոխ լինելն և 'ի լուծանելն. և իբրև դյօրակյա, 'ի զաղադրեն 'ի ձեռնասն խելեանց, կամ խառնուածովք 'ի նոր բաղադրեալս։ Իսկ տեղաց ցուցանէս առ՝ թէ պօրտար նըէս, այսինքն կարող 'ի ներքել կամ 'ի կառավել պատմութեն մերոց։ այլ օրէն. պօրէոցէս. այլ. պօրտարէոցէս։

(16) Զօրոսոէկլին անգֆայ։ Զանկենդան բնութեն կամ կազմած արևուն իբրև երասանաւ զայնս, յորժամ յամապայնի թողուս բարձրանալ 'ի հիւսիսակողմն, որով տապացուցանէ. և 'ի ձմերայնի 'ի հարաւակոյս ցածուցանես՝ առ 'ի մեղմել զտապն. ցուցեալ այսու՝ թէ զչար հակառակութիւս բնութեն մերոյ համգարտել կարող ես։ Որմանք խմացան զայս նաև 'ի վերայ անբնական ընթացից արևու, որով երբեմն դադարեցոյց զնա եած, որպէս առ յեսուաւ, կամ յետս դարձոյց, որպէս առ եզեկիայիւ։ Սակայն առա զընական ընթացից նորա խօսի բանս։

(17) Լօսոսորէօն ղըօփձոօն։ Զգունդ լուսնի աճեցուցանելով և նուազեցուցանելով, յայտ առնես զխորհուրդն առ ասէփս՝ յուղութեն կամ 'ի յոյս ամաղաց, թէ կարող ես և զմարդ նուազեալ 'ի բարեաց՝ յառաջին հաստատութեն դարձուցանել։ Լաւ օրինակն գնէ, լօսոսորէօն, համեմատ այլոց բայից՝ որք 'ի վեր և 'ի վայր գնեն յանցեալն. այսինքն յայփ արարէօն, էրնէցօոցէօն, ևն։ Իսկ յայլ ասարակիս, լօսոսորէն։

(18) Իէր ղըօօօլօ։ զանբան աստեղս՝ իբրև զջոկս ամպաւ ոչխարաց երբեմն փրոհէս, բաժանես կամ հեռացուցանես 'ի միմեանց. և երբեմն ծողոլէս, մերձեցուցանես, որ յառակապէս խմանի զմոլորական աստեղաց։ Այսու յոյս իմն խորհրդաբէրէօն, խորհրդաւոր ծանուցեալ ով փողերահայեաց փէոսոլէ, քաղցրաբանութ խնամակալութեն, թէ նաև համր կամ անլեզու մարդոց ողորմիս։ Զբառսն փողըրահայեաց փէոսոլէ նմանի է ևս յարել 'ի բայն այսպէս. յոյս իմն փոկարար՝ խորհրդեանք յայտնեալ առ այս քաղցր զխօսութեն, թէ նաև համրոց ողորմիս։

(19) Ի մէջ մահու։ Քոյով անեշութեք առա 'ի ծովու ղաուին կամ զզուշաւոր լուռ բանի խմաստ. (Ժդ. 3։) որով զնան մարդիկ իբրև 'ի մէջ կենաց և մահու. և այսու առա մեզ վկայութեն կամ աղաչոց՝ թէ նաև յանկարծ ահաւոր և 'ի ժամանակի՝ յորժամ վտանգք զանազանք պատահեն, և մեք անմխիթար մնամք, դու կնքես պաշտպանն։ որ իէր ղջօաք, զծով որ խռովի որպէս ջուր եռացեալ 'ի հրոյ, և զաքով հրամանաւ ցածուցանես, եսուր օրինակ թէ նմանապէս զկէրն էւղոց, որ յառնէ յոգիս մեր՝ դու խափանցանես, խափանես, արգելուս, դադարեցուցանես։

(20) Իէր ղաֆոփ ւֆ։ 'Ի յոյն բառէն՝ ոֆօտրիօն, նշանակէ՝ մարդկ, նա

ւակ ։ Որպէս զխորդ մանկոյկ ՚նաւու միոյ ՚ի վերայ ալեաց՝ այնպէս շարժեալ ասէ՝ զբոլորագակ թանձրութիւն գետնոյս․ որով ցուցանէր ամենայն արարածոց՝ թէ դու կաս առանց երկբայութեան․ կամ, առանց երկբայութեան գիտես այն՝ որ ՚ի բան հրամանի հաստատեալ ունիս զամենայն ։

(21) Սերմանէս դորփանելոցեալ ձորմնա ։ Ոմանք խմացան զսերմանց բուսոց ։ Բայց ոչ յաշխարհ բանիցն յարմարի, և ոչ բառին որփանելոցեալ, որ ՚նշանակէ՝ հանեալ զշունչն, այսինքն մեռեալ․ և զի զբուսոց ասաց ՚ի սկիզբն Ա համարոյս ։ Այլ խմանին մեռեալ մարմինք մարդկան․ զոր սերմանես ասէ՝ թաղմամբքն և ՚ի հող լուծանելովն․ բայց և անկորուստ պահելով ՚ի գիտութեան քում իւրաքանչիւր մարդոյ զեւրն մարմին․ զորս դարձեալ կենդանացուցանես՝ ոչ ապականացու խորհ զառաջինն, այլ անապականն յարութիւն․ և ընդ ձուկցու, (մի օրէն․ ձուկու նիշնոյս,) Է մանկանացու նխեթոյ մարմնոյն խառնես ասէ գիշխարք կենաց․ մի օրէն․ և ՚ի հին լուծ․ գիշխարն կենաց, այսինքն զհոգին բանական․ զի ՚ի մեռանել մարդոյն՝ հոգին միայն մնայ կենդանի իբր նշխար․ խոկ գիշխարք ասել խմանի․ ըստ որում հոգին բանական՝ է պատկեր և հաղորդութիւն անմահ կենդանութեան նոյ ։ Մարթ է և խմանալ զկենդանական զօրութիւն՝ որ անեղծ պահէ զմարմինն յարուցեալ ։ Ոմանք խմացան ՚ի վերայ աերուսնական մարմնոյն՝ որ հաղորդութեան խառնի ՚ի մեզ ։ Սակայն ասա զյարութեն խօսի նա վարդապետս․ յորում ասէ՝ ընդ մանկանացու նխեթոյս, այսինքն մարմնոյս, խառնես զնշխարն կենաց ։

(22) ՚Ի խոսն վայրէնի նաշեցեր ։ Եթէ խմացի ՚ի միում բնական վայրկենի յօրինեալ զաշխարհս, է կարծիք բազում հարց, յորոց առեալ սմին օգտաւորութեան, ընդարձակ մեկնաբանեաց ։ Իսկ եթէ համարիմք ՚ի վեց աւուրս զամենայն արարեալ նոյ զամենայն, ասացեալն ճշմարիտ է՝ ՚ի խոսն կամ ՚ի սակաւ վայրկենի ասել․ զի ոչ եթէ ՚ի բովանդակ աւուրն առ սակաւ սակաւ զանդադանօք գործէր նա, այլ ըստ հրամանաւ ՚ի մի անդադաղէ վայրկեան իւրաքանչիւր աւուրն վճարէր զգործն․ ուստի զբովանդակ ժամանակ սահմանին ՚ի մի հաւաքեալ, հաղիւ զմի վայրկեան մերոյ ժամանակիս կացուցանէր ։ դորփրաուփ նոցուցեր, այսինքն համդերձեալ զարդարեցեր զանդորդութիւն ամենայն էղանակաց․ այսինքն ամենայն գործոց և արարեանց՝ որք լինէին յիւրաքանչիւր եղանակս աւուրոյն ։ Զայս բան յարէ յանցեալն, նշանակել թէ ՚ի սակաւ վայրկենի կարող գոլով զարդարել զախտազերծական բնութիւնս, նոյնպէս կարող է յական թօթափել զմեռեալ մարմինսն նորոգել ։

(23) Շրջանակէս գծամանակս ։ Կառավարես կամ փոփոխես զշրջան աւուրց աւուրոյն յայլ նմանութիւն, ՚ի ձմեռայնոյ ՚ի գարուն, և ՚ի գարնանոյ յամառն, և յամառայնոյ յաշուն, և իւրաքանչիւր եղանակք ունին զիւրեանց բարեպատեհ վայելչութիւն և զօգուտ ։ Ոմանք ըստ հին լուծ․ խմացան զփոփոխմանէ լուսաւորաց յետ աւուրն դատաստանի․ բայց ոչ ՚ի դէպ․ զի աստղիս խօսի զբնական փոփոխութենէ նոցա ։

(24) Հենոսս անկանես ։ Ըստ նմանութեան ստատայնի կամ կտաւոյ գործես զմի օրն, խչմամբ արեւուն առնելով զեգ, այսինքն մութն, գիշեր․ և ել մամբն առնելով առաւօտ, այսինքն տիւ, ցերեկ․ որով մի օրն լինի երկեւ երկգոյն կտաւ՝ գործեալ ՚ի սեւոյ և ՚ի սպիտակէ ։ Եւ զայս առնես ասէ՝ անճառ արուեստիւ․ զի զհամեմատութիւն տուընջեան և գիշերոյ հազիւ նշմարեն բազմաքննեն աշխարհագէտք յիւրաքանչիւր կողման երկրի ։

(25) Ցեփ նախակարգ ։ Ցեռ նախկին արարչութեան՝ արարեր զփառաւորման հրաշակերտին հանդիսից, փոխանակ ասելոյ՝ զփառաւոր հրաշակերտ հանդէս կամ գործս, ընդ որս կանխաւ խսկ հիանայր երջանիկ կամ արքադան գիրն Յովբայ․ (Թ․ 10) ասելով․ * Որ առնէ զմեծամեծս և զան

քննին, և զփառաւորս և զհրաշակերտս, որոց ոչ գոյ թիւ || : Մարգարէաբար յերգելոյ անտի մեծագործութեանց աշխարհի՝ գուշակեաց Յովբ, թէ Այ առնէ, այսինքն առնելոց է զևս հրաշակերտս, որ է այլ եւս գոյացութիւն, այլ իմն արարած կամ յօրինուած փոխելի փեռակի, խնդալի կամ օրհնաբանելի վիճակի. և է անեղծ արարչագործութիւն, գերազանցեալ քան զաշխարհական արարչութիւն, յորում մինչ եղծումն գործի, և հուսկ յետոյ վախճան առնուցու, բայց արարչագործութիւնն՝ որ 'ի Քնի նորոգանալոյն՝ անեղծ և անվախճան է, ընդ ամենայն յաւիտենականս տևական, և հրաշալի գործք նորա՝ անթիւք:

(26) Որ 'Ի Դիոնեսեայ: 'Ի համեմանէ, կամ 'ի պատահարաց ոչ խոտորակի, կամ մի խոտորակեսցի:

(27) 'Ի սփորեա Երէնէ: մի օրէն. 'ի սփորէսաս:

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աճելու մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

ԲԱՆ ԿԴ.

ա. Եւ արդ առ ամենայն բանս՝ յամենայնի ուղիղ ես՝ Տ'Ծ. իրաւամբք դատիս. արդարութեամբ կշռես. ճշմարտութեամբ չափես. [1] օրհնութեամբ հետևիս. բարւոք ընթանաս. ստուգութեամբ սիրես. յստակութեամբ կամիս. [2] լուսաւորութեամբ համբուրես. փորձիւ յանդիմանես. երկայնմտութեամբ քննես: Ո՛չ ունիս նենգութիւն՝ և ոչ գոռոզութիւն, այլ ամենևին հեզութիւն, հանդարտութիւն և ողորմութիւն:

բ. Արդարացար վերին իմաստութիւն անայլայլական հօրդ համաճառոյ՝ կրկին վկայեալ անզեղջ գովեստիւ յորդեգրեցելոցն շնորհօք, ըստ բանին սրբութեան՝ որ աւետարանաւն կենաց 'ի քէն ընկալաք. որ [3] ոչ 'ի կոծելն ողբացի, և ոչ 'ի փողելն կաքաւեցի: Ասացեր անօրինիս՝ թէ մի անօրինիր, և ես 'ի նոյն չարիս պնդեցայ. մեղաւորիս՝ թէ մի ամբառնար եղջիւր 'ի բարձունս, և ես զընդդէմն քեզ գործեցի. և ոչ զգացի երբէք զառածեալս, թէ 'ի ձեռին քո են եղջիւրք արքայութեան հպարտից ամբարձելոց, խոնարհեցուցանել և բարձրացուցանել, ըստ ամբակումայ, դաւթի և զաքարիայ: Օրհնութիւն ինձ կամեցար՝ ողորմած, և ես անիծեալս՝ մեծ տարագրութեամբ խոտորեցայ յարժանին ինձ մասն. սիրեցի բարկութիւն

և ոչ բարութ̃ի. շօշափեցի ըստ գրոյն՝ զխաւար և ոչ զլոյս. կենդանի ձայնիդ քո զգլթած՝ ապառուամ պատասխանեցի։ Զորդնն՝ անմահ ասացեր բանիւ եսայեայ, և զհուրն՝ անշէջ, և զկշտամբութիւն՝ անվախճան, և զտեղին՝ յաւիտենից, և զօրինակ նմին՝ սոսկալի, և ես ոչ իմացայ, ըստ սաղմոսողին, և ոչ մտառեցի. այլ 'ի մռայլ մտաւորական կուրութե̃ գնացի։ Ցուցեր մարգարէիւն, թէ զօրհնութ̃ի սատացի՝ [4] որ զօրէնս դնէ, և ես համառօտել զնոյն փութացայ։ Արձան հոգևոր վիմի գրեալ մատամբ քո՝ տէր յո̃ քո̃, [5] զդաւիթ իւրովքն բանիւք կանգնեցեր, ասելովն ինքեան ընտրութ̃ն առ սոյն, թէ պահեցի զօրէնս քո յամենայն ժամ, յաւիտեան. անդրադարձութ̃ բանին միջնորդեալ զկրկին հաստատութիւն, թէ և յաւիտեանս յաւիտենից. ընդ որս՝ և զսորին նմանիս պարծանաց՝ առ իմս խրախոյս, և ոչ զկծեցայ. Ձեպեցայ [6] 'ի տունս բահաղու, և ոչ ելյ̃. 'ի յերկուս [7] հետս երկմտութե̃ կրկին կաղացի կասեալ 'ի բարեաց, ըստ երգիծանելոյն հեղիու։ Ունիմ զմովսէս իւրովքն օրինակօք՝ եկեալ 'ի մեռելոց, և զտառս մարգարէիցն՝ գրեալ 'ի յոգի, և զմատեանս առաքելոցն՝ ընդ մտացս մատն յեռեալ, և զտէրդ հասարակաց՝ կտակաւն աւետեաց՝ յարուցեալ 'ի թաղմանէ անթիւ ննջեցելովք. և անհաւատագոյն քան զհնգեսին եղբայրակցութիւս այնր մեծատան, որ է առակ իմն յարմարական, նմանեալ զգայականացն մասանց՝ անողորմիցն յղփացելոց, մ̃նացի իբրև զսալ [8] դարբնաց անոսատ՝ յամառեալ քարացեալ սրտիւ, որպէս օրինակն է բելխարայ, և ոչ ապաշխարեցի։

Գ̃. Այլ ազդեալ վերստին առ սոյն կերպարան լքեալ կրկին ողորմութ̃ի՝ բարի, ահաւոր, մարդասէր, խնամակալ, կենդանի, սուրբ, լուսաւոր և անվախճան թագաւոր, զօրութ̃ պանծալի խաչիդ խորհրրդոյ, 'ի կարծրացեալս մեղօք անբեր անդաստան՝ երիկամանցս յիմարութե̃ և անպտուղ սրտիս լքութե̃. զի առեալ նպաստ օժանդակութե̃ 'ի գթութե̃ կամաց ամենակալիդ, [9] որոտացէ̃ բղխեցէ̃ հոգիս, ընծայեալ աչաց վշտագնեցելոյս՝ վտակս արտասուաց

արբուցանողաց՝ ինձ 'ի փրկութիւն և 'ի մաքրութիւն, և քեզ 'ի հաճութիւն ընդունելութեան՝ ամենապարգև տէրդ բոլորից, փառաւորեալդ յաւիտենից. ամէն:

---

(1) Օրհնութիւն հեփոխս: 'Ի հեռաւորս մեզ, կամ յորժամ զկնի մեր գաս խոնարհելով և պաշտպանելով, օրհնութիւն ընդունիս. կամ, զհետ փոխուցելոյն 'ի քեզ՝ օրհնութեամբ զնոսա, և ոչ անիծանելով. կամ, 'ի գալդ քո՝ օրհնութիւն բերես:

(2) Լուսաւորութիւն հանճարոյն: Զպայծառութիւն, կամ զպայծառութիւն մտաց. իմաստութեան, և սրտի ախորժելս: Փոքրկն յանդիմանեն. քննելով յանդգն մանելս, և ոչ անքննաբար:

(3) Ո՛Վ Կոծէք: Յանձն իւր առնու զառակն մանկանց՝ զոր տէրն առաց 'ի յանդիմանութեան հրէից. (Մատթ. ժա. 16:) Զայն առակ իբրև խաղ ինչ տոմարական 'ի մէջ հրէից համարին մեկնիչքն՝ կոռնելիոս, մենոքիոս, կալմէթ, և այլք՝ առեալ 'ի Թէոփիլակտոսէ: Այլ՝ ես ասէ, ոչ ընդ առաջնորդաց կոծեցի, և ոչ ընդ արդարոյն խնդակից եղէ. կամ, ոչ 'ի սպառնալեացն զարհուրեցայ, և ոչ 'ի խոստմունս բարեացն յորդորեցայ: Ուստի արդար ցուցար իմաստութիւնդ հօր՝ ըստ քո իսկ ասելոյն, 'ի գալստեան դիս. Որդին Վկայեալ, յարդարոցն՝ թէ այժմ, և թէ յաւուր դատաստանի. Անփոփոխ, այսինքն հաստատուն և անփոփոխ դատաւորի. կամ Որդին, այսինքն գործով և բանիւ:

(4) Որ պսակես զնէ: Ըստ սաղմ. (Հզ. 8.) օրհնութեան արժանի լիցի՝ որ զօրէնս ուղիղս հաստատէ, կամ 'ի գործ դնէ. իսկ ես չամնացոյ համառօտել զօրէնս՝ զանցառութեամբ:

(5) Զգուշութիւն խորհրդոյն: Իբրև աւախտակ օրինաց դպրեալ զօրութեամբ քով կանգնեցեր զդաւիթ 'ի ձեռն օրինապահութեան, որպէս և ինքնին վկայէ՝ միշտ պահեալ զօրէնս քո, անդրադարձութիւն բանին, միտատն դարձուցանելով կամ կրկնելով զնոյն բան՝ յաւիտեան յաւիտենից, կրկին հաստատէր զպահումն օրինացն: Ընդ որս, այսինքն ընդ որ բանս և զայլ նմանն բանս պանծալիս վկայէ, ևն. կամ ընդ որս առեալ իւր եղականս, այսինքն ընդ որում, իմանի՝ ընդ դաւթի զնորա նման պատուիրանապահս պանծալիս կանգնեցեր առ 'ի յորդոր ինձ, և ոչ յօժարեցայ, կամ ոչ 'ի սրտի ամաչեցի, ևն:

(6) 'Ի փոխս բանաղաւ: 3. օրին. 'ի փոխս, այլ օրին. 'ի դէմս: Առաւել փութացայ 'ի տաճար կամ 'ի հանդէսս բանաղաւ, այսինքն ախտից մարմնոյ, 'ի խրախուտս աշխարհի, քան թէ 'ի պաշտօն Այ:

(7) Հետս երկմտութիւն: Երկմտութիւն ոչ զհաւատոցն ասէ, այլ զգործոց. կաղացի յերկուս ճանապարհս բարւոյն և չարին անհաստատ գնացիւք. կամ, 'ի ծառայութեան Այ խառնեցի և զծառայութիւն դիւաց, ըստ երգեծանելոյն, ըստ նախատելոյն կամ մեղադրելոյն եղիայի: (Գ. Թագ. ժը. 21:)

(8) Դարբնաց անոթ: 2. օրին. անընդունակ: Անշարժ մնացի իբրև զսալ դարբնաց, որ հարկանի կռանօք՝ և ոչ զգայ, ոչ շարժի. այսպէս և ես անշարժ առ 'ի բարին եղէ ըստ նմանութեան սատանայի: Եղո՛ւկ զու անձն իմ. զի խորտակաճաշ մեծատունն 'ի դժոխս անդ՝ բաւական համարէր առ 'ի զգաստութիւն հնգեցունց եղբարցն՝ եթէ Ղազարոս ևեթ յարուցեալ գնայր և քարոզէր նոցա: Իսկ ես ունիմ ահա ասէ՝ զնոյն ինքն զՄովսէս եկեալ 'ի մեռելոց յայլակերպութեան ան, և զբանս մարգարէից և զմատեանս առաքելոցն 'ի միտս և 'ի բերանի կրեմ: 'Ի վերայ այ-

տոգիկ և զամենեցուն զՏեառն անուն յարուցեալ ընդ բազմաց աղբց ։ Սակայն տուաւել անհատան քան զհնդկսին եղբարսն զասանիմ, որ են յարմարական օրինակ անուղղայ մնացելոց զգայութեանցս ։ Այլ ողջէոյ, զարգելեալ, ներգործեալ կրկին ողորմութ յայս իմ եղկելի սահման. և ՚ի քարացեալ սրտէս բղխեցի զորութիւն խաչին արցունս արտասուաց, որք մոլեկեալ զաւազանսն ՚ի մեղս ։

(9) Որոգայթք Եղնեայք հոգւոյ ։ Այսպէս եղաք ըստ մերում և ըստ այլ ևս օրինակաց՝ համեմատ խմաստից բանին, իբր ասել. մերոս զոլով իբր անզգաստն կարծրացեալ և անպտուղ, օժանդակեալ ՚ի գթութէն ողորմութեան հոգւոյս զգէմանդ, և բղխեսցէ զարտասուս իբրև անձրև առ ՚ի ոռոգանել զմիտս եւն ։ Իսկ յառաջին տպագրիս եղեալ կայր, որով փողէ, եւն. որ չյարմարի նաև շարակարգութեան բանին՝ յետ առեղծն՝ գի տռէալ նայաւ ծանուցանելոյ ... յարել, որով փոխէ, եւն ։

Մերոպին յաւելուած նորին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն
ողբերս Նարեկեացւոյ բանի ։
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

ԲԱՆ. ԿԱ ։

ա. Ես արդ՝ ես նախնիս ամբարշտաց, գլուխս մեղաւորաց, պետս անիրաւաց, առաջինս պարտաւորաց, պատկերս յանցաւորաց,[1] ատոիկեցիս ըստ վատթարութեան, այլ ոչ ըստ բարեբաստութեան, ահա զանձաւոյցն իմոյ ձաւեցի. զպատկաւելիմն խայտառակեցի. զգաղտնիսն հրապարակեցի. զծածուկսն յայտնեցի. զթաքուցեալսն ցուցի. զամփոփեալսն տարածեցի. զդառնութեանս մաղձ ժայթքեցի. [2] զգործակցութիւն չարին մատնեցի. զամբարեալ թարախ վիրիս քամեցի. զխորս պարտեաց իմոց ծանուցի. զպատրուակն կեղծեաց առի. զքօղ տգեղութեան վերացուցի. զամօթալեացն զգեստ մերկացուցի. զգարշելիսն յանդիմանեցի. զմրուրն մահու փսխեցի. զպալարս հոգւոյս խածուածոց՝ քահանայապետիդ քում բացի ։ Յանձինս վտանգ ոչ անխայեցի. մարմնոյս սիրոյ ոչ աչառեցի.[3] զարմատն հնութեան՝ տեսիլ արարի. բնութեանս կարեաց ոչ ողորմեցայ. զմիաբանութեան կապ խզեցի. զդղեակ սրտիս քանդեցի. ընդ կամացս որոյ իբր ընդ դարանակալի մահու կռուեցայ. զպահեստ անյայտիցն արտաքս հանի. ըզմթերիցն գանձ՝ մեծին գուշակեցի. զդատախազն՝ դատաւորին հանդէպ կացուցի. զապառնեացն զփորձ

այժմէն իսկ գտի. զդաշն կործանողին կորեցի.
զուխտն խաբողին ցրուեցի. զկատարած մարտին յաղ-
թութ՝ 'ի քեզ տէր յո՛ ապաստանեցի. զպատերազմին
խումբ գրգռեցի. զդիմադրութ̃ի դիմեցմանն՝ բանիդ-
ո̃յ յուսացայ. զխաւարասիրացն փաղանգ՝ լուսե-
ղինացն զինուց սադրեցի։

Ժ. Ո՛ւ արդ՝ ստեղծիչդ ամենայն եղելոց քո՛ որդի
բարձրեալդ ո̃յ, զաստէն դսրովեալս յայսպիսեաց
բանից, և զհարուածեալս յայսքանեաց գանից՝ մի՛
կշտամբեսցես կրկնակի դատել 'ի մեծի աւուրն։
Ո՛հա հզօր անքնին անճառ բարերար Թագաւոր ան-
մահ, առ այս կերպ պատկառանաց՝ ինքնադատապարտաւս
խոնարհութ̃ե, որ ինձէն զանձն՝ մեծաւ ձաղանօք
յոգի դատեցի, լի՛ց նուաղօք այսր մատենի՝ անար-
գանօք ամօթոյ՝ զդէմն սատանայի. և զերեսս կեր-
պի պատկառեցելոյս նշանաւ խաչիդ զօրացո։ Մ՛խա-
ցի՛ կնիքդ լուսոյ 'ի գեղ տեսակիս. ամրութ̃եդ նշան
հաստատեսցի՝ [4] 'ի տիպ դիտակիս. երևակ կենացդ
փայտի ձևացի 'ի պատկեր այտիս. արուեստդ հրա-
շից՝ 'ի ճակատիս շո՛ւք նշանակեսցի։ Մի՛ այլայլեսցի
յինէն՝ դրոշմդ լուսապաճոյճ. մի՛ բարձցի 'ի տեսա-
նելեացս բբաց՝ ճաճանչդ օրհնութ̃ե. մի՛ մերժեսցի
'ի գլխոյս՝ առհաւատչեայդ վստահութ̃ե. մի՛ սասա-
նեսցի 'ի բերանոյս ամրութ̃ե սեմոց՝ փակք ո̃նազրու-
թեանդ։ Պահպանակդ երկրպագելի՝ 'ի գգայարան
սրտիս միասցի. չորից նիւթոց իմոյս գոյութ̃ե քա-
ռաթևիդ նշոյլ ազդեսցէ. ձեռինս կարկառման՝
փրկչիդ իշխանութիւն օժանդակեսցէ. մատուցման
հաստուածոյ մատինս՝ խորհրդարանդ համարձակու-
թ̃ե բարեգործեսցէ։ 'Ի մեկնելս իմում, [5] մի՛ հեռա-
ցի սրբութ̃իդ. մի՛ լքցի պատիւս՝ 'ի պատիլն պար-
տաւորիս. մի՛ մերժեսցի 'ի յոգւոյս՝ անդաւաճանե-
լիդ փրկութ̃ի. մի՛ ջնջեսցին գիծք կենդանատուիդ՝
'ի քո՛ գրեցեալս շնչոյ. մի՛ եղծցի նկարուածս արեան
զօրութ̃ե 'ի տիրատիպ խորանես. [6] ընդ իս բնակեա-
ցէ յիմում գերեզմանին. 'ի ծորել մարմնոյս թշուա-
ռի՝ օծուածս շնորհիդ առ իս պահեսցի. 'ի նորոգու-
թ̃են աւուր՝ սովաւ հանդիպեսցայց փառաց փեսայիդ.
[7] 'ի քոյոց այտի ծանուցայց, քոյովքդ վաստակօք

պճնեցայց, երախտեաց մեծիդ յարգեցայց, աւա-
ղանին զգեստիւ պերճացայց՝ քաւեալ ողորմութբ:
Մտօք բմբռնեցութ՝ զվերարկուդ անապականութե
տաժանեցելոյս մեղօք մարմնոյս. 8 մի յարիցէ ընդ-
քոյս՝ բանսարկուին. Հնացուցիչ հոգւոյս՝ վատնես-
ցի. խաւարաբնակացն պատիրք՝ մի ընդ իս վերերևես-
ցին: Օրհնեսցի անուամբ քո դրոշմած՝ վիհն իմ
հանգստեան. ողորմութբ քո լցցի դուբն իմ գերու-
թե. ընդարձակեսցի քև ինձ՝ տեղին թշուառութե.
անդուռն եղիցի խնամօղ՝ ինձ բանտն բարկութե. 9
մնուսցէ զիս առ յաճուսն՝ արգանդն մթութե. յու-
սով քո շահմարանեսցէ զիս՝ յարկն այս անձկութե.
ձեռամբ քո պահեսցայց 'ի խշտին տարտամութեան.
թևօք քո ընկալայց՝ 'ի տունն տագնապի. դու գծ-
վեալ ընդ իս՝ 'ի սենեակն վտանգի: Աւաղս ինձ աս-
տանօր՝ 10 'ի թիւս հազարաց, զի երբեմն էի վեր-
նայրն, և այժմ անդնդայրն. երբեմն տօնելի, և
այժմ աշխարելի:

Դ. Այլ և արդ 11 կրկին դու օրհնեալ 'ի բոլորից
դոյից՝ յերկնայնոց և 'ի ստորնայնոց՝ և 'ի սանդարա-
մետականաց մեռելոց՝ անպարտականդ այս տարա-
գրութե: Ես վրիպեցայ. ես օտարացայ. ես յիմա-
րեցայ, պարտեցայ, և խոտան գտայ. ես լքայ, կա-
մեցայ, և կործանեցայ. ես մոլորեցայ. ես մատնե-
ցայ. ես մերժեցայ. ես խորթացայ, գերեցայ, և
դայթագղեցայ. ես նզովեցայ. ես թշուառացայ,
արբեցայ, և վատթարացայ. ես ընկլուզայ. ես խա-
բեցայ. ես անօրինեցայ ես ապականեցայ, մահա-
ցայ, և իսպառ եղծայ. չիք քո առ այս՝ ինչ 12 մասն
չարի, որ ես միայն անփոփոխ բարի: Արդ՝ կամք քո
յիս, և 13 խաւարն ինձ ճառագայթ. Ճրագ յուսոյ
քո անդ, և գիշերն վաղորդայն. մարմնոյ քո հաղոր-
դեալ, և յամօթոյն կարծեաց ապրեալ: Իսկ ես 14
ոչ գրեմ զանձն իմ կենդանի՝ վասն անփախչելի
վախճանին. դարձեալ՝ զիս ոչ վարկանիմ կորու-
սեալ՝ վասն աներկեան նորոգմանն: Որ և 15 փա-
կեալ համարիմ ինձ զելս կենացդ՝ վասն անքաւե-
լեացն պարտեաց. դարձեալ՝ բացեալ ինձ ըղ-
դրախտն՝ վասն փրկութեն աւետեաց. քանզի ոչ

այնքան վհատութեան գոյժ տագնապէ, որչափ փրկութեանդ քաջալերեալ ձեռն կարկառէ: Որդ՝ տուր տէր՝ տուր ողորմութիւն, առ ամենայն ձայն գոհաբանեալ, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

---

(1) Ատտիկեցիս: Ատտիկէ էր գաւառ Յունաց, կամ Եղլադայ, որոյ մայրաքաղաք էր Աթէնք՝ աթոռ գիտութեանց և օրինաց և քաղաքականութեան. յորմէ Ատտիկեցի՝ նշանակէ աթենացի. և զի որպէս իմաստութբ անուանի էր այն գաւառ, նոյնպէս չարութբն և մանաւանդ՝ անպատկառութբ. կամ զի յառաջին 'ի շինութեան իւրում բարեպաշտիկ գոլով, յետոյ կործանմանն ընդ անպարկեշտեցաւ. վասն այսորիկ Ատտիկեցի առի առաւելեալն յերկպառակչիւր ներհակսն, այսինքն թէ 'ի բարեպաշտութն, և թէ 'ի վատթարութեան: Առ յոյնս՝ առել, ատտիկեցի հայեցուած, նշանակէ՝ անպատկառ, լիրբ: Սոյնպէս, ատտիկեցի պանդուխտ, խմանի անմարդի գրոցի: Եւ ընդ հակառակն՝ ատտիկեցի հաւատարմութիւն, վկայ, քաղցրաբանելիք ,ևն, խմանի՝ գերազանց, ընտիր: Առեալ 'ի սկզբան աղօթիցս նախնիս ամէարշկսց, կամ Գլուխ, առաջին ևն, ոմ և առացեալն 'ի բանն հր. 2. է ստորական խոստովանութիւն արանց երկնկուանց. զոր նոքա ճշմարտութբ առեն, քանզի միայն զիւրեանց մեղս և զպակասութիւնս քննեն, և ոչ զայլոց. ուստի որպէս ճանաչեն զինքեանս, այնպէս և խօսին, և բան նոցա գոլով համաձայն ճանաչմանն, ոչ սուտ առէ՝ այլ ճշմարիտ. (տես 'ի մեկն Թղթոց. Փիլիպ. բ. 3: ա. Տիմոթ. ա. 15:) Բան այսպիսի սուտ է արդարև 'ի բերան այնոցիկ, որք մեղաւոր անձն զանձինս՝ ոչ զի այնպէս ճանաչեն, այլ զի մի՛ յայլոց ծանիցին այնպիսիք:

(2) Զգործակցութիւն չարին: Զիմ գործակից լինելս սատանայի՝ մաքրեցէ, յայտնեցի: Զլօղ փզեղութե. 'ի բաց առի զծածկոյթ ապերգութե, զի բացի զապերութի իմ:

(3) Զարմափն հնութե: զհին և զխաւսել արմատն. այսինքն զախտս հին մարդոյն, կամ սպականեալ բնութեանն՝ որք իբր արմատ 'ի խորս Թաքուցեալ կային, փեսին արարի, 'ի վեր հանի 'ի տես ամենեցուն, խոստովանեցայ: Բնութեն կորեալ, այսինքն ամօթոյ, պատկառանաց ոչ արդամեցայ: Զխոցանութեն, զմիաբանել իմ ընդ դդայական կամացս, կամ զզաշն ընդ դիւին՝ խղեցի խոստովանութբս: Զդղեղ, զբերդն, այսինքն զզաղտնութի սրտիս, յոր ապաստանեալ կային ախտքն և մեղք, քանդեցի հրատարակելով: Ընդ կամօքն, ընդ կամաց մարմնոյս՝ որ է որս սատանայի, իբրև ընդ խնդրողի զմահ հոգւոյս կռուեցայ, զանհաւանս նորա գործելով: Զխնարհութե. զընդդիմանալն յարձակման սատանայի՝ քեզ Տյ բանիդ յուսացայ, այսինքն յուսով յանձնեցի: Զխառարանոնեացն, զխասմբս դիւացն, լուսեղինացն դինոց, հրեշտակաց զինուցն կամ զօրութեանն ասդրեցի, յանձնեցի կամ մատնեցի, մի օրէն. զինու. զոր իբր գործիական առեալ խմանի, զինուն հրեշտակաց գրգռեցի զծողով պատերազմօղ դիւացն. որպէս առ մակաբէիւ հրեշտակ Տյ վառեալ զինուեալ երևեցաւ, և պատերազմեր յարձակիլ. (բ. մակաբ. ժա. 8:)

(4) 'Ի փող դեռակի: 'Ի կերպարան երեսացս՝ հաստատեցի նշան խաչին՝ փոխանակ ամօթոյս: Երեսոք կենացդ, երևոյթ կի՛ ձև խաչիդ ապաւորեցի՛ յայտս իմ, այսինքն յերեսս: Արանեսցդ, հրաշալի արարեալ կամ գործիդ փրկութե՝ 'ի պատիւ ճակատու նշանակեցի: այլ օրէն. նշանեցի: Յայս ամենայն բանս՝ այլ և այլ օրինակաւ զմի ինչ խնդրէ.

այսինքն անարատս առնել յինքեան և յանդամս իւր զնշան և զզօրութիւն այդ խաչին ։ Խորհրդաւորեալ, Սբ խաչդ՝ որ է տուիչ կամ աթոռ համարձակութեան առ ած, Բարեգործեսցէ, օգնեսցէ կամ յաջողեսցէ մատուցման մասանս 'ի յաղօթել, 'ի խաչակնքել, 'ի կատարել զխորհուրդս եկեղեցւոյ, ևն ։

(5) Մի հեռասցի ։ 'Ի բաժանել խմուլ յաշխարհէ, կամ 'ի բաժանել հոգւոյս 'ի մարմնոյ՝ արդարութեն շնորհացդ մի հեռասցի ։ 'Ի դատինն, յորժամ պատասխանատուք ամենայնի մարմինս, մի բարձցի պատուհան քրիստոնէական, կամ պատիւ պարկեշտութեան ։ Գիծք կենդանատիպք, դրոշմանք կամ նմանութիւնք կենդանացուցչիդ՝ որ 'ի ձեռն խորհրդոց եկեղեցւոյ, և 'ի ձեռն շնորհաց, մի ջնջեսցին 'ի հոգւոյս՝ զոր դու գրեցեր 'ի քո նմանութիւն. կամ, 'ի հոգւոյս՝ որ քո է գրեալ, այսինքն հաստատեալ ։

(6) Ընդ իս բնակեսցէ ։ Նշան ամենազօր արեան քո, նմանապէս և օծումն շնորհիդ՝ ընդ իս մնասցէ և պահեսցի 'ի գերեզմանին ։ Խնամալ պարտ է բառ զօրութեան. վասն զի ներգործութիք խորհրդոց եկեղեցւոյ և շնորհք ամրապէս 'ի հոգւոջ են՝ որ չմնայ 'ի գերեզմանի. բայց վասն շնորհաց և արժանաւորութեն հոգւոյն պահէ ած զմարմինն կամ զնշխարս մարմնոյ՝ անմերձ 'ի գլխաւորան ներգործութեանց, և յինչ և իցէ անպատուութենէ ։

(7) 'Ի փոյթ այգի ։ 'Ի յառնել խմուլ երևեսցայց լինել 'ի ծառայից քոց և 'ի սիրելեաց ։ Փոյթփոյթ փառաւորք, զօրութեամբ չարչարանաց քոց զարդարեսցայց ։ Աստուածն դդեսփի ։ Ո՛չ զառաջին անմեղութեանն որ 'ի մկրտութեն՝ ունել խնդրէ, այլ զամենևին մաքրութիւն 'ի մեղաց, զոր քաւութեամբ շնորհել առէ ։

(8) Մի յուշեսցէ ընդ փոյս ։ Ընդ քո բարիքդ կամ պարգևս բնութեան և շնորհաց, որպիսի է կնիք մկրտութեան, դրոշմի, և քահանայութեն, մի յառնեսցէ բանսարկուն, այսինքն գործք կմ գիւտք սատանայի, որք են մեղքն, կամ պարտիք մեղաց ։

(9) Մնասցէ ընդ ։ Գերեզմանն մթին՝ իբրև արգանդ վերստին ծննդեան՝ պահեսցէ զիս յաճումն յարութեն ։ Բնօփ փո, աջով պաշտպանութեն քո ընկալցոյ, այսինքն ընկալեալ եղէց, եղայց 'ի տուն մահու 'ի գերեզման ։ Դու գովել ընդ իս. ըստ խնամոց պահպանութեն ընդ ինքեան լինել հայցէ 'ի գերեզմանին, ըստ որում վասն Յովնանու ասի (Խաւար. Ժ. 13.) * Ընդ նմա էջ 'ի գուբ || ։

(10) 'Ի Եդեմ հայրենի ։ այսինքն հաղար անդամ առաջ քեզ. և ըստ շաբաթութեն պարզի՝ առաջ հաղար թուով կամ 'ի հաղար նուագս. զի բառն հայրե՝ որ ածական է Եդեմի, եղեալ է 'ի սեռական հոլով իբրև յատկացուցիչ, ըստ ոճոյն 'ի բանին ծը. ըծ. կ ։ Իսկ եթէ հայրեաց զատ առնուցումք, որպէս թէ հազար անձանց, բացատրի. առաջ քեզ պատաշաճի ընդ այլոց հազարաւոր անձանց. զի խօսի զհասարակաց թշուառութէ մարդկան ըստ մահկանացու վիճակին, որով այն որ երբեմն Եդենայն էր, այսինքն շրջող 'ի վերայ երկրի, այլև փռնել, զուարճալի, նևաթ ուրախութեն, մահուանքն և թաղմանք լինի անդնդոյին, 'ի խորս երկրի ընդ հողով, և ողբորեւոլ, ողբալի, նևաթ սգոյ ։

(11) Կրկին դու օրհնեալ ։ Թէպէտ քեզ հաղար առաջ պատշաճի, բայց դու կրկին ես օրհնութե ես արժանի՝ իբր անպարտական այսմ խնդոյ առաքելութեան մահուանք. վասն զի ես Աիեղեցոյ, ևն ։

(12) Մատն շնորհ ։ 3 օրհն. ձայն. և խմանի՝ յայս ամենայն մխսասարտութեան իմ շնորհս դու և ոչ փոքր գործակցութե ։

(13) Խաւարն իմ ։ Յորժամ կամք քո լիցին յիս, խաւարն խաւար գերեզմանին լինի քեզ ճառագայթ, ևն ։

(14) Ո՛ւ Գրէն : Այժմ մինչ առողջս եմ, և շունչ իմ յիս է, ոչ համարիմ զանձն իմ կենդանի, վասն անփոփոխելի վախճանին, վասն անդերծանելի մահուանն. զի որ վճռեալ է մեռանել անվրէպ, իբր արդէն մեռեալ համարի : Բայց օրինակ ինչ գնէ, վասն անլուծելի վախճանին, զոր մարթ է իմանալ զժամանակէ մահուանն, զի ոչ գիտեմք զժամ յառաջագոյն նորա : Գրիգորեան գլ. 4 օրին. գլ : Այսպէս ոչ համարիմ զիս կորուսեալ մահուանն՝ վասն աներկեան նորոգմանն, վասն աներկբայ նորոգմանն 'ի ձեռն յարութեան : 'Ի բովանդակ բանիս առել կամի. ոչ 'ի կենդանութեան իմ վստահիմ, վասն զի մեռանելոց եմ. և ոչ ընդ մահ իմ տխրիմ, վասն զի յառնելոց եմ :

(15) Փոխեալ համարիմ : Եթէ հայեցիմ յանկութեանն առաջարկեալ իմ, փոխեալ իմն տեսանեմ զճանապարհ կենաց. բայց 'ի խոստովանութեան փրկութեան հայեցեալ, այժմէն զգրաւականն բռնեալ համարիմ առաջի իմ : Ոչ այնչափ զայժմ կամ երկիւղ յուսահատութեան խառնէ զիս, որչափ ... այսօրինակ փրկութեան քաջալերեալ օգնէ. կամ որչափ առաւել փրկութեան զօրացուցանէ. քանզի նոյն իսկ սուրբ Աստուածայինք պատուահասին առաջնորդէ 'ի փրկութեան ճանապարհ :

Սերտին յաւելուած հրէին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն ողբերս մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

ԲԱ՛Ն. ԿԹ.

ա. Արդ՝ որ ոք և առցէ զայս գեղ մաղթանաց այսր [1] մատենի պարկեշտականի պատգամաց տոմար, եթէ 'ի մեղաւորաց իցէ մատուցեալն, եղէց և ես իմովս բանիւ կցորդեալ նմա. իսկ եթէ յարդարոց գուցէ յառաջեալն, գտայց և ես սովիմբ՝ ընդ նմին ողորմեալ նովաւ : Ապա թէ երջանկացի այսպիսին ինքեամբ՝ ինձ միայնոյ գրեալ զեղկութիւն, և ես ինձէն վկայեմ այսմիկ : Բայց յիշեսցէ նա զսողոմոն և զբանս նորա զհոգեշունչս, թէ [2] ով ոք վըստահասցի սիրտ ս՟բ ունել, և կամ ով պարծեսցի մաքուր լինել 'ի մեղաց. և զի ոչ յարեաւ մարդ երկրածին՝ ազատեալ 'ի պատասխանեաց. և ոչ ընտիր՝ ինքնարշաւ վազիւքն, և ոչ՝ թէ և 'ի թուիչս ամբարձման թևոց բերիցի. առ որ զգոյշ լինիցի [3] կրկին երկուցեալ 'ի վիմին իսկ հաստատութեան՝ ուսեալ 'ի պօղոսէ, գուցէ անկեալ 'ի յերկիր՝ [4] սահմանեալ այսմ կանոնի իրաւադատի՝ կշռեալ նմանեսցի : Այլ առցէ զայս կշտամբութիւն մաքուրն՝ նիւթ պսակաց, առ-

'ի չիջանել անխոտորողաբար յանձեռնհասն բարձրութէ. պատժապարտն՝ առ իթ ազատութեան, որով ամ բարձեալ 'ի կործանմանէ հոգեւորական մահուն՝ ապրեցի յուսով։ Իսկ ինձ եղիցի պատգամս այս բանի՝ արձան փորագրեալ՝ ամենեւին անեղծանելի, որ փոխանակ իմոյ եղկելւոյս անձին մահացուի՝ անդադար հնչմամբ հեծութեան լալոյ՝ առանց լռելոյ միշտ աղաղակէ. լիցի և ոսկերացս քակտեցելոց [5] 'ի հողապատեան շիրիմ վերարկուին՝ անմռունչ ձայնիւ զայս խոստովանել. հասցէ և մարմնոյս 'ի հող լուծելոյ՝ բարբառով իմն անազդելեաւ՝ ծածկատեսիդ զոյն պաղատել։

է. Տէր գթութեան, աղբիւր ողորմութեանց, պարգեւք բարութեանց, որդի բարձրելոյ տէր յս քս, ողորմեա [6] խնայեա, մարդասիրեա. նայեա 'ի վտանգս. ակնարկեա 'ի բեկութիւնս. խոնարհեաց 'ի թշուառութիւնս. տես 'ի տարակոյս [7] անձեռնհաս տագնապիս. հասիր հաղորդել կորստականս կարեաց։ Շօշափեա բժըշկապէս՝ զամենաթշուառ ախտաւորութիւնս. ունկն մատուսցես քաղցրութեան ողորմագին հեծութեանս. լուր 'ի խորոցն անդնդոց մահուն գերեզմանի՝ անմռնչելի հառաչմանս. մտցէ յականջս ամենալուր լսելեացդ՝ ձայն պաղատանաց վատնեալ անդամոցս։ Նա վասն զի [8] գթածական կենդանութեանս անապական է, անփոփոխ լիցի և սիրոյդ քո գթութիւն. կցորդ լեր հեզութեան՝ տաժանաւորս տկարութեան։ Մեռեալ պատկերիս՝ մի ոխս պահեսցես. ընդ անշունչ կերպարանիս՝ մի 'ի դատ քննութեան մտցես. մահու տանջեցելոյս՝ մի հարուածս յաւելցես. ընդ բեկեալ խեցեղէն անօթոյս՝ մի ուժգնութիւն մարտիցես. վճռեալ կոչկոճելոյս՝ մի բարկութիւն կրկնեսցես. կործանեալ շինուածոյս՝ մի պատուհաս մատուսցես. շանս սպանելոյ՝ մի քարինս արձակեսցես. լուծոյս ջախջախելոյ՝ մի սաստիկս որոտասցես. հողոյս անպատուելոյ՝ մի իբր ամբարհաւաճի ուժգինս մռնչեսցես։ Ո մոխիրս մերժելի՝ մի 'ի դատ ընտրութեան կոչեսցես. զփոշիս ցնդելի՝ մի իբր զքո դիմամարտ դատեսցես. զտիղմն տաղտկալի՝ մի իբր զոսոխ վարկանիցիս. զզարշութիւնս անդամնելի՝ մի իբր զառնամարտիկ վանեսցես. զխէթս

'ի բաց ընկենլի՝ մի՛ նուէթ գեհենին պահեսցես. զայս-
քանեաց բազմապատիկ բանից կշտամբեալս՝ մի՛ վե-
րստին յանդիմանեսցես:
Դ. Այս ամենաթշուառ և [9] խաւարարգել շիրմին
են ահա սրտաբեկ և յոքնաթախիծ արգահատութիւնք.
հաստատեսցէ օրհնեալդ քո բան՝ անփոփոխական
լինել, ըստ սրտի արգահատելոյս. քանզի և այժմ
մինչ կենդանեօքս խօսիմ, մեռեալ եմ անհասիդ.
որպէս 'ի կորուստ մահուն սատակման՝ ամենազօրիդ
հրամանի՝ անեղծ եմ հաւատովքս: Արդ՝ աղաչեմ
զքեզ՝ տէ՛ր Յս̃ Քս̃, հայեաց յիս ողորմութբ̃, և մի՛
թողացուսցես լինել տնակից ինձ բելիարայ. և ըղ-
մահազեկոյց տապանին աղդուածն անկենդանաւորն
թնդման՝ թշուառն թաղման՝ աղաղակ ձայնի հա-
ռաչման լալեաց՝ քեզ հաշտեցուցչաց՝ յարգեսցես
լսել, միայն բարեգործ, հոգեսէր, հզօր մարդասէր.
և հոգիդ քո բարի ընակեսցէ ընդ իս՝ լոյս առնելով
ինձ 'ի խաւարին: Մնասցեն ընդ իս [10] կենարար քո
կրից պաշտեցեալ մասունք. զի իբր զաւանդ զան-
ձու զիս պահեալ 'ի քեզ, կենաց նորոգման ընծայե-
ցուսցես. օճառք անվատնելի զինուց ինձ պատկա-
նեսցին, ընդ իս յարակայեալ քարինք պարսից՝ հռ-
գևոր հնարից՝ զչարին հալածել զգունդ: Մարտն [11]
որ առ իս՝ քև տէ՛ր վանեսցի. զի եթէ յարիցէ 'ի
վերայ իմ պատերազմել, տեսեալ զքաղաքն ունայն
'ի զօրաց՝ և զազդողականացն գործի ապաձայն, ըզ-
քեզ տէ՛ր ունիմ մշտնջենաւոր և աննիրհելի պահա-
պան:
Ե. Ո՛չ եթէ այժմ իսկ կանխաւ արագեալ յա-
ռաջ քան զօրն կատարածի, և անշուիղ արգելան
ինձ պատրաստեսցէ, առաքեմ [12] զաղօթմն տէրու-
նականս՝ նմին զան մահու. եթէ 'ի վայր զիս հնարի
կործանել, զծնրադրութի̃ արարչին. եթէ [13] 'ի մա-
խիր երկրի թաւալել ձեռն բերիցէ, երեսացն տ̃յ 'ի
նոյն մածուցումն՝ զնա հերքեսցէ. [14] եթէ վաստակս
ինչ ցաւոց նիւթեսցէ, քրտունքն յուռթի արեամբն
զանգեալ փրկչին աշխարհի՝ զնա խուեսցէ. եթէ [15]
յընթացից բարեաց զշունչս իմ պատանդեսցէ, կա-
պանք ամենաստեղծին՝ զիս արձակեսցէ. եթէ [16] յու-

րացութեան պարգեւաց լուսոյն բռնադատեսցէ, հայ-
հոյութեան համբերութեան յանձամարտիցն՝ զնոսին ընդ-
նոյն կարկեսցէ. Եթէ հարուածս նետից գաղտնաձիգ-
զինուց՝ ինձ արձակեսցէ, կարթ հնարից աղեղան
փառաց հօրն կապարճից՝ նմին պատահեսցէ: Եթէ[17]
քօղով լուսոյ խաւարականի՝ մտանել ընդ աչս անսա-
մօթեսցի, կափուցմն գլխոյն ձորձով պատեցեալ լեր-
մանն ամենից՝ զնա տանջեսցէ. Եթէ մոլեսցի[18] զվստա-
հութիւն ձեռինս կապել, եղէգն մատուցեալ 'ի յաջ
գոյացուցչին՝ զնա չարչարեալ ըմբերանեսցէ. Եթէ
ձաղանօք այպանման՝ զիս կատակեսցէ, տանելն ծա-
ղու ամենազօրին՝ զնա հենգնեսցէ: Եթէ[19] բժժա-
նօք ինչ յուռթից՝ կախարդել խորամանկեսցէ, ապ-
տակն դիմաց հզօրին Աստուծոյ՝ զնա սաստկապէս ամաչե-
ցուսցէ. Եթէ 'ի մուտս գիշերային մթութեան խաւա-
րաւ խաբէութեան[20] լինեալ մարտիցէ, 'ի ճառագայ-
թից լուսոյ երեւման քո տէր՝ խայտառակեսցի. Եթէ
'ի միջօրէական տապոյ փորձութեանցն՝ արեգակնակեզ
վատնիչ խորշակին՝ զիս 'ի յարմատոց խախտել կար-
ծիցէ, 'ի զօրութեան նշանիդ լուսոյ խլեալ գօսասցի:
Եթէ 'ի փչմանն շնորհէ ունայն զիս առնել հնարա-
ւորեսցի, թուքն զոր ընկալաւ տէրն քրովբէից ընդ-
մեղաւորիս՝ զնա պատկառեցուսցէ: Եթէ ժանիք
խածօղք ինձ ցուցանիցէ, լռութիւն երկնաւորին բե-
րանոյ՝ զնա պապանձեցուսցէ. Եթէ[21] խածմունս ա-
ղուականս հոգւոյս ազդեսցէ, բեւեռացն հարմունք
հաստողին բնաւից՝ զնա կսկծեցուսցէ: Եթէ յըն-
թացս անիրաւութեանց խորհրդոց զիս մոլորեցուսցէ,
սեւեռք ոտից անհասանելւոյն՝ զնա կապեսցէ. Եթէ
հրապոյրս ինձ դժնեայս արբուսցէ, քացախն ընդ
լեղւոյն խառնեալ 'ի յարբումն բարերարին՝ զնա
դառնացուսցէ: Եթէ[22] առաջին ճաշակմամբ փայ-
տին զիս գտցէ, սոսկալի խորհրդով խաչին ըմբռ-
նեալ՝ իսպառ պարտաւորեսցի. Եթէ ընդվզել ընդ-
դէմ հնազանդութեան Տեառն հրամանի զանձն իմ ու-
սուսցէ, բերումն պարանոցի անսահմանելւոյն՝ զնա
կործանեսցէ. Եթէ 'ի մահ սատակման զիս վանեալ
վիրաւորեսցէ., ստուար տէգ զինու մխելոյն 'ի կող
ստեղծչին ադամայ՝ զնա հերձեսցէ. Եթէ երկամբք[23]

վշտաց դժոխականաց զիս պարփակեսցէ, պատա-
նասցն կտաւ՝ եւս ունողին՝ զնա ըմբռնեսցէ. եթէ
յատակս մահու հայել զիս խարդախեսցէ, բնակել
կենդանւոյն 'ի վէմն մահու՝ զնա մեռուսցէ. եթէ
խնդասցէ ընդ մարդկորէնս իմ գայթագղութե̄, կրկին
կորասցի կարկամեալ կամաւ; յորժամ անմահն ա̄ծ
յարուցեալ փառօք՝ ընդ իւր նորոգեաց զբնաւ մա-
հացեալս: Եթէ ընդ լուծանել փոքր [24] կապանաց հա-
զարամեից՝ բերկրեսցի, դողասցի կրկնեալ վերստին
իսկոյն ընդ վերջին շղթայս անզերծ տագնապին ըմ-
բռնման սաստկագունի յանվախճան տանջանարա-
նին: Եթէ [25] ընդ առաջին հարուածն դժուարեա-
ցի, զոյժ կորստեան յետնում սատակմանն անշէջ
գեհենին՝ որ պատրաստեալն է նորա և նորին հրեշ-
տակաց, նմա պատմեսցի՝ որ յաւուրն մեծի՝ մեծին
ատենի:

Ե. Իսկ [26] ինձ ապաւինելոյս 'ի քեզ՝ տէր իմ, միայն
թագաւոր ինքնակալ զօրեղ՝ արարիչ երկնի և երկ-
րի՝ և ամենայն զարդուն որ 'ի նմա, որ գալստեանդ
քոյ ակն ունիմ, և ողորմութե̄ փրկչիդ սպասեալ
յուսամ. 'ի յոյս քո անկանիմ, և զգարշապարիդ
հետս համբուրեմ. [27] զպարտութե̄ս խոստովանիմ, և
զմեղանս հրապարակեմ. կշտամբանաց քարամբք կա-
ծիմ, և հառաչանօք սրտիս տապանամ. 'ի խեթ
խղճիս խոցոտիմ, և բոցով շնչոյս ճենճերիմ. աղի
ցօղով արտասուացս այրիմ, և [28] երիկամանցս աղդ-
մամբ կիզանիմ. յուսակտուր օդով ցամաքիմ, և
դառնաշունչ հողմով շիջանիմ. [29] թախանձանաց
բանիւս երերիմ, և կողկողագին հեծութե̄ դողամ.
տաժանելի կրիւք տուայտիմ, և տագնապաւ հոգ-
ւոյս տատանիմ. 'ի կոծ մրրկաց ծփիմ, և 'ի բախ-
մանէ ալեաց սասանիմ. [30] 'ի լրուէ համբաւոյն սար-
սեմ, և յիշատակաւ ահին կորնչիմ. կերպարանօք
ատենին հալիմ, և սպառնալեօք մեծիդ մեռանիմ.
լուր՝ բազմագութ, քաւիչ, մարդասէր և երկայնա-
միտ, քաղցրութե̄ անճառ, օր բարի և տիւ տենչա-
լի: Քանզի կարող ես յամենայնի և առ ելս շնչոյս
իմոյ՝ [31] փրկութե̄ մեծի. և քեզ ընդ հօր հոգւովդ
ս̄բվ փառք՝ յաւիտեանս. ամէն:

(1) Մոփէնի պուրէնչյանին : Այսինքն չափաւոր կամ խոնարհական մասամբք : Որ ըստ միանգամայն ասէ՝ առաջէ զձեռն աղօթական զբոյս, եթէ միջաւոր իցէ, և ես հաւասար եղէց բանից նորա : Իսկ եթէ յաղագս առաջնոյ գոյից յառաւելն, իցէ յառաջ կացեալն յաղօթել, եղէց և ես ... աղօթիւք՝ ընդ նմին աղաղակոյն աղաղակեալ նուաղ, վասն աղաղակոյն, կամ միջնորդութեամբ նորա : Այլա եթէ Եղիաքեայ այնպիսի աղօթօքն, այսինքն երջանիկ կամ անմեղ հասանողաց զանձն, (տես ծն. լծ. 4.) զնա միայն համարեցեալ եղիցի, վասն իմ միջնորդ ճշմարիտ լինել. բայց վասն իւր՝ յիշեսցէ զառաքեալն :

(2) ՈՂ ոփ վերահասցի : է բանն առառակաց. Ժ. 9 : Եւ յաղերգն, ու յարէառ մարդ, է բանն նորին առաքելոյ (Դ. Թագ. Ը. 46 :) Իսկ առացեալն, ն ոչ ընդ իւր ինքնուրցա. այսինքն. և ոչ քաղ կամ յաղթօղ լինի որ խլրով ընական արդարութեամբ. Թուի հայել 'ի բանն ժողով. (Թ. 11.) * Ոչ թեթևաց են ընթացք, և ոչ զօրաւորաց պատերազմ : ||

(3) Կրէին Երէռոցեալ 'ի վէմն իւր հաստատութեն՝ ոռնեալ 'ի գօղոսկ : այսինքն բաց 'ի բանից առաքելոյ գցոյց լինիցի զարձեալ, երկնչելով յարժամ նաև 'ի միւս հաւատացեալ իցէ, որպէս զառւքն աւեր. (սաղմ. լը. 3 :) կամ առաւել ես երկիցէ հաւատացեալն՝ ըստ խրատուն առաքելոյ. (ա. կորն. Ժ. 12.) Այս բանք վէմ ոչ նշանակէ զկին պետրոս : Բայց 2 կամ 3 օրին. ընթեռնուն. իւր հաստատութեն ոռնեալ 'ի գօղոսկ. և մարթ է բացատրել, հաստատութիւն ունիցի 'ի պօղոսէ երկնչելոյն յանկանէ, և ոչ եթէ անկատարած յանհոգս կալով :

(4) Սահմանողի այսմ կանոնի : Զի մի անզգուշութեամբ անկեալ, նմանեացի անկելոյն առաքելոյ, որ մնալեաց զայս ճշմարիտ կանոն՝ թէ արդարոյն ևս պարտ է երկնչել, ևն : Հին ըստ . սահմանօղ խնամոց զնա վարդապետս, իբրև թէ նմանեցի նմա սահմանողիս զայս կանոն զղջման :

(5) 'Ի հողապատեան շիրիմ . Համարեալ էր, թէ ասկերքս քանդեալք 'ի ծածկոյթ աստուածեղէն հողով պատեալոյ, կամ ընդ հողով թաղելոյ՝ այսուհետև աղօթեցս աղաղակելն առ քեզ : Եւ մարմինս հողացեալ բազմապատկեալ անզգայութեամբ զայս աղաղատանս մատուցանէ, թէ Տէր Գթածն, և այլն :

(6) Խնայեմ մարդասիրեմ : յերկու օրին. չէք մարդասիրեմ :

(7) Անշէանհաս փափկութիւն : Ի անզգայութեանց կամ անհետազօտելի նորութեանս : Իսկ 'ի վերս ասելն անշէանհաս քաղցրութիւն, խնամով՝ գերազանց. վսեմական, ևն : Հաւէր հարուրէ. այսինքն օգնել կարեաց մարմնոյ :

(8) Գթառական կենդանութեան : Հոգիս՝ որ է պատճառ կենդանութեան, և առհաւատչեայ յարութեան մարմնոյս : Հին ըստ . խնամոց նաև զանազանս . իբր ասել, թէ և ես մեռանիմ, առակոյն գիտեմ՝ որ անապականան միայն զինի իմ, է իբր վերանորոգ կենդանութեան :

(9) Խառարարգէն շիրիմն : այսինքն գերեզմանին որ առաջելով կամ պատկեր 'ի խառարի : Վերստացեալ պատրաստութեան ասէ՝ են յառաջին և բարգավաճեալ խնդրուածք, զորս 'ի գերեզմանին առնեմ առ քեզ. վասն որոյ հաստատեալ զխնդրուածքս՝ լինել անփոփոխելի ընծայեալ առ քեզ : Եւ ոչ ընդդէմ իմն է 'ի մեռանելն խնամ առնել զզգայական խնդրուածս. վասն զի այժմ ես մինչ կենդանի խօսիմ, կենդանի զօրաւոր խօսիմ, քո անհաս կենդանեաց հաւաստեալ իբր մեռեալ եմ. առակ որպէս այժմ կարեմ խնդրել, նոյնպէս և 'ի մահուան : Եւ զարձեալ, զի և 'ի մեռանելն խնամ կենդանի եմ հաւատովք յարութեան. առաքս իբր 'ի կենդանեաց լինիմ զնոյն խնդրուածս : Վասն որոյ աղաչեմ զքեզ՝ զճանապարհ փառացն աղաչանս, զինչ ծածկեալ ձայնս գերեզմանին, կամ

զձայն գերեզմանին՝ որ է նշանակ մահուան, անկենդանութեան նշանն, զձայն Թնդմանն գերեզմանին, որ առանց կենդանութեան 'ի բախմանէ ինչ կամ 'ի շարժմանէ Թնդիւն առնէ, իբրեւ ապաղակ ըղըղակին հառաչանաց յորդորեսցես, ընդունելի համարիցիս, կամ համարեսցիս լսել :

(10) Կենսաբար փոխերեդ : Ընդ իս միասցեն զանազան չարչարանաց կամ անօրէնութեան քո մատուցեն կամ զօրութեն. զորս և 'ի կենդանութեանն ունիմ դեր ընդդէմ բազմազան հնարից սատանայի. որպէս զնի կարդա 'ի համարն դ : Օծումն, լինիցին ինձ զործի կամ հնարք անմահէլի զի-նուց, ընդէս յորակայեալ, ընդ իս միացեալ մինչ՝ իբրեւ քարինք աղաղա-ակաց առ 'ի հալածել զդուշնն սատանայի : Մարթ է և ս խմանալ առա-զօրագոյն նշխարս կենաց փայտին, զխաչին, և զայլոց գործեաց չարչա-րանաց փրկչին : Կամ, խմանալ զհոգեհրաշական նկարն, որք 'ի պատուանս մեռելոց գրոշմեալ կան :

(11) Մարմին որ առնէ : Պատմութեամբ զոր 'ի մահուան իմ, կամ յետ մա-հու առնէ ընդ իս սատանայ, քե որ յն վանեսցի. զի յարժամ յառնէ նա մարտնչել ընդ իս՝ անսասանելով զմերձեցեալս 'ի մահ կամ զմեռեալս իբրեւ քարայք մի ումեքն 'ի զօրաց, և պաշտպանութեան գործի, զմեռեալս կամ զմեղաւ՝ որ իբրեւ փող սաղ առնէ զզարթուցանութեան, արթնացն, անձայն, լռեալ, յայնժամ վառանդի զքեզ ունիմ պաշտպանն, ևն : Ծա-նի՛ր զի յայս զբուհս առ քո են զենք աղօթիցն. բայց 'ի յաղթող համարն դ. յեղլարդ գենա խօսք՝ բաց յերկուց հատուածոց. և այս զարմանալ առ քո փոխէ 'ի համարն Ն :

(12) Զաղօթան փերսաձական, զաղօթսն՝ զոր մատուցեալ քո որ մեր :

(13) 'Ի մոխիր եւ'ելի Բասայէլ. այլ օրին. Բաբաւէլ :

(14) Եթէ վաստակ ինչ. կ օրին. ինչ : եթէ նեղութիւն ցաւոց սատանայէ յիս սատանայ, փրփանքն յաւուր, յորդահոս կամ առաւոտ քարտնքն փրկչին՝ խառնեսալ արեամբ՝ խոնեսցէ, աստուածեցուսցէ զսատանայ :

(15) Ցընտացից բերեալ : եթէ զհոգի իմ, կամ զերգել արդար ընթացից բարեաց յետս ձգեսցէ, կամ արգելլեսցէ, ևն :

(16) Ցուցացուցն դարձնոյ : Եթէ բանդարկեսցէ զիս սատանայ ու-րանալ զզարդալ ըստ ասոր յարութեան, կամ յաւիտենից կենաց, փրկչին համբերելոյ հայհոյութեան՝ որք լինէին յարձակման հրեիցն, զնոյն ընդ նոյն, զհրէական ընդ սատանայի պարտածեցուսցէ : Եւ եթէ զայրա-նի նեռա խարդէութեամբ յիս արձակեսցէ, կոյր Գումրից, հնարաւոր կամ հաշտաղարդումն կարթն, (այսինքն չէնեկել, կամ զանձնալ) ձգեալ 'ի կատարածից հօրն, կամ քոյն, նման պատասխանեսցէ և յետս դարձուսցէ :

(17) Փրկութեալ : Եթէ պատրուակաւ բարեաց ինչ համարձակեսցի սատանայ մատնել ընդ սոյս իմ, այսինքն 'ի մնասականս կամ յանդար-ժանս խառնեսցուսցէ զսոյս իմ, կափուցի ծածկեալ զգլուխ ըմնն անձնոյ, լրացուցչին կամ կատարողին ամենից, այսինքն քոյն փրկչին, զսատանայ ամաչեսցէ :

(18) Զփառաւորութեն յետուն : Եթէ յանդգնեսցի կասել զհամարձակու-թիւն ձեռացս յաղօթել, կամ 'ի գրել զաղօթքս, կամ 'ի գործել զպարտս :

(19) Բծծանօք ինչ : կախարդական կապանօք, կամ ծրագրօք ինչ :

(20) Լքեալ : այ անաստօթեալ, յանդգնեալ. այլ օրին. ընկեալ :

(21) Խածանան ողորմութեան : Մեղք կամ անուշակ խածանմունս, որք են ցանկական խլրտմունք :

(22) Աստուծոյն հաշտեցման : Եթէ ընդ պարտօք առաջին հաշտեալման ա-ղամայ զացէ զիս, այ 'ի նեղքեաց ազատեա՝ որ 'ի մեղացն աղամայ, զզօրութեն փայտի խաչին ընծայեսցի, ևն :

(23) Վըշտոց գծոխոխանաց: Եթէ յաւուրս մահուան փորձութեանց զիս պաշտպանեսցէ, և՛ն:

(24) Կապանաց հաղարտինդ: Զհաղորդակցութեան կապանս սատանայի՝ զոր գրեաց սէրն յովհաննէս (յայտն. Ի. 2.) ասենք 'ի վարդապետաց խմանան ճշդիւ, խրելև թէ յետ հազար ամաց պարտական քոյ՝ լուծանելոց իցէ սատանայ. որպէս խմանայ և տարբերս մեկնիչ. (Բ. յովհ. Ճառ. Բ. եր. 773:) Բայց այլ վարդապետքն խմանան զմիջոց ժամանակին՝ որ 'ի քրիստէ մինչև 'ի կատարած աշխարհի, յորում առ նեռին լուծանելոց է սատանայ, այսինքն թող տալ ազդ՝ զի 'ի ձեռն նեռին մոլորեցուցէ զմարդիկ: Այսպէս խմանայ և անդրէաս կեսարացի՝ մեկնիչ յայտնութե. Այլ և սա ինքն տպա գրեթոր. զի յարէ զինի. Դաղաւթ Եբինեաւ Եփրեմ Նոխոյն ընդ Եզեկին շղթայս, և՛ն, զի յետ լուծանելոյ 'ի հազարամեայ կապանացն՝ նոյն զօրանալ կապելոց է 'ի վերջին շղթայս յաւիտենական տանջանաց. յորում ոչ ևս կարող է մոլորեցուցանել զմարդիկ. և բաղդատութե՛ այսր յաւիտենական կապանաց՝ զառաջին կապանսն կոչէ փոքր:

(25) Ընդ առաջին: Եթէ գժուարեցաւ սատանայ ընդ առաջին հալուածն՝ որ քրիստ. եղև, յայս որում խորտակեաց զզօրութե՛ նորա, Գոյժ Նորոգեան, զի խաղաղ պատառութեանն՝ որով 'ի կատարածի աշխարհիս բոլորովին խորտակի զօրութի նորա, և մնայ միայն գեհեանն, յիշեցի նմա:

(26) Իւջ աղաւինեալս 'ի վերայ: Այս բան ասացեալ և կապի ընդ յետին բանին, ընդ Եաղմօգուն, վաւեր, և՛ն:

(27) Զաղօթուն խոստովանեմ. զի զապաշխարութիս, որպէս և 'ի բանն ծթ. լծ. 2:

(28) Երեկոյնակոյս աղջամուղջ: Հին լուծ. զզենեալ շարժմանն խմանայ, բայց անյարմար է. այլ խմանալի է կոկին կամ նեղութի ցաւոց որ յերեկոյանան: յաւատեր օղոք. զի նուաղեալ շնչով որ զգոյս իմ կարէ. կամ, յուսահատիչ հողմով մտածութեանց և փորձութեանց յամարիմ:

(29) Թշնամեաց բանիւ: զի թախծանաց կամ տրտմութե:

(30) 'Ի լոյս հանգիստ հաճոյ: 'Ի լոյս կամ 'ի լաւութէ հանգստեան:

(31) Փրկութե՛ մեծի: Նաև յելանել հոգւոյս իմոյ՝ կարող ես փրկութե՛ մեծի, այսինքն 'ի յաւիտենական փրկութեան իմ:

Մեծութեան յառաջեալ երգին հեծութե՝ նորին հանդէպ, առ նոյն աղերս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

ԲԱՆ. ԿԱ:

Ա. Բայց քանզի[1] յոյժ արդար է քան իրաւանցն քոյ Այ առ իս՝ քան առ սկզբնահայրն չարեաց սատանայ: Զի վասն նորա յայն սակս յայտնեցաւ, զի լուծցէ զգործս նորին. և վասն իմ՝ զի զհնացեալ պատկերս նորոգեսցէ. [2] առեալ զկերպարանս բոլոր էութե՛ կերպին իսկութե՛ մեծին Այ՝ միացոյց ին-

քեան անշաւշտ խառնութք ։ Նորա ոչ են շնորհեալ
'ի բազմացն, և ինձ զբովանդակն եհեղ առատուք.
վասն նորա ոչ երբէք չարչարեալ, և վասն իմ հա-
նապազ պատարագի. նա անհաղորդ է կենացն, և
ես միշտ վայելեմ 'ի փրկութենն. նա վանեալ է խա-
չիւն, և ես զօրացեալ նշանաւն ։ Նա հերքեալ 'ի
լուսոյն, և ես միացեալ ընդ փառացն. նորա ոչ խոս-
տացաւ հանգիստ և յերկրի, և ինձ զերկինս աւետ-
հականեաց. զնորայն [3] կտրեաց զառհաւատչեայ, և
զիմն՝ առանց խզելոյ յարակայեաց. զնա յերամակս
խոզիցն արգել, և յիս ինքն զօրացաւ. զնա կար-
ճաց օրինակեաց, և զիս ճառագայթ նշանակեաց.
զնա սողնոց նմանեցոյց, զիս իւրումն անուամբ կըն-
քեաց ։

Է. Իսկ ես զերախտիսն այս լքի՝ զայլքանեաց բա-
րեաց արարողի, և չարին զկնի մտեցայ՝ հայել ընդ
նմին յատակս դժոխոց՝ ահա անարժանս բարեաց, [4]
անձիրս երախտեաց, անընդունակս սիրոյ, տուամբք
մեղաց ձգեալս, յերիկամունս խորոց խոցեալս, քան-
ցեալ ծառս արմատենեաց, գինիս յեղաշրջեալ, ցո-
րեանս հեղեղեալ, մուրհակս ջրեալ, վճիռս պատառ-
եալ, կնիքս այլակերպեալ, նմանութիս փոխեալ,
արկանելիքս կիզեալ, ըմպանակս կորուսեալ, նաւս
ընկղմեալ, մարգարիտս մանրեալ, ակնս պատուա-
կան սուզեալ, տունկս գօսացեալ, նեցուկս խորտա-
կեալ, փայտս ամենեւին փտեալ, [5] մանրագործս աղա-
ւաղեալ, յարկս տապալեալ, խորանս խարխալեալ,
բոյսս արմատաքի խլեալ, ձէթս հեղեալ. [6] 'ի գուբս
աղբեւաց, կաթնս հոսեալ 'ի կոյտս մոխրոց, այլս
մահու [7] 'ի յարեանց գնդից ։ Քանզի միշտ խրա-
տեալ ընդ երուսաղեմի առակաւ բաբելոնի՝ 'ի մար-
գարէիցն ձայնից՝ անձն իմ ողբալի, և ոչ ինչ խրա-
տեցեալ. որ աստէն անգոսնեալ եմ, և անդէն խայ-
տառակեալ. աստ դսրովեալ, և անդ կշտամբեալ.
աստ ձաղեալ, և անդ նախատեալ. աստ թշնամա-
նեալ, և անդ յանդիմանեալ. աստուստ ապշեալ, և
անդանօր լքեալ ։ Աստ հեծութիւն, և անդ հառաչանք.
[8] աստ կարծիս, և անդ կատարած. աստ խէթ, և
անդ հատուցումն. աստ արկածք, և անդ հանդէսք

դատաստանի, ուր ոչ է ՚ի բան իրաւանց, և ոչ ձայն պաղատանաց. ոչ թիւք աւուրց, և ոչ ելք ժամանակաց. ոչ ուղղք յուսոյ, և ոչ դրունք ողորմութեց. ոչ աջ պաշտպանութեան, և ոչ ձեռն այցելութե։

Դ. ՏԷՐ դու ապաւինութի. դու ինքն փրկութի. դու այցելութի, դու և քաւութի. դու երանութի. քև բժշկութի. քո ողորմութի, միայն հզօր՝ կենդանի՝ անճառ տէր յս քն բարերար ած. օրհնեալ՝ օրհնեալ, և դարձեալ օրհնեալ, ընդ հոգւոյդ քո սբյ յաւէտ բարձրացեալ՚ի փառս հայրենի իսկութեան մեծիդ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

(1) Յոյժ արդար է բան։ Քննութի աղգարաութեն ոչ առաւել պարտաւորէ զմեզ քան դատաստանայ. զի նա թէպէտև ահագնահայր չարչարանաց եղև, սակայն յետոյ ոչ տուաւ նմա առիթ թողութե. ոչ շնորհեցան նմա բազում բարիք շնորհաց. ոչ վասն նորա չարչարեցաւ քն. զուրկ մնաց ՚ի կենաց. վանեցաւ խաչիւն. ծնրգեցաւ ՚ի լուսոյ, ոչ տուաւ նմա հանգիստ և յերկրի. յոյս նորա կարեցաւ. յանարգ կենդանիս առդեալ, և նոցա նմանեցաւ։ Իսկ ինձ այսոցիկ ամենեցուն հակառակն աղագեցաւ յիմ. և ՚ի վերայ այսր ամենայնի ես տակաւին լքի զերախտիսն իմ, և զհետ չարին գնացի։ Այսպա առաւել է իմ պարտաւորութիւն քան դատաստանայքն։ Այս բաղդատութի ոչ հայի բացարձակաբար յառաւելութի մեղաց և պատժոց մարդոյն քան դատաստանայքն. զի սատանայ գոլով գործիչ մեղաց, և գրգռիչ ամենայն մեղուցելոց, միանգամայն անյոյս ՚ի չարութե, մեծ են նորա մեղքն և պարտաւորութի քան զմարդոյն. այլ հայի միայն ՚ի մասս ապերախտութե. զի եթէ ըստ տրտածի վճռոյն՝ որում շատ տուաւ, շատ խնդրեսցի ՚ի նմանէ, ապա և ՚ի մարդոյն՝ առ որում բազում երախտիք շնորհաց եղեն քան սատանայի, առաւել պահանջի. ուստի մարդ ՚ի մեղանչելն առաւել ապերախտի առ ած, քան դատաստանայ։

(2) Աստուածաբանութիւն, զմարդկային բնութեան բոլոր էութիւն, ամբողջ էականն, զհոգի՝ զմարմին, զմիտս, զկամս, համագերծ ամենայն ըղձ-գայութեք և անդամօք. կերպին խոհութին, այսինքն իսկական բնութիւն մեծին ած՝ յանձն առեալ առաւել զմեր բնութիւն, Պետրոս, միաւորեալ ընդ ինքեան անշփոթ խառնութին, իսկական կամ իրական միաւորութե։ Կամ, խոհութին, խոնարհեալ փոխանակ անձին, զորմէ առաքեալ ասէ ՚ի բացառա. շարակն. համար 257. առեալ՝ կերպ ծառայի, ուստի նշանակեալ պատկեր անձին հօր. այսինքն որդին ած պատկերն անձին ած Հօր առեալ ծառայ զբոլոր մարդկութիւն և Ն։ Նմին մասք իմն և ՚ի կատարածի բանին, ՚ի հայրենի խոհութին Պետրոս. տես և ՚ի հն. լծ. 20։

(3) Կարծեաց զատահաւատեալ. գի զհաստատութի յուսոյն, կամ զխոստումն ած առ սատանայ՝ որ նախ քան զմեղանչելն, որով խոստանայր նմա զփառս՝ եթէ կացցէ ՚ի ճշմարտութե. և ՚ի չկալն նորա քակեաց ած զխոստումն իւր։ Եւ զինն, զիմ առ հաւատչեայն յուսոյն, կամ խոստմանն ած՝ նաև յետ մեղանչելոյս՝ առանց խզելոյ յօրինակաց, յերկարելով կամ միշտ պահելով. ապաւինելով դարձի իմում։ Դիտեալ ՚ի բովանդակ բանիս՝

ընտիր յերկնից ներհակաց ընդ այլադաւանս կարգէ դէմ ընդ դէմ, կարգ տառապեցուցանելով զպաղատանս, միանգամայն և զմարդոյն տարերախտութեն։ Սատանայի տուէ՝ տակաւ բարիք չնորհեցան, այլ ինձ բամանգամին տառապեալս։ Վասն նորա ոչ երբէք չարչարեալ քո, վասն իմ միշտ. նա զուրկ 'ի կենաց, ես միշտ 'ի փրկութեն վայելող. նա խաչիւն հալածեալ, ես խաչիւ զօրացեալ. նա անլոյս զկեանքն, ես 'ի բուն 'ի փառսն միացեալ. նմա և ոչ յերկրի հանգիստ, և ինձ երկինք բացեալ են հայրենիք. նա 'ի խորս փակեալ, 'ի յիս քո ինքնին բնակեալ. նա՝ գարշելի սեւաթոյր կերպի նմանեալ, և զիս ճառագայթ կոչեաց, աշխարհի լոյս էք ասելով. զնա օձի հանգոյն անուանեալ, և ինձ զեւր զքերովբէական անուն ես անքննելի կնիք միրոնաւն։ Աւելի զատուածային օծից և կարծեաց նմանեցուցեալ, հայր 'ի բանն " Ահա ետու

ձեզ իշխանութե կոխել զօձս և զկարիճս || և այլն։

(4) Անչէրս։ ոչ տուօղ զձիր, կը անշնորհակալու երախտեաց։ անընդունակս սէրոյ. ոչ ընդունօղս, արհամարհօղս ածայինն սիրոյն, չճանաչօղս զԹուՆն այ. յէրէհանս խորրոյ, փոխանակ գնելոյ՝ 'ի խորս երկկամանց

խոցոտեալ, կը 'ի բուն 'ի ներքին ախտաժամս հոգւոյ վիրաւորեալ։

(5) Մանրանգորս տղատողէալ. այսինքն եղծեալ, ապականեալ։ Իսկ մանրանգոր է բառ յունական. զորոյ նշանակութե բազումք այլ և այլ օրինակս մեկնեն. բայց առաւել հաւաստի է նշանակել զոտնեն՝ որոյ արմատն է կերպ զգեստ մարդոյ, տեսի և անուանի՝ մարդատակ, և այլով անուանք յուլեով. ուհի պատուաղ նմանն խնձորոյ՝ անուշահոտ, որպէս և ծաղիկ նորա անուշահոտ է, և միով անուանք մանրանգոր ասի տունկն,

պտուղն, և ծաղիկն։

(6) 'Ի գուբիս աղբեաց. 'ի փողոց աղբեաց. (չեօփլիւկլէրտէն։)

(7) 'Ի յարեանց գնդից։ 'Ի զնդէ կամ 'ի ժողովոյ արիւնահեղաց՝ ես եմ այր մահու, այսինքն մահապարտ։ Բայց յայլ օրինակ ասի. 'ի յարեաց գնդից. և առաւել պատշաճ թուի կարգի բանին. որպէս թէ 'ի զնդէ

առաքինեաց կամ քաջաց՝ ես միայն եմ մահապարտ։

(8) Անփ նործիս. առա կասկած երկիւղի, կամ առա կարծիք յուսոյ՝ Թէ դուցէ ապրեցայց 'ի տանջանաց. և անդ նոփարած, կատարումն

երկիւղին, կամ 'ի գերև ելանել յուսոյն։

(9) Բան նրատոնց. բան ջատագովութե կամ արդարացուցանելոյ։ ոչ ենտի տասրց. ոչ գտն 'ի հանդերձեալն Թիւք աւուրց. և ոչ էտ ժամանակաց, վախճան ժամանակաց. ոչ ուղտ յուսոյ, ուղիք կամ ճանապարհ յուսոյ. այսինքն, անվճար են տանջանքն, և անյուսալի՝ ազատու

Թիւնն։

Ներածին յաւելուած նըրէին հեծութէ՝ նորին հօնողէ, առ նոյն տնիրս ճաղբանաց բանի։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

ԲԱՆ. ԿԲ։

Ա. Եւ արդ՝ 'ի յիշատակ աւարկութե վերագրեցելոցդ՝ որք յածուստ են սպառնալիք ինձ ժամանեցելք, զիարդ դադարեցայց 'ի նորոգ ողբերգութեց, և կամ որպէս զցամաքումն առցէ հեղեղք

արտասուացս։ Օ՜հ եթէ զչորեքվտակեան առաջս դետոցդ յորդահոսան ծաւալմանցդ, որ զեդեմ և զերկիր առ հասարակ ոռոգանեն՝ լիապէս բաւականութիւն բաշխեալ ամենայնի, և [1] զաղխումն ելից իւրեանց՝ առ աչս իմ եդեալ, զանձինս մեղաց տօթակութեան զբոց զովացուցանել ոչ բաւականասցին։ Այլ կամ [2] մարգարէին ընդ ըղձականութեան կրկնեն ինձ լցցի գլուխս ջուրց բազմութե, և ճրագարան տեսութեանց կերպիս՝ աղբերց կայլակմունք, զանկման ոգւոցս չափել զվտանգ՝ ոչ ձեռնարկեսցեն. և ոչ [3] եզերականք ջայլից համօրէն՝ բանահիւսից կանանց լալականաց՝ 'ի սիրտ և յոգի վիրաւորելոց, զաղէտ վտանգիս 'ի յերգ արկանել, և կամ 'ի նուագս ձայնից բերել։

Է. Իմ է օրն լինելութեան նզովեալ, և ոչ յոբայ՝ կամ երեմիայ. քանզի տօնելի է օրն նոցա՝ զորոց մի 'ի նոցանէ ոչ արժէ աշխարհ, և ոչ տարագրելի. ապա ուրեմն [4] զիս նկատ եղեալ զոչ արժանիս լուսոյ՝ և կամ միոյ մասնաւոր բարւոյ, զհանդիպումն աւուրն անիծից՝ յորում ես գտայ կորստեան որդիս և մահու դրացիս, մշակս մեղաց և որբանեակս անօրէնութեանց։ Որ ոչ կացի յուխտին կենաց՝ զոր դու սահմանեցեր՝ ո՛վ բարերար. ոչ գնացի 'ի քո պատուիրանն կենդանական անմահացուցիչ. ոչ վաստակեցի 'ի հունձս արմտեացն, որով 'ի մուտս ձեանն՝ [5] աւուրցն խռովութեան կերակրել պատրաստեցայց. ոչ կառուցի ամրութիւն որմոց՝ և ոչ ձեղուն յարկաց ձգեցի, որով 'ի շնչմանէ մրրկաց օդոց պահեցայց. ոչ համբարեցի նշխարս պաշարաց 'ի յուղին անեզրական, որով զտագնապ սովոյն իմ բժշկեցից. ոչ հանդերձաւորեցի քեզ աղերս աղօթից, որով առաջի քո կալ համարձակեցայց. ոչ կազմեցի թոշակ փրկութեան վարուց մաքրութեան, որ [6] զնորոգումն ինձ երաշխաւորէ. ոչ ետու զընտրութեան հաշիւն 'ի կենցաղոյս ճանապարհի՝ իմոյ մատնչին, զի 'ի դատաւորին ձեռանէ աստէն իսկ [7] փրծայց. ոչ լրութեան ձեռին օրհնութեան մատեայ յանդիման, որով օրէնսդրին մասնակից գտայց սրբեցեալ։ Ո՛չ դիմաց ետու ըղձուշութիւն, և ոչ թիկանց պատսպարութիւն, ոչ աջոյս

իմ զինուորութիւն, և ոչ [8] ահեկիս պարածածկուն, որով 'ի պատերազմիս վտանգէ զերծայց. զերիվարս ոչ զգեցուցի զրահիւք, և ոչ զմարտիկս՝ սպառազինութեամբ, որով զճակատն յարդարեցից: Ո կամուխս ոչ կապեցի պտուղ, և անագանին ոչ ժամանեցի, և ահա տարակուսիմ ունայն 'ի բարեաց. մաքրութեան ծաղիկ ոչ ունիմ, և ոչ իւղ ողորմութեան, և գիշերոյն մռայլ՝ աննշոյլ. 'ի նիրհումն մահու ննջեալ եմ, և տագնապ կոչողին փողոյ սոսկալէ. զպարգ. հարսանեացն կրկին մերկացայ, և զձէթ վարուցն վերստին լքի, և դուռն մտին հարսանեաց աւասիկ փակի:

Գ. Ու արդ՝ զի՞րդ առից մխիթարութիւն այսքանեաց վշտաց, և կամ [9] ընդ ո՞րքանեաց տարակուսանաց խաւարի՝ լուսաւորութիւն յուսոյ կենաց խառնեցից. և կամ ո՞ւր արդեօք զգարշապարս ոտին կառուցից. և կամ յո՞ր վստահութիւն զաչս իմ յառեցից. և զի՞նչ անդորրութիւն ծփանացս նկատեցից. և կամ յո՞ր ըղձական դիւրութիւն ձեռն համբարձից: Ո ի եթէ 'ի ձեղուն բարձրութեան երկնի, անտի անձրևեաց հուրն սոդոմայ, որպէս ասացեալ է. իսկ եթէ [10] յատակ խորութ երկրի, սա եբաց զկոկորդն ըմբռնողական՝ և եկուլ զդադան բանակօքն աբիրոնի: Եթէ յանդգնեցայց փախչել յունողէն, գուցէ կալցի զիս վիշապն ահագին: Եթէ ընդ գաղտնս ինչ թափառեցայց, արագունք են խնդրել զվրէժ ստացողին առաւել առ իս՝ քան երբեմն զեղիսէին՝ առ մատաղ [11] մանկունս բեթելացիս քրմորդիս: Եթէ յամենատարած օդոյս պարզութիւն, այն եղև եգիպտացւոցն խաւար շօշափելի: Եթէ 'ի թաքունս բարձանց, նոքա են կոչեցեալք 'ի սպանողն զոհին [12] բոսորայ դիւականցն: Եթէ 'ի տկարսն խիզախեցից, վանիմ [13] 'ի պիծակացն, և զի՞ պիտոյ են ինձ առիւծունք: Եթէ յարջոցն պատառողաց ապրեցայց, մժիխքն արեան ծարաւիք ինձ պատահեսցեն: Եթէ յանհոգս ուրեք նստիցիմ, [14] մժղուկքն անարգագոյնք՝ իբր ցնցուղս հրոյ եռացման՝ զինև մաղեսցին: Եթէ յեղջերէ միեղջերւոյ փախնուցում զերծեալ, նկուն [15] ձիրանք աղկաղկաց մնոցն մարմաքողաց՝ զիս

կեղեքեսցեն ։ Եթէ 'ի սենեակ շտեմարանաց խոր-
շից ղօղեալ ամփոփիցիմ, տաղտկատեսակ գարշու-
թիւն գորտոցն՝ [16] մեղաց օրինակքն՝ զիս զազրա-
ցուսցեն ։ Եթէ 'ի վայրս ինչ անդաստանաց կացեալ
զետեղեցայց, շարք [17] շանաճանճոցն տարմից՝ զինև
պատեսցեն ։ Ողողում ասել [18] զխառնիճն և զջո-
րեակն զզօրն զօրաւոր՝ ընդ թունաւորն թրթուր,
և ընդ անկենդանական երևոյն, հանդերձ ջրակարծ
կարկտիւն, և ապականագործ եղեմամբն. որ առ-
աչաց տեսիլ՝ ապաշէնք և նուաստագոյնք, բայց 'ի
յանկնարկելն տոյ՝ յաւէտ գոռոզաբար ուժգնութ̃ հա-
րին վանեցին զհպարտն ամբարհաւաճութի փարա-
ւոնի բռնութեն բուռն գաւազանին՝ յաղթօղ միճա-
կաւ. որ են կերպարանք թաքուցելոցն կրից ակո-
ղաց՝ անձնականացն աներևութից՝ եգիպտացւոցն
անօրէնութեց՝ [19] յորդի և 'ի մահ տանջողաց՝ գաղտ-
նի մխատողաց ։

Դ. Արդ դու ամենազօր արարիչ բնաւից տէրդ բո-
լորից, 'ի յատեկյան հանդիսացիր հերքել զնոսա. և
ինձ ողորմեա կրկին գթութ̃ ձեռն մատուցեալ փըր-
կութե տարակուսեցեալ կոչկոճեալ վարանեալ 'ի
մահ պարտելոյս ։ Զի դու միայն ճանաչիս ամ̃ փա-
ռաւորեալ միշտ ընդ հօր հոգւովդ սրբով յաւի-
տենից. ամէն ։

---

(1) Չէրքէզստան [illegible] ։ Զանգն՝ [illegible] ելանեն չորեքին գետքն. եթէ ասէ՝ զչորեսին գետս եղեմայ՝ և զանգն նոցա յորս իմ եղեալ բղխեցեմ, ոչ են բաւական զովացուցանել, ևն ։

(2) Մարգարէին սէօզի ։ եթէ ըստ բաղձանաց երեմիայի (Թ. 1.) կրկին ես քան զնորայն լցցի գլուխս ջրոց [illegible]. մի օրին. [illegible]. առաջինն առաւել համաձայն է բնագրի մարգարէին, որ ըստ ձեռագրաց գնի. * Ո՛ տայր զգլուխ իմ ջուր. և աչսնքն ո՛ առնէր զգլուխ իմ երկու ջուր ։ Ըստ այսմ և քան սէօզի վարդապետիս խնամի. աչսնքն լցցի գլուխս երկու ջուրց բազմութի, կամ երկու աւազան ջրոյ ։ Սակայն առաւել մեկին և ըստ կարգի տայ զնմանութն, եթէ շարադրութեն այսպէս զատցի. [illegible] մարգարէին սէօզի [illegible], [illegible] առաւելապէս յիս կատարեսցի. գլուխս լինելով ջուրց [illegible], և [illegible] [illegible], (2 օրին. [illegible].) [illegible] լինելով [illegible], համօրէնք, կամ հոսիչք աղբերաց ։ Եթէ այս ես լինեցի, տակաւին զվտանգ խորտակման հոգւոյս մեղօք՝ ոչ [illegible], ոչ կարասցեն ցուցանել որչափ է ։

(3) [illegible] ։ ո՛չ եղերական ձայնք ողբոց, կամ ողբագին եղանակք լալականաց՝ կարասցեն լնուլ երգել զաղէտ վտանգիս ։

(4) Զինս նիզակ եղեգան։ Ցորժամ յոր և երկաթս նորոգէին զօր ծննդեան երկրածնաց, ոչ այնչափ զերկրածնացն զինուն նորոգել. զի օր ծննդեան այնուհետև անյագ փառնէյն է, այսինքն ուրախալի։ Այլ զէս նկատելով, կամ յէս հայելով, որ չեմ արժանի լուսոյ կամ այլ ինչ բարւոյ, այնու անիծանեմ զօրն, ևն։ Բայց կ օրին. և հին լուծ. գնեն, զինս նիզակէս եղեգն զոր արծանիս, ևն. և խմանի, զէս նկատելով իբրև արդէն եղեալ կամ ծնեալ՝ զանարժանս լուսոյ։

(5) Անուրջն խառնուրդ։ 2 օրին. չեք խառնուրդ. և խմանի՝ 'ի սկսանել առաւօտ ձեանն։

(6) Զնորոգութիւն նոյն երաշխաւորէ. այսինքն յարակայութեանն, հաստատէ։

(7) Փրծայ։ այլ օրին. պրծայ։ Ոչ մնացին զհարւն մերոյս ընտանեկին առաւօտեան. որով առաւելն աղօթէին 'ի ձեռաց գաւառորդին։ Ի շնորհէ ցեղին։ Թուի հայել 'ի բանն եկից. (ԼԹ. 29.) * Լցէք զձեռս ձեր այսօր տն խուրքանչիւր յորդի իւր, և խուրքանչիւր յեղբայր իւր՝ տալ 'ի վերայ ձեր այսօր օրհնութիւն. * այսինքն կատարեցիք զկամս նոյ 'ի վերայ որդւոց և եղբարց ձերոց՝ սպանանելով զնոսա. ուստի և օրհնութիւն տն լիցի 'ի վերայ ձեր։ Ըստ այսմ և նա վարդապետս ասէ, ոչ լցի զձեռս իմ սպանանելով զանգամս իմ զերկրաւորս. որով օրհնեալ, մաննակից լինէի օրէնսդրին մովսէսի, սրբեալ և նուիրեալ տն իբրև զորդիսն ղևեայ։

(8) Անէծք սարածածութիւն։ ձախակողմանս շուրջանակի ծածկութեան 'ի ձեռն վահանի։

(9) Ընդ մրջմնեաց փարակաստանաց խաւարի՝ լուսաւորութիւն յասոյ կենաց խաւանեցից։ մի օրին. Որջմնեաց փարակաստանաց խաւար՝ 'ի լուսաւորութիւն յասոյ խաւանեցից։

(10) Ցօպան խորութիւն երկրի։ 2 օրին. յօպան երկրի խորութեան։

(11) Մանկունս բեթեղայիս կոտորէին։ 'ի Գ. Թագ. Բ. 23. ոչ յիշատակի՝ թէ յորոց էին մանկունքն. բայց քանզի 'ի բեթելայ եկին նոքա, նա վարդապետս համարի լինել որպէս քրմացն՝ զորս յերոբովամ կարգեաց 'ի վերայ բարձանց երինջոցն բեթելայ. (Դ. Թագ. ԺԳ. 31. 32։) Զի և կատարել նոցա զեղծանէ՝ կարծի արարեալ 'ի խրատու ծնողացն, զորս վասն այն կոչեաց մարգարէն՝ որպէս յանցանաց և զաստարկութեան։

(12) Բռորեայ շինականն. արքեմաշաքարս զինականն. է բանն եզեկիելի, (ԼԹ. 17։)

(13) 'Ի զինակոցն. որք են խայթիչ կենդանիքն նման մեղուի. (եզեկ աւելուք։) մժղուկն, մժեղուկք. (մածակ. սմկաի սմնեկ։)

(14) Մծղուկն. փոքրիկ ձանձք զինեաց կամ խաղողոյ, իբր ցեցուցս հրոյ, իբրև ցայտմունք բոցոյ (այսինքն խոլվլածել.) դինան ծաղկացին, 'ի վերայ իմ մանր թօթափեացին իբրև 'ի մաղէ։

(15) Ճնճղուկ, ձանձքն, ալեկոծեալ ծովն, անզօր մնացն, որք են փոքրիկ մժեխք։ Բայց 2 օրին. ճրճիոցն։

(16) Մեղաց օրինակին։ Այս չեք յօրինակս ինչ, և օտար իսկ թուի 'ի կարգէ բանին. զի նա վարդապետն յիշելով զզանազան պատահմունս նոյ՝ որ յեզկարաս և 'ի քննանացիս, գիտէ միայն ցուցանել, թէ զօրութիւն նոյ նաև փոքր և անզօր իրօք պատահանէ զմարդ աւանց վերծանելոյ. և ոչ գիտէ յայտ առնել, թէ այն կենդանիք որոց օրինակք են. ուստի յայլ բանս ոչինչ այդպիսի բացատրութիւն յաւելու։ Եւ որպէս թուի, այդ յաւելուած յայլմէ եղեալ 'ի լուսանցսն իբրև լուծումն, յետոյ 'ի գրչաց 'ի բուն բանն մուծեալ է։

(17) Ըստանձնանձանց փարթից։ բազմութիւն կամ ժողովք շանտանձանձից, որք են (կենեէ։)

(18) Զխասնէշն և գէորէանն. որք են այլ և այլ տեսակք մարդակերպ։ անէէնպանութեան էրևէէ. անշարժ փորքրիկ ոջիլ բուսոց, որ իբր անկեն-դան երևի։ Այսոքիկ հայքն 'ի բանն յոյժ . (Ա. 4։ Բ. 25։) Քրո-նոնծ նոցերին. Ջուր կարծեցեալ, բայց իբրև քար հարկանող և այլոց։ Այս բառ երբեմն կարծիւր նշանակել՝ 'ի ջրոյ կարծրացեալ և սառուց-եալ. համարեալ թէ բառն կարծր, երբեմն կոչեսցանի գլխովն ը սառն, բայց այդ ոչ ստուգեցաւ։ Որ առ աղաղ փէոխ։ Այս ամենայն յիշատակեալք ըստ տեսոյն ազգաց անդէն, կամ տեսար գոլով և անուրք, 'ի հրամայեցին մայ սատանեկ զօրութիւ հարքին զհագարաուն փարասանի բանն գառաղանի, հզօր մտրութեն, յաղթող վիճակաւ, այսպիսիքն հարքին յաղ-թանակ կանգնեալ 'ի վերայ բանաստեղծն։ Եւ են տեղս օրինակք ա-ներևոյթ և հոգևոր տանջանաց՝ չարչարողաց 'ի հոգի մինչև 'ի մահ, 'ի պատիժ եղկելական անօրէնութեանց։

(19) Յոգի և 'ի մահ փանջողաց. յօրինակս երկ՝ չեք 'ի մահ։

Մերոյին յառեղուած երկեն հեծութիւն՝ նորին հոգոյն, առ նոյն տեղւոյս մաղթանաց բանն։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

ԲԱՆ. ԿԹ.

ա. Նաւ արդ՝ վաճառ զի 'ի ձեռն մեծիդ և ամենահնար արուեստաւորիդ իմն եղանութեան Տն և Այ՝ իբր [1] 'ի քրայս ընտրութե փութոյ քոյ սիրոյ՝ համապազ եռամ, և ոչ երբէք պարզիմ. միշտ խառնիմ զուգիլ՝ և ոչ ևս միանամ. ահա զուր՝ արծաթագործ երկնաւոր՝ իմ Ճարտարապետ, 'ի մնոտիս վաստակեալ առ իս աշխատիս, ըստ մարգարէին յայտնի առակի, և չարութիս իմ ոչ հալեցաւ. զոր ինձէն մոլեալ չարաչար՝ իբր զխեռլագար դիւաբախ իմն ողորմելի՝ [2] յանդգնեալ անկարգս խօսիմ՝ զիմն զպարտիսս աձեցուցանել, քան հաշտութե հնարս ինձ այսու կազմել։ Նաւ զի մի [3] անընդել դիպուած, և անկիրթ պատահումն, և անհաւատար հանդիպումն՝ պատրաստութիք հանդերձելոց տանջանարանացն ինձ երևեցին, ամենևին անմոռաց պահեաց առատտին 'ի յիմում մարմնի՝ նշխար մնացուածոց նախնումն անիծիցն. զոր 'ի փոքուէ տարբէ աննարգէ՝ զմեծն է ուսանել։

բ. Որանգի [4] խաղալն ինքնաբերական գիւտք որս-

վայնի՝ բոտոտք ձապուկք շարժողականք, և ազգի ազգիք, որդունք աղեաց գաղտնակուրք, [5] խաղաւարտք հրակայծակք, և բիծք բոցակիծք, և անիծք անկերպաւորք, և երամակք ոմանք քրտնածինք զազրաթորմիք կսկծեցուցիչք և մարմաջողականք։ Նսպատակք [6] այլոց վայրենեաց, ըստ նմանութեան գիւաց գիշերամարտից՝ և մեկնաղէն բարբարոս գնդից խաւարասիրաց, և զազանութե՟ քանասար գայլոց արաբացւոց՝ կորակոր գնացիւքն, արջնաթոյր գունովն, կրկնապարոյր կռածագ կտցաւն, որ զօրէն ունի խայթոցաց կարձի, [7] իբր դժնիկ փշովք խոցոտեալ՝ ծծեն ձգեն զարեանն խոնաւութի, և յանկողինս մահձաց հանգստեանն՝ վաստակս կրից ցուցանեն։ Այլ կարկառեալ ուրուք ձեռն՝ հատուցանել զհատուցումն նոցա նոցին, վաղվաղակի զգան զմտաս վտանգին՝ [8] զոր ազդեն մարմնոյն. և անդէն իսկոյն լերկամարմին փոքր հասակաւն՝ իբր թեւօք իմն թըռիչս արձակեն, և ըստ մարախի ձեւոյ ոստոստեալ՝ այսր անդր տարաբերին. Եւ ըստ բազմապատիկ նենգութե բարոյից դաւօղ աղուեսուց՝ խորամանկեալ խուսափեն [9] 'ի պատուածս բազում ելից, զի յերկիւղէ մահուն ապրեսցին։ Այլ այնքան չքոտի և անքատ անձամբքն՝ ոչ միայն զռամիկսն և զխառնիձաղանձս, այլ և զթագաւորս հզօրս և ահագինս փախուցանեն հանեն տարագրեն 'ի դստիկոն յարկի ապարանիցն բարձրութե, և կամ 'ի բացի բնակեցուցանեն. քաջք արանց արեաց, որք իշխեցին ամբոխից, և տիրեցին ժողովրդոց, և առին զքաղաքս ազգաց, զպարտութի իւրեանց զօրաւոր ձեռինն՝ ինքեանք վկայեն, թէ քանզի ոչ կարացաք 'ի դիմի հարկանել վեհիցն բռնութե, վասն այնորիկ խոյս տուեալ հասաք յայս տեղի։

Դ. Այլ զինչ է ինձ [10] զփոքունց և զանկածից ծաղրականաց ոմանց գոյութեց 'ի կիր արկանել, որք զօրեղ և անհերքելի ջատագովք են ածութեն՝ յիշատակել ինձ զհանդերձեալսն, որք 'ի մարմնոյս անօթինելոյ՝ ընծային պտուղք դառնութե։ Ընդ որս և եկամուտ սատակչականացն ախտից գիւտք, և կերչացն կոյտք անողոքելիք. յորոց չէ՛ զերծանել, քան

Թէ հարկաւ մարմնոյն վտանգի՝ զապագայիցն տոքոք իմաստասիրել. և ոչ տեղի է գտանել ապաստանի՝ փախստեամբ անկանել առ նոսա. այլ առանց կամաց քումդ ակնարկութեան՝ և մարդկային կարք և հնարք վրիպեցան։ Այլ դու բարերար՝ զամենայն ունիս բաւականապէս զկենացն հնար՝ եթէ կամեսցիս փրկել, նորոգել, քաւել, բժշկել և կենագործել. և քեզ փառք յամենայնի՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

(1) 'Ի Տրդատ Ընթրուսէն։ 'Ի ձեռն արտաքինք իմոյ՝ խնամով սիրոյ քո խրախ 'ի քրոջս մարդկութեան միշտ եռամ, և ոչ երբեք պարգեւ, մարգրիտ, արդիւմ 'ի մեղաց. մի օրին. Տաւրուս։ Մինչ խառնեիմ առ 'ի լինել միաձոյլ զուտ տառանց երկպառակութեան տեսակաց. և ասակայն ոչ մտանեմ ընդ իս և ընդ քեզ խաղաղութեան. վասն այսորիկ 'ի զուր աշխատիս 'ի վերայ իմ արծաթագործ իմ երկինաւոր՝ ըստ Տուրգուրէին երեմիայ. Զ. 29։

(2) Յանդգնելով անձարակս խօսիմ։ Ո՛չ զբանս աղօթից անկարգս առնէ, այլ զի լոռ աղօթից ոչ ունիմ առնէ՝ զկարգս իմ, և զանձն. վասն այն յանդգնութն և անամօթ եղեալ խօսիմ, այլ ինչ չի բերանի կրկնել, և այլ՝ 'ի վերայ իմ. որով առաւել պարտաւորիմ աղօթիւքս, քան թէ հաշտութեան գտանելով։ Այլս առ 'ի զգաստացուցանել զխելապատութեն իմ, զհանդերձեալ տանջանսն յառաջ առից՝ օրինակաւ պատուհասիցն զոր առնէին կրեսցէ։

(3) Անընդէւ տխարուած։ Սկիզբն աղօթից առ Այն եղեալ, տառանօր փոխի յերրորդ դէմս։ Զի մի՛ առնէ՝ հանդերձեալ պատուհասքն երևեսցին ինձ անծանօթ դիպուածք. անկիրթ, անտարբեր պատահումն, անհաւատ, անխնամ հանդիպումն։ Վասն որոյ 'ի յիշատակ հանդերձեալ տանջանացն՝ եթող 'ի մարմնի իմում զնմանութիւն ինչ նախանանց անիծից, այսինքն անիծիցն՝ որով անէծ զօձ զերկիր, բռնացուցանել փուշ և տատասկ. յորում ծածկապէս խնայեալ լինէր, թէ մարմինս մեր ծնանելոց է վշտագնիչ կենդանիս և տունս, որպէս զճճի, զորդն, զանիծ, զոջիլ, ղուս, զկատաղութեան, զդիծս։ ԵՒն։ զոր 'ն ի տուտ փորէ, 'ի փորք և յանարգ իրաց անտի՝ որք զմեզ չարչարեն, կարեմք ունանել զնծ տանջանս հանդերձելոյն։ Զմերոցրեալ վշտագնիցս՝ առնէ յառաջին անիծիցն թողեալ 'ի մեզ. վասն զի այսորիկ ծնանին 'ի մեզ յանմաքուր հիւթոց. յաղտեղութեանց, կամ յօտար ջերմութեան արեան. որք ոչ լինէին յանապական մերձակին անմեղութեան։

(4) Խաղաղն խնամաբերական։ Ծնանելն կամ եռացումն խնքնածին գիտակից որովայնի, որպիսի են բորբոք ճաղատ, այսինքն ճճիք որովայնի՝ փափկանք և կակուղք, որք 'ի փորի ծնանին և մեծանան. որդանեն ուղնոյ, որք կան յաղիս մարդոյն, գաղփաղւրտ. ի օրին. գաղփաղւրտ, որք գտոլո ունեն զանուցիչ հիւթս կերակրոյն, կամ մաշեն զաղիս։ Դիւռեամ տառանօր, զի յայսմ տեղւոջէ սկսեալ մինչև 'ի վերջ անկարգ ընթանայ բանն առանց բայի. այլ յարեւլ է յայն որ առնէ, յորոց չէ՛ ընծանէւ ևն. ևոր առել. խնքնածին ճճիք և որտանք մարմնոյ՝ լու, ոջիլ, և այլք ևս բնածինք և եկամուտք, յորոց չկարեմք զերծանել, զինչ ծանուցանեն մեզ՝ թէ եւ հարկաւ մարմնոյն վտանգի՝ զապագայիցն տոքոք իմաստասիրել։

(5) Խաղաւարք հրախայծանք ։ Ուսոյցք մարմնոյ թարախտոյք , յառաջ եկեալք յապականութենէ արեան . (չխզան . կամ սխիլրձնիկ .) որք երբեմն հուր այրեն , կամ կարմրացեալ ծայրիւն երբեմն կայծակն երեւին ։ Ի բէնծ բոցալնծ . մանրիկ բուշտք կարմրագոյնք , որ երբեմն բոց կծանեն կամ եռացուցանեն . որպէս ծաղիկն , վարսակն ։ անէնծ անկերպաւորք . յոյժ մանունք , որք երբեմն ձու՝ երեւին անձեւ , որպէս 'ի գլուխս մանկանց և կանանց . Ի էրամանք ամանք . բազմութիւնք ոջլոց , որք յաղտոյ քրտանց ծնանին , և ազգութիւն լցեալք են , և եռացուցանեն զմարմինն ։

(6) Այլոց վայրենեաց ։ Բազմութիւնք լուաց՝ որք առաւել 'ի գիշերի առաջեն խայթելով , մեծամասն բարբարոս . Ճնշմամբ լուծեալ զմնացորդեալ անգղջում գնդից , որպէս են սապատաւորիչ զօրքն . զի լուք առանց միաբանութեան մարանչին , և նմանեին փախստեայ զօրաց , դժնդակ գազանց ։ Զքամոն փախստաւոր , հին լուծ . մեկնէ՝ արտաքոյ . բայց նա վարդապետեան զատ գնէ զայն բառ ։ Այլ թուի լինել պարսկական՝ 'ի բառիցն փէմ , այսինքն չար , ժանտ , և ոէր , այսինքն գլուխ , յորմէ և անուար՝ նշանակել չարագլուխ ։ Կամ , թերեւս 'ի յոյն բառէն փաննօս , և փանոս նշանակէ աղատաւոր , լափող են ։ Արձանագիր գուանչ . մեա կամ թուխ գունդեւ . որոց կառուցն կէրնապարոյր , կրկնեալ և շղջեալ 'ի բերանն կոյս ։ կոածագ , առվորաբար մեկնի՝ ծայրն կեռ . բայց թուի բարդեալ 'ի կատ բառէն . այսինքն որոյ ծայրն սուր կամ հաստատուն է , կամ կռեալ և ամրի . որ ունի զնմանութիւն խայթոցի կարճի ։

(7) Իէր տծնէ ։ Դժնեկն կամ երբեմն գոյական նմանի փոխանակ ակքանի . (առ . ակքէն .) և կամ իբր ածական , դժնեայ և դժնդակ փշովք ։

(8) Զոր ադքէն մարմնոյն ։ 2 օրին . մարդոյն ։

(9) 'Ի պապուածս , 'ի խորշս կամ 'ի պատսպարս բաղում էկից , բազում ճանապարհաց փախստեան ։

(10) Զփոքանց և ղանկածից ։ Ցայլ տպաւորի եղեալ կայր , փոքանց , տակայն ուղղեցաք լառ մեր օրինակաց . զի զպատմականն հոլով պահանջէ բանն . որպէս և յաջորդն՝ ղանկածից . զի շէր զփոքր և զանկար կենդանեաց ճաւեմ , որք աղբեղ . բայց եթէ 'ի ցուցանել՝ թէ հզօր և անյաղթելի պաշտպանք են խրատուցն նոյ . և արքա այնոքիկ են , որք 'ի նոյն խոկ 'ի մարմնոյ մերմէ ծնանին ։ Ընդ որս և էկամուտ ։ Հին լուծ . եկամուտ տխատ խմանոյ գլուն . զի ոչ 'ի մէնջ ծնանի առէ , այլ արտաքուստ գայ ։ Սոյնպէս կէրլայն կոյփ , խմանոյ զոջիլն , և զայլս ։ Բայց երկոքին եա անյարմար . զի նա վարդապետեան՝ ընդ բնածինս կարգեաց զլուն , և զոջիլն . և տպա յաւելու , թէ բաց 'ի սոցանէ՝ որք 'ի մերմէ մարմնոյս ծնանին , են և արտաքուստ մտեալ անոյք սատառակիչք , այսինքն զանազան հիւանդութիւնք , որք յապականութենէ օդոյ՝ կամ 'ի թունոյ ներգործեն 'ի մեզ ։ Այլև զանազան բազմութիւնք կերչաց , կամ ապականողաց , այսինքն մարախոյ , մկանց , գայլոց , առիւծուց , օձից , և այլ գազանաց , որք անողորմք են , և ոչ կարեմք զերծանել . այլ 'ի վտանգ մարմնոյ անկեալ 'ի նոցանէ , բռնադատիմք արքօք զապաւէն ապաւինել 'ի մեռանել . և չիք աւագի ապաստանի՝ անկանել առ նոսա , այսինքն փախչել յայն աւելիս ։ Եւ եթէ երբեմն մարդկային հնարիւք զերծանիմք յայնցանէ , այսինքն 'ի հիւանդութեանց , կամ յայլ վնասակարաց , կամօք բարերարութեան քո յաջողեն այն հնարք , և ոչ 'ի մերմէ ճարտարութենէ ։

Մերովին յառաջեալ նշխին կենդանեաց՝ նորին հոգւոյ, առ նոյն ողերս մաղթանաց բանն ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

ԲԱՆ. Հ.

ա. Եւ քանզի համբարձեալ գլխաւորութեամբ բանիս 'ի փոքունց աստի երկրայնոց՝ չհամարելոց ընդ գոյս եղելոց՝ [1] 'ի մեծագունիցն տեսակս, աստէօր զտօնելի հանդէս իրաւանց ահաւորին անաչառութեան ։ [2] Որ զի թէ մերձաւորագոյնք իցեն Այ՝ իբրեւ զնախածանօթ հայրապետութիւն, եւ կամ մաքրագոյնք՝ որպէս մարգարէքն, կամ անբծագոյնք՝ իբրեւ զառաքեալսն, կամ ընտրելագոյնք՝ որպէս մարտիրոսն, եթէ ոչ դու մարդասիրեսցես անճառելի բարիդ՝ եւ անփոփոխ խնամակալութիւնդ՝ եւ անպակաս ողորմութիւնդ, ընդունայն է ինձ փրկութիւն առ 'ի նոցանէ ։

բ. Զի եթէ առ նոյն ինքն աբրահամ ձայն արձակիցեմ, իբր ողորմագին առակ ընչեղին ինձ վարդապետէ, 'ի տապոյ անտի պապակեալ, կաթի միոյ ջրոյ ոչ բաւականանայ. քանզի եւ նա փակեալ է [3] ընդ կարեօք հաստատակաց անհնարութեան ։ Իսկ եթէ առ մովսէս, եւ նա զգածեալ է տկարութեամբ, որ ոչ զօրեաց առնն փրկութեան, որ [4] զհայթայթանաց կորուստն 'ի պահպանութեան աւուր ժողովէր ։ Իսկ եթէ առ ահարոն, եւ նա ինքնին իսկ կարօտացաւ մաղթողի ։ Իսկ եթէ առ դաւիթ, 'ի մէջ բարեացն առաւելութեան՝ ստգտեալ է եւ նա ։ Իսկ եթէ առ նոյ եւ յոբ՝ եւ դանիէլ, զայս եզեկիէլ մարգարէ մեկնեաց՝ յանուանէ իսկ յիշատակեալ զնոսա, եւ զայն ընդ նոսին իբր 'ի դիմաց Այ ազդեալ, կենդանի եմ ես՝ ասէ տէր, թէ ոչ ապրեցուսցեն զուստերս եւ զդստերս իւրեանց 'ի բարկութենէն՝ որ հասանիցէ, բայց եթէ ինքեանք միայն ապրեսցին ։ Իսկ եթէ առ պետրոս վէմն հաւատոյ, 'ի քումդ խնամոց [5] խուն մի խիթացեալ՝ եւ նա ընդ կրիւք իմն գրաւեցաւ ։ Խոստում աւել զբազմացն գումարութեան [6] խոնարհեալ առ կարիս կարիս, թէ եւ յաւէտ երջանիկք ե

ցեն ։ Ընդ որս և [7] յովասու ամն մարգարէի 'ի մէջ
ածառաքն սպասաւորութեն մարդկօրէնն գայթագ֊
ղութն ամայ յոլովից անթարգմանելի, թէև 'ի դէմս
իմն մեկնութեն ձևակերպեսցի ։

Է. Եւ քանզի չափեալ սահմանեցաւ զօրութն փրր֊
կութեն մարդկան, և ցուցան նոքա ողորմեալք բա֊
րերարիդ՝ և զօրացեալք ամենակալիդ. կոչեցեալք
պաշտպանողիդ՝ և քաւեցեալք հնարաւորիդ. [8] շնոր֊
հեալք ազատեցուցչիդ՝ և բժշկեալք անախտակա֊
նիդ. կենագործեալք անապականիդ՝ և լուսաւո֊
րեալք նորոգողիդ, այսուհետև գիտացեալ զաւակն
որքանուէց հողածին բնութես, [9] որք մխիթար են օրի֊
նակաւն նմանաբար հարազատապէս վհատութե յու֊
սահատելոց, ահա առ քեզ դիմեցից՝ որդի ամ կեն֊
դանւոյ քո օրհնեալ յամենայնի ։ Մանաւանդ [10] զա֊
ւակն ազգակից այսմ մաղթանաց աստանօր յիշեալ,
զվերագրելոցդ բան վերստին արդարացուցանէ. բա֊
րի է, ըստ իմաստնոյ ուսման երջանկի, անկանել 'ի
ձեռս այ, և մի 'ի ձեռս մարդկան. զի որպէս մե֊
ծութի նորա, և ողորմութի նորին ։ Եւ այս բան՝
թէև զդաւթին իմն գծագրէր, որ զերեքմասնեան
հարուածն ածեան առաջի եդեալ՝ ընտրեաց ինքնին
կամաւորաբար զդատակնիք մահուն սատակման՝ իբր
զկենդանի քո հաւատոցն յաճախութե, քան զեր֊
կուան եւս այլ փոքրկունս՝ որք տանջենն և ոչ ողոր֊
մին. սակայն և իմն օրինակութի բանիս պատկերի [11]
ճարակեցելոյ հնարս կենաց կորուսեալս անձին՝ ոչ
է այլայլեալ յարմարութե. զի ոչ եթէ զփրկեալսն
նուաստացուցանեմ 'ի մատենի այսր ողբերգութե, [12]
առանց որոց ոչ է մատչել առ տէր, այլ զփրկողին
անուն պատկեմ, և զշնորհ նորին՝ առ ամենեսին բա֊
րեհռչակեմ. և զանուին բարձունսն 'ի թախծս վա֊
րուց՝ խոստովանիմ բանիս պայմանաւ յաւէտ [13] կա֊
րօտեալ ողորմութեն դեղոյ ։

Ը. Րհամ դու կեանք, դու փրկութի, դու բժշկու֊
թի, դու անմահութի, դու երանութի, դու լուսա֊
ւորութի. արա ինձ անդորր 'ի մեղացս աշխատութեց,
[14] զի և քեզ լիցի հանգիստ 'ի մշտադատս հեծութեց՝
ձանձրացուցիչս թախանձանաց. որ ոչ այլ իւիք,

քան թէ փրկութիւն մարդկան պարարիս, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

---

(1) 'Ի Ճճնագործից փեսային: 'Ի փոքր կենդանեաց անտի, որք չհամա- րին ընդ գոյս եղէնց, 'ի ստեղծեալ էակս. (Որք ըի 'ի Թիւս պարագայից ոչ յիշատակի անուամբ լուսոյ, ոգւոյ, եւն.) համարձակեալ ընթացս բանիս 'ի կարգս մեծագործից, սասցից զգործ անաչառ խրատանցն այ. Որք ըի ոչ միայն օրկար ստեղծուածքն վրէժխնդիր են այ 'ի պատժել զյան- ցաւորս, այլ եւ զասք մեծագործից սքչ անկարողք են 'ի մեր փրկութեն, եթէ ոչ մարդասիրեսցէ նծ: Կմ, մեծագոյն աստակս խմս սատանիկ եւ զօրաւոր ապացոյցս խրատանցն Այ, առ որս համեմատեալ երկրաւոր օրինակքդ, ոչ միայն փոքունք են, այլեւ ոչինչ համարելիք: Ցեսոյ 'ի կարգին յիշատակէ զչորս զասս Սրբոց, զնահապետս, զմարգարէս, զա- ռաքեալս, զմարտիրոսս:

(2) Թիւ Քերովբէականք: Թէ՛ եւ մերձաւորք Այ, եւ առաջինք քան զայլսն յածապաշտութեն, երբեմն զնախածանօթ հայրապետսն, երբեմն զնա- հապետսն՝ նախկին Ճանաչօղս եւ դաւանօղս Ճշմարտին Այ: Յ օրին. հայրապետութեն. մի օրին. հայրապետութեն. եւ նոքին մօրք խմանի՝ հայ- րապետք, եւ նախադրութեն նէրն, վարի ընդ հայցականի եւ ընդ տրա- կանի:

(3) Ընդ կարեօք հաստութեան: Նա ինքն արքահամ նորքոյ անկեալ էր ակարութեն յայնմիկ երս՝ որ համարակաց անհնարին էր. բաս որում ասէր առ մեծասսուն, թէ մինչ մեծ կայ ընդ մեզ եւ ընդ ձեզ, չէք հնար անցանել: (Ղուկ. ժզ. 26:)

(4) Զհայնայնանց նրկաւն: Զապրանաց կամ զախտոյից խուխն առ 'ի այրել. 'Ի պոհպանութենն սասր, 'ի չարաթու ժողովէր: Զայս այր ասէ ոչ կարաց ապրեցուցանել մովսէս. զի համարի՝ թէ զնելն զնա 'ի պահ, եւ յարադրելն զպատիժ նորա՝ էր վասն ապրեցուցանելոյ զնա: (Թուոց. ժե. 32:)

(5) Խսան մի: 'Ի քոց խնամոց փոքր ինչ կասկածեալ կմ զայթակղեալ. ընդ նէնոն երկիւղի ըմբռնեցաւ՝ 'ի գնալն 'ի վերայ ծովուն, կամ յըմբռն- ման զինչերին, եւ յուրանալն:

(6) Խանարհեալ առ կարիս: Թողում յիշատակել զայլ բազումս յար- դարոց, որք վրիպեցան յայլ եւ այլ սխալմունս, 'ի պէսպէս յանցմունս ակարութե:

(7) Ցուլատու ոխ, առն այ, որ եկն յերկրէն յուդայ առաքմանքն այ՝ յանդիմանել զկռապաշտութիւն յերոբովամայ. (Գ. Թագ. ժգ. 1:) Զսա յուլատու կոչէ, առեալ որպէս կարծեմ, 'ի պատմութէ ինչ մարդա- րէից՝ եպիփանու կարծեցեալ. յորում յուլատ անուանի այս մարգարէ: Իսկ յովսեպոս, եւ այլք ընդ նմա կոչեն ադդով, կամ յադդով. ստրատա- գիանոս կոչէ ոէմեա, կղեմէս աղեքսանդրացի սամեաս. բայց ամենայնն՝ անյայտ: Այս անուանք յիշատակին ('ի Բ. մնաց. ժբ. 5. 15. ժգ. 22.) առ ժամանակօք ռոբովմի եւ որդւոց նորա. յորմէ առեալ են եւ յարմարեալ առնն այ: Արդ՝ սորա մարդկօրէնն գայթակղութն, այսինքն խաբիլն 'ի բեթելացի մարգարէէն, հայ յուղղոյ անցարգմանելի. բաղձանց անխմանալի մնայ, թէ զիարդ անսաց սուտ մարգարէութեն բեթելա- ցւոյն, կամ թէ անսալովն ծանր մեղաւ, թէ ներելի. եթէ ներելի, ընդէ՞ր մեծապէս պատժեցաւ մահուամբ. եւ եթէ ծանր, ուստի՞ նմա այն պատիւ, զի մարմին նորա անծախ պահեցաւ յառիւծոյն, եւ ոս- կերքն անկէզ թողան 'ի յովսիայ արքայէ: Այսպիսի ասէ՝ բաղձանց

գժտապրելմանցն նման. Եկ և 'ի դէմս իմ մեծութէ յանձներգեցոյ. այսինքն թէև մեկնութէ ինչ գտանեմք լուծումն, ասելով թէ Թողլ եմ ես ճշմարիտ մարգարէին խաբել 'ի բէթէլացի մարգարէէն, զի յետոյ պատուհասելով զնա՝ այլոց կռապաշտելոցն խրատ լիցի. զի եթէ ընդ փոքր յանցումն ծառային իւրոյ զայրացայ ես, զիա՞րդ զմեծամեծ յանցանս այլոց անտես առնիցէ. և զի ճշմարտելով բանիցն իմ 'ի վերայ մարգարէին յանցուցելոյ, խնասցին՝ թէ նաև այլ բանք նորա 'ի վերայ յերոբովամայ՝ 'ի գլուխ ելանելոց են: Իսկ թէ զիա՞րդ մարգարէ իմ գոլով. խաբեցաւ 'ի սուտ մարգարէութենէ բէթէլացւոյն, ասեմք՝ թէ խաբեցաւ ոչ իբրև մարգարէ, այլ իբրև մարդ. զի ոչ միշտ զամենայն ինչ յայտնէր իմ մարգարէից. քանզի և նաթան մարգարէ էր, և 'ի հարցանել զնա դաւթի՝ շինել զտունն իմ, պատասխանի ետ՝ առնել որպէս և հաճոյ է նմա. և սակայն 'ի գիշերին յայտնութեն առեալ յիմ, դարձոյց զբանն՝ չշինել. Եւն: (Բ. Թագ. Է. 3. 4. 5:) Այսպէս և այրն իմ համարեցաւ՝ թէ գուցէ բէթէլացի մարգարէին յայտնեաց իմ զամենայն 'ի տուն նորա, զոր ինքեան յայնժամ ոչ յայտնեաց. և թէպէտ կարող էր և պարտական՝ քննել զճշմարտութիւն մարգարէութեան նորա, բայց ակարացաւ և զանց արար. որով և յանցեաւ՝ թէ և ներելի ըստ հատորակ կարծեաց վարդապետաց. ուստի և պատիժ նորա եղև առաւելին մահ մարմնոյն, որով 'ի հոգւոյն գերեզմանէն զերծաւ: Իսկ եթէ ծանր եւս համարեսցի յանցումն նորա, սակայն յետոյ ծանուցեալ զղջացաւ. ուստի և իմ 'ի պատուհասելն զնա՝ պահեաց անկանելին զպատոխ ծառային իւրոյ: Այսքանիւք, և այլ ևս բանիւք՝ զորս թողումք վասն համառօտութեան, մեկնեն ըստ իւրեաց ինչ մարդկօրէն զայթակղութիւն մարգարէին իմ. զոր միայն գիտէ աստուածոր նք վարդապետս, առ 'ի ցուցանել թէ արդարոց ևս պատահէ անկումն, որով ողորմութեան իմ կարօտին: Այլ ոչ գիտէ ասել, թէ երկոցունց ևս մարգարէութիւն ճշմարիտ էր, և թէ իմ ես նոցա հակառակ միմեանց մարգարէանալ. (որպէս ոմանք կարծեցին անզգուշաբար:) Այսպիսի մնաց և ոչ նշանակեաց մի կայ 'ի բանս մեր վարդապետիս. նաև կարէր իսկ ոչ այսպէս կարծել, յայտնապէս ասելով գրոյն. (Գ. Թագ. ԺԳ. 18.) թէ ստեաց նմա բէթէլացի մարգարէն:

(8) Ընորհնեալ աղափեցոյցէր: Ի ներումն գտեալք յաղաւեցուցէք: Այսպէս զօրութ բացատրական են նմ սեռական անուանքն՝ որ յայսմ բանի:

(9) Որք մխիթար էն ... վհատութէ: 2 օրին. մխիթարէն ... վստահութէ: Երկոքին ևս ունին զպատշաճ միտս, այսինքն աւետանելով զի և սրբքն 'ի քէն գտին զողորմութիւն 'ի մեղանչելն, և այսու գիտելով զչափ կարօտութեն հոգեղէն բնութեանս 'ի սխալմունս նոցա, նոքա իբրև համակարիք մեզ՝ երկնային օրինակաւ մխիթարիչք լինին մեզ վհատութեն յուսահատելոց, կամ մխիթարեն 'ի վստահութեն յուսահատելոց կամ լքելոց. վասն որոյ և ես առ քեզ դիմեցից, ևն:

(10) Զասան աղաւնից: Զվճիռն՝ որ նման է այսմ մաղթանաց. և է բանն սիրաքայ. (Բ. 22.) զոր և դաւիթ ասաց առ գադ. (Բ. Թագ. ԻԴ. 14:) Այս բան սիրաքայ՝ ... , թէպէտ և զդաւթի երից հարուածոց ընտրութիւն յայտ առնէր, որով 'ի սովոյն՝ 'ի հալածմանէն՝ և 'ի մահուանէն ընտրեաց զվերջինն՝ զմահն, որ յետ լինելոց էր, ուստի հանդերձ ողորմութբ, միանգամայն յանձնառութբ 'ի կամս իմ մեռանելոյն՝ կենդանիք լինէին հաւատովն յարուն 'ի ձեռն քոյ. իսկ այլ երկուքն՝ սով և հալածումն թէպէտ և փոքունք քան զմահ, բայց անմիջաբար յերկրորդ պատճառաց լինելով, անողորմաբար

տանջելն ։ Այլ՝ թէ և Դաւիթ և սիրտք զխնդրութեան պատժոցն տառապելոց, և ս զնոյն օրինակեալ ասէ՝ յխնդրութեան բարերարութեանց, լաւ համարելով անկանել առ նծ, քան առ արդարս 'ի մարդկանէ ։ Եւ այսու ոչ եթէ նուաստացուցանեմ զՏէրն, այլ զանուն փրկողին մեծացուցանեմ, և շնորհաց նորա և ողորմութեան զամենեւին կարօտ խոստովանիմ, որով և ամէն պատիւ տալ մեծանայ. քանզի տալ փառք են նորա յայ ունել զնմ, քան յմեղաւորաց. որպէս տալ պատիւ է մարդոյ՝ 'ի ձեռանէ թագաւորի հանդերձ զգենուլ, քան թէ իւրովք զգաւորովք առնել զայն և ագանել ։ Ուստի (յայսմ. գ. 10.) ամէն զպատկառս իւրեանց զնէին տաճարի աթոռոյն նծ, նմա ընծայելով զնմ փառս և զպատիւ. նշանակեալ թէ այս խոստովանութիւն էր նոցա պատիւ փառաց ։

(11) Ծարաւեցելոյ հնարս կենաց ։ Իմա երբեմն ներգործական. այսինքն ձարակաղի կամ խնդրողի հնարս կենաց ։

(12) Աստանց որոց ունէ ձոփչեւ ցի տաանց միջնորդութեան որոց ։ Բայց զայս իմա ոչ բացարձակապէս և առհասարակ յաղագս նմ բարեաց՝ զոր յայ ընդունելոց եմք. զի այսպիսի բացարձակ և ընդհանրական միջնորդ՝ մի միայն է յս քս տէր մեր ։ Այլ իմա զհամարձակ մատչելոյն առ նծ. զի ամէն արժանաւորութիւն և համարձակութիւն տայ մեզ տալ վստահութիւն մատչել առ նծ. այլ և ըստ առաւելութեան մասնաւոր բարեաց՝ զորս նծ սահմանեալ է շնորհել մեզ բարեխօսութ որոց ։ Որպէս բարեկամացն յոբայ սահմանեալ էր տալ թողութիւն աղօթիւք յոբայ ։ (Յոբ. խբ. 8 ։)

(13) Կարօտեալ ողորմութեն ։ Այս ոչ համառօտ ասացելոյն 'ի բանն ծթ. 2. վասն որոյ, թէ ավելի են ողորմութ ։ Զի արդարք գոլով, չեն կարօտ քաւչական ողորմութ, կմ ներողութ, այլ արժանիք պարգեւաց ։ Իսկ առաւել խօսի ըստ մարդկային սխալմանց նոցա, առ որս կարօտ զասան նծ ողորմութեան 'ի ներել, և երբեմն՝ տալ քան զայլ մեղուցելոյ՝ վասն բարձրութեան շնորհացն ։ Տեսանեմք զի տալ զպյրացաւ Ած ընդ որոտմն մարխաւմու ընդդէմ մովսեսի, քան ընդ որոտմն ամենայն ժողովրդեանն, ըստ բանին իմաստ. (Զ. 8.) *Որովհետեւ ներելի ողորմութ է. հզօրք հզօրագոյնս պահանջեսցին || ։ Եւ երբեք՝ զի արդարոցն տալ պէտս ունի ողորմութեան առ 'ի պահպանելոյ 'ի մասնաւոր մեղաց իւրոց. քանզի կեցեալն յարդարութեան գժուարաւ ձանաչէ զիւր յանկցումն. որդի Դաւիթ ասէր բարօրումն ոչ ծանեաւ զմեղս շնութեանն և սպանութեան. մինչև պէտք եղեն նծ առաքել յանդիմանութեան 'ի նաթանայ առ 'ի զղջալ ։

(14) Զի ոչ թէ՛ղ Ետր հանգեալ ։ Գեղեցիկ այլաբանութեամբ է բերեալ հոգւոյ 'ի յորդորել զզգուշութեան նծայինն. ասաց թէ ոչ՝ նծ ոչ նոցա 'ի զղջման կամ հեծութեանց մեղաւորին, այլ իւրեւ 'ի ձայն քնարաց զուարճանայ ։

Սերովբէն յաւելուած հրէին հեծութէ՝ նորին հօհուլի, առ նոյն աղէրս ճաշթանաց բանի ։

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ ։

ԲԱՆ. ՀԱ.

ա. Եւ քանզի [1] երջանիկքն և փառաւորեալք ս̃բոցն պարք, յորոց ոմանք դոյզն ինչ գթեցին, և յաճախագոյնս հաստատեցան. փոքունս սասանեցան, և մեծագոյն վառմամբ նշուլից հոգւոյն մաքրութբ լուսաւորեցան ։ Յորոց [2] միոյն՝ զգանկուածոյն յայտնէ զհասարակատեղծն տկարութի, իսկ միւսն՝ զգերազանցն քան զբնութեն օրէնս, վարս և առաքինութիս հրեշտակականս ։ Եւ արդ՝ նոքա որ օրհնեալքն են յամենիշխան բերանոյ ա̃ծութե հօրն ք̃ի, ընտրեալքն՝ տօնեալքն՝ խնկեալքն և բարեբանեալքն, իբրև զանդամս ք̃ի պաշտեցեալք, և իբրև զօթեվանս հոգւոյն ս̃բյ յարդարեալք. [3] յորս չիք ինչ նշմարանք և կամ գիւտք խաւարի, այլ ամենևին անկեղծութի և լուսաւոր արդարութի, և որքան մարթ է՝ զմարդն ա̃յ՝ ա̃յ նմանեցուցանել ։ Սերեալք պարզք և անպատկառելիք. կրօնք բարձունք և անխոնարհելիք. կեանք զգաստք և անըստգտանելիք. [4] պաշտօն առ ա̃ծ կարծր և անփոխարկելի. ընթացք արիականք և անկասելիք. ճշմարտութի միատարր և անցնդելի. դիմադրաւութի զօրեղ և անհերքելի. տեսաւորութի պայծառ և անսայթելի. իմաստասիրութի վերնական և անկոխելի. պաակեր մաքուր և անապականելի ։ [5] Որոց կերպարանս և զյիշատակս անուանցն աղաչել՝ ա̃ծ իսկ վարդապետեաց, և նոքօք հաճութի ՚ի մէջ խռովութե արարչիդ բան լուսաւորեաց ։

([6] Բանք դամնջալիք հաղորդեցացուցից ա̃յ ։)

բ. Այլ ես անպիտանս յամենայնի, և որքան բան զօրէ՝ պարսաւեալս. որ մինչդեռ արթունս եմ, նիրհեմ. մինչդեռ զգաստ երևիմ՝ թմբրիմ. ՚ի

բարեպաշտելս իմում՝ գայթագղիմ. մինչդեռ ազգա-
թեմն՝ և վրիպիմ. 'ի յընթանալս իմում՝ և կասիմ.
յարդարանալս իմ՝ և մեղանչեմ. 'ի խաղաղանալս
իմում՝ ամբոխիմ. մինչդեռ արշաւեմն՝ առ 'ի յե-
տոյսն հակամիտեմ. 'ի չուելն իմում՝ ընդ կրունկն
դառնամ: Ընդ լուսոյն մասին՝ և խաւար յարեմ.
ընդ քաղցրութեան ճաշակ՝ օշինդր խառնեմ. [7] ընդ
կուզս բարեացն՝ չարիս հիւսեմ. ընդ կանգնելն՝ և
կրկին գլորիմ: Ծաղկիմ, և ոչ պտղաբերիմ. ասեմ,
և ոչ առնեմ. խոստանամ, և ոչ կատարեմ. ուխ-
տեմ, և ոչ վճարեմ: Կարկառեմ, և անդրէն ամ-
փոփեմ. ցուցանեմ, և ոչ ընծայեմ. մերձեցուցա-
նեմ, և ոչ մատուցանեմ: [8] 'Ի ճարակել խոցուա-
ծոյս՝ անդրէն վիրաւորիմ. 'ի հաշտեցուցանելն՝
վերստին խռովեմ. [9] զուր հանդիսանամ, և իրա-
ւամբք պարտաւորիմ. [10] գրիմ, և իսկոյն եղծանիմ.
նաւեմ, և [11] 'ի գիծն թուլանամ. սկսանիմ, և 'ի
հանգիստն ոչ ժամանեմ: Կարգիմ, և դարձեալ
սասանիմ. լնանիմ, և կրկին հեղում. [12] շարունա-
կիմ աստ, և անդ 'ի ստորևս հոսիմ. բարդիմ, և
անդէն տոչորիմ: Հիմն արկանեմ, և ոչ գլխաւո-
րեմ. սակաւ վաստակիմ, և բիւրս վատնեմ. դոյզն
գանձեմ, և անթիւս սպառեմ: Զայլս խրատեմ,
և ես ինքն անփորձ եմ. միշտ ուսանիմ, և երբէք [13]
'ի ճշմարտութի գիտութե ոչ հասանեմ: Զշինեալ
չարիսն՝ նոյնչափ արծարծեմ. սուղ ինչ քաջալե-
րիմ, և առաւելագոյնս լքանիմ. լարիմ, և իսկ և իսկ
առ նմին մեղկիմ. զայս կարկատեմ, և զայն պատա-
ռեմ. խլեմ [14] զեղինճն, և տատասկ տնկեմ: [15] Ընդ
ամբառնալըն՝ և այսրէն բերիմ. մտեմ 'ի բոյնն ա-
ղաւնի, և անտուստ ագռաւ ելանեմ. գամ սակաւ
մի սպիտակ, և սրանամ դառնամ բնաւին սևա-
ցեալ. ասեմ զիս [16] քեզ դաւանել, և սպասողին նը-
ւիրիմ. ընդ յանդիմանն լինելն, և թիկունս դար-
ձուցանեմ: Մաքրիմ, և այլ մրճոտիմ. լուանիմ,
և նովին զաղրանամ. կերպարանիմ զդաւթին, և
գործք զսաւուղայն կատարեմ. շրթամբք ճշմարտեմ,
և ստեմ երիկամամբք. աջովս մատակարարեմ, և
ահեակ կողմամբս աւերեմ: Ընդ երկրագործութե

ցորենոյն՝ որոմն սերմանեմ. 17 'ի բարձրագոյն իմաս-
տիցն՝ վայր իջեալ ես ինքն գտանիմ։ Հրեշտակա-
նամ յերեսս, և 'ի խորհուրդս դիւանամ. 18 'ի յոտս
հաստատիմ, և 'ի միտս տատանիմ. սուտ ձևանամ,
և իրօք խոտորիմ. կեղծաւորիմ արդար, և ար-
դեամբք ամբարշտեմ։ Պասիմ 'ի պարս հեզոց, և
ընդ այսս կաքաւեմ. 'ի մարդկանէ գովիմ, և 'ի տե-
սողէդ պարսաւիմ. 'ի հողածնելոցս երանիմ, և
յորդւոցն լուսոյ աւաղիմ. հաճոյանամ յետին ռամ-
կին, և թագաւորիդ մեծի յաչաց ելանեմ։ Զա-
տեանն դատաւորին թողեալ, 19 խառնակրօնիցն ա-
ղերսեմ. հերքեալ'ի վեհիցն, 20 սոսկականացն սպր-
դիմ. մարմնովս արտաքուստ պճնիմ, և անձամբս 21
երփնիւ ճային ճանաչիմ. հպաւորիմ դաշն հաստա-
տել, և ուխտակորոյս արտաքս մերժիմ։ Այսօր մա-
քուր հոգեկիր, և վաղիւ մոլի խելագար. զտէրու-
նի պատուէրն լքեալ, թելադրուն օձին հետևիմ.
արիանամ զօրապէս, և վատթարագոյնս ընկրկիմ.
զծանրութի̃ աւուրն բառնամ, և 'ի ժամ վարձուն
անմասն ելանեմ. 'ի բացուստ ճոխոմն խօսիմ, և 22
'ի պատասխանատուութե̃ն պահու պապանձեալ կար-
կիմ. 23 'ի յելս արևուն հարուստ երևիմ, և ընդ ե-
րեկս ունայն դեգերիմ։ 'Ի յաթոռս ծերոց բազ-
մեալ, և խելայեղից կցորդիմ. ննջեմ խնթիւ, և
արհաւրօք զարհուրեալ զարթնում։ Զանդաս-
տանս կամացս՝ չարաչարս հերկեմ. 24 փոյթ̃ ի̃նամով
'ի չարիս. միշտ անառակ որդիս. անդարձ տարա-
գրեալս. անզղջական զառածեալս. անմխիթար տրտ-
մեալս. ինքնագրաւ գերեալս. մահու և ապականու-
թե̃ ծառայեալս. անողոքելի տանջեալս. անփրկելի
մատնեցեալս. անպատուաստելի հատուածեալս. ան-
արծարծելի շիջուցեալս. անկազդուրելի խորտա-
կեալս. անհանդերձելի կործանեալս։ Եւ եթէ պարտ
է զաստուծն աստանօր ասել անօրինեալս անձին նա-
խատինս, ահա գրեմ, գրեմ և 25 ոչ անխայեմ 'ի
խռիւս նիւթեալ գեհենին։ Ստացուածս 26 նախան-
ձու նորոյս ադամայ երկնայնոյ, որպէս և կայենն ա-
ռաջին՝ հնոյն և հողեղինին. որ ունիմ զբնաւն աս-
տուստ 'ի յանձին զնշանակ ամբաստանութե̃ս, ոչ

զչնչոյս տուրևառութիւն, այլ զբանիցս կշտամբու-
թիւն։

Է. Ո՜ւ արդ՝ ո՛ւր իցեն փրկութիւնքն, ուր սկզբնա-
հայրն հաւատոց՝ 'ի յուսահատութեան վայրի՝ զանգըր-
թութեան իմ չարիս կրկնէ. մեծն մարգարէից՝ քա-
րամբք բանից կոչկոճէ. [27] արին բարեփառ՝ աշտէին
նիզակաւ՝ 'ի մահ սատակէ. [28] պատկեր ճշմարտին՝ ընդ
աքարու համայնիւ ջնջէ. [29] մծարեալն վեհից՝ յա-
րագողայն վրիժուց մատնէ. [30] մարգարեածին տե-
սանօղն՝ ընդ ամաղեկացւոյն առաջի տն սպանանէ.
[31] Նախանձաւորն այ՝ երկնատեղաց բոցովն վատնէ.
սուտերին լռումն՝ և նորոյս սկիզբն՝ հեծանոցին ըն-
տրութիւ հոսէ. պետն առաքելոյն՝ ընդ սափիրայի 'ի
կենաց զրաւէ. զարմանալին քննութիւ հոգւոյն՝ բու-
րումն ինձ մահու՝ ընդ կենացն քարոզ խառնէ։ Ա՛րդ՝
[32] անաչառք և ինձ կաճառք երջանկացն, և ուժ-
գնութե հրամանի վերնոյն՝ արի սպառազէնք. ընդ
հրեշտակացն՝ և մարդիկ. ընդ տեղերաց երկրի՝ և
տարերք. ընդ անզգայիցն՝ և շարժողականք. որովք
դատեալ միշտ լինիմ տուժիւք լլկանաց՝ յօրինակ
և յիշատակ սոսկալեացն ապագայից. իբր հողմով
փոթորկի ալեաց յաւէտ մրրկեալ կենացս վտա-
հութիւն, մինչ անկայուն 'ի հաստատութենէ։ Ո՛ր
եթէ ոք իմաստութե 'ի քննին առեալ խուզեսցէ [33]
զլուղակացն բազմատեսիլ զանազանութ, զմանունս
փոքունս ընդ մեծամեծայն դասեալ, որ առանց
թուոյ և քանակութե համարոյ՝ [34] թինդս առեալ
անբաւ երամոց եռան զեռան սլանան 'ի մարմնիս
ծովու, վկայեսցէ և հաստատեսցէ ճշմարիտ լինել
զասացելոցս բանագրութի։

Ը. Այլ դու ինքն օրհնաբանեալ անմահ թագա-
ւոր՝ բարի երկնաւոր մարդասէր քս, այ կենդանւոյ
միածին որդի, հզօր բարձրեալ անքնին անճառ քա-
ւիչ ահաւոր, սաստեա 'ի ձմեռն ամբոխեալ ալեաց
ոգւոյս ծփանաց. [35] արձանայն զծարաւս մոլեգին
շարժման սրտիս խռովութե. ընդոտնեա 'ի սանձս
կապոյ երասանաց ըմբռնման՝ զցնդեալ մտացս վայ-
րապութի։ Նղիցի խաղաղութի հրամանաւ մեծիդ [36]
ամենավարան բքոյս սասանման. սատակեա խափա-

նեալ զպազմազլխեան անդամն ուրուականս գաղտ-նեաց ամօթոյս՝ երկրակեցացս հինից ։ Գործեցես 37 աղօթս մտամատոյցս զայս նորընծայ տաղ ողորմա-ղերս թախծագին ձայնի ողբերգարկութե այսր մա-տենի ։ Հան 'ի խորոց մահուս անդնդոց՝ չքնաղ ապ-րեցեալ ընդ մարգարէին փրկելոյ ․ ընկալ զխոստո-վանութի անձնադատ բանիս 38 'ի հոտ անուշից ․ շնոր-հեալ մխիթար դառնութե վշտաց ուժգին հեծութե յուսահատելոյս ։ Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք պատիւ և իշխանութի յաւիտեանս ․ ամէն ։

---

(1) Երջանիկէն և ֆառաւորէայ ։ Ակատած բանիս կամ զօրութիւն բայ ինչ պահանջէ ․ իբր ասել, երջանիկ են և փառաւորեալ սոցին պարք, էն ։ Եւ կամ յարելի է ընդ այնմ, որ օրհնեալն են, 'ի բաց թողլով զթարմանուր բառս ինչ, այսինքն է ասել ․ երջանիկ և փառաւորեալ սոցին պարք՝ թէ և ոմանք գթեցին և հաստատեցան, սակայն ամենեքին օրհնեալք են յայ հօրէ, էն ։ Զայս աղօթք խորհրդով զկնի բերէ անցելոյն ․ յորում զմարդկօրէն ակարութիս արդարոց յիշատակելով, զի մի անպատուել ինչ այսու զնոսա կարծիցի, յաւելու 'ի մէջ բերել զգերազանցութիս նոցա, առ որովք կարի փոքունս լինել ասէ զնոցա վրիպանս և զանկմունս ։

(2) Յորոց մինն ։ Զի գթելն սոցին՝ զկնութիս մերոյ զհաստատակաց ակարութեան 'ի բարին՝ յայտնէ ․ Եւ մինն, կանգնումն և հաստատութե նոցա 'ի բարիս՝ ցուցանէ զհրեշտակական վարս նոցա, որով գերազանց գտան քան զմարդկեղէն բնութիս ։

(3) Յորս լէ ինչ ։ Խօսի զսից ոչ 'ի միջնակ անկատար կենաց աշխարհի, այլ 'ի միջնակ կատարեալ շնորհաց և երանութե, յորում ոչինչ նշմարանք կամ գործ խաւարայինն ախտից գոյ 'ի նոսա ։ Զմարդն ոյ՝ ոյ նմա նեցուցանել ։ զմարդն՝ որ իբր բնական պատկեր այ է, այ նմանեցուցանել 'ի գերբնականս շնորհօք և փառօք ։ Կամ, մարդ այ, իմա ըստ մնաց առաքելոյն ․ (Ա․ տիմոթ ․ Զ․ 11 ․) այսինքն մարդ նուիրեալ այ, 'ի պաշտօն ածայինն կարգեալ ․ զայնպիսի մարդն նմանեցուցանել ասէ այ՝ գերազանց վարուք սրբութե ։

(4) Պաշտօն առ ած ։ Ածպաշտութի նոցա հաստատուն և սերտ ․ մինչզի 'ի մէջ ամենայն կատարելութե ոչ ինչ ակարացուս, որպէս ապաշխարութն, յանկարծայն, յամնեփույն, և այլոց ։ Ճշմարտութի հաւատոց սոցին՝ մաքուր, միօրինակ, և անշարժելի, անկորուստ և անփոփոխելի ։ Ծինագրաութի, զխնդրեցուցեն ․ յարձակումն նոցա ընդդէմ գիւաց, ախտից, և թշնամեաց այ, հզօր ․ 2 օրին ․ և հին լոյծ ․ բնականութիւն ։ փէտաւորութի ․ ակնութիւն մնաց յածայինն՝ պայծառ և անշփոթ ։ Իմաստութիւն վերնական ․ իմաստութիւն սոցին՝ երկնայինն, և անկշռելի ․ անյաղթելի յերկրաւոր իմաստութէ, կամ անխոնարհելի յաշխարհական իմաստս ։

(5) Զորոց նեբղարանս ։ Զվստակս առաքինութեց նոցա և զյիշատակ անուանցն ողոքէ, առնուլ 'ի միջնորդ և 'ի բարեխօս, ած նոյ վարդապետեաց, ուսոյց 'ի հին և 'ի նոր օրէնս ․ և 'ի ձեռն նոցա հաշտել է խռովելոց կամ բառնալ զխոռովութիս բանն այ լուսաւորէաց, ծանոյց ։ Կամ,

Digitized by Google

'ի ձեռն նոցա ողորմութեան գտանել 'ի թագաւորութեան Այ, յորմէ ծանուցեալ բանն այ 'ի բազում տեղիս :

(6) Բանք զանձալից : Այս մակագրեր 'ի մեր օրինակս գտնի 'ի լուսանցսն . նշանակելով թէ ոչ է սորին, այլ յայլոց եդեալ . զոր յետոյ գրիչքն 'ի ներքս մուծեալ են . և ոչ իսկ հաւանելի է՝ թէ ոք վարդապետաց աստուածաբանական բանս իւր կոչեսցէ՝ զանձալից : Վասն որոյ բառ կարգի յառաջին բանին յարելի է յաջորդն . զի յետ բարձրացուցանելոյ զկրօնս սրբոյն, առ. նախ զանձինս իւրոյ թերութեան խոստովանի ասելով: Այս ես անպիտանս յանձնային, ևն :

(7) Ընդ կուռս ծուռճացն : Կուռ է ոլորուած կամ կրկնուած շուառնոց, կամ խոռոց 'ի միասին . (զայս :) Է ոլորուածս բարի գործոց ասէ՝ չարիս խառնել . զոր օրինակ, 'ի պահելն, 'ի լուելն, յաղօթելն, ևն, խառնել զչարն հպարտութեան . 'ի յանդիմանելն զյանցաւորս՝ խառնել ըզբարկութիւն, ևն :

(8) 'Ի մարդկէն խոցուածոցս : 'Ի դարմանել կամ 'ի բժշկել միոյ խոցուածոյս :

(9) Ջուր հանդիսանալ : Առանց երկուանց յաղթական ելանել, և 'ի քննութեան՝ երկուանքը պարտաւորեալ գտանել :

(10) Գրեմ, 'ի դպրութեան կենաց բարի ինչ գործով, և նոյն եղծանեմ, դառնալով 'ի չարն :

(11) 'Ի գիծն թուլանամ : 'Ի նաւելս՝ յուղիղ ընթացիցն, կամ յառաջիկայ նաւահանգիստն թուլանամ . կամ անհոգանամ յուղղել զնաւն :

(12) Շարունակեմ առ : Շարժիմ և կարգիմ յայս ինչ առաքինութիւն, և անդ 'ի սպառ հանեմ, և յայն 'ի միւս առաքինութիւնս քայլափոխիմ և 'ի վերջ թափիմ :

(13 'Ի ճշմարտութեան գիտութեան ոչ հասանեմ : 'Ի բնագիր առաքելոյն . (Բ. Տիմ. Գ. 7.) գտնի, 'ի գիտութեն ճշմարտութեան, այս է՝ 'ի ծանօթութեն ճշմարտութեան կամ ճշմարիտ վարդապետութեան : Գուցէ և ոք վարդապետս 'ի բուն գրուածս իւր եդեալ էր, 'ի ճշմարտութեան գիտութեան . կամ գիտել ասել, 'ի ստուգութեն հոգևոր գիտութեան ոչ հասանել . զի այսմ նման ասի 'ի փիլոնի բանն առ. լեւոնեանս . * Խաւարեան լինի առ. 'ի ճշմարտութեան գիտութեան || :

(14) Ջերջին . որ է (ըստ ռամկան խօսն .) փոփոխ . (ասէ միր ակնկնէի .) զգործը չարին, կամ զնուաղ մտաստակարն իրքեմ ասէ, և զնուաղել չարին կամ զմխտաստակարն անկեմ :

(15) Ընդ անծանօթն : 'Ի վերջանալն մեղք յերկրաւորաց՝ իսկոյն 'ի խոնարհ իջանել գառձեալ : Ժպեմ 'ի բոյնն . 'ի անմեռան իմ մտանել երկինաւանձնական և աղօթական . և սակայն ձանձրացեալ անհանգստութե, սորաքս եղանել յաշխարհական իրս :

(16) Քեզ տանեմ : Քեզ ուխտել, կամ ընծայել :

(17) 'Ի բարձրագոյն խնամոցն՝ վայր իջեալ եմ ինքն գտանեմ : յայլ օրին . լաւ եւս որոշի, 'ի բարձրագոյն խնամոցն 'ի վայր իջեալ, եւ ինքն գտանեմ . դը . 'ի հոգևոր խնամատութեն կամ 'ի խորհրդոցն զրկեալ, գտանեմ որպէս էի յառաջին՝ տխմարակ, երկրաւոր, ևն :

(18) 'Ի յոգս հատուածիմ : մի օրին . հատուածիմ 'ի յոգս . այսինքն մարմնովս կամ հատուածս 'ի մի տեղւոջ, այլ միովքս այսր անդր տարուբերիմ :

(19) Խառնակչութեանց ուղղորդեմ : Թողեալ զօրինաւոր և զարդարագագաւառութն, զանօրէնսն՝ կամ որք ըստ հաճոյից և վասն շահու անձանց գտանեն, աղաչեմ :

(20) Սոսկականացն ազդեմ : 'Ի մէջ ռամկաց խառնեմ :

(21) Երփնեալ ճայլն : Բնական անարգ գունով ճայլին երևիմ : Այսօր

մոփուր : Այսօր կամ այժմ ասեմնիմ ամենայնիւ մաքուր, անարատ, բոլորովին զհոգի ոչ զգեցեալ, իբր անմարմին եղեալ. իսկ ձայնիւ, յետ ռակաւուց ցուցանիմ մոլեալ յախտս մարմնոյ, մարմնաւէր, և խելագար. վասն զի այսպիսի յանկարծ և արագ փոփոխումն ծայր 'ի ծայր՝ ոչ է առօրական ոխակութեան, այլ խելագարութեան գործ, որպէս յանկարծ լալ և յանկարծ ծիծաղել :

(22) 'Ի պատասխանատուութեն : 2 օրին. 'Ի պատասխանատուութեն : այլ. պատասխանատուութեն, կամ պատասխանատրութեն :

(23) 'Ի յետս արկանել : Ընդ առաւօտս հարցեալ երևիմ զանազան բարս բայց անգործ յառաջադրութեամբք, ուստի ընդ երեկս դատարկ գտանիմ 'ի գործոցն :

(24) Փոյթ ունել 'ի չարիս : Այս չէր յերիս օրինակս :

(25) Ուանխայէմ 'ի խուխս : Գրեմ համարձակ զմեզապարտս՝ առանց խնայելոյ յիս՝ որ խուիւ կամ այլեւ նիւթ եմ գեհեննին : Բայց 2. օրինակք գրեն, ղխուխս նիւթեալ կամ նիւթել գեհեննին, և մարթ է առնուլ զառս ասացուած. այսինքն նիւթելով կամ պատրաստելով այսու զպատճառս այրման գեհեննին :

(26) Ստացուածս նախանձու : Որդիս բարկութեան նորոյս ադամայ քնի, որպէս եղև կայեն հնոյն ադամայ. որ ստացուած կամ ժառանգութիւն ասացաւ, զակայն եղբայրասպանութեամբն և անզղջութեամբն եղև չար ստացուած ծնողացն. ուստի և ես իբրև զնա կրեմ յանձին զնշանակս անպատուութեան, ոչ զդինելոյս փառաւորութիւն, ոչ զկենդանութիւն կամ զպահպանութիւն 'ի մահուանէ, որ տուաւ կայենի առ 'ի մշտադատ դատապարտութեան անձինն, այլ զկշտամբութիւն բանիցս, որք են իբրև նշանն եդեալ 'ի կայէն :

(27) Աւրին բուրէժառ : Փենիքսես որդի եղխազարու, որ քաջ գտաւ և փառաւոր 'ի սպանանել աշտէիւ զպատմինկեալն :

(28) Պոփլէր ճչմարփին : Ցեառ՝ օրինակ ճշմարտին յիս :

(29) Անձարէանն վէհէոյ : Դառնութ արքայ, յորագողացն Վէրծոսց, զապաւանեացուցն վրէժխնդրութեան մամնեաց զորդիս տանն սաւուղայ : (Բ. Թագ. ԻԱ :)

(30) Մարգարէածին փեսանօղն այսինքն սամուէլ. ընդ անաղէկոցաց առաջի թն ազանանէ : Այս բան չէր յերիս օրին :

(31) Նախանձաւորն այ. Եղիա. սպաներին րրաւն. Յովհաննէս մկրտիչ. զարմանալին գիտութ. Պօղոս :

(32) Անապատ և ինէ : Այդ՝ ըստ օրինակի յիշատակելոցս՝ անապատք են առ իս նաև գուծոք սէր, որք ստակ հրամանին այ զնուորք և պաշտօնեայք են, են :

(33) Զլուղականցն : զծովու կենդանեացն, որք լուղան 'ի ջուրս :

(34) Թինտա առնեալ : Թնդալով, ուժգին ընթացիւք կայտառելով : Իմաստ բոլոր բանիս է, թէ ամենայն արարածք հակառակ ինձ յարուցեալք, իբրև զծով ալէկոծեալ կամ յամբոխման : Իսկ ծովու նմանեցուցանել զիս, կամ զմարմինս՝ ամենայն ոք վկայեսցէ, 'ի քննել զբազմազան ախտս մարմնականս՝ որք իբրև ձկունք մեծամեծք և փոքունք զեռան 'ի մարմինս անբաւ թուով :

(35) Աւյանացն զծառաաս : Դադարեցո՛, խափանեա՛ զծառայս : Յայտնի մաղթողական բանս գիտէ զմամնութիւն անցիցն յոյժնանու մարդաբերին : ընդանեմ 'ի սանձս. իբր ընդ ոտիւք արգել սանձիւ զապաստանեալ մտացս կատարութիւն, որպէս զկիշտայն յոյժանու :

(36) Ամէնավարան բէգոյս : Ցամենայն կողմն շրջող ձինախառն հողմոյս : Վէրայնակինէան անգամս. որպէս զանդառն մշտակ ձկանն՝ որ եկուլ

դյուզկան, խաւարանեամ առէ՝ զախտս մարմնոյս. որոց իւրաքանչիւրն ու-
նին զլուխ, և առին անդամք հոգւոյն՝ բայց ուրուական, այսինքն նմա-
նական կամ օրինակաւ. Երկրակենցաղս հինից, որք են իբր հենք (ղուր-
սանաք) շղջեալք կամ թանալեալք յերկրի մարմնոյս. կամ են հենք ցա-
մաքայինք, որք շըջին 'ի ցամաք երկիր ընութեաս :

(37) Աղօթս ծածապայթս : Զայս գրաւորական ողբոց ձայնս՝ համարեամ իբրև զաղօթս յոյժ..., զոր մնօք մատոյց 'ի փորոյ կիտին : Եւ առէ, նորընծայ փառ, այսինքն նորոգ յարմարեալ, և ոչ թէ նոր գըջուածն անեալ :

(38) 'Ի հոգ անուշից : Ընկալ զայս խոստովանութե փոխանակ պատարագին՝ զոր խոստանայր յոյժ յաղօթսն, և մատոյց քեզ յետ ելանելոյ 'ի կիտէն :

Մերոպին յառաջելոց ներկին հեծութե՝ նորին հոգևոր առ նոյն ազգիս մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

ԲԱ՛Ն. ՀԲ.

Ա. ԱՅԼ ահա ձեզ ասեմ ո՛վ եկեղեցիք միանձանց՝ և ¹ աշակերտութիք կրօնաստանաց, որք մերկամարմին մատանցդ ձեռօք՝ առ ակնկալութի յուսոյն պարգևաց բարեացն անքաւից՝ տն զինուորեալք, որոց զայս սեղան հանդերձանաց խորտկաց բանից ընծայեցուցի, ընկալարո՛ւք զայս աւանդութի խոստովանութե՛ 'ի շինուած փրկութե հոգւոց : Նանեռո՛ւք սովիմբ զմարմնոյս պարտութի. յիշեցէ՛ք զմարգարէականն՝ ընդ առաքելականին առեալ մեզ 'ի խրատ, զի մի՛ պարծեսցի ամենայն մարմին առաջի այ, և զո՛չ ոք է արդարն և ո՛չ մի : Օտերունականն մի՛ մոռանայք, 'ի կատարածն իսկ պատուիրանին գոգջի՛ք զձեզ ծառայս անպիտանս. մի՛ եղիցի լինել ձեզ որսք խաբողին. ² զգուշացարո՛ւք և դրոյն, թէ կերակուրք նորա՝ ընտիրքն : Վասնզի և ես իսկ, որ զայս նուազութի մասնաւոր պտղոյ ձեզ ջամբեցուցի, վկայեալ զանձնէ կամաւորական ստգըտանք բի՛ւր բամբասանաց՝ անբժշկական մեղանաց, ³ 'ի սկզբնահայրն սկսեալ մինչև 'ի սպառումն ծննդոց նորա՝ կամայականն յանձնառութբ հաստեցի եդի զիս ամենայնիւք պարտական չարեաց :

Բ. Ւ ուայ ⁴ յումեմնէ ոչ պարտաւորէ, և ո՛չ համեցայ, 'ի յասելն նորա անյարմարապէս առ այն, որոց

առաջի ոչ է արդարանալ մարմնոյ երկրածնի, թէ ոչ երբէք շնացայ, ոչ պոռնկեցայ, և ոչ զաշխարհիս ինչ համբուրեցի ճաշակս մահու։ Այլ ոչ ընդհատ ինչ յանօրէնութենէ. թողցէ նմա տէր ած զայսոսիկ. թէև ճշմարտիւ իսկ գրեցաւ, ոչ ընթացաւ, որքան թէ գթեաց, 'ի յասել զանյարմարսըն 'ի դիմաց ժողովրդեանն իսրայէլի բանիւ զաքարիայ, օրհնեալ տէր, և մեծացաք, որ է փարիսեցւոյն ձայնի կերպարան։ Բայց ես քանզի դիտողին այ մատնեալ եմ դատաստանի, որ զկիրս աններեութիցն մտաց 'ի կշիռս եդեալ՝ համարի դատել զիս նոքօք ամենիրաւ հատուցմամբք, ոչ կերպարանեցայց տեսողին. ոչ կեղծաւորեցայց քննողին. ոչ ստեցից [5] զոչ գործեցեալսն նկատողին. ոչ խաբէութն ընդ միտ ինչ մտից մեծին. ոչ 'ի տեսիլ բարւոյ ցոփութն՝ զչարս քողարկեցից. ոչ 'ի պատկեր ընտանի՝ զապիկարս երբէք յարգեցից. ոչ [6] խենեշեցայց 'ի զարդ օտարոտի. ոչ պճնեցայց այլով պայծառութն. ոչ պաճուճանս յարմարեցից տգեղութես գեղոյ։ Ո՛չ որ մեղաւոր իբրև զիս. ոչ որ անօրէն. ոչ որ ամբարիշտ. ոչ որ անիրաւ. ոչ որ չարագործ. ոչ որ վրիպեալ. ոչ որ սխալեալ. ոչ որ մոլեգնեալ. ոչ որ խարդախեալ. ոչ որ շաղախեալ. ոչ որ դատապարտեալ. ես միայն եմ, և այլ ոչ որ. [7] ես ամենայնն, և յիս ամենեցուն։ Ո՛չ հեթանոսք, զի ոչ գիտէին. ոչ հրէայք, քանզի կուրացան. ոչ տըգէտք և խառնիճաղանջք, քանզի յիմարք էին իմաստից։ Պետ վարժից կոչեցայ՝ յանձինս դատախազ. ռաբբի ռաբբի անուանեցայ, և զգովեստն առ ած՝ եղծի. բարի ասացայ՝ առ եղկութեն ժառանգութի. նբ վկայեցայ 'ի մարդկանէ, որ եմ անմաքուր առաջի այ. արդար դաւանեցայ՝ ամենայն իրօք ամբարիշտս. հեշտացայ 'ի գովեստ մարդկան, զի ծաղր եղէց յատենին քի. յաւազանէ կոչեցայ արթուն, և ես 'ի քուն մահու ննջեցի. 'ի փրկութեն աւուր հսկող յորջորջեցայ, բայց զզգաստութեն աչս կափուցի։ Ահա՛ դատաստան. ահա՛ յանդիմանութի. [8] ահա՛ նոր կշտամբանք, և հին դատապարտութի. ահա՛ ամօթ դիմաց, և տագնապ հոգւոյս. ահա՛ [9] խնդիրք՝

փոքունց, և կշիռք մեծամեծաց ։

Գ. ՏՈՒՐ դու միայն՝ տէր ա՜ծ մարդասէր, անոխակալ և երկայնամիտ, համարեաց մեղապարտս անձին՝ ըստ վերջին պարտաւորութե աւուրն ահաւորի՝ զայս կսկծեցուցանօղ ինքնաբանական նախատինս ։ Որ լուայց 'ի քէն զայսոսիկ՝ գթած, փոխանակ զի ես ինձէն անձինս գրեցի ։ Արդ՝ բարձցես և [10] վերացուսցես զպահ պարտաւորութե կանոնիս՝ ըստ քեզ կապելոյս տենչանօք հոգւոյս ։ Զան զնախատինս պատկառանաց խայտառակութես. ծածկեա աջովդ կարողութե զտգեղ տեսակ մարմնոյս մերկութեան. մատո հանգստեան [11] զթօթափեալս ուժգին մեղացս բեռամբք. կարգեա ինձ սահման հետոց բարութե՝ առ ելս կենաց. պահեա յիշատակ ինձ ողորմութե՝ և զկնի մահու՝ կեանք ամենեքին, օրհնեալ յերկինս, և գովեալ յերկրի. բարեբանեալ միշտ յամենայնի՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

---

(1) Աղաչեմք զՔեզ ։ Աղաչելով անձինք կամ ժողովք միաբանութեցաց ։ Որք Աղաչեմքն միանգամայն, փոխանակ ասելոյ՝ մատուցանք ձեռաց, այսինքն որք անգէն ձեռօք զինուորեալ էք Աստուծոյ, ակնուանելով անբաւ բարեաց յերկինս. որոց և զայս բանական սեղան իբրև 'ի զանազան խորանաց՝ ընծայեցի ըստ ձերում խնդրոյ ։ Ընկալարուք զայս իբրև աւանդ կամ տուր խոստովանութե 'ի շահ հոգւոյ, և ոչ թէ 'ի գայթակղել կամ 'ի գարշել ։ Քանզի թէպէտ ըստ բազում մասին՝ գեղջկական բանք են և յանդգնութիւնք՝ յայտնիչք անհամար թերութեանց մարդկան, բայց խոսան ըստ գեղոյ առ ա՜ծ յաւագութե՝ լինին իբր խորանկ համեմեալ առ այնոսիկ որք առողջ մտօք ճաշակիցեն ։

(2) Զգուշացուցանեն Գրոյն ։ պահեսջիք կամ յիշեսջիք զբանս գրոյս. (Առակ. ա. 16 ։) զոր հին լուծ. սխալմամբ ընծայէ յորայ ։

(3) 'Ի սեղանակայքն սեղանոյ ։ Յաղագս նախահօրն սկսեալ մինչև 'ի վերջին ծնունդ՝ զամենեցուն յանցանս և զվրիպմունս մեկնեցի զանձինս, իբրև ամենայնին պարտական ։ Մի թուեսցի թէ զպատուաղ սակաւ բանիւս ձեզ մատուցանելով, զձեզ պարտաւոր յուղարկել կամեցայ այսքան չարեաց. այլ մանաւանդ զանձն իմ միայն խոստովանիմ պարտական ։ Իսկ դուք հարցէք իւրաքանչիւր իւրում խղճի. բայց առանց խափելոյ զանձինս ձեր, և մի նմանեսջիք միուսն ևս ։

(4) Յաւետ ոչ պարտաւորէ ։ Զայս մարթ էր իմանալ 'ի վերայ հայրս փարիսեցւոյն, թէ ոչ յաւելոյր զկնի Ես վարդապետս, Բողոքէ նմա Տէր ա՜ծ. զոր վասն փարիսեցւոյն ասել՝ ոչ յարմարի ։ Ուստի իմանի զայլմէ ուսեալ նէ բարեկրօն անձինէ առ իւրով ժամանակաւ. յորմէ զայնպիսի պարծենողութն բանս լուեալ էր, և թերևս 'ի պատճառս աղօթական բանից սորին առացեալ իցէ նորա զայնպիսի բանս. իբր ոչ հաւանելով ընդ ամենապարտ խոստովանութիւս սորա, և սուտ բանիւ ձևանալ կարծելով. որպէս թէ ասել, ես ոչ շնացայ, և ոչ պոռնկեցայ, և ոչ գողացայ, ևն.

և զխնդիր առաքառ նոյն մատուցեալ խոստովանելովն այնպիսի մեղաց սպառ-
ողական գոլ: Սակայն նա վարդապետս լուծանէ զխնդիրն նորա, և անե-
րևոյթ ցուցանէ. զի խօսելն զայնպիսի բանս առաջի նոյ՝ ոչ է հեռի յանօ-
րէնութենէ, յորժամ պարծանօք ոք ասիցէ. և զի խորհրդով սխալելն
յայնպիսի յանցանս՝ ընդ գործով սխալելոյ պատուհասուր կացուցանէ.
և ոչ կարէ ասել ոք, թէ ես և ոչ խորհրդով ընաւ յանցեայ յայսոսիկ.
ապա յորժամ ամբաստանէ զանձնէ առաջի նոյ՝ ոչ խօսի սուտ: Վասն
այսորիկ Իկ և ճշմարիտ իսկ գրեցաւ. այսինքն թէ և ճշմարիտ իցէ նորա
պարծանքն, սակայն ոչ ընդունին, 'ի գնալս ամբարտաւանութեն յառաջելով.
ուրքան Իկ գինեաց, ամբարտաւանութիւն, որպէս թէ ասել զանդրադարձն
բանին խարդխելացւոյ՝ զգրեալն 'ի զալքար. (ժա. 5.) օրհնէաւ փր, և Ձ-
ծացաւ, այսինքն գոհութիւն առլով նոյ վասն կարծեցեալ կամ սուտ ան-
ծութեն ամբարտաւանութեանց, որ և է նման ձայնի փարիսեցւոյն:

(5) Զու գործեցեալն: Ո՛չ առնելոց այնմ՝ որ նաև զոչ գործեցեալսն
առանէ. այսինքն կամ զորս արտաքին գործով չեմ արարեալ, բայց
խորհրդով հաճեալ եմ. և կամ թէպէտ այժմ չեմ գործեալ, բայց
յետոյ գործելոց եմ: ընդ մեք ինչ մեղց: ոչ խաբէութեան հաճոյացայց ա-
ռաջի նոյ: Ո՛չ 'ի փեռիւ Եարաւոյ ցոփառեն՝ զլարս. այսինքն ոչ ընդ կեղծա-
ւորեալ բարի համարձակութեն՝ զչար համարձակութիւնս ծածկեցից:
Կամ, ոչ ընդ պատրուակաւ բարի քաղաքավարութե, բարեբարոյ և
խոնարհ ընտանութեն՝ ծածկեցից զչար քաղցրաբարութի, որպէս ասե-
սաղոմ 'ի ներքոյ քաղցր և ընտել բարեմարդութե առ խարդխելեան ժո-
ղովուրդն՝ թաքոյց զհպարտանենգ ապստամբութիւն: (բ. Թագաւ. ժե.
5. 6:) Ո՛չ 'ի պոփկեր, ոչ երբեք բնաւորական պատկերաւ կամ ձևով
երևեալ, արդոյ ցուցից զակարս, զողորմելիս, լուռ ասացի իշխան՝ որ զանձ
ձամբ արկեալ զառեւծենին՝ իբր մորթ իւր բնական, ահարկու և հզօր
ձևանայր:

(6) Ուխենեշեպայց: Կ օրին. խենեշայց: ոչ զարդարեցայց անպատկա-
ռապէս օտար զարդուք ամբարտաւանութեն. որպէս լինի՝ եթէ ոք 'ի գովելի
գործոց ընկերացն և կամ նախնեացն՝ պարծանս յանձն ձգիցէ, ինքն
ոչ գոլով այնպիսի: Ցայսոսիկ բանս յառաջ ածու զառասպելն ճայեա
կմ ագռաւու, որ այծնեաց զմարմինն օտարոտի փետրովք՝ առ 'ի թա-
գուցանել զբնաւորն ագեղութիւն:

(7) Եւ ամենայնն: այսինքն վերոգրեալ զանազան յանցաւորքն բովան-
դակ են եմ. և յետ ամենեցուն. ամենայն մեղուցելոց յանցանքն և պատ-
ժապարտութեն յիս գտանին: Իսկ թէ այս, և այլես անցեալ բանք՝ որ-
պէս ճշմարտութեան ասին, տե՛ս 'ի կէ. լծ. 1: Քանզի յորժամ ճանաչ
չէ զանձն ունող միահամուռ յանցանացն՝ որ յայլ յանցաւորս կան
ցրուեալք, հարկաւ զհետ գայ՝ զի ամենեցունցն լինիցի յանձին իւ-
րում:

(8) Ահանոր կլպամբանք, առեալ 'ի նշանակութէ անուանս. զի Գրիգոր
կոչեցայ 'ի մկրտութեն, որ թարգմանի՝ հսկող, արթուն. և սակայն
գործովք թմրեալ և անզգայ եղէ, որով և անուանս լինի ինձ կշտամբիչ:
և հին ծպպտարբութեն, նոր կշտամբութեն անուանս հաստատէ զառա-
ջին զատապարտութիւնն՝ զոր արդէն յանձին կրեմ սակս այլ մեղացս:

(9) Խնդիրք հոգւոց: Ահա և վասն անպատուութե անուանս լինի
քննութեն, հարցափորձ, որ փոքր կարծի քան զարհամարհութեն այլոց
պարգևաց Այ. և սակայն նշխարք մեծամեծաց. ընդ մեծամեծ յանցմունս
կշռեալ է: Վասն զի անկարգութեն մեծ է և անօթալի խաբէութիւն,
յորժամ գործք ոչ համեմատին անուանն. զոր օրինակ թէ ոք զանուն
ունիցի մարդոյ բանականի, և գործ զանազանի. ուստի պատշաճապէս

տակ՝ տեսլ դիմաց: Աստուածայինն ընդ տառապեկ կշտամբանս յառաջ բերէ և զայն թէ՝ հրեշտ անուանեալ ես, և սակայն ոչ երբ հրեշտ մարմին (Հռովմ. Է. 17.) և նոյն յանդիմանութե տեսլ (Յայտն. Գ. 9.) Եւ ուշ և-գեալ առասանելոց խիկ յընթացս նախախնամութեն ԱՅ, զի ըստ պար-ծոց և ըստ պաշտաման կարգեալ սահմանեէ իւրաքանչիւր զկոչումն ա-նուանն, որպէս Աստուածածնի, Յակոբայ, Պետրոսի, Յովհաննու մկրտչի, և այլոց. որպէս զի անունն իցէ նշանակ յայտնիչ գործոցն, և իբրև ձայնաւոր պատուիր անձինն անուանելոյ.

(10) Վերացուցեալ զղակ: բարձցես զկապ կամ զարգելանս անձնագատ բանեցս, զորս իբրև կանոնական սպառնալեօք, կամ իբր բանտարգելս եդի անձին խմամ, թէպէտ և ըստ փափագմանց հոգւոյս չեմ արդեօք 'ի քէն, այլ կապեալ եմ ընդ քեզ:

(11) Զերծեալս: զհրապուրեալս, կամ զձնշեալս ծանր բեռամբք մեղաց՝ մերձեցո 'ի հանգիստ, ըստ որում և հրաւիրեցեր զծանրաբեռնեալսն առ քեզ գալ և գտանել հանգիստ:

Մատեան յառաջբերեալ երկնին հեծութեն՝ նորին հօխողի, առ նորի տղերս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք ընդ Այ:

ԲԱՆ. ՀԴ.

Ա. Թագաւոր բարձրեալ հզօր ահաւոր՝ օրհնեալդ միայն տէր յա քն, քո է փոխարկել[1] յանակնկալս կենաց յուսահատութե զգաստակից անէծս՝ առ կեցուցանօղ օրհնութիս. զպարսաւանս վհատութե՝ առ զուարթացուցիչ գովութի.[2] ընդ ամօթոյն՝ համարձակութի. ընդ պատկառանացն՝ պատիւ. ընդ տարագրութեն՝ յոյս բարութե. ընդ բաժանմանն՝ ակնկալութի միութե. ընդ սպառնականացն բանից՝ ողորմական սփոփանս. ընդ միանգամ դատապարտութեն՝[3] կրկին ազատութի:

Բ. Ողորմած տէր՝ մահու մեղապարտիս յաւուր աղձկման չնչոյս կենդանութե, մինչ աչացս ողորմագին հայեցուածս 'ի բարձունս կողկողկցի,[4] զբազմարկածեան ուղղոյն զանզերծ ընթացիցն զանփախչելին ճանապարհ յաչս բերելով մնացս տեսմամբ ամենայնիւ վտանգեալ. և 'ի յերդ բնակութե յայ կիս նկատեալ յելիցն շաւիղ, թշուառացեալ կիսամեռութբ, դիմօք այլայլութեան, տատանմամբ մատանցս, կարկամ հառաչմամբ, նուաղ հեծութբ նրբական ձայնիւ, յոգի թախծութե յօժնամանեայ

տարակուսանաց՝ ՚ի խորոցս աներևութից զգործեցե֊
լոցս ողբալով հառաչեմ։ Արօ՛ղ ես բարեգութ՝ [5] և
անդ հրաշագործել յաւէտ զօրեղութիւն ասելով, թէ
ողջ եղիջիր յոգւոյդ խորտակմանէ. և կամ թօ֊
ղեալ լիցին քեզ մեղանք քո. կամ թէ երթ ՚ի խա֊
ղաղութիւն որբեալ ՚ի մեղաց։ Նոյն զոր յայնժամ ժամու֊
ճէ ժամանեցից պաղատել, այսօր ընկալցիս մարդա֊
սիրապէս, ո՛վ երկայնամիտ բազմաշնորհ ամենակե֊
ցոյց։ Յորժամ՝ որ այժմս [6] բանապաճոյճ խրոխտա֊
ձայն սիգացող բարձրապարանոց՝ անկեալ դնիմ դի
անկենդան. կարկեալ ՚ի խօսից. կաշկանդեալ ձե֊
ռօք. լքեալ անդամօք. խփեալ շրթամբք. կափու֊
ցեալ աչօք։ Տախտակ անշարժուն. կոճղ կիսայ֊
րեաց. արձան անզգայ. պատկեր անբարբառ. գոյու֊
թիւն անշունչ. ողորմելի տեսիլ. աշխարհելի կերպա֊
րան. ողբալի օրինակ. եղկելի դէմք. արտասուելի
նմանութիւն. լռեցեալ լեզու. ցամաքեալ խոտ. թօ֊
թափեալ ծաղիկ. ծորեալ գեղ. շիջեալ ղամբար.
դատարկ կոկորդ. խոպանացեալ սիրտ. [7] աղխեալ
աղջարան. սպառեալ աղբիւր. թալկացեալ մար֊
մին. ժողխեալ որովայն. քակտեալ տաղաւար. կո֊
տորեալ ոսկր. բաժանեալ յօդք. հատեալ ծառ.
սղոցեալ արմատ. թողեալ տուն. հնձեալ արտ. [8]
տորախուզեալ բոյս. օտարացեալ բարեկամ. մո֊
ռացեալ պահեստ. թաղեալ գարշութիւն. մերժեալ
ատելի. բարձեալ խէթ. անարգեալ կմախք, և իբր
զանպիտան առ ոտն կոխեալ։ Արտաքսեալ այլոց
մաղթանաց, որք զհաւատոյ թշուառիս՝ ձայնիւ֊
նուագեալ աղերս հառաչման, ցօղով արտասուաց՝
բարերարիդ գթութեան ՚ի բարձունս տարածանեն։
Օ՛ առ քեզ [9] դարձն յեղանակեն յարգահատելով,
զոր օրհնեմ. զնշան խաչիդ փրկութեան, զոր երկրպա֊
գեմ. զյարութեան ճշմարտութիւն, որում հաւատամ.
զփառացդ քո յայտնութիւն, զոր փառաւորեմ. զդա֊
տաստանիդ ահաւորութիւն, զոր խոստովանիմ. զբա֊
նիցդ յանդիմանութիւն, յորմէ զարհուրիմ. զհրա֊
գւոյդ սէջ լինձ ուղեկցուն, զոր պաշտեմ. [10] զօծմանդ
տեառնագրութիւն, զոր և համբուրեմ. զթագաւո֊
րելն ընդ քեզ՝ տէր յս, որում պաղատիմ։ Արդ [11]

լքաւ՝ մերժեցաւ՝ բարձաւ՝ տարահեցաւ՝ փախեաւ՝ սրացաւ՝ տեղի ետ կցորդութիւն զուգութեան կենցաղոյս կենդանութեան. և [12] յուսոյդ որ 'ի քէն պարգև՝ մնացական և անշնջական յիշատակարան պահեցաւ։

Զ. Տէր ողորմութեան 'ի տարակուսանս վտանգելոյս՝ միայն բարեգութ [13] փառաւորեալ որդի այ, քաւել՝ բժշկել՝ կենագործել՝ պաշտպանել՝ նորոգել՝ նկարել՝ կանգնել՝ հաստատել՝ վերստին ստեղծագործել յերջանիկն անպարտութիւն. քո է կարողութիւն, քո է փրկութիւն, քո ողորմութիւն. չիք քո անկարութի, այլ ամենայն զօրութիւն, բարձրութիւն, իշխանութիւն, անվախճան թագաւորութիւն, իսկութիւն, ինքնութիւն, [14] ամենատեղի բացարձակութիւն, բարերարութիւն, լուսաւորութիւն. փառաւորեալ տիրապէս, անպակաս և անյաւելուած, [15] խնկեալ խորհրդով անթարգմանելեաւ յերրորդութեանդ սրբում, գոհաբանեալ յաւէտ և ես առ սմին 'ի նոյն պաշտօն հաւասարութեան միապատիւ զուգականութեան, երէկ և այսօր՝ և յաւիտենից յաւիտեանս. ամէն։

---

(1) Ցանտինկալու կէնաց յաստահափուլէ։ 'Ի յուսահատութեանն՝ որ անտինկալ է կենաց, փոխարկել զանէծան յօրհնութիւն։

(2) Ընդ անօրէնոյն։ Փոխանակ անօրէնոյն՝ շնորհել համարձակութիւն. ըստ այսմ և յաջողութիւն։ ընդ բոծանծանն, փոխանակ բաժանման 'ի քէն՝ շնորհել յոյս միութեան, միանալոյ ընդ քեզ սիրով և փառօք։

(3) Կրէին աղափուլէ։ փոխանակ միանգամ դատապարտութեանն 'ի մահ՝ շնորհել կրկին ազատութիւն 'ի մեղաց և 'ի մահուանէ՝ յարութիւն։

(4) Զբաղմարիւծեան ուղւոյն։ Ուղւոյն կամ ճանապարհի մահուան՝ յոր բուռն կան բազում արկածք և վտանգք։ Զայնր անփախչելի ճանապարհին զգնացսն յաջողելով մեզ, և 'ի պատահման յարկի բնակարանին՝ որ է շաւիղ կամ տեղի ելանելոյ տարաձքս, հայելով ողորմութեամբ քո սատարութեամբ, ևն։

(5) Եւ անդ հրաշագործէ։ յայնժամ ևս կարող ես հրաշագործել զառաջնութիւն հոգւոյս, ևն։

(6) Բանապահտօյն։ որ այժմ բանիւք ճոխանամ, խօսպտոյն, իշխանաբար սատանայ կամ սպանող. ...'ի քայլէն ամբարշտութեան անձամբ գնամ, յետոյ 'ի մահուանս անկեալ գնիմ զի անկենդան, ևն։

(7) Աւրինէան աղշարան։ Իբրև աղխիւք կամ փականօք արգելեալ զործի աղջկեղոյ՝ բերանն կամ լեզուն։ Հին ըծ. խմենոյ ... ձողխեալ որոմայն. հարեալ կամ լուծեալ 'ի գետոյ հիւթս որոմայնն։

(8) Սփոռախոսողէն բոյս։ Ցամաքութեան խուզեալ կամ կարեալ բոյս։ Նուաղջեալ ողոհեաց. մարմինն՝ որ 'ի պահ գնի 'ի գերեզմանի, լինի ողորմահար և առաքանի իբրև զանաւացեալ պահեստ։ Բորյեալ խէլ. իբրև

զխորհրդականն առաց կամ՝ ոտից բարձեալ լինի մարմնին : Նմանօք . ցամա-
քեալ ոսկերոտին :

(9) Դառջի յեղանակէն : Զդառնալն առ քեզ զղջմամբ յիշեցուցանեն և աղերսանօք բերեն : Զայս , և զյաջորդ բանն առնու յաղօթից քա-
հանայութեանն :

(10) Զօծմանդ փոխադրութիւն : Խմանայ զօծմանէն , որ լինի ի մարմին ննջեցեալ քահանայից . զոր և յաղօթս քահանայութեանն յիշեն : Այս օծումն առանդի և բացատրի ի զինուորական գիրսն յաղագս եկեղե-
ցական քահանայապետ . գլ . է . բնագրին . է . երրորդ հատուածականաց նաև յաշխարհական ննջեցելոցն ի կիր արկեալ . և այսպիսի առօրութեան վկայեն յիշատակք առաջնոց , որպէս ի մաշտոցս ինչ յունաց երևի . և մինչև ի ժը . դարն պահիւր յեկեղեցին աղեքսանդրիոյ առօրութիւնն մեռանելոյ զմարմին ննջեցեալ քահանայից , որպէս վկայէ պատմաւոր
յոյն :

(11) Նոր Սերմնացան : Թէպէտև մանրամասն Թողաւ , բարձաւ , փա-
խեաւ , հրաժարեցաւ հաղորդութիւն կենաց աշխարհէ , բայց յուսոյդ փրկութիւն և յարութիւն պարգևէն՝ մնայ ինձ անջնջելի յիշատակ :

(12) Յաւուր որ ի գէն պարգև : 2 օրէն . յուսոյ ի գէն պարգև . այսինքն յոյսդ որ է քո պարգև՝ մնաց ինձ յիշատակարան :

(13) Փառաւորեալ որդի : 3 օրէն . փառաբանեալ :

(14) Ամենափրկիչ բազմաշխարհիկ : ընդարձակութիւն որ ընդ զամ աշխարհ . առաւել գիտելեաւ կարող ես համահաւասարել զզգուեալ մարմինս մեր և կցեն , և նորոգել զնոսա յանապականութիւն փառաց :

(15) Խնկեալ խորհրդով : օրհնեալ ի յաւիտենից անձառելի խորհրդով ի մեր կերպարանութեան , այլ և գոհացանեալ միշտ միաբանութեան ի ժամանա-
կի՝ նովին հաւասար պաշտամամբ համապատիւ միութիւն , ևն :

Մերոպէն յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հոգւոյն , առ նոյն աղերս ճաղեանոց բանին :

Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

ԲԱՆ . ՀԳ .

ա̃ . Արքայ երկնաւոր , տէր բոլորեցուն , [1] առ ա-
մենայն բան՝ յամի միշտ երկայնամիտ , ա̃յ
կենդանւոյ անքննին որդի : Նա [2] անդ է ողորմելն իւ-
կապէս , յորում հատաւ ակնկալութիւն վատակոյն .
անդ է բարեգործելն , յորում [3] տեսուն իմաստիցն
խափանեցաւ . յայնժամ ժամու է մարդասիրելն , յո-
րում տկարութեան վտանգ պաշարեալ տիրեաց ներ-
քոյ և արտաքոյ : Անդանօր է բժշկութիւն ա̃ծային քոյ
ձեռինդ , յորժամ [4] բնաւ անդամոցն տեղի եւ կեն-
դանութիւն . այն վայր է այցելութեան , յորում ելք
հնարից ոչ գոյ : Այն է քո մեծութիւն , յորժամ զյու-
սահատութեան վէրն [5] ողջացուցանես . այն է հարա-

զատ [6] քումդ ազգակցութեան, եթէ յանակնկալն ժամու արուեստաւորեսցես փրկութիւն։ Ա՛յն է հանդիսարան քում յաղթանակի, եթէ զփակեալն մուտս կենաց 'ի տպառումն շնչոյս՝ բացցես. այն են քո շնորհք վայելչականք, եթէ զչարեացս իմոց մոռացեալ՝ զբարեացդ քո յիշեսցես. Յայսմ ես անոխակալ, եթէ ապախտաւորիս՝ ընդ երախտաւորացն խնամարկեսցես. [7] 'ի նոսին ծանեալ գիտացից, եթէ նայեցար 'ի նուէր բանիս՝ նախնի գթութեանդ, եթէ զսովորութիւն չարեացս բարձցես։

ը. Յաղագս այսորիկ [8] հիւսին բանք, և եղանակին նուագերգութիւնք, յորժամ տէրն բարի՝ չարն ծառայի՝ զբարեգործացն պարգեւեսցէ. որ մինչ իրաւամբք մնացէ բանտի, նա յարքայական ապարանս զնա հանգուսցէ. մինչ հրաւիրեալ է 'ի գուբ տղմոյ, նա [9] 'ի բազմականս ամենապատիւս գահուց գրգեցուցանիցէ. մինչ [10] բրելոյ զաչսն դիտեսցէ, նա 'ի բարձրութիւն բերկրութեան հայեցուցանիցէ. մինչ ծայրատութեան մատանցն սպասէ, նա մատանի համարձակութեան մատուցանիցէ. մինչ հայի հարուածոց գանից, նա գթոյ գիրկս արկանիցէ. մինչ պատրաստեալ յուսայ կորստեան, նա երեւելի տեսողաց բազմաց առնիցէ. մինչ ակն ունի սատակման մահու, նա ընդ կենացն և փառս ընծայեցուսցէ. մինչ հատման գլխոյն նայեսցի, նա զնոյն պսակաւ պայծառացուցանիցէ։ Այս պտուղք օրհնութեան՝ գթած, սքանչելարմատ քում շառաւիղաց. այս արգասիք կենաց՝ արարչականդ քո հրամանաց. այս իղձք խորհրդոց՝ [11] խոստովանեալդ քո տենչանաց. այս նշոյլք լուսոյ՝ ամենասփիւռ ճառագայթից. այս ախորժուն ճաշակաց՝ բարեբանեալդ քո քաղցրութեան։

թ. Քո՛ միայնոյ են այսոքիկ տէր. 'ի քէն [12] ազդեցաւ գրել ինձ զսոսին. ահա՛ զքոյսդ յատուկ աղերս աղաչեմ՝ օրհնեալ, 'ի քոյոց այտի պարգեւեալ շնորհեաւ. բաց տէր զգանձս քո բարիս, ըստ աղերսանաց առակին։ Մի՛ խառնեսցես [13] 'ի համբարս բարեացդ քոց՝ 'ի չարեացն իմոց. մի՛ շտեմարանեսցես զատելիսն քո՝ որ են ոխութիւնք և ցասմունք, ընդ սիրելիսն քո՝ որ են գթութիւնք և ողորմութիւնք. մի՛ պա-

հեղցես 'ի սպասացուածս քո պաշտելւոյ՝ զանախորժե-
լւոյն քո՝ որ են մթութիւք և դաժանութիւք, և զիմ
հիւանդելւոցն՝ որ են մեղք և թշուառութիւք ։ Մ՛ի դարձու-
ցես աչօքդ օրհնութեան [14] 'ի մատենիդ կենաց՝ զմուր-
հակ պարտուց իմոց անիծից ։ այլ [15] զանհնարա-
ւորսն ինձ համարեալս՝ մեծացուցես կրկին առա-
ւել զանուն քո տէր՝ 'ի նոսին, ցուցանել զդոյն ինձ
դիւրինս և հեշտականագոյնս ։ Ծ՛անր են իմ պար-
տիքս և անդր քան զթիւ ։ այլ [16] ո՛չ այնքան հրաշա-
լիք իբրև զքո զողորմութիւնդ ։ բազում են մեղանքս,
այլ յաւէտ են նուաղեալ առաջի քոյդ ներողութեան ։
յաճախ են չարութիւքս, այլ յաղթական են համայ-
նից՝ հզօր ամենակալդ՝ քոյդ մարդասիրութիւն ։ ինձ են
անհամար՝ իմոյս անձին բիծք, այլ քեզ՝ յոյժ գրա-
ւեալ են ընդ սահմանաւ ։ Ո՛չ են այնքան զօրաւորք
առ կենդանութիւն [17] զէնք մեղանաց պատկառեցե-
լոյս պտղաբերութեան, որքան յիշատակ մահու կեն-
դանւոյդ՝ առ վանումն կործանողին բռնութեան ։
Օ՜ ինչ ազդեսցէ [18] փոքր խաւար՝ աւուրդ ա̅յ ։ զի՞արդ
բաւեսցէ դոյզն ինչ աղջամուղջ՝ մեծիդ ճառագայ-
թից ։ զի՞արդ համբարձցի կշռեսցի ընդ խաչի քո
կրից՝ [19] խակութիւն հեշտութեան մարմնոյս տկարութեան ։
Օ՜ ինչ երևեսցի յաչս ամենակալիդ քոյ առատու-
թեան՝ կոյտք մեղանաց ամենայն տիեզերաց ։ ահա [20]
կոշտ մի հողոյ դիւրափխրելի՝ 'ի կարծրութէ բախ-
ման վանեցեալ, իբր զպղպջակ անձրևոյ բազմազեղ
հոսմամբ քո կամացդ՝ չքացեալ պայթեալ անդստին ։
Օ՜ ինչ պիտոյ են քում զօրութեանդ ամենահնարդ
կարողութեան՝ ժամանակաց առաւելութիւն առ յանցուա-
ծոց իմոց քաւութիւն ։ [21] Ո՛չ քթթել մի ական, ո՛չ
խուն մի տեսութիւն ածանցական, ո՛չ սակաւ մի նայե-
ցուած փայլական, ո՛չ կիսամասնեայ յամրութիւն, ո՛չ
փութացելոց ոտից յեղեղումն, ո՛չ յելից բարձրու-
թէ միոյ կանգնոյ կաթի անկելոյ, ո՛չ գիծ մի չափոյ՝
մտաց հետևեցելոյ, ո՛չ նշուլից արագութիւն, ո՛չ շնչոյ
տուրևառութիւն, ոչ՞ինչ յայսմ յանգոյ և յանտպա-
ւորական նմանութէ անձև օրինակաց յաւէտ ան-
կայից՝ այնքան առժամայնք կամ հարևանցիկք, որ-
քան եղծմունք, ջնջմունք և հալմունք մեղացս սառ-

նամանեաց պահեստի՝ քում զօրութեան ա՛ծ ամենայնի տէր յս քս, որդի անքնին կենդանւոյդ այ։ Որ տաս պարգեւս արեւ քաղցրութեան չարաց ընդ բարիս. եւ անձրեւես երկաքանչիւրոցն անաչառապէս։ Աշուես սահմանես իրաւամբք՝ եւ ” զվտանգս կրիցն հաւասարաբար. որոց մեծ է հանգիստն առ ակնկալութիւն պարգեւին, փոքր խիթանաւ փորձութեան զսակաւութիւն պարտուցն աստէն վճարես. իսկ որ զերկիր ընտրեցին, ներես ողորմութեամբ, տալով եւ առ ցա դարման ընդ նոցա՝ մինչ առ քեզ դարձին սպասես։ Դու քեզ փառք ամենազօրիդ՝ առ ամենայն հրաշագործութիւն բարեխնամող երկայնմտութեան, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

(1) Առ ամէնայն բան : Առաւել քան զամ բան եւ զմիտս՝ երկայնամիտ ես յամենայնի : Կամ, առ ամենայն բան, այսինքն թէ 'ի խոստանալ բարիս, թէ 'ի կատարել զնոյնս, թէ 'ի փրկել 'ի փորձութեանց, թէ 'ի լսել աղօթից մերոց, թէ 'ի պատուհասել, մինչ երկայնմտութ[եամբ] վարիս : Զայն միտս թուի ընդարձակել 'ի յաջորդ բանսն, յորս ասէ՝ ողորմիս յորժամ չիք ակնկալութիւն. մարդասիրես՝ յորժամ ներքոյ եւ արտաքոյ պաշարեն վտանգք. բժշկես՝ յորժամ յամենայն անդամոց պակասի առողջութիւն, եւն :

(2) Անդ է ողորմիս : յայնժամ, կամ յայնժամ կատարի առաւել ողորմութիւն, յորժամ չիք ակնկալութիւն վաստակոց բարի գործոց :

(3) Տեառնէ խնամոցն : Յորժամ ճարտարութիւն կամ հնարք մարդոց խափանեցաւ, յորժամ խորհուրդ մարդոց մթագնեցաւ, եւ ոչ կարէ ընտրել զուղիղն եւ զպատշաճն, յայնժամ երեւի քո բարերարեալն՝ յառաջնորդել, 'ի լուսաւորել :

(4) Բնաւ անդամոց : յորժամ կենդանութիւն կամ առողջութիւն ամենայն անդամոցն բարձաւ, կամ հեռացաւ :

(5) Ողջացուցանէս : 2 օրին. առողջացուցանէս : մի օր. ողջացուցես :

(6) Քաղդ ազգակցութեան : այն է սովորական քո ընտանի բնութեամբ, կամ զօրութեամբ :

(7) 'Ի սոյն ծանեաւ : Յայտնապէս ծանուցեալ գիտացից զհաճելին քո յղեծայ աղօթիցս ըստ առաջին գթութեանդ, եթէ զչար սովորութիւնս իմ բարձցես :

(8) Հիւսին բանք : Յօրինեին բանք գովեստից, եւ եղանակին ձայնք օրհնութեանց, յորժամ բարի Տէրն պարգեւեսցէ չար ծառայից զայն բարիս՝ որ բարեգործացն վայել են : 'Ի շնորհել տանուտեառն զպարտս բիւր քանքարաց ծառային, մինչեւ օրհնութիւնք արդեօք հնչեցին 'ի ծառայակցաց նորա :

(9) 'Ի բազմանալս ամենազօրին, այսինքն ամենայն իրօք պարգեւարեալ : գահոսյ գրգեցուցանիցէ : մի օրին. գահից գրգռեցուցանիցէ : այլ օր. գահոյից գգռեցուցանէ :

(10) Բրեկոյ զուլն դիփեոցէ : այսինքն սպառեսցէ, մեռեցէ : ըստ այսմ եւ 'ի յաջորդսն՝ հոյել, յուսալ, խնամին՝ սպասել, մնալ, կասկածել :

(11) Խոստովանեցաք քո : Այս են խնձք սրտից մերոց՝ ազդեալք 'ի ծա֊

նուաստեալ կամ յօրինապահելի փափկասիրութեանց քոյ, որովք չկամիս զմահ
մեղաւորին, այլ զդառնալն և զկեալն, ևն:

(12) Աղէնջա Գրէլ լինչ: Որ սքօղեալ մարդասիրութեամբ և զգուշելի գործովք, այլ և ներքին լուսով միտաց և յաւատարմութեան կամաց շարժեցեր զիս զգաստանալ: Ահա դիտոյ յափուշ ողջէր. այսինքն վասն որոյ զքո ուսուցեալ և աղաչեալ աղաչանս՝ 'ի քոյ շնորհաց զու կատարեալ. կմ, զքո յառաջ ասելոյ՝ որով առնես առ մեզ, զարձակումս առ իս, և այլն, զու զնոյնն շնորհեա զառնալով առ մեզ. կամ, ողջէր, մարթ է առնուլ՝ ընծայ, պարգև. խորհ թէ զքո անսահման և վայելչական պարգևս ներողութե, անոխակալութե շնորհեա: Եւ բոյ դժանջ ողորմութեանց քոց, ըստ ողջունաց տոռայլին: Հայե 'ի բանն առակաց. (Ժ. 21.) * Բազմաց սիրելեաց խնդ զմեծութե, և զգաստն նոցա լրացեաց բարութե: ||

(13) 'Ի համէտրս եարէղդ: Այս, և յաղթող բանքն ոչ խմանին 'ի ներքս յածել, այլ 'ի գործս իւր՝ զոր 'ի մեզ երևեցուցանէ. որպէս թէ ասել. 'ի գործս շնորհաց և ողորմութե քո մի խառնեսցես զպատուհասս, որք արժանի են չարեաց իմոց. Մի ցուցցես զգործս ոխութե և ցասման՝ որք քեզ անհելիք են, ընդ գործս գթութեան, որ քեզ սիրելի են. 'ի պաշտելի արարուածս քո՝ մի զոյլին անհելին քո՝ մռունք, գործք արդարութե. և դաժանութիւնք, գործք խստութե, և մեծագանայն իմ չարեաց, մեղաւորութե մեղք և թշուառութիւնք:

(14) 'Ի ժափէնիդ կենաց: Ըստ սովորութեան գրոց՝ այլևայլ ազգն մտանկանք կամ գալրութիւնք, յորս գրին արդարք և մեղաւորք ըստ խառնքանչիւր գործոց. որպէս 'ի յայտնութե. Ի. 12. * Եւ գրեանք բացան. և այլ գիրք բացաւ կենաց: || Այլ քանզի այն մատեանք խորք ոչ այլ ինչ են՝ քան թէ մի և նոյն անվրէպ գիտութե ամենայնին մտաց՝ յոբոշումն արդարոց և մեղաւորաց, նմին իրի աստանօր ասէ մի վարդապետս, թէ մի գրեսցես 'ի մատենիդ կենաց զմեծու ապարանեց իմոց. այսինքն յամենայնին միտսդ՝ որ է մատեան կենաց, մի գրեսցի մեծու գասապարտութեանս:

(15) Ջանհնարաորաց խնչ: Աստանօր կարգ չարադրութեան այլափոխ է, և պարզի այսպէս. այլ զանհնարին խնձ համարեալս ցաւցանելին դժնդակն և հեշտականացն. որով մեծացուցեալ կրկին տուանել զանուան յո փր 'ի նուն, այսինքն 'ի նոյն անհնարինս: և կրկին ասէ, այսինքն իբր բարկութար յաղթելին, և իբր ամենազօր 'ի գիւրել զանհնարինս:

(16) Ո՛չ այնչափ հրաշալիւք: Թէ և անթիւ են պարտիք մեղացս, այլ ոչ այնչափ զարմանալի՝ հայելով յապականութե բնութեաս, 'ի տկարութեն, 'ի տգիտութեն, 'ի զանազան փորձութես սատանայի, և 'ի պատճառս մեղաց: Բայց քո անկարօտ բնութեանդ ողորմելն և ներելն ապերախտից և թշնամեաց՝ 'ի վեր է քան զամենայն զարմանս:

(17) Զէնք մեղանաց: Զէնք կամ զօրութիւնք մեղացն՝ զորս ես ամրացեալս պատրաստեցի, ոչ են այնքան կարողք առ 'ի կենդանանալ վերստին և տիրել ինձ, որչափ յիշատակ մահու քո կարող է վանել զզօրութե սատանայի և մեղաց: Հայե յառաջագայն Հռով. Զ. 12. 13. 14. Մի այսուհետև թագաւորեսցէ մեղք, ևն:

(18) Փոքր խաւար: Գործ մեղացս՝ որ առ քո զօրութեդ համեմատեալ, են իբր փոքր մթութե և խաւար առ ափ, զի՞նչ կարեն աղգել: Կամ, փոքր խաւար մեղացս՝ զի՞նչ լիցէ առ ամենայն լոյսդ:

(19) Խաղաղութիւն հեշտութիւն: Խաղաղ կամ անսահմանական հեշտութե ակամբ մարմնոյս՝ զիարդ հաւասարեսցի ընդ չարչարանաց խաչիդ:

(20) Կայ զի հողոյ: Հաւաքումն մեղաց ամենայն աշխարհի զի՞նչ երևեա

ցի առաջին ամենակալ առատութեանդ , բայց խորև կոչա մի հոգւոյ՝ որ գիւ-
րաւ փչելի 'ի հուրծրութէ բոխման , փոխանակ առնելոյ՝ 'ի բարձմանէ կամ 'ի
հարսնմանէ կարծր նիւթոյ ։ Եւ խորև պղպջակ անձրևոյ՝ որ պայթեալ
անյայտ լինի 'ի զերդմանէ կաթից քոց ։

(21) Ո՛Ւ ՔՆՆԵԼ Զ ։ Ո՛չ թագաւորութեան մի աշխարհ . ո՛չ փոքր առատութիւն ածանցա-
կան , աղբիւր անսպառ . ո՛չ առակաւ նոյնեցուած , անուշիկ կամ երևումն փոյ-
լական որ լինի յամենայն ։ ո՛չ կրկնամանելով յաւիտեանն , առակաւ կամ փոքր
մի յաւելուածս , զեղեղեալք . ո՛չ արարագործ ամենայն յեղեղուածս , փոխա-
նումն . ո՛չ 'ի ծագման կամեցողութիւն բարձրութեան հաճելի ամենելոյ , այսինքն ժա-
մանումն յերկնից կամ թէ անկելոյ . յայլ առաջիկայ եղեալ էր , հաճելի
ունողելոյ , որ չէ յարմար . վասն որոյ ուղղեցայք լրաւ մեր օրինակաց ։ ո՛չ
Գէծ Զ . ո՛չ գէծ մի չարիս կամ ձեռոյ՝ երևակայութէ կամ մտօք ըմբռնե-
լեալ՝ որ յոյժ արար կատարի ։ Ո՛չ արարող ծագումն և ծառայութեան նշա-
նեց լուսոյ . ո՛չ անդադար առաւելութեան չնչոյ . ուղղեալ յաջողման . և ո՛չ
մի յառաջեալ անհատական և անյարմար օրինակաց յաւէտ անկոյրից , յոյժ
անկայուն և անտանելի եղելոց , ուժգին առանձնակի , սակաւաժամանակ
կեացք են և գիւրանցիկք , որքան եղծմունք և ընկղումն զանձնելոց մե-
ղաց ։

(22) Զմկանդս հրեղն ։ Որպէս զմայլելումն բարեաց աշխարհի անանցա-
նալէս պարգևեա չարեացն ընդ բարեաց , նոյնպէս զփորձանս նեղութեց
խռովութիւն կշռեա հաւատարմապէս արդարոց և մեղաւորաց , զորս՝ զի
արժանիք են . խակ արդարոց՝ զի նոցա անհնարութեան համբաւրան պահի
յերկինս . և առա փոքր մշտօք զառակաւ պարտս մեղացն մեծարեալ մտք-
րես . բայց երկրաւորացն ներես՝ առաւել զզարման կենաց ընդ արդա-
րոցն . զի միշտ զարձի նոցա առաջնա ։ Կիմ , առա և մեղաւորաց զմխիթար
խորև զարման աղաչխարութե , առաջնելով զարձի նոցա ։ Եւ վասն այսր
ամենայնի փեղ բառս ամենադրէր , քեզ միայն վայել են փառք՝ որ ամենա-
կարող ես 'ի հրաշագործել զամենայն երկայնմտութե առ յանցաւորս
և անարժանս . տե՛ս և 'ի բանն ձէ . լծ . 14 ։

---

[1] Ս՝ երաժին յաւելուած հրէէն հեծուն՝ Նորին հոգւոյն , առ Նոյն
աղէրս մաղթանաց բանի ։

[2] 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ․․ ։

Բ Ա Ն ․ Ժ Ա ։

ա ․ Ս ու արդ՝ ընկղմեալ զմայլեալ և խոպառ ծած-
կեալ 'ի յանձառութէ առաւելութեան
բազմամասնեայ յաճախութե մեծիդ երախտեաց ,
որ ամենառատ լրմամբ անհունապէլեալ՝ յաջմէ և յա-
հեկէ [2] 'ի դիմաց և 'ի թիկանց համբարեալ կան անս-
պառութիք ։

Պարզեալ առ նմին ³ նրբնապատէն երկրորդութեան ծածայէն հո-
գւոյն աղբերցեալ, որ ինչ յառաջաբերելոյն սահմանեցաւ աստուածու-
թեան՝ առ ամենայն լուսաւորութեան եկեղեցւոյ դաւանութեան՝ ընծա-
յելս եղեալ աստանօր: Այս որ առ անշնչականս նուրբեղէն՝
ցուցանէ երանաւոր նկարագրութեան անճառունելէ:

ա. Մատուցանեմ ընծայեմ դարձեալ աստանօր
աւանդ ⁴ գովեստի դաւանման ճշմարտա-
կանի: Զի որպէս երբեմն ⁵ հերձուածականին չա-
րափառութեամբ՝ ամենապատիրն խաբէութեամբ՝ նենգողին
կարթիւն հատուածեալ 'ի բաց հերքեցայ՝ ելեալ 'ի
դրախտէն, արդ միաւորականաւս այսու ուղիղ ամբ-
ծութեամբ՝ 'ի յաւանդ իսկապէս շնորհի՝ անդրէն միւ-
սանգամ համբարձեալ սովիմք՝ 'ի թռիչս թեւոց լու-
սոյ, ահա յերկինս ժամանեցից հեռեւեալ:
բ. Եւ ⁶ քանզի յարգանդէն՝ յորում յղացայ հա-
գւոր երկամբք ծնիցեալ, զմեծ և զերջանիկ դշխոյ
անարատ՝ ⁷ ամենից կուսից իսկուհի՝ զպանծալի մայրն
իմ գովելի սպառ է կանոնաւ սահմանի բանի արձա-
նագրել յայսմ տառենի. զի ծանիցի ցուցցի՝ և այլոց
եւս ապագայից ազգաց պատմեսցի որքանութիւն փա-
ռաց խնկելոյն, ⁸ արժանաւորապէս պաշտմամբ պա-
տուեալ՝ իբր մաքուր մարմին ⁹ ընդ գլխոյ մարդեղու-
թեան բանին այ, 'ի յիշատակ ճառիս հաւատոյ՝ եր-
րորդութեան դաւանութեան: Այլ արդ՝ ¹⁰ 'ի յայս օրի-
նակ հոգենկար պատկերի բանի, որ զխորանէս լուսոյ
յարմարի, ընկալ զիս՝ գթած օրհնեալ, քաւեցեալ
և սրբեալ 'ի սմին: Զան սովաւ 'ի հոգւոյս զնախա-
տինս մեղաց. անմեղս և անբիծս ընդ հովանեաւ
սորին բազմեցից. ¹¹ յաւէտ զտկարս 'ի տունն դաւթի,
և անտուստ փոխեալ 'ի տունդ այ, ըստ մարգարէին
ձայնի՝ որ 'ի քեզ՝ յո ակնարկի: Մի ¹² սոսկ զմտիցն,
և մի անօգուտ զելիցն հեռաւորութիւն արասցես. մի զհա-
ւատոյս ջերմութիւն ցուրտ համարեսցիս, և մի զհամ-
բոյր ողջունիս՝ անկարգ ինչ վարկանիցիս. մի զպաշ-
տօնն՝ ապաշնորհ գրեսցես, և մի զերկրպագութիւն՝
անխորհուրդ լքցես. մի անպտուղ լիցի տեսականու-
թիւն պատկերին, և մի անմնշոյլ կերպարանին աքանչե-

լութիւն. 13 մի՛ անհուր ողջակիզին սպանող մեռցի, և
մի՛ պատարագ ուխտի այս ճառի՝ արտաքոյ ցրեսցի.
մի՛ ճաշակող լուսոյ՝ ինձ մահու լիցի, և մի՛ բաժակ քո
կողից արեան՝ 'ի դատապարտութիւն եղիցի։
Դ. Աղաչեմ զքեզ՝ տէ՛ր իմ 14 միդ յէութէդ, որով
զգիտութիւն հօր քոյ և հոգւոյդ սրբոյ ճաշակեալ ծա-
նեաք. քանզի 15 'ի քէն իսկ վարդապետեալ զամե-
նապարգև կարգս եկեղեցւոյ, 16 և 'ի սմին աղօթա-
նուէր լուսարան կենաց փրկութեան բարեաց, տարա-
ծեալ զսիրտս՝ ձեռաց համբարձմամբ՝ զայս կնդրուկ
բանի բնակողիդ 'ի սմա՝ տիրողիդ բնաւից երեքսրբե-
նիդ մատուցեալ, յաւէժ ընծայեցուցանեմք այսու
բարբառով բարեշնորհութեան։

Յաղագս որ 'ի Նիկիայն սահմանեցաւ բան, այլ եւս խորհրդածութիւն
ծածկին աւանդութիւն։

Ե. Փառաւորեմք վերաձայնեալ նուագօք օրհնու-
թեան երգոց՝ 'ի հաւատ պաշտաման բանի՝
զբարեհրաման պատճառն եղելոց՝ զերրորդութիւնն
անսկիզբն՝ անհամեմատ բարձրութիւն, անհասական
խորհրդոց և անըմբռնելի իմաստից, անզննելի ըզ-
գայունեց և 17 անքերելի եղելոց. 18 քանակութիւն վեր-
նականն երկնի, և անսահման ներքնային խորոց. 19
լրութիւն սպառմանց, և նախադրութիւն սկզբանց. 20
մի՝ յերից անշփոթ կերպից, և երիս՝ միոյ անհա-
տուածելի իսկութեանց. 21 'ի վեր քան զմտաց անար-
գելութիւն՝ յարաձգեալ ամենայն ուրեք բովանդակ։
Անփոփոխ բարի. անսասանելի ուղղութիւն. 22 անխառն
կերպարան սիրոյ. մեծութիւն անյաջորդ. բարձրութիւն
անխոնարհելի. 23 անվատնելի տեսականութիւն. բա-
րերարութիւն աննուազելի. կամք կայուն. հրաման
կենդանի. ակնարկութիւն փրկչական. երանութիւն ճշմա-
րիտ. ակնկալութիւն հաւատոյ. խոստումն անստելի. 24
աւանդ արդասաւոր. ստոյգ աւետիս. 25 վերամբար-
ձութիւն անձեռնարկելի։
Է. Մի հայր՝ միայնոյ որդւոյ՝ միական հոգւոյն պա-
տուեալ. ամենահարուստ բարութիւն՝ ամենևին ունայն

'ի չարէ. օրհնաձայն գոհաբանութ՟ի՝ անքննին ներբողիւ գովեալ:

Է. Մին բարձրեալ ահաւոր անուն՝ [26] համապատիւն կցորդութ՟ենց, անպատումն ազգականութ՟ենց, եռալուսեանն զուգակցութ՟ենց, անյաւելուածն լրականութ՟ենց, ինքնիշխան կամաւորութ՟ի պատուասիրեալ առ հայրն հանգունատիպ՝ գործակցութ՟ի հոգւոյն սրբութ՟ե խոնարհեալ իջեալ 'ի յերկնից, աննուազ գոլով յընտանի փառացն, հաճեցաւ մտանել յարգանդ մայրենի ա՟ծածին կուսին մաքրութ՟ե. յորում [27] աճեցոյց զբոյսն օրհնութ՟ե 'ի լուսասահման անդաստանին անարատութ՟ե. ընդ ամենակատարն էութ՟ե համամսնեալ յանանջրպետ միականութ՟ի, թափանցական խառնութ՟ի յա՟ծութ՟ենն ոգի բաղկացոյց ըղձոյութ՟ի չնչոյս հրաշապէս: Որով [28] անստամբակելի երաստանաւ սանձաց կրթութ՟ե զստահակութիս իմ հանդարտեցոյց. և կամաւ ընծայեալ խաչին՝ ամբարձաւ ծառլկին պտղոյն կենաց՝ [29] 'ի ծայրս լրութ՟ե անմահականն տնկոյ. 'ի մահ վիրաւորեցաւ՝ [30] ա՟ծութ՟ենն անընդմիջելի 'ի մերասերն մարմնոյ, որով կենսացոյց զգործին պարտեաց, արարչութ՟ենն իսկութ՟ե 'ի նմին յաւէտ անբաժանօրէն ընդ նիւթական մարմնոյն վշտացեալ: Իջեալ 'ի վայրս խաւարային դժոխոց, եհան զկապուտն իւրաստեղծ 'ի կապանաց օձտողին. և իբր 'ի նիրհմանէ քնոյ զարթուցեալ, յինքն նահանջեալ զզինեցումն մահու, կանգնեցաւ կենդանացաւ ա՟ծապէս՝ ելեալ 'ի յերկրէ հացն կենաց և հովիւն հօտից բանաւորականաց: Հաւատարիմ եղև յաշխարհի. և [31] երևեցեալ նոյնութ՟ի՝ ամենևին աննուազելի, որպէս եկն համայն, և համբարձաւ բովանդակ. բազմեցաւ նստաւ 'ի գերունակն գահոյս՝ [32] նախնականին պարզութ՟ե արարչական փառաւորութ՟ի: Զոր խոստովանիմք ա՟ծ բարերար և տէր բոլորից. որ դատի զա՟մ երկիր արդար ընտրութ՟ի յաւուրն մեծի. որ [33] ինքն է ակիզբն՝ և ինքն կատարած. նոյն առաջին՝ և նոյն առյապայ, անպակաս բովանդակութ՟ի թագաւորեալ 'ի լոյս անմատոյց:

Ը. Օրհնաբանեմք ընդ հօր և որդւոյ՝ և զանբա-

ժամնելի բղխումն նոցին փառակից հոգւոյն տէրու-
թեն։ Որ ստեղծ զբնաւս և կենդանածնէ զամ. որ [34]
անդստին իսկ 'ի բնէ համապարփակ մթութե աշխար-
հական միգի՝ շրջէր նկարէր և կերպարանէր ամէ-
նունակ ջուրքն անբաւութե երկրատարածն ծովու՝ 'ի
կատարումն արդեան խորհրդոյս՝ զնոյն աւազանն լու-
սոյ։ Նախ արար, և այժմ գործէ. գոյացոյց, և միշտ
կատարէ՝ արուեստս, սքանչելիս, նախատեսութիս սրբա-
անելոց, [35] աղդմունս ծծօրէնս, զօրութիս զարմանա-
ւորս, մարգարէս, առաքեալս, վարդապետս՝ վար-
ժօղս կրթութե հանճարոյ։ [36] Օ սրբարարն մատուց-
ման արեանն քո՝ յարդարեաց. քաւութիս անձանց՝
առողջութիս մարմնոց՝ ըստ նմանութե քո՝ ողոր-
մութի հրամայեաց։ Կրտեաց և [37] գեր քան զջուր,
ինքեան միայն բաւականութի՝ նորոգեաց լուսաւո-
րեաց. համապազ նովին բարեգործութի զօրանայ։
Կկայեաց միածնին ծնութեն՝ 'ի հոսանսն յորդա-
նանաւ. օրինակաւ տեսութե ամպոյ՝ ցուցաւ ձայնիւ
հօր 'ի լերինն թափօրական։ 'Ի նոյն տիպ նմանու-
թե՝ հովանի եղև յակոբեան տոհմին՝ 'ի յելսն եգիպ-
տոսի. յուղեգնացութիւն զօրավարութեն մովսիսի՝
հողմով սաստկութե զփարաւոն ընկղմեաց։ Նա-
հանայս կատարագործէ. իմաստունս կազմէ. թա-
գաւորս զօրացուցանէ. քաւութիս ընձեռէ. կեանս
շնորհէ մահացելոց՝ 'ի նորոգութի յարութեն։ Նոյն
ինքն է [38] ծնումն մարդացելոյն ծոյ. մշտնջենաւոր հա-
ւասարութի ընդ հօր երկրպագեալ՝ 'ի պատիւ մե-
ծութե որդւոյ. անսահման փառաւորութի օրհնեալ
յաւիտեանս. ամէն։

[39] Նորին առաջեալ 'ի խորհուրդ սէր եկեղեցւոյ, ընդդէմ ղեղծ
աղանդաւորացն նեստորականեցւոց, նոր ծանօթեցւոց։

Թ. Պաւանեմք 'ի հաւատ ուղիղ և անխտրօրինակ
ամբծութե հաւատուրիւ շրթանց ողջու-
նեալ [40] զկառուցեալս խորան յանշնչական արձանաց՝
ծծայլին բնակութե եկեղեցւոյս շինուածոյ։ Որ [41] գե-
րագանց գտաւ և երկնի ամենազարդ բարձրութի.
որ 'ի նոցին իսկ [42] յառաքելականացն դասուց հիմնե-

ցաւ, յաշակերտաց վերնոյն խնկեցաւ, 'ի սպասաւո-
րաց բանին պաշտեցաւ: Սկիզբն առեալ կենացս
այս գանձու՝ 'ի վերնայարկն սրահէ, խորհրդակա-
տարն վայրէ, զոր հոգին այ լցոյց, փայլեցուցեալ 'ի
նմա զօրութի յաւուր մեծի պենտակոստէին. նախ
զտունն բարետեսիլ՝ յօրինակ սրբութե կատարման
շնորհի այսր եկեղեցւոյ [43] կանխամեծար առաւելու-
թե, յորում ապա և 'ի նմին բնակչացն տուաւ լու-
սանորոգ բարեփառութի: Ուստի արիւն հզօրին այ
բաշխեալ մատուցանի՝ [44] յաւէտ քան զհաբելին մա-
հու գուժարկու, մեծաւ բարբառով ձայնի բերկրու-
թե կենդանութի անմահութեան 'ի սմա աղդելով:
Քանզի ոչ է կար զօրութե ուրուք ընդ երկնաւ յան-
դիման արեգական՝ 'ի սպասաւորութե խորհրդոյ այսր
ահաւորութե ձեռնարկել, եթէ ոչ ընդ թևօք սորին
պահեսցի. Նա զի [45] ոչ երկնիւք բաւականանայ այս
նուէր տէրունի մարմնոյ, եթէ ոչ զայս ձեղուն օրհ-
նութե ծածկոյթ ունիցի. վասն զի մահու անիծիւք
հերքի այր ըստ օրինին, որ արտաքոյ խորանի այս
վկայութեան՝ զածային պատարագն մատուցանէ.
մանաւանդ զի [46] պարտաւոր արեան կոչեսցի, որ ոչ
[47] զանձինն օրինակ արիւն՝ յայսնուիրան ընծայեցուս-
ցէ: Սի՝ 'ի սմա լուացումն 'ի մահն քսի, [48] զի մե
յանդէտս անարգեալ ածութիւնն՝ 'ի ծանուցելումն
զնախնին կրեսցէ: [49] Սի ձեռնադրութի 'ի պատիւ-
օծութեան լուսոյն, զի մե յանբծութիւնն խաբէու-
թիւն խառնեսցի: [50] Սի և շնորհօք, քան թէ ա-
պաշխարութեամբ՝ քաւութիւն, զի մե ճշմարտու-
թիւնն կերպարանօք խորամանկեսցի: [51] Սի յըն-
տրութին ապառնի՝ հաւատ, զի մե սպառնալիք հա-
տուցմանն՝ զրոյցս ինչ օտար համբաւոյ գրեսցի: Սի
երկաքանչիւրոց [52] գոյութեց մերոց իրաւամբք կշտամ-
բութի, զի մե կիսամասնեայ առ մարդն ներքին և
առ արտաքին՝ չարի և կամ բարւոյ փոխատրութին՝
կարծիցի յանմահ զօրութի արքայական որդեգրու-
թեն. զի ընդելութե երկրայնովս՝ առաւելութի վեր-
նումն թագաւորութե յայտնապէս ճշմարտեսցի: Սի
յոյս կենդանութե [53] առ անեղծութին մեզ, զի ա-
ներկևանութի խոստացելոցն՝ 'ի միտս ունկնդրացն

ծանուցեալ հաւատացի ։

Ժ. Ոյս [54] դշխոյ պաշտելի՝ անշնչական եկեղեցի՝ տայ կեանս, և մահու իշխէ, ըստ օրինակի աղամեան պտղոյն յարմարապէս ճաշակելի. գերազանց քան զբանականս՝ յանշնչութենն հրաշագործէ. մինչ զի կատարումն ընձեռէ և նորոգ հաստատէ, [55] վերստին նկարեալ 'ի մեզ զկերպարանն փառաց լուսոյ. Գործեալ ևս է [56] տեսակ մեծութե վերնումն կամարին՝ ոկզբնաւոր յառաջակառոյց քան զբնակիչս հոգեղինացն 'ի նմա զօրութեանց ։ Ոյր իմն ընծայէ [57] թուիչս մարմնոց՝ ընդ թեթեւութիւն հոգւոց, պատուականին հարստութե՝ զանարգն յարգաւորեալ ։ Ո՛չ [58] ինքնակիր մեղօք զաղբանայ, եթէ ոչ՝ 'ի մարդոց չարաց, և կամ անհաւատից կոխիցի ։ [59] Տիպ իմն է զարմանաւոր՝ յաղթօղ իմաստից մերս տեսութեց. անբանն 'ի բանաւորէն կառուցեալ, նմին օժանդակեալ՝ իբր վեհագոյնն յաւէտ նուաստի ։ Մեծ է քան զմարդ, [60] որքան ընտրեցելոյն մովսիսի՝ ցուպն յաղթողական. առաւել քան զբանաւոր, որքան զահարոնին՝ գաւազանն խորհրդական ծաղկեցեալ. գերազանց քան զմտաւոր, որչափ քան զեղիաս և զեղիսէոս՝ գետահերձ մաշկեակն սքանչելահրաշ՝ փայլեալ արուեստիւ ։ Օգնուե պարէ կրկին ամենակատար [61] սրբասնեալ ձեռաց՝ մաքրաբար, քան թէ զինապէս. մարմին նիւթական՝ [62] քարի և հողոյ գոյակից, հարազատ զգայականաց և սրբոց ։ Իբր զվէմն անմահ կենդանի՝ 'ի կործանումն է և 'ի կանգնումն. [63] որպէս զդատաւորն ամենից հոգւոց՝ հանդիսանայ հրաշապէս ազդմամբ՝ յանէծս և յօրհնութիւն. իբրև տեսօղ աներևութից՝ զոմն հրապարակէ, և զոմն տածէ. առ ինքն կոչէ գրեալ յանուանէ՝ իբր զտիրօղ հրամանատար էիցս ։ Իբր զլեառն յաւիտենական՝ անհարթուածելի է 'ի դիմամարտից. [64] ըմբռնէ զհոգևորս՝ իբր զհնարադրուե մեծին արուեստի. [65] անեմեղս և անվրիպութիւն՝ ըստ քնի հետոցն ընթանայ. բարձր ձոխութ անպատկառաբար համարձակապէս՝ զօրէն գովելոյ գլուխ ամբառնայ ։

ԺԱ. Ոյնքան մեծ ունի սրբութե, մինչ զի զօրս ըստ պատկերի ոյ եղեն, [66] կանոնաւ խօսրէ ։ Յետ յո-

գունոց ընտրութեանց փորձից՝ թէ համարձակեսցի մարդ ոք սխալեալ՝ 'ի գաւիթս նորին մտանել՝ ոչ պղծի, այլ ընդ անպատրաստից թերութեանց դժուարի. ոչ նզովի, այլ տեղի տայ ոչ գիտողացն զշնորհին զչափ. ոչ լքանի ինքեամբ՝ պարտաւոր իւրոյն գտեալ, այլ 'ի մերոց գործոց խրթնանայ. ոչ թողացուցանէ 67 երկիցս մատչել յըմբռնումն ստիցն կենդանատուաց, ըստ տիրական անձառ խորհրդոյն. 68 ոչ կրկին յաւուր՝ զնոյն ցուցանէ, զի մի անընտրաբար՝ նախրանն խայտառակեսցի: 69 Աշտակցէ կարեաց զօրապէս՝ իբր անախտակիր ապականութեանց՝ որ 'ի մեզ շարժմանց. առանց բարբառոյ յորդորապէս հրամանաւ դատի:

ԺԹ. Այս զի և տապան իմն է մաքրական, 70 կրկին երջանկական, 'ի հեղձմանէ կենցաղոյս ալեաց պահապան: Ոչ բազմօք անբանիւք գազանաց դասուք՝ և սակաւ մարդկամբ, այլ ընդ երկրայնոցս և զվերինսն յինքն հաւաքէ. ոչ յայլս խռովութեան բերի, այլ 'ի բարձրութիւն երկնիւ համբառնայ: Իբր զաշակերտ հրահանգեալ հոգւոյն այ՝ 71 փախչի 'ի նենգութէ. 72 ոչ 'ի բողոք մահու՝ մարմնոյ հարուածոց, այլ 'ի կենացն աւետիս՝ ըմբռնեալ ածէ. ոչ նոյիւ ձեռնարկեալ գործի, այլ հաստողին հրամանաւ շինի. ոչ մովսէս ընդ բեսելիէլ, այլ միածնին այ՝ հոգւովն սրբով զսա հանդերձէ. ոչ 73 յարաշարժ հանապազափոխ, այլ մշտակառոյց հիմամբ աննասանելեաւ զսա հաստատէ: Դարձեալ իբր զտապանակն անխօս փայտեղէն մածեալ տախտակօք առանց զգայութեան տեսողականաց մեզ առաջնորդէ. 74 որպէս կերպարան անքանակ էին յառաջ հետևեալ՝ 'ի հանդերձանս լուսոյն կենաց՝ տեղի պատրաստէ: 75 Ընդ ոզինելի անտժուստ սատակէ, եթէ ոչ խաչապէս յոգւո բերիցի. սպանանէ վատնեալ վաղվաղակի առժամայն, եթէ անասնայինն ըծակցութբ երկրասիրաբար գետնակոխ սայլիւք՝ իբր զանօթ ինչ ձեռնազննին բարձեալ տանիցի: Ոչ 76 լեզուաւ մարդոյ, այլ բանիւ հրեշտակաց խօսի. ոչ ունկան գոյականութիւ, և արագապէս մտառեալ լսէ. ոչ ձայն կերպաւորական բարբառոյ, և զպատգամս գործոցն յոր՝ համօրէն

տղանց պատանեաց հաշակէ. ոչ խաղալեաց շարժա-
կանութիւն, և ածայնով իմն կենդանութեան հագագա-
ւագդէ: Ո՛չ ոսկերաց և ջլաց յօդուած, և [77] երկուք
հազարօք կանգնօք լայնութիւն՝ իբր զգունդն անհա-
մար՝ բարձրեալն այ, զկենդանական զօրութիւն գումար-
տակ՝ հեբրայական վառեալ ամբոխին, և այժմ ընդ-
նոսին՝ իբր զանմաքուրս 'ի սրբութէ զոմանս ախտիւ
մեղանաց ջեռեալս՝ հատուածեալ յինքենէ, հեռի
ուղեկցէ, տարեցեալոցն 'ի տաժանաւոր աղխասարկու-
թեցն: Այն իսկ [78] էութիւն այ մարմին եղելոյ՝ ա-
նուամբ այս վիմի նշանակեցաւ, պատառմամբ կողին
զբնաւս արբուցեալ: Ո՛չ [79] արեան երակաց ընթացք,
այլ լուսոյ վերնոյն շառաւիղք՝ թափանցանց միութ
ղոյն կենդանացուցեալ նորոգ պաշտպանէ. [80] ոչ
սողումն կամ զօրաբաբէլ՝ մահկանացուաց ոստիկա-
նութիւն, այլ ամենից ունողին իմաստ զսա գծագրէ.
ոչ աննուիրական հասարակաճաշակ իւղով առ 'ի
յակոբայ պարարի, այլ ահաւորին արեամբ՝ և փա-
ռօք մեծին օծանի: Ո՛չ [81] տուն երկրային նիւթոյ՝
քան թէ մարմին երկնային լուսոյ այ զսորին որդիս
կնքեալ ձեռնադրէ. ոչ կենցաղոյս յերկրէ յղաց-
մունս, այլ արքայութեան երկնից ժառանգս կրթէ.
զ'ի ծոց իւր գրգեալսն՝ գոգոյն աբրահամու ընծայե-
ցուցանէ: Փեսայ [82] հարսնութե սորա՝ որդին այ կեն-
դանւոյ. օրիորդք խնձոյից սորին՝ հայրապետացն
դումարք: Այն ինքն [83] մոռացումն առնէ այսակիր
բարձանցն կռամոլութեան, զի զերկնայնոյն այ ունի
զծանօթութիւն. օտարութիւն է ամենայնիւ դիւցն դրօ-
շելոց, զի 'ի համօրէն քարինս սորա՝ քս երկրպագի.
քակտումն է յայտնապէս ուրուական ըղձիցն ան-
տառաց, զի 'ի բնաւից մայրից աշխարհի՝ նմանութիւն
կենացն փայտի՝ 'ի սմա տեսոն նուիրի. խորտակումն
է համայն դիւապատիր յուռութիցն արձանաց, զի
քարն գովեալ կարկեհան ակամբք և վիմօք կենդա-
նեօք՝ այսորէն հաստատի:

ԺԳ. Այս յարկ չքնաղ և ածընկալ՝ [84] ազատ է միան-
գամայն 'ի յամենուստ ծառայութենէ. ոչ [85] օրինակ
վերնոյն սիոնի, քան թէ ճշմարտութիւն նմին ճանա-
չի. ոչ [86] կռապաշտութեան կապաւ՝ բագին, և կամ

լծով օրինին՝ տեղի պարտաւորութե՟, այլ տեղուանի
բարերարութեն պարգեւարան 'ի մէնջ համբուրի ։
Ո՛չ [87] սասանի երբեք՝ յայլ իմն կերպարան ձեւոյ փո-
խարկեալ, այլ 'ի նոյն շուք փառաց մեծապէս ըն-
դարձակի . սոյն ինքն և երկին երկնի՝ յերկրի լու-
սապայծառ կերպիւ հուշակի ։ Որպէս չէ [88] առանց
հօրն քո՟ւ , և ոչ առանց այսր մօր արգանդի յոգի
կատարիլ ։ [89] Նստուցն շրջի անբովանդակելին, եթէ
ոչ 'ի սմին տան տաղաւարեսցի . ոչ ունի տեղի գլխոյն
հանգստեան՝ տէրն բոլորից , եթէ ոչ 'ի յայս կայա-
րան կենաց մտեալ ագանիցի ։ Դ՛ան [90] 'ի կամար վեր-
նայինն երկնի՝ 'ի յայս հիւթաւոր բնակութե՟ առա-
ւել պարծի . [91] անքաւութե՟ ա՟ծեան լուսոյն, որպէս
զդէմս մարգարէին՝ և զօրինակս սորին ծածկեցին ,
որպէս փախեան 'ի փառաց երեսաց նորին , և նմա-
նութե՟ սորուն՝ որ 'ի տաճարին՝ ոչ հանդարտեցին ,
'ի տօն հանդիսի մեծի գովեստի , և 'ի բանականացս
դասուց խմբեալ նուագի ։ Ըստ օրհնի կրկին բազ-
ձանօք , քան 'ի դրախտն վայելչական ։

ժդ. Այս մայր հոգևոր՝ երկնաւոր՝ լուսաւոր , քան
թէ երկրաւոր՝ շնչաւոր՝ մարմնաւոր , զիս գգուեաց
որդի . կաթն ստեանց սորա՝ արիւնն քո՟ւ ։ Եթէ [92]
ա՟ծածնին իսկ պատկեր զսոյն ոք գրեսցէ, ոչ անօրի-
նի ։ Իբր զնշան խաչին փրկութե՟ զօրութեիս զարմա-
նագանս՝ և արուեստս բազմօրինակս կատարեալ
հրաշագործէ . բեմ ահաւորին ատենի՝ 'ի սմա հաս-
տատեալ տեսանի . սովաւ խորթաքարոյիցն հեր-
ձուածողաց՝ մոլեգնաճառ բերանք կարկին ։ Ունի և
[93] քարինս իմն իմանալիս և բանաւորականս , որով
զգազանամիտս անմաքուրս՝ բացուստ 'ի բաց տրո-
հեալ տարագրէ ։ Ծնանի և [94] ա՟ծս ոմանս եղականս՝
պատկերս մաքուրս՝ միոյն ա՟յ քո՟ւ ։ Ունի և [95] զդիրն
իւր ընդ արևելս՝ 'ի տեղի խոստման բնակութեն մե-
րոյ առաջնոյ . ձեռամբ իմն ցուցանէ յայտնապէս
զգալստեանն ա՟յ շաւիղ . զփայլականն առակ տիրա-
կան՝ 'ի դէմս բերեալ մեզ վարդապետէ . զփրկութին
'ի յելից անտի ծագման արուսեկին՝ քնեան երևմանն
'ի վերջնում աւուրն , արարածոց երկրի թարգմա-
նէ ։ Զյաւս հալածէ . ախտաժէտս բժշկէ . դիւաց

բռնութենց զօրէ ։ Արգանդ որովայնի տորին՝ աւա-
զանն կենդանարար ․ 'ի պար հարսանեաց սորա՝ դասք
առաքելոցն ։ Այնքան Ճոխացաւ բարգաւաճեալ
երանութեամբ, մինչ զի նոյն ինքն [96] փրկչին անուամբ՝
վայելչապէս յօրջօրջեցաւ ․ տիրամօրն լուսոյ կոչ-
մամբ՝ 'ի մերձաւորաց միածնին ձայնեալ կնքեցաւ ։
Ծփելոց մեղաւորաց՝ նաւահանգիստ հանդարտու-
թեն ․ խրախճանարան վերնոցն դասուց ․ բժշկարան
անսխալելի՝ տարակուսեալ պարտաւորաց ։ Երրոր-
դութին անպատում 'ի սմա փառաւորի՝ օրհնեալ
յամենայնի ։

ԺԵ ․ Իսկ եթէ ոք [97] ձեռն չարութեն 'ի վերինն ար-
քայուէ յանդգնաբար համբառնայցէ, և զիւր ինչ
մարմնաւոր , և կամ հնարք մարդկային , և կամ
արուեստ երկրակենցաղ՝ զսահմանեալ աւանդութիս
առ ձեռակերտս եկեղեցի վարկանիցի, և ոչ պարգև
առաւել կենաց , և [98] ակնկալութի ածային , և հո-
գւոյն սբյ յայտնեալ՝ լուսանորոգ նախագրութի, և
երախտեաց բարձրելոյն՝ ամենատուր լիականութի,
և կամաց արարողին՝ խնկաւորեալ խորհրդարան ,
և առաքելոց ձեռինն տղոյ՝ բարեհանճար հիմնար-
կուէ , և միանգամայն ասել՝ դուռն երկնից , և քա-
ղաք այ կենդանւոյ , և մայր կենդանեաց՝ ազատ 'ի
պարտեաց , և ճշգրիտ տեսակ կերպի երևակիս բա-
նականի, իմանալին՝ խորհուրդ հոգւոյս , և շօշափե-
լին՝ պատկեր մարմնոյս , և սրբութեցն անդանձա-
ւից՝ գերազանցեալ նոր սրբութի, և քմեամն նշա-
նաւ՝ պայծառապարծ պսակեցեալ, զայնպիսի ոչ խոս-
տովանողն՝ մերժէ յերեսաց իւրոց հայրն ամենա-
կալ՝ 'ի ձեռն բանին իւրոյ էակցի , բարձեալ 'ի նմա-
նէ և զաւանդ շնորհի հոգւոյն փառակցի ․ փակեսցէ
զդուռն կենացս այս առագաստի յանդիման նորին ։
Իսկ մեք զորս գրեցաք՝ սմին և վկայեմք, հաւատա-
ցեալ որում կարգեցաքս ․ յանուն և 'ի փառս ամե-
նակալ երրորդութեն և միում ծնութեն , յաւի-
տեանս յաւիտենից ․ ամէն ։

[99] Այն էմ հաստատ յԵրրորդութեն ․ և այս՝ 'ի ձայրն էմ լուսա-
ծառ՝ խոստովանեալ դաւանութեն ։

(1) Վերոփին յաւելուած ։ 'ի լատ. օրինակս, և 'ի հին լուծ. և յանձնա նախնի տպագրիս չէք այս մակագիր, այլ փոխան սորա գնի յաւելորդն ։ Գուրչեալ ա-նդին ։ Եւ առաւել հարազատ Թուի այս. վասն զի սկիզբն գլխոյս իբրև նախաշաւիղ է հետեւեալ բանին՝ Մ...ոփուցանէմ ընծայեմ. ուստի ոչ ունին պէտս այլ և այլ մակագրի ։ Եւ ինձ Թուի Թէ այս ա-ղօԹք լոտ կարգի արարեալ իցէ յետ ԼԴ բանին, յորում զդաւանուԹիւն հաւատոյ արտայայտեաց ԺԲ նիկիական հանգամանակին ։ Եւ քանզի յայնմ հանգամանակի լսեաց ժողովն նիկիոյ զմասնն 'ի վերայ ՆԲ Եկեղեցւոյ՝ որ կայ 'ի հանգամանակն առաքելոց և կոստանդնուպօլսի ժողովոյն, նմին իրի և ՆԲ վարդապետս ոչ արար անդ բացատրուԹի 'ի վերայ եկեղեց-ւոյ, զոր աստ առնէ ընդարձակ. Այսմ կարծեաց առաւելապէս հիմն տայ մակագիր բանիս յաւելն. Գուրչեալ ա-նդին Կրենադոփէն Եէն-բորդութեան որ ինչ յառաջելոցն առաջնորդութեան առ ամենայն լու-սաւորութեան Եկեղեցւոյ, ևն ։ Այսպիսի կրկնական բառք ոչինչ յար-մարումն ունին ընդ ՀԴ բանին՝ որ նախ քան զայս. բայցգիտարի քաջ յարմարին ԺԲ ԼԴ բանին՝ ոչ միայն ԺԲ նիւԹոյն, այլ և լոտ սկսուածին. զի աստ առէն. Եւ որդ՝ ընկղմեալ ն խորաս ծածկեալ 'Ի յանձառութեն առաւելութեն բարձրագունեայ յաձախութեն մեծին Երախփեաց, ևն, ցուցանէ յայտնապէս Թէ նախ քան զայս՝ զերախտեացն Քո Ձառ արկեալ իցէ ընդարձակապար. որ ոչ այնչափ հայի 'ի բանն ՀԴ, քան Թէ 'ի բանն ԼԴ, յորում 'ի վերջին համարն կուսակուԹՔ յառաջբերէ զերախտիսն Քո, ուստի կարի յարմարուԹՔ զհետ զայս սաեն, Եւ որդ ընկղմեալ ։

(2) 'Ի դրմաց ն 'Ի Բնիկանց. այսինքն յառաջոյ և զկնի ։ Զ չորեսին գիրս մարմնոյ յիշելով, ասել կամի, յամենայն կողմանց պաշարեալ են զմեզ անբաւ երախտիք շնորհաց քոց ։

(3) Կրենադոփէն Ենէնորդութեն ։ Վերասեն երկրորդումն աւանդուԹեանն աղբեւրս ծծայրին հօղուոյն՝ որ ինչ յառաքելոցն սահմանեցաւ 'ի պայծառ ուԹի դաւանուԹե եկեղեցւոյ, մեծապէս, բացայայտապար եղեալ առ-աանօք ։ Ընդ նմին խորհրդածուԹի՝ որ ինչ 'ի նիւԹական եկեղեցին կա 'ի տաճարն ցուցանի Երանաւոր Կերպարութեն, հոգևոր նշանակուԹիւն՝ որով զկերպարան երկնից յինքեան բերէ ։

(4) Գոմէսփի դասանման ։ 2 օրին. դասանական ։

(5) Հերձուածողականն Հարախտաութե ։ Ըստ շարագրուԹեն՝ հերձուածա-կան՝ է ածական եղեալ 'ի սեռական հոլով լատ շղԹան ձևոյ. և պարզն՝ հերձուածականաւ չարափառուԹք, որպէս ներհակեալն առ՝ մեծա-բանեաս ուղիղ ոճեծութե ։ Ըստ իմաստիցն, հերձուած, մասնաւորապար առեալ, է կամաւոր բաժանումն 'ի հոգևոր միուԹէ ։ Իսկ չարափա-ռուԹի՝ յամառ մոլորուԹի 'ի հաւատոյսն. Թէպէտ 'ի մեր գիրս հեր-ձուածն անխտիր փոխանակ երկոցն ևս դնի ։ Արդ՝ զերկոսին ևս հնարեցաւ սատանայ առ նախատանդծան, Թիւր մեկնելով զբան աս-տուածաշնչ Քոյ, և այնու բաժանելով զնոսա 'ի հպատակուԹէ օրէնսդ-րին ։ Եւ այնպէս յաղագս հերձուածական չարափառուԹք, որ է կարթ սատանայի, որոշեցայ աստ՝ յնջ, և մերժեցայ 'ի դրախտէն ։ Իսկ այժմ այսու միաւորական ուղիղ ամբողջութե, այսինքն ուղիղ ամբիծ դաւա-նուԹք հաւատոյ՝ որ է խնկապէս աւանդ պարգևեալ յնջ, դարձեալ վերացայց յերկինս, 'Ի Բոհբա Բնոց լոյսոյ, այսինքն լուսաւոր Թևովք հաւատոյ Թռչելով ։ Հին լուծ. Մյասաբանեանն՝ իմանայ դաւանուԹՔ Երրորդութեանն, որ միական է ։ Բայց առաջինն է յարմար բանիս, այսինքն միաւորիչ՝ իբր հակառակ հերձուածականին ։

(6) Քանդէ յորգանդէն ։ Աստանօր փանդէն Թարգմանաբար է, և իմաստ պարզերուԹենն այսպէս պարզի ։ Պարտ և արժան է 'ի յիշատակ Ձա

ւոխոյ Եպիսկոպոսութեան՝ նաեւ զպատիւն մայրն իւր զեկեղեցի ըստ կանոնի հաւասարեց տրամադրութեանն 'ի մասանցն, յորդանցըն, այսինքն յառաջանեան, կամ 'ի նախաթական սահմանէ անտի՝ յորում հոգեւորականս ծնեալ 'ի մկրտութեան ։ Որպէս զի ծանիցի յետոյ եկեղեցոյ սորայ մեծութեն վասակաց խնչեւոյն, այսինքն զաւակուոյն՝ որ է եկեղեցին, արժանաւոր պաշտմամբ բանի եւ մեծարանաց պատուեալ յանձնեցունց՝ իբրեւ մայրն մաքուր ընդ գլխոյն քնի ։ Իսկ եթէ գտանի ոչ համարեցի թարմատար, մարթ է կարել զկարգաւոր բանին ընդ տեսլոյն զկնի ։ Եւ արդ 'ի յայս եմ, իբր առեալ․ եւ որովհետեւ յարգանդէ աւազանին մկրտութեան արժան է զոնուէ յիշատակել սաստմոր եւ զմայրն իւր գշխոյ զԵկեղեցի, վասն այն յայսմ աղօթական բանի՝ յորում յարմարեալ խօսիմ զհարանեա լուսոյ, ընկալ զիս եմ ։

(7) Անձինց նուաց ։ Զսա կուսակրօնից 'ի մարդկանէ ճշմարիտ մայր է եկեղեցի․ կամ, թագուհի ամ կուսից ։

(8) Արժանաւորապէս ։ 3 օրին․ արժանապէս ։

(9) Ընդ Գլխոյ մարմնոյն ։ Եկեղեցին իբրեւ մաքուր մարմին՝ պատուեցի ընդ գլխոյն, որ է մարդացեալ բանն ած ։

(10) 'Ի յայս օրհնել ։ այսու հոգեւոր պատկերաւ աղօթիցս, որ զեկեղեցւոյ յարմարէ, յօրինել կամ խորհրդածել յինէն՝ ընկալ զիս յաղօթելս 'ի սմին ։

(11) Ցուցէ զպիտոյս ։ ընկալ կամ յօգնեալ զանազանեալս 'ի փառս դասուն, յեկեղեցի քո, եւ անտի փոխեալ 'ի փառս իւր, յարքայութիւն երկնից, (Ը զաղքար․ Ժբ․ 8 ։)

(12) Սուրբ զարդուց ։ Զնմանեալն յեկեղեցին, եւ զելանելն անտի՝ մի՛ ունայն կամ անօգուտ արասցես, այսինքն թողեալ լինել ։ 'Ի հետեւեալն կարգաւ յիշելով պատրաստութեան գործոյն՝ որք լինին յեկեղեցւոջ, աղաչէ՝ զի մի՛ մերժեալ լինի եւ անպատուել անցցեն ։ Եւ նախ՝ զհաւատոյ զաւանութիւն՝ որ լինի 'ի սկզբան ժամերգութեան, կամ 'ի պատարագի հանգանակեան, աղաչէ չլինել ցուրտ ։ Եւ համբոյր ողջունին՝ որ 'ի պատարագի՝ մի՛ լիցի անկարգ, խառնիխուռն, իբրեւ զմարմնական ողջոյնս, այլ պարկեշտութեամբ 'ի նշան հոգեւոր միութեն եւ սիրոյ․ կամ, իմանի համբոյրն աւարտեալ յորմունս եւ 'ի տեսանս եկեղեցւոյ ։ Եւ պաշտօն ժամերգութեն, կամ խնկարկութեան մի՛ լիցի աղաղակ, խառան, անընդունելի ։ Եւ Երկրպագութիւն, կամ ծնրադրութեան՝ որ լինին 'ի ժամերգութեն, 'ի պատարագի, կամ սրբազան խորաց՝ խաչի, պատկերաց, նշխարաց սրբոց եւն, մի՛ լիցի անհնարին, անքանաւոր արարեալ արտաքին ձեւով միայն ։ Եւ փառաւորութիւն զարդիցն, հայեցուած ձեռս եկեղեցւոյն, կամ սեղանութիւն քահանայից, որ պատկեր է քնի, եւ խորհրդաւոր զգեցեալ, մի՛ լիցի անպատուել առանց քննելոյ զխորհուրդն ։ Հին լծ․ պատկերաւ խնամնայ զհաց եւ զգինի պատարագին, իբրեւ թէ սոքա պատկեր են քնի ։ Մարթ է առել զայս ըստ մասանց իւնչ․ այսինքն կամ 'ի վերայ հացին եւ զինւոյն նախ քան զքահանայագործութիւն, կամ յետ այնր՝ ըստ խորհրդական նշանակութեն միայն․ եւ կամ զի երեւեցուցիչ է արիւնաւոր պատարագի խաչին ։ Եւ կերպարանին ոտանց լուանէ, սքանչելի խորհուրդ եւ նշանակութիւն տեսակի սաճարին եւ զարդուց նորա մի՛ լիցի անշուք, աղօտ եւ անծանօթ 'ի միտս իմ ։ Եւ պատարագ ուխտի, հոգեւոր կամ բանաւոր պատարագ աղօթիցս, կամ նուէր ընծայից՝ զորս ընդ քնի պատարագին մատուցանեմ, մի՛ մերժեսցի արտաքս իբրեւ անընդունելի ։ Եւ ճաշակումն մարմնոյ եւ արեան քո մի՛ 'ի դատապարտութիւն ինձ գայցէ ։

(13) Մի՛ անհաւր ողջակիզին սպանդ մնասցի ։ 3 օրին․ մնասցէ ։ կրկնակի

խմանիք անհուքն, կամ իբրև մանկոյ, այսինքն առանց հրոյ տիրոյ՝ մի՛ զենումն ողջակիզի մարմնոյ քո՝ Տեառն, այսինքն կատարելագի։ Եւ կամ իբր անուն ածականի՝ ողջակիզին, այսինքն առանց հրոյ մատուցեալ ողջակիզին զենումն մի՛ մեացի 'ի միասս իմ։ Եւ ըստ երկրորդ մասացս՝ առաւել յարմար է առնել ծառայի։

(14) ՄԻՏ ՅԷՌՈՒԹԷԴ. այսինքն մի յանձնութեդ. ըստ այսմ իմն յորժամ ասի. ՄԻՆ ՅԻՌԽՈՒԹԷՆԷ, ԷՆ. զոր այլ բառդում ուրեք ասէ Մը մարդապետա։

(15) 'Ի ԹԷՆ ԽՈՒ ՃՈՐՏՍԱՂԷՓԷՍ։ Ուսաք քև, և 'ի ձեռն առաքելոց՝ զոմենադարձն կարգս, ամենեցուն և հասարակաց պարգևեալ կարգս, կամ ամենայն բարեաց պարգևօղ կարգս եկեղեցւոյ։ Այս կարգ է, առնել նախ քան զամենայն՝ զաստուածութեն ուղիղ հաւատոյ, զոր քո առաջին պահանջէր յամենեցունց՝ որք մատչէին առ Նա. և խնքնին ուսոյց թէ զխորհուրդ պարտ է դաւանել զՀայր և զորդի և զՀոգի Մը. և 'ի ձեռն առաքելոց բացայայտ առանդեաց զկարգ հաւատալեաց 'ի հանգանակին. զոր և եկեղեցւոյ ընկալեալ, նախ քան զամենայն զհաւատոյ դաւանութեն պահանջէ և մատուցանէ։ Հին լուծ. իմանայ զկարգ աստուածպաշտութեան եկեղեցւոյ. իբր թէ քո զանազան գործովք եցոյց զաստուածան ընթերցողի, կխաւատարկաւադի, և այլն։ Բայց առաջինն յարմար է ամեղանայս։

(16) ԵՒ Ն ԱԹՆ ԱՂՕԹԱՆԱՒԷՐ. ըստ այսմ կարգի ասէ յեկեղեցւոջս, որ է առեղի նուիրման աղօթից, և լուսարան փրկաւէտ բարեաց, մատուցանեմք զայս կնդրուէկ դաւանութե, քեզ՝ ԷՐԷՓՈՐԷՆԷՏ, այսինքն փառաւորելոյդ երեք Մը երրորդ, այսոս ԲՈՐԲԱՌՈՂ ԲՈՐԷՆՂՈՐՀՈՒԹԷ. այսու բանիւ օրհնութեն կամ դոհաբանութեն։

(17) ԱՆԲԷՐԷՍՆ ԷՂԷՆՈՅ։ անտեսանելի կամ անպարագրելի յարարածոց։

(18) ԲԱՆԱԽՈՒԹԷ ՎԷՐՆՈՒԽԱՆՆ։ քանակիչ, բովանդակիչ համայն երկնից, որ առ չափ կամ առհմանն ընդարձակութեն երկնից։ և անտահման, անհասանելի կամ անպարագրելի անդնդային խորոց։ Ո՛չ վերինք պարփակեն զքեզ, և ոչ ներքինք, այլ ամենայնի նոցա դու ես բովանդակիչ։ Փոխանակ բառին ՆԷՐՓՆՈՅՆ՝ մի օրին. դնէ ԷՐՓՆՈՅՆ, վրիպակաւ։

(19) ԼՐՈՒԹԷ ՍՂՍՌՄԱՆՑ։ լրացուցիչ, կամ վերջին վախճան ամ մասնաւոր վախճանաց. կամ, ապաւեալ և եղծեալ իրաց լրացուցիչ, ըստ որում 'ի բնութիւ իրաց՝ յապականել միոյն՝ զայլ փոխանակ նորա յարուցանէ ած։ Կամ, լրութե և կատարելութե ծայրից իրաց. այսինքն գերազանցութեց յիւրաքանչիւր սեռի. իբր զի ած է լրութե գերակատար իմաստութե, գերակատար զորութե, գերակատար սիրոյ, և այլն։ ԵՒ ՆԱԽԱԴՐՈՒԹԷ ՍԻՂԷՍՆՑ. այլ օրին. ՆԱԽԱԳՐՈՒԹԷ, այսինքն նախկին ամ սկզբանց, և է նախկին գոյութի, ըստ որում առաջին քան զամենայն սկզբունս՝ ած գոյ. նախկին սպառչութի, ըստ որում ինքն գոյացոյց զայլ սկզբունս. նախկին շարժողութի, ըստ որում ինքն զնոսա շարժէ և մերձեցուցանէ 'ի գործ։ Կմ, զերկու զայս գիմագրեալ իմն այսպէս, դու միշտ լի մնաս, ուր այլք ամ սպառին. և միշտ նախագիր դու ես՝ յորժամ այլք սկիզբն լինին։

(20) ՄԻ ՅԷՐԷԳ. մի էութե յերից անշփոթ անձանց. Ա ԷՐԷՍ, երեք անձինք միոյ անբաժանելի ԽՈՒԽՈՒԹԷԳ, այսինքն խնկութե կամ էութե, յորջնականն փոխանակ եզականի եդեալ։ յերեա օրին. ԷՐԷՍ՝ Ն միոյ անհարուածԷՆԷ ԽՈՒԽՈՒԹԷԳ, զոր մարթ է այսպէս ևս պարզել, երից անձնաւորական խնկութեց կամ անձանց, որք անհատուածելի են 'ի միոյն, այսինքն յէութենէն։ ԽՈՒԽՈՒԹԷ փոխանակ անձին ասի և այլուր։ (Յաճախապատում. գլ. Ն. եր. 39) ուր Հայր ած՝ կոչի Պատճառ նոցանց

խակութեանց || . այսինքն անձանց որդւոց եւ հոգւոյն :

(21) 'Ի վէր փառն ըմբաց անարգելութեան յորայֆելաւ ամենայն ուրեք բովանդակ . 'ի մի օրինի . յորայֆելին կեանք զառանի 'ի հեռաւորաւոր բառից : խմաստն է, առաւել քան զնրբութիւն կամ զանօսրութեն մարմնոց՝ որով անարգել անցանէ եւ ընթանայ յամ տեղիս, եւ անդր եւս ձգի անչափութեանցն, որով բովանդակ եմ ուրեք լինի :

(22) Անխառն կերպարան : խակութեն սորոյ՝ որ անխառն է յանկնառութենէ, 'ի շաղախութենէ, 'ի մթացուցիչ խառնուրդոց :

(23) Անճառելի փառաւորութիւն : անտեսանելի տեսութեն, կամ աններգծանելի տեսիլ, եւ գեղեցկութեն :

(24) Անմահ արգասաւոր : առաջինք կամ պտղովք բազմապատկին . կամ, պահեստ՝ որ 'ի մեայն ամենացուցանէ արդասաւոր բարեաց :

(25) Վերամբարձութիւն : գերազանց բարձրութեն, յոր չհասանէ ձեռն մարդոց, կամ զօրութեն եւ իշխանութեն :

(26) Համապատիւ կցորդութեանց : Զայս . եւ զյաջորդսն խմմ 'ի թանձրացեալն . այսինքն համապատիւ կցորդելոցն, անպատուամ աղքատացն, երկրաւորաց զուգակցացն, անյաւելուած լուացելոց, այսինքն կատարելոց : Այլ ասէ, Որդին Այծ, մի եւ բարձրեալ . (մի օր . եւ բարձրացեալ .) յերկնից համապատուոցն՝ իջեալ կամաւ՝ առ 'ի պատիւ Հօրն, գործակցութեն Հոգւոյն եւ խոնարհեցաւ յարդանդ կուսին եւ : անձնաւոր գեղեղ յղեփանի խառնեալ : 3 օրին . ընփանի :

(27) Անձեռոյց դէտոյն : կապելեաց զմարմինն՝ որ էր առանձին օրհնութեան՝ 'ի լուսաւոր եւ յանապական անդաստանէ արգանդի կուսին : Զոր ընդ ամենակատար էութեն աստուածութեն համաձայնեալ, այսինքն գոյակից առարկայ զմարմինն յանձնառեալ մեղանչութեն, անպարտանելի միաւորութեն, նախացական խառնութեն, ներքին եւ արտաքին կապակցութե, յանձնութեն ոգի, յանմարմին աստուածութեն բաղադրելոց գոյութեն բանական հոգւոյն : Որով եւ առնել կամի, անձն որդւոյն եւ յետ աստուածութեն միաւորեաց անպարտանաբար զմարմինն, եւ զհոգին բանական :

(28) Անփոփոխելի երանութիւն : Միաւորելով անպարտանելի զմեր բնութիւնս ընդ իւրում աստուածութեն, այսու եւ անզերծանելի սանձիւ զմեզ ապատամբութեան կամ անհնազանդութեան հանդարտեցոյց :

(29) 'Ի ծայրս լուռութեն : Ծածկեալն կենսատու մերձեցաւ 'ի բարձրութիւն անճառելի փիկոյ խաչին, որ եղեւ գործի անմահութեն : մի օրին . անառձանաթեան, այսինքն որ անպատճառ եղեւ ըստ զօրութեն եւ ըստ տեղւոյ . զի զօրութեն խաչին յերկինս եւ յերկիր ներգործէ, եւ պատուի ոչ միայն յերկրաւորաց, այլ մինչեւ 'ի ծագս անեղերաց :

(30) Անձուռեն անընդմիջելի : Որդին աստ մարմնացեալ 'ի մահ վերաւորեցաւ, աստուածութեանն անպարտանելի գոլով 'ի մեր նմանակից մարմնոյն, որով կենսատու արար զխաչն՝ զգործին մահու : արարչութեն խոնարհեան, խմմ 'ի թանձրացեալն, այսինքն արարիչն աստ 'ի խաչի անդ միջոյ առանց բաժանման կրելով ընդ նիւթական մարմնոյն :

(31) Երեւելի նոյնութիւն : մի օրին . նոյնութիւն :

(32) Ընձեռնիջանէն զարդարն : այսինքն նմանաւ հանգերձ առեցելով մարդկութեանցն 'ի գերակայ փառսն՝ զոր նախ ունէր ըստ պարզ աստուածութեանն :

(33) Խուն ու սկիզբն : Ամենուն զգան յոյսն . եր . 13 : * Եւ են այժմ եւ ալ, սկիզբն եւ կատարած, առաջին եւ վերջին || : Եւ այս պատուհասիր քնի ոչ միայն ըստ աստուածութեանն, այլ եւ ըստ մարդկութեն, որով 'ի կարգի շնորհաց եւ փառաց լինելն է սկիզբն եւ վախճան ամենայնի :

(34) Անտոփէն խոյ 'ի բնէ : այսինքն 'ի սկզբանէ համատարած խաւարին՝

որ կարեւոր ունէր պաշխարհս , անհնարին ջուրբք ծովու երեւեցուցանէր զնա աւազանին մկրտութեան , 'ի կատարումն որդեան , այժմեան խորհրդոյս :

(35) Աշխատանս , այսինքն Ներգործութիւնս , գործս , ծծօրէնս . մի օրէնս . ծծայինս :

(36) Զուարճարար մխիթարչին , այսինքն զեկեղեցի , կամ զնա աւազանին սրբարար , յորում մնացուցանէ արիւնն քո , յարդարեաց , եւն : Քաւութիւն մեղաց : Հոգին Սբ 'ի մէջ եկեղեցւոյ հրամայեաց ամենայն քաւութիւն հոգւոց՝ սրբելով 'ի մեղաց , այլեւ առողջութիւն մարմնոց . որպէս եւ նոր ՔՍ 'ի բժշկել զմարմինսն սրբէր բազում անգամ եւ զհոգիս :

(37) Գեր քան զջուր : Գերագոյն քան զջրոյ մկրտութիւնն՝ ներգործեաց յառաքելսն . յորս բաց 'ի ներքին սրբութէ շնորհաց՝ որ լինի մկրտութեամբ , ազդեաց եւ զայլ պարգեւս՝ լեզուագիտութեան , սքանչելագործութեան , մարգարէութեան եւն : Այլ եւ զկուսանելեալս մկրտեաց առանց ջրոյ՝ խնամելով առ նոսա լեզուացն այլատարագութեամբ : (գործոց . Ժ . 44 .)

(38) Օծումն մարդասիրելոյն : Զհոգին Սբ՝ օծումն կամ օծանող ասել ՔՍի , այսպէս իմանի : Ըստ գոյացական օծմանն՝ որով մարդկութիւնն 'ի ՔՍ առն օծեալ անձնաւորական միաւորութեամբ ԶԷ բանին , հոգին Սբ ասի օծանող՝ ոչ 'ի ներքուստ , (զի ԶԷ այնմ բանն ինքն է օծանողն .) այլ արտաքուստ , ԶԷ որում գործ մարդկութեանն արտաքոյ յառաջ եկեալ 'ի բարութէ եւ 'ի սիրոյն ԱՅ , առանձին իմն օրինակաւ ընծայի հոգւոյն սբոյ , որպէս եւ ասի յղանալ 'ի հոգւոյն սբոյ , եւն : Ըստ պատահական օծմանն՝ որ 'ի ձեռն հաճոյարար շնորհաց , հոգին Սբ է օծանող մարդկութեան կամ բանական հոգւոյն ՔՍի , ըստ որում գերագոյն լրութէ շնորհաց 'ի ներքուստ միաւորեալ էր ընդ նմա 'ի սկզբանէ յղութեանն : Դարձեալ , ըստ իշխանական օծմանն՝ հոգւոյն սբոյ ընծայի օծանելն կմ կացուցանելն զՔՍ ԶԷ մարդկութեն թագաւոր , քահանայ , եւ մարգարէ : Այս կոչումն հոգւոյն սբոյ , եւ խմաստք նորա հաստատեալ են 'ի բանին եսայ . (կա . 1 .) * Հոգի ՏՆ 'ի վերայ իմ , վասն որոյ եւ օծ իսկ զիս : || Որպէս եւ 'ի սաղմ . (խդ . 8 .) * Վասն այսորիկ օծ զքեզ ԱԾ ԱԾ քո իւղով ուրախութեան , || եւն . զորմէ մարթ է տեսանել եւ 'ի մեկն . եբրայ . Ա . 9 :

(39) Նուէրն առաջեալ : Յետ ընդարձակելոյ զդաւանութեն երից ԱԾայինս անձանց , անցանէ 'ի պատմութիւն եկեղեցւոյ ըստ կարգի հանգանակին , որ ասէ : Հաւատամք եւ 'ի մի միայն ընդհանրական եւ առաքելական եկեղեցի . զոր Սբ վարդապետս տարածէ առ կենդանի եկեղեցին , որ են հաւատացեալք , եւ առ անշունչ եկեղեցիս , որ են տաճարք : Օրհնեալք այսպէս զորեն զմանկավարժս . ոմն զմանկելեցիս միայն յիշելով , ոմն նաեւ զպատլիկեանս . եւ Թուի եղեալ ոչ 'ի սբոյ վարդապետէն , այլ յայլոց՝ առ 'ի ցուցանել զգիտաւորութիւն յաջորդ բանից դաւանութեան . եթէ զի զորեաց ընդդէմ Թոնդրակեցւոց , որք ասէին խառնակութն զանազան ազանդոց՝ զանազան անուանս ընկալան , այսինքն մանիքեցիք , պօղիկեանք , կամ պաւղիկեանք , եւն . որք զեկեղեցի արհամարհէին , եւ զԱԾ որ յեկեղեցւոջ կատարի , ծաղր առնէին : Եւ զի առքա 'ի առանձ- լորդ գարշումն միաւորեալ բազմացան 'ի հայս , նմին իրի վարդապետք ժամանակին ըստ ընկերոյ պատահութեն զգրեին ընդդէմ նոցա զովեստ եկեղեցւոյ , խաչի , մեռոնի , եւ այլ սրբազան անօթոց կամ արարողու- Թեց : Յորս եւ Անանիա վարդապետ Նարեկացի գրեաց զպատմութիւն եւ զմերժումն աղանդ Թոնդրակեցւոցն , զոր եւ յիշէ շնորհալին 'ի Թուղ- Թին 'ի միջնադետս : Գոյ եւ այլ ճառ ներբողական 'ի շողակաթին , զոր

Կիրակոս պատմիչ ասէ՝ արարեալ Անանիայի Սանահնեցւոյ՝ յաւուրս կաթողիկոսացն Խաչկայ, կմ Դիոսկորոսի, կմ Պետրոսի։ 'Ի սոյն պատճառէ և սրբ Գրիգոր զ յաղօրդ ձայնս յօրինեաց. որպէս և զբանն՝ յաղագս փրկչի ժամահարին, և վասն արքայիս Մեւանենն։ Զկատարեալ անեղեկութեն Թոնդրակեցւոց անս 'ի պատմութիս։

(40) Զկառուցեալս խորան։ Դասաւանեալք ասէ՝ զպաշտօնս եկեղեցւոյ չէնեալ յանշունչ քարանց, երբ ոչ եթէ լոկ զմարմնական շինուածն զնելով նիւթ հաւատոյ, այլ ըստ որում նուիրեալ է 'ի բնակութեն Այ, և 'ի կատարումն սրբազան միաստկարարութեանց, և երբ այսպիսի պատուելի, և օրինադրեալ յառաքելոց անուն 'ի նորումս, որպէս և յԱյ եւս 'ի մովսիսական օրէնս. վասն այսորիկ յանձնոյն զարս և յաղագս՝ ուրացող և արհամարհող պատուոյ և պատուականութեն եկեղեցեաց՝ ընդ հերետիկոսս զատեցան. որպէս և պիտորոսեանքն 'ի զաղղիա՝ յերկոտասաներորդ դարուն. որոց առաջնորդն հրով ընկալաւ զպատուհասն։

(41) Գեղեցկանոց գոլով։ Ո՛չ է բաղդատութիւս ընդ երկնի երանելեաց կամ ընդ արքայութեն, որում երկրաւոր եկեղեցիքս՝ օրինակք են և երբ զաւիթ, այլ ընդ երկնի աստեղաց. որ թեպէտ և բարձր է զրիւք և աստեղազարդ, բայց երկրաւոր եկեղեցիս ասէ՝ ամենայնիւ զարդարեալ է հոգևոր շնորհօք, և բարձր ըստ խորհրդոյն. և մանաւանդ երկրաւոր նիւթական տաճարն գերազոյն համարի քան զաստեղեայն, այնու զի Քս որ գերիվերոյ ամբարձեալ կայ քան զամ երկինս, աստ 'ի տաճարի կայ 'ի ներքոյ Նշ խորհրդոյն։

(42) Յառաքելականացն։ Վկայեն բազում պատմութիւնք, թէ 'ի ժամանակս առաքելոց շինեցան եկեղեցիք և մատուռնք ի՛ ներելոյ տեղեացն. և զնոյն եւս բան առաքելոյն. (Ա. կորն. ԺԱ. 22.) * Եթէ զեկեղեցեաւն Այ արհամարհիցէք. || յաղագս նիւթական եկեղեցւոյ եւ խմանան բարսեղ, ոսկեբերան, հերոնիմոս, օգոստինոս, և այլք։ Կայ և հաստատուն աւանդութեն, թէ զվերնատունն սիոնի առաքելականն եկեղեցի արարին. զոր և կիւրեղ երուսաղէմ. կոչէ եկեղեցի առաքելոց։ (Կոչ. ընծայ. ԺԶ. 37։) Եւ Նս վարդապետս ասէ զնմի, թէ 'ի վերնատանէն սկիզբն եղև հիմնարկութեն եկեղեցեաց. և յօրինակ սրբութեն սոցա՝ Հոգին Նս նախ զատունն ելից հողմով, և ապա 'ի բնակեալսն 'ի նմա հանդէսս հրեղէն լեզուօքն։

(43) Կանխամեծար ատանեալբն։ մի օրին. ատանեալբն։ Հոգին Այ նախ զվերնատունն զարդարեալ լցոյց հողմով, յօրինակ սրբութեն եկեղեցւոյ՝ ցուցանել թէ նախամեծար աւանդութեն ունի եկեղեցի քան զբնակեալսն 'ի նմա։ Յետ լռման եկեղեցւոյ՝ տուաւ բնակչացն լուսանորոգ ճարճատանօքն. մի օրին. ճառագայթուքն. այսինքն հրակերպ լեզուօքն նշանակեցաւ զանազան շնորհացն պարգև։

(44) Յաւէտ տան։ Արիւնն Քի մատուցեալ յեկեղեցւոջ՝ առաւել է քան զհաբելին. զի սա եղև ծածուկ գործարկու. զմահն և զվրէժխնդրութեն բաղձէր. իսկ Քի արիւնն առաւել եւս աղաղակէ զթողութիւն մեր հայցէ։ (Եբրայ. ԺԲ. 24։)

(45) Ո՛չ էր ինչ։ պատարագն Քի ոչ շատանայ 'ի բացի 'ի ներքոյ երկնից մատչել, եթէ ոչ ծածկոյթ 'ի վերայ ունիցի զձեղուն եկեղեցւոյն։

(46) Պարփակօր արեան։ 2 օրին. պարփակեան։

(47) Զանձինն օրինակ։ Զարիւնն՝ որ էր օրինակ հոգւոյ, արտաքոյ խորանին մատուցանել՝ արգելեալ էր յօրինաց։ Զորինչ ցայտնայր ասաց Նս վարդապետս՝ յաղագս ոչ մատուցանելոյ զԾծային պատարագն արտաքոյ եկեղեցւոյ, հայի 'ի մերժումն ախտի աղանդոյն Թոնդրակեցեաց. որք զՔս խորհուրդն անգանէին լեզև զանխտեր սեղանս, ուստի և ոչ

պարտ համարեցին խափանել զանէրկի մատուցմանն : Այլ թէ ոչ՝ հարկին որ ոչ գիտէ զօրէնս , բաղում անգամ սխալեր առաջարկեցելոյ՝ յայլ պատշաճաւոր անգամ և մատուցանել համարձակ կարեւոր յարգութեանն . որպէս 'ի ժամանակս հալածանաց , 'ի բարբարոսաց պատերազմունս 'ի մէջ բանակին , և յայլ գիտուածս կարեւորս : Զի և Նա գրեալ որ լուսաւորիչն զանդիան շարժական ընդ իւր շրջեցուցանէր , որպէս յիշէ յովհան իմաստասէր 'ի կանոնսն . ժը :

(48) Զն մի յանֆեկա անուրգենդ : 2 օրէն . դն մի՛ անուրգենդ յանֆեկա : Ցեւ կեղեցւոյ մի է լուայութիւն կամ մկրտութեն 'ի ծածկ փոկ , (ըստ առաքե . համեմ . դ . 3 .) յի 'ի զօրութեն մահուանն քնի , կամ յօրինակ մահուանն Թաղմանցն 'ի ջուրս : Այլ որպէս միանգամ էր մահն քնի , նոյնպէս միանգամ և մկրտութեն . դն մի յանֆեկա անուրգենդ , զի մի՛ ամձն բան՝ որ յանդգեա հրէիցն , կամ անգիտութեա աներկայեցաւ 'ի խաչին , վերստին 'ի ծանուցելուն վնասնին երևոյթ . այսինքն 'ի Դաւնաչօրն կամ 'ի հաւատոյն զատուցին մահն երկուցէ : Ակնարկէ 'ի բանն (եբրայ . Է . 4 .) որ ասէ առաքեալն , անհնար է միանգամ մկրտելոցն՝ եթէ կործանեսցին 'ի հաւատոյ անտի , միւսանգամ նորոգել մկրտութեամբ . եթէ զի հարկ էր վերստին 'ի խաչ հանել զորդին այ , և դարձեալ խայտառակել , որ ոչ կարէ լինել :

(49) Մն յնեփոտրուոն : Իմանի ձեռնադրութեն , թէ գրոշմին , (որ առ մեզ յայտնի 'ի Նա գիրս գրութեա ձեռաց բացատրի . անս գործոց . Ը . 17 . ժԹ . 6 :) և թէ քահանայութեն , որք զկնիք առաքելական անջնջելի են , տան և անկրկնելի : Եւ եկեղեցին լինի 'ի պոփե օծումն լուսոյն , պատուով օծման մեռոնի . զի օծումն՝ պատուական և արքայական իւրաց է անկաւոր . միանգամայն զբաւարութեն նշանակէ , և շնորհէ օծելոցն : դն մի յանէֆոուոն . այս ձեռնադրութեն և օծումն 'ի գործ ածի յեկեղեցւոյ , և այն միանգամ և եթ , որպէս զի 'ի կողմանէ գրոշմին՝ յանբծութեն հաւատոյն՝ զոր ընկալաք մկրտութեամբն , մի՛ խախտութեն ուրացութեն կամ մոլորութեն խառնեսցի . և 'ի կողմանէ քահանայութեան , զի մի՛ յանարգութ կարգ քահանայութեն աղարտեսցի խախտութեն անարժան մարդոց , կամ ոչ քահանայից : Վասն զի ընծայեալքն 'ի ձեռնադրութեն գրոշմին և քահանայութեն՝ հաստատակաց վկայութեա և անուամբ նուիրին , և անուանք նոցա 'ի գիր անկանին ըստ կանոնական սովորութեն եկեղեցեաց . որով խախտութեն ուրացողաց , կամ կարգալուծողաց , կամ ոչ քահանայից 'ի յայտ եկեալ յանդիմանի :

(50) Մն Ւ շնորհօ : Զայս ասեմք ըստ հին լծ . իմացեալ զքաւութեանն՝ որ 'ի շնորհաց մկրտութեն . սակայն զմկրտութեն յառաջագոյն եդ Նա վարդապետն : Այլ ըստ կարգի՝ յետ մկրտութեն , և ձեռնադրութեն գրոշմին և քահանայութեն՝ իմանալի է զեկեղեցական ապաշխարութեն : Եւ նախ՝ զխորհրդականն . որ քանզի իւրով զօրութեամբն բերէ զքաւութեն , և որպէս ասի՝ 'ի գործոյ գործեցելոյ , վասն այսորիկ ասէ . շնորհօ , փոն Նէ ապաշխարուոն , այսինքն քան թէ զօրութեամբ ապաշխարողական գործոց բերէ զԹողութեն : Իսկ զայս մի ասէ , եթէ ոչ եթէ միանգամ և եթ արժանիելոյ իշխանութեն ունիցի եկեղեցին՝ ըստ չարափառութեն նովատիանոսաց , այլ թէ ճշմարիտ զղջացելոյն՝ միով բանիւ և եթ և միանգամայն քաւէին ամ մեղք : Զն մի ճշմարտուոն , յի բաց միայն՝ զի ճշմարտութեն զղջմանն և ուղղութեն՝ առաջարկին կերպարանօք մի՛ ձևասցի . կամ զի մի՛ ճշմարտութեն նոր օրինաց առաքելատ միայն կարծեսցի սրբել և քաւել խորս զհին օրէնսն : Երկրորդ , իմանամք զկանոնական ապաշխարութեն , որ լինէր հրապարակաւ մի՛ երևելի մեղաց՝ կռապաշտութեն , մարդասպանութեն , շնութեն , ևն . յորում քահանայութեն

պատուհասին առաւել 'ի շնորհաց քան 'ի կամ եկեղեցւոյ լինել, քան 'ի գոր-ծութենէ ապաշխարութեան ։ Այսպիսի յայտնի ապաշխարութեան միան-գամ եւեթ լինել ը կանոնաց, ով մեկայէ սուրբ օգոստինոս ('ի գիրս յա-ղագս Առաքինութ. գլ. Է ։) Այլ և սոյն ամբրոսիոս. (գիրք Բ. յա-ղագս ապաշխ. գլ. Ժ.) ուր ասէ ։ * Որպէս մի է մկրտութիւն, նոյն-պէս մի ապաշխարութիւն, որ հրապարակաւ կատարի ։ || Սոյնպէս և սոյն օգոստինոս. ('ի Թղթ. ԾԳ. կամ ԾԴ ։) Զի մի ճշմարտութեան. զի մի՛ յաճախութեամբ այսպիսի ապաշխարութեան՝ ճշմարտութեան քահանա-յական կարգի և ծածկապաշտութեան՝ կեղծաւորութեամբ ընկալցի 'ի կրկնա-մեղ քահանաներէց, կամ երբ կերպարանօքս յանձն առնալ կարծեացի յան-հասարակաց ։

(51) Մի յիշփրութեն տարանի ։ Մի հասարակ քարոզի յեկեղեցւոջ 'ի համարձակ յայտութեան, որով համարձակաց ընտրութեան ապագայից և մեղաւորաց. Դի մի սպառնալեաց հապուշճանն, մեղաւորաց երբեմն ընդ քան զինչ նորահայս վարդապետութեան կարծեացի. որպէս 'ի քարոզել պօղոսի առ աթենացիսն զյարութիւն մեռելոց, ասէին՝ զինչ է նոր վարդապետու-թիւնդ, եւն ։ (գործ. ԺԷ. 19. 20 ։)

(52) Գոյութեանց Ճերոց. 2 օրին. չեր Ճերոյն ։ Երկուց գոյութեանց որ 'ի մեզ, այսինքն հոգւոյն և մարմնոյն, մի խրատեսցի դատաստան 'ի վերջնումն ա-ւուր՝ քարոզի յեկեղեցւոջ. Դի մի կիսամասնեալ. զի մի՛ հոգւոյն միայն լինելով հատուցումն, Թերի փոխատրութեան կարծիցի յանձանց փըրուն տը-փոյական որդեփրութեանն. յանձանց յարութեանն՝ որով արդարքն որդեգրու-թեան պսակին յաղթեսցեն նոյ. զի յարութեան որդիքն՝ նոյ որդիք են. (ղուկ. Ի. 36 ։) Այլ Դի ընդէլութէ էնկրայինըս, այսինքն հաղորդութեան կամ մասնակցութեան երկրային մարմնոյս Թէ 'ի փառս, և Թէ 'ի տանջանս, կատարեալ ուրութեն վերին Թագաւորութեան նոյ յայտնապէս ծանիցի, Թէ տէր է հոգւոց և մարմնոց, և զերկաքանչիւրոյն խրատամբք դատի ։

(53) Աս անեղծութեան ոփոյ ։ յայլ օրին. և 'ի հին ըծ. ասա անեղծութեանն ։ Այս վերջերն բանք, ակնեալ անտի, Մի 'ի ոմս ըստ ...ո, են ընդար-ձակ բացատրութիւնք յետին մասանց Հանգանակին, որ ասէ, Դի մի Ճերփու-ըն, եւն. զմին առնել 'ի վերայ այլոցն զկնի եղելոց, այսինքն մի մկրտ-ութեան, մի ապաշխարութեան, մի յարութեան, մի դատաստան, մի կեանք յաւիտենական ։

(54) Դղհոյ պաշփել ։ Թագաւորի յարգելի ։ Եկեղեցի անուամբ աս-յոյս խղճական է, վասն այն խղճական անուամբ՝ Թագաւորաց նախանձեցու-ցանէ. ըստ որում երբ Թագաւորական իշխանութիւն փայ կէանս հոգևոր՝ խորհրդով հաղորդութեան. Թեհաւ էլնէ, մերժելով զմահ մեղաց 'ի ձեռն մկրտութեան և ապաշխարութեան. այլև 'ի մարմնաւոր մահուանէ ազատե-ցուցանելով զփախուցեալսն 'ի նմա, ըստ օրինակի պտղոյն, ծա-ռոյն կենաց, որ անկենդանն գոլով ճաշակողին կեանս տայր, և 'ի մահ-հարէր ախտից պահէր ։

(55) Վէրսփին նըյտընաւ ։ Ջքանական պատկերին նոյ զմարդն՝ զոր բանա-կան ծնօղքն ծնան, եկեղեցին անշուանչ կատարէ և կրկին նկարէ 'ի ձեռն շնորհաց ։

(56) Տեառ Ճեծութեան ։ Եկեղեցին ձեռամբ և ներգործութեամբ նմանութեան համարեալ է կամարին երկնից, ... Այս՝ եթէ զերկնից խմացի, երբև Թէ յառաջ քան զհրեշտակս կառուցեալ իցէ յայս, եր կարծիք սակաւուց նախնեաց՝ ակնարկեալ, և զենանապիտեալ, զոր և սոյն վարդապետս Թուի ակնարկել 'ի գանձն եկեղեցւոյ, յասելն ։ * Որ յառաջագոյն յառաջակարգ զայս կերպարանն հրաշագործ երի հա-ճեցար լինել. Նախ՝ զմարդն, ապա զաշխարհն ։ Զփեցար զերկինս, և

անդ զերկնայինսն, եւն ||։ Բայց այս չէ ընդունելի ըստ հատուածոյ կարծեաց։ Այսպէս ըստ կարգի բանին՝ յորում երկու ածականքն ոչ են միաւոր յառաջակայոյց, են ուղղական հոլով համաձայն գոյականին փէտալ, պարտ է իմանալ զեկեղեցւոյ, այսինքն եկեղեցի գոլով նմանութիւն երկնից, յառաջակարգ է քան զբնակեալն յինքեան հրեշտակական զօրութեան։ Զի եկեղեցին նախ կառուցանի, և ապա օրհնի տունն այն, ապա լինի բնակարան հրեշտակաց։ Եւ այսու զիմաստասիրական առաւելութիւն ինչ ընծայէ եկեղեցւոյ, քան երկնից. իբր զի երկինք ոչ կառուցանին յառաջ քան զհրեշտակսն բնակելոյ. իսկ եկեղեցի յառաջ քան զբնակիլ հրեշտակացն կառուցանի։

(57) Թռոնըս ժուրնինց (?)։ Նորօրինակ թռչունս կամ թեւս տայ մարմնոց մերոց՝ կարծէ զանազանել 'ի բնական թռչնոց. ընդ ... (?) հոգւոց, թեւթեւութք կամ թեւթեւացուցանելով զհոգիսն 'ի մեղաց. և զի զհոգիսն երկնային պարգևօք յերկինս թռուցանելով, ընդ նմին և մարմինքն թեւակից լինին. որով պարտականին՝ հոգւոյն հարազատութեան, զանուրջ մարմնոյն մեծարէ։ Մարթ է և իմանալ զպարութեան մարմնոց այնոցիկ՝ որ ընդ հովանեաւ նր (?) եկեղեցւոյ թառին. իբր զի արդութք ... (?) գոյ յոյս՝ թէ մարմինքն թառեալք ընդ նորա հովանեաւ՝ յարիցեն 'ի կեանս փառաւոր։

(58) Իմէնութեր Փերօֆ (?)։ Եկեղեցին ոչ պղծի յեւրոց մեղաց կամ արատաւորութեանց. այլ միայն յորժամ կոխի 'ի մարդոց չարաց՝ որոց մուտն արգելեալ է 'ի կանոնաց, և կամ անհաւատից։

(59) Տէօ ե՛ ... (?) ։ Եւ կնիք ինչ զարմանալի՝ յորում զաղանի խորհուրդք փոխին 'ի վեր քան զմիտս. և որպէս անկենդան կնիքն յարհեստաւորէն շինեալ, օգնէ բանականաց 'ի վճիռս և 'ի մուրհակս, այսպէս և եկեղեցին։

(60) Որթան ըմփրեշըն (?)։ Ըստ շարագրութեան՝ ըմփրեշըն իմանի խնդիր ձեւ բառին, որ զօրութք կրկնելի է. այսինքն եկեղեցին մեծ է քան ըզմարդ, որքան մեծ է ընտրեցելոյն մոլեկի, այսինքն քան զընտրեալն մոլեկս ցուցին նորա յաղթողական։ Նոյնպէս 'ի յաջորդն, որթան ըզհոլռը (?), կրկնելի է, որքան քան զաշխարհն։ Ըստ այսոցիկ և յաջորդն, որչափ թան ըշըշիտ (?), յերկիս օրինակս գրի առանց թանի։ Այսու օրինակօք բացայայտէ զյառաջասացեալն, թէ եկեղեցի անշունչ 'ի բանականէն շինեալ օգնութիւն տայ նմա. որպէս և գաւազանք մովսէսի և ահարոնի, այլև մաշկեակն եղիայի՝ 'ի մարդկանէ արարեալք, առաւել զօրացան քան զմարդիկ 'ի նշանագործութիւն. և մարդիկ նոցա նպաստիւք առնէին մեծամեծս։

(61) Սրբանեալ ֆլէտեյ (?)։ Թուի ակնարկել 'ի վէմն՝ որք ընդ բազկօքն մովսէսի եդեալ, զօրացուցանէին զձեռս նորա ընդդէմ ամաղեկայ. (Ելից ԺԷ. 12։) Այսպէս եկեղեցի թէև 'ի վիմաց շինեալ, օգնութիւն պարգևէ ձեռաց քահանայից՝ կրկին կատարելութբ, քան զոր տայր վէմն մովսիսեան, ժոքրաէր (?), մաքրելով զձեռս քահանայից, քան թէ զինեալ, իբր զէն լինելով։ Կամ, ժոքրաէր (?), օգնութիւն տայ ձեռաց քահանայից առ 'ի մաքրել զայլս խորհրդովք եկեղեցւոյ, և ոչ թէ զէն տալով 'ի ձեռս նոցա առ 'ի սպանանել զյանցաւորս, որպէս լինէր 'ի հին քահանայութեան քարկոծմամբ, եւն։

(62) Քարթ ն հեվըն ֆօյակիզ (?)։ Յերկուս օրէն. այսպէս զատանի. ժարթն նիւթական ... (?) ն հողոյ, գոյակից ... (?) զգոյականաց ն ... (?)։ Ըստ նմին գոլով 'ի քարէ և 'ի հողոյ՝ բնութիւնակից և հարազատ երկուց զգայնոց և մրրոց։

(63) Ուրմէս ... (?)։ Զքաջակայելուշ ներգործութիւն հակառակս

միմեանց՝ ընծայէ եկեղեցւոյ. զի որպէս զմէծն քն 'ի կործանումն է ան-
հաւատից, որք նախանձին ընդ պայծառութիւն նորա. և 'ի կանգնումն
հաւատացելոց, որք խնդան և մեծացուցանեն զփառս նորա: Իսկ զա-
տօղ հոգւոց՝ անիծանէ զանհնազանդս, և օրհնէ զհնազանդեալս: Իսկ
քննօղ զաղանեաց՝ զոր հրապարակէ, զզանազրելլն հրատարակէ. և զոր
փծէ, զզջացեալն զարմանէ, կամ մուցանէ: Ար ինքն կոչէ յա-
նուանէ զերախայս մկրտելոյ, և զձեռնադրելոյ, որոց կոչումն լինի յե-
կեղեցւոջ. և այսու եկեղեցին լինի խորհ հրամանատար էկցս տարածոց՝
նման Այ, որ զամենեսին, յանուանէ կոչէ՝ ըստ բանին սաղմոսին:

(64) Ընծայել զնորոգ: Ուսայ զհօգևոր մատղեկ, Իբր զնորընծայսն,
իբր ուսեալն՝ առուեստին Այ կազմեալ. կամ, իմանալ և որոշէ զհօգևոր
մարդիկն 'ի շնչաւորաց՝ իբրև հնարիւք կամ ծառայութեամբ զխոստ-
թեան Այ: Յ օրէն. զնոր. զնորընծայսն, այսինքն իբրև հնծայեալս ձե-
ռամբն Այ:

(65) Անձեռն. անմեղութք և առանց սխալանաց կամ խոտորելոց, ըստ
օրինակի անուանց եղեկեղեցի ընթանայ զնոր հետոցն քն: Այս՝ բանա-
կան եկեղեցւոյն յաւէտ պատուհանի ըստ առաքելոյ. (Եփես. Է.
24. 27):

(66) Կանոնաւոր խոպէ: Այնչափ մեծ սրբութիւն ունի յինքեան նուիրա-
կան եկեղեցին, մինչ զի զկանոնականս եղեալս 'ի պատկեր Այ, խոտելով
առ ինքն ընդունի. զի այլ կարգաւ՝ և կանոնաւ ընդունի զերախայսն,
այլով զնորակնութքն, այլով զհաւատքանչիւր դաս առաքելութեանց. այլ
կանոնաւ զաշխարհականս, և այլով զեկեղեցականս: Իսկ եթէ յետ
այնպիսի ընտրութեան՝ բանադրեալ ոք, կամ երախայ, կմ առաքելատօղ,
կամ այլ ոք անարժան մտանիցէ, ինքն ոչ պղծի, և ոչ նզովի, այլ փե-
ղի փայ. այսինքն ներէ անզխոտոլացն պչափ սրբութեն նորա. կմ թէպէտ
յինքեան ոչ պղծի, սակայն յանձն առնու արտաքուստ հասանիլ աղղ-
ծեալ վասն ոչ զխոտոլացն զսրբութիւն նորա. զի յետոյ օրհնութքն ցուցցի՝
թէ որչափ սրբութիւն պահանջէ եկեղեցին: Ուստի, փակմամբ կամ
աւերմամբ՝ վասն իւրոց յանցանաց, այլ վասն մերոցն:

(67) Երկիցս մատչել: Ոչ թոյլ տայ հաւատացելոց երկիցս յաւուրն
մատչել յընդունելութիւն Սր հաղորդութեն, որ է իբր ըմբռնել զինքեա-
նարար տաս քնի, ըստ փիլիսոփայն անձառ խորհրդոյն. որպէս առէրն ոչ թոյլ
եա մազդաղէնացւոյն երկիցս ըմբռնել զոտս նորա. (Յովհան. Ի. 17:)
այլ միանգամ միայն ըստ այլոց կանանց. (մատթ. ԻԸ. 9:) Եւ այս
անանասութեն փրկչին ունի զմեծ խորհուրդս. որոց մին այս էր, այսինքն
ոչ երկիցս յաւուր ընդունել զՏէր խորհուրդն: Կամ, տիրական խոր-
հուրդ իմն զնոյն իսկ խորհուրդ հաղորդութեն. և միոյ բանին ձեւանոյ
այսպէս. ոչ թոյլ տայ երկիցս յաւուր մատչել յոտս քնի ըստ ընդու-
նելութեն խորհրդոյ մարմնոյ և արեան նորա:

(68) Ո՛չ երկիցս յաւուր: Ո՛չ երկիցս յաւուրն պատարագէ 'ի վերայ նոյն
սեղանոյ. որպէս էր հին սովորութիւն, մանաւանդ արևելեայց, զոր և
ցայժմ պահեն յոյնք: Կամ, ո՛չ երկու անգամ յաւուրն, այսինքն յա-
ռաւօտու և յերեկոյի թոյլ տայ պատարագել. որպէս 'ի հին օրէնս սո-
վորութեն էր առնել պատարագս առաւօտիս և երեկոյիս. (Թուոց.
ԻԸ. 4:) Իսկ եթէ 'ի վերայ նոյն քահանայի իմասցի՝ ոչ պատարագել
յաւուրն երկիցս, այս հայի 'ի սովորութիւն արևելեան եկեղեցեաց. զի
յարևմտեան եկեղեցին գոյ յիշատակ յեօթներորդ դարէ անտի, թէ
չէր արգելեալ քահանայից նոցա կրկին պատարագել յաւուրն: Զի մի
անընդունելոյ. զի մի յաճախս պատարագելովն՝ սովորութեն երեւալ, ան-
մաքրութք և առանց յարգութեն՝ նուիրանն, նաեւ պատարագին սր-

համարձակեսցի ։ Ոմանք ըստ հին ըծ․ խմանան 'ի վերայ սեղանոյ պատարագին ։

(69) Վաշակոյէ խարէաց ։ Իբր բժիշկ առողջ վշտակից և գթածնի լինի ամենայն ախտից հոգւոյ և մարմնոյ, Իէր ամոխփանէր, ինքն ազատ գոլով յամենայն ապականութէ ախտից․ զի եթէ տաճարն Սողոմոնի լինէր դարման ամենայն ախտից հոգեկանաց և մարմնականաց, ըստ աղօթելոյն նորա․ (Գ․ Թագ․ Ը․ 29 ։) որչափ ևս առաւել եկեղեցիք քրիստոնէից, յորս ապաստանին մեղաւորք, հիւանդք, դիւահարք, փորձանաւորք, և այլք ։

(70) Կրէյին Էրչանիկոկոն ։ Կրկին ես երջանիկ քան զնոյեան տապանն․ զի ոչ միայն զօժանդակեալսն 'ի նմա՝ պահէ 'ի հեղձմանէ մարմնոյ և հոգւոյ, այլ և ծնանի և բազմացուցանէ մկրտութբն, սնուցանէ հաղորդութբն, և զարդարէ այլովք խորհրդովք․ Թող զայլ առաւելութիւն՝ զոր 'ի կարգին յիշէ մինչև 'ի բանն Գոււյէւ Իէր դարաանոփ ։

(71) Փոխլի 'ն Նէնգունէ ։ Եկեղեցին երբեմն հեռաւոր հովւոյն, (Իմաստ․ ա․ 5․) ընդունի յինքն զամենայն ա․ 'ի սրբել, բայց ոչ զանհնազանդս․ որպէս և տապանն Նոյի ոչ ընկալաւ առանց զօձն ։

(72) Ո'ւ 'Ն Բողոփ ։ Տապանն Նոյի չկնաւ խնով զմահ բազմէր ամենայն մարդկան․ իսկ եկեղեցին կեանս աւետարանէ 'ի չինել եւրոմ ։

(73) Ցարալարծ ։ Ո՛չ երբեմն զտապանն Նոյի, կամ զխորանն վկայութե՝ անդադադար շարժի և փոխի անդրուոջէ 'ի տեղի․ այլ հաստատութեամբ կառուցանի 'ի տեղւոջն․ զի չէ օրէն փոխել զտեղի եկեղեցեաց, կամ զտեղի ուր եկեղեցի հիմնեալ է, փոխել յաշխարհականս շինուած ։ հաստատեն ։ մի օրհն․ հաստատեալ է ։

(74) Որդէս Կէրդարան ։ Ուղղութական եկեղեցին երբեմն նմանութե անփանոյ էին, անմխութ կամ աննաահմանելի էին նոյ, որոյ և տապանակին մեծութեան՝ որ զնծ երևեցուցանէր, առաւելորդ լինելով տեղի պատարաանէ յերկնիս ։

(75) Ընդ ուղէկէլ․ ցր ոդայ ։ (Բ․ Թագ․ Զ․ 7․) անփոփոփ, անդէն վաղվաղակի սատակէ, Եթէ ու խաւլաղէս,․ երբ զխաչ 'ի չորից կողմանց ըծակեքն, յոգի Բէրէոէ, յանձին կամ յուս բարձի, կամ 'ի հոգւոյ կոփցի․ քանզի և ոչ յայն աակս պատուհասեցաւ՝ առանց ոմանք, զի ոչ զԽ հրամանին նոյ ըծակոք տանելին զտապանակն, այլ 'ի սայլի եդեալ երեջովք ձգէին ։ Այսպէս և եկեղեցի պատուհասէ զայնոսիկ, որք ոչ մերձին առ նա հաւատովք և երկիւղածութբ, այլ անհամեստական երկրպագութ հոգւով մտանէին երբեմն յանօթ ինչ անմէք և ձեռամբք շօշափելի ։

(76) Լէգուստ ծուրդոյ․ այլ օրին․ ծարծոյ կամ ծարծոյ ։ Ո՛չ մարմնեղէն ընդունի խօսի նուիրական եկեղեցին, այլ Բանն հրէշտակաց, այսինքն հոգևորապէս․ կամ միջնորդութբ հրեշտակաց․ որպէս 'ի մովսեսական խորանին և 'ի սողոմոնեան տաճարին բազում անգամ պատգամք լսելի լինէին 'ի ձեռն հրեշտակաց․ կամ դարձեալ, հրէշտակ խմմ պատուիրոդս և զքահանայս ըստ պօղոսի․ (Ա․ Կորն․ ԺԱ․ 10 ։) որոց լսելուն խօսի եկեղեցին ։ Ո՛ւ ամէկան Գոյանանութէ․ չունի կաղմած ականջաց, և սակայն արտաքապէս լսէ զաղաչանս, զուխտս, զարհամարհանս, և զանէծս մարդկան ։ Ո՛ւ Յոյն, չունի ձայն յօդաւորեալ, և սակայն զհրամանս և զգործս յիւր ամենեցուն ծանուցանէ 'ի ձեռն պատուէրաց, և քարոզութե պաշտօնէից ։ ոչ խաղալեաց, չունի զշարժումն խաղալեաց ընչական որոյն․ և սակայն երբ տծայլն կենդանի հաղորդաւ ապդ առնէ ։

(77) Երէնուփ հաղարօփ ։ Որպէս վասն տապանակին հրամայեաց յետու, զի երկու հաղար կանգնաւ հեռի տարցի 'ի ժողովրդենէն, (Յեսու, Գ․ 4 ։) և այնպէս ժողովուրդն Թէպէտ և էր զունդ նոյ, և կենդանի մեա-

ցեալք 'ի հարուածոց անապատին, սակայն վասն անպտղութեան հեռի 'ի տապանակէն գնային : Այսպէս և այժմ եկեղեցին ընդ նոսին, ընդ հրեից' հեռացուցանէ յինքենէ իբրև անմաքս զայն քրիստոնեայս' որք ջեռեալ են մեղաց ախտիւ . և հեռի 'ի ձեռն բանադրանաց և կանոնական պատուհասութեան ունիցի, առաջնորդէ ապաշխարողն յեպիսկոպոսական ողորմութեանց, որք են անհաւատութեան և այլ մեղք :

(78) Լուսոյն տյ : Աստուածոյ էութիւն ոչ 'ի պարզ էութեան մասին, այլ 'ի Քո մարմնացեալ, որպէս և բացատրէ' տյ ժողովն Եփեսոսի, ուստի և խնամ նոյն ինքն Ած մարմնացեալ Քս, ըստ անուան եկեղեցւոյ վէմ կոչե- ցաւ յառաքելոյն . (Ա . կոր . Ժ . 4 .) այլև 'ի մարգարէից անկեանք և բանիւք գուշակեցաւ : (Եսայ . ԻԸ . 16 : Դանիէլ . Բ . 44 . 45 : Զաք . Գ . 9 :) Եւ ըստ նմանութեան վիմին որ զիսրայելեանսն արբոյց յա- նապատին, ինքն ևս արբոյց զհաւատացեալս յաղբերէ կողին իւրոյ :

(79) Արեան երակաց : Ո՛չ եթէ արեան շարժմունք յերակս կենդանա- ցուցանէ և պահպանէ զեկեղեցին, որպէս յայլ կենդանիս, այլ շնոր- հիւք ամենայն լուսոյն 'ի ներքս թափանցեալ :

(80) Ո՛չ ոսկերաց : Ո՛չ ոսկերն կամ զօրաւորականն ոսկերացն, մերա- կացութեան կամ գործակալութեան, որք մահկանացուք են, այլ անմա- հականն տյ ճշմարտութեան գծագրէ զեկեղեցին ըստ խորհրդական նշանա- կութեանցն : Եւ թէպէտ գծագրութեան տաճարին ևս յայլ առաջնորդու- թեան 'ի ձեռն զաւթի ընկալեալ ոսկերս, սակայն այժմու եկեղեցեացս շինութեան խորհրդական և յոյժ բարձրագոյն է, են :

(81) Տան երկրային : Յակոբ անուն և հասարակ իւղով օծանելով զվէմն, տուն տյ կոչեաց զտեղին . (Ծննդ . ԻԸ . 19 :) Իսկ տծ արեամբ միածնին օծանելով զեկեղեցին' 'ի ձեռն պատարագին, ոչ եթէ տուն նիւթական կերպէ զորդիս եկեղեցւոյ, այլ մարմին երկնային և լուսաւոր, իբրև զհրեշ- տակսն' որք երանեսն և իջանեսն Է սանդուղին : Ո՛չ կենդանոյս : ոչ ծնունդս յղացեալս յերկրէ կենդանեաց, այսինքն 'ի մարմնոյ և յարենէ ամուսնութեան, այլ երկնից ժառանգս են, ծննդոց նոր, զգրգեալս 'ի ծոցի իւ- րում խորհրդովք և ուսմամբք, 'ի գոգն արքայութեան յերկինս մատու- ցանէ :

(82) Հարսանեաց սրահ : Նիւթական եկեղեցին' անուանի բարոյական ե- կեղեցւոյ սահ հարսին . զի որպէս այն' Քի նուիրի հաւատով, այսպէս և շինեալ եկեղեցիք օծմամբն ընծային Քի : Օրհնող սուրբն, կառուցանողք օրհնիչք' և պայծառացուցիչք եկեղեցեաց' եղեն նք հայրապետքն :

(83) Մոռացօնք սանեց : Այսու զհայհոյիչ ստութիւն թմբրակեցեացն 'ի գլուխ նոցին շրջէ, որք զեկեղեցիս արհամարհեն իբրև հեթանոսա- կան շինուածս, կամ 'ի նոցին սովորութէ առեալ : Ո՛չ այդպէս սաէ, այլ մանաւանդ մեռացուցանէ զդիւապաշտ բարձանս կռապաշտից . զի զճշմարիտն տծ ամենեցուն ծանուցանէ . առաքացուցանէ զսուտ գրո- շեալս, զի քո 'ի սմա երկրպագի . քակտիչ է կեղծեալ անաստուած հեթա- նոսաց, զի քո ըստ նմանութեն կենաց փայտի գլխախոյզն' 'ի սմա պատա- րագի . խորտակիչ է տմ յուսոյն ոսկեաց, կախարդական քրմաց, զի միշտ քո գովեալ 'ի մարգարէից, այլովք քարամբք' տաճարներովքն և որոնելք հաստատի 'ի սմա :

(84) Ազատ է : Ո՛չ միայն բարոյական եկեղեցին ազատ է 'ի լծոյ հին օ- րինաց, այլ և նիւթական եկեղեցին ազատ է 'ի հարկաց իշխանաց, և յայլ քաղաքական պարտեաց . Է որովք անկանին անդր տուրք : Ասէ- արկէ 'ի բանն . գաղատ . (Դ . 26 .) Վերինն երուսաղէմ ազատ է || . և այլն :

(85) Օրհնալ : Նիւթական եկեղեցին ոչ այնպէս օրհնեալ է մերին սրանի'

արքայութեն, որպիսի էր երկրաւորն երուսաղէմ. զի սա եղեւ ստուեր՝ մարմնաւորապէս միայն երեւեցուցանէր զերկնաւորն երուսաղէմ. իսկ եկեղեցին մանաւանդ ճշմարտութիւն նորին ճանաչի. այսինքն եղեւ բուն իսկ վերինն սիոն համօրէն՝ որպէս մասն նորա եւ նախադուռն. զի 'ի սմա սկսանին առ ճոխութիւնք արքայութեն, եւ անդ կատարին. եւ զի 'ի սմա հրոջ բնակէ քս առ 'ի խորհուրդ նր սեղանոյն։

(86) Կատարածութենն կարգաւ. Ո՛չ ըստ կարգոյ, կամ ըստ բանաւորութեն կատարածական օրինացն՝ բազմին, անդի պատկերաց ստուեր առ ծոցն, յորոց սպասանալիք պատմոց լանկլի լինէին. եւ բաղձեալ անգամ գիւտկան զօրութեամբ պատուհասէին զմարդիկ։ Ի կամ լեռն օրէնին. ըստ պարտաւորութեն հին օրինացն՝ անդի պատուհասից օրինազանցիցն. զի յանցաւորք հին օրինացն՝ յառաջ կոչէին 'ի խորանն վկայութեն, եւ անդ յանդիմանեալք յայդ՝ պատժէին. որպէս ահարոն եւ մարիամ, կորխ, դաթան, եւն։ Իսկ եկեղեցին ա՛ հանգստական է անդի պարգեւաց բարերարութեն այ, եւ անդի հաշտութեն յանցաւորաց։

(87) Սասանի Երէէ։ այսպէս զնի յղանոր օրինակս. ուր այլ տպագրէրք ասեն, ոչ սկսանի. բայց առաջինն առաւել յարմար է. այսինքն ոչ խախտի կամ այլայլի յիւրմէ ձեւոյն. այս ոչ միայն ըստ անորութեանն խմանի, իբր զի մինչեւ 'ի կատարած աշխարհի լինելոց են կաւուցմունք եկեղեցեաց, այլ եւ ըստ պատուքին ձեւոյն. զի ա՛ համբակական ձեւ կամ աբարուած եկեղեցւոյ միօրինակ պահի յամենայն ազգս. այսինքն որոշումն խորանին եւ բեմին, եւ դասուն, եւ տաճարին, եւ գաւթին. եւ եթէ յայտնակ մանր փոփոխութիւնք լեալ իցեն, կամ լինիցին, միշտ յառաւել փառաւորութեն եկեղեցւոյն լինին. զի ոչ միայն արտաքին կատարողութիւնն է Երէին Երէնի, այլ եւ նմանութե կամարայարկ ձեւոյն, եւ որոշմանց կայանիցն, յորում զանազան դասք սպասաւորաց՝ եւ ոչ սպասաւորաց՝ որոշեալք անդէօք եւ պաշտամանք՝ երեւեցուցանեն զնմանողութեն դասուց հրեշտակաց յերկինս։

(88) Առանց հօրն։ Որպէս չէ հնար կատարել հոգւով, կամ վերածնանել առանց հօր այ, նոյնպէս եւ ոչ առանց արգանդի մօրս եկեղեցւոյ, այսինքն առանց աւազանին մկրտութեն։

(89) Անփառ չքնի։ 2 օրին. յանփառ, իբր մակբայ, առանց սառն, կամ բացօթեայ չքնի անբովանդակելին այ, եթէ ոչ կայցէ եկեղեցի. որպէս զաստուածակէն ասէր այ. (Բ. Թագ. Է. 6։)

(90) 'Ի կոմար վերնոյնն։ Առաւել պարծի այ 'ի նախաթական եկեղեցի՝ քան յերկինս. յորում եթէ երկինքն ասցի ըստ բնական վայելչութեն, ահա յայտնի է բարգաւաճութեն. զի սա յեկեղեցւոջ անպատ վայելչութիւնք շնորհաց դասնին։ Իսկ եթէ երկնիւք խնասցի արքայութեն, Աղչմարտի բարգաւաճութեն, ըստ որում յարքայութեն՝ այ երանեցուցանէ զարժանաւորսն՝ որ է գործ արդարութեն. իսկ սա յեկեղեցւոջ արժանի երանութեն առնէ զանարժանսն, որ է գործ անբաւ ողորմութեն այ, որով առաւել մեծարի այ՝ քան առաջինովն. որպէս ասաց եւ 'ի բանն ժէ. 1։ Ուստի ըս այսմ մասին, (եւ ըս այլ եւս բարգաւաճութեց, զոր թողումք վասն համառօտութեն,) եկեղեցին առաւել պարծելի է այ, քան արքայութիւն երկնից. թէպէտ եւ ըս գերազանցութեն՝ առաւել է արքայութիւն քան զեկեղեցին։ Սակայն մանր եւս հայելով 'ի կատարելութեն անցելոյ բանին, յարմարագոյն թուի կոմար վերնոյնն առնուլ զբուն երկինս՝ իբր աթոռ փառացն Այ, այսպիսի ունելով միտս։ Քանզի ասաց նախ, թէ ոչ ունիցի տրն բնաւից հանգստարան իւրումն զլխոյ՝ եթէ ոչ յեկեղեցւոջ մնեալ իջեանեսցի. մարթ էր առարկոյս ա՛դէմ բերել, զիարդ երկինք անուանի եւ անհանգիստ լինիցի Այն առանց

եկեղեցւոյ , այն որոյ աթոռ և բնակութիւն՝ երկնից երկինք են ։ Այսմ ասէ , չիք յայդմ հակառակութիւն . վասն զի առաւել պարծի Ած , առաւել զուարճանայ և հանգչի ՚ի նուիրականս եկեղեցւոյ մարդկանց հանդերձ՝ քան ընդ վերին երկինս . քանզի զայն անաշխատաբար արար Ած՝ ասելով եւեթ , իսկ զեկեղեցի ստացաւ արեամբ . երկնից՝ արարիչ միայն է , իսկ եկեղեցւոյ՝ փրկիչ . երկինք ՚ի սկզբան եկեղեցւոյ արարեալ , իսկ եկեղեցի ՚ի փառս Այ . այն՝ ճեմարան էր , և այս՝ հարսնարան . և վասն այսորիկ կարէ Քս մեկնել յերկնից , բայց յեկեղեցւոյ ոչ երբէք ։

(91) Անբաւանալի ածեալ ։ Անբաւ փառքն ածայինն՝ որ լուսաւորեալ երեւեցաւ ՚ի դէմս մովսէսի , և յօրինական եկեղեցւոյ՝ որք են խորանն վկայութեան , և տաճարն սողոմոնի , անհամբերութեան եղև հնոյ ժողովրդեանն , մինչ զի փախեան յերեսաց մովսէսի , և ՚ի տաճարէն խոյս ետուն քահանայքն ։ Եւ սակայն նոյն փառք այժմ ՚ի մեր հանդերձ , հանդիսաւոր ամենախոնարհութեամբ եկեղեցւոյ , ՚ի հաւատացելոցս աներկիւղ համարձակութեամբ խմբեալ նուագի , միահամուռ բարեբանի ընտանեբար ։ Անդ ՚ի գլխոյն լուսոյն զարհուրեալք անէին տայծն , աստ յեկեղեցւոջ ՚ի բուն էական լոյսն համարձակին մերձենալ ։ Այս օրհնի ։ Նոյն խիղճ Ած և մեծութիւն նորա կրկնապատիկ բազմանօք օրհնի յեկեղեցւոջ , քան յեգիպտոսական դրախտին . վասն զի անդ տեսաւ անմեղութեան արարչ միայն , այլ ոչ թողութեան . յետ արտաքսելոյն անտի ադամայ՝ ոչ եւս այլ թողութեան մնալ անդր յետ ապաշխարելոյն ։ Իսկ յեկեղեցւոջ աստուածային ստացեալք և՛ անմեղութեան և՛ թողութեան . եթէ վասն մեղաց արտաքսեցի որք իսկ , գոյ անզղջելեաց յոյս մեղաց ՚ի զղջանալն ։ Եւ դարձեալ , ՚ի դրախտին փափկութեան լինէր օրհնութիւն Այ ըստ երկրաւոր գեղեցկութեանն . իսկ յեկեղեցւոջ երկնաւոր բարեաց հաշակումն է ։

(92) Աստուածածնին իսկ ։ Եթէ աստուածածնին պատկեր և նմանութիւն համարիցի որ զեկեղեցի , ոչ անօրէնի , ոչ արտաքոյ ճշմարտութեան խորհի , ոչ սխալէ . ոչ անպատշաճ ասէ զախրանայլն . ըստ որում և եկեղեցին կուսութեամբ ՚ի ձեռն աւազանին ծնանի որդիս Այ , որպէս և ասէ զկնի . այլ և զնոյն ինքն զՔս որ ըստ օրէ ծնանի խորհրդաբար ՚ի պատարագին ։

(13) Քարինս իմ ։ Ըստ օրինակի լերինն սինեայ , յորմէ քարինք արձակէին ՚ի մերձենալ գազանաց , ունի և եկեղեցին քարինս իմանալիս՝ դատապարտութեան , կամ բանադրանաց , որովք զգազանամիտ հերձուածողս , կամ զամբարիշտ քրիստոնեայս չթողու մերձենալ առ ինքն , կամ ՚ի ներքս մտանել ։ Թերեւս ակնարկէ յանցանս անառակաց և հեղինակաց , որք ՚ի տաճարին քարամբք և այլ գանձուք հարուածեցան . (Բ . մակ . Ա . 16 . Գ . 26 ։) Այս զօրութիւն առաւել պատշաճի բարոյական եկեղեցւոյ . սակայն երբեմն երեւի և ՚ի նուիրական եկեղեցիս . որպէս զմարմնով եղկելեացն ոչ թողոյր ՚ի ներքս մտանել ։ (Վարք հարանց . երես . 506 ։) ՚Ի քաջ փոխելոյ ։ 2 օրին . ՚Ի քաջ հալածելոյ ։

(94) Անձն ոմանս ։ Եկեղեցին մկրտութեամբ ծնանի որդիս Այ շնորհօք , որք են ստեղծեալ անդ՝ պատկերակիցք ճշմարտին և բնական որդւոյն Այ , որ է Յս Քս ։

(95) Զարդն նոր ընդ արևելս ։ Նախնի սովորութիւն էր յայնմ քրիստոնէայս , զի յաղօթել՝ յարեւելեան կողմն հայէին , որում վկայէին բազումք յառաջնոցն . որպէս սբն բարսեղ . (՚ի գիրս յաղագս հոգւոյն սբյ . գլ . իէ .) ասէ՝ յաւանդութենէ ունիմք յարեւելս աղօթել ։ Սոյն ասէ գիրքն խնդրոց առ ուղղափառս , յուստինոսէ ասացեալ , խնդ . ճժը . յառաքելոց անտի ունիմք ասէ ։ Յիշէ և տերտուղիանոս , ՚ի ջատագովութեան գիրքն . այլև ՚ի գիրս Ա . յաղագս Ազգաց ։ Եւ սբն Օգոստինոս . գիրք Բ . յաղագս բանից տն ՚ի լերինն . գլ . Թ ։ Այլև զա-

մանկացին յերկար խօսի , 'ի գիրք Ե . յաղագս ուղղափառ հաւատոյ . գլ . ժգ : Այսմ սովորութե զայն խորհրդական պատճառս տան մեր_ բոյլեշեալ վարդապետքն , զոր և տառ տայ սրբն Գրիգոր , և վասն որոյ միշտ նախապատիւ համարի արեւելեան կողմն յեկեղեցական պաշտա_ մունս : Այլ՝ յայտմանէ նաև զգլուխ եկեղեցեաց՝ կամ զսեղանոյն կողմն յարեւելս հայեցուցանելին սովորաբար , որպէս մեկայեն տաճարքն կառուցեալք 'ի հին ժամանակս . որ և աւանդի յառաքելական սահ_ 'ցեալ սահմանադրութեանն . գիրք Բ . գլ . ծէ : Բայց ոչ անխախտելի էր այս սովորութիւն . և պատմէ սոկրատ . (գիրք Ե . գլ . իա .) թէ տա_ ճարն անտիոքայ հակառակ այլոց եկեղեցեաց ունէր զգլուխն , զի սեղանն նորա ոչ հայէր յարեւելս , այլ յարեւմուտս : Եւ յետ ժամանակաց այ_ լայլեցաւ այս սովորութիւն 'ի կողմանս ինչ եւրոպիոյ՝ առաւել բազմութեան քահանայից պատարագողաց , թէպէտ յարեւելեան ազգս պահի մինչև ցայսօր :

(96) Փիէվէն անուամբ : Զեկեղեցի՝ մկրտչին անուամբ կոչել՝ ոմանք իմա_ ցան , թէ վասն զի օծեալ կոչի եկեղեցին , այլ և տուն և տաճար այ , և վէմ , որք են անուանք քի : Սակայն երեքին անուանքդ՝ յատկապար եկեղեցւոյ պատշաճին . և 'ի նմանէ փոխաբերին առ քս . տես 'ի մեր . լուծ . 78 : իսկ օծեալ կոչի յիւրմէ օծմանէն 'ի ձեռն մեռոնի , և ոչ յանուանէն քի : Վասն որոյ իմաստ բանիս այն է՝ զի բազում եկեղե_ ցիք նուիրեալք քի՝ նորին իսկ անուամբն կոչին Փիէվէ , կամ Ար_ ճիբրէտալէ , որպէս և մինչև ցայսօր ասեմք : Այտղիկ պատմիչ (Է . 14 .) յիշէ զեկեղեցի 'ի մուշ՞ք՞ փիէվէ անուանեալ : Այնպէս ասելն , փըրաւնիէ լատոյ կոչմամբ , ոչ իմանի թէ վասն զի եկեղեցին մայր կոչի 'ի գաւառս . այլ զի նովին անուամբ Անծածին կոչին բազում եկեղեցիք շինեալք 'ի պատիւ նորա , և այս՝ 'ի մերձաւորաց ժամանին . այսինքն յառաքելոց սկ_ սեալ . որպէս սրբն բարթուղիմէոս զեկեղեցին՝ յոր եդ զհրաշալի պատկեր տիրամօրն , կոչեաց Անծածին , ըստ գրելոյ խորենացւոյն , 'ի թուղթն առ սահակ արծրունի . և Յայսմաւ . օգոստ . 15 . 20 : Այնպէս եկեղեցին շինեալ յեդեսիա 'ի սրբոյն թադէոսէ՝ կոչեցաւ Անծածին : Ըստ այսմ եկեղեցիք յայլ քրիստոնէից ևս կոչին Փիէվէ , Անծածին , ևն : Եւ սրբ վարդապետս կամի նաև յայսմ կողմանէ ցուցանել զփառաւորութիւն և զպայծառ եկեղեցեաց :

(97) Չէռո լաբոււէ , որպէս Նիկանովր , որ սպառնայր զտաճարն այ այրել . (Բ . մակ . ժդ . 32 . 33 :) Այսպէս որ զօրինադրեալ կառուց_ մունս եկեղեցեաց արհամարհիցէ , համարելով մարդկային ինչ գիւտ , կամ երկրաւոր շինուած , այնպէս է՝ իբրև ընդդէմ երկնից արքային զձեռն համբառնալ :

(98) Անթիփօնէն ձծայնի : Եթէ չհամարիցի զեկեղեցին՝ տեղի ձծայնին յուսոյ , կամ ակնունելոյ ձծայնին պատգամաց : 2 . օրին . անթօրէնուէն ձծայնին . այսինքն յայն ակնարկութենէն կամ 'ի հրամանէն սահմանեալ : Եւ 'ի հոգւոյն սրբ յայտնեալ լուսաւոր նախագրութն , յառաջագոյն զուշակութի 'ի հին օրէնս՝ խորանաւն վկայութե , տապանակաւն , և տաճարաւն : Եւ երախտեացն այ ամենափառ ընծայութէ , ամենապայծառ տաճարութեան տեղի : Եւ մայր կենդանեաց , շնորհօք 'ի ձեռն աւազանին՝ տղայ 'ի պարգեւաց ցաւոց և անիծից՝ հակառակ եւայի : Եւ յատուկ նմա նութի էրեւուլիս բանակաւն , երևելի բանական բնութեա , ըստ որում Ֆ_ մանուլին՝ զօրութեին շնորհաց , բժշկութե , ևն . է նշանակ հոգւոյս մե_ րոյ . և յղութեանն՝ ձևն և կազմութեին՝ յօրինակ մարմնոյս : Եւ որբունէնցն անդանձառութեց , նոր սրբութեի՝ գերազանց քան զսրբազան կազմածսն՝ որ 'ի հին օրէնս անդ գաղտնիք էին , զորոց գրէ առաքեալն . (եբր . Թ . 5 .)

ոչ է այժմ առնել մի ըստ միոջէ ։ Այլ՝ եթէ ոչ այսոցիկ խոստովանեցի զեկեղեցին, զայնպիսին մերժէ յերեսաց իւրոց Տր Հայր. փակելով ընդդէմ նմա զդուռն այսր առաքասուն կենաց ։

(99) Այն է՛ հաստատ ։ Ցայլ տպագրիս, Այս է՛ հաստատ. բայց լաւ եւս համարեցաք գնել զի մեր օրին. զի բովանդակ դաւանականն ճառս ունի երկու մասն. առաջինն 'ի Տր Երրորդութիւն, և երկրորդն՝ 'ի Տր եկեղեցին. ուստի առնելն, Այն է՛ հաստատ, իմանի՝ առաջինն այն է իմ դաւանութիւն 'ի Տր Երրորդութիւն. և այս երկրորդս կամ վերջինս է խոստովանութիւն 'ի մայրն իմ Տր եկեղեցին ։ Եւ զայս բան դնէ 'ի կատարածիս իբր իւր ձեռնադիր և կնիք 'ի հաստատութիւն դաւանութեանցն ։

Սրբոյն յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հօրն, տէր նոցին աղբերս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

ԲԱՆ. ՂՕ.

ա. Ո՜վ ողորմած, բազմագութ՝ հզօր՝ ահաւոր՝ մարդասէր՝ օրհնեալ կենդանի՝ անճառ.[1] որ ո՛չ ելանէ երբէք ըստ բան քո՝ իր անձեռնարկելի, որ և մնաց է անհնարաւոր ։ Ո՛րն է հաստուցանել պտուղ քաղցրութե[2] ընդ փշոց խստութե, սկզբնահայրդ այսմ նորոգ և զարմանաւոր կանոնաց կենաց. քանզի բարի առնել ատելեացն, և աղօթս 'ի վերայ հալածչացն, և փրկութիւն հայցել խոցողացն, և սպանողացն ներումն խնդրել՝ 'ի քէն ընծայեցաւ պտուղս այս հրաշից. որոյ քաղցրութիւն անճառ է քան զօրինակ, և բարեբանեալ կամաց քոց ախորժելիք ; և գովեալ շրթանց քոց ճաշակելիք, հոգւի երեսաց՝ և զօրութիւն գեղոյ մերոյ տէր քո օրհնեալ 'ի բարձունս ։ Այլ մարդք երկրածինք և ամենավրէպք, և բարեմատոյց ձեռաց՝ չարիս դարձուցին. իսկ դու լոյս՝ և տուիչ լուսոյ՝ ոչ[3] լսես անէծս. ո՛չ ախորժես չար. ո՛չ կամիս կորուստ. ո՛չ ըղձանաս մահ. ո՛չ յուզիս 'ի խռովութէ. ո՛չ տիրիս 'ի ցասմանէ. ո՛չ հարկիս 'ի բարկութէ. ո՛չ մթանաս 'ի սրտոյ. ո՛չ այլայլիս 'ի գթութէ. ո՛չ փոփոխիս 'ի բարութէ.[4] ո՛չ թիկանց շրջումն, և ո՛չ երեսաց անդրադարձութիւն, այլ ամենայն լուսաւորութիւն՝ և նկատումն փրկութեան ։

բ. Եթէ քաւեցես, կարօղ ես. եթէ բժշկես, զօ

րաւոր ես. եթէ կենդանացուցանես, բաւական ես. եթէ շնորհես, առատ ես. եթէ ողջացուցանես, հնարաւոր ես. եթէ պարգեւես, ամենալի ես. եթէ արդարացուցանես, ամենարուեստ ես. եթէ մխիթարես, ամենիշխան ես. եթէ նորոգես, ամենակալ ես. եթէ հրաշագործեսցես, ամենաթագաւոր ես.[5] եթէ վերստին հաստատես, արարիչ ես. եթէ կրկին գոյացուցանես, ա̃ծ ես. եթէ հոգաս ընդ մեր, ամենատէր ես. եթէ կորզես 'ի մեղաց, այցելու ես. եթէ չարժանեացս ընձեռես, օրհնեալ ես. եթէ յորսողէն զերծուսցես, փրկիչ ես. եթէ զեղցես 'ի քոյոցդ 'ի մեզ, հարուստ ես. եթէ նախ քան 'ի մէնջ խնդրելն՝ դու կարկառեսցես, անկարօտ ես. եթէ լայնես նեղութեանս, անդորրիչ ես. եթէ զվերջացեալս կոչես, խնամակալ ես. եթէ զսասանեալս հաստատես, վէմ ես:[6] Թէ պապաքելոյս արբուցանիցես, աղբիւր ես. թէ զծածկեալսն երեւեցուցանես, լոյս ես. թէ զօգտակարսն իմ ծանուցանես, բարի ես. թէ զբիծսն անտես առնիցես, երկայնամիտ ես. թէ ընդ փոքուս 'ի դատ ոչ մտանիցես, բարձրեալ ես. թէ ծառայիս ձեռն մատուցես, ստացօղ ես. թէ աջովդ քո պաշտպանեսցես, յանձանձիչ ես. թէ վհատելոյս դարման մատուսցես, կերակրիչ ես. թէ զանգէտս պարարեսցես, վարդապետ ես. թէ զզիմեալս առ քեզ ընկալցիս, ապաւէն ես:

Դ. Եւ արդ՝ քո են այսոքիկ՝ տէր ողորմութեան[7] ոչ միայն գրեալ, այլ կատարեալ եւ գլխաւորեալ՝ նախնի նահատակդ համբերութեան վկայից. որ վասն իմոյ փրկութեան հանդիսացար զօրապէս յասպարիսի Ճակատուն, զի կակղեսցես զկարծր բռնութիւն մարմնոյս դառողութեան վարժմամբ կրթութեան չարչարանացն վտանգի. եւ յանպարտակիրդ մարմին չափեալ ըզբնութեանս մերում զտաժանականն տագնապ տուժի, զի զգթութիւնդ որ առ մեզ՝ արդեամբք ցուցցես 'ի քեզ օրինակեալ. օրհնեալ յաւիտեանս. ամէն:

---

(1) Որ ոչ ելանէ: 'Ի բանէ հրամանի քո ոչ մի ինչ անձեռնարկելի կամ անհնարին կարէ ելանել կամ վրիպել, այսինքն առ քո հրամանդ չէք ինչ անկարելի. որ Ն. ծրոց, թէ եւ մասոց անհնարաւոր իցէ կամ թուիցի:

(2) Ընդ ծովու ։ Փոխանակ խնամս մեծաց մեղուցս՝ հատուցանել քաղցր պտուղս՝ քեզ է անշահական, որ առաւելն հայր կամ մարդասէր եղեր զքանչելի կանոնացս՝ թէ բարի առնել առնելոյն, եւն ։ Այս հրաշալի պտուղք 'ի քէն ընծայեցան, որոց քաղցրութիւն 'ի վեր է քան զօրինակ, և պտղաբերեալք են օրհնեալ կամաց քոց, եւն ։

(3) Ու ըեւ ։ Յորժամ ոք անիծանէ զընկերն, ոչ կամիս լսել զպղծութի-ւն անէծս. պարտելոյս անիծանել նաև զանիծիչս մեր, (ըստ մատթ. ե. 44.) ոչ յաղթիս. ոչ գոյ 'ի քեզ խռովութիւն, ոչ ցասումն, ոչ բարկու-թիւն ։ ոչ մնանս, ոչ աղօտանս, ոչ նուազիս 'ի սիրոյ. կամ 'ի սիրելեաց՝ ոչ խառնիս յայն, որպէս լինի առ մարդիկ, մթութիւն անխառնութիւն կամ շահու, կմ ոչ պահելով զօրէն սիրոյ ։ Այնչափ անխառն է սէրն Այ. մինչ զի նաև յառնելն զմեզ և զմեղաւորս, և 'ի պատուհասելն զյան-ցաւորս, մինչ սէր մնայ, 'ի սիրոյ շարժի և գործէ, այսինքն 'ի սիրոյ ան-բաւ բարութեան իւրոյ ։ Նման այսմ տես Է. 1. Օգոստինոս ...

(4) Ո՛չ ... ։ Այ յիշումն կողմանէ ոչ անտես առնէ զմարդն 'ի խնա-մոց, որ նշանակի շրջմամբ թիկանցն. կամ երեսաց անդրադարձութեամբ, զր յետս գործուցանելն. այլ մարդն դառնալով 'ի առնչութեան, թի-կունս գործեցանէ առ ած, և մերժէ զխնամս նորա. որով և ած առն գործեցեալ երեսս. ըստ սաղմոսին. (ժէ. 27.) * Ընդ թիւրում թիւ-րեսցիս ||։

(5) Երբէք ... ։ Եթէ գործեալ հատուածս զմեզ 'ի բնա-կան կամ 'ի գերբնական բարեաց. կամ, եթէ կրկին գոյացուցանես յա-ւիտեանս 'ի մեռելոց, յայնմ ամենայնի ցուցանես լինել աղբիւր և Ած. քանզի նոյն տրամադրական զօրութիւն որով եղեն առաջինքն, լինին և յե-տինքն. և նոյն խրատունք ածութեան են յառաջնումն և յերկրորդումն ։ Եթէ ... , եթէ անարժանիցս պարգևես բարիս, օրհնութիւն ընդունիս՝ և ոչ մեղադրութիւն. ուր ընդհականակն առ մարդիկ մեղա-դրելի է երբեմն բարերարել անարժանին՝ յորժամ այնու լինի նմա զեղծանել ։

(6) Թէ ... ։ ... ։ ըստ այլ օրինի. տես և 'ի հետևեալն գնի, եւն ։

(7) Ո՛չ ... ։ Կերպարեալ բանիւս քեզ պատշաճին՝ ոչ միայն իբր ճշմարտապէս գրեալք, այլ զի կանխաւ արդեամբք կատարեալ և մնա-ցեալ են 'ի քէն առ քեզ, նախքան նախապատիւ, յառաջընթացք ամենայն մեկայից, որ նախ հանդիսացար յառաջարկեալ նեղութեան, առ 'ի ճնշել զապստամբութիւն մարմնոյս. և 'ի քո անպարտական մարմնոյդ ընդունե-լով զատամանելի կիրս բնութեան մերոյ, արդեամբք օրինակեալ ցուցեր զանձառ գթութիւնդ՝ զոր անմեկնանալի բնութեամբ ածութեանդ անմարթ էր ցուցանել. զի մերկ ածութեանդ գութք աներևոյթ ներգործեն, զոր մարդանալովդ արարեր յայտնագէս ։

Մերտէն յաւելուած ճըճէն հեծութէ՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

ԲԱՆ. ՀԵ:

ա. Եւ քանզի օր է օրհնաբանեալ և [1] լուսանորոգ՝ կշռութե երկուց ընտրութեց՝ արարածոցս սասանութեց՝ յեղանակելոյ յայլ իմն էութի երկնակենցաղ անփոփոխադրելի, ամբարձելոցն խոնարհութե, և կործանելոցս վերբերութե, սարսափելի ուրբաթու մեծի պասեքիս, յորում եկն եհաս ժամ բարեպատեհ գրել ինձ զայս նուագ ձայնի հեծութե՝ [2] զուարճախառն երկիւղիւ, ահա ըղձալի համարիմ ասել աստանօր 'ի քոյոց այտի՝ զոր ընդ իմ կրեցեր՝ ա՛ծ բոլորից :

բ. Կացեր յատենի քում ստեղծուածոյն իմոյս կերպիւ [3]. ոչ խօսեցար՝ տուիչդ բանի. ոչ բարբառեցար՝ հաստիչդ լեզուի. ոչ ձայն արձակեցեր՝ սասանիչդ երկրի. ոչ մռնչեցեր՝ ամենազդեցիկ փողդ մեծութե. ոչ երախտեօքն քո յանդիմանեցեր, և ոչ չարեօք նոցին ըմբերանեցեր. ոչ մատնեցեր ամօթոյ՝ զմատնիչսն զքեզ տանջանաց մահու. ոչ 'ի կապելն զքեզ դիմադարձեցեր, և ոչ յապտակելն գժուարեցար. ոչ 'ի թքնուլն թշնամանեցեր, և ոչ ընդ կռփելն երբէք խռովեցար. ոչ ընդ կատակելն սրրտմտեցար, և ոչ ընդ խաղ արկանելն երեսս փոխեցեր : Մերկացուցին զզգեստ պատմուճանին [4] իբրև 'ի տկարէ, և դարձեալ ագուցին իբր անփրկանաւոր ըմբռնեցելոյ : Եթէ ոչ էր [5] արբեալ կրկնակի քացախ՝ զանգեալ ընդ լեղւոյ, ոչ էր հեղեալ մաղձն իմ մթերեալ նախնի դառնութեն. ճաշակեաց վհատութե, և արգել անդէն տարակուսանօք. առին մոլեգնաբար, և դարձեալ մատուցին անպատկառապէս : Գանիւ հարուածոց յետին անարգութէ 'ի մէջ խառնիճաղանջին ամբոխի դատապարտեցին. ծունր կրկնեցին նախատանաց, և պսակ եդին արհամարհութե :

Գ. Ո՛չ ետուն [6] հանգիստ կենդանարարիդ, եթէ ոչ՝
զգործի մահուն կրել քեզ պատրաստեցին. ընկա-
լար իբր երկայնամիտ. առեր իբրեւ զհեզ. բարձեր
որպէս համբերօղ, [7] ըստանձնեալ իբր զպարտական՝
զփայտն վշտաց: Որպէս զծաղիկ շուշանաց հովտաց՝
ուսով բերեալ զզէնն կենաց, զի յարհաւրաց գի-
շերայնոց՝ [8] զիւրակերտս գահաւորակս մարմնեղէն
գոյութե͞ս՝ պահպանեսցէ 'ի դատապարտութենէն վայ-
րի՝ իբր 'ի խրախճան խնճոյից: Հանին արտաքս իբր
զողջակէզ. կախեցին իբր զխոյն սաբեկայ՝ ձգեալ
զեղջերացն. տարածեցին 'ի սեղան խաչին իբր զպա-
տարագ. բեւեռեցին որպէս չարագործ. պնդեցին
իբր զապստամբ, զխաղաղութի͞դ երկնաւոր՝ իբր զա-
ւազակ, զանկապուտ մեծութի͞դ՝ իբր զտառապեալ,
զառ 'ի քրովբէից պաշտեցեալդ՝ իբր զքամահեալ,
զսահմանդ կենաց՝ իբր զարժանաւոր սատակման մա-
հու. զաւետարանիս նկարիչ՝ իբր զհայհոյիչ օրինին.
զտէր եւ զկատարումն մարգարէից՝ [9] իբր զհամառօ-
տիչ գրեցելոցն. զճառագայթդ փառաց՝ եւ [10] զկնիք
անքնին խորհրդոցդ հօր՝ իբր զներհակ ծնողիդ կա-
մաց. զօրհնեալդ իսկապէս՝ իբր զտարագրեալ. [11]
զկապոյ օրինին լուծիչդ՝ իբր զայր 'ի նզովս գրեալ.
զհուրդ ծախիչ՝ իբր զհերքեալ իմն կալանաւոր. զա-
հաւորդ երկնի եւ երկրի՝ իբր զհաւաստի պատժա-
ւոր. զ'ի լոյս անմատոյց ծածկեալդ՝ իբր զհողածին
ըմբռնեալ:

Դ. Ո՛վ քաղցրութի͞դ եւ երկայնամիտ բարերարու-
թի͞դ ողորմածիդ գթութե͞, որ վասն ապախտաւոր
եւ անօրինեալ ծառայիս՝ տէրդ բոլորից՝ զայս ամե-
նայն կամաւորապէս եւ հաւանողական [12] հաճութ͞բ
տարեալ՝ մարմնոյդ միութ͞բ 'ի քեզ ընկալար. եւ մինչեւ
'ի քնարան շիրմին տապանի՝ անպակաս 'ի լրութ͞է
ամբողջ նոյնութ͞ե ա͞ծ անքնին՝ զնոյն կրեալ նախա-
տինս անճառ համբերութ͞ե, յարեար կենդանի ինքն-
իշխան բարձրութ͞բ լուսոյ՝ աննուազ մարմնով, եւ
անթերի ա͞ծութեամբ: Օրհնեալ փառօք, գովեալ
գթութ͞բ, բարեբանեալ միշտ ողորմութ͞բ, յաւի-
տեանս յաւիտենից. ամէն:

(1) Լաւանտոր : Օր ուրախութեան չարչարանաց, յորում լոյսն արեգա-կան՝ որ 'ի մեզ ժամուն խաւարեցաւ, կրկին նորոգեցաւ յիններորդ ժա-մուն. կամ նորոգեցաւ լոյսն անդրանկութեն(?) : կէսաւուրն Էրէկոյ ըմբռնեն. որ կշռութեն կամ բաժանման երկուց մասանց աւուր, այսինքն առաւօ-տեան և գիշերոյ. զի 'ի միջում ցերեկի եղև միանգամայն տիւ և գիշեր : կամ, որոշման ընտրութեն արդարոց և մեղաւորաց, որ ցուցաւ յերկու աւազակսն : Արտօրանթօս(?) ...ութեն, յորում արարածք իւրաքանչիւր ըստ իւրեանց պայմանի տանջեցան. արեգակն և լուսին՝ խաւարմամբ. երկիր՝ շարժմամբն. վէմք՝ պատառմամբն. գերեզմանք՝ բացմամբն. որ է օրինակ չեղանակելոյ յայլ ինչ եութին(?), փոփոխելոյ յայլ որպիսութեն ոչ միայն մարդկան, այլ և ամենայն արարածոց, որոց նորոգութեն եղև քրիստոսի չար-չարանօքն : Անէօրէնեցոյն(?) գիւտցկործանման, և մեզ կործանելոցս՝ կանգ-նման և բարձրութեն :

(2) Զաւարճախոտն Էգլենդին : 2 օրէն. Էգլենդին : Գրեալ ասէ՝ զայս ա-ղօթս երկխօսութե խառնելով ընդ ուրախութեն : Երկխօսդ(?), զի չարչարանք փրկչին՝ մեծախնդրութեն և դատապարտանս են խմոց(?) մեղաց, և ես նոր մեղ-ացք անպատուհաս առնեմ զնոյնս, և ապերախտութեն դատապարտանաց պար-տաւորիմ : Եւ խնդութեն, զի այն չարչարանքն՝ մեծարութիւն են մեղաց, և փրկանք հոգւոյս, և յուսադրութեն քաւութեն նոր պարտեացս. որով խնամեալ զանբաւ ողորմն իւր, և զմեծութեն շնորհաց նորա, և զզատա-կանութեն հոգւոյս : Եւ այսպէս նոյն չարչարանք են ըստ այլ և այլ բա-նի լինին պատճառք խնդութեն և երկիւղի, որք միանգամայն լինին 'ի սրտի բարոյականս միայն՝ մին յաղթոցելով միւսումն, և ոչ ֆիզիքականս : Եւ այս կրկին ներգործութիւնք լինելոց են 'ի սրտի՝ ըստ իւրաքանչիւր մասնաւորութեն : Եթէ փորձութիւնք մեղաց յարձակին 'ի մեզ, երկիւղ առ-ցուք չնորոգել զչարչարանս փրկչին. եթէ լքումն կամ յուսահատութի դայցէ 'ի վերայ, զխնդալից անցուք զմտաւ :

(3) Ու խօնէշըր : Զանձառելի համբերութեն և զխոնարհութեն փրկչին բացատրելով, զիւրաքանչիւր հանգամանս չարչարանաց նորա սատկա-ցուցանէ իւրեանց ներհակաւն : Լիւր(?) կացեր ասէ՝ որ առուինք ես խօսից. ոչ ձայն հաներ՝ որ զերկիր դողդեալ են : Զայսպիսի աս. Վիլ յերկրորդ դէմն խօսի. բայց 'ի բանէն՝ Ղէշնոցուցին(?) գգէոփ, մինչև 'ի համար Դ. Թուի յերրորդ դէմն դարձուցանել, որ և յայտնի է յասելն, Ճաշ-կէաց, արգէն :

(4) Իփրս 'ի փոյրէ : Զհանդերձս փրկչին 'ի բաց հանեին համարելով զնա ակար, անդօր 'ի պաշտպանել զանձն. իսկ անտեսեալ զի անդախանդարան(?) մեղայր, դարձեալ ագուցին նմա, համարելով թէ անփրկելի ըմբռնեալ է, փախչել ոչ կարէ առ ազատելոյ զանձն :

(5) Աւբէ(?) : Միանգամ նախ քան զխաչելն՝ մատուցաւ գինի ընդ լեղի խառնեալ. (ըստ մատթ. իէ. 34.) կամ զմուռսեալ (ըստ մարկ. ժե. 23 :) Երկրորդ անգամ 'ի խաչին՝ քացախ ընդ լեղւոյ. և զերկոսին ես փոխե(?) կոչէ նա մարդասպան(?) : Յառաջինումն ճաշակեաց ոչ կա-մեցաւ(?), լքեալ և թուլացեալ գոլով 'ի զօրութէ. բայց արգէն ամբեն(?), խսկոյն փարախոստանէօ(?). զի մի՛ երևեցուցէ՝ թէ առ չգգալոյ ցաւոյն ճա-շակէ. ուր ինքն յայն սակս ճաշակեաց, զի զգայցէ զդառնութիւն, ա-ռանց խափանելոյ զցաւսն : Եւ ասէ, եթէ ոչ այսպէս կրկնակի արբեալ էր փրկիչն զդառն ըմպելիս, ոչ 'ի բաց փոխէր զմաղձ առաջին դառն մեղացն ազգամիս, զապականութիւն որ 'ի մեղաց ազգամիս մթերեալ էր 'ի հոգիս :

(6) Հանգիստ կենտաւրեաց(?). (մի օրէն. կէնտաւրեան :) Ցեռ(?) ասանձելոյ զգեղ ընդ գիշերն ողջոյն, ակնարկէս դառն հարուածովք և նախատանօք

հրէից և հեթանոսաց, ոչ տուեալ կենդանութեան և ոչ փոքր մի հանգիստ, այլ անդէն զգործի մահուն զծանրակիր խաչափայտն հանդուցին 'ի Թիկունս քո. նախ քեզ եւսոն բառնալ զծանրութիւն խաչին, և ապա խաչին բառնալ զքեզ, երր առաւել 'ի խաչն՝ քան 'ի քեզ խնայելով: Իսկ դու ոմ երկայնամիտ, ընկալար յուս քո զխաչն՝ որպէս արդարև հանգիստ քո, երր Թեթև ինչ դիւրատար և ախորժելի, որպէս Թէ ծաղիկ շուշանաց էր նա:

(7) Ըսփանսիւէսու ՆԷՐ: Ցանձն բարձեալ զխաչն երր պատարագական փոխանակ մեր, կամ ըստ կարծեաց հրէից: Ցայտնուի ատեղիս՝ բառդն ՆԷՐ, որպէս երրակի իմանին ըստ յարմարութեան [illegible] բանին. այսինքն մի՝ յայտնողական՝ ըստ ճշմարտութեան. որպէս ասելն, ՆԷՐ [illegible], ՆԷՐ ՀԷՂ. են: Երկրորդ՝ յայտնողական առ կարծիս հրէից. որպէս ասելն. ՆԷՐ [illegible], ՆԷՐ [illegible], են: Երրորդ՝ նմանական, որպէս ասելն. ՆԷՐ [illegible]:

(8) Զխուրակէրփս: Զառ յինքեանէ կազմեալ աԹոռս կամ բազմոցս հոգևոյս՝ զմարմինն, պահպանեսցէ Տր խաչն 'ի գիշերային երկիւղալեաց, 'Ի [illegible], 'ի ժամ քնոյն՝ որ է պատիժ մեղաց, և ըստ որում պատկեր մահու՝ նշանակէ զպարտաւորիլ մեր 'ի մահ. ուստի այնպէս աներկիւղ պահեսցէ զիս 'ի ժամ քնոյն, որ զի անկողինքն լինիցին բնութեամբ սփոփումն հանգստեան իբրև 'ի խրախճանս:

(9) ԻՒԷՐ [illegible]: Իբրև զկրճատիչ կամ լուծիչ գուշակութեանց մարգարէիցն: Ըստ այլ մտաց՝ ճշմարտութիւն առն քո հաստատիչ օրինաց. այսինքն բառնալով զաւերողսն, և 'ի հաստատութիւն աւետարանին մերածելով, ըստ բանին հոռմ. (Թ. 28:) * Զբանն հակիրճ արասցէ Տէր, || են:

(10) Զ[illegible]: Զբուն նշանակ և զհաստատութիւն խորհրդոց Տր հօր՝ իբրև զհանկատակ կամաց նորա:

(11) Զ[illegible] օրէնին: Զլուծիչ պատուարութեան հին օրինաց՝ խաչեալն երր մնացեալ 'ի նոյն օրինաց: 2 օրին. [illegible] օրէնին, այսինքն զլուծիչ պատուարոց կամ բանադրանաց օրինաց:

(12) Հ[illegible]: 2 օրին. [illegible]: Զայս ամենայն ախորժական կամօք կրելով, 'ի ձեռն միաւորութեան մարմնոյդ՝ 'Ի [illegible] յանձնայն անձնդընկալար. և մինչև 'ի գերեզման անապական և նոյն [illegible] զորով, կրեցեր զնոյն նախատինս անպատում համբերութեամբ: Ո՛չ Թշնամիք քո յաղթեցան նախատանօք խաչին, և ոչ անհնարինելի սէր քո շառացաւ կենդանութեան չարչարիլ վասն մեր. այլ յետ մահուան և 'ի խաչէն եւս իջանելոյ՝ առակաւէն առ գերեզմանին նախատէին զքեզ զինուորօքն և կնքելովն, և դու զայն յանձն առեր. մինչև ապա յարեար, ոչինչ 'ի բաց Թողլով 'ի մարմնոյդ՝ բայց զանարգութիւն և եԹ, զգեցեալ փոխան այնր զլուսաւորածառ բարձրութիւն փառաց: Եւ արդ, զի՞նչ տացուք արիսու քեզ ընդդէմ ամենայնի անկշիռ երախտեաց. եԹէ օրհնուԹիւն, եԹէ գովուԹիւն, եԹէ բարեբանուԹիւն, այսոքիկ Թէ և յաւիտեան մատուցին, այլ փոքունք են: Ահա դու Տր մեր [illegible], դու միայն քեզ փոխարէն:

Սերոբէն յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հօնողէ առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

ԲԱՆ. ՂԲ։

ա. Եւ արդ՝ անկեալ յերեսս [1] հողանիւթ կերպիւս, ՚ի վայր խոնարհեալ ծնրադրական երկրպագութբ, զբարեգործիդ ողորմածութե զկենդանարար ոտս համբուրեմ, զայս օրինակ մաղթանաց մեծիդ ընծայեցուցեալ ։

բ. Աղաչեմ զքեզ միայն խնամակալ, մարդասէր, գթած, կեցուցիչ, հզօր, այցելու, պաշտպան. [2] մի ունայնասցի վաստակն աշխատութե փրկականդ կրից մարդացելոյդ վասն իմ Այ. [3] մի սուտ եղիցի քրտանցն կաթուած խառնեցեալ արեամբ՝ ՚ի մատնութեանն աւուր գիշերի. մի լիցի ստուերացեալ լուսոյդ երախտիս, զոր ձրի և առանց փրկանաց թշուառացելումս ինձ պարգևեցեր. մի ընջեսցին շնորհացդ աւետիս, զոր կողից քոց կայլակք նորոգեցին. մի անշահ եղիցին կրիցդ պտուղք, զոր կարօտութես իմում մատուցեր ։ Մի պարծեսցի բանսարկուն վանեալ զքո ստացեալս իւրացուցանել. ահա յաղթեացես կամօք քո՝ ըղձից չարին. վերստին ապշեսցի միանգամ զարհուրեալն. կրկին պարտեսցի խայտադատեցեալն ։ Մի անխայեր [4] զազատարարդ քո բան, որ զստեղծեալս քո քեզ ընծայեալ՝ վերստին առ քեզ դարձուցանէ. զանձառն արարեր բարերարութի [5] յանակնկալ ժամուն յուսահատութե, յորժամ բնաւ իսկ կտրեալ և օտարացեալ էր կենդանութեն շաժողութի. մեռար անմահդ՝ և զմահացեալս նորոգեցեր. [6] եթէ զկանոն համաձևութե օրինին փոխեցեր, արդ զդիւրինն և զհեշտականն և զևս հնարաւորն մի արգելցես՝ սկզբնաձիր ողորմածութե բարեգութ օրհնեալ և երկայնամիտ թագաւոր ։ Ազդեա՛ բանիւդ ամենազօրաւ, որ զգոյութի լուսոյն ստեղծեր ՚ի նախնումն աւուր, և վաղվաղակի փոփոխեալ գըտայց ՚ի լաւ անդր. և փոխանակ զի ես ոչ խնդրեցի

հետեւել լուսոյդ, դու եղիցես ինձ յայց՝ ճառագայթ
ծագման հայրենի կերպիդ, և կոչեցայց. առաջի քո
ծառայս քրիստոսապարտ՝ ողորմեալ շնորհեալ առ 'ի
քէն. [7] ոչ է ժամանակ յերկարաձգութեան առ 'ի ըղ-
պարտոն հատուցանել, ահա շնորհեա ինձ տառա-
պելոյս զերեսս քո՝ լոյսդ 'ի խաւարի սրտից վհատե-
լոց ։ Երգել և կնքեալ [8] զընթացմունս ելիցն, որ
միշտ զեղուն բարիքն հոսեալ 'ի յուշոյս իմ տեսու-
թէ. պահեա ինձ զշնորհ ամենապայծառ գանձուցդ
մնացականաց. որով պատուական գտեալ՝ քո անուա-
նեցայց, պաշտպանեալ 'ի քէն՝ անսահման բարի ։

Է. Ահա ողորմեա ինձ գթած, աղաչեմ զքեզ ո-
ղորմեա ինձ՝ հզօր, կրկին ողորմեա ։ Մի փոխար-
կեր երկուս ցաւոց՝ ընդ չարեաց իմոց բարիդ ա-
մենեւին. մի բառնար 'ի վտանգելոյս՝ զառ 'ի քէն
պարգեւեալդ շնորհ. մի կապտեր զփչումն ամենօրհ-
նեալդ հոգւոյ. մի լուծաներ զխնկեալ [9] զկնիք ար-
քունական պատկերիդ ։ Մի յայտնեսցին [10] փուշք
մեղանացս՝ 'ի սրբութիս մտացս. մի խզեր զկապ միու-
թեան զընդ քեզ սիրոյն պնդութեան. մի մերժեսցես [11]
զարուեստ զօրութեան լեզուոյս յարմարութեան. մի պա-
կասեցուցաներ զաջողուած աջոյս՝ առ 'ի զլուսոյդ
մասունս բաշխել ։ Մի գրեր [12] 'ի դպրութեան կենաց
մատենիդ՝ զմահուն պարտիս. մի պահեր. մի ինձ հա-
մարիր. մի յիշեցուցաներ. մի ամաչեցուցաներ. մի նա-
խատեր. մի ոտն հարկաներ. [13] մի արձանացուցաներ
զմեղկութեանցն. մի ամբարեր զկորստեանցն. [14] մի իբր
ստգտեալ իմն ամբաստաներ ։ Մի յարուսցես ընդ
իս [15] զծառն անիծից. մի արձակեր 'ի յիս զսաղարթ
մխասուցն. մի ընծիւղեր զծաղիկ մեղացս. մի բերցես
ընդ առաջ զնամակ պարտուցս. մի արտաբերեր
զէութիւն պտղոյն ։ Մի թուեսցես [16] 'ի ձիւղս երկրա-
ստեղծ մատանցդ՝ զգիւտս գործոցս. մի մատուսցես
բան ընդդէմ ահեղ՝ զանօրէնութիւնս իմ յիշատա-
կել. մի մատնեսցես իմոցս կամաց զաւանդս հոգւոյս՝
վարել 'ի գերութեան. մի աստէն զիս փառաւորեր՝ զի
անտանօր դատապարտեսցես. [17] մի նուազութեամբ այսր
անցաւորի՝ զյաւիտենական բարիսն տուժեր. մի 'ի

տակաւուն այսմ ժամանակի՝ զանվախճանելի զփառ-
ացն չափեր. մի ընդ հովտիս վշտաց հեծութեն՝ զան-
ախտական զկեանսդ դրաւեր. մի ընդ ստուերի այսր
մթութեն՝ զանձառելիդ լոյս փոխանակեր. մի զերա-
տանակ մնացս լքցես՝ ըստ արտուղի հետս հետևել.
մի [18] զկամուրջ կենցաղոյս գրեսցես ինձ հանգստեան
բաւականութիւն. մի [19] զհովիտ հանձարոյս ստուերա-
կան պահեր՝ 'ի հանդերձեալն ինձ հրապարակել:
Եթէ ամբարես զաւանց համարոյ գործոցս իմ չա-
րիս, մեռայց կենդանւոյս. եթէ շտեմարանես 'ի սըր-
տի, ստոյտին կիզեալ անբոց այրեցայց. եթէ քննես-
ցես զանօրէնութիւս, առանց յանդիման քեզ լինելոյ՝
իսպառ հալեցայց. [20] եթէ անկակից ինձ թողցես ըզ-
մեղսն, 'ի նոյին վատնեալ մաշեցայց:

Դ. Ընկալեալ միշտ զօրեղ ամենակարօղ՝ փախնուլ
չարութեանցս որ յիս, զի բարիդ քո եկեալ փոխանոր-
դեսցէ. հրամայեա գթած, խնամակալ, գովեալ,
լոյս անշիջանելի, զօրութիւն անսահմանելեաւ, զի [21]
նոր հաստատեսցի գոյութիւն բնութեան մարմնեղէն յար-
կի անդամոցս. յորում հանգուցեալ անլքանելի՝
բնակեսցես բազմեալ ախորժ տենչանօք՝ միութիւն հո-
գւոյս իմ ընդ քեզ. զապականութիւն մեղացս մեր-
ժեալ իսպառ՝ յանարատութիւն զիս պատրաստեսցես՝
ամենակեցոյց թագաւոր անմահ տէր յս քս, օրհ-
նեալ յաւիտեանս. ամէն:

---

(1) Հողանիւթ կերպիւս: մի օրին. կերպիս:
(2) Մէ անտոյնասցի վասպաին: 2 օրին. վասպակէ:
(3) Մէ սոսկ երկրի: Մի անգործ և անզօր եղիցի կանթուած քրտանց քոց, խառնեցեալ արեամբ: Այսպէս ասաց և 'ի բանին կը. կ. որ հաս-տատէ զհաստարակ կարծիս մեկնչաց՝ թէ քրտունք խառն ընդ արեան հոսէին 'ի մարմնոյ փրկչին 'ի գիշերի մատնութեան: Իսկ կայետանոս հա-մարի՝ թէ յետ սպառելոյ քրտանցն բովանդակ արիւն անխառն հոսէր:
(4) Զարդարարդ կա բան: Մի խնայեր զքաւութեան քո բանիդ, որով ա-ռնէիր. թողեալ լիցին քեզ մեղք քո. կամ, Արձակեալ ես 'ի հիւան-դութենէ քումմէ, են:
(5) Ցանկալի ծածուկ: Որպէս առ անդամալոյծն՝ որ երևան և ա-թ ամ անօգնական մնացեալ, կայր 'ի յուսահատութեան, անանկեալ ցու-ցեր զզարթուցութիւնդ, նմանապէս և առ մեռեալ միանօրն՝ որ 'ի նային, այսպէս և առ մեղուցեալ բնութիւն՝ որ անշահ մնացեալ 'ի բնական օրէ-նաց, և անօգնական 'ի գրաւոր օրինաց, կայր յուսահատեալ 'ի բժշկու-

թէ, և օտար 'ի հոգևոր կենաց, զոր 'ի վերջնում դարու յանկարծ երևեցար, և զանձնառու բարերարութեան ցուցեր, մեռանելովդ վա մեր:

(6) Երկէ ընկանան: Եթէ զկանոն օրինացն՝ որ հաւասար յանցանացն չափեր զպատիժն, ասելով. Ակն ընդ ական. կամ հրամայեր, Անձն որ մեղիցէ՝ նոյն և մեռցի, զոր փոխեցեր. զի ոչ միայն 'ի մէնջ ըզ յանցանաց ոչ պահանջեցեր զհատուցումն, այլ և մեր փոխանակ անպարտդ մեռար: Կամ, եթէ զայս կանոն օրինաց բնութեան, զի 'ի մեռանել մարդոյ՝ հարկ է եղծանել անձինն, զոր փոխեցեր՝ մեռանելով մարդկութեամբդ, և անմահ մնալով անձամբդ, եթէ զայսոսիկ՝ որ ըստ ինքեան մեծ էին և դժուարին, արարեր ողորմութեամբդ, ապա մի՛ արդեօք զգեղեցիկն և զհեշտալին, թէպէտ և առ քո զօրութեանդ՝ ամենայն ինչ միօրինակ դիւրին է: Իսկ առ ողորմածութեանն քո՝ նաև անկարելին կարելի է. զի ոչինչ էր, առաջին պարգևօղ ողորմութեան ես. նախկին գործ զոր առնել կամեցար՝ ողորմութեան է. մինչ զի նաև 'ի պատուհասելդ ոչ յետնես յողորմութենէ:

(7) Ո՛չ է ժամանակ: Ո՛չ պիտոյ է քեզ երկար ժամանակ առ 'ի զպարտս իմ հատուցանել, այլ բաւական է երևեցուցանել զերեսս քո: կամ, մի՛ յերկարաձգեսցես զհատուցումն պարտուցս. այլ վաղվաղակի շնորհեա՛, և այլն:

(8) Զընծայմանս ընկէցն: Խափանեա՛ զմեղաւորութիւնն, որով արդարապէս ընթացեալ եղանին և հոսին յուշոյ իմմէ բարիքն քո. այլ դարձեա՛ 'ի միտս իմ զշնորհ պանծալից երախտեացդ:

(9) Զփոյթ, շնորհացդ, որ է նմանութիւն ածութեանդ:

(10) Փոյթ մեղանաց: Մի՛ վերստին ծնանիցին մեղք իմ՝ 'ի սրբութենէ մտացս, 'ի հոգւոյս իմ, որ սրբեցաւ ապաշխարութեամբ: Թուի ակնարկել 'ի բանն Եսայեայ. (Ե. 6.) ուր զայգւոյ տի՝ որ զհոգին նշանակէ, ասէ. * Բուսցի 'ի նմա փուշ իբրև 'ի խոպանի: || Կամ առաւել զանցս առաջարին առ Մակաբէացւովքն, յորում 'ի սրահսն սրբութեան թուփք բուսեալ էին. (Ա. Մակ. Դ. 38:)

(11) Զարտասուս: Մի՛ բարձցես զյաջողութեան կամ զճշմարտութիւն լեզուի և բանի 'ի քարոզելն. կամ, մի՛ արհամարհեսցես զյօրինուած ձայնաւոր աղօթիցս: կամ, մի՛ արգելցես զքո շնորհեալ արտասուս պատշաճաւոր աղօթից: Առաջին իմաստն առաւել յարմար է յաջորդ բանին. մի՛ դալկացուցաներ զդողդողուած աջոյս, ևն, այսինքն մի՛ իբրև յանարժանէ բարձցես յինէն զշնորհ քարոզութեան, և մի՛ զարժանաւորութիւն ձեռինս՝ 'ի բաշխել ժողովրդեան զխորհուրդ մարմնոյ քո:

(12) 'Ի դրդուելն կենաց: Տե՛ս զնման այսմ բանի 'ի Հդ. լուծ. 14:

(13) Մի՛ արձանագրեսցես: 'Ի մատենիդ կենաց մի՛ հաստատեալ նշանակեսցես զեղկելւոյս, զյանցանս հեղգութեանց իմոց: Եւ մի՛ անարգեր զհորդորելոյս, զգործս արժանի կորստեան:

(14) Մի՛ ինձ ողորմելոյ: 3. օրին. իմ գթելոյ: Ըստ առաջնոյն իմանի. մի՛ ամբաստանեսցես զինէն իբրև զյանցաւորէ, իբրև զմեղապարտէ: Զերկրորդն մարթ է բացատրել. ես մեղօք փախուցեալ յերկիւղէ պատժոց, մի՛ իբրև 'ի ձեռս անկեալ համարեցես, և ամբաստան լինիցես:

(15) Զծառայ անծիծ: Մի՛ թողուլ տայցես՝ զի Ք ես յարեցէ ապականութեանն. որոյ մնացականս սաղարթ կամ ոտքն ևս չար մատուցութեանս. և ծաղիկ՝ անկարգ յօժարութիւնս. իսկ պտուղ՝ գործք մեղաց: Կամ մի՛ արմատաց..., մի՛ 'ի յայտ բերեր, մի՛ երևեցուցաներ, կամ մի՛ արգելանացուցաներ զհուրն դատողն, զկատարումն գործոց մեղաց: Առյաւէտ երևէին 'ի մեղաւոր յարուցեալսն. ուստի խնդրէ՝ զի մի՛ ըստ նոցա վճռական լինիցի և իւր յարութիւնն:

(16) 'Ի ծնողս երկրապագնդ : Նմանութիւն աղաչէ՝ չթուել ճշգիւ և մի ըստ միոջէ զգործս մեղաց . զի որք կամին որոշապար թուել իրս ինչ, 'ի մերայ մասանցն համարեն մի, երկու, եւն :

(17) Մէ՛ նուազողութ : Մի նուազ կամ սակաւ վայելմամբ անցաւոր կենացս՝ զյաւիտենական բարիսն առ ինձ կորուսանել . մի զանմահախառն միասն 'ի սակաւ ժամանակս տուեալս ինձ վճարել . մի զանսահման կեանս ընդ հոգւոյս տրամութեան փոխել :

(18) Զկամօքս կենցաղոյս : Զնեղ և զառածանելի անցս կենաց աշխարհի՝ մի համարիցիս ինձ բաւական հանգիստ : Այլ, մի թողուր թէ զանցաւոր զայս կենցաղ՝ որ իբր կամօքն է անցաւորն 'ի հանդերձեալ կեանս, համարիցիմ ինձ տեղի հանգստեան :

(19) Զհոյլս հանճարոյս : Զպղծութիւն մնացս մի թողցես 'ի խաւարի, որով անծանօթ մնացեալ իմոց մեղաց՝ 'ի հանդերձեալն հրապարակեսցի ինձ :

(20) Երբէ անկարելից : Եթէ անկարելից ինձ թողցես զմեղսն, մինչև ընդ իս աճել, և ընդ իս յառնել, նոքին բաւական են 'ի մաշել զհոգիս . որպէս պատուհաս կամ բարեացն բոյսքն՝ անկարելից այլ ծառոց զօրով, պտուղն զնորօք և անպիտան առնեն :

(21) Նոր հաւատ : Զի նորոգեսցէ բարոյապէս կարգունն բնութեան մարմնոյ անդամոցս . որ լինի հպատակութիւն մարմնոյն առ հոգին, և զգայութեանցն առ միտսն, և մտացն առ ած, և հաստատի նոր մարդ 'ի քս :

Մերժին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հեղինակի, առ նոյն աղերս ծաղկաւոր բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

ԲԱՆԻ . ՀԹ .

ա . Յիշեա՛ տէր, տէր գթութեանց, սիրող իրաւանց՝ ած ճշմարիտ . Նայեա՛ վերստին 'ի բնութեան կերպարան միշտ սխալական . զննեա՛ ինձ դարձեալ[1] զամենընթաց տարածմունս եւ ըստ արեանս շարժողութեան . բժշկապէս մատն 'ի տեսանել, զի մարդեմ հաստատեալ մտօք խակութեան թերի խորհրդոց՝ յայն ինչ, զոր դու իսկ վկայեցեր տեսօղդ սրտից՝ միայն դու անմահն ստուեն խաւարի : Այլ իրաւունս է գրել ինձ ընդ մեղուցեալսն մարդկօրէն վրիպանաց սխալմամբ՝ պարտեալ կրկին իբր զերկրածին մահացու մարմին, քան թանիդ քուն սուտ երեւել . քանզի արդարև[2] գիտակ իսկ ես, թէ չար է արարն՝ և ընդաբոյս չարութիւն մեր, և ոչ փոփոխին խորհուրդք մեր յաւիտեան, ըստ հոգեհանճար իմաստնոյն կանխագիտակոյց առակի :

Է. Թեթեւացի [3] զսաստկուն տանջանացն, որ պատ-
րաստեալ և մնայ ինձ՝ արկանել զորդիս գեհենին՝ [4]
զարդ մահուն յաւիտենականի. թարձ զամօթոյս
պարտիս, որ պահեալ է յայտնել թշուառականիս
յետին ատենին յանդիմանութեն: [5] Նորատ խաղա-
ղութեն՝ յառաջապարգև ողորմութեք քո ընծայեցի.
զի մի անտանելիքն ահաւորութեան 'ի ցոյցս ինձ ե-
կեալ կերպարանեցին, անյոյս աշխութի ընդ կենաց
զզջման առաջի կարգեալ, դատաստանն ահաւոր,
անկաշառ և անխաբելի դատաւորն, ամօթն ստսկա-
լի, կշտամբանքն սարսափելի, յանդիմանութիւն ան-
փախչելի, տագնապն անձողոպրելի, պակուցումն
անխրախուսելի, դողումն անվճարելի, լալումն
անսփոփելի, կրճումն ատամանցն անբժշկելի, տապա-
կանութիւն անողջանալի, անէծքն սարսափելի՝ ձայնին
քո բանիդ, փակումն գթոյն, և արգելումն ողորմու-
թեանն: Որ [6] ընդ գալարելն երկնի՝ և ընդ երկրի
դղրդելն ընդ կարծրութի յատակիս, ըստ կուտա-
կելոյ կոհակաց խռովութե ծովու իբր փախստեան
կերպ ցուցանելով, մի զմիոյ հետս խափանեն կասեալ
յերկոցունց. և [7] տատանեալ սասանեալ լայնատա-
րած գետնոյս թանձրութե 'ի հիմանց անտի, ընդ
ուժգնակի բախման թնդելոյ ներքնային խորոց՝ հար-
թէ զլերինս, և հալեալ հրդեհին բնութիք վիմաց
և ամենայն տարերաց գոյից. այլայլին երկինք՝ յա-
նեղծ փոփոխութի, և յեղանակին արարածք տարե-
րօք իւրովք 'ի նորոգ նմանութի: Ծածկութիւք գոր-
ծոցս հրապարակին, և աներևոյթք կրից մեր յայտ-
նին. վարք կրօնից ներգործեցելոց՝ [8] 'ի մարմինս մեր
նկարին: Թագաւորն երկնից՝ յատենի նստի, վճիռ
հատուցմանն 'ի ձեռին իւրում: Ահա [9] վայ ինձ եօթ-
նիցս անգամ կրկին եղկութք, ըստ չափոյ կշռութե
այսր համարոս, որ զամբաւութիս թուոց պարագրէ:
Ո՛ ինչ գործեցից ողբալիս հոգի՝ յայնմ մեծի աւուր
վտանգի. քանզի սաստիկ է յիշատակն իսկ յառա-
ջեալ քան զհանդիպումն. զոր [10] ոմն մարգարէ՝ զօ-
րինակին նմանութի 'ի դէմս բերելով, զձեպ տագ-
նապի անզերծ փախստեանն նշանակէ ասելովն. զօր-
օրինակ եթէ փախնուցու ոք 'ի ձեռաց առիւծու,

և պատահեսցէ նմա արջ. և փախնուցու յերեսաց
արջոյն, և մտանիցէ 'ի տուն, և յեցուցէ զձեռն
իւր 'ի յորմ, և խածանիցէ զնա օձ. և դարձեալ
կրկին սաստկացուցանէ առ նոյն կերպարան իւր՝
զտեսիլն քստմնելի, ոչ ապաքէն՝ ասէ, խաւար է օր
տեառն, որ խաւարոյ և մթոյ, որ ամպոյ և մա-
ռախղոյ:

ժ. Յորժամ հրեշտակն պահպանողական [11] կենա-
կից, հզօր ստորիկան՝ իրաւամբք ամբաստանեսցէ, և
հատուցանօղն ահաւոր՝ արդարութ̃բ յանդիմանեսցէ:
Սպասաւորք Թագաւորին առանց խնայելոյ խաւ-
ճապեն, զոմանս 'ի կեանս հրաւիրեն, և զոմանս յա-
մօթն դատապարտեն. կիսոց՝ դէմս լցեալս ծաղու-
ցուցանեն, և ինձ՝ ահարկուս և քստմնելիս երևեցու-
ցանեն. ոմանց՝ պսակս լուսապաճոյճս մատուցանեն,
և այլոց՝ կորուստ մահու բողոքեն. արդարոցն ձայն
աւետեաց, և ինձ գոյժ անվախճան մշտաց: [12] Յոր-
ժամ առ բարիսն՝ մահու յաղթութ̃ի իսպառ մեռա-
նի, և ինձ չարագործիս կրկին յարակայի. ուր դը-
րանն բաղխել՝ ոչ ինչ ազդիցէ, վճար եղեալ գթու-
թ̃են առ իս: Յորժամ [13] դպրութ̃իք հրաշիցն զար-
մանալեաց, որ են ծածկեալքն յայժմուցս հասա-
րակաց վարուցն տեսակք՝ մարդկային բնութ̃ես գոր-
ծոց, յաղագս որոյ եղեն գոյութ̃իք ա̃մ էից՝ յիւրա-
քանչիւր մարմինս անպակաս գրութ̃բ իսկոյն երևին.
և խորութ̃իք անճառիցն կնքեցելոց յիմաստից աս-
տեացս՝ առաջի աչաց մերոց կերպարանին: Ուր
այժմ [14] շահավաճառութ̃իք ողբոց և արտասուաց
զերկինս գրաւեն, և անդ իբր զապաժամման ընդու-
նայնութ̃իք՝ արհամարհեալք լքանին. հառաչմունք
հեծութ̃ե՝ ոչ կանխաւ աստի առաքեալ, չէ երբէք
գտանել անդէն. ողորմութ̃իք ճշդով սերմանեալ,
ոչ պայծառ վառմամբ գնան առաջի: Ուր [15] տա-
պանն նախայանցիցն, և կտակարանն տիրանարգիցն,
և նշանն ահաւոր այժմուցս՝ յանդիման եղեալ մե-
ծաձայնս դատախազեն. յորում սոսկալի վայրի՝ ոմն
զուխտն կցորդութ̃ե հայրենի, և ոմն զխորանն վկայու-
թ̃ե անտեսիցն, և ոմն զարիւն մեծին ա̃յ՝ ամբաստան
իմն իրաւացի [16] առաջի իմ տարածանեն: Ո տան-

Ջանալրանան բազմապատիկս՝ անձամբ անձին սատէն
իսկ պատրաստեցի, զիմրդ մխիթարեցայց [17] համա-
ռօտեալս յուսոյ. զի եթէ զօրքն լուսոյ՝ դասուք ար-
դարոցն, որ փառաւորեալքն են երանութեամբ, [18] սար-
սէն դողալով, ոչ բաւեն բերել զահաւոր տեսիլ ե-
րեսաց մեծ դատաստանին, ես եղկելիս՝ աւանդա-
կորոյս սատակման որդիս՝ ո՞ւր երևեցայց. որ ոչ միայն
չեմ պտակելոց, այլ և պատուհասն իմ անտանելի,
և կորուստն անսպառելի :

Է. ԱՅԼ [20] արագեա ամենապարգև՝ զօրութիւն ան-
ճառ՝ ձեռն փրկութեան 'ի կորուստ գերելոյս. զի օգ-
նեալ 'ի քէն՝ դարձայց միւսանգամ 'ի դրանց դժո-
խոց, ամենապատրաստ հանդերձեալ ամենևին ան-
վտանգելի՝ պրծեալ 'ի պատժոց. աստանօր տեսեալ
մտացս իմաստիւ զապագայիցն դիպուածս, բաւակա-
նացեալ 'ի լուր երկիւղին 'ի տագնապէ տանջանաց՝
ահին համբաւով, կամօք քո բարեաց զերծեալ ապ-
րեցայց. և մի մատնեցայց կորեանցն առիւծուց, որք
խնդրեն 'ի քէն զիս 'ի կերակուր՝ ծախել ատամամբքն
գազանութեան. զի զորովայն մահուն լցուցեալ՝ զա-
տուստ պարարեալս՝ անդ ձգեալ հալեն, ուր անսպառ-
պահի մնացուած մթերիցն՝ 'ի ծախումն յաւիտենից :
Զի դու միայն բաւես կորզել 'ի ժանեաց սատակ-
ման՝ 'ի կեանս և յերանութիւն, բնաւից ապաւէն թա-
գաւոր լուսոյ՝ տէր իմ քո, օրհնեալ յաւիտեանս.
ամէն :

---

(1) Ջամենքին բոյ փարածման : Զինեալ իբրև բժիշկ՝ զապարածումն ա-
րեամբ, որ ընթանայ յամենայն մասունս մարմնոյ Է. Ճանապարհ երա-
կացն. և խմանին հոգջ և յօժարութիւք մարմնոյ. և 'ի քննել դ. այսպէս,
տեսանես՝ զի մարդ եմ կապարելու, այսինքն յօժարեալ, կամ ընտրո-
րեալ [illegible], անմտութիւն և թերի խորհրդով [illegible] 'ի չարն,
որպէս և դու անսուտ ճշմարտութեամբ վկայեցեր. (Ծննդ. Է. 21 :)
Վասն որոյ երասացի է համարել, թէ ես Է մարդկորէն սխալեալան կրկին
յաղթեալ եմ և պարտաւոր իբրև զերկրածին տխուր մարմին, քան
զքո բանիդ սուտ երևել : Զայս զմեր բնածին տխրութեան վկայելով
քո, երբ երասալովք ցուցանես զողորմել զքո առ մարդն մեղուցեալ, քան
առ գեւ : 'ի սոյն միտս 'ի սկզբան աղօթիցս յետ ասելոյն, [illegible],
յարէ 'ի նոյն, [illegible]. որպէս թէ յայն ասելս դիթաս 'ի մեղ,
վասն զի սիրող երասանց ես :

(2) [illegible] : 2 [illegible]. [illegible] : [illegible]՝ թէ [illegible], [illegible]
կանեալ կամ անկարգ է [illegible] մեր, այսինքն ծնունդն [illegible]

կան մեղաց, և ընդարմացեալ լուսաւորին մեր, բնական կամ 'ի ծննդենէ յօժարութեան առ չարն. և ոչ ծածկեալն խորհրդոց մեր. խորհուրդքն աղտեալք 'ի մարմնոյ և յարենէ՝ ոչ փոփոխեն 'ի չարէն, այսինքն միշտ 'ի չարն հակամիտեն ։ Զայս բան ասաց իմաստունն (իմաստ. ժբ. 10.) զքանանացւոց՝ վասն մասնաւոր պատճառի անիծիցն, ընդ որով անկեալ էին. որպէս և յառէ զնի. (համար. 11.) * Զի զաւակ անիծեալ էր 'ի սկզբանէ. || (ըստ ծննդոց. թ. 25 ։) Եւ մեր վարդապետս յարմարէ զայն առ ամենայն մարդիկ՝ սակս ընդհանուր պատճառի սկզբնական մեղաց ։

(3) Զսոսկալի պատժոցն ։ Զծանրութեան յաւիտենական տանջանացն՝ բերելոց, այսինքն բարձ լինէին քաւութեամբ մեղացս. կամ, նուազեցո փոխարկելով 'ի ժամանակաւոր տանջանս ։

(4) Զորդ մահուն ։ Ես որդիս գեհենի, որ վասն մեղացս եմ իբր զորդ. այսինքն պատուհասաւոր նիւթ յաւիտենից պատուհասութեան, որպէս գողն է զարդ կախաղանի ։

(5) Խորագ խաղաղութեան ։ Պատուհաս հաշտութեան ընդ քեզ՝ այժմէն քո ողորմութեամբ ած 'ի վերայ իմ. զի մի՛ անպատժելի ահաւորութեան, երկնաղակքն ահաւոր մեծութեան քո կամ դատաստանաց. կամ, զի մի՛ ահաւոր անտանելիքն յանդիման աչացս եկեալ երեւեսցին. անյուսալի աղաչութեան ընդ կենաց դուղման, փոխանակ կենսաբեր դղրձման առաջի դնելով ։ Այն անտանելիքն են դատապարտն ահաւոր, են ։

(6) Ընդ գուշէին երինի ։ Գալստեամբ երկնից՝ խորհրդաւորք յայտ և աղամիտս առեալ է 'ի վարդապետաց. ('ի մեկն. յայտն. գ. 14 ։) ամենայն զերկրորդ գալստեանն իմանալով, և այլոց՝ զհրեշտակաց վերակացուն ը. կործանումն երկրի. և կիսոց՝ զեկեղեցւոյ անյայտելն յաւուրս նեռին ։ Բայց ըստ ճառին որպէս իմանան մեկնիչք զհասարակութեան և զդատաստ թարձրև մթագին անհոց զերեսաք երկնից. որովք խաւար ծածկի երկրի զմարդալատ փակութեալ. և լուսաւորքն՝ որք իբր գրուածք են 'ի սարածութեան երկնից, աներեւակ լինին ։ Կամ, գալստեանն իմ՛ զայտոյս խոստ անհոց, որք 'ի միմեանս շրջանակելով երեւեցուցանեն զերկինս գալարել ։ Ընդ որս և երկիրս դողդեալ, շարժի ընդ կործման յափեինս, 'ի պնդութեան իւրում իբրև 'ի խռովեալ ծովու, յորում կոհակք կամ ալիք դիզացեալք իբրև փախչել ցուցանեն, բայց գետեալք միմեանց՝ կասին ։

(7) Տափանելու ստանելու լայնատարած Գեհենոյ Նանջրութեան ։ 2 օրին. տապանելու ստանի լայնատարած Գեհենոյ Նանջրութեան ։ Այն շարժումն երկրի՝ ոչ իբրև զընական գետնաշարժս՝ լինի 'ի մասնաւոր տեղիս, կամ առ երեսօք գետնոյս. այլ բովանդակ հողագունդս ամենայն թանձրութեամբ դղրդի, 'ի ներքին խորոց անտի գոլորշեացն հողմ ուժգին յարուցանելով. որով լերինք տապալին, և հալին Բնութեամբ Վէմոյ, 'ի ծծմբախառն հրոյ. կամ հալիլ առէ զմանր փշրելն. և այրեալ եղծանին բնութիւնք քարերոյ Գոյից. այսինքն գոյացելոցն 'ի տարերաց, որք են բաղադրեալքն 'ի նոցունց. զի բուն տարերքն մաքրին միայն 'ի հրոյն, և ոչ ապականնին ։ Ախտական Էակին, երեսք երկնից կամ օդքս մաքրին յօտար խառնութենէ. և միան այնուհետև յաւակ և անեղծ. և յեղանակին արարածոյ, փոփոխին նիւթական արարածքս՝ տարերօք երկնից, բաղադրիչ սկզբամբք իւրեանց, 'ի նորոգ նմանութ, 'ի նոր կերպարան. որով իմանի՝ թէ մարմնաւորքս ամենայն կերպարանափոխ լինին ։

(8) 'Ի ծովին մեր ։ Գործք արդարոց և մեղաւորաց երեւին 'ի մարմինս իւրաքանչիւր արտաքին նշանօք ուրախութեան և տրտմութեան, զուցէ այլովք եւս նշանօք՝ որպէս 'ի կայծին ցուցաւ ։ Այսպէս վարք կամ վար-

մանկք խաւարասէրք կրօնից կամ կարգաց՝ բառ ոչ ըստ գործովք ցուցա- ցեալ անսանձն, յանդգնաբար լինին բռնաւորք երկնի և երկրի. և խաւա- րասէրք այր թէպէտ խաւարամոլ անկեցին գործեալ իցէ՝ և կամ հանդարտ գրաւ անկանի : Անդ երկնից արքայն նստեալ դատաւոր, և վճիռ հա- տուցմանն 'ի յԱւուրն եղբուն, այսինքն աստուածաբանական, բայց հրամանի նորա նիզակին զօրաւոր, վճռատու և գործադիր միահանգամայն, անկարօտ այլում ձեռին :

(9) Վա՛յ ինձ եօթնիցս : Յայտն. Ը. 13. երեքս վայ տուաւ երկրի. իսկ ինձ աստ՝ եօթն անգամ վայել է. և այն՝ կրկին եղկուրէ, թէ վասն հա- տարակաց աւերածոց երկրի, և թէ վասն իմոց սեփականին կորստեան ց կամ, եօթն վայ վասն հոգւոյս, և եօթն ևս վասն մարմնոյս : Այս եօթն թիւ զանբաւութիւն թշուառութեանս նշանակէ. զորմէ տե՛ս 'ի բանն Առ. ԻԴ. 6 :

(10) Որ ձորգորէ : Այսինքն ասողս. (Ե. 19. 20.) բայց վերջին բանն՝ օր խաւարոյ, ևն, է Սոփոնիայ. (Ա. 15 :)

(11) Կենակից : Այսպէս յայսմ ասէ՝ թէ հրեշտակն պահապան 'ի ծննդենէ կարգեալ 'ի խնամս մեր, ընդ մեզ միայ մինչ 'ի մահ. ուստի պարտիս քաջ ակնկալել ամենայն գործոց պաշտպանեցելոյն՝ կարող է մի բառ միջնէ վասն ամենայնի վկայել :

(12) Ցուրտ առ բարին : Ցայտնաւ 'ի վերջնումն դատաստանի՝ մահն որ յաղթեալ էր բարեգործաց բանտարկեալ զկեանս մարմնոյն, պարտի խոստու անմահ յարութեամբ նոցա, որով ոչ ևս կարէ յարձակիլ 'ի վե- րայ նոցա : Իսկ ինձ չարագործիս, այսինքն չարագործացն իբրև զիս՝ կրկին ևս յարուցեալ, յոր կայ մնայ յաղթութի մահու. զի թէպէտ չարագործք ևս յառնեն առանց այլևս մեռանելոյ, բայց ժամանակն մահու անվախ- ճանելի կայ 'ի նոցանէ, անշարժելիք զօրէն անկենդան գիւոյ, զազրա- հոտք, տարշատանելիք իբր գէշ, միշտ 'ի տաղտուկս իբր օրհասական հո- գեվարք. մինչ բանիւ, գոյ 'ի նոսա ամենայն դառնութի մահու, բաց 'ի միայն գիւրութենէ՝ որ է անզգայութի :

(13) Դժոխականին հրաշիցն : Մատեանք հրաշալի գործոց մարդկան՝ որք այժմ ծածկեալք են՝ թէ յայլոց, և թէ յխաւարասէրաց անձանց. զի ոչ միայն զայլոց զբարիսն կամ զչարիսն ոչ ճանաչեմք այժմ հաւաստի, այլ և զաւագունս 'ի մերոյ գործեցելոց : Այս մատեանք՝ են խիղճ մտաց խաւարասիրացն, այլ և յայտնութեան ամայնին, որ իբրև 'ի գիր ծա- նուցանէ ամենեցուն զգործս խաւարասիրաց : Եւ առեն հրաշք, կամ հրաշալիք զարմանալեաց. զի անկարծելի իրք յայտնելն յայնժամ. բա- զում բարի կարծեցեալ գործք՝ ցուցանելին լինել չար, և չար կարծե- ցեալքն՝ բարի. փոքր չար կամ անմիտս համարեալն՝ անտանելի լինել մեծ. անտանելին յայնժամ անբառ ակոյք և ատակք և պարագայք չարութեանց, որք առաջեցուցանելն զմիտս. անտանելի և անհաւանելի առակաբանութիւն մարդկան առ անհամար երանութեանն եւ : Այս ամենայն անտեսութիւնք յիշատակելով մարմնոյ, այսինքն 'ի կեան գխեաց խաւարասիրաց, այլ և 'ի խոստովանութէ բերանոյ նոցա առաջնոր Գրուբէ, ձեռք և անմեղեալ ծա- նօթութեամբ երևելին, զի կերք զխեաց՝ և բանք բերանոյ՝ են իբր գիր 'ի մարմնի : Որ յաւելուածն՝ թէ վասն մարդոյ եղեն գոյութիւնք ամենայն էից, զայն անկարելէ թէ քննութ լինելն՝ զի՞որ վարեցաւ մարդ խաւա- րասէր աստուածովք, և թէ նոքին իսկ լինելոցք են դատախազք և ամբաստանք հատուցմանն՝ որ չափեսցի մարդկան ըստ գործոց 'ի լաւն կամ 'ի վատթարն : Եւ խորհրդոց անձանցն, զաղտնի խորք անձին խղճմտանս էից, նախախնամութեան, փրկագործութեան, երկայնմտութեան, ներքին առաջնորդութեանցն, պաշտպանութեն հրեշտակաց, փառաց արքայութ, և

ամենազանից մեղաւորաց, ասէ, որք անծանօթք են յայժմու մեր գիտու-
թեանս, անդ 'ի դատաստանին յայտնապէս ծանիցին : Եւ այնպէս գործք
մարդոյն՝ և գործք նոյ երևեսցին իբրև երկու լերինք, յորոց մերոյ կա-
ցեալ նոյ դատեսցէ զմարդիկ : (զաքար . Ը . 1 . և ժԷ . 4 :) Ցայս խնամ
և զատողմանն . (Ը . 7 :) * Արդարութիւնք քո որպէս լերինք ած, իրա-
ւունք քո՝ որպէս խորք բազումք : ||

(14) Շահամամուաունիւ ալբոց : 2 օրին . և 'ի հին լուծ . վաճառականութիւն :
Որ այժմ շահեկանութիւն ուրոց զաշխարհս վերկշխիս կարեն առանձնալ, անդ-
յետ առաջի կեանցս իբր ղափափանանս ընդունայնութիւն, իբրև զանձաղանն հա-
նեալ, կամ ոչ 'ի պատուհասն ժամու արարեալ անպիտան գործոյ՝ արհա-
մարհելի :

(15) Տապանն նախայանցիցն : Տապանին նոյի երևեսցի 'ի յանդիմանութիւն
առաջին յանցաւորացն 'ի բնական օրէնսն : Ն կայսերանն՝ փերանարգիցն .
տախտակք օրինացն մովսէսի երևեսցին հրէիցն անարգողաց զքն . որպէս
և խաչն քնի երևեսցի ուխտողաց, քրիստոնէից՝ որք 'ի նոր օրէնս : Զևա-
ցուցանէ զանուխ առեանն քնի իբր բանաւորեալ՝ ըստ օրինակի նկարչաց,
որք զնոյ երևեցուցանեն տապանաւն, և զմովսէս՝ տախտակօքն : Այլա
թէ ոչ՝ նիւթական տապանն՝ և տախտակքն ոչ մնան մինչ յօր դատաս-
տանին, բայց 'ի խաչափայտէն քնի . զոր յաւիտեանէ գիտեմք մնալ
և երևել 'ի դատաստանին : Եպիփան 'ի վերայ մովսէսի ասէ ըստ ոմանց
կարծեաց՝ և վասն տախտակաց մովսէսի երևել յայնժամ . այնպէս և
վասն նոյեան տապանին ասի 'ի գիրս ինչ՝ կարապետ լինել համգերձեալ
աւուրն : Բայց այսոքիկ յանընդունելեաց կարգի են : Այլա մարք ոչ
վարդապետս է, թէ նոյ բնական օրինօքն՝ (զոր կոչէ՝ ուխտ հայրենի,)
յանդիմանէ զառաջինն մեղուցեալսն . և մովսէս՝ նաև գրաւորական օրէ-
նօքն կշտամբէ զհրէայսն . և քն նաև աւետարանական օրինօքն՝ զքրիստ-
ոնեայս : Իսկ ինձ ասէ՝ երեքին եւս դատախազ լինին . զի երիւքն եւս
խրատեցայ, և յերիցն երախտս վայելեցի, և ոչ ուղղեցայ :

(16) Առաջի իմ փարածանէն : Զգանձանարանան բաղձապարիս՝ անյարք,
ասէ : 2 օրին . այսպէս գնեն . առաջի իմ փարածանէն, զգանձանարանան բաղ-
ձապարիս, զոր անյարք անյին ատիէն իւր պարբարեցի : Զիմէրգ մխիթարե-
ցայց, ասէ . որ այսպէս իմանի . զերկեսին օրէնան առաջի իմ տարածանէն՝
իբրև բազմաչասիկ առանձինս, զորս անձամբ իմով առա ինձ պատրաստ-
ակցի : Վասն որոյ զիմերգ մխիթարեցայց, ասէ :

(17) Համառօտելու յուսոյ : պակասեալս 'ի յուսոյ : անմա 'ի բանն Ժ .
ԼԾ . 1 :

(18) Սորին տողոյն : Պողոսն հրեշտակաց և այլոց՝ իմանի պատկառել
որպիսապէս յանձառ մեծութէ դատաւորին, և ոչ յերկիւղէ դատաս-
տանին իբր յանցաւոր կամ դատելի : Այսու օրինակաւ խօսի և ոսկե-
բերանն (ճառ Ը . առ թէոդորոս մեղուցեալ .) վասն ընդհանուր դա-
տաստանին . * Երկիւղ անհնարին պաշարեսցէ զնոյն իսկ հրեշտակս, և
ոչ միայն զհրեշտակս, այլ և զհրեշտակապետս, զաթոռս, զտէրութիւնս,
զիշխանութիւնս, և զզօրութիւնս . զի ասէ՝ զօրութիւնք երկնից շարժեսցին .
վասն զի ծառայակիցք նոցա պատժս ընդունելոց են վասն անցեալ կե-
նաց իւրեանց : || Նա նիւքն ոսկեբերան . թղթ . Ը . առ Ողիմպիադա ասէ
վասն հրեշտակաց . * Զի թէպէտև մեղ իւիք յանցանաց խիղճ ոչ ու-
նին, և ոչ 'ի դատաստանն մտանելոց են, սակայն սոսկալովք 'ի հարցա-
փորձի զընդհանուր ազգ մարդկան և զաղչիս անհամարս, ոչ սակաւ
երկիւղի կան անտանօր : ||

(19) Աւերածեան : Կամպեցի յառաջ քան զօր դատաստանին՝ ջերմ հեղ-
եղաբէ, զօգնութեն փրկութեն . որով տուրջոյց ճառանգան, որպէս յայլ

անձնական աստուածխօսութե, 'ի տրման տեսողաց, 'ի աստուածատուութե գտա-
նող. եւ բարի գործովք անձնայնիւ աստուածատուր եղէց՝ անմահանալ առաւել
'ի պատուոյ անուն. եւ այժմ մեղօք մտաւանեալ պատճառնի ահաւոր դի-
տուածոյն, բաւական լինի ձեռն լուր երկնիւղի աստուծանագն. եւ կամօք քո
Տէրեաց, պաշտելիքն բարերար քո կամօք գործոյս. եւ մի՛ մատնեսցայց կե-
րեանցն տանջանաց, գիւղացն՝ որք կամին որսալ զիս 'ի դէն, 'ի շնորհաց քոց
հանել. որպէս զի զօրութեամբ նահատ, զմահացուցիչ արտաքսյն խորհրդոց յու-
ցանելով, զօրացեալ պաշտպանեալ, զիս՝ զոր առաւ աստուածաբանեցին մեղօք, անդ
'ի գժոխս հալածեսցեն, եւ առանց ապաշխարելոյ ծանուցեսցեն :

Սերովբէին յաւերժացեալ երգին հեծութե՝ նորին հոլովէ, առ նորին
աղերս մաղթանաց բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

ԲԱՆ. Ձ.

ա. Եւ արդ 'ի վերայ այսքանեաց [1] յուսահատութեց եւ անհարկաւ սրտաբեկութեց, պակուցանողական տատանութեց անձային բարկութեց, տագնապեալ ոգւով թախծութե խոպան, աղաչեմ զքեզ Տր անձանձրին : Հրեշտակ 'ի մարդկանէ. մարմնատեսիլ քերովբէ. երկնաւոր արքայուհի. անխառն իբրեւ զօդ. մաքուր որպէս լոյս. [2] անշաղախ ըստ նմանութե պատկերի արուսեկին բարձրութե. գերազանց քան զբնակութի [3] անկոխելին սրբութեց. երանաւոր խոստմանն տեղի. Եդեմ շնչական. ծառ կենացն անմահից [4] բոցեղէն սրովն պարունակեալ. 'ի բարձրեալն Հօրէ զօրացեալ եւ հովանացեալ, հանգստեամբ Հոգւոյն հանդերձեալ եւ մաքրագործեալ, բնակութեմբ Որդւոյն յարդարեալ եւ տաղաւարեալ : Միածնին Հօր՝ եւ քեզ անդրանիկ. Որդի քո ծնընդեամբ՝ եւ Տէր արարչութեմբ : Ընդ անաղտ [5] մաքրութեդ՝ եւ անբիծ բարի. ընդ անարատ սրբութեդ՝ եւ խնամակալ բարեխօս. ընկալ զմաղթանս այսր աղերսանաց՝ [6] քում դաւանողիս, եւ մատո ընծայեալ ընդ սմին խառնեալ [7] զբանն իմ նախնի՝ մեծիդ ներբողի՝ 'ի քոյդ պաղատանս : Հիւսեալ միացո զմեղուցելոյս դառն հեծութի ընդ քումդ երջանիկ եւ խնկաւորեալ հայցուածոյ՝ տուընկդ կենաց պտղոյն օրհնութե. զի 'ի քէն միշտ օգնեալ եւ բարեգործեալ, եւ 'ի մաքրական քո ծնելութիդ ապաւինեալ եւ լուսաւորեալ,

կեցից քո՛ի որդւոյ քոյ և Տէր :
Է. Օժանդակեալ թևոցդ աղօթիւք՝ խոստովա-
նեալ [8] մայրդ կենդանեաց՝ և ելից իմ յերկրէս հով-
տէ, առանց լքանաց հետևել 'ի կեանս օթևանացդ
պատրաստուն . զի թեթևացի կատարածն իմ ինձ՝
ծանրացելոյս անօրէնութբ : Արասցես տօն ինձ բեր-
կրութե՛ զօրն իմ տագնապի՝ ողջացուցիչ երկանցն
եւայի . բարեխօսեալ խնդրեալ աղաչեալ, զի ըստ ան-
ճառելի մաքրութեանդ և ահա զբանիդ հաւատամ
զընդունելութի : [9] Արտասուօք օգնեա վտանգեցե-
լոյս՝ գովեալդ 'ի կանայս . ծնունր խոնարհեցո առ իմ
հաշտութի ծնօղդ այ . ընդ իմում թշուառիս հոգաւ
խորանն բարձրելոյն . ձեռն տուր անկելոյս տաճար
երկնային . փառաւորեալ զօրդիդ քո 'ի քեզ՝ [10] ածա-
րէն ինձ հրաշագործել քաւութի և ողորմութի աղա-
խինն այ և մայր . բարձրասցի պատիւ քո ինև, և
ցուցցի փրկութի իմ քև :
Ը. Եթէ զիս գտցես տիրամայր . [11] թէ ինձ ողոր-
մեսցիս՝ ոչըմբռունչի . թէ զկորուսեալս շահեսցիս՝ ան-
նարատ . թէ [12] զհարթուցեալս յանձանձեսցես՝ նն-
ջանիկ . թէ զամաչեցեալս յառաջ մատուցես՝ բա-
րեշնորհ . թէ յուսահատելոյս ինձ միջնորդեսցես՝
միշտ օրհ կոյս . թէ զմերժեալս ընտանեցուսցես՝ մե-
ծարեալդ այ . թէ յիս ցուցցես զգթածութիւն՝
լուծիչդ անիծից . թէ զծփեալս հաստատեսցես՝
հանգիստ . թէ 'ի խռովութեանցս յուզմանց փո-
խեսցես զիս՝ խաղաղարար . թէ վրիպելոյս ինձ հնա-
րաւորեսցես՝ գովեալ . թէ վասն իմ [13] մտցես 'ի հան-
դէս՝ մահու նահանջիչ . թէ զդառնութիս իմ անու-
շեսցես քաղցրութի . թէ զբաժանմանն իմ խորոց
քակտեսցես՝ հաշտութիւն . թէ զանմաքրութիս իմ
բարձցես՝ եղծմանն ընդդոտնիչ . թէ զմատնեալս մահու
փրկեսցես՝ կենդանի լոյս . թէ զլալեացս ձայն հատա-
ցես՝ բերկրութի . թէ զխորտակեալս կազդուրես-
ցես՝ դեղ կենաց . թէ 'ի կործանեալս յիս ակնար-
կեսցես՝ հոգելից . թէ ողորմութ ինձ պատահեսցես՝
[14] կտակ նուիրեալ, օրհնեալդ միայն 'ի շրթունս ան-
բիծս լեզուաց երջանկաց . ահա [15] կաթիլ մի կաթին
քումդ կուսութե՝ յանձն իմ անձրևեալ՝ կենաց ինձ

զօրէ, մանաւանդ բարձրելոյ նմա յոր առաջին երկնի և բնաւորին երկրի ։ Ո որ անճառապէս ծնար [16] բովանդակ մարմնովդ և համայն անձնութեամբն, որ փառաւորեալդ ես ընդ հօր և հոգւոյն սրբոյ էութեամբ, և անքննութեամբ մերոյին բնութեամբս միացելով, [17] ամենայն՝ և յամենայնում, մի յերրորդութենէն. Նմա փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն ։

---

(1) Յուսահատութիւն ։ 'Ի վերայ այսքան յուսահատիչ խոցոց և գլխաւորածոց, և զարհուրելի [illegible], լքմանց պատճառ, և տարապայմանացուցիչ ստիպմունց, տարտամելեաց, որք միայն ինձ յանձնային բարկութեան յահեղ զաստուածային, այժմէն ընկճելով ախտութեամբ, թէպէտև պարզապացի առ գթութիւն Աստուծոյ ապաւինել զիս յանդերձ կորստեանս, բայց երկբայեալ զոյգէ վասն անապաշխարութեանս չլինիցիմ ընկալեալ. վասն այսորիկ ապաւինելով 'ի քո միջնորդութեան, աղաչեմ զքեզ ևն ։ Ցաղագս բառիցս՝ յուսահատիլ, յուսահատութիւն, կամ անյոյս լինել, անյուսութիւն, և նմանեաց այսցիկ, գիտելի է, զի այսպէս օրինակաւ վարին 'ի գիրս. երբեմն նշանակեն զյուսահատեցուցիչ խոց. երբեմն զմեծ զժուարութիւն խոցոց. երբեմն զմեծ և զսաստիկ տրտմութիւն ։ Բայց յատկապէս նշանակեն զչարժումն բաղձողական մասին մարդոյ 'ի բարւոյն՝ զոր չէ հնար ստանալ. և ըստ զանազանութեան բարեացն՝ և անհնարութեանց նոցա, յուսահատութիւն ևս լինի բարի և օրինաւոր, կամ անբարի և անպատշաճ ։ Եթէ հայի 'ի գերբնական բարիս փրկութեան՝ իբր անհնարինս առ ստանալ նաև զօրութեամբ Այ, միշտ է չար, և մեղք ընդդէմ հոգւոյն սրբոյ ։ Եւ սակայն յայտ է թէ ոչ ըստ այսմ մասանց 'ի կիր առնու մեր վարդապետս, որ ամենայն ուրեք խոստովանի զԱծ՝ կարօղ ամենայն անհնարից, և միշտ հայցէ զշնորհս և զփրկութիւն ։ (տես 'ի բանն ժա ։) Իսկ եթէ յուսահատութիւն հայի 'ի բնական բարիս՝ իբր անհնարինս բնական զօրութեամբ, կամ 'ի գերբնական բարիս՝ իբր անհնարինս մարդկային զօրութեամբ. կամ նաև ըստ կարգի հասարակ նախախնամութեան Այ, ըստ այսմ յուսահատութիւնն բարի է և օրինաւոր՝ յորժամ անհնարութիւնն ճշմարիտ է ։ Եւ յայս միտս իմանալի է՝ որ ուրեք մեր վարդապետս զինքենէ, կամ զայլոց կենդանի մեղաւորաց ասէ յուսահատեալ կամ պակասեալ 'ի յուսոյ. որպէս 'ի բանն հա. 4. 'ի վերջն. Հեծութիւն յուսահատելոյս ։ և հբ. 2. յանձնինէ ծանեան յուսահատութեան ։ և հթ. 3. [illegible] յուսոյ ։ և սա. 3. թէ յուսահատելոյս ինձ միջնորդեսցես ։ ըստ այսմ և լա. 3 ։ ժբ. 1 ։ խդ. 2 ։ Վասն զի ծանրութիւն մեղացն՝ զոր խոստովանի, յանձախութիւն փորձութեանց և որոգայթից սատանայի, զիւրասահութիւն 'ի մեղս, ապերախտութիւն մարդոյն, արդարութիւն Այ, ևն. այս ամ անհնար առնեն զապաշխարութիւն մեր յայնցանէ՝ ոչ միայն մարդկային զօրութեամբ, այլ և բազում անգամ ըստ հասարակ օրինաց նախախնամութեան Այ. ուստի յայսմ կողմանէ յուսահատութիւն ներգործի 'ի մարդն. բայց քաւելի ազատել կարող է նա բացարձակապէս, և անբաւ ողորմութեամբն կամի և խոստանայ տալ ճշմարիտ հայցողացն, վասն այսորիկ միայն անդր յուսոյ խառն ընդ երկիւղի ։ Թող զի սովորաբար ընդ կիրս յուսահատութեան կից դընել տրտմութիւն, և ըստ մեծութեան յուսահատութեան՝ մեծ տրտմութիւն, նմին իրի բազում անգամ յուսահատութիւն նշանակէ սաստիկ տրտմութիւն, և յուսահատիլ նշանակէ՝ կարի տրտմել, լքել, և այլն ։ Զայս հա-

մասունս ծանուցանք, ոչ միայն վասն բանից այդ վարդապետաց, այլ և վասն այլ գրոց՝ յորս գտանին այսպիսի բանք. որպէս և այն՝ որ 'ի շարականն յարութեան աւուր։ * Մայր խաչեցելոյն, զի՞ լաւ յուսահատեալ, ‖ ուր յայտնապէս զմնական յուսոյն խօսի՝ որով անհնարին էր բնական ճանապարհաւ կենդանի տեսանել զորդի իւր. յորմէ և անհնարին թանաձեալ կայր. և ոչ եթէ զգերբնական կամ զաստուածաբանական յուսոյն, որոյ պակասութեան միայն է մեղք ընդդէմ հոգւոյն այդ։ Իսկ զայս այլազգ իմանալն՝ այնպէս խոտորնակ է, որպէս եթէ ոք զասելն առաքելոյն. (Բ. կորն. ա. 8.) * Մինչև անյոյս լինելոյ մեզ և 'ի կենաց, ‖ խանայցէ՝ անյոյս լինել 'ի զօրութենէն այդ, կամ 'ի յաւիտենական կենաց, ուր բանն է զազատել 'ի նեղութեանց բնական ճանապարհաւ։ Վասն որոյ զգուշալի է՝ զի մի՛ ոք ապխտարար այլ Է այլ խանանայցէ զբանս գրեալսն, կամ աղաւաղիցէ զգրօղսն, որով զանձն ապէտ ցուցանիցէ։

(2) Անշտղռն։ Մաքուր, յստակ՝ իբրև զանուն արուեստին. Եւրոպայի. այսպիսին աստեղն առաւօտու, յորժամ բարձր է, և յառաջընթաց լինի արեգական։

(3) Անխոխելին ոչբոււնէց։ Քան զամենայն սրբութեանս սրբութեանց, ուր ոչ կոխէին քահանայքն և ժողովուրդքն։ (Եբրայ. Թ. 7.) և Նա կոյսն գերազանցեաց ամենայն զայն, զի անդր միանգամ յամին մտանէր քահանայապետն՝ մատուցանել զարիւն անբանից. իսկ 'ի Նա կոյսն ոչ երբէք ելանէր մարդ, այլ միայն Ածին բանն՝ առնուլ 'ի նմանէ մարմին։

(4) Բոջէղին ուրուէ։ Հրեշտակաց պահպանութեամբ պատուել էր Նա կոյսն՝ ոչ զի 'ի խնամոց նորա անձաշակ մնասցեն մարդիկ իբրև զծառայս զբաղեալսն, այլ զի կուսութեն նորա անմերձենալի 'ի մարդկանէ լինիցի, և զօրանայր մեծութեն նորա թագուհւոյ պահեստին 'ի գիշերս։

(5) Մոփրուենը։ 2 օրին. Ժոփրուենը։ ընդ անառակ մաքրութեն կուսութեանդ՝ միանգամայն բարի ես՝ ոչ միայն այլովք առաքինութեամբք, այլ և հաւատարմութեամբ քոյ բարեխօսութ 'ի մեզ։ Այնպէս զանազան սրբութի անձնեալ, ոչ զպարծիս յանտուրս մեղաւորաց, այլ լինիս խնամոկալ Եւրէնիօս։

(6) Քուամ դասանողին։ Որ զաւանեալ զքեզ Մայր այդ, և միշտ Կոյս. և ամենայն աղխտոյից խնոց զօրեղ բարեխօս։

(7) Զեռանն էմ նոխնէ։ զԳուեմարք խմբեցն առէ, զոր ամօք յառաջ յօրինեալ էր ըստ խնդրոյ Սանտաֆիաննոսի մակաց Եպիսկոպոսի, յորժամ դրեաց զպատմութեն խաչին Աստուածնից։ Եւ զի այն փոխադրութեն և շինութեն դիպաւ 'ի նոյն Թուականին, որպէս առէ անտառօր 'ի յեշատա-կարանին, եթէ միով կամ երկու ամաւ զկնի յօրինեցաւ նկարագրեանն, զհետ զայս իբր 18 կամ 20 ամօք յառաջ պատմեալ բան դարձեան, որ կատարեցան 'ի Թուքին Նծա կամ Նծբ։

(8) Մայրը կենդանեաց։ 2 օրին. կենդանութեան. այլ օր. կենաց։ Օրհնեալ, հասն 'ի Թիկունս Բնոյդ աղօթիւք, բազկատարած աղօթիւք, կամ մի-խարդութեամբ հոլովոյ՝ Թեռովք աղօթից, խմբել եկեղեցւոյ յաշխարհէ՝ ամ ամբարիշտն, զոր խոստովանիմք Յիսուսի մայր կենդանեաց կամ կենդանութեան՝ փոխանակ Եւայի, որ եղև առաւել մայր մեռելոց։ Որպէս զի եղիցի ինձ առանց վշտաց և տագնապի ելանել գնալ 'ի կեանս օրհնաբանութեան. խմն փոխադրութեամբ հոլովոյ, այսպիսին գնալ 'ի պատարագակեալ օթևանս կենացն. որով զանէ կատարած կենացս մահն՝ թեթևանայցէ ինձ, դիւրանայցէ, որ 'ի կենդանութեան ծանրացաւ մեղօք։ Այնպէս զի օր մահուան՝ որ տագնապեցուցիչն է, լիցի վասն իմ առն ցնծութեան. և այս չէ՞ քեզ դժուարին կամ անտանելի. քանզի դու ոչ ջնջեցեր կամ բարձող գոլով երկանց՝ ցաւոցն Եւայի, ըստ նմին և զտագնապ մահու՝ որ եղև 'ի մեզ յանէծից նորա՝ կարօղ ես 'ի ցնծութեն

փոխարկել ։ Այլ քում բարեխօսութեան ոչինչ անհնարին . քանզի հա-ւատամ թէ որպէս անձնառելի է մաքրութեամբ , նոյնպէս ամենընդունող է աղաչանաց . որպէս պատուութիւն քո է ամենամայրական , նոյնպէս խըն-դրուածքդ՝ ամենամայրական , այսինքն այնպիսի խնդրուածք՝ զի է միան-գամայն իբր հրաման առ որդի ։

(9) Արփաւոտ օգնէ ։ Բանաստեղծօրէն զթալից աղաչանան կոչէ արտասուս , իբր նշան փոխանակ նշանակելոյ ։ Կամ , զարտասուսն զոր 'ի չարչարանս որդւոյն եհեղ , աղաչէ ընծայել ԱՆ ։ Ծնրի խոնար-հեցո , ոչ զմարմնական ծնրադրութիւն առէ , այլ զխոնարհական պաղա-տանսն ։ Զեռս այսպիսեաց բանից այնպէս իմն հեզու զօրաւոր իբր առա-ջի Տիրամօրն , որպէս եթէ զպատուական զիւր կերպ զարթուցանել 'ի նմա կամիցի . իբրև ասել . ես արտասուելով պաղատիմ , արտասուեա և դու . ընդ իս ով անձնատուութ . ես ծնրադրութեամբ հայցեմ , խոնարհեցո և դու ծունր առ իմ հաշտութիւն . 'ի հոգս վշտագնիմ ես , ընդ իմ թշուառիս հոգա և դու ։ Այնչափ հաստատամ զգորով մայրենին զթոցդ առ մեղա-ւորս , մինչ զի եթէ հնար էր՝ դու ինքն ընդ իս լայիր , ծունր դնէիր , հոգած լինէիր ։

(10) Անօրէն ինձ հրաշագործել ։ Որպէս 'ի կանայս գալիլեացւոց քում միջնորդութեամբ հրաշագործեաց ՔԾ , զջուր 'ի գինի փոխելով , ոչ զի դու փառաւորեսցիս , այլ 'ի քեզ Որդին . նոյնպէս ընկալ և այժմ , զի ծառայս նորոգործեսցէ յանձն իմ զպարգևս թողութեան և երանութեան . որով որդին քո փառաւորեսցի իբրև սկզբնաձիր ողորմութեան . բայց նաև պատիւ քո բարձրասցի 'ի պատճառս իմ . ցուցանելով թէ փրկութիւն իմ քև յաջողեցաւ . զի որչափ առաւել մեղաւորս եմ ես և անարժան , նոյնչափ մեծանայ պատիւ քո յերկինս և յերկրի , եթէ քոյով պաշտպա-նութեամբ ապրեցայց ։

(11) Թէ ինձ ողորմեսցիս ։ Բովանդակ բանիւս՝ որք էին շատ կապակցեալ կայ-մեալ են , կրկնակի նկատին ։ Մի՝ յարելով ընդ նախընթաց բանին , ցուցցէ փրկութիւն ինձ . այսպէս . Ցուցցի փրկութիւն իմ քև , եթէ զիս զթասցիս ով տիրամայր , ևն . և ըստ այսմ ամենայն պատուոյ անուանքն ընծայեալք ծածանին , իմանին իբր կոչականք . այսինքն ով արքուհի , ով անարատ , ով երջանիկ , ևն ։ Երկրորդ , նկատին իբր նոր զլուխ բա-նի . և ըստ այսմ պատուոյ անուանքն ոչ են կոչականք , այլ ուղղականք , այսպէս , եթէ զիս զթասցիս , տիրամայր ես , ևն ։ Այսմ մնայ նշանակեն 3 . օրինակք , որ զանազանեալ անուանս չեշտեն 'ի վերջին , դնելով , փե-րամայր , որբեւան , անարատ , ևն ։

(12) Ջնջեսցես ։ զխափանեսցես , կամ զանհետեսցես ։

(13) Մաքրես զհոգիս . զինեսցես , կամ մարտիցես ընդդէմ թշնամեաց հոգւոյս ։

(14) Կացո նուիրեալ ։ Կամ եւս արքայական , որով ամբ թողու մեզ զժա-ռանգութիւն արքայութեան ։ Կամ , իբրև կանանց հոգևոր զոր ցոյց 'ի ժամ խաւարելութեան , թողեալ մեզ յորդւոյդ մայր հասարակաց . սասանի ողոր-մութեամբ խնդրեմ պատսպարել զինձ ։ Այսպէս ընդունեալ իմ յամօթ ե-րեսաց , ոչ համարձակիմ օրհնութիւն երգել առ քեզ , այլ տուր՝ զի ան-բիծ շրթանց միայն վայել է օրհնել ։ Ասելն 'ի երգս անբիծ շրթանց , խոնարհական է փոխադրութեամբ հոգւոյս , այսինքն յերջանիկ լեզուս անբիծ շրթանց ։

(15) Կանխեսցէ նորին ։ Աղերսանութիւն է , առ որ համարձակի զմեղական աղօթարանս՝ ոչ եւս իբրև մեղաւորս , այլ զորդիական աղաւթս ընկալեալ՝ իբրև առ մայր խօսելով ։ Մի միայն կամիլ կուսական ստանանց ցոյցեալ 'ի վերայ իմ , բաւական է ինձ՝ կեանս առ յիս նուա-

զերկնայս. խնդրուած մի ևեթ կուսական զգօնութեանդ զօրէ առնուլ ՚յիւր կեանս վասն իմ. կամ, կուսական վարուց մի միայն առաքինութիւն յանձն իմ կենդանացուցանել՝ բաւական առ ՚ի կեանս է ինձ։

(16) Բովանդակ մարմնոյս։ Զառաջիկայն ամենայնի ծնօղ ամբողջ մարդկային բնութիւն, և համայն մտաւորս, ունելով և զկատարեալ ածութիւն. որ և փառաւորեալ է ընդ Հօր և Հոգւոյն այ՝ ոչ միայն ածային էութեամբն, այլև մարդկային բնութեամբ միացելով յանձն նորա. զի որպէս ՚ի կուսէդ մարմնոյն Այ ծնեալ, նոյնպէս ածութեն ՚ի Հօրէ՝ մարդ փառաւորակից Հօր։

(17) Ակնարկ և յաճախ։ տե՛ս ՚ի բանն ՂԷ. ԸԺ. 6։

Մերայինն յառեցեալ երկին հեծանէ՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի։

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

ԲԱՆ. ՁԱ.

Ա. Ընդ անձանձրոյթ մաղթանաց՝ ահա և զվերնոցն անմահ հրեշտակացն լուսակերպից զաղերս հայցուածոց, որ վասն իմ գոչեն առանց լռելոյ հանապազորդեան արգահատութբ [1] մաքուր բերանոց՝ ընկալ բարերարութ։ Որք են բարիք բարեգործեալք ՚ի բարերարէդ՝ [2] անկիրթք չարեաց, հաստեալք յամենիշխան հրամանաց Էիդ. զօրութիւնք հզօրք՝ անճառ-կութե բարձրելոյդ. սուրբք, մաքուրք, անարատք, օրհնեալք, վայելչականք, յաղթօղք և անպարտելիք. և ըստ ընթացից տեսութե մտաց՝ արագունք։

Բ. Որք և պտղակորոյս անկոյ թզենւոյն [3] եռամեանն դատարկութբ, որ զանաւ յաւիտենից պարունակէ ժամանակին՝ զանցեալն ընդ ներկայիս և ընդ ապառնւոյն, յամայր յամրութբն յերկարաձգելոյ՝ յայգի աշխարհիս արմատացելոյ, սին սաղարթիւն պաճուճելոյ՝ զրկեալ ՚ի պտղոց, որ է ճշգրիտ պատկեր թշուառ մարդկութես, սոքա բարեխօսք՝ հանդերձիչք՝ այլ և խնամակալք. որ դեգերին հանապազ առ մեզ՝ ընդ մերում [4] կրիցս կարեկցելով, բարեմասնութեն մեր սպասեն. և [5] յաւիտենականն կենդանութբ փրկութեն մեր աղօթեն՝ զայս բան ասելով, զգործս ձեռաց քոց մի անտես առներ։ Քանզի արդարև [6] մեր են այս աղաչանք ՚ի բարերարէդ այ վասն մեր կարգեալ առ նոսա. զի [7] նոքա բանիւ են ստեղ

ծեալ, և մեք ձեռօք նորգործեալ։ Որք և գալոց են ընդ միածնիդ՝ վկայք սոսկալի դատաստանին հատուցման, ճշմարտաբան դատախազք յանցաւորութեան երկրայնոցս, յահաւորին ատենի՝ յայտնիչք իրաւամբք զմատակարարութիւն՝ որ առ մեզ. [8] որ և անտանօր կարեկցեն ազդեալ հառաչմամբ զմշտանուէրն նուագ ձայնի, ողորմեա՛ դու ստեղծեր, մի կորուսաներ։

Է. Որդ՝ ընդ գոհաբանութեան ձայնիցն խնդրուածոց՝ անմահականացն վեհից՝ և 'ի մեր հեծութիս հաստատեցիս՝ բնաւից արարիչ, որ [9] յաղթես գթութեդ քո վերնոցն և ստորնայնոցս. քանզի քո է բարերարել առ մեզ և առ նոսին։ Որդ՝ վասն [10] բարեզարդութեան անախտականացն, հրաշատեսիլ հրակերպիցն, անշաղախ մաքրոցն, անմեղիցն, բոցանիւթիցն, հոգեղինացն, և անվանելեացն. [11] ամենաձեցուն առաւելութեամբ 'ի բարձրն ընտրականութեան գերափայլ յաճախ գիտութեամբ՝ անցուրտ ջերմութեամբ ջեռուցանողք՝ ինքնաբուն տապոյն տեսութեան ըստ ինքեանց զմերս սառնասեր սրտից անբորբոք շիջուցին, այրել անաղօտ 'ի մեծախորհուրդ սրբում սեղանիս՝ որ 'ի խորանիս, առանց նիրհելոյ և դանդաղանաց սպասել հրամանաց երանականաց կեցուցիչ կամաց ամենաստեղծիդ. քրովբէօրէն առաքինութեամբ յոյժ միացեալք անբաժանելի։ Որք երկնաւոր պետութիւք են մեծք, և զինուորութիւք անբիծք ահաւորք, երկնաւորիդ տէր՝ [12] աղատագնեայ պաշտօնեայք, 'ի յամպոյդ լուսոյ՝ ցոլք նշուլից։

Ը. Սրովբէք և ինձ մեղաւորիս հողեղինի մարդասիրեսցեն ողորմել՝ յիսուս [13] աղաչանօք իմոյն հրեշտակի, դարձուցանելով զիս տէր՝ 'ի բարիդ քո հետս լուսոյ. զի զաւանդ հոգւոյս իմ պաշտպանութէ, զոր հաւատացեր նմին տեսչութեան, զընկալեալն 'ի քէն 'ի կենցաղ աստեացս՝ ուրախութեամբ սրտիւ յիս բերկրեալ, անմեղադրելի առ 'ի քէն օրհնեալ՝ խնդալից դիմաց զուարճութեամբ՝ քեզ արքայ բարձրութեան փառաց անհասից՝ 'ի խրախճանս կենդանախումբս բերկրեցելոցն պարուց մատուցեալ ընծայեցուսցէ՝ գովեալ տղորմած։ Դու քեզ անքնին ընդ հօր անհասի՝ թուա

կցուԹիւ հոգւոյդ ընձեռի՝ վայելել փառք պատիւ և երկրպագութիւն, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

(1) Մ[illegible] [illegible]։ [illegible] հրեշտակաց՝ են միտք նոցա, որք [illegible] քուր կոչին հանապազ [illegible] [illegible] մարդկան։ Առդ ընկալ [illegible]՝ զխնդրուածս այսպիսի մարդուս մեղաւորիս, բայց ընդ Աստուծոյ [illegible], այսինքն յետ բարեխօսութեան սրբոյ Աստուածածնին. զի նա է միշտ [illegible] բարեխօս մեր։ Կամ, [illegible] հրեշտակաց ընկալ զսոյն ընդ [illegible] Աստուածոյն. որով զօրանայցեն խնդրուածք նոցա։ Բարեխօսութիւն Տիրամօրն [illegible] միայնակ ընդունել կարող է զամենայն բարիս. բայց հրեշտակացն՝ ոչ առանց նորա։

(2) Ա[illegible] [illegible]։ Այսինքն անփորձք. զի զբարին [illegible] զոր [illegible] ընկալան, ոչ կորուսին իբրև չարք հրեշտակքն. և յետ այնր եղեն անփոփոխելիք միշտ։ [illegible], [illegible] վայելչութիւն, [illegible], կամ վայելողք բարեաց։ [illegible], [illegible] [illegible] մարդոյ՝ յոյժ [illegible] են հրեշտակք. զի միով հայեցուածով ընկալեալ [illegible] գիտութիւն իւրեանց, և զկատարելս նոցա. նոքին Աստուածայինք [illegible] [illegible] և [illegible]։ Կամ, [illegible] են քան ընթացման մարդոյ, այսինքն մարդոյ [illegible] [illegible] 'ի տեղի. զի [illegible] [illegible] մարմնոյ միայն կարէ տեղափոխ լինել։ Կամ [illegible], [illegible] են հրեշտակք քան օրինակի շարժման մարդոյ. զի որպէս [illegible] և 'ի [illegible] [illegible] 'ի միոյ Աստուածայնոյ յայլ, նոյնպէս հրեշտակք 'ի միոյ տեղւոյ յայլ տեղի։

(3) [illegible] [illegible]։ Թագաւորին երկնաւորի [illegible], [illegible] և [illegible] [illegible], երկրպագութեամբ հեզութեամբ կամ [illegible] [illegible]։ [illegible], [illegible] այն [illegible] երից [illegible]՝ [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible], այսինքն [illegible] [illegible], [illegible], և [illegible]։ Այսմ Թագաւորի անկեալ [illegible], և [illegible] [illegible] [illegible] [illegible], (որ է [illegible] [illegible] [illegible],) հրեշտակքն են [illegible]։

(4) Կ[illegible] [illegible]։ [illegible] [illegible] մերոց հոգեկան և մարմնական կարեաց, և ոչ եթէ յինքեանս [illegible] զմեր կերպ. և մեզ [illegible] [illegible], [illegible], [illegible] միշտ [illegible] [illegible], [illegible] լինելոյ մեզ 'ի բարիս [illegible]. կամ, [illegible] [illegible], [illegible] [illegible] մերոյ։

(5) Ց[illegible] [illegible]։ Մշտնջենաւոր և անլռելի հոգւով [illegible] [illegible] վասն մերոյ փրկութեան։ Կամ, [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] խնդրեն զփրկութիւն մեր. կամ, այնր փրկութեան վասն հայցեն՝ որ 'ի յաւիտենական կեանսն առնի, և ոչ ընդ 'ի ժամանակաւորն։

(6) Մ[illegible] [illegible] [illegible]։ 'Ի գիրկս մերոց, կամ վասն մեր են այս աղօթքս, 'ի [illegible] [illegible] [illegible]։ Աւանդութեամբ [illegible] զհրեշտակապետ[illegible] աղօթել առ Ած, * Ողորմեա դու [illegible], մի կորուսաներ. [illegible] [illegible] մի [illegible] [illegible]։ || որպէս երգեմք 'ի Թագաւորութեան հրեշտակաց։

(7) [illegible] [illegible]։ Այս որոշումն՝ Թէ հրեշտակք բանիւ ստեղծան, և մարդն ձեռօք, առեալ է յեղանակէ խօսից նոցա, և մանաւանդ ծննդոց, որ զերկինս և զայլ արարածս առէ բանիւ եղեալ, իսկ զմարդոյն լինելութիւն ձևացուցանէ իբրև արհեստաւորի [illegible] արարեալ [illegible]. (Ծննդ. Բ. 6. 21. 22։) Այսպէս ոչ՝ [illegible] խօսելով, [illegible]

սրբարանք մտածմունքք եւ հոգեորք առեղծման բանիւ հրամանին այ։ Եւ Է հանգամանքն՝ ամենեքին են ասին գործք ձեռացն այ, եւ ձեռակերտք, ձեռամբք այլաբանելով զզօրութիւն արարչական։

(8) Որ Ն ամփոփոր։ Այսինքն 'ի գաղտնաբանի անդ հոգւոյն, խնամ առ նոյն, տածեալ հովանաւորէ. եթէ զհրեշտակաց ազգի հատուածոյն, խնամել այլաբանութեամբ՝ կարի՛ գութ եւ փափաք նոցա առ մեր փրկութիւն։ Բայց մարթ է իմանալ զհատուածումն մարդկան, զոր 'ի կենդանութեան արարչին զզղջմամբ, եւ զոր հրեշտակք 'ի գաղտնաբանի անդ յիշեցուցանեն առաջի այ. Զայս խնամս հրեշտակաց եւ զողորմութիւն հայցելն՝ ոչ է արդար իմանալ վասն ամենայն գաւակերաց առ հատուածոյ, այլ միայն վասն զղջացեալ հաստատեցելոց, եւ զայն են երբ մեկնողաբար, այսինքն առաջի ատենելով այ զարդարս զղջման նոցա, կամ զայլ բարիս, որպէս երեւի 'ի պատմութեանն արարածոց, ... մանրաւորին, եւ այլ լոց. (Տես Հրչ. երես. 113. եւ 291։) Այս թէ ոչ՝ պարզապէս ողոր-մութիւն հայցել վասն ամենեցուն՝ են եւ անզղջից, հակառակի ոչ միայն այլոց բանից սէյ վարդապետս, որովք անողորմ խառնակինի զդատաստանն այ, որպէս 'ի բանն Է. 1. * Անողորմ են հրեշտակքն.... եւ անողորմ հատուցմունքն։* եւ Հա. 3. || Արդ՝ ամաչեցէք եւ յետ կածառք երկնականացն... ընդ հրեշտակացն՝ եւ մարդիկ. || ամէս եւ ըթ. 2։ հթ. 2. 3։ Այլ ընդդիմանալ եւ առաջինկոյ բանիցս, որով զհրեշտակս 'ի գաղտնաբանին առէ՝ ...փաբխաբեան տապալապէ. իսկ դատախազ՝ եւ բարեխօս՝ հակառակ են միմեանց։ Այս խնամի ըստ այլ եւ այլ անձանց, առ անհաւատս եւ առ անզղջս՝ դատախազք են, իսկ առ զղջացեալ հաստատելոյ՝ բարեխօսք։

(9) Ցաղենս Գեուենդ։ Գերազանցես զթութեք քան զհրեշտակս եւ զմարդիկ. քանզի դու բարերարես առ մեղս առ նոսին. առ մեզ շնոր-հապարտութեամբ եւ ներողութեամբ, իսկ առ հրեշտակս՝ շնորհապաշ-խութեամբ միայն. վասն որոյ եթէ հրեշտակք գթան 'ի մեզ, առաւել ես դու։ Արդ՝ թէպէտեւ յաղթօղ գթութեամբդ միշտ կազմ ես 'ի բարերարել, բայց կամիս եւ 'ի մէնջ հայցուած խոնարհական. վասն որոյ ոչ բաւականացեալ մատուցանել զբարեխօսութիւն հրեշտակաց, 'ի նոյն ընթացեալ եւ զմեր հեծութիւնս։ Այսպէս եւ 'ի բանն ձը. յեա գնելոյ զաղաչանս առաքելոց, զմարտիրոսաց եւ զճգնաւորաց, ասէ 'ի հանգիստ Ն. խառնել եւ զմեր անմաքուր բանս են։

(10) Վաւն Բարեղարդութեան։ Վասն վայելչութեան բնական եւ գերբնական ձիրցն՝ որովք զնոսա ճոխացուցեր։ կամ վասն բարեյարմարութեան հրեշտակացն՝ շնորհեալ եւ մեզ ընդմանալ սիրով քո 'ի ժամ Նը խոկհրգոյն. զի յայնժամ պարապեալք են մեզ հրեշտակք բարեզէանք սիրով ածութեան. եւ եթէ մեք մերով ցրուութեամբ մնայցեմք, անմխիթարանութեան մեծ է։ Հին լուծ. ասա ոեղան խնամոյ զմիտան 'ի խորանի մարմնոյ։ Բայց զայն չէ մարթ կոչել Ձեռակերտաւորս, Ն ոտքէ. այլ խմանոյն է ան-զան սէյ պատարագին, որպէս ասացաք։

(11) Այնաձեղան տառաէլոսբեածէ։ յայժ գերազոյն առձմամբ կամ կատարելութեամբ, 'Ն Էարչին ընդրախնոսբէ, 'ի բարձր մեծակ կամ սատիճան, յաձնս Գեփաբէ, առաւել գիտութեամբ բնականաւ եւ գերբնականաւ։ կամ, զայս գործիական իմն երբ ուռակեան յառակացուցէջ, այսինքն 'ի բարձր աստիճան առաւել կամ բազմազան գիտութեանն. յորս բնական գիտութեն կամ ճանաչմանն այ՝ զհետ զայս բնական սէր ածայլին, որ անշիջանելի է 'ի հրեշտակս։ Իսկ գերբնական գիտութեն կամ ճանաչմանն այ հաստատով միջոցաւ 'ի ճառագայթէի էին, զհետ զայր սէրն հեզական, զոր եւ անշէջ պահեցին հրեշտակքն. յորմէ ապա անցեալք 'ի

գիտութիւն երանական, զսոյն երանական մարդոյն անշփոթանելեաւ։ Եւ այս-
պէս անցուցեալ Ջերմութեանց անմարզելի մարդոյն իւրեանց ընտրութեանն նիւթո-
բեան փորձիւ ծածկութեամբ, այսինքն բնածին տապոյն. որ յառաջապէս
խմանի զգայական մարդոյն հրեշտակաց. կամ եթէ նիւթաբեան խմացի՝ ոչ
երբեք 'ի զօրութէ կամ յարգելեաց բնութեն ծագեալ, այլ երբ համեմատ
բնութեն բանականի, ըստ այսմ առի նաև զհեղական և զերանական մե-
րոյ հրեշտակաց՝ և մեր. զի թէպէտ և այս երկու սեր՝ զերբնականք են
ըստ սկզբանց և ըստ արգելեաց, բայց և կարի մայրելուցք բանական բնու-
թեն։ Այսու տապով առէ Ջերմացուցանելն զմեր սառնասիրս, սառնո-
կերպ, կամ տառուցեալ սրտից անէսորէու շիջման, զժուարա մասնէ
չեղուին. զի զալակատութեն մարդոյ։ 'Ի կատարելութեն շարադրութեն աեր-
ուոյս՝ զպատն Ջեռուցանող, ասպարա է խմանալ սեռականն՝ երբեք զայլ ան-
ցեալն. զի, անմեղնիցն, հոգեղինաց, Ջեռուցանողաց նիւթաբեան փորձէ,
ևն։ Այլև 'ի սկզբնէ անտի, Աղդ վասն բարեզարդութեն, ևն, մինչև
յոյն, այրեղանողօք, անկատար է բանն. և զօրութիւ այլ բայց պահանջէ
յարել Ը նմա, այսպէս։ Արդ՝ վասն բարեզարդութեն անախտակա-
նացն, ևն, շնորհեա կամ պարգևեա այժմ անաղօտ 'ի նմա սկզբանէս,
և այլն։

(12) Աղօթողինեայ պաղպծնեայք. ըստ որում թէպէտ և ծառայք են,
բայց և որդիք և ժառանգք եղ. և զի աղատ յօժարութբ ծառայեն եղ.
այլ և բնութեամբ աղնուական գոլով, 'ի սպասաւորութեն անապական
յօժարին։

(13) Աղաչանօք նմոյն։ Որոշմամբ նմա աղաչանօք նմա պահապան հրեշ-
տակին, զարձուցանելով զիս 'ի բարի և 'ի լուսաւոր ճանապարհս քո.
որպէս զի զհոգի իմ զաւանդեալն 'ի պաշտպանութեն և 'ի խնամս նորա,
զոր ընկալաւ 'ի քէն 'ի նենգող սոփեստս, 'ի կեանս աշխարհիս, (զի յետ
մահու զադարէ մասնաւոր պահպանութեն հրեշտակին,) մատուցեալ
ընծայեսցէ քեզ փառաց աղբերդ 'ի խրախճանս զառուցն արդարոց,
ուրախ սրտիւ խնդալով 'ի վերայ իմ. և զնո հաւատարիմ պահպանու-
թեն՝ անմեղադրելի, զի զովութեամբ օրհնութեն ընծայելով 'ի քէն. վասն
զի յաւելուն 'ի հրեշտակս պատուականն փառք՝ փրկութեամբ պահ-
պանեալոցն 'ի նոցանէ։ Կամ, անմեղադրելի, զի ես առանց մեղադրութեն
օրհնեալ լինելով. ըստ այնմ, || Եկայք օրհնեալք հօր իմոյ || . Ը որ և
խնդայ, երկրպագ պահապանն իմ. ատեանելով զի պահպանեալն իւր օրհ-
նութեն առնու, և ոչ անէծս ընդ ձախակողմեանսն։

Մերոփէն յաւելուած նըհէն հեծութէ՝ նորէն հօնողէ, առ նոյն
աղէրս մաղթանաց բանի։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ քեզ։

ԲԱՆ. ՁԲ.

ա. Տէր իմ բարերար բազմապարգև Թագաւոր, կենաց պատսպարան, լուսոյ կերպարան, լայնատարր հանգստարան. որ յաղագս մեղուցելոյս եկեալ մարմնացար. գործեցեր զանպատումն, և համբերեցեր զհրաշալիսն, մինչև կատարեցեր զա-

ռեցեալն ընդ ամենալիր ա̃ծութեդ ։

Ճ. Ո՛րդ՝ վասն առաքելոցն ս̃բց յերկնաստեղծ քո
ձեռացդ ձեռնադրելոց, և հոգւովդ սրբով օծելոց,
2 զորոց զգովեստն արժանաւորութե ըստ իմում կա-
րի՝ առ ՚ի փառս քո տէր ամենայնի՝ յայլում բանի
պաշտեցի, և ինձ ողորմեսցիս 3 յիշատակաւ սիրոյ
նոցին ընտրութե ։ 4 Տաւիղ ինձ եղիցի նոքօք՝ և հան-
դերձեսցեն յերանութի փափաքելի․ ձայն բարի հո-
վուութե նոցին՝ ՚ի յողջոյն ինձ կենաց քաղցր լուի-
ցի ։ Մասն կալայց 5 ՚ի յանեղծութե փրկութե տօ-
նեցեալ յուսոյն՝ ընդ առաջնորդացն կենաց, սկըզ-
բնաշնորհիցն պատուոյս, փառաւորեալն դասուց,
գետոցն բանականաց, աւետարանչացն բարձանց, իշ-
խանացն պանծալեաց, լուսապայծառ թագիւ պճնե-
լոցն, ՚ի զարդ անկապուտ զօրութե շնորհին պայծա-
ռացելոց, իւղովն զուարթութե տիրական լուսոյն.
կատարելոց ։

Ճա. Ընդ աշակերտաց մեծիդ հրամանի բարձրեալդ
ա̃յ քնի՝ և 6 մարտիրոսացն ընտրելոց նահատակութ̃,
որք մահացու և վշտաչարչարն մարմնով, վտանգա-
ւոր և ամենակիրն անդամօք, երկրաւորական և հո-
ղազանգուածն բնութբ՝ մարտուցեալ 7 ընդ տարր
գոյից ամենայն նիւթից՝ պսակեցան բարձրացան և
կենդանացան հոգեպէս․ արիաբար ելեալք ՚ի յերկ-
րէ, 8 ըստ մարգարէին, վկայք Ճշմարիտք 9 ամենա-
փորձն մահու․ իմանալեացն անտեսիցն և ծածկելոց՝
աներկբայ բարեացն՝ յուսով տեսելոցն աստէն նկա-
տիչք․ աշակերտք առաքելոցն և չարչարակիցք նո-
ցին․ որ 10 հաւասարեալ գործովք ընդ նոսին, կա-
տարեալ լրմամբ անպակասելեաւ՝ պարեն ՚ի խրախ-
ճանս անկէտն երանութե․ որոց հանգոյական և ըն-
դունական մաղթանօք, արիւնըրնծայ վաստականաւէր
11 քրտնակնդրուկ աղերսիցն յարգմամբ՝ ընկալ զիս
նորօք 12 ըստ նոցին մասին անեղծ փրկութբ ՚ի քեզ
արձանացեալ ։

Ճբ. Ընդ խաղացեալսն հուրբ և սուսերբ՝ արեամբ
ներկելոցն, և 13 Ճգնաւորացն ս̃բց հարցն միանձանց՝
և 14 քեզ հետեւելոցն որդւոյ ա̃յ, անպարտելի քաջու-
թբ և անպատիր զգաստութբ, ընդ դժնեայ գոռոզի

մարմնոյս բնութեն որպէս մարտուցեալ, սովիմք վանեցին զանմարմինն Բելիար. և մշտամարտ հանդիսիւ՝ յասպարիսի կենցաղոյս՝ առանց զզուանաց ծանրաբեռնութեն 'ի լայնածաւալ ծփանաց աշխարհիս ծովու՝ տապանակաւ մարմնոյս թանձրութեն ընթեթևութեն հոգւոցն թռուցեալ՝ 'ի նաւահանգիստն կենաց հասին. և իբր սիրողք [15] վերնում վիճակին՝ առանց յետնոցն մտածութեն, զթագն յաղթութեն համարձակապէս՝ պայծառ ճոխուք պճնեալ խնկապէս՝ 'ի գլուխ կապեցին. վասն նոցին արժանաւոր մաղթանաց և նուիրական հայցուածոց՝ և զիս զմեղաւորս 'ի պատժականաց՝ ընկալ ընդ նոսին.

Ե. Ո՛ւ ահա խառնեալ զանմաքուրս բան՝ [16] ընդ նախագրեալ երջանկացն փառաւորական աղերսարկութեն, որ վասն իմ գոչեն քեզ 'ի հաճութեն, և ես ընդ նոսին՝ իբր դառնութեն եղեալ ընդ քաղցու, կամ [17] տատասկ ընդ ողորկութեն, տգեղութեն ընդ վայելչութեն, և տիղմ ընդ գեղեցկութեն մարգարտի, կամ հող ընդ յստակութեն ոսկւոյ, և կամ քարինս անարգս ընդ պայծառութեն արծաթոյ, [18] բացասութեն ընդ ճշմարտութեն, [19] կամ աւազ ինչ ատամնառու ընդ կակղութեն ղանգուածոյ հացի. արդ լե՛ր՝ հզօր հնարաւոր գովեալ, [20] զնոցայն վասն իմ, և զիմս ընդ նոսին 'ի նոցին գովեստ, 'ի փրկութիւն իմ և 'ի փառս քո՝ ամենագութ, բարերար, օրհնեալ, երկայնամիտ, կարող, անքննին, անճառ, անեղծ և անստեղծ. Քո՛ են պարգևք, քո՛ են շնորհք. դու սկիզբն և պատճառ բարեաց ամենայնի. Ոչ ես դատապարտիչ, այլ ազատիչ. ոչ ես կորուսիչ, այլ գտիչ. ոչ ես մահացուցիչ, այլ կեցուցիչ. ոչ ես տարագրիչ, այլ ժողովիչ. ոչ ես մատնիչ, այլ ապրեցուցիչ. ոչ ես ընկղմիչ, այլ վերածիչ. ոչ ես գլորիչ, այլ կանգնիչ. ոչ ես անիծիչ, այլ օրհնիչ. ոչ ես վրիժառու, այլ շնորհիչ. ոչ ես թշուառացուցիչ, այլ մխիթարիչ. Ոչ եղծանես, այլ գրես. ոչ սասանես, այլ հաստատես. ոչ ոտն հարկանես, այլ սփոփես. [21] ոչ պատճառս յօդես մահու, այլ հնարս խնդրես կենաց. ոչ ես 'ի կամս շարժեալ սատակման, այլ 'ի փրկութեն ողորմութեն. Ոչ մոռա-

նաս զայցելութի. ոչ լքանես զգարի. ոչ արգելուս զգթութի. ոչ բերես վճիռ կորստեան, այլ կոչակ ազատութե։ [22] Ո՛չ թշնամանիս յառատութեց. ոչ բամբասիս ՚ի շնորհաց. ոչ հայհոյիս ՚ի պարգևաց. ոչ նախատիս ՚ի ձրի ձրից. ոչ անգոսնիս յերկայնմտութեց. ոչ եպերիս ՚ի ներութեց. ոչ բանսարկիս ՚ի բարութեց. ոչ անպատուիս ՚ի քաղցրութեց. ոչ քամահիս ՚ի հեզութեց. ոչ առաքին այսոցիկ տրտունջմունք, այլ անլռելի գոհաբանութիք։ Նա՛րձ զմեղս իմ հզօր. լո՛յծ զանէծս իմ օրհնեալ. քաւեա՛ ըզպարտիս իմ ողորմած. Ջնջեա՛ զյանցանս իմ գըթած. [23] մատո՛ մատն այցելութե, և անդաստին իսկ կատարեցայց. զի՞նչ քեզ տէր՝ քան զսոսին դիւրագոյն, և կամ զի՞նչ ինձ պարտաւորիս կարևորագոյն ։ Ա՛յլ կենդանագրեա բա՛րեխնամ քոյինաստեղծ պատկերիս՝ փչումն կրկին ՚ի շունչ նորոգման լուսաւորութե մաքրական շնորհի՝ զամենամեղս ոգի պաշտպանեալ։

Դ. Մի՛ ածեր ողորմած՝ ինձ [24] օր տարաժամ ՚ի համառօտս երբէ՝ անթոշակ ապաձեռնութե՝ ընդ ականկատար ուղղին հետևել. մի՛ մատուցաներ բաժակ դառնութե՝ ՚ի ժամ ծարաւու. [25] մի՛ փակեր գը՛թած՝ իմ հանդէպ՝ զյաջողուած հոգևոր օգտիս, և մի՛ իբր յանկարծադէպ հինից ասպատակ՝ գիշեր մահուն ինձ պատահեսցէ. [26] մի՛ տապ տօթոյն յանպատրաստ պահուն՝ զարմատս հատեալ ցամաքեցուսցէ, և մի՛ լուսնական դիպուածք հասեալ գաղտնեօք վնասեսցեն. մի՛ պահեսցի ինձ սառն մեղացս, և մի՛ հոսանք ուղխից կենցաղոյս զիս ողողեսցեն։ Մի՛ [27] հանգիստն մահ բերիցէ, և մի՛ ննջումն ՚ի սատակումն յառաջեսցէ. մի՛ քունն ինձ կորուստ լիցի, և մի՛ նիրհումն ապականութի գործեսցէ. մի՛ վախճանն անյարմար՝ ՚ի վերայ իմ արշաւեսցէ, և մի՛ շնչոյս վերարձակութիւն ըմբռնեալ՝ ՚ի խոնարհ լքցի ։

Ե. Դու ես տէր. դու գթած. դու բարերար. դու երկայնամիտ. դու ամենակարող. [28] առ ամենայն բան անհասութե անճառ զօրաւոր, քաւել՝ փրկել՝ կենագործել, լուսաւորել, վերստին հաստատել, ՚ի ժանեաց կերչաց գազանաց՝ և կամ յատամանց վի-

շտապաց 'ի կեանս կորզել, 'ի խորոց անդնդոց 'ի լոյս
բերկրութե՛ ածել, և 'ի հեղձմանէ ծփանաց մեղաց,
29 ընդ արդարս երջանկաց՝ փառօք բազմեցուցանել։
30 Ամենայն ոգի քեզ ակնկալեալ յուսով սպասէ, կարօտեալ քում շնորհաց. եթէ երկնայինք, և եթէ երկրաւորք. եթէ անկածն մեղօք, և եթէ ամբարձեալն արդարութ. եթէ տէր, և եթէ ծառայ. եթէ տիկին, և եթէ աղախին. և 'ի ձեռին քո է շունչ կենդանական բոլորեցուն։ Եւ քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

(1) Մինչև [illegible] փառօք՝ [illegible] մարդկութե, ընդ [illegible], ընդ ամենակատար ածութեանդ՝ ընդ աջմէ հօր բազմեցուցանելով 'ի միութե անձինդ։ Կմ խիմ, մինչև կատարեցեր զընկալեալ մարդկութիւդ նուիրագործութբ 'ի խաչին, ըստ բանին. *Եւ ինքն կատարեցաւ, եղև ամենայն հնազանդելոց իւրոց || են. *Հայեցարո՛ւք 'ի կատարիչն Յս || (Եբր. Ե. 9. Ժբ. 2։) Զայս կատարումն տարաւ Քս ամենակատար ածութբն։ Հին լուծ. խմանայ զկատարելութե երևանամեայ հասակին Քնի. բայց [illegible] ոչ 'ի դէպ գայ։

(2) [illegible]։ Զընդարձակ ծաւալն ասէ՝ զոր յօրինեաց 'ի մէջ [illegible] և յեօթանասուննին։ Բայց չէ յայտ թէ քանի՛ ժամանակաւ յառաջ քան զաղօթքս ասացեալ իցէ։ Սմանց թուեցաւ՝ ընդ այլ երկուց ծաւալից խաչին և Աստածնի ասացեալ 'ի նմին ժամանակի։ Սակայն 'ի յիշատակարանս այնց ծաւալից ոչինչ այդպիսի նշանակի. և ոչ մակագիր ծաւալին տաղերգն ցուցանէ զկապակցութե ինչ ընդ նոսա, որպէս այլոց երկուց ծաւալիցն մակագիրք ցուցանեն յայտնապէս։ Մանաւանդ կարծիս տանումք՝ յետոյ քան զայն ծաւալն ասացեալ զտաղերգսն, [illegible] 'ի սկզբան անդ. *Քանզի առ ձեզ և յաղագս ձեր 'ի [illegible] չարժեալ կարգ բանիս, || են։

(3) [illegible]։ Յիշատակաւ սիրոյ քո՝ որով զնոսա ընտրեցեր. կամ, յիշատակաւ ընտիր և գերապանց սիրոյ նոցա առ քեզ։

(4) [illegible]։ Կ օրին. շաւիղ ինձ եղիցի նոցօք հանդերձեցելոց. որ ըստ կարգի եւս է, այսինքն նոցա բարեխօսութբ և վարդապետութբ պատրաստեսցես ինձ ճանապարհ ուղիղ առ քեզ գալոյ։ Զայն բարի, ձայն առաջնորդութե նոցա, որ իւրեանց գրովքն 'ի միտ հասանէ, լուիցի ինձ իբրև ողջոյն կենաց, զոր առանդէին աշակերտելոցն ըստ հրամանին Քնի։ (Մատթ. Ժ. 12։)

(5) 'Ի [illegible]։ Սուրբ կամ բարձին ընդունեցիմ, հաղորդեղիցիմ ընդ առաքելոցն. որք քարոզութբ եղեն առաջնորդք կենաց, 'ի յանեղծ փրկութիւն յոր յուսամք. կմ 'ի տօնեալ յոյսն անեղծ փրկութե։ [illegible], որք եղեն առաջին առաջնորդական պատուոյս։ Անձն հաղորդ լինել առաքելոց 'ի յուսացեալ փրկութիւնն, հայի յայն բանս նոցա՝ որովք զհաւատացեալսն կոչէին նոքա հաղորդակիցս, մինճակակիցս, համախառնապատիւս են։ [illegible]. որք խմանալի զուարթութ [illegible], այսինքն [illegible], քնական [illegible] եղեն կատարեալք. որք [illegible] Քնի եղեն ըն-

կերպք կամ փոխանորդք յերկրի. որ և է գերագունից վսեմութեան առա-քելոյն :

(6) Եւ նորափետրոյն ընթերցելոյ : Իմաստք բանիս դիտաւորութիւն անուան յաւարտ անդր՝ ուր ասի. Որոց հաճոյական և ընդունական նուիրանօք, ուստի կարգեալ է այսպէս : Ընդ աշակերտաց մեծիդ՝ նաև մարտիրոսացն նա-հատակութեամբ և հաճոյական մաղթանօք ընկալ զիս միաբանեալ, եւն. և ընդ այսմ որոյն՝ յարմարեցելով զբանն՝ նորափետրոյն, կրկնի միայն 'ի բա-ցայայտութիւն, և 'ի կատարելութիւն բանին :

(7) Ընդ փառս Գոյից : Մարտիրոսքն սուրբք մարմին ունելով մշտանչ, և անդամն ներքոյ անկեալս բազումս վտանգաց, մարտեան, պատերազմե-ցան քաջութեամբ ընդ ամենայն ազգ տանջանաց, ընդ հրոյ՝ այրեցմամբ, ընդ ջրոյ՝ ընկղմամբ կամ սառուցմամբ, ընդ օդոյ՝ կախմամբ, 'ի բարձանց ընկեցմամբ, խեղդմամբ ծխոյ. ընդ հողոյ՝ աղխամաղուկութեամբ, թաղմամբ եւն : Նոյնպէս ընդ գազանաց, ընդ զանազան տանջանարանաց :

(8) Ըստ նորագուրէն : Եղանեն յերկրէ ըստ մարգարէին, եթէ իմացի՝ ըստ նմանութեան մարգարէին, կամ նշանակի սամուէլ, զոր կինն վհուկ տեսեալ ելեալ յերկրէ իբրև աձ. (Ա. Թագ. ԻԸ. 13. 14.) և կամ ցու-ցանէ զեղիա, որ հրեղէն կառօք համբարձաւ յերկրէ. (Դ. Թագ. Բ. 11 :) Իսկ եթէ իմացի՝ ըստ բանի մարգարէին, ակնարկէ զբանն սաղմ. (ձէ. 7.) * Ելս եւ 'ի մահ ելանելոյ 'ի հոմանէս տրտմութեան || :

(9) Ամենաքորչն նահատ : Զամենայն փորձանս կամ զմեկշտս կրող մահուամբ՝ վկայք եղեն Քրիստոսութեանն. կամ, ամենակիրս մահուանն քեզ վկայք :

(10) Հաստատուեալ գործովք : Ընդ առաքելոցն հաւասարեցան, գործովք վկայելով և հաստատելով զՔրիստոսութիւն քարոզեալ 'ի նոցանէ. ուստի ոչ իւիք պակասեալք 'ի նոցա նմանութենէն, ընդ նոսա վայելեն յերա-նութեանն :

(11) Քրիստոնէադրոշմ աղօթիցն : Աղօթիցն՝ զոր 'ի կնդրկահոտ քրտունս տանջանացն մատուցանէին նահատակքն :

(12) Ըստ նոյին ձայնին : Այսպէս է ընթեռնուլ ըստ լաւ օրինակաց, և ոչ ըստ նոսին : Աղաչանօք մարտիրոսացն՝ զոր քրտամբք և արեամբ ըն-ծայեցին քեզ, ընկալ աստ՝ զիս վերստին 'ի շնորհս քո. իբրև մանուկ վտառակաց նոցա, 'ի քեզ աղերսելով զիս անկորուստ փրկութեամբ : Այսու բանիւ ոչ ընդ աղօտ իմն ակնարկէ սրբն Գրիգոր զնախնի աւուրսն յե-կեղեցւոյն, յորում դեռ մարտիրոսք բարեխօս լինէին առ Աստուծոյ եկե-ղեցեաց՝ արձակել 'ի բանադրանաց զզղջացեալսն, կամ թողացուցանել նոցա 'ի կանոնական ապաշխարութենէ :

(13) Եւ ճգնաւորացն սէրց : Այս սեռական՝ է առ բայն, նորոգեալ. ... ընդ արեամբ նահատակելոցն՝ նաև ճգնաւորացն սէրց ընդ մարմնա խարանաց արտաքուստ մարտուցեալ, վանեցին, եւն : Ուստի վասն նոցին մաղթանաց՝ և զիս ընկալ, եւն : Կարգ ճգնաւորացն թէև ոչ ընդ երևե-լի թշնամիս պատերազմեցան՝ որպէս մարտիրոսք, բայց նոցին հանգոյն անպարտելի քաջութեամբ մարտեան ընդ գազանի մարմնոյս բռնութե. այսինքն բանաւոր կամ անհնազանդ մարմնոյս : մի օրին. բռնուէ. և մարթ է իմա-նալ, բնական կարեօք մարտեան. որով և յաղթահարեցին զսատանայ : Իբրև մենամարտիկք յասպարիզի աշխարհիս միշտ հանդիսացան 'ի կռո-ւանց ցցուանաց ծանրաբեռնացն. ոչ կրելով զմեկշտս ծանրութեան նեղութեանց աշխարհիս, զորս 'ի բաց թօթափեցին Քրիստոսի և ամենանուէր աղքա-տութեամբ :

(14) Քեզ հեծելոցն : այլ օրին. քո հեծելոյն :

(15) Վերնամ վեճակին : 3 օրին. վերնոյն. իբր սերովբէ երկնային վիճակին.

կամ գերագոյն առաքինանի արդարութե. առանց չէփոյն մաքրութէ, առանց խորհելոյ զմարմնաւորս, կամ առանց հայելոյ յանցեալ ճգնութիւն՝ որ լոս օրէ յառաջադէմն ջանային ։

(16) Ընդ նախագրելոյ երջանիկյոն ճառագրական ։ այլ օրէն. ընդ նախագրեալ երջանիկյոն ճառագրական ։ Ընդ գովասանական ավերեւանս նախայե-շաաակեալ երանելեացն՝ Առաքելոց, մարգարէից և ճգնաւորաց՝ խառ-նելով նաև զիմ անարժան աղօթս, և ես ի նոցին պատուական, գոչեմ, թէպէտ յոյժ օտարացեալ 'ի նոցա նմանութենէն. որպէս զառն ինչ ընդ քաղցր նուագոց են ։

(17) Տարածել ընդ ողորկութեն ։ Փշալից բոյս ընդ ողորկ շառաւիղի, կամ ընդ յղկեալ գաւազանի ։

(18) Բացասութեն ։ Ուրացութիւն ճշմարտին, կամ ստախօսութե, կմ՛ առ ինչ ընդ ճշմարտին իրի ։

(19) Կամ աւազ, որ 'ի հաց խառնեալ, ապականօղ լինի. զի աղալերա զատամունս 'ի ծամելն, և շառաչիւն առնէ ։

(20) Ջնջեա զվնաս իմ ։ Լո՛ւր զաղաչանս նոցա որ վասն իմ. և զինև ընդ նոսին, և զիմ աղաչանս ընդ աղաչանաց նոցա, որ եղիցի նոցա 'ի գովութիւն, և ինձ 'ի փրկութիւն 'ի փառս քո ։ Եթէ նոցա լսիցես, և եթէ ինձ, եթէ նոցա գովեստ լինիցի, և եթէ ինձ փրկութիւն, ամենայնն կատարի 'ի փառս քո. վասն զի քո են պարգևք և շնորհք. զոր պատճառս բարեաց ամենայնի ։ Եւ դարձեալ, 'ի քեն զոլով ամենայն պարգև, ոչ կարօտիս միջնորդութե այլոց. և 'ի քումե բարութէ ո՛չ դատապարտիչ լինիս, այլ ազատիչ ես ։

(21) Ոչ պարտաւոր ։ Թէև մեք արժանի մահու մեղանչեմք, բայց դու գթած՝ ոչ պատճառս իրաւանց կամ դատապարտանի արդարադատութե կեցցես, այլ մանաւանդ խնդրես դառնալ փառաց, հնար կենաց ։ ու ես 'ի ձեռս. զի ոչ յօժարիս 'ի կամս ապականելոյ, կորուսանելոյ, այլ 'ի ծրքութե ողորմութե, զի 'ի փրկել ողորմութե, ձրիապէս, առանց վաստակոց արժանեաց ։

(22) Ու ենթարկեալ ։ Ցատաստանելնեալ քո՝ թէպէտ և կարի մեծ իցէ, ոչ թշնամանես իբրև շռայլ. այնպէս 'ի շնորհելդ, յերկայնամտելդ, 'ի ներելդ, 'ի հեզութե զնալդ, են, ոչ պարտաւորս իբրև անխոհեմ, կմ՛ ակար. և ո՛չ տրտմուն 'ի մարդկանէ առնուս, այլ գոհութե. զի 'ի գործել քո զայս ամենայն՝ ցուցանես զբարութեն, զիմաստութեն, և զօրէթութեն. և ո՛չ ումեք զերկանս առնես ։ Այլա եթէ ապէտ որ կամ նախանձոտ այլազգ խորհելով, տրտնջեսցէ, կամ մեղադիր լինիցի, իրաւամբք յանդիմանի. որպէս առաջինն կոչեցեալ մշակքն՝ 'ի տրտնջելն ըղդամանութեան տանէն լուան, եթէ չունիցիմ իշխանութե առնել զինչ և կամիմ. (մատթ. ի. 11. են ։) Այնպէս երէց որդին գժուարեալ ի ընդունելութե անառակին, լուաւ պատասխանի. ո՛չ էր արժան խնդալ ընդ կենդանութե և ի գիւտ եղբօր քո. (ղուկ. ժե. 28. են ։) Թէորես ասիցես՝ և երեմիայի զանգատեալ զայ վասն երկայնմտութեն առ ամբարիշտս. (ժբ. 1 ։) Բայց ո՛չ էր զանգատ, այլ մարգարէն զարմանք ընդ անտեսանելութեն եայ. զոր զպատճառն զինելով ինքնին բացայայտէ զինի (համար. 3.) * Ժողովեա զնոսա իբրև զոչխարս 'ի սպանումն ||։ Այլ ինքն յանձնէ նոցա ած՝ զի յանդգնեալ մեծ է՝ մինչև զանսեսցի զնոսա իբրև ոչխարս պատրաստեալս ։ Այլա անպարտ է ած յամենայն 'ի գործս իւր. և մարդիկ միայն լինին պարտաւորք, յարժամ անչափ առատանեսն, կամ ներելն յանցաւորաց. զի ո՛չ են ինքնատեարք ընչից իւրեանց, կամ իրաւանց արդարութե ։

(23) Մոխրի նման ։ Մերձեցի առ իս զմաստ օգնութ, և անզաւակի, իս-

կոյն կատարեալ գտայց յաղթութեան, 'ի քաւութեան են։ Այլ Հենդանագրեալ, 'ի քո ստեղծեալ պատկերս տպաւորեալ կրկին կամ վերստին փչմամբ, երբեւ զառաջինն, նորոգեալ լուսաւոր շնչովն որ զմաքրութեան շնորհաց յինքեան ունի։

(24) Որ փորձեալ. յն անպատշաճ, կամ անարգանս, 'ի համառօտս Եբբի, 'ի կարճ ժամանակս, անթողլի աղաչելոյ, անպաշար զատարկութեան բարի գործոց, ընդ անկապար ուղին, ընդ անվախճան ճանապարհ մահուան գնալ։ Այսու, և յաջորդ բանիւքն աղաչէ՝ մի՛ յանկարծ օրհասաւ մեկնիլ 'ի կենաց՝ անպատրաստ և ունայն 'ի բարի գործոց։

(25) Մի՛ խոցեր։ Մի՛ թողուլ տար խափանել ինձ 'ի յաջողութեան հոգեւոր օգտիս՝ ապաշխարութեան և այլ բարեգործութեանց, որք խափանեին պատճառս մահուամբ. զի ըստ նմանութեան յանկարծահաս հինից բանդայ զետմ բարիս։

(26) Մի՛ փաղ փօխոյն։ Ատամնաւոր ակնարկէ 'ի բան սաղմոսին. «Արեգակն 'ի տուէ քեզ մի՛ մեղիցէ, և մի՛ լուսինն 'ի գիշերի»։ Իսկ փաղ կամ իմանայ զգնական ջերմն մահաբեր, որ առաջ ցամաքեցուցանէ զարմատ կենաց, և կամ զհոգեկան տագնապ գիւական փորձութեանց 'ի ժամ մահուն։ Եւ մի՛ լուսանոյն, պատահարք որ 'ի լուսնոյ՝ մի՛ յանկարծ կամ գաղղիականս վնասեսցեն. և զայս եւս իմա կրկնակի, այսինքն կամ զմարմնականն, որպէս ախտաժետութիւնք 'ի լուսնոյ ներգործեալք, կաթուածք մահաբերք, են. և կամ զհոգեկանն, որպէս են փորձութիւնք 'ի մարմնոյ ծնեալք։

(27) Հանգիստ մահ։ Այսինքն եւս մէ կարգի իմանալի են ըստ մարմնականին, այսինքն մի՛ հանգիստ մարմնոյ 'ի մահիճս՝ մահ բերիցէ, են։ Եւ մի՛ ձիւնահան անհոգաբար, այսինքն մի՛ վաղեսցէ 'ի վերայ իմ յանկարծ մահն բռնական՝ որ պատահէ անկմամբ, ընկղմամբ, այրմամբ, և այլով օտար ճանապարհաւ, որք չեն ըստ բնական կարգի եղծման մարմնոյ։ Կամ անցորդաց տար մահն հասեալ 'ի ժամ քնոյ, որով 'ի վտանգաւոր յայնմ ժամանակի ամենեւին անպատրաստ ելանէ մարդ յաշխարհէ։ Եւ մի՛ շնչոյս վերաբերութիւն, ելումն կամ տուրեւառ շնչոյս մի՛ 'ի ներքս արգելցի խեղդմամբ. կամ, արձակումն հոգւոյս 'ի մարմնոյ մի՛ 'ի դիւաց արգելեալ 'ի տուրեւ խափանեսցի. կամ, տագնապ հոգեվարութեան մի՛ տանջեսցէ։

(28) Առ մէ բան։ Առ մէ իրս անհասանելիս կամ անհնարինս՝ անճառապէս զօրաւոր։

(29) Ընդ աղօթս Երջանկաց։ այսինքն ընդ աղօթարոց երջանկաց կամ երանելեաց. կամ, ընդ աղօթարս երջանկիս. բայց ըստ շարադրութեան՝ մի բառագնի նախադրիւ տրական, և միւսն վերջահոլով, վասն զի ընդ նախադրութեան յարմարին երկոքեան եւս։ Սոյն ոճ է և յառաջասացեալն, ընդ խաղացեալսն համբ՝ արեամբ ներկելոցն։

(30) Ամենայն ոգի։ Ամենայն բանաւոր քեզ ակնկալեալ, յուսով սպասէ, ոչ ամենայնն միօրինակ՝ այլ զանազանաբար. այլապէս Երկնայինք, հրեշտակքն, և այլապէս Երկրաւորք. ոմն այլապէս՝ մեղաւորն, և այլապէս՝ արդարն, այլապէս տէրն. և այլապէս ծառայն, են։ Արդ՝ հրեշտակաց յուսով սպասելն և կարօտիլն շնորհաց՝ եթէ իմասցի ըստ բնութեան նոցա, և յառաջ քան զերանութիւնն, ահա յայտնի է բանն. զի յուսոյն առ ածն՝ և նորին շնորհօքն կացին յանմեղութեան, և երանեցան։ Բայց քանզի բանս 'ի ներկայումս խօսի, երբեւ այժմ եւս յուսացօղս և կարօտեալս շնորհաց, ըստ այսմ ոչ իմանի զնորոգ ստացմանէ շնորհաց, այլ զհանապազորդութենէ տեւոցեալ շնորհաց և երանութեան. զի որպէս զկնի տալ, 'ի ձեռին նոյ է շնորհ կենդանական ամենեցուն՝ թէ ըստ բնական, և թէ ըստ գերբնա-

կամ գոլոյն ։ Այսմ բանի համեմատ խօսի սուրբն Աւգոստինոս ('ի Մեկն․ սաղմ․ ՃԺԸ․ Թիւ 29․) "Այլ ազգ կարօտի արդարութեանն քո հիւանդն, և այլ ազգ մարդն․ այլ ազգ պէտս ունի ողորմութեան հիւանդութեանն, և այլ ազգ մարդն . . . Նա պէտս ունի ողորմութեանն քո, զի մի՛ կորուսցէ զմարդն, և մի՛ անկեալ 'ի շնորհացն քոյ, յաւիտեան զրկեսցի||։

Սերտին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հանգոյն, առ նոյն աղերս ծաղկանոց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

ԲԱՆ․ ՁԳ․

Ա․ Բարձրեալդ անքննին․ զօրութիւն ահեղ․ տէր արարածոց․ թագաւոր երկնի․ ստեղծիչ հրեշտակաց․ [1] գոյարան մտաց․ հաստիչ հրեղինաց․ պետ բարի հոգւոց․ աջ ապաւինութեան․ անդորրութիւն հանգստեան․ [2] տեսարան լուսաւորութեան․ պայծառութիւն բերկրութեան․ ճանապարհ երանութեան․ պատճառ կենդանութեան․ առիթ բանաւորութեան․ փրկութիւն [3] առանց չարաւէ․ առաջնորդ խաղաղութեան․ պարիսպ ամրութեան․ պատուար պահպանութեան․ [4] ցանկ բոցոյ մեծի օրհնութեան․ սահման անխախտելութեան, [5] յիշեա՛ յայսմ ողբերգութեան մատենի բանիս խոստովանութեան և զոր 'ի մարդկային ազնէ թշնամիս մեր՝ 'ի բարի, և արա՛ կատարեալ նոցին քաւութիւն և ողորմութիւն ։ Մի՛ բարկասցիս նոցա վասն իմ՝ տէր, իբրև զնոքս բամբասողաց՝ առ յանձախ սիրոյդ որ յիս, այլ որպէս զչարս կշտամբողաց և իրաւամբք նախատողաց՝ ներեա՛ յանցանաց նոցա ։ Եւ արդ մատուցեալ երկաքանչիւրոցս առաջի քո՝ արդարադատ, [6] ամենք առ մեզ փաստակարագոյնք սակաւուք թերեւս և յիրաւի բամբասելոցս, և ես առ քեզ՝ ամենապարտս, անթիւս և անկշռելիս բազմօրինակ ուխտազանցութիւնս ։

Բ․ Արդ՝ յիշեա զքո մեծութիւնդ՝ տէր, նայեցեալ 'ի յիմս անարգութիւն․ և ընդ խնդրելս իմ 'ի քէն բարի իմոցն ատելեաց, [7] և դու առ քոյս՝ ըստ քում մեծութեանդ՝ անճառելիս հրաշագործեսցես ։ Մի՛ սատակեսցես [8] զիմս խածանողս, այլ փոփոխեսցես․

խլեալ զխոտանս բարս երկրաւորս՝ զբարիսն արմատացուցես, և յիս և 'ի նոսին։ Մանաւանդ զի դու լոյս ես և յոյս, և ես խաւար և յիմար. 9 դու խնկութիւն բարի զովելի, և ես համայնիւն չար ապիկար. դու տէր սուրբից և երկնից, և ես անիշխան շնչոյս և հոգւոյս. դու բարձրեալ 'ի կարեաց զատեալ, և ես տաժանաւոր և վտանգաւոր. դու 'ի վեր քան զկիրս երկրիս, և ես կաւ անարգութեան գարշութեան. դու՝ ըստ մարգարէին, մնաս յաւիտեան յանբաւ բարձրութեան, և ես միշտ կործանիմ՝ ըստ նորին բանին. 'ի քեզ ոչ է մթութիւն կամ նենգութիւն, և ես 10 բովանդակն խոկ եմ՝ որ զաւանդն իմ ոչ պահեցի։ Հա՛ն զիս 'ի բանտէս. արձակեա 'ի կապանացս. 11 զերծո 'ի շղթայիցս. փրկեա 'ի խեղդմանէս. ազատեա 'ի տագնապէս. քակտեա 'ի յերկաթիցս. լո՛յծ 'ի պաշարմանցս. 12 արտաքսեա յերկմտութեանցս. սփոփեա 'ի տխրութեանցս. հանգո՛ 'ի նեղութեանցս. փարատեա 'ի վշտացս. հանդարտեա 'ի խռովութեանցս. ապաքինեա 'ի լալոյս. մերժեա 'ի հեծութեանցս. հեռացո՛ 'ի յողբոցս. կազդուրեա 'ի կականմանցս։ Ո՛ծ ողորմութեամբ և պարգևատու քաղցրութեամբ, մի՛ զգրաւեալս արեամբ հզօրիդ՝ անտես արարեալ ընդվայր կորուսաներ. կանգնեա զհասեալս յափն մահու՝ 'ի բազմավտանգ հիւանդութենէս։

Է. Ո՛հ 13 բարդեցան կուտեցան շրջանակք ամացս ընդունայնութեան, յորմէհետէ յայտնեցեալ ցուցայ յոչպէտս երևեալ, 'ի յանդաստանէ մօրն իմոյ սենեկի՝ փուշս դժնկի՝ մեղաց շառաւիղի. մի՛ լինիր ինձ խայթոց խոցոտիչ՝ որպէս անդ 14 տօհմին յուդայի, և կամ զաւակին եփրեմի։ Այլ քանզի բուսուցեալ անկեցի յոգիս՝ փոխանակ ցորենոյն բարեսերմութեան 15 խոտս խայթողականս ինքնաթոյնս ընդարմացուցիչս, ըստ գրոյն բանի՝ որ երեցն է քան զաւետիսն, զիա՞րդ ոչ կոչեցից զանձն իմ՝ գարշելի անդաստան անիծաբեր փշովք մեղաց հեղձեալ։ Ո՛չ սերմանեցի արդարութիւն, ըստ բանին յովսեայ, և զիա՞րդ հնձեցից և ժողովեցից զկենաց պտուղն։ Նկաւ սոինք կուսութեան անձինս մաքրութեան, ըստ մարգարէին բանի՝ որ առ իսրայէլ, կարօղ ես տէր՝ 'ի նոյնն հաստատել։

Լայնեցի ընդարձակեցի, ըստ մոլեկան բարուցն յու-
դայի, զանկողին կամացս՝ դիւացն հոմանեաց, 'ի
ձեռս քո է ամփոփել դարձեալ 'ի նոյն զգաստութիւն:
Եթէ [16] մարմնապէսն կցորդութիւն ընդ տեսանողին՝
անարատ գործեաց զպտունիկն, իսկ դու փրկութիւն՝
հոգեպէս միացեալ 'ի յիս՝ կրկին մաքրեսցես. եթէ
արեգակնս այս անկենդան՝ ստեղծեալ առ 'ի քէն
երկրիս մատակարար, և [17] զկարակումն մօրից ցա-
մաքէ, և զտհաս պտուղս հասուցանէ, իսկ ստացող-
ամենից՝ հոգիդ Աստուծոյ՝ ո՛րքան զօրեսցես զտիղմ չարեաց
աղտոյ՝ և զթարախ պղծութեան մեղաց մթերից՝ իսկոյն
սպառել: Վասն այսր կանխաւ իսկ ժամանեցի հայ-
ցել առ 'ի քէն բարի՝ ատելեացն իմոց 'ի կարգ այս
բանի, զի զհերքեալ զվնասակարս պարտուց մահու՝
յամենախնամ աջաց հզօրիդ մի՛ մերժեսցես՝ օրհ-
նեալ գթութիւն. արդ՝ կենագործեա զիս զամենա-
մեղս անդամօք մարմնոյս՝ [18] ընդ բնութեան հոգւոյս խառ-
նել միշտ զքոյդ: Իսկ բարեգործացն խնդրել բա-
րիս, բնութեան են օրէնք՝ [19] անբռնադատ կրիցն յա-
րակցապէս առ սոյն բերումն: Քանզի արդարև առ-
միդ այդ պատուէր՝ ամենայն հասակ զօրանայ. իսկ
միւսոյդ երկրորդի՝ առաջնովդ խնամով հանդիպել,
աստուածականիդ է նմանութիւն. յաղագս այսր իրի՝ նախ-
նի դասեցի զթշնամեացն իմոց աղերսանս, քան զե-
րախտաւորացն բարիս:

Դ. Եւ արդ՝ յիշեա զնոսա [20] կրկին ընդ միոյ, որ 'ի
քո անուն բարձրացեալ՝ զանարժանս զիս ընկալան.
և տուր նոցա տէր ամենառատ բարերար և անոխա-
կալ, վարձս արդարոյ և մարգարէի, թէև ես յա-
ւէտ թափուր իցեմ յարժանեաց, ըստ հաւատոց նո-
ցա և առ յոյս նոցին ակնկալութեան, որ առ պար-
տաւոր զերիս՝ ողջամիտ կամօք ակնարկեն, որպէս
թէ [21] 'ի մասանցդ քո կեցուցչաց՝ 'ի պահպանարան
հոգւոյս ծածկութի՝ լիով ունիցիմ: Եւ զպատժա-
ւորս՝ [22] անամփոփելի 'ի քոց տեսութեանց, և յանխա-
բելի 'ի յուղիղ կշռութեանց՝ քաղցր գթութեամբդ ան-
սահմանելեաւ մերձեցեալ առ իս՝ մաքուր արասցես,
անխայտառակելի պահելով 'ի տիեզերական յանդի-
մանութենէ: Եւ որպէս շուք իմն վայելչական ունել

ախորժելի ինձ անարժանիս՝ սիրելիքն քո՝ վասն քո, նայեցեալ 'ի կրօնս զգեստուս բարեկերպութեան, չզիտելով զխիծս գաղտնեայն՝ երջանիկ կարգաւն եղկելոյս, և դու հնարաւոր ամենապարգև օրհնեալ մարդասէր՝ առ բնաւս ողորմած, վասն ամենաթշուառիս հեծութեան հաշտեաց ընդ նոսա ըստ հաւատոց նոցա. ընծայեալ նոցին մասն պարգևեա զանեղծ մեծութիւդ՝ և զանթառամելի զպսակդ՝ յահաւոր աւուրն յետնում հատուցմանն ամենափորձ ընտրութեանն:

Է. Ո՛վ դու ես գրաւ փրկութեան մեծութեան անվաստնելի և [23] անծախ գանձուց ստրկիս և սովեցելոյս, 'ի վաճառ վերնային շահու օգտութեան բանիւդ որ 'ի քէն՝ յարգեալ ձոխանամբ: Կա՛ց ինձ սահման՝ ջրոյ հանգստեան. [24] արձանացո անփոփոխ՝ պատրաստական վստահութի. կարգեա օրհնաբանեալ՝ անկեղակարծ յուսոյ ամրութի. տուր ամենախնամ դու՝ անաչառ պաշտպանութի. սասանեցելոյս՝ բարեաց անդորրութի. տարակուսելոյս լուսոյ ապաւինութի. աշխարհելոյս՝ մեծ երջանկութի. վհատելոյս՝ կենաց օգնութի. լքելոյս՝ անգայթագղելի օժանդակութի. նահանջելոյս՝ անսայթաք վերընթացութի: Ո՛վ [25] քո է բնաւդ, և 'ի քէն է ամենայնդ, և 'ի ձեռն քո բաշխին հաստատութիւք պիտանացուաց համայնից կենաց. և քեզ վայելէ փառք՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

---

(1) Գողարան ծնունդ. այսինքն գոյացուցիչ մտաց և ուղղիչ խորհրդոց. կամ. միտք սաէ՝ փոխանակ իմանալի և հոգեղէն գոյացութեան:

(2) Տեառըան լուսաւորութեան: Երևեցուցիչ լուսոյ. կամ, պատճառ ամ լուսաւորութեան հոգևոր և մարմնաւոր. կամ, դու ինքն առաջատու և կայան լուսոյ. Ը այնմ, բնակեալ 'ի լոյս անմատոյց:

(3) Աստուծոյ չարութեան. այսինքն փրկութի ազատ 'ի մեղսականութեանց. կամ 'ի վտանգաց, որ է ասել, անվտանգ փրկութի. կամ, փրկութի 'ի պատժոց՝ տանջանաց տուգանաց կամ գանից. կամ, փրկիչ միայն՝ տանջանաց կորուսանելոյ:

(4) Ցանկ ջրոյ: Ցանկ կամ պարիսպ հրեղէն. (ըստ զաքար. բ. 5.) որ ունի զքեզ մեծ՝ ոչ այրելոյ երբև զբոցեղէն տուրն շրջապատող ծառոյն կենաց, այլ օրհնութեան, զի է բոց սիրոյ:

(5) Ցնցեալ յոյսս: 'Ի կարգի առօթականն բանիցս զնջութեան յիշեաց և զթշնամիս մեր որ 'ի մարդկանէ, բայց տանել նոցա թողութեն և ողորմութեն, և ոչ 'ի պատուհասել. մի բարկացցիս նց 'ի պատժապարտս իմ, մի

տանել սիրոյ առ ի չխնդրելով վրէժխնդիր. որպէս թէ զօրէն ազգ բամբասիցեն. այլ եթէ զամբիրոսս ոք յիրաւի կշտամբիցեն, այնպէս նե- րողամիտ լեր առ նոսա: Տարակուսանս դուցէ ոք խորհիցի, եթէ իրա- ւամբք կշտամբեն նոքա կամ թշնամանեն. զիարդ այնուհետև յանցանս համարիցի: Բացայայտ է, զի կամ զայլ յանցանս թշնամեացն հայցէ ներել, և ոչ զկշտամբելն զնոքն կոչէ յանցանս, և կամ նոյն իսկ կշ- տամբանք թէ և իրաւամբք արարեալ, նոցա 'ի յանցանս լինի, զի առ թշնամութիւն առնեն զայն, և ոչ յուղղութիւն, նախատեն՝ այլ ոչ սիրեն, ոչ ունին իշխանութիւն խրատելոյ, յանդիմանելոյ, և է ևս՝ զի զհերձուածող զերեսն թողեալ, զշիւղս առաւելնորդաց յանցուցանեն 'ի բերան:

(6) Ոմանք առ մեզ փառաւորագոյնք: Այսպէս կխառադրեալ զատաննն լաւ օրինակք. միայն զքառն ընդրեալ տալով 'ի յաջորդն. թերևս և յիրաւի բաժանելոյս: Իմաստքն են. մատուցեալ երկպառակչութեանց ա- ռաջի քո 'ի խնդրուածս, ոմանք ազգ մեզ թշնամիք են, և քանի ևս մեծա- տակաղք, չարախօսք և չարարարք, մինչ առաւելեալ քան զարժանն իմ. կամ, մինչ պակաս քան զոր ես մխատակալ եմ առ քեզ. և թերևս նաև յիրաւի բամբասեն զմեզ վասն անկարգ գնացից մերոց: Լաւ չարաբարու- թենն պարզելի է. ոմանք մխատակալք առ մեզ, թերևս առ յիրաւի բամ բասեալքս: Եւ ես առ քեզ, և ես ընդ նոսա մատուցեալ առ քեզ՝ գոր- ծոցս, ունօղս անթիւ ախտադանցութեանց. Այսպէս լաւելայն իմանի բառս՝ գործօղ, կամ պարտաւոր: Կամ, հայցականն ախտաղանցութիւնս, առեալ է գործիականն նշանակութեամբ, այսինքն թշնամիք իմ առկա- ւուք մխատակալք, իսկ ես անհամար զանազան ախտաղանցութեամբք, աւասի առաւել ներելի ողորմութեան են թշնամիք իմ, քան թէ ես և այլն:

(7) Եւ դու առ քոյս: 'Ի խնդրելս զքաւի վասն իմոց առնելոյս՝ և զա- առ քո առնելոյս՝ անձառելի բարիս պարգևեսցես ըստ քում մեծու- թեան:

(8) Չինան խածանօղան: Որք լեզուաւ խածանեն զիս բամբասանօք կամ զրպարտութեամբ: Ցայտունի բանս թերևս անհնարին յայն չարախօսս՝ որք զիս վարդապետան մոլորեալ համբաւէին՝ ըստ պատմութենն:

(9) Դու խօխոշ: 1. օրին. խօխոշ:

(10) Բովանդակն ինչ էմ, որ զատանդն իմ ոչ պահեցի: 3. օրին. բառանդակն ինչ իցեմ որ զատանդն իմ ոչ պահիցեմ. 'Ի քեզ ոչ գոյ բնաւ ոչ ազխատուն, և ոչ ներկայութին, իսկ ես բովանդակն իսկ եմ կամ իցեմ. այսինքն թէ ազխատութին եմ, թէ ներկայութին, մինչ զի և ոչ զատանդն իմ պահեմ, կամ պահել կարեմ:

(11) Չերծ 'ի շղթայից: 2 օրին. զերծ, 'ի զերծումն բայէն:

(12) Արփափառ յերկնփութենից: արտաքս հան 'ի կապկածանաց:

(13) Բարբեցան խուփեցան: Ահաւասիկ բարբեցան ամք ընդունայնութե կենացս. ըստ որում 'ի ծննդենէ անտի՝ որով ցուցայ յաշխարհի, ան- պիտան մնացի. մանաւանդ թէ յարդանդէ մօր իմոյ յառաջ եկի իբրև վուշ գծնիկ և շառաւիղ 'ի սկզբնական մեղաց:

(14) Տոհմին յաղայի: Ը բանն ոմանց. (Ե. 12.) * Եւ ես իբրև զխառնել եղէց եփրեմի, և իբրև զխայթոց տանն յուդայի: || Բայց աղաչեմ առէ՝ մի՝ ըստ արժանեաց իմոց գու ինձ լինիր խայթոց, առ ի թխրձելս և խրատրնակս գնալով խրատրնակի:

(15) Իսոփո խայթողական: Փոխանակ բարի առ բանն ցորենոյն՝ անկեցի 'ի յոդւոցս խռսս խայթիչս, որպէս եղինձն և այլ փշալից բոյսք: Իսփու- նոյն, ընդութեամբ թուանաստ. որպէս մորթիքնդն և այլք, որք առա- ռիկ ցուրտ գոլով կամ ջերմ, թոյն լինին: ընդարմացուցիչ, թմրեցու-

ցեցա · ըստ Գրոյն Եսայի , յորում · (լա · 40 ·) * Փափաքանօք ցոլմանց լուսոյն եղեն , և փոխանակ գալստեանն մարմնի ։ || որ էրէցն է քան զաւետիսն · որ նախկին է քան զաւետարանի առաւել որոտմանցն ։

(16) Մարմնացելոյն էջուցանելն ։ Անմատչելի ամենայն ։ (ա · 3 ։) Եթէ այն անմատչելութե մարմնական Ընչեաց զանուն պատնեութեան 'ի կենդանի անուն , կա՛մ առաւել զոր փրկութե ամենայնի՝ հոգեւորապէս 'ի ներքս յիս միանալով , կրկնապատիկ ես մաքրել կարող ես , ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ։

(17) Զհարուածս մորչդ ։ Զգարշ խոստովանութիւն ողորմ ցաւակցուցանէ ։

(18) Ընդ Էութէ հոգւոյս ։ Առողջացոյ զմերձեցեալս ամենայն անդամովք մարմնոյս · զի և մարմինս միաւորեալ ընդ բնական յօժարութե հոգւոյս , զքոյին խորհեսցի · կամ , կենդանացո զմեռեալ մերոց անդամս մարմնոյս , համօրէն ապականեալ էութե հոգւոյս , որ է ասել՝ զմարմինս և զհոգիս ։ Կամ պարզելի է , զիս զամենամերս , այսինքն որ բազմանգամ մեռուցեալ եմ թէ՛ անդամովք մարմնոյս , և թէ էութե հոգւոյս , որ է ասել մարմնով և հոգւով , կենդանացո զի խորհեցայց զքո կամս և զպատուիրանս ։

(19) Անձնաւորապէս էրէջն ։ Վասն երախտաւորաց բարիս խնդրել՝ օրէնք են բնութե , ոչ միայն բանականիս՝ այլև ընդհանուր ամենայն կենդանեաց , ունելով 'ի սոյն զգայութիւն կամ զհակութիւն ինքնաշօժար կրիցն կմ՞ ախորժականաց , յօրանջողէս , խոր ընդարմոյս և անբաժանելի ։ Վասն զի առ մեզ այդ , առ 'ի բարերարել երախտաւորաց՝ որ հրամայեալ իսկ է , ամենայն մարդ ըստ իւրաքանչիւր հասակի , կամ ամենայն կենդանի կարող է և յօժարեալ · զի ըստ ՏՆ բանի , սիրել զսիրելիս , բարի առնել նոցա և ողջոյն տալ , և մեղաւորք և մաքսաւորք յորդորամիտք են , (մատթ · Ե · 46 · 47 ։) Իսկ մեզ , երկրորդին՝ որ է բարիս կամել թշնամեաց , հանդերձեն առաւել լինել , առաջնոյն խնամով , համօրէն բարիս առնելով երախտաւորաց , այս է նմանութե ԱՅ , ըստ որում և ասէ՝ լինել որդիք հօրն երկնաւորի՝ որ ածէ արև և անձրև 'ի վերայ չարաց եւս ։

(20) Կրկին ընդ մեզ ։ Կրկնապատիկ փոխանակ միոյ երախտեաց նոցա շնորհեսցես · և տուր նոցա վարձս ըստ արդարոյ և մարդասիրի · զի թէ պէտ ես յոյժ պակասեալ եմ յարժանաւորութե արդարոյ և մարդասիրի, բայց նոքա այսու հաւատով և յուսով հայյին յիս , և բարերարեն ։

(21) 'ի ձեռանցդ քո ։ Բարերարօղք իմ համարին , թէ յաւազինանկան գործոց՝ որք են մատանք քոյոյ արարչութեանդ , լինել ունիցիմ 'ի յոգւոյս ։

(22) Անաշխատելի 'ի քոց ։ Անթափչելի , անծածկելի ։ Զիս զպատժապարտս՝ որ անծածկելի եմ 'ի տեսութե քումմէ , և չկարեմ զերծանել 'ի քո անսխալ դատողութենէ , մաքրեա՛ աղաչեմ անսահմանելի գթութեամբ , զի մի՛ խայտառակեսցայց 'ի ահեղերական ատենին ։ Եւ զի քո սիրելի ծառայքն կամին պատիւ ինձ գտնել վասն քո , հայելով յարտաքին կերպարանս կրօնաւորութե , և ինձ երանել կարդան՝ առանց գիտելոյ զգաղտնի արատս իմ · վասն այսորիկ աղաչեմ · ըստ հաւատոց նոցա հայեա՛ց 'ի նոսա , և արդարեւ զանթառամ պսակն և այլն ։

(23) Անծախ գանձուց · անսպառելի գանձուց ։ Այս հաստատած բանի՝ ակնեալ անտի , Զի դու ես Գրոց , կատարեսցի ընդ նախընթաց բանին , որպէս թէ ասել · վասն իմոց երախտաւորաց 'ի քէն հայցեմ զհատուցումն բարեաց · վասն զի ինձ անանկիս դու ես զբաւ կամ առհաւատչեայ մեծութեն անսպառ գանձուց , Դու Ճշմար , 'ի բաշխումն երկնայինն

օգտից ։ Բանզի որ ՚ի ժէն, բանիւ իշխանութեանն քահանայութեան և վարդապետութեան, որով ՚ի քէն յարգեալ ձոխանամք․ իբրև թէ՝ այսպիսի իշխանութեամբ գոլով կարգեալ մատակարար շնորհաց քոց՝ իշխեմ ՚ի նոյն գանձուցդ առնուլ մասն վասն իմոց բարերարաց ։

(24) Աղջամուղջ անփոփոխ ։ Հաստատեալ, առ ըստ անդրութեամբ զաղաստանա և գլխաւոր վառահութեան ՚ի բարի գործս կամ ՚ի մէջ վտանգաց ։ Կարգեալ իսկ անկեղծաւորն, աներկբայելի յուսոյ ամրութեան ։ 2 օրէն․ անկարողական ։

(25) Քո՛ է Բեւսը ։ Այդ ամենայն զոր հայցեմ, քո՛ է առանց նուազելոյ․ և ՚ի ժէն է ։ ՚Ի քէն ունիմ զեամ, և մեզ ՚ի քէն միայն պարգևի՝ և ոչ յայլմէ, և ՚ի ձեռն քո բաշխին հասարակութեանց ընդհանուրց, զարմանք կամ զօրութիւնք ազնուոյից ամենեցուն կենաց ։ 2 օրէն․ հասարակութեան, զի շահին կամ պատշաճութիւնք իւրաքանչիւր բաւականին ։ 1 օրէն․ հասարակութեան, համեմատ շահից ։

Մերտին յաւելուած հրէին հեծուած՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս նարեկացւոց բանի ։

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

ԲԱՆ․ ՂԴ․

ա̄․ Արքայ երկնաւոր․ թագաւոր բարձրեալ․ տէր բոլորից․ ամենից ակնկալութիւն․ ստեղծող տեսականաց․ հաստիչ իմանալեաց․ [1] պատճառ եղանութեանց․ կազմիչ հանդերձելոց․ տուիչ լուսոյ․ առիթ առաւօտու․ պատրաստիչ վաղորդայնի․ երևեցուցիչ երեկորի․ տարրիչ խաւարի․ [2] արուեստաւոր բարեհնար․ իմաստուն գործօնեայ․ [3] քաւարան օրհնեալ․ հալիչ մեղանաց․ հալածիչ ցաւոց․ քակտիչ դառնութեանց․ պահպանարան հանգստեան․ [4] հնարք նիրհման․ յարմարիչ քնոյ․ պարգևիչ ննջման․ շնչոյ յարակարգութիւն․ զգայութեան տևողութիւն․ ցրիչ ցնորից․ յեղանակիչ անրջոց․ փոխարկութիւն զարհուրմանց․ այլայլութիւն տխրութեանց․ խափանիչ խիթմանց․ ընդարձակիչ կարծեաց․ [5] համադրութիւն ծրփմանց․ ահագնութիւն խարդախմանց․ հարուածիչ դիւաց․ փախուցիչ ախտից․ ընկղմիչ գայթագղութեանց ։

բ̄․ Պաշտպանեալ երկնաստեղծ ձեռամբդ․ զօրացեալ բարձրացեալ քո աջովդ․ ամփոփեալ ամենակալդ թևօք․ ծածկեալ ա̄ծեան խնամօքդ․ ամրացեալ վերակացութեամբ վերնայնոցդ․ շուրջանակի պարսպեալ զօրամարտակօքդ անմահից․ ՚ի յամենայնուստ պարփակեալ

կցորդութեան հրեշտակաց. վանեալ զընդդիմամարտն իմ՝ զինուորութեան զուարթնոց. պատսպարեալ զսասանեալս՝ Ածածնիդ մաղթանօք. զբանակս անդրանկացդ՝ [6] բարեկարգեալ ինձ պահապան։ Նաւց [7] ընդ աչացս դիմաց՝ և զմտացս իմ տեսանելիս. զզգաստարա ընդ ոգւոցս՝ և զծանրաբեռն կրիցս դանդաղութի. վերացո տէր 'ի զգայութեացս՝ զմածեալս յիմարութի. բարձ միայն բարեգործ՝ զպատրուակիս թանձրութի։ Ընդ սկզբան [8] բերմանս լուսոյ՝ զողորմութի քո ծագեա. ընդ ելից արեւուն՝ արդարութե արեգակնդ 'ի յանձկութի սրտիս մտցէ. Ճառագայթ քո փառացդ՝ 'ի յիմաստիցս խորհրդանոց ջահեսցի. խաչիդ տեառնագրութի՝ ընդ շունչս և ընդ մարմինս համասփիռ տարածեսցի։ Յանձն առնեմ քեզ յաւուրս՝ զքո յարմարեալ տաղաւարս պահպանաւ ոգւոյս՝ որ 'ի սմին։ Զի դու ես Ած անքնին, առ ամենեսին բաւական, և յամենայնում բովանդակ, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

(1) Պատճառ եղանակէնց։ Պատճառ կամ ներգործօղ եղեալ իրաց, որ գոյացեալքն են։ Կարծէ հանդերձեալց. յօրինօղ ապագայ իրաց, որք լինելոցն են։ առիթ առաւօտու, պատճառ առաւօտեան ժամուն, յորում ծագէ արեգակն։ պարբառիչ շղարշային, ժամուն յորում բարձրանայ արեգակն։ փարբիչ խաւարի. գոյացուցիչ գիշերային ժամանակին՝ յորում ծածկի արեգակն։ Այսոցիկ ժամուց պատճառ ասի Ած, իբրև զի նա ստեղծ զարեգակն և զլուսին, և զնոցա զել և զմուտ այնպէս կարգեաց, զի անվրէպ կանոնաւ յաջորդեսցեն միմեանց տասցեալ ժամքդ, և որպէս սահմանեացն, նոյնպէս պահէ միշտ. ըստ այնմ. * Եթէ խափանիցէք զուխտ իմ զտուընջեան, և զուխտ իմ զգիշերոյ || ևն. (Երեմ. լգ. 20։)

(2) Արուեստաւոր բարեձևութ։ Ըստ որում Ած հնարեաց՝ թէ զուղիղ բանութեն իւրաքանչիւր իրաց, և թէ զմարդկային արհեստս, լուսաւորեալ զմիտս մարդկան 'ի գիւտ այնց, և 'ի բարւոք կիրառութի նոցա, ըստ յոբայ. (լը. 36.) * Ո՞վ ետ կանանց իմաստութի ոստայնանկութե.* ևն։ Իմաստութէն գործմնէ, Ած գիտութեանց առաջնորդ, կամ յաջորդիչ առ մարդիկ։ Գիտ մարդկային հմտութեց լինի ապաքէն խուզիւ մարդկային հանճարոյ. բայց ներքոյ՝ Ած է որ զմիտսն լուսաւորէ. այլ և բուն նախկին գիտութեցն որ յադամ, Ած ինքնին է տուիչ։

(3) Քաւութեան օրհնէալ։ քաւիչ մեղաց և պատժոց, ոյր վասն ամենայն օրհնութե արժանի ես։

(4) Հնարք ննջման։ Ըստ որում Ած կարգեաց 'ի բնութե կենդանեաց զհանգչումն զօրութեանց 'ի խելապաշտակն, որով ծանրանան և թմրին զգայութիւնքն, այս է՝ ննջումն. որում զհետ գայ քուն, այն է՝ կապումն զգայութեանց. և զկնի զհետ գայ ննջումն, այն է՝ յերկար հանգիստ

պղծութեանցն, և բոլոր մարմնոյն ։ Եւ յայսմ անզգայ հանդարտեան մարմնոյն՝ տակաւին պարզեալ են ծնողաց յարակարգութիւնք, զհանդարտաբար-գութիւն տուրեալ շնչոյն․ կամ, ինքն ած է շնչոյ յարակարգիչ ։ Ցրուէ զփրկական երևմունս յերազի․ զմտաւորական երազս փոխարկէ 'ի բարին ։ Փոխարկութիւն ալբհաւրմանց․ փոփոխէ կամ բանական զարդհաւրանն՝ որք լինին յերազի կամ յարթնութեան ։ Այլայլութիւն փլուռութեանց․ փոխէ 'ի խնդութիւն զտրտմութիւնս կամ զտրտմալի իրս, որ յերազի կամ յարթնութեան ։ Խափանիչ խիթմանց, խափանէ զխիթիչ ցաւս, կամ զանձկութիւնս սրտի, որ ներգործին 'ի հաւաքմանէ արեանն ։ Ընդարձակիչ կարծեաց․ փարատիչ մտաւորական խորհրդոց երկակայութեան՝ որ լինին 'ի քուն կամ յարթնութեան ։

(5) Համարձակութիւն ծոցմանց ։ Հանդարտութիւն կամ խաղաղեցուցիչ խռովութեանց սրտի ։ Ահագնութիւն խորդանմանց․ Անհայտացուցիչ խարդախութեանց դիւաց կամ մարդկան, որք 'ի քուն կամ յարթնութեան կամին մտանել մեզ ։

(6) Բարեխարգել ։ մի օրէն․ Բարեգործեալ ։ Ցեռ խնդրելոյ զպաշտպանութիւն հրեշտակական դասուցն, և զբարեխնամութիւն սոյն Աստուծոյ, յաւելուլ թէ զգանապէս անդրանկացն կարգեալ 'ի պահպանութիւն, յայսնապէս զՍուրբս 'ի մարդկանէ ցուցանէ անդրանկացն անուանն ։

(7) Ընդ ալոյս դիմաց ։ Բայց, լուսաւորեալ ընդ զգայլի աչացս՝ որք 'ի դէմս իմ հաստատեալ են, նաև զհայեցուածս մտաց ։ Զգուշ աչա, թեթևացոյ, զօրացոյ Է մարմնոյ շնչոյս՝ նաև զծանր կշիցս դանդաղութիւն․ Զի զծուլութիւն, պղերգութիւն՝ որ 'ի կշից քնոյ ծանրանայ ։ Զերծո, փարատեա 'ի զգայարանացս զմածեալս յիմարութիւն, զթմրութիւն, զանդգայութիւն հոգևոր իմաստից․ այլ և բարձ զպատրաստուն թանձրութեան, զթուլութիւն մարմնոյս, և զզբաղումն 'ի թանձր առարկաս զգալիս ։

(8) Բերմանս լուսոյ ։ Ցայտ է 'ի բանէս սատի և յայլոցն ևս, զի այսու զօթք արարեալ է վասն առաւօտեան ժամուն․ վասն որոյ հայցէ ընդծայման լուսոյ՝ լուսաւորել և զմիտսն ։ 'Ի յիմացիցս խորհրդանոց․ զի ծառայայթ երևացն ԱԾ, այսինքն իմաստութիւն, խոհականութիւնս փայլեցէ 'ի գլուխն, որ է տեղի և գործարան խորհրդոց՝ իմաստից․ զի նշան խաչին, և յիշատակ տէրունական չարչարանաց տպաւորեալ կայցէ 'ի հոգի և 'ի մարմնի ։

Մերօրէին յառաջեալ ներքին հեծութիւն՝ նորին հանդերձ առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ԱԾ ։

ԲԱՆ. ՁԱ.

ա. Իսկ արդ՝ վասն զի [1] արթնականն մեր զուարթութիւն՝ քեզ ննջումն իմն է համարեալ, իսկ 'ի խոր թմբրութիւն լռելն՝ վասն ուղիղ հաւատոյն 'ի քեզ՝ անթարթափ բացութիւն աչաց, ուղղեա հոգւոյդ քո իմաստութեամբ [2] զյաջողուած ձեռինս գործոյ՝ ընդ հեծութեան ձայնիս մաղթանաց ։ Զօրացո տէր՝ 'ի հանդէս բարի ջանաւորական [3] արի վաստակոյ․ կցորդ-

լեր կարեկացս տկարութե՟. 4 Թեթեւս կացո զաշխա-
տութե՟ս այս սկիզբն. արագեա՛ մի՛շտ կարօղ՝ զյա-
ռաջադրեալ ձեռակերտս. դիւրաւորս ընթացո 'ի
յաւարտումն լրմանն։ 'Ի վախճան իրին՝ բերկրու-
թե՟ զիս հասո. ժամանն կացուսցես՝ 'ի հանդիպումն
յուսոյն. կցո՛րդ լեր ուղւոյն՝ 5 Ճանապարհիս ընթա-
ցից. 'ի Թուիչս ամբարձմանն՝ փութացուսցես յօդ-
տակարն. ընդ աջմէ իմ լերիս՝ 'ի վտանգի ծանրու-
թե՟ն. զձայն քո լուռ՝ 'ի յանձկութե՟ն պահու. ձե-
ռամբ քո կեցո՛ 6 'ի կորստեանն ժամու. մատամբ քո
ազդեա՛ 'ի սահմանին անձկութե՟. հարթեա՛ զխորոց՝
ամենաչար խափանմանն. հոգեղինին առաքմամբ,
ըստ ամբակումայ, ինձ հնարեա՛. բան ինձ շնորհեա՛
'ի յատենի բազմութե՟ն. իմաստութի՟ յիս տնկեա՛ 'ի
հանդիպման քննութե՟։ 7 Ըմպով կամաց քոց հովա-
նացիր հրաշապէս. հանդարտեցո՛ փայտիւդ կենաց՝
զծովուս մրրիկ. սանձեա՛ զաստեաց կենցաղոյս պատ-
կեր՝ քոյին հրամանաւդ. քանզի թէ աստ ողորմութի՟
քո տէր՝ կամեսցի, այս լուծութի՟ կոհակաց կարծր
է քան զվէմ. և թէ 'ի ցամաքի անտես առնիցես,
իբր զանկայուն՝ պնդութի՟ յատակիս 'ի ներքոյ աստի
հոսեալ սասանի։

Է. Արդ ընկա՛լ յն զպաղատանացս ձեռնարկութի՟
քեզ 'ի հաճութի՟, և արա՛ ինձ 8 զամենակարծն զայ-
թագղութի՟ մեծ վստահութի՟։ Որպէս 'ի ջրահեղ-
ձոյց ամենակործանն դարու, որք 'ի հարթ տարած-
ման գետնի առանց երկիւղի յանհոգս կէին, յողոր-
մութէդ ամայի մնացեալ՝ կորուսան. իսկ ընդ հովա-
նաւոր 9 մածուածով լաստիւն յօգնատատան հիմանն
հայթայթանօք՝ յանուն գթածիդ յեցեալ պահե-
ցան. ընդ որս՝ և զազաչօղս մշտատատան՝ 'ի նաւա-
հանգիստն խաղաղութե՟ մարդասիրապէս պրծեալ
ապրեցո՛. 10 վարձս 'ի քոյոցդ ընդ իս բերելով հոգևոր
շահից, զստորաբերս այս ստուարութի՟ պարտուցս
լքեալ բանիդ առակաւ, 'ի քեզ տէր անկայց միա-
ցեալ իսպառ անբաժանելի՝ օրհնեալ յամենայնի։
Նաև կցորդելով այսմ մաղթանաց հոգեղէնքն ամե-
նամաքուրք՝ ընդ հողեղինացն մարտիրոսաց, որք
ջրով և հրով փորձեցան, և 11 յելից զերծմանն ընդ

մեր խնդրեցին, և մեզ յիշատակ թողլին օգնութեան, ասասցեն ընդ մեզ համաբանաբար զուգամամանութեամբ՝ եղիցի եղիցի :

---

(1) Արթնականն մեր : Մարմնով միայն արթուն լինելն մեր՝ առանց հոգևոր զգաստութեան, առաւելի քո երբ քուն համարեալ է. ըստ այնմ (Եփես. Ե. 14.) * Արի որ ննջեսդ : || Եւ ընդ հակառակն՝ ՚ի խոր քուն կալն մարմնով քեզ երբեք անփակ բացումն աչաց համարեալ է մը̃ տեսութեան ուղիղ հաւատոյն առ քեզ, որով աչք մնացեն միշտ արթուն են. Ըստ այնմ (Սաղմ. ԽԳ. 15 :) * Աչք իմ յամ ժամ առ Տր : || Սկսեալ աղօթիցս յայն հայի, թէ ոչ զի զգաստացեալ ՚ի քնոյ՝ կարօղ եմք ձեռնարկել ՚ի գործ իւրաքանչիւր, այսորիկ աղագաւ անկարօտ ենչ իցեմք Ա.Յ յաջողելոյն : Վասն զի այս մեր արթնութիւն երբեք զքուն թանձր համարեալ է առ ՏԾ, ինքնին անգործ և անբաւական. ուր ընդհակառակն՝ հաւատով վառահել յԱԾ զօրաւոր է երբեք զքուն արթնութիւն, թէ և ոք խոր ՚ի քուն կայցէ : Վասն այսորիկ պիտոյ է և վասն ցերեկի գործոց պաղատել առ ԱԾ :

(2) Զյաջողուած ցերեկին գործոց : Ոմանք իմացան զյաջողութիւն աղօթական գրոցս : Բայց ՚ի կարգէ բանիցն յայտնի է, զի և այս աղօթք վասն առաւօտեան ժամուն ասացեալ է. ուստի հայցէ զյաջողութիւն ամենայն գործոց՝ զոր յաւուրն առնելոց է իւրաքանչիւր ոք ըստ իւրում վիճակի և պաշտաման. խնդրելով զի յաւուր հաստատեսցէ ՏԾ զիւրաքանչիւր գործս ըստ իւրոց հաճոյից. և զխոստակարան կամ զարգելան խափանեսցէ :

(3) Աջէ վտարելոյ : ՚Ի գործ պահոց, լռութե, ապաշխարութե, պղծութեց, եՆ : Զօրացո ասէ՝ յորժամ առաւել կայցէ ինձ ձեռն արկանել ՚ի գործ տաժանելի և բազմավաստակ, թէ առանձնաւոր գործ իցէ, և թէ հասարակաց : Եւ եթէ ոչ ինքնին ծանր իցէ, այլ առ իմում տկարութե, դու լեր կցորդ :

(4) Թիկունս կոյս : Օգնելով տկարութեանս՝ թեթև արա ինձ զանկիրթն այսր աշխատութե. կամ, փոխադրութ հոլովոյ, թեթևացո զաշխատութիւն ակզբանս. որովհետև յամենայն գործս՝ սկիզբն տաժանելի է միշտ. և թիկունք, յառաջեցո զառաջիկայ ձեռագործս : Յինքնաւորս, զիւրաբաշ յաջողեալ ՚ի վճարումն գործոյս. և այնպէս խնդութ հասո ՚ի կատարած երացն, և ՚ի հանդերձեալ յաւոյն, ՚ի տեսութիւն յուսացեալ իրին, կամ օգտին՝ զոր ակնունիմ ՚ի գործոյ աստի :

(5) Ծառայարհեաւ ընթոյիդ : Ընթացից սկսեալ գործոյն, կամ, ուղևորութե, զոր վասն հոգևոր կամ մարմնաւոր գործոյ առնէ ոք :

(6) ՚Ի նորոգեալն ժամու : Յորժամ վասն ինչ լինիցի : ՚Ի ատեհմանին անչհուեէ. ՚ի ժամու դժուարութե գործոյն՝ մատուցանել քո օգնեա : ամենալար խափանմանն. բարձ զարգելս մեղաւոր խափանմանն, հոգեղինին տուողմանք. առաքմամբ հրեշտակին ինձ ծարակ շնորհեա ՚ի տուե, կամ յայլ անհնարին դիպուածս, որպէս զանկեցլի արարեր ՚ի ձեռն ամբակումայ : ՚Ի հանդերձեալն փնտռէ. խնամածուցո զիս ՚ի քննելն զչամս Տր գրոց, կամ զճշմարտութիւս հաւատոյ, և զմոլար վարդապետութիւս :

(7) Անղուհոմոյ : Զանցս իսրայէլացւոց ընդ ծովն կարմիր՝ յարմարէ ՚ի բանիս. ՚ի նաւարկելն իմ ասէ՝ առաջ խնամոցքոց հովանի լեր. և զօրութեամբ Տր խաչին հանդարտեցո զալիս. սանձեա զխռովեալ ծովն, որ է պատկեր վրդովեալ կենցաղոյս : Վասն զի յաղոթելեք՝ լյծ ակք

ծովու կարծր լինելին քան զվէմ. իսկ եթէ 'ի ցամաքի անտես առնիցես, անդուլթեն զեռանցս երբև զանկայուն ինչ 'ի խորոց անտի թուլացեալ սասանի ։

(8) Զամենակարծն ։ Զայրծ երկիւղալի զպայթակցութեանն կամ վտանգն՝ փոխեա 'ի մեծ վստահութիւն. մի օրէն. զամենակարծրն. զի զպայծ կարծր կամ զծուարին արգելս գործոցս ։ Եւ որ առի, զպաղատագանոգս յետանոքնութեն, զի կարգեալ բան. մի օրէն. զնէ՝ յօյնորէնութեն ։

(9) Մածուածողլաստին ։ Տախտակամած շինուածով տապանին, յոփ-նափառան հիմանն հայնայնանօք, նպաստուիւք շարժական հիման տապանին՝ որ տատանէր 'ի վերայ ջուրցն ։

(10) Վերջն 'ի փոյոյ ։ Արժանաւոր գործս բարեաց ընդ իս բերելով 'ի քո հոգևոր շնորհացդ. որպէս նոյեանն զոր կենդանեացն համեն 'ի տապանէն քեզ 'ի պատարագ, զօփոխուերս այս, զկայնահամ ծանրութեան պարառուցս՝ առանց թողուլ, բանիւ առաւ..., ըստ նմանութեան յիշատակեալ բանիւ փրկութեան նոյի. որ զառաւել կատարութեան տապանին եթող, և միայն նը պատարագօքն եկեալ, քեզ յանդիմանն եղև ։ Հին բան. 'ի յանջորդն յարէ զայս, որպէս թէ առ հայր ասել. ըստ օրինակի բանիդ 'ի քեզ միացեալ հայր, որպէս և նա. զի ասաց. հայր զու յիս, և ես 'ի նմ. զի և նոքա 'ի մեզ եղիցին ։ Այլպէս մեկնէ, ոչ հայեցեալ թէ առ քն է աղօթքս. որպէս և տեսանի 'ի համարն ը. Աէր՝ ընկալ զի զաղա-ղափանոցս, ևն ։ Վասն որոյ ըստ այդմ մտաց առնուլ են, և առ քն ուղղեալ, այսպէս իմանալի է. Ը բանիւդ քո քն՝ որով ասացեր, եղիցին 'ի մեզ, միացայց և ես անբաժանելի ։

(11) Ցնւից ղէրծանն ։ Մարտիրոսք՝ որք 'ի մահուն խաչեանց վասն մեր խնդրեցին, և յիշատակ օգնութեան թողին զվարս և զնշխարս խաչեանց, համաբանաբար զուգամասնութե, միաձայն կցորդութեամբ առասցեն ընդ մեզ. Ամէն ։

Մերոյին յառեղուած հրէին հեծութեն՝ նորին հոգւոյն, առ նովի ողբոց մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ձյ ։

ԲԱՆ. ՁԹ.

ա. Ընդ այսր հառաչանաց թախծութեան ողբոց՝ 'ի բազմաց կերպից շարակարգելոց, և ամենից հոգւոց ողորմեալ, գովեալ և երկայնամիտ թագաւոր ։ Նաև այնոցիկ առաւել՝ [1] որոց հատեալ է ակն կալութեան փրկութեան կենաց. որք ննջեցին անպատրաստաբար՝ շիջեալ լապտերօք իւղոյն պակասութեամբ ։ Ահա յիշեա՛ տէր իմ զթութեան, և [2] 'ի յայս ես պատճառ իրաւունս ինձ գրեա ։ [3] Բանզի թէ և 'ի փառս ահաւորութեան սքանչելեաց մեծիդ՝ հակառակօքն հանդերձեցեր զկազմած մարդոյս, [4] զոմն ծանր՝ և զոմն թեթև. զմին զօլ և զմիւսն հրային. զի դիմադրու-

թեան 'ի հակառակացն հարթ պահեցեալ՝ արդամբ կո-
չեցուք հաւատարիմ հաւասարութեան. 5 և 'ի յայսմ
դարման առաքինութեան վերաբերեալ ընդ ամբարձե-
լոյն, զխոնարհութիւն առ կաւն դիտման անմռուաց
պահեալ՝ պսակ ընկալցուք ճգնաւորական ։ Այլ
քանզի յայսմ կանոնէ ուխտի վրիպեցաք, և անաս-
նաբար սահեցմամբ ըստ հողոյն զիջման՝ ընդ երկիր
մածաք, 6 այլ ոմն ախտիւ, և այլ ոմն անգթութեամբ, միւս
մամն մոլութեամբ ամենաբաղձ կերակրոց՝ իբր գազան
մշտաքոյծ՝ յարակայ կապեալ ընդ բնութեանս ։ Իսկ 'ի
քառիցս՝ 7 ոմն անըմբռնելի և անողոքելի սլացմամբ
'ի բաց ոստուցեալ՝ վայրենապէս ամբարտաւանէ.
Եթէ ջեռնումք տապով սիրոյն որ 'ի քեզ՝ նշխարաւ-
քոցոյն որ 'ի մեզ, ցուրտն առընթեր կենակից նմին՝
զնոյն կասեցուցեալ, բարւոյն ընդմիջէ. Եթէ օդա-
կանաւն հրեշտակայնովն յառիցիմք 'ի քեզ, ծանրու-
թիւ թանձրաւ անդրանիկ նիւթոյս այս հողոյ՝ 'ի ստորև
քարշեալ խափանէ ։

Զ. Եւ արդ՝ 8 յամենուստ պարտեալ և խպառ-
լքեալ՝ իբր զապիկար հաշմեալ հերքեցայ կորեայ
վանեցայ. վատնեալ 'ի բազմաց՝ 'ի մահ գրաւեցայ.
վասն որոյ 'ի պարգևականէն զրկեցեալ՝ յողորմութենէն
կողմ նայիմ. և պատկառեալ դիմօք համայնից տե-
նօղս՝ զանաւից աղերսաբանեմ զմեռելոցն՝ քեզ կեն-
դանեաց. քանզի կարօղ ես յաւէտ հնարիւք և կո-
րստականացն ըստ իս մեռելոցն. ամենայն ինչ քեզ
զօրելի է. նա զի՝ և ընդ անտկար կարելոյդ՝ և կա-
մելդ է ախորժելի ։

Է. Արդ՝ այսց 9 երկուց բարգաւաճ շնորհաց նո-
րոգչաց՝ առ միմեանս եկեալ՝ կարելն ընդ կամելն,
բարձեալ եղիցի և յուսահատութեան վհատութիւն ազ-
գաց մեղաւորաց. և ժամանեալ հասցէ աւետեացդ
լոյս՝ հոգւոց բժշկութեան քումդ հրամանի՝ տէր ամե-
նայնի, օրհնեալ յաւիտեանս. ամէն ։

(1) Որոշ հարցեալ է ։ Անհնարին է կարծել, թէ այսու բանիւ խնդրիցէ սա վարդապետս զողորմութիւն վասն յուսահատ և անդերձ մեռելոցն. զի այդ ոչ միայն օտար է 'ի ճշմարտութենէ, այլ և հակառակ բազում բանից՝ որովք սա վարդապետս յաղօթս իւր ցուցանէ, թէ անդերձ մեռելոցն չիք ողորմութիւն 'ի հանդերձեալսն. որպէս 'ի բանն ՀԹ. Ջ.

* փառաւորեալ զԹոյն, և արդարեալ ողորմութեամբն ։ || և զկնի. 3. * Ուր զօրանն բազմեսցի ողջոյն առաջեցէ, վասն հեղեալ զԹութեանն առ. իս ։ || և զկնի. Հաւատացմունքս հեծութեան, ևն ։ (տես և 'ի բանին ձա. լծ. 8 ։)

Այսպէս հարկաւ զայլ մեռս անկնարկէ առաջեալս ։ Ոմանք խմնդան՝ ոչ զմեռեալ մարդոց, այլ զկենդանեացն՝ որք 'ի քուն ծուլութեան նստեն ։ Բայց զայդպիսեաց ոչ ճշմարտի ասել, թէ հասեալ է անկեալութեան փրկութեն. և նոյն խակ մուս բանին ցուցանէ՝ թէ վասն մարմնով մեռելոց է աղօթքս. զի ասէ, Է այլ խնդրուածս՝ զոր զանազան օրհնակաւ կարդացի, ու ամենից հոգւոց ողորմեա. որպէս թէ ասել, վասն կենդանեացն բազմօրինակ պաղատեցի, այժմ և վասն մեռելոցն աղերսեմ ողորմել, մանաւանդ վասն այնոցիկ հոգւոց՝ որոց անկեալութեն փրկութեն պակասեալ է. Վասն որոյ խնամուլի է բանս վասն այնոցիկ, որք 'ի մեղաց դարձեալք, ծուլութեբ կամ աղաղահաս մահուամբ փոխեցան յաշխարհէ՝ առանց ապաշխարութեան. որոց ոչ են մնայ յոյս՝ եւրեանց արժանաւոր գործովք փրկել 'ի պատուհասից արդարութեանն այլ, այլ կրկեսք պատարագն վճարել. և 'ի սոյն միտս յարէ, որփ ննջեցին մողաքբեաց մաքուր, այսինքն առանց պատարաստութեան բարի գործոց. զի թէպէտ պատարագ հաւատոյն ունէին, և զսեր առ փեսայն Քս նորոգեցին՝ յառնելով Է ամաւջ նոցա, այլ չունէին զիւղ բարեգործուէն ։ Այսպիսիքս ասէ՝ առաւել ակեաս ունին ողորմութեն. զի որպէս ասէ 'ի բանին. հզ. 1.

* Անդ է ողորմելն խակապէս, յորում հասաւ անկեալութեն վասա կոյն ։ || Ամ. յեչեալ զնոսա ընդ իմ, ևն ։

(2) 'Ի յոյս նա պոփձաւ ։ Ոմանք մեկնեն, այսու պատճառաւ՝ զի մե այնպիսի հեղգացելոց ողորմութեն հայցեմ, զու են խրատուցնս համարձակ խնձ ողորմել ։ Մարթ էր և այսպէս խմնդալ. այսու պատճառաւ, զի ողորմելովդ այնպիսեաց, 'ի մերայ իմ նոր խրատուցնս բարերարութեան զգեա. կմ, զիս համարձակ քեզ պարտական ։ Ամակայն առաւել համաձայն կարգի բանին այսպէս խմնդալի է. Թէպէտ և յեշատակեալ անապաշխար մեռեալքն անկեալ են 'ի ձեռս արդարութեն քո, և վասն հեղգ. կենացն չեն արժանի ողորմութեն, բայց զու յոյս խնդիր իմ առաջ խնձ խրատուցնս, կամ խրատուցի համարձակ, հայեցեալ 'ի գթութեան քո, որում բաւական է և փոքր խրատուցնք ։ Զպատճառս խրատուցն 'ի յառաջադոյն ցուցանէ ։

(3) Քանզի բէլա 'ի քուռս ։ Համառօտ խմնդալ բազմանդակ բանիս այսպէս պարզեն ։ Թէպէտ և 'ի ցոյց պզանչելի զորութեն քո՝ հակառակ առաւ ինչ յարմարեցեր զմարմին մեր, զի հակառակութեն միոյն՝ միւս ներհակաւն չափաւորեալ, պահեսցի 'ի մեջ արդար հաւասարութեն՝ թէ 'ի բնական առողջութեն, և թէ 'ի բարոյական ուղղութեն ։ Բայց քանզի անտանելապար վարեցաք, նոյն խակ հակառակուէ ամպերոցս խափան եղև մեզ առ բարին. զի յորժամ հրով սիրոյ Ջերմանամք, զմուութեն Ջրոյն չեՋուցանէ, ևն ։ Վասն այսորիկ 'ի կազմութեն մերում մեղքն առաջակա նելոյ՝ կամ արդեօք բարւոյն, և հակուածն 'ի չարն ։ Եւ յայսպիսի զեմանմարուութէ սկսարգեալ մեղանչեմք. և հեղգանամք 'ի գործս ապաշխարութեն. և յայսմ պատճառաւ են ընկալք ներելի ողորմութեն ։ Այս այս է խրատուցնքն՝ որոց վասն համարձակիմ խնդրել ողորմութեն վասն անապաշխար մեռելոցն. զի ցուրտ և Թանձր բնութեան մեր կասեցոյց զնոսա 'ի փութոյ ապաշխարութեն ։

(4) Զոհ ծանր ։ Աստուածոյ ոհ և ոհ ոչ զմարդոց ասէ, այլ զաստուածոց. զոհն 'ի հակառակացդ ասէ՝ եղեր ծանր, այսինքն զհոգին, և զմիւսն թեթեւ, զոգին ։ զմին՝ զով. ցուրտ, այսինքն զջուրն, և զմիւսն հրոյին, Ջերմ, այսինքն զհուրն ։

(5) Եւ 'ի յոյսն պարծիմք : Եւ այսու դարմանաւ առաքինութեան, զի հաստատութեամբն, մխիթարեալ ընդ անձանցն, 'ի վերանալն կամ 'ի բարձրանալն ընդ հոգւոյն որ վսեմականն է. կամ, ընդ անձանցն, այսինքն ընդ հոգւոյն՝ որ 'ի բարձրն դիմէ, պղատոնականքն առ նաւն, դիտնարհութեն և զնուաստութիւն մեր հայեցմամբ առ հող մարմնոյ՝ անձնանց պահեսցուք. որով ընկալցուք զյաղթանակ ձգնութեն : 3. օրէն. և հէն լուծ. Ի 'ի յոյսն 'ի պարծանս. և մարթ է մեկնել. այսու որոշմամբ կամ ընտրութեամբ առաքինութեան :

(6) Այլ ոչ ամօթի : Իբրև զմնասութեամբ 'ի հողեղէնս յարեցաք, ոմն առաւել գիջութեն մարմնոյ, որ յառաւելութէ ջերմոյն և խոնաւոյն լինի : Ի այլ ոչ անգթութիւն. միւսն՝ բարկութիւն, որ 'ի հողայինն մաղձէ լինի, և 'ի գոլորշեաց՝ որք օդոյ նմանն խառնեն զնմին. և այլ միւսն՝ որկորամոլութիւն, որ 'ի ցամաքութէ կամ 'ի ցրտութէ հողոյ լինի, կամ յանչափութէ ջերմոյն՝ որ սպառէ զկերակուրսն : Սոցա իւրաքանչիւրն կապեալ կայ ընդ իւրովին, ընդ բնական խառնուածոյս՝ իբրև զաղանն մշտնջենաւոր, միշտ մնացեալ յիւր անորժական կերակրոց : Այսու բանիւ ոչ եթէ սուգանէ զբնական խառնուածսն, կամ զնոսա սաէ պատճառս իւրաքանչիւր մոլութեց. այլ զի մարդն անասնաբար վարելով, բաց թողեալ խառնուածոցն գործէ, և սատանայ զմոլութիւնսն :

(7) Որ ետ առ մեզ զհոգին : Պատահէ՝ զի 'ի չորից տարերացն՝ կէս 'ի խառնուածոց՝ մին առաւել լինելով թոյլութեամբ բանականին, 'ի բաց վարէ 'ի միաբանութէ այլոցն. և իբր վայրենի՝ ամբարտաւանէ 'ի վերայ հակառակին : Որպէս եթէ երբեմն ջերմանամբ 'ի սէր քո բնական կամ գերբնական 'ի ձեռն շնորհաց քոց, նշխարաւ իւրոյն՝ որ 'ի մեզ, մխացուածով ջերմութենն՝ որ 'ի բնութեն մերում, ցրտութենն որ առ նմա է միշտ, մեղկացուցանելով զնոյն, իւրոյն ընդդիմէ, արգել կամ խափան լինի բարւոյն : Եւ է օրինակաւ հրեշտակայնոյն, օդայնն թեթեւութեամբ կամ նրբութեամբ՝ որ է նմանութեն հրեշտակի, կամ հրեշտակայնն վարուց, յառնելոյ 'ի վեր, մինչ առ քեզ թռչեցիմք, ծանրութեն թանձր հողոյս 'ի վայր քարշեալ խափանէ : Իսկ ամենայն նիւթ սակաւ զհոգին, այն է՝ զի յառաջին արարչութեն նախկին յիշատակի ընդ անուամբ երկրի. և զի 'ի կազմութեն մարդոյ՝ հողն առ առաջին հիմն և նիւթ մարմնոյ : (Ծնն. ա. ժ : բ. 19 :) Բայց վասն ամենայն սասցելոցդ ծանիր, զի ոչ վարդապետն ոչ եթէ զօրութիւն տարերացն համարի բաւ լինելոյ պատճառս բարւոյն կամ չարին 'ի մարդն, այլ 'ի բնական զխառնմարութէ նոցա բարոյապէս խորհրդածէ զհակառակութեն ըղձից և յօժարութեց հոգւոյն և մարմնոյն. քանզի այսմ բարոյական զխառնմարութեն՝ բազում անգամ բաւ պատահման պատճառ լինի զխառնմարութենն տարրական, յորժամ բանականն կամ հակէ, և կամ անհոգանայ 'ի կանոնել զնոսա :

(8) Յամենայն պարգեւս : Յամենայն կողմանէ, կամ յամենայն գործս յաղթեալ վասն հակառակամարտ յօժարութեցս, եւս զղջի լինել և առաւել, իբր զանկար որք կծկեալ անդամօքն, հերքեցայ և վառնեցայ 'ի բազմաց, զի 'ի բազում բարեաց, կամ բազում փորձութեանց և մեղաց : Վասն որոյ 'ի պարգեւականն, յառաքինական վարուցն զրկեցեալ, որով արժանի լինէի պարգեւաց վարձուն, տապաստանիմ 'ի կողմն աղքատութենն : Եւ առ նօսր ամենեցուն մեղաց՝ ապերախտաբանեալ զմեռելոցն՝ տեղ չենթանեաց, վասն ամենայն մեռելոցն՝ որք քեզ կենդանի են. (Ղուկ. ի. 38 :) Յայլ տապալեր եղեալ եր որոշումն, զմեռելոցն տեղ՝ չենթանեաց. որպէս թէ և մանաւանդ մեղաւոր կենդանեաց՝ որք առ քեզ մեռեալ են : Բայց մեզ ննջեցելոց լինել աղօթիցս՝ ցուցանէ 'ի սկզբանն : Քանզի կարօղ ես և հնարաւոր՝ և նորոգանօղ ես մեռելոցն. իբրև զնա՝ արժանի կարո_

առան նշխար սրբոցն , այսինքն որք էին եւ զիս առանց բարի գործոց ննջեցին :

(Գ) Երկրորդ Բարեխօսած շնորհաց : Յորժամ մխրճանեսցին կարեաց և կամաց , (որք են երկու ասա և անպատիաս շնորհք արտաքինք , ըստ որում պատճառաբար ներգործեն 'ի մեզ զամենայն շնորհս ,) այնուհետև բարձցի յառաջադրութեն շնորհութեն , լսելի լուսոյն՝ որով ըստ գործոց իւրեանց եղև անյոյսք 'ի փրկուէ Քեզ մեղաւորքն՝ թէ կենդանիք , և թէ մեռեալք · զի ոչ կարեն անձամբ արդարանալ 'ի մեղաց , կամ ազատիլ 'ի պատուհաս մեղաց : Վասն որոյ յարդարացուցանել քո զմեղաւորն յասածի կեանս , և 'ի թողացուցանել զպարտս մեղաց 'ի հանդերձեալն , այսուհետև ցուցանես զզօրութիւն քո , և զկատարեալ բարերարութեան :

Մեսրոպին յաւելուած ներքին հեծութեն՝ նորին հօխաղէ , առ նոյն աղերս մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

ԲԱՆ · ՁԱ ·

ա · Եւ արդ՝ քանզի 'ի գլուխ կատարման հասեալ սակաւամասնեայ կտակի այսր ողբերգութե, որոյ տէր՝ վախճան դադարման առնուլ [1] ընդ այսց բանից մաղթանաց՝ ինքնանախատս կշտամբութե և որ յիս կրին չար սովորութիւք : Որ քեզէն կարգեցեր սահման աւետեաց անկելութե դատապարտելոյս՝ ասելով , ոչ են կամք առաջի հօր իմոյ՝ եթէ կորնչիցի մի ոք 'ի փոքրկանցս · և դարձեալ , այս են կամք հօր իմոյ՝ զի զամենեսին ինձ յանձնապարբեալսն ոչ կորուսից :

բ · Օրհնեալ ես 'ի գթութե · բարեբանեալ միշտ 'ի քաղցրութե · խոստովանեալ յերկայնմտութե · ծանուցեալ 'ի յայցելութե · քարոզեալ տէր 'ի փրկութե · ներբողեալ դու յառատութե · պատուեցեալ 'ի պաշտպանութե · [2] փառաւորեալ ես 'ի փրկութե · երկրպագեալ յանբաւ բարձրութե · պաշտեցեալ 'ի յանքննութե · գովեցեալ միայն 'ի յաղթութե · վերաձայնեալ 'ի մեծ զօրութե · խնկաւորեալ յողորմածութե · համբուրեցեալ յանճառ հեզութե · [3] ճաշակեցեալ 'ի խոնարհութե : Ընդ քեզ և ծնօղդ քո երկնաւոր Ա͞ծդ [4] բոլորից մխիթարութե · ըստ որում հոգիդ քո Սբ բարութե , որ զանկեալ [5] զգրաստ թշնամւոյն՝ և զգայթագղեալ մարդն

անբանութե՛ն՝ կանոնեցեր ոչ անտես առնել ։ Որոյ [6] երախտիս հզօրիդ 'ի յիս, և առաքինութեն մեծիդ 'ի բարձունս տօնեալ անդադար յանվախճան փառաբանողաց ․ որովք զայս ձայն աղերսական յարգեալ ընկալցիս՝ մարտիրոսացն պաղատանօք 'ի հոտ հաճութեն բուրման անուշից ։ Նաև այսու [7] փրկանօք հաշտարար բանի՝ զնախնեացն պարտս և զանբրևոյթ վէրս՝ միջնովքն և վերջնովքն մահացուցանողօքն զանձն և զմարմին բժշկեա՛ ամենակարօղ, զներքինս և զարտաքինս, [8] զտիպքն և զգիծքն, և զխարանս հարուածոցն ․ բարձեալ և մաքրեալ դեղովք ողորմութեդ զկտեալ խածուածս բազմագունիս, որք գարշելիս ընդ ախորժելեացն քեզ ցուցանեն զէութին բնութեանս ։

Դ. Նաև եթէ [9] հասից յամս ծերութե՛ն քև առաջնորդեալ՝ արժանիս մահու, մի թողցես զտկարութիւնս ․ մի անարգեր զալիսն ․ մի կորացուսցես ըղկործանեալն ․ մի զիջուսցես [10] զկքեալն ․ մի վայրաբերեր զխոնարհեալն ․ մի շնչման հողմոյ մատներ զառկայծեալն ․ մի ընդպահկեսցես զդեդևեալն ․ մի անվերարկու առներ զսառուցեալն ․ մի անդարման լիցի տագնապեալն ։ Մի առանց տածելոյ՝ [11] յարկն խարխալեալ ․ մի անպատիւ՝ պատկերն հնացեալ ․ մի պարարտութիւն անհամեալ ․ մի շուք շնորհին անարգեալ ․ մի հնութիւն քամահեալ ․ մի նաւ հողւոյս ալէկոծեալ ․ մի երկարութի յուսոյն կտրեցեալ ․ մի լար շաւիղին խզեալ ․ մի ուշ իմաստին բարձեալ ․ [12] մի գոյին կազմած զեղծեալ ․ մի ամբարձմանն թևք փետտեալ ․ մի զուարթութի դեղոյն տգեղեալ ․ մի ճաճանչ նշուլին քաղեալ ․ մի պատուհանք աչացս փակեալ ․ մի լուսաւորութի նորին խափանեալ ․ մի պատկերն խօսուն անկեալ ։ Ահա աղաչեմ զքեզ՝ բարեգութ, ամենայն սրբովք պաղատիմ, [13] լո՛ւր ացին ինձ կանխաւ, զի զանագանն մի մոռացիս ։ Դու առաջնորդեցեր ինձ, ըստ սաղմոսողին, և ապրեցուցեր, հան տէր ընդ երգողին՝ և 'ի կարծեացն կասկածանաց, յորմէ երկնչիմ ։ Նոյն ես չեմ արժանի 'ի քէն՝ և ոչ [14] հասարակական կերակրոյն վարձու, այլ դու կարօղ ես սովորաբար՝ և առ զըլլացողս բա-

ընդգործել : Վ՚զի են զարմանալիք անճառելի բարեաց՝ միայն հրաշագործ առ ամենայն երկայնմտութի, ընդ հօր և հոգւոյդ սրբոյ օրհնեալ հանապազ՝ յաւիտեանս յաւիտենից . ամէն :

---

(1) Ընդ այսց բանիցս : 'Ի կատարման աղօթական գրոցս՝ զոր և երբեմն կրեալ զգլխման գրեալ և Թողուալ յետ իմ, շնորհեալ ինք, զի և չար առակութիւնք իմ մերժեսցին :

(2) Փառաւորեալ էս : ըստ օրինի . ֆառաւորեալ էս :

(3) Ծառանեցեալ 'ի խոստովանութե : Առ քեզ առէ, որում երբեմ մարդ՝ զատ շատի խոստովանութիւն, և ոչ երբեմ ած, որ և 'ի խորհուրդ հաղորդութե ճաշակի 'ի մէնջ անճառ խոստովանութեամբ :

(4) Բոլորից փրկութեան . ընդ քեզ օրհնեալ է առէ՝ և Հայրդ երկնաւոր՝ ածն ամենեցուն մխիթարութե : ըստ օրինի . փրկութեան . երբեմ Թէ, որ բոլորից է մխիթարութե : ըստ որում հոգւոց . որպէս և հոգւոցս որ օրհնեալ է ընդ քեզ :

(5) Զգրաստս Բեհեմոթայն : Եւյէց իդ . 5 . 'ի մեր բնագրի գտի՝ զգրաստ ընկերի . բայց այլ Թարգմանութիւնք, եբրայականն, քաղդէացին, յոյնն, և լատինին գտեն՝ Բեհեմօթ . որպէս առդ (համար 4 .) նաև մերս՝ համեմատ այլ Թարգմանութեանց գտէ խնամ առնել երլին Բեհեմօթ : Եւ զգրաստս Բեհեմոթայն : 'ի կանոնեալ՝ չառնել անառս զանկեալ զգրաստն, օրինակաւ ծանուցեր՝ չառնել անառս զմարդն զայթակղեալ ազխտութեամբ 'ի մեղս, կամ 'ի մոլորութե : կամ, այլ բանիւք նա գրոց աղղեցեր զգայթակղեալ եղբարս յարուցանել, կամ չտալ պատճառս գայթակղութեան :

(6) Երախայի հացին : Բարերարութիւնք հզօրին 'ի յիս ներգործեն . իսկ տառաքեռութեն մեծին, զօրութիւնքս կամ առատութեամբ 'ի յերկինս փառաւորի 'ի հրեշտակաց . որոնք, այսինքն հրեշտակք, կամ ընդ փառաւորութեն նոցա ընկալ և զայս մաղթանս՝ խնդրուածոյք մարդկութեան :

(7) Փրկանօք հայրական : Այսու հատուցմամբ հաշտեցուցիչ բանից՝ մաքրեալ զնախնեաց պարտս . եթէ իմացի վասն իւր մեղացն, նշանակէ՝ զառաջին ադամայն կամ զմանկութե մեղսն, և զգաղտնի մեղս հոգւոյն . մեծանց, հանդերձ մեղօք պատառնութեն, կամ երկրպագութե . և փրկանօք, մեղօք կատարեալ հաւատքն և ծերութե, որք պատմեն զհոգի և զմարմին : Բայց եթէ զայլոց մեղաց իմացուք զայս բան, հաշ ցէ՝ զի աղօթական բանիւքս քաւեսցէ ած զպարտս առաջնոց մեղուցելոց, այլև զներկայից և զապագայից զմեղսն : Փրկանօք, հոգւոյ մեղս խորհրդոց, և ըստ փոխս, զմարմնական մեղս գործոյ :

(8) Զփրկեալ : Զմնացորդս մեղացն, այսինքն զչար ունակութիւն, զառ կարութիւն առ բարին, զխայթ խղճին, ևն . որք երբեմ հետք են անցեալ մեղացն : Եւ ըստ ... . զերկարութիւն, կամ զմերձաւոր անկումն 'ի նոյն մեղս, որոց մեղքն երբեմ զիծ ինչ շարունակի, և ստարածի առ այլս չար օրինակաւ : Եւ ըստ ... հաւատոց, զխարխալ տեղին կամ զմերձն՝ որ 'ի հարուածոց հրացեալ նետից ստանայի . որոց խմանին չար յօժարութիւնքն՝ գրգռեալ 'ի փորձութեանց դիւաց : Ընդ ... . զհար մամբ եղեալ խածուածս բազմազանս, որք գարշելի առնեն զհոգին մեր, ըստ ..., զի փոխանակ անուշահոտ իւրացն շնորհաց և առաքինութե : կամ խառն ընդ անուշահոտն իւր երևին 'ի մեզ, զի ընդ բարին բնութե, որք հաճելի են ած :

(9) Հասից յամս ։ Խնամակալք բանիւս՝ չէ ես 'ի խոր ծերութեան հասեալ այլ վարդապետես 'ի յօրինել աղօթիցս , Թէպէտ և բազ հասանական հաշուի՝ ասենք յայնժամ գանէ ամս վաթսուն . ըստ Յիշատակարանն ։ Եւ մէ կենաց , այլ մահու առէ՝ արժանի եմ . բայց եթէ քո կամօք հասից յամս խորին ծերութեան , այժմէն աղաչեմ , մի՛ անխնամ թողուր զակարութեան իմ . զի յայնժամ առաւել կարօտ եմ քոց խնամոց , յորժամ յետ յաւէտ տկարացեալ՝ ամենապէս 'ի մարդկանէ զատանեմ հոգացուն ։ Եւ առաւ այլ և այլ բանիւք 'ի կարգ . սրբանէ զխրատս և զմիջոց՝ որոց նորոգ անկեալ է հասակն ծերութեան , է՛ որ 'ի բնութէ , և է՛ որ 'ի մարդկանէ . զորս ինքնին երջանիկ աղօթաւորս տեսեալ իսկ էր յայլ ծերս . և այնու խնամոյր մրցանի առանձին տեսչութեան պէտս ունիցի այր հիւանդութեան , զի մի՛ 'ի ծերութեան կորուսանիցէ զոր յերիտասարդութեան վաստակեաց , նմանեալ Ճանապարհորդի՝ որ անվտանգ հասեալ զերկայն ուղի , առ դրան անդ կործանիցի ։ Այս աղօթք են կարևոր ամենեցուն , կանխապէս ևս աղերսեալ 'ի սաղմոսերգու մարգարէէն . * Մի՛ ընկեցներ զիս մինչ 'ի ժամանակի ծերութեան , 'ի պակասել զօրութեան իմոյ մի՛ թողուր զիս ։ || (Սաղմ . Հ . 9 ։)

(10) Չկեւեան ։ Չթխալեալն մարմնով , զկծկեալն , որոյ քամակն կորացեալ է ։ ընչման հողմոյ . զկեանս ծերութեան՝ որ իբր Ճրագ առկայծեալ մերձ է 'ի շիջանել , մի՛ տար յանկարծ պակասել ։ Ի ընդդանէլեալ գդեղեալն . ամփոփապար մեկնի , մի՛ հեղձեր , մի՛ մղեր , մի՛ անտես առներ զգողդոջեալն . բայց Ը ասյլուած՝ ելանէ առ 'ի բառէն՝ դողալ . (այսինքն անկարեւոյ բանիլված .) յորմէ նշանակէ՝ մի՛ բանադատեր 'ի դնել , կամ մի՛ ծանրաբեռներ զդողդոջեալն 'ի ծերութենէ , կա՛ յայլ ցաւոց ։

(11) Ցուրտ խորխոջուն ։ Չծերութիւն նմանեցուցանէ զանազան իրաց սպականելոց . և 'ի խնդրելն՝ չառնել անպատիւ կամ չանարգել , զածայլն խնամն առէ չպակասեցուցանել , և ոչ եթէ զառ 'ի մարդկանէ պատուն խնդրէ ։ Ի ղարարփուսէն , մի՛ իբրև զկծուեալ իւղ անպիտան թողցի ։ Ի շատ ընորհին . մի՛ յարգ գեղեցկութեան անարգեսցի ։ Ի Ներկարանէ յոսոյն . երկարութեան յուսոյ վարձուցն՝ որով 'ի ծերութեանս յերկար աշխատեալ , մի՛ կորիցի անվարձ մնալովս . կամ , մի՛ վասն երկարութեան թուլասցի յոյս իմ ։ Ի լոր շուրջն . լարին՝ կամ շուանն , որով առաջնորդիմ 'ի Ճանապարհ քո , մի՛ խզեսցի , այսինքն հաւատքն , լուսաւորութիւն մտաց , և այլն ։

(12) Մի՛ փոյթն կաղմած ։ այլ օրէն . կաղմած . այսինքն կազմած մարմնոյս , կամ զգայութեանս մի՛ խանգարեսցի ։ ակնպիցիքն ճնոփ . բազուկք և ձեռքն մի՛ լիցին անպիտան իբրև զխեռեալ թևս թռչնոց ։ Ճաճանչ նշուլին . մի՛ լոյս աչացն նուազեալ ։ Ի աղաղակին գլոցո , այսինքն թուլանալով մի՛ փակեսցին . և մի՛ լուսաւորութիւն աչաց խափանեալ , ընծայք ինչ՝ որք արտաքուստ խափանեն զտեսութիւն ։ Եւ մի՛ դափնեանն խօսուն , կենդանի մարմինս անկեալ դնիցի անզգամանալութ. , կամ անկարութ. 'ի շարժիլ ։

(13) Լո՛ւր ասջին քեզ ։ Լո՛ւր ինձ յայժմու աղաչանս՝ նախ քան զծերանալն . զի զանհագանն , զխնամս քո որ 'ի ծերութեանս՝ մի՛ մոռասցիս . կամ , այսու աղաչանօք՝ զոր կանխաւ մատուցանեմ , յիշեա՛ և զանազան աղօթան զոր ցանկամ առնել 'ի ծերութեանս , բայց գուցէ չկարիցեմ յայնժամ ։

(14) Հաստրակական կերակրոյն ։ Թէպէտ ես չեմ արժանի նաև վարձու հասարակ կերակրոյ իբրև զվարձկան , բայց դու կարող ես ողորմել . Ը քում առատութեան նաև առ զլյացող՝ առ ապերախտս՝ բարիս առնել . վասն զի փո են դպրծնաջիք , դու առնես բարիս անձառս , և առնես

զբանիչելի օրհնաբանէ 'ի զարմանալութիւն ամենայն մարդոյ. և առանձինն 'ի գործ որ և եղև երկայնմտութեամբ առ մարդիկ՝ զի ոչ միայն ես կարօղ հրաշա-գործ: Ո՛չ մարդիկ, և ոչ հրեշտակք կարացին այնչափ ժուժկալել 'ի վրէժխնդրութիւն անարգանացն ԱՅ, որչափ ինքն ԱԾ ոչ միայն ժուժ-կալէ, այլ խնամս ևս յաւելու՝ փոխանն պատուհասից. և ինքնին իսկ արդարեւալ ցածուցանէր զաստածիկ սրտմտութիւն Եղիայի, և զհրեշտակին առ Դաւիթաւ: Յայլ բարերարութիւնս ընկալաւ իւր գործակից ԱԾ 'ի հրաշագործել. պարգևեաց և՛ մարդկան, և՛ հրեշտակաց գործել մեծա-մեծս 'ի վեր քան զբնութիւն. բայց յերկայնմտութիւն առ յանցաւորս՝ միայն ԱԾ է հրաշագործօղ: Վասն զի ԱԾ միայն է որ յանչափս առնէ զմեղս, և յանչափս պահէ զփառս իւր. նա միայն կարօղ է և՛ զարժա-նի պատուհասն՝ և զպարգևահասն 'ի վերայ ածել անարգելապար յումեք և իցէ: Ա՛յլ 'ի վերայ այսր ամենայնի ներել յանցաւորին, առնել ժա-մանակ, զարմանս նորս մատուցանել, ոչ ապաքէն 'ի վեր է քան զամե-նայն հրաշս, և միայն ամենազօր բարւոյն սեպհական: Ա՛յսորիկ աղա-գաւ ընդ տեղական անուանս դասեալ է 'ի գիրս և երկայնամիտ կոչումն. և նոյն ձայն որ խօսեցաւ առ Մովսէս, յայտնելով նմա զիւրականն ա-նուն Որէն, զուգապէս կոչեաց առ նա՝ ողորմած, երկայնամիտ: (Ելք. լդ. 6:) Յիրաւի՛ ապա կատարած աղօթիցս՝ միայն հրաշագործ զԱԾ ասէ առ երկայնմտութիւն. և այս ոչ 'ի միում կամ յերկուս, այլ առ ամե-նայն երկայնմտութիւն. զի չիք խտիր մեծի և փոքու. այնպէս հրաշալի է երկայնամտելն ԱՅ առ Դաւիթ, որպէս և առ Նաբուգոդոնոսոր. ով զք չկարիցէ զարմանալ ընդ երկոսին, կամ ոչ օրհնել զերկայնամտօղն յաւիտեան: Տե՛ս և բան Լդ. Լծ. 37. 38: Սովին խմաստիւք աւարտէ և զբանն հդ. Քեզ փառք ամենազօրիդ՝ առ ամենայն հրաշագործութիւն քում խնամօղ երկայնմտութեան:

Աղօթքն յաւելեալ ներքին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն ողբոց Մատեանոյ բանն:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ԱՅ:

ԲԱՆ. ՁԲ.

ա. Նու արդ՝ [I] Ջուր կամաց և կաթ արտասուաց՝ բեկութեամբ հոգւոյս՝ մատուցս ըղձմամբ՝ խոր-տակմամբ սրտիս հեղեալ առաջի՝ զմարգարէին յի-շեցուցանեմ զարամաթացւոյն սամուէլի, զոր ա-ռեալ եհեղ 'ի սկաւառակէ յանդիման քո՝ ամենա-տես, առ ժողովրդեանն օրհնաբանութեան զանձն արկա-նելոյ խոստովանութեամբ և հնազանդութեամբ կենդանա-բարդ գարշապարաց:

բ. Նու արդ՝ ընկալ զայս հիւսուած բանի աղխողորմ հեծեծանաց, և հոտոտեսցես յայս նուէր բանի՝ ան-արեան զոհի՝ Թագաւոր երկնի. և օրհնեալ սրբեա զտառ մատենի այսր ողբերգութեան. և գրեալ դրոշ-

մնասցեմ յարձան յաւիտենան՝ [2] ընդ հաճոյականացն սպասաւորութեան ։ Կացցէ առաջի քո մշտնջենաւոր, և յիշատակեսցի 'ի լսելիս քո հանապազ. բարբառեսցի [3] շրթամբք ընտրելոց քոց, և խօսեսցի բերանովք հրեշտակաց քոց. տարածեսցի հանդէպ աթոռոյ քոյ, և ընծայեսցի 'ի սրահ սրբութե քոյ. խնկեսցի 'ի տաճար անուան քոյ, և բուրեսցի 'ի սեղան փառաց քոց. պահեսցի [4] 'ի գանձարանի քում, և համբարեսցի 'ի ստացուածս քո ։ Պատմեսցի 'ի յականջս ազգաց, և քարոզեսցի 'ի լուր ժողովրդոց. նկարեսցի [5] 'ի դրունս իմաստից, և տպաւորեսցի 'ի սեամս զգայութեց. իբր կենդանեօք՝ զինս պատմեսցէ խոստովանեալ զանօրէնութիւն. և թէպէտ վախճան ընկալայց իբր զմահացու, այլ յարակայութեամբ բանի այսր սոփերի՝ գրեցայց կենդանի ։ Մնասցէ սա անեղծ 'ի կամս քո տէր՝ [6] ինձ պատժապարտիս համբարձեալ միշտ՝ անդուլ դատիչ. անաչառ կշտամբիչ. անպատկառ յանդիմանիչ. անանխայելի դսրովիչ. անառողջելի պարսաւիչ. անհամբոյր ծանակիչ. անմարդասիրելի մատնիչ. անփրկելի տանջիչ. անկաշառ կառափիչ. անխնամելի յայտնիչ. ապառուամ հրապարակիչ. աշխարհալուր բողոքիչ ։ Փողով մեծութե ազդման առանց լռութե և կամ դադարման՝ զիմոցս պարտեացս խոստովանեցի ։

գ. Այն գիր՝ իմովս ձայնիւ՝ [7] իբր զիս ընդ իմ աղաղակեսցէ, տարածեսցէ զծածկեալսն. հռչակեսցէ զգաղտնիսն. կականեսցէ զկատարածն. հնչեսցէ զմոռացեալսն. յայտնեսցէ զաներևոյթսն. բարբառեսցէ զբարուրսն. քարոզեսցէ զխորոցն. պատմեսցէ զմեղացն. մերկացուսցէ զանտեսիցն. ցուցցէ զկերպարանս թաքուցելոցն ։ Շօշափեսցին [8] ստվաւ որսքն. գտցին գայթագղութիւքն. յանդիմանեսցին անձառք. քամեսցին չարեացն մնացուածքն ։ Այլ թագաւորեսցեն կեանքդ շնորհաց ողորմութե քո քս 'ի գանձս [9] պահեստի ոսկերացն ցամաքելոց. որով 'ի ժամանակս կենդանականս սկզբնաւոր լուսոյ մտի գարնայնոյն՝ նորոգման աւուրն պայծառութե՝ քոյովդ ցօղով յոգի անձեցեալ այսու փրկութբ ան-

մահկանացու, և անցաւորաքինըն վերամբարձութեամբ շա-ռաւիղս ձգեալ իմանալեացն բարեաց՝ դարձեալ դա-լարացայց և կրկին ծաղկեցայց, ըստ քոյինաշունչ գրոյն յուսադրութեան։ Նու քեզ միայնոյ փրկողի՝ և հոգւոյդ քում հօր իսկակցի՝ միատեսական տէրութեան և անճառ երրորդութեան՝ խորհրդական գովեստիւ փառք և երկրպագութի յաւիտեանս. ամէն։

---

(1) Զուր կամօք։ այսինքն ըստ կամաց բղխեալ, որ այն ինքն է կամք սր-բոյ հոգւոյ, 'ի բնակեցեալ հոգւոյս հեղմամբ, ըստ Փաւղոսի յեղեցուցանել, զի զՀոգին սահմանելի, զոր առնէր, անսասանելի, եհեղ առատապէս 'ի մեզ։ (Տի-տոս. Գ. 6։) Որ ոչ վերադառնալեաս զհեղումն ջրոյն՝ ոչ իմանալեաց 'ի վե-րայ հեղման ստորասացեալ, որպէս տեսանք համարին ըստ յայտնաւորաց և ըստ հին լուծ. այլ 'ի վերայ հասարակ և բնական ջրոյ. առ ծննդեղբեանն օրհնեալութիւն, օրհնեալելովն այնու զհոգևորհութիւն, և զխոստովանութեանն զարձն ժողովրդեանն առ նա։ կամ, յօրհնեալ և 'ի յորդոր ժողովրդեանն, զի այնպէս խոնարհեսցին առ նա։

(2) Ընդ հաճոյականացն։ Ըստ կարգի ընթանան աղօթքս. զի յանցե-լուծն մաղթեաց վասն ժամանակի ծերութեան, և յայսմ որ վասն յետ մահ-ուն։ Զայս մասնաւոր գրքեական հայցուածոց գրեցելոս առէ՝ վասն որ ա-րասցես իբրև ուղիղն, այսինքն մուրհակ, զիր հաստատուն, անփոփոխելի, 'ի համար կամ 'ի թիւ ծառայութեանց հաճոյականացն, հաճոյացելոցն քեզ արդարոց։ կամ, խմմ զայս սեռականն՝ փոխադրութիւն հոլովոյ, փոխա-նակ առականի՝ ընդ հաճոյական կամ ընդունելի սպասաւորութեան արդա-րոց. զի որպէս հաճելի վաստակք արդարոց անկորուստ են առաջի քո, նոյնպէս անկորանչելի կացցէ այս մասնաւոր։

(3) Որբեամբք ընթրելոց։ Ըստ որեալս իմանամք զմիանձանս և զանապա-տաւորս. իսկ հրեշտակօ, կամ զգաստն զանձանցիւն՝ որոց միաբանութիւն մասնչին աղօթք մարդկան առ Աստուած, և կամ առանձինն զպաշտօնեայս եկեղեցւոյ, ըստ առաքելոյ. (Ա. Կորն. Ժ. 10։) Այլ՝ այս մասնաւոր խօսեցի առէ՝ բերանով միանձանց և պաշտօնէից եկեղեցւոյ, թէ յա-ռանձնական աղօթս, և թէ հրապարակաւ 'ի վերայ հիւանդաց։

(4) 'Ի գանձարանի փառաց։ յանդգնելութեան քում իբրև հաճելի ընծայք։ կամ, պահեսցի յեկեղեցւոյ քում։ և համբարեսցի 'ի սրբարանս փա. ժո-ղովեսցի 'ի համբար քոց պատարագաց՝ իբրև քոյով զօրութեամբ սրբեալ, բուրեալ, և պատրաստեալ։ Տեսանեմք արդիւնք այսր խնդրուածոյ, զի գիրք նորա զանձնեալ պահեսցին այժմ ընդ այլ եկեղեցական գիրս 'ի պահարանս եկեղեցեաց։

(5) 'Ի դրանն խմանալեաց։ Տպաւորեսցի 'ի յիշողականն, կամ 'ի բանին՝ ընդ որս մասնաւոր բանից խմանալութեան։ 'Ի ... , 'ի շքեղութեան. որպէս զի ... կենդանի զոլով իմ, կամ մասնաւոր իբր կենդանի որ՝ պատմեսցէ զանօրէնութիւն իմ։ Զի թէպէտ մեռանիցիմ ես, բայց միշտ մնալով այսր աղօթական գրովս՝ համարեսցայց կենդանի։ Այսու բանիւք հայցէ ոչ վերադառնալու՝ զի անդադար լսցէն այս աղօթք 'ի մեզ և 'ի բերանոյ ժողովրդեան. և առաւելեսցէ՝ զի կամօքն իմ հասա-րեցան խնդրուածք երանելւոյս. զի գիրք աղօթից նորա յածին 'ի ձեռս ամենեցուն. և բազում 'ի բերանոյ ռամկին, և անյագ փափաքմամբ զնոյնս աղօթեն։ Նու թէպէտ 'ի միում կողման վասպուրականի աշխար-

հետ յօրինեցան աղօթքս, բայց ըստ խնդրոյ երանելւոյն սփռեցան 'ի լոյս բոլոր ազգաց հայաստանեայց. մանաւանդ և նորուն արժանահայց աղօթից պտուղս ինձ համարիմ, զի աշխատեալ միանգամ 'ի բացայայտութի բանից նորա, դարձեալ յետ իբր երեսուն ամաց՝ յաջողեաց յաւելուածովք և ես պարզել զմթութիւնս, թէ և ոչ բովանդակ տակաւին :

(6) Ինչ պատճառաւորես : Ինձ մեղապարտիս ասէ՝ եղիցի առ անդրուղ դափէն, անդադար դատող, ևն : Զայս 'ի սաստկութեն զղջմանն ասէ. և թէպէտ այսպէս փափաքէր և խնդրէր երանելին, բայց յարդեանցն անսաննելք՝ զի այս մասանն ոչ ես է նմա անաչառ կշռադատիչ, այլ գովեստ յաւէրժական. իսկ մեզ անդադար յանդիմանիչ, զի բիւրապատիկ առաւել մեղուցեալք, չունիմք գոնէ մասն ինչ 'ի նորա զղջութեանցն :

(7) Իբր ղեւ ընդ իմ : Որպէս թէ ես կենդանի իցեմ, փոխանակ իմ աղաղակեսցէ : խօսեսցէ ընկերաբար. տրտմելով յայտնեսցէ զկատարած մեղացն, և զկենաց, կամ զվախճան պատուհասիցն : Ճշմարտեսցէ զբարբառն, մեծաձայն ծանուսցէ կամ մերկանայցէ զուսա պատճառանան : քարոզեսցէ զխորհուրդն, զարմանս կամ զնորբքն սկզբունս մեղաց :

(8) Ստեղծող որդին : Այսու գրով 'ի ձեռս եկեսցեն գաղտնի պատուհանք բնութեան, կամ սատանայի, որովք որսայ զմարդ 'ի մեղս : Գործին գաղբագդիսաբար, յայտնեսցին նիւթք կամ պատճառքն գայթակղելոյ 'ի մեղս : յանդիմանեսցին անձամբ : յերևան եկեսցեն անտեսելի կամ թաքուցեալ մեղքն : փախիցէն, խաղաղութեան թափեսցին կամ սպառեսցին մնացորդք մեղացս : որպէս զի [illegible] յանկերս իմ կեանքս շնորհաց, ևն :

(9) Պահեստին ունկերացն : 'Ի զանձս պահեստի ունկերացս, այսինքն 'ի գերեզմանի, [illegible], տիրեսցեն կեանք շնորհաց, կենդանացուցիչ զօրութե քո, որ է շնորհք մարմնոյս. և ոչ ըստ բնական սկզբանց նորա պատշաճեալ ինչ : Այլ յորժամ մարդն մեռցի 'ի մեղաց մկրտութեա և ապաշխարութեա, և գործովք ծառայութեան որպէս մարմինն 'ի մնացուածոց մեղացն, և նա խորհրդոյն ճաշակմամբն սնանի, յայնժամ ստանի 'ի նմա զօրութիւն ծածուկն իբրև սերմն կենդանութե : Որով 'ի [illegible], 'ի ժամանակի կենդանանալոյ, զարմանալին սկսման նորոգ լուսաւորութե, որ այն ինքն է զարթումն յարութեան, որ պայծառութե արդարոց, [illegible], ազդարար հրամանաւ փողոյն, կամ 'ի զօրութէ արեանդ քո, [illegible], կենդանական շնչոյն առնեսցեալ անմահ յարութե, անթառամ [illegible], [illegible] ընծիւղմամբ շառաւիղս արձակեալ [illegible]. [illegible] հոգևոր բարիք շնորհաց և փառաց հոգւոյն իբրև շառաւիղս արձակելով զփառս մարմնոյն, որ են պայծառութիւն, անօսրութիւն, թեթևութիւն, և անչարչարութիւն, այսու օրինակաւ կրկին զարդարիմ և ծաղկիմ մարմնովս՝ գերազանց քան զառաջին կենդանութիւն : [illegible], ըստ յաւաղացուցանելոյ 'ի քէն ազդեցեալ զրոյն, որ 'ի բազում տեղիս աւանդէ զայս յարութե, որպէս (Եսայ. Իզ. 19.) * Յարիցեն մեռեալք, և կանգնեսցին որք 'իցեն 'ի գերեզմանս. զի ցօղն՝ որ 'ի քէն է, բժշկութի է նոցա || : Այլև եզեկիէլի. Լէ : բայց թուփ և դյուրայն խմանալ. (Ժդ. 7.) * Զի գոյ յոյս ծառոյ, զի թէպէտ և կտրեսցի, միւսանգամ ծաղկեսցի. || և (12.) * Եւ մարդ ննջեաց, և ոչ յարիցէ : ||

ԲԱՆ. ՁԹ.

ա. Ած և տէր. կեանք և արարիչ. ողորմած. գթած. լոյս. երկայնամիտ. անոխակալ. մարդասէր. ամենագութ. պարգևատու. փրկիչ. օրհնեալ. գովեալ. բարեբանեալ. [1] Դարան ամրութե. պատսպարան վստահութե. առանց նենգութե բարի. առանց խաւարի ճառագայթ. քաւիչ մեղաց. ողջացուցիչ վիրաց. անհասանելեաց հնարք. [2] անմատչելեաց հպաւոր. անյուսութե ելք. անուն քո խոստովանեալ՝ Այ որդի. և հօր քո ընդ քեզ հզօրի և ահաւորի, և հոգւոյդ ամենակալի՝ և ընդ քեզ երկրպագելոյ՝ փառք և պաշտօն գոհաբանութե՛ յաւիտեանս. ամէն.

(1) Դարան ամրութէ. Անքոյթ տեղի ամրանալոյ ՚ի ձեռաց դիւաց. առանց նենգութէ. այսինքն աններեղելի բարի. կամ, այնպիսի բարի և անկեղծ, յոր ոչ կարէ խառնիլ նենգութի. որպէս և առանց խաւարի, անմթանալի ճառագայթ, կամ, լոյս՝ որում ոչ յաղթողէ խաւար.
(2) Անմատչելեաց հպաւոր. Անմատչելի տեղեաց մերձ. զի յերկինս է. և ՚ի խորս անդնդոց. ըստ սաղմոս. (ՃԼԸ. 8.) Թէ ելանեմ յերկինս || և ՚ն. անյուսութէ ելք. յանյուսալի իրս՝ հնարք և գտարման.

Սերոփէին յաւելուած ներքին հեծութէ՝ նորին հոլովլէ, առ նոյն աղերս ծաղկանաց բանի.
Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

ԲԱՆ. Ղ.

ա. Բարեբանեալ Ած երկնաւոր, միայն արարիչ, տէր ամենակալ. մեծութի ահեղ. գթութի օրհնաբանելի. ողորմութի խոստովանելի. բարերարութի երկրպագելի. խնամակալութի պաշտելի. մարդասիրութի տօնելի. պահպանութի խնկելի. բարձրեալ անքնին. մերձաւոր կամարար. ապա

ւէն անկասկածելի․ մխիթար սրտից․ փարատիչ վըշտաց․ ապաքինիչ ցաւոց․ սպառումն վհատութեց․ բարձումն պարտեաց․ [1] փոխարկիչ կարեաց․ կարգաւորիչ կրից․ յարմարիչ բանից․ սանձարկու լեզուի․ [2] շըջադրուն շնչոյ․ կացուցիչ հագագի․ [3] ամփոփիչ խորհրդոց․ կրթարան կամաց․ արձանացուցիչ յուզմանց․ հանդարտութիւն մրրկաց․ խաղաղութիւն ծփանաց, որ ունիս զթեւոց ամենընթաց իշխանականս, և իմաստութբ նուաճեալ առ քեզ դարձուցանես։

Է․ Պահաբանեալ միշտ երախտաւոր, որ հեզութբ անհպարտութե երկայնամտեալ [4] համբերիս ամենչանօք անճառ հրաշիւք՝ յանձինս որբոց։ Ծագաւոր էից համայնից, ամենայնիւ ծանուցեալ գթած․ սկզբնահայր և [5] նախաշաւիղ սիրոյն ընթացից․ Ճանապարհ կենաց, որ առաջնորդես քաղցրութբ դիմելոյս 'ի լոյսդ վերին։ Ձեռնկալու մեծ վստահութե, որ ոչ թողացուցանես գայթագղելոյս 'ի վայր կործանել․ յուսոյ կերպարան, [6] ճշմարիտ առհաւատչէիւ աղաչողաց մատանց յայտնի երեւեալ․ ապաւինութի հանգըստեան, որ ոչ երբէք մատնես վտանգի դառապարտութե։ Սգաստութի շնորհաձիր, որ տաս լիապէս առանց փոխատրութե փրկանաց․ առատութի աննախանձելի, որ քոյին փառաւորութբ զանարգնիւթ հողոյս ճոխացուցանես։ Պայծառութի անըստուեր, որ ճառագայթիւք ահեղ բարձրութե պարածածկեալ զթշուառս՝ կրկին բարգաւաճ առնես։ Ուաւիչ մեղանաց բազմաց, որ զհերքեալս 'ի փրկութէ առաջնումն պայծառութբ նորոգեալ՝ վերստին վայելչացուցանես։ Հնարաւոր դիւրահաս՝ [7] առ ամենայն անբաւ գերամբարձութիւն յաւէտ յառաջեալ․ ելք վստահութե առ խոստացելոցն վայելս․ երանութի անձկալի, [8] յոր զկենդանութի շնչոյս լքանելն է ախորժելի, զի զքեզ գտից՝ կենդանի։ Կամք անփոխադրելի՝ առ 'ի քաղցրութի գերոյս զօրացեալ ամենազօրելի․ անսխալելի դեղ կենաց, որ և մեռելոց՝ բնաւին եղծելոց առնես զօգանչելիս։ Ամենասատեղծ անեղերկայելի, որ զհուրբ կիզեալն, և զհողմով հոսեալն, և զժանեօք գազանաց ծախեալն, 'ի

քթթել ական [9] Նախին հիւթականութիւն անպակաս յարուցանես : [10] Ո՛ հրաշաւոր համարձակութիւն, յորում ՚ի ծօրէն պանծանօք պարծելն է իրաւացի :

Է. Հայեաց տէր՝ յերկնից ղուարթ քաղցրութեամբ յամենակործան վտանգ նեղելոյս, և տուր անդորր հանգստական դիւրաւոր՝ ՚ի բազմատագնապս հեծութեան : Այլ զյարուցեալ զումարս տատանչացն, եթէ սպառազէնք այսական գնդեայ հնարաւորութեան [11] բուռն մարտակցաց պատկանեալ զինուք, եթէ մեղաց ոգեղ և քո ատելի կերպարանք, եթէ ցաւոց և ախտից վտանիչ և կորստական նշմարանք, մերժեսցես հանցես հատցես խափանեսցես և հալածեսցես՝ հեռի սահմանաւ խապառ տարագրեալ անդարձ որոշմամբ վերստին կորստեանն. և կառուսցես կացուսցես նպատակ կենաց և ամուր մահարձան՝ զնշան խաչիդ՝ ապաւինելոյս ՚ի քեզ՝ փրկութեան : Այլ յայսմ [12] անպարտ և անպատիր և անվանելի արուեստից ահաւորիդ մեծութեան՝ լուծցին որոգայթքն գաղտնածածուկ սատանայականք. կապտեսցին մեքենայքն. վատնեսցին գայթակղութիւնք. խայտառակեսցին հաղբեցն դրութիւնք. յայտնեսցին երևոյթք որսոյն. գտցին նենգողին ծուղակք. վերասցին վարմին վերարկուք. տոչորեսցին որոմանցն բոյսք. նզովեսցին բռնաւորին չարաբանութիւնք. կտրեսցի լար խաբէութեան ՚ի մահ որսողին. պարսեսցին պատրողին բանսարկութիւնք. պակասեսցին զէնք զրպարտողին. անկցին սուսերք մահաբերին. սուզեսցին սադրողին պատրաստութիւնք. արձակեսցին տոռունք տագնապողին : [13] Այլայլեսցին սուտ կերպարանք կեղծաւորին. սատակեսցին խորախատականացն խիստ յարձակմունք. ցրուեսցին կցորդութիւնք կերչացն. բաժանեսցին ազինք աւաղակացն. քայքայեսցին բոյլք բարբարոսացն. քանդեսցին ամրոցք ապստամբողացն. արգելցին ամպրոպք յանդգնելոցն. փարատեսցին փորձողին անձրևք. հալեսցի և ցամաքեսցի եղեամն աղանդաւորին : Այրետակեսցի եղջիւր գոռոզին. մանրեսցին [14] ամբառնալիք դրօշիցն կերպարանաց. փշրեսցին ամբարհաւաճութիւնք հպարտացելոցն. նահանջեսցին դիմեց-

մունք Ճակատելոցն. քակտեցին միաբանութիւնք զօրացն թելւարայ, թէ անմարմինք, և եթէ մարմնաւորք. փախիցեն ընդ նոյն ճանապարհ 'ի մի շաւղաց հետոց՝ [15] յեօթն տարակոյս. 'ի գուբն զոր փորեալ ինքեանք ընկձեցին։ Յեղանակեցին [16] ձմերունք ձանձրացուցչին. հատցէ կապն կցորդութեան միշտաջանն աւազակին. նողկացի մնացս կայից՝ համբոյր շողոքորթին. ընդ միջեալ մեկնեսցին՝ նետաձգունք նեղչին. կացցէ 'ի սասանման՝ նաւ խարդախողին. խլեսցին յարմատոց անտի՝ ատամունք խածանողին։

Դ. Վասն փայտիդ օրհնութեան կենաց, յորում պրկեցար Տէրդ անըմբռնելի. յիշատակաւ թևեռացդ, որով 'ի գործի մահուն մածուցար՝ արարիչդ երկնի և երկրի. արեամբդ տէրունականաւ, որով [17] զվիշապն մեծ կարթիւ ածեալ որսացար. լեղւոյն դառնութեամբ՝ զոր արբեալ, [18] զդեղատուուն կորուսչին արտաքս հեղեր. [19] պատմաբանութեամբ ըղձական Ճառիւք կրիցն սարսափելեաց, որով զլրբութիւն հակառակողին ըմբերանեալ ամաչեցուցեր. անուամբդ անհասականաւ ամենայնիւ անթարգմանելւոյդ, յորմէ դողան և դատապարտին սոսկացեալ սատանի սարսափմամբ՝ բնութիւք ամենայն [20] երևութից և աներևութից, եղիցին [21] այս ամենայն պարգևք շնորհաց՝ խոստովանելոյս 'ի պաշտպանութիւն, 'ի բժշկութիւն և 'ի քաւութիւն։ Եւ մահաբեր [22] դառնաթոյն օձին, և որ 'ի նմա ազդեաց տիեզերադաւ չարութիւն, 'ի սատակումն եղիցի նորին. նոյն ինքն 'ի կորուստ և յանբժշկական հարուած տանջանացն՝ տուաւ մատնեսցի, կապեսցի և ըմբռնեսցի։ Եղիցի ողորմութիւն ստեղծողիդ ընդ իս, և շունչ ոգւոյս իմ ընդ քեզ անբաժանօրէն կապաւ միացեալ 'ի մի։

Ե. Եւ որ ոք ընթերցցի զայս աղերս ձայնի՝ մաղթանաց գուշման՝ աղօթից հայցման [23] ծերոյ և տղայոյ, կուսի և երիտասարդի, և եթէ յաղախնաց ոք պաղատեսցի Տէրսիրաբար, հաւասարապէս անաչառութեամբ ընկալցին 'ի քէն մասն երանութեան պարտուց ազատութեան, հաստեալ վերստին յանարատութիւն նորոգ մաքրութեան, [24] նկարեալ դարձեալ զքոյդ կեր-

պարան անփոփոխելի ։ Ահա տիրապէս հնարաւոր՝ զօրեղ՝ անպատում անհաս՝ անիմանալի, [25] տեսցես աստանօր 'ի հաւաչանս կողկողանաց այսր հեծուէ, որ 'ի բոլորից շրթանց ընծայեալ քեզ մատուցանի, վասն հօր քո երկնաւորի և բարերարի, և հոգւոյդ ս̃րբոյ փառակցի և կենդանատուի, ա̃ծածնիդ բարե-խօսութ̃, և խնդրուածովք ամենայն ս̃րց ։ Զի դու ստեղծեր զամենայն. և 'ի քէն եղեն ամենայնք. և դու տիրես ամենայնի. և քեզ փառք յամենեցունց՝ միդ յիսկութէ անժամանակ երրորդութեդ, զուգակ-ցապէս փառաւորեալ յանբաւս, և յաւիտենից յաւիտեանս. ամէն ։

---

(1) Փոխարկիչ կարեաց ։ Բնական կարեաց մարմնոյ՝ այսինքն քաղցու, ծարաւոյ, քնոյ, խոնջման, ևն, փոխարկիչ, կամ դարմանիչ. վասն զի կամ արգելու զայնս, որպէս ասացաւ բազմաց 'ի սրբց, որք անկերա-կուր և անջուր կացին, անքուն սրահեցան, անխոնջ աշխատեցան. ևն ։ և կամ բնական դարմանօքն բառնայ զայնս. զի դիւրակիր կարգեաց 'ի դեղ քաղցու, նոյնպէս և յայլսն ։ Կարգաւորիչ կրից. այսինքն բնական կրից հոգւոյն, սիրոյ և ատելութե, ցանկութե և փախստեան, յուսոյ և յուսահատութե, ևն. զորս ա̃ծ կարգեաց 'ի բնութեն, և ինքն ուղ-ղէ 'ի բարւոքն կիրառութի ։ Անձկաւորիչ լեզուի. զապաւէն լեզուի, ոչ միայն պատուիրանօքն արգելլով զանպարկեշտ խօսս, այլ և բնական կազմուածն, փակելով զլեզուն ատամամբք և շրթամբք ։

(2) Շրջապատութե շնչոյ ։ Շուրջ ընթացող կամ արգելիչ շնչոյ. զի 'ի ձե-ռին նորա է շունչ ամենայն կենդանեաց ։ Կամ, յարմարող և ամրափա-կող շնչոյ. զի յամենայն կողմանց շուրջ փակեաց զթոքսն, որպէս զի զի՛ ներքս առեալ օդն՝ անդրէն արտաքս շնչեսցէ ։ Կազմիչ հագագի. ըսկզբնաւորիչ հագագի կամ ձայնի. կամ, արարող հագագին, այսինքն ծայրի շնչափողոյն. զոր անձուկն և փոքր լեզուակն յարմարեաց 'ի յօ-դել զձայնս և զեղանակս ։ Առաջին իմաստք երկուց բանիցս՝ առաւել համեմատ են այլոց նախընթացից և հետևողդ բանից ։

(3) Ամփոփիչ խորհրդոց ։ Ընթացող և ամփոփող խորհրդոց մտաց. կամ ըստ որում յարմարեաց զխելապատակն, յոր մտածութիւնք ժողովին. Կերպա-րան կանոնց, հրահանգիչ կամ վարժիչ կամաց յուղիղ ախորժմունս ։ Առաջնորդ յաղմանց. խափանիչ խռովութեց օդոյ, կամ հոգւոյ ։ Որ ասիս զբնոց ամպրոպաց. Թևովքն խմանի ղեկն, այլև թև թռչնոց. և այլաբանութբ՝ երագութե մտաց և ակրութիւն կամաց, որովք անձնիշ-խանականն մեր յամենայն կողմ ձգի ։ Զայսոսիկ ասէ՝ ունիս և ընծանես, և առ քեզ դարձուցանես ։

(4) Հանգչելոյ փոխանակ ։ Հանգչել Ա̃ծ յանձինս արդարոց ըստ բանի գրոյն, * Ես յո՞ հանգեայց՝ եթէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս ||։ (Եսայ. կզ. 2.) չէ է արդարև անձառ հրաշափառ. քանզի որպէս որ ինքն ծայրագոյն երա-նութիւն է՝ յայլ ինչ հանգչելոյ ախորժապար. և եթէ յանձինս արդարս հանգչի ասել արդարութեան որ 'ի նոսա, զիարդ ոչ առաւել յինքեան հանգչելոյ՝ քան թէ 'ի նոսա. իւր և յիւրմէ զոլով նոցայն արդարութե ։

